ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ԼՐԱԲԵՐ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ВЕСТНИК ОБЩЕСТВЕННЫХ НАУК

НАУЧНО-ОБЩЕСТВЕННЫЙ ЖУРНАЛ
ЛРАБЕР АСАРАКАКАН ГИТУТЮННЕРИ

1(652)
ՀՈՒՆՎԱՐ-ԱՊՐԻԼ
ЯНВАРЬ-АПРЕЛЬ

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն
ԵՐԵՎԱՆ 2018 ЕРЕВАН

ՔԱՌԱՄՍՅԱ ՀԱՆԴԵՍ, ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1940 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻՑ
ЖУРНАЛ ВЫХОДИТ 3 РАЗА В ГОД, ИЗДАЕТСЯ С НОЯБРЯ 1940 ГОДА

Գլխավոր խմբագիր՝ **ՊԱՎԵԼ ԱՎԵՏԻՍՅԱՆ**
Խմբագրի տեղակալ՝ **ԱՐՍԵՆ ԲՈԲՈԽՅԱՆ**
Պատասխանատու քարտուղար՝ **ԳԱՅԱՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Խմբագրական խորհուրդ

ԱՐԱՐԱՏ ԱՂԱՍՅԱՆ, ԱՐԾՐՈՒՆ ԱՎԱԳՅԱՆ, ՀԱՄԼԵՏ ԳԵՎՈՐԳՅԱՆ, ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ, ԱԼԲԵՐՏ ԽԱՌԱՏՅԱՆ, ՎԻԿՏՈՐ ԿԱՏՎԱԼՅԱՆ, ՌՈՒԲԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, ՎԼԱԴԻՄԻՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, ՎԱՉԵ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ, ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, ԳԱԳԻԿ ՂԱՋԻՆՅԱՆ, ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ, ԳԵՎՈՐԳ ՊՈՂՈՍՅԱՆ, ՌՈՒԲԵՆ ՍԱՖՐԱՍՏՅԱՆ, ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ

Главный редактор – **ПАВЕЛ АВЕТИСЯН**
Заместитель редактора – **АРСЕН БОБОХЯН**
Ответственный секретарь – **ГАЯНЭ АРУТЮНЯН**

Редакционная коллегия

АРЦРУН АВАКЯН, АРАРАТ АГАСЯН, ВЛАДИМИР АРУТЮНЯН, ГАМЛЕТ ГЕВОРКЯН, ВАРДАН ДЕВРИКЯН, ГАГИК КАЗИНЯН, РУБЕН КАРАПЕТЯН, ВИКТОР КАТВАЛЯН, АШОТ МЕЛКОНЯН, ВАЧЕ ОВАКИМЯН, НИКОЛАЙ ОГАНЕСЯН, ГЕВОРК ПОГОСЯН, РУБЕН САФРАСТЯН, ЮРИЙ СУВАРЯН, АЛЬБЕРТ ХАРАТЯН

© Լրաբեր հասարակական գիտությունների
© Вестник общественных наук

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Բասենցյան Ա.Գ. – Հայերի կոտորածները Բիթլիսի նահանգում օսմանյան բանակի և այլ զինված կազմավորումների կողմից (1915 թ.)... 12

Զինուրով Ռ.Ն. (ՌԴ, Մոսկվա) – Հայագիտությունը արդի հայ-թուրքական հարաբերությունների և դրանց հեռանկարների վերաբերյալ..... 22

Մնացականյան Ա.Ս. – Հայ-թուրքական հարաբերությունները ՀՀ ազգային անվտանգության համատեքստում..... 40

Միրումյան Ժ.Ա. – Կովսական-Քաշունիքի Սյունիները..... 50

Հովհաննիսյան Է.Հ. – Աղբյուրագիտական երկու հետազոտություն Ղարաբաղի մասին..... 62

Գրիգորյան Ա.Վ. – Խորհրդարանական դիվանագիտության զարգացման հիմնական շարժառիթները..... 73

Գասպարյան Վ.Ա. – Մարշալ Հ. Բաղրամյանի և ծովակալ Հ. Իսակովի գործունեության լուսաբանումը հայ պատմագրության մեջ..... 83

Տեր-Գրիգորյան Ա.Ա. – Պարսկա-բյուզանդական քաղաքականությունը Հայ առաքելական եկեղեցու հանդեպ VII դարի առաջին կեսին..... 93

Կարապետյան Դ.Ա. – Երևանի պաշարումն ու գրավումը Շահ Աբասի կողմից՝ ըստ Վախուշտի արքայազնի..... 109

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

Խառատյան Լ.Ա – ՋԼՄ-ի մասնակցությունը օրենսդիր իշխանության մարմնի գործունեության հրապարակայնության ապահովմանը..... 117

Գինոսյան Ս.Ա. – Ազատազրկվածների ընտրելու իրավունքի հիմնախնդիրները ՀՀ-ում և եվրոպական երկրներում 129

ՍՈՑԻՈԼՈԳԻԱ

Մելքումյան Յու.Գ. – Ներառական կրթություն և անարգելք կրթական միջավայրի ձևավորում..... 137

Մնացականյան Ա.Մ. – Մանկատան շրջանավարտների սոցիալականացման առանձնահատկությունները ՀՀ-ում..... 153

Եղիազարյան Ս.Ժ. – Կայուն զարգացման արդի բնորոշումները և ապագայի տնտեսության ձևավորման ուղիները..... 165

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Հովհաննիսյան Ա.Ռ. – ՀՀ բնակչության զբաղվածության պետական կարգավորման հիմնախնդիրները..... 173
Գրիգորյան Կ.Հ., Գևորգյան Դ.Ս. – Ազգային տնտեսության մրցունակության և նորարարական համակարգի փոխկապվածությունը..... 184
Թորոսյան Կ.Ա. – Ազգային տնտեսության աճը և զարգացումը..... 197
Կարապետյան Ս.Ս. – Կլաստերները զբոսաշրջության ոլորտում..... 207
Բեգլարյան Մ.Ա. – Հարկային կառավարման հիմնախնդիրները փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտում..... 215

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Հարությունյան Հ.Վ. – Ալիֆի և համզայի գործառույթները գրական արաբերենի ձևահնչյունային համակարգում՝ ըստ ալ-Խալիլ իբն Ահմադի «Քիթաբ ալ-Այն» աշխատության..... 225
Մալխասյան Ս.Ա. – Ժամանակի կարգի ներակա բառային արտահայտչամիջոցները Ու. Ֆոլկների «Շառաչ և ցասում» վեպում..... 231

ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Երնջակյան Ա.Հ. – Արտաքին գործոնների ազդեցությունը Շեքսպիրի ստեղծագործության վրա..... 239
Սարգսյան Ս.Կ. – Մոսկվայի դպրոցի նշանակությունը Հայաստանի երաժշտագետների համար..... 254
Հարությունյան Լ.Ա. – «Դարձվածք» ձայնեղանակները հայ հոգևոր երգարվեստի մխիթարյան երգվածքում (Առաջին ձայն «դարձվածքի» օրինակով)..... 271

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հերլես Մ.Վ. (ԳԴՀ, Մյունխեն), Դավթյան Ռ.Հ. – Պաղաղբյուրի ժայռապատկերների խումբը..... 279
Մարգարյան Հ.Զ. – Արտաշես Ա արքայի Արտամատ քաղաքը՝ ըստ Թովմա Արծրունու «Արծրունյաց տան պատմության»..... 285
Ալեքսանյան Տ.Ա., Միրիջանյան Դ.Հ., Բադալյան Հ.Կ. – Հնագիտական աշխատանքներ Կապանում..... 301

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Ադամյան Ն.Ս. – ԿՀԲԸ-ի և Armenian Refugees (Lord Mayor's) Fund-ի համագործակցության պատմությունից (1915-1916 թթ.)..... 315

ԳՐԱԽՈՍԱԿԱՆՆԵՐ

Եվա Սալկիևիչ-Մունեռլին (Լեհաստան, Վարշավա) – *Ս. Գասպարյան, Շ. Պարոնյան, Ա. Չուբարյան, Գ. Մուրադյան,* Ցեղասպանության կոնվենցիայի Ռաֆայել Լեմկինի նախագիծը և 1948 թ. ՄԱԿ-ի կոնվենցիան..... 325

ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

Բաբաջանյան Ա.Ա. – «Հնագիտություն, ազգաբանություն, բանագիտություն. Միջգիտակարգային մոտեցումներ». ՀՀ ԳԱԱ ՀԱԻ երիտասարդ գիտնականների 15-րդ միջազգային գիտաժողովը..... 328
Կիրակոսյան Մ.Ա. – Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական XII նստաշրջանը՝ նվիրված Հովհաննես Այվազովսկու ծննդյան 200-ամյակին..... 332

ՄԵՐ ՀՈԲԵԼՅԱՐՆԵՐԸ

Հարությունյան Հ.Ժ. – Սուրեն Տիգրանի Երեմյանի կյանքն ու գործունեությունը (ծննդյան 110-ամյակի առթիվ)..... 337
Հակոբյան Հ.Հ. – Վիգեն Ղազարյան. գիտնականի ուղին..... 344
Խառատյան Ա.Ա. – Հենրիկ Սվազյան. գիտության անխոնջ աշխատավորը (ծննդյան 80-ամյակի առթիվ)..... 346

ԽՈՍՔ ՀԻՇԱՏԱԿԻ

Խառատյան Ա.Ա. – Նորայր Սարուխանյան. ներդրումը հայ պատմագրության մեջ..... 351

СОДЕРЖАНИЕ

ИСТОРИЯ И ПОЛИТОЛОГИЯ

Басенцян А.Г. – Резня армян в провинции Битлис османской армией и другими вооруженными формированиями (1915 г.)..... 12
Зинуров Р.Н. (РФ, Москва) – Арменоведение о современных армяно-турецких отношениях и их перспективах..... 22
Мнацаканян А.С. – Армяно-турецкие отношения в контексте национальной безопасности РА..... 40
Мирумян Ж.А. – Сюниды Ковсакан-Кашуника..... 50
Оганесян Э.А. – Два источниковедческих исследования о Карабахе..... 62
Григорян А.В. – Основные мотивы развития парламентской дипломатии..... 73
Гаспарян В.А. – Освещение деятельности маршала И. Баграмяна и адмирала И. Исакова в армянской историографии..... 83
Тер-Григорян А.А. – Персидско-византийская политика в отношении Армянской Апостольской церкви в первой половине VII века..... 93
Карапетян Д.А. – Осада и взятие Еревана Шахом Аббасом согласно Царевичу Вахушти..... 109

ФИЛОСОФИЯ И ПРАВО

Харатян Л.А. – Участие СМИ в обеспечении публичности деятельности органов законодательной власти..... 117
Гиносян С.А. – Вопросы заключенных избирательное права в РА и европейских странах..... 129

СОЦИОЛОГИЯ

Мелкумян Ю.Г. – Инклюзивное образование и создание доступной образовательной среды..... 137
Мнацаканян А.М. – Особенности социализации выпускников детских домов в РА..... 153
Егиазарян С.Ж. – Современные характеристики устойчивого развития и пути формирования экономики будущего..... 165

ЭКОНОМИКА

Оганесян А.Р. – Проблемы государственного регулирования занятости населения РА..... 173
Григорян К.Г., Геворгян Д.С. – Взаимосвязь между конкурентоспособностью и инновационной системой национальной экономики..... 184
Торосян К.А. – Рост и развитие национальной экономики..... 197
Карапетян С.С. – Кластеры в туристической отрасли..... 207
Бегларян М.А. – Проблемы налогового управления в сфере малого и среднего предпринимательства..... 215

ФИЛОЛОГИЯ

Арутюнян А.В. – Функции алифа и хамзы в фонологической и морфологической системе литературного арабского языка в книге «Китаб аль-Айн» аль-Халиля ибн Ахмада..... 225
Малхасян С.А. – Имплицитные словесные средства выражения категории времени в романе У. Фолкнера "Шум и ярость"..... 231

КУЛЬТУРА И ИСКУССТВОВЕДЕНИЕ

Ернджакян А.А. – Влияние внешних факторов на творчество Шекспира..... 239
Саркисян С.К. – Значение московской школы для музыковедов Армении..... 254
Арутюнян Л.А. – Гласы типа *“дарцвацк”* в мхитаристской певческой традиции армянской духовной музыки (на примере Первого Гласа *“дарцвацк”*)..... 271

АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ

Герлес М.В. (ФРГ, Мюнхен), Давтян Р.А. – Группа наскальных изображений Пагагбюра..... 279
Маргарян А.З. – Город царя Арташеса I Артамат согласно “Истории дома Арцруни” Товмы Арцруни..... 285
Алексанян Т.А, Мириджанян Д.Г., Бадалян А.К. – Археологические работы в Капане..... 301

ПУБЛИКАЦИИ

Адамян Н.С. – Из истории сотрудничества между КАБО и Armenian Refugees (Lord Mayor's) Fund (1915-1916 гг.) 315

РЕЦЕНЗИИ

Ева Салкиевич-Муннерлин (Польша, Варшава) – *С. Гаспарян, Ш. Паронян, А. Чубарян, Г. Мурадян,* Проект Конвенции о геноциде Рафаэля Лемкина и Конвенция ООН 1948 г. 325

НАУЧНАЯ ХРОНИКА

Бабаджанян А.А. – 15-ая научная конференция молодых ученых ИАЭ НАН РА: "Археология, этнография, фольклор. Междисциплинарные подходы"..... 328
Киракосян М.А. – XII научная сессия молодых армянских искусствоведов, посвященная 200-летию со дня рождения Ованеса Айвазовского..... 332

НАШИ ЮБИЛЯРЫ

Арутюнян А.Ж. – Жизнь и деятельность Сурена Тиграновича Еремяна (к 110-летию со дня рождения)..... 337
Акопян А.А. – Виген Казарян: путь ученого..... 344
Харатян А.А. – Генрих Сказян: неутомимый труженик науки (к 80-летию со дня рождения)..... 346

СЛОВО ПАМЯТИ

Харатян А.А. – Норайр Саруханян: вклад в армянскую историографию..... 351

CONTENTS

HISTORY AND POLITICAL SCIENCE

A. Basentsyan – The Massacres of Armenians in the Bitlis Province by the Ottoman Army and other armed Formations (1915)..... 12
R. Zinurov (RF, Moscow) – Armenian Studies on Contemporary Armenian-Turkish Relations and their Perspectives..... 22
A. Mnatsakanyan – Armenian-Turkish Relations in the Context of National Security of the RA..... 40
J. Mirumyan – The Syunies of Kovsakan-Qashuni..... 50
E. Hovhannisyan – Two Source Studies on Karabakh..... 62
A. Grigoryan – Main Causes of Development of Parliamentary Diplomacy..... 73
V. Gasparyan – The Elucidation of Activities of Marshal H. Baghramyan and Admiral H. Isakov in Armenian Historiography..... 83
A. Ter-Grigoryan – Persian-Byzantine Policy towards the Armenian Apostolic Church in the first Half of the 7th Century..... 93
D. Karapetyan – The Siege and Capture of Yerevan by Shah Abbas, according to Prince Wakhusht..... 109

PHILOSOPHY AND LAW

L. Kharatyan – Participation of the Mass Media in Ensuring the Transparency of the Activities of the Legislative Authority..... 117
S. Ginosyan – Restrictions of the Rights to vote of Prisoners in RA and European Countries..... 129

SOCIOLOGY

Yu. Melkumyan – Inclusive Education and the Creation of Educational Environment without Barriers..... 137
A. Mnatsakanyan – Specific Features of Socialization of Graduates of Orphanages in the RA..... 153
S. Yeghiazaryan – Modern Characteristics of Sustainable Development and Ways for Formation of the future Economy..... 165

ECONOMY

A. Hovhannisyan – State Regulation of Population Employment Problems in the RA..... 173
K. Grigoryan, D. Gevorgyan – Relationship between Competitiveness and Innovative System of the National Economy..... 184
K. Torosyan – Growth and Development of National Economy..... 197
S. Karapetyan – The Clusters in Sphere of Tourism..... 207
M. Beglaryan – Tax Management Problems in Sphere of Small and Medium Entrepreneurship..... 215

PHILOLOGY

H. Harutyunyan – Functions of Alif and Hamza in Phonology and Morphology Systems in Literary Arabic Language in the Book «Kitab al-Ayn» by al-Khalil ibn Ahmad..... 225
S. Malkhasyan – Implicit Lexical Means of Expressing Temporal Arrangement in W. Faulkner's Novel "The Sound and the Fury"..... 231

CULTURE AND ART HISTORY

A. Yernjakyan – Influence of External Factors on Shakespeare's Creativity..... 239
S. Sarkisyan – Importance of the Moscow School for Armenian Musicologists..... 254
L. Harutyunyan – "Dartsvatsq" Moduses in Mekhitarist Singing Tradition of Armenian Sacred Music (on the Example of the First "Dartsvatsq" Modus)..... 271

ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

M. Herles (FRG, Munich), R. Davtyan – The Group of Petroglyphs of Paghaghbyur..... 279
H. Margaryan – The City of Artashes I Artamat, according to "The History of the House of Artsruni" by Tovma Artsruni..... 285
T. Aleksanyan, D. Mirijanyan, H. Badalyan – Archaeological Works in Kapan..... 301

PUBLICATIONS

N. Adamyan – From the History of Cooperation between the WBC of the Caucasus and the Armenian Refugees (1915-1916)..... 315

LITERARY REVIEWS

Dr. Ewa Salkiewicz-Munnerlyn (Poland, Warsaw) – *S. Gasparyan, Sh. Paronyan, A. Chubaryan, G. Muradyan,* Raphael Lemkin's Draft Convention on Genocide and the 1948 UN Convention..... 325

SCIENTIFIC CHRONICLE

A. Babajanyan – "Archaeology, Ethnology, Folkloristics: Interdisciplinary Approaches": The 15th International Conference of Young Scientists, IAE of NAS RA 328
M. Kirakosyan – XII Scientific Session of the Young Armenian Art Historians, Dedicated to the 200th Anniversary of Hovhannes Ayvazovski..... 332

OUR JUBILEES

H. Harutyunyan –The Life and Activities of Suren Tigran Eremyan: Towards his 110th Anniversary..... 337
H. Hakobyan – Vigen Ghazaryan: The Way of a Scientist..... 344
A. Kharatyan – Henrik Svazyan: Towards the 80th Anniversary of the Devotee of Science..... 346

WORD OF MEMORY

A. Kharatyan – Norayr Sarukhanyan and his Contribution to Armenian Historiography..... 351

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԵՐԻ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ ԲԻԹԼԻՍԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ ՕՍՄԱՆՅԱՆ ԲԱՆԱԿԻ ԵՎ ԱՅԼ ՉԻՆՎԱԾ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ (1915 Թ.)

ԲԱՍԵՆՑՅԱՆ Ա.Գ.

Թուրքական դատական ատյանները, խուսափելով պետական պատասխանատվությունից, հայերի նկատմամբ իրականացված ոճրագործությունների պատասխանատու ճանաչեցին «Միություն և առաջադիմություն» կուսակցությանը և նրա ենթակայությամբ «Հատուկ կազմակերպությանը»: Սակայն որևէ խոսք անգամ չինչեց պետական կառույց համարվող օսմանյան բանակի վայրագությունների մասին: Թուրքական պետության պատասխանատվության հիմնավորման տեսանկյունից Հայոց մեծ եղեռնին օսմանյան բանակի ներգրավվածության ուսումնասիրումը կարևոր նշանակություն ունի:

1915 թ. ապրիլ-մայիսին Վանի ինքնապաշտպանությունից և ռուսական զորքի ու հայ կամավորների՝ քաղաք մուտք գործելուց հետո օսմանյան բանակը դիմեց նահանջի և ճանապարհին հայկական բնակավայրերում իրականացրեց անասելի վայրագություններ: Թեև տեղահանության հրամանին չենթարկվելու դեպքում հայերի դիմադրությունը ճնշելու համար առանձնացվել էին ժանդարմերիայի* ստորաբաժանումներ, քրդական անկանոն զինված կազմավորումներ, «Հատուկ կազմակերպության» հրոսակախմբեր, այդուհանդերձ, անհրաժեշտ եղավ կոտորածների իրականացմանը ներգրավելու նաև բանակային ստորաբաժանումներ: Կովկասյան ռուս-թուրքական ռազմաճակատի մերձակա գոտում, հատկապես Վանում, Բիթլիսում և Մուշում, հայ բնակչության ոչնչացումը կազմա-

* Օսմանյան կայսրությունում 1839 թ. սկսած ժանդարմերիան ներկայացնում էր գավառական հեծյալ ոստիկանությունը:

կերպեց նահանջող օսմանյան բանակը: Թուրք պատմաբան Թ. Աքչամը նշում է, որ որոշ ստորաբաժանումներ, մասնավորապես Երրորդ բանակի, ներգրավվեցին կոտորածներին, և Վանի ինքնապաշտպանությունից կարճ ժամանակ անց Վանի և Մուշի բնակիչներին կոտորվեցին տեղակայված բանակային ստորաբաժանումները[1]: «Մշակ» թերթը գրում է, որ Վանի վիլայեթում և Մուշի սանջակում ծրագրված կերպով արդեն ոչ թե կիսավայրենի քրդերը, այլ կանոնավոր զորքերն են գործադրում հայերին գլխովին բնաջնջելու նպատակը[2]:

Վանի գրավումից հետո Ջևդեթի գլխավորությամբ նահանջող թուրքական բանակն ու «Հատուկ կազմակերպության» հրոսակախմբերը (ինչպես Ջևդեթն էր անվանում՝ «մսագործ գնդերը») հունիսի 12-ին մտան Սղերդ, որտեղ քրիստոնյաների կոտորածն ավարտելուց հետո շարժվեցին Բիթլիս: Բիթլիսի մոտ իր փոքրաթիվ ուժերով նրանց միացավ Հալիլն, և հունիսի 25-ին շրջապատեցին քաղաքը: Բացի 15 000 զորքից, նաև թնդանոթներ և գնդացիրներ բերվեցին այնտեղ: Հայկական թաղամասերը վերածեցին իսկական սպանդանոցի, տղամարդկանց առանձին տարան քաղաքին մերձակա ձորերը, սպանեցին համազարկով, սրախողխող անելով և վառելով: Իսկ մնացյալ բնակիչներին քշեցին դեպի Սղերդ և, քաղաքից 4-5 վերստ հեռացնելով, կոտորեցին ու փոսերը լցրին[3]: Ընկերոջ հետ փախուստի դիմած և Վան հասած բիթլիսցի մի հայ երիտասարդ, որը սկզբում զորակոչվել էր օսմանյան բանակ, զինաթափվել և ուղարկվել ճանապարհների վրա աշխատելու, պատմել էր, որ Վանի նախկին նահանգապետ Ջևդեթը Բիթլիսում կոտորեց 15-40 տարեկան տղամարդկանց, մնացած ընտանիքներին տեղահանեց Սղերդ՝ պահելով գեղեցիկ կանանց և աղջիկներին[4], որից հետո 2000 աշիրեթներով (քոչվոր ցեղ) շարժվեց

[1] Տե՛ս **Akçam T.** A Shameful Act: The Armenian Genocide and the Question of Turkish Responsibility, New York, 2006, p. 171.

[2] Տե՛ս Մշակ, Թիֆլիս, 13.09.1915, № 201:

[3] Տե՛ս Հորիզոն, Թիֆլիս, 20.09.1915, № 212, նաև՝ Արմէնիա, Մարսել, 10.11.1915, № 15, Armenian Atrocities, the Murder of a Nation, by **Arnold J. Toynbee**, with a Speech Delivered by Lord Bryce, in the House of Lords, London, New York, Toronto, 1915, p. 88, **Vierbücher H.** What the German Imperial Government Concealed from its Subjects: Armenia 1915: The Slaughter of a Civilized People at the Hands of the Turks, Arlington, 2006, p. 58-59, **Hosfeld R.** Tod in der Wüste: Der Völkermord an den Armeniern, München, 2015, S. 169-170.

[4] Armenian Atrocities, the Murder of a Nation, p. 88.

դեպի Մուշ[5]: Բիթլիսի կոտորածից հետո մնաց հայ բնակչության միայն մեկ քառորդ մասը Ղուլթիկ և Փարխանդ գյուղերում: Սակայն երբ հունիսի վերջին ռուսական բանակը հայ կամավորների հետ պաշարեց քաղաքը, թուրքերը նախքան նահանջելը կոտորեցին նաև վերոհիշյալ գյուղերի հայ բնակչությանը[6]: Իսկ Սղերդում, ըստ օսմանյան բանակի 44-րդ գնդի 4-րդ վաշտի հիսնապետ Հագգի էֆենդու, կոտորեցին 2000 հայի: Կոտորածի նպատակով այնտեղ էին գնացել նաև ժանդարմները[7]: Այնուհետև նահանջող թուրքական բանակը մտավ Մուշի և Բուլանըխի գավառներ՝ Մուսա բեկի համիդիեականների հետ անխնա կոտորելով և ավիրելով այդ գավառների հայկական գյուղերը: Ապա անցավ Խնուսի գավառ և, միանալով քրդական ցեղերին, շրջապատեց գավառի մոտ 30 զուտ հայաբնակ գյուղերը և սոսկալի ջարդ իրականացրեց[8]: Այս մասին անգամ խոստովանել է Հալիլի առաջին արշավական զորքի կազմից մի թուրք սպա՝ նշելով, որ իրենց զորքի բոլոր հայ սպաներին ու զինվորներին կոտորելուց հետո Հալիլն անգթորեն Բիթլիսի, Մուշի և Բայազետի մնացյալ հայ բնակչությանը ևս հրամայեց անխնա կոտորել: Ըստ սպայի՝ իր վաշտն ստացել էր նման հրաման, և զոհերից շատերին ողջ-ողջ թաղել էին հատուկ պատրաստված փոսերի մեջ[9]:

Ինչպես արդեն նշվեց, նահանջող օսմանյան բանակի հետ հայերի կոտորածն իրականացնելուն անմասն չմնացին նաև քրդական անկանոն զինված կազմավորումները, որոնք տեղակայվել էին Բուլանըխում՝ 6-7000 մարդ, Դատվանում՝ նույնքան, Վանի շրջանում՝ Չուխուրկեդուքում՝ նույնքան: Այս անկանոն զինված ուժերը, հարկադրված նահանջելով, կազմակերպեցին տեղի հայերի կոտորածը: Մասնավորապես, կոտորվեցին Բուլանըխի 6-7 գյուղ, Ախլաթի, Արճեշի, Ալջավազի գրեթե բոլոր գյուղերը, ինչպես նաև Դատվանի, Ուրդափի և Բիթլիսի շրջակա գյուղերը[10]: Միայն

---

[5] Հորիզոն, Թիֆլիս, 16.07.1915, № 157:

[6] Տե՛ս նույն տեղում, 20.09.1915, № 212:

[7] Տե՛ս Մի թիւրք սպայի յիշատակարանից, հրատ.՝ «Ազատամարտ»-ի (Նիւթեր Հայոց նորագոյն պատմութեան, № 1), Թիֆլիս, 1917:

[8] Բանբեր, Աստրախան, 12.07.1915, № 4:

[9] Տե՛ս **Dadrian V.N.** Ermeni soykırımında kurumsal roller, İstanbul, 2007, s. 194-195.

[10] Արեւ, Բաքու, 19.07.1915, № 101, տե՛ս նաև Հայրենիք, Բոստոն, 31.07.1915, № 87, Հայաստան, Սոֆիա, 17.06.1915, № 28:

Բիթլիսի վիլայեթում քրդերը հինգ օր շարունակ կոտորեցին հայերին: Սպանվածների թիվը հասնում էր 10.000-ի[11]:

Բիթլիսի կոտորածից հետո օսմանյան բանակի ստորաբաժանումները, անկանոն զինված խմբավորումները շարժվեցին Մուշ: Օսմանյան բանակի՝ Մուշում իրականացրած վայրագությունների մասին բարձրաձայնվեց օսմանյան խորհրդարանի 1918 թ. դեկտեմբերի 9-ի նիստում. Սեբաստիայից պատգամավոր Տիգրան Պարսամյանը խորհրդարանին ներկայացրեց Մուշից պատգամավոր Գեղամ Տեր-Կարապետյանի դիտողագիրը: Դիտողագրում Գ. Տեր-Կարապետյանը նշել էր, որ իր ընտրական շրջանին պատկանող Մուշում, Բիթլիսում և դրանց գավառներում պատմության մեջ մինչ այդ չարձանագրված վայրագություններ և բռնություններ գործադրվեցին: Մուշ գյուղաքաղաքում թե՛ տեղի և թե՛ դրսից ու շրջակայքից բերված անմեղ հայերին միասնաբար թնդանոթային ռմբակոծման ենթարկեցին, այրեցին և բնաջնջեցին: Գյուղաքաղաքից բացի՝ Մշո դաշտի գյուղերից շատերը նույնպես թնդանոթի տակ առնվեցին, ավերվեցին[12]: «Հորիզոն» թերթի 1915 թ. սեպտեմբերի 8-ի համարում նշվում է, որ Մուշի կոտորածի կազմակերպման համար կառավարությունը բերեց Բիթլիսի ամբողջ զորքը և Կոփի ու Ախլաթի շրջանի զորքերի մի մասը: Զորքերի այնպիսի ցանցով պատվեց Մուշն ու Մշո դաշտը, որ երկար դիմադրելն անհնարին էր: Այսպես, ամենաաննշան գյուղը պաշարվեց 200-300 քրդական անկանոն զինված միավորումներով կամ կանոնավոր զորքով: 15000 կանոնավոր զորքից, թնդանոթներից բացի, Սասունի դեմ ուղարկվեցին նաև տեղի լեռներին լավ ծանոթ քրդերը[13]: Ընդ որում, մինչև տեղահանության հրաման տալը Մուշի հայկական թաղամասերն արդեն պաշարվել էին շրջակա չորս բլուրներից, և վաշտերը թնդանոթներն ու հրացանները ուղղել էին հայ բնակչության դեմ: Երբ որոշ ընտանիքներ տեղահանվեցին և քաղաքի մոտ կոտորվեցին, մնացյալ հայ բնակիչները հրաժարվեցին տներից դուրս գալ: Ապա հրամայվեց, որ բոլոր այն մահմեդա-

[11] Փայլակ, Շուշի, 02.08.1915, № 42:

[12] Տե՛ս **Տատրեան Վ.,** Հայկական ցեղասպանութիւնը խորհրդարանային եւ պատմագիտական քննարկումներով, Ուոթրթաուն, 1995, էջ 56-57: Օսմանյան բանակի, «Հատուկ կազմակերպության» և Ռեշիդ էֆենդու հրամանատարության տակ գտնվող քրդական ավազակախմբերի կողմից Մուշի հարյուրավոր գյուղերում իրականացված վայրագությունների մասին, տե՛ս **Hosfeld R.,** նշվ. աշխ., էջ 171:

[13] Տե՛ս Հորիզոն, Թիֆլիս, 08.09.1915, № 202:

կանները, որոնք զինվոր կամ չեթե (հրոսակ) չեն, տներից դուրս չգան և զգուշանան իրենց տանը որևէ հայի ապաստան տալուց: Այնուհետև սրբազան պատերազմի (ջիհադ) կոչեր արվեցին այն զինվորներին, չեթեներին և քաղաքի մահմեդականներին, որոնք մասնակցելու էին ջարդին: Հաջորդ օրը՝ հունիսի 28-ի լուսաբացին, հայկական թաղերը չորս կողմից ենթարկվեցին թնդանոթաձգության, 8-10 000 հրացաններ որոտացին անզեն և ահաբեկված բնակչության վրա, տները հրդեհվեցին, փլվեցին, և քաղաքը լցվեց աղեխարշ աղաղակներով[14]: Մուշ-Սասունում, որպեսզի կոտորածից ոչ ոք չազատվի, և այն տեղի ունենա Մշո դաշտում միևնույն օրը, դաշտը բաժանվեց առանձին շրջանների. յուրաքանչյուր շրջան տըրվեց այն աշիրեթին, որն ավելի ծանոթ էր այդ վայրերին: Մուշի կոտորածից ողջ մնացածները թաղամասերից դուրս բերվեցին և երկու մասի բաժանվեցին: Մի մասին տարան Մուշին մոտ հայաբնակ Սոխգոմ գյուղ, կողոպտելուց հետո լցրին ութ մարագի մեջ և այրեցին: Մյուս մասին քշեցին դեպի Ս. Հովհաննես վանքի Պշել կոչված կալվածքը, կողոպտեցին, ապա այրեցին[15]:

Տ. Եղիշէ քահանան Մուշի դրության և կոտորածին օսմանյան բանակի ու անկանոն զինված միավորումների համատեղ մասնակցության մասին հետևյալն է հաղորդում. «…Մուշի գյուղերուն մէջ մէկ հայ չէ մնացած, քաղաքին մէջ կան 10-15 հոգի մսագործ, հացթուխ և ջրաղացպաններ: Ս. Կարապետի վանքին անտառին մէջ մինչեւ սեպտեմբերի վերջը անոնց մասին ոևէ տեղեկութիւն չէ առնւած: Բերդար և Գոմեր գիւղերու գաղթականներէն քիչ թուով մարդիկ կան իրենց լեռներուն մէջ: Բերդակ, Մառնիկ և Սոխգոմ գիւղերու գաղթականները Քան սարը կըգտնուին թուով 7-800 հոգի: Հոկտեմբերի կիսուն Մուսա, Գասըմ եւ Նըհօ պէկեր, Սասունի և Թարգմանչաց վանքի զօրքերը թուով 1500 հոգի կը յարձակին Քան լեռը ապաստանած գաղթականներու վրայ և մօտաւորապէս 400 հոգի կը կոտորեն»[16]: «Մշակը» 1915 թ. դեկտեմբերի 2-ի համարում գրում է. «Կ. Պոլսից եկած գաղտնի հրամանների համաձայն Մուսա-բէգը պահանջում էր,

[14] **Սասունի Կ.,** Պատմութիւն Տարօնի աշխարհի, Պէյրութ, 1956, էջ 844, տե՛ս նաև Геноцид армян: официальные документы из германских архивов, публикуемые впервые. **Вольфганг и Зигрид Густы** (составители сборника документов). Под ред., с пред. и прим. д.и.н., проф. С. Степаняна, Е., 2005, с. 259.

[15] Մշակ, Թիֆլիս, 06.11.1915, № 246:

[16] Ազգ, Պօսթոն, 17.12.1915, № 467:

որ Նըհօ և Ղասըմ բէգերը կոտորեն իրանց իւրացրած գյուղերի հայերին: Նըհօ-բէգը իր 3000 ձիաւորներով անմիջապէս անցաւ դէպի Աջաղբյուր, որի շրջապատում գտնվում են Արքայ-վանք (90 տ.), Արագ (45 տ.), Հուշտամ (50 տ.), Դրմետ (120 տ.), Երիշտեր (120 տ.), Ծղակ (80 տ.), Դեղձմեր (20 տ. հայ և 40 տուն քիւրդացած) և Վարդխաղ (20 տ. հայ և 50 տուն քիւրդացած) գիւղերը: ...Արքայ-վանքի մէջ հայերին բաժանեցին ինչքան որ տղամարդ կար, 14-90 տարեկան, տարան լցրին երկու մեծ գոմ, մօտ 300 մարդ, իսկ 700-ի չափ կին՝ պառաւ, երեխայ, ջահել, հարս և գեղանի աղջիկներ լցրին երկու մարաք: ...Նախ ջարդեցին բոլոր պառավներին, ապա քրդերի մէջ բաժանեցին բոլոր դեռահաս հարսներին ու աղջիկներին: ...Ապա տղամարդկանց դուրս բերին, բոլորին էլ թևերը թիկունքին, չորս-հինգ հոգի միասին կապած, և քշեցին դէպի Խվներ՝ Մուսա-բէգի ոստանը, որ նա կատարէ իր վերջին վճիռը: Ինչ-որ կատարվեց Արքայ վանքում, նոյնը կատարվեց ամբողջ Մուշի դաշտում...»[17]: Այս իրադարձություններն այնքան լայնատարած են եղել, որ անգամ 1916 թ. փետրվարին օսմանյան Երրորդ բանակի հրամանատար Վեհիբը, Արևմտյան Հայաստանի տարբեր մասերում շրջելով, ապշած էր Մուշի հյուսիսում գտնվող 800 հայից բաղկացած Ջրիկ գյուղի աղեխարշ տեսարանից: Նա թուրքական ռազմական ատյանին օժանդակող հարցաքննիչ մարմնին հղած վկայությունում նշել էր, որ Ջրիկ գյուղի հայ տղամարդկանց, կանանց և աղջիկներին հավաքելով և ձերբակալելով՝ գյուղը հրկիզեցին և նրանց էլ բնաջնջեցին՝ իսլամական պատմության մեջ չտեսնված բռնարարքների ու բարբարոսության օրինակ դառնալով[18]:

Ըստ պատմաբան Վ. Դադրյանի՝ Մուշի կոտորածը հատկանշական է դարձնում երեք հանգամանք: Նախ՝ թուրքական բանակը, քուրդ ավազակախմբերը և օսմանյան կառավարության վարչակազմը ձեռք ձեռքի տված աջակցեցին Իթթիհատի դիվային ծրագրի իրականացմանը: Երկրորդ՝ այդ բանակի ծառայությունն անսովոր էր այն իմաստով, որ 10-20 վաշտեր[19]

[17] Մշակ, Թիֆլիս, № 266, 02.12.1915:

[18] **Տատրեան Վ.,** նշվ. աշխ., էջ 59-60:

[19] Մուշից պատգամավոր Իլիաս Սամին նշում է, որ Մուշը ռմբակոծել են 10 թուրքական վաշտեր 10 թնդանոթով, տե՛ս **Տատրեան Վ.,** նշվ. աշխ., էջ 84: Իսկ Ռ. Սահակյանը նշում է Մուշի 12000 բնակիչներին և քաղաքում ապաստան գտած շրջակա գյուղերի 10000 հայերին կոտորելու համար լրացուցիչ 11 թնդանոթ և 2000 զինվոր բերելու մասին, տե՛ս **Սահակյան Ռ.,** Ինքնապաշտպանական կռիվները Արևմտյան Հա-

հատուկ Խարբերդից այնտեղ բերվեցին և, թնդանոթների ցանցով Մուշի հայկական թաղերը պաշարելուց հետո, ռմբակոծություններով դրանք հիմնահատակ քանդեցին և ողջ հայ բնակչությանը իրենց տների փլատակների մեջ կործանեցին, թեև մի քանի տներ ամրացված էին և զինված դիմադրություն էին ցույց տալիս: Երրորդ՝ Մշո դաշտի 70-80000-ի հասնող հայ բնակչության ստվար մեծամասնությանը՝ կանանց, երեխաներին, ծերերին, մարագների և ախոռների մեջ լցնելով, ողջ-ողջ այրեցին[20]: Ի դեպ, այս կոտորածներին մասնակցած զինվորական հրամանատարներից ոմանք, Քեմալական շարժմանը մասնակցելով, բարձր դիրքերի հասան, ինչպես Քյազըմ Էօզալփը, Քյուչուք Քյազըմը, փոխգնդապետ Վեյսին: Քյուչուք Քյազըմի ջարդարար վաշտն անգամ ստացել էր «մսագործների վաշտ» անվանումը հայերին մորթելու գործում ցույց տված արդյունավետության համար[21]: Ա. Յոհաննսոնը նշում է, որ յուրաքանչյուր սպա, զինվոր և ոստիկան պարծենում էր անձամբ սպանած և այրած մարդկանց քանակով, անգամ ցույց էին տվել, թե որտեղ, ինչպես և որքան կանանց ու երեխաների են սպանել[22]:

Վերոհիշյալ փաստերը ցույց են տալիս, որ նահանջող օսմանյան բանակի և մյուս զինված կազմավորումների կողմից ռուս-թուրքական ռազմաճակատի մերձակա գոտու, հատկապես Սղերդի, Բիթլիսի և Մուշի հայ բնակչության բնաջնջումը թերևս պայմանավորված էր այն հանգամանքով, որ ռուսական ուժերն այդ ժամանակ Մուշից ընդամենը մեկ-երկու օրվա ճանապարհի վրա էին: Այն, որ թուրքերը մինչև ռուսների գալն էին

յաստանում 1915 թվականին և ՀՅ Դաշնակցությունը, Ե., 2010, էջ 39: Ըստ միսիոներուհի Ա. Յոհաննսոնի՝ հուլիսի առաջին շաբաթվա ընթացքում Կ.Պոլսից Խարբերդի միջով Մուշ են ժամանել 20000 զինվոր ռազմամթերքով և 11 գնդացրով, տե՛ս **Յուհաննսոն Ա.,** Աքսորյալ ժողովուրդ, Ե., 2008, էջ 42, 49: Ըստ Ա. Թոյնբիի՝ չորս գումարտակ է ուղարկվել Մշո դաշտ տեղի հայ բնակիչների հետ հաշվեհարդար տեսնելու: Կոտորածից միայն 5000-ին է հաջողվել փախչել և ապաստան գտնել Սասունում, տե՛ս Armenian Atrocities, the Murder of a Nation, p. 87-88.

[20] **Տատրեան Վ.,** նշվ. աշխ., էջ 59, տե՛ս նաև **Walker Chr. J.** Armenia: The Survival of a Nation, London, 1980, p. 212, ռուսական բանակի կողմից Խնուսը գրավելուց հետո նահանջող օսմանյան բանակի, քրդական ջոկատների՝ Բիթլիսի ճանապարհին մշեցիներին կոտորելու մասին տե՛ս Армянский вестник, М., 1916, № 4, с. 16.

[21] **Տատրեան Վ.,** նշվ. աշխ., էջ 60:

[22] Տե՛ս **Յուհաննսոն Ա.,** նշվ. աշխ., էջ 26, 43, 52:

պատրաստվում ոչնչացնել հայերին, բացահայտ հայտարարել էր Էնվեր փաշայի մտերիմ ընկեր Մուշի մութասարըֆը (կուսակալ)[23]:

Մուշի հերոսամարտից ու բնակավայրի հրկիզումից անմիջապես հետո թուրքական զորամասերը թնդանոթներով շարժվեցին Կուրտիկ, Խոզմո, ապա Շենիկ և Սեմալ, որոնք դիմադրող Սասունի առաջին «դռներն» էին: Իսկ Ս. Առաքելոց վանքի թուրքական զորամասերին նոր օգնական ուժեր ուղարկվեցին, որպեսզի կարողանան ոչնչացնել Մուշից ու Մշո դաշտից ազատված հայկական մարտական ուժերը, որոնք դիրքեր էին դրել Հավատորիկի և Մառնիկի բարձունքներում[24]: Հուլիսի 19-ին թնդանոթները մի քանի կետից արձակվեցին Շատախի հայկական գյուղերի վրա: Նույն օրը կռիվները մեծ թափ ստացան Խիանքի և Խուլբի ուղղությամբ, որտեղ քրդական անկանոն զինված միավորումներին միացան թուրքական վաշտերը և ժանդարմական ջոկատները: Թուրքական բանակի ներկայությունը քաջալերում էր քուրդ խուժանին, որը մինչ այդ զգուշանում էր գոտեմարտի բռնվել Սասունի ինքնապաշտպանական ուժերի դեմ[25]: Թուրքական բանակը, հրոսակախմբերը, քուրդ աշիրեթները միասին 30 000-ից ավելի էին[26]: Օսմանյան խորհրդարանի պատգամավոր Գ. Տեր-Կարապետյանը Սասունի դեպքերի մասին գրում է, որ Գելիեգուզանի հեռավոր լեռներում երեք ժանդարմների (երկուսը՝ քուրդ, մեկը՝ հայ) և հինգ-վեց կելեցի հայ երիտասարդների բախման հետևանքով ժանդարմների սպանությունը որպես առիթ օգտագործելով՝ կուսակալն ու կառավարիչը հեռագրեցին չորս կողմ, թե Մուշ-Սասունն ապստամբել է: Կառավարիչ Սերվեթը շտապ 20-30 ժանդարմ ուղարկեց Ալիջան և 10 տներ այրել տվեց, 200-300 ժանդարմ էլ ուղարկեց Գելիեգուզան՝ 20-30 տներ այրել տվեց, Սասունի լեռներում 50-60 հայ ձերբակալեց և Մուշ տարավ: Եվ հենց այդ ժամանակ էլ Կարինի ընդհանուր հրամանատարից հրաման տրվեց, որ Դիարբեքիրից եկող յոթ վաշտերը Սասուն գնան, բոլոր տղամարդկանց ձերբակալեն, իսկ ժողովրդին էլ տեղահանեն[27]:

Այսպիսով՝ ռուսական ուժերի կողմից Վանը գրավելուց հետո թուրքական բանակը նահանջի ճանապարհին թնդանոթների և այլ զինատե-

[23] Տե՛ս **Hosfeld R.,** նշվ. աշխ., էջ 170-171:
[24] **Սասունի Կ.,** նշվ. աշխ., էջ 969:
[25] Նույն տեղում, էջ 970:
[26] Նույն տեղում, էջ 974:
[27] Նույն տեղում, էջ 843:

սակների կիրառմամբ հողին հավասարեցրեց հայկական բնակավայրերը՝ այրելով և սպանելով տեղի հայ բնակչությանը: Կովկասյան ռուս-թուրքական ռազմաճակատի մերձակա գոտում իրականացրած վայրագությունները պայմանավորված էին մի կողմից այն մտավախությամբ, որ ռուսների հասնելուն պես տեղի հայ բնակչությունը կմիանա նրանց, իսկ մյուս կողմից՝ ռուսական ուժերի և հայ կամավորների՝ Վանը գրավելու դիմաց վրեժխնդիր լինելու ցանկությամբ: Եվ օգտագործելով առիթը՝ իրականացրին նախապես ծրագրված կոտորածը: Թեև պետական պատասխանատվությունից խուսափելու համար թուրքական դատական ատյանները Մեծ Եղեռնի իրականացման պատասխանատու ճանաչեցին «Միություն և առաջադիմություն» կուսակցությանը և նրա հիմնադրած «Հատուկ կազմակերպությանը», այնուամենայնիվ, թնդանոթների կիրառման հանգամանքն ուղղակիորեն վկայում է կոտորածներին օսմանյան բանակի մասնակցության մասին, քանի որ թնդանոթներով կարող էին զինված լինել ոչ թե «Հատուկ կազմակերպության» ջոկատները կամ քրդական անկանոն զինված միավորումները, այլ միայն բանակը: Իսկ օսմանյան բանակին կոտորածների մեջ ներգրավվելը պայմանավորված էր այն հանգամանքով, որ ժանդարմերիայի, «Հատուկ կազմակերպության» ջոկատների, քրդական անկանոն զինված միավորումների ուժերը բավարար չէին Սղերդի, Բիթլիսի, Մուշի և հարակից հայկական գյուղերի խաղաղ բնակչության հետ հաշվեհարդար տեսնելու համար:

РЕЗНЯ АРМЯН В ПРОВИНЦИИ БИТЛИС ОСМАНСКОЙ АРМИЕЙ И ДРУГИМИ ВООРУЖЕННЫМИ ФОРМИРОВАНИЯМИ (1915 г.)

БАСЕНЦЯН А.Г.

Резюме

В массовых погромах армян в провинции Битлис принимали участие как османская армия, так и другие вооруженные формирования. Использование артиллерии во время массовой резни армян свидетельствует о том, что османская армия играла активную роль в данных преступлениях.

Привлечение османской армии было обусловлено тем, что сил жандармерии, «Особой организации» и курдских нерегулярных вооруженных формирований было недостаточно, чтобы осуществить массовое убийство мирного армянского населения. Зверское уничтожение армян османской армией и другими вооруженными формированиями, отступающими после взятия Вана русскими войсками, было обусловлено, во-первых, опасениями, что, если российские войска будут продвигаться вглубь, то армянское население, возможно, перейдет на сторону русских, а во-вторых, тем, что настал подходящий момент для осуществления программы геноцида армян.

THE MASSACRES OF ARMENIANS IN THE BITLIS PROVINCE BY THE OTTOMAN ARMY AND OTHER ARMED FORMATIONS (1915)

A. BASENTSYAN

Abstract

The Ottoman army and other armed formations took part in the massacres of Armenians in the province of Bitlis. The use of artillery during the massacres testifies that the Ottoman army played an active role in these crimes. The participation of the Ottoman army in the massacres was due to the fact that the forces of the gendarmerie, the “Special organization” and the Kurdish irregular armed formations were not sufficient to carry out the slaughter of the Armenian population. The brutal annihilation of Armenians by the Ottoman army and other armed formations, retreating after the capture of Van by the Russian troops, was conditioned, firstly, with fear that if the Russian troops move deeper, the Armenian population may go over to the side of the Russians, and secondly, by the circumstance that the suitable moment for the implementation of the Armenian Genocide program had come.

АРМЕНОВЕДЕНИЕ О СОВРЕМЕННЫХ АРМЯНО-ТУРЕЦКИХ ОТНОШЕНИЯХ И ИХ ПЕРСПЕКТИВАХ

ЗИНУРОВ Р.Н. (РФ, Москва)

На современним этапе отношения между Республикой Армения и Турецкой Республикой характеризуются наличием давних, неразрешённых противоречий между странами-соседями. Указанный фактор отражается не только на общественно-политической ситуации в этих странах, но и политической обстановке на всем Южном Кавказе.

В силу того, что ни одна из этих стран не намерена отказаться от своей позиции, данный фактор является краеугольным камнем в политическом будущем как этого региона, так и всего Среднего Востока.

В. Тунян пишет о том, что всплеск либерализма, после похорон убитого в январе 2007 года редактора армянской газеты «Акос» Гранта Динка, казалось бы, говорил о начале модернизации турецкого общества, в частности, в вопросе признания геноцида армян. Однако, по мнению автора, у турецкого общества уже был такой опыт. После прихода к власти печально известной партии «Иттихад ве теракки» в июле 1908 года в турецком обществе звучали слова в поддержку армян, которых стали считать революционными учителями младотурок, осуждались убийства армян в период «зулюма» при Абдул-Гамидовском режиме. Тем не менее, пишет В. Тунян, уже в августе, спустя лишь месяц после «братания» с армянами, ЦК партии «Иттихад ве теракки» поручил Джемал-паше начать подготовку «аданских событий» в Киликии, а уже в апреле следующего, 1909 года, имела место резня армян в Киликии[1].

По справедливому мнению С.Г. Амирбекяна, «…сохраняющаяся напряженность в армяно-турецких отношениях таит в себе серьезные

[1] **Тунян В.Г.** Армянский вопрос: мифотворческий аспект, Е., 2015.

вызовы не только интересам национальной безопасности Армении и Турции, но также и региональной стабильности»[2]. В качестве одной из основных причин напряженности в армяно-турецких политических от-ношениях автор называет фактор исторического прошлого, с чем мы не можем не согласиться.

В современной Армении это обстоятельство ни один автор, как правило, не обходит вниманием[3]. При этом внимание в основном об-ращается на агрессивную и жесткую позицию Турции как относительно признания геноцида, так и всех вытекающих из этого возможных пос-ледствий в случае его признания.

Однако из довольно большого числа научной литературы по наз-ванной теме относительно причин непримиримых противоречий меж-ду Арменией и Турцией выделяются некоторые работы, в которых рас-сматриваемый фактор преподносится тенденциозно и неверно[4]. Так, в диссертации Н.Е. Шутовой подчеркивается, что «в результате дашнако-кемалистской войны» отношения между Арменией и Турцией были на-долго испорчены.

На высказываниях этих авторов мы остановимся ниже. Здесь же обратим внимание на еще одно обстоятельство. Исследователи упоми-нают огромный массив работ арменоведов XIX-XX веков, в которых от-сутствуют оценка и анализ позиций самих авторов этих работ. При этом они делают в корне неверные, необъективные выводы. «Благодаря захватническим устремлениям кемалистской Турции,–читаем мы у Н.Е

[2] **Амирбекян С.Г.** Армяно-турецкие политические отношения и перспективы их нормализации. Автореферат дисс. к.п.н., М., 2006, с. 5.

[3] **Петросян Г.А.** Отношения Республики Армения с Россией (1918-1920), Е., 2012, с. 44-45. **Колобов О.А.** Новое слово в армянской историографии (**Петросян Г.А.**, указ. соч., с. 18); **Мелконян А.А.** В поисках научной истины (**Петросян Г.А.,** указ. соч., с. 7-9); **Марукян А.** Армянский вопрос и политика России (1915-1917), Е., 2003, с. 464.

[4] **Шутова Н.Е.** Армянский вопрос в российско-турецких отношениях (1911-1920). Ав-тореферат дисс. к.и.н., Владимир, 2006, с. 18. **Кочар М.** Армяно-турецкие общественно-политические отношения и армянский вопрос в конце XIX–начале XX века, Е., 1988, с. 11-13.

Шутовой,– советскому государству удалось своеобразно решить армянский вопрос»[5].

А по мнению Мери Кочар, арменоведение до сих пор блуждает в поисках, топчется на месте и ведет непродуманные дискуссии относительно армяно-турецких отношений тех лет. Кроме того, она делает уверенный вывод о том, что за более чем двухлетнее пребывание дашнаков у руля армянской государственности проводимая ими политика потерпела полный крах, и они запомнились истории как ярые антисоветчики[6].

Справедливости ради все же укажем, что цитируемая работа М. Кочар датирована 1988 годом, когда работы без ссылок на принципы марксизма-ленинизма попросту не могли увидеть свет, поскольку это бросало тень на братскую дружбу народов СССР.

Возвращаясь к упомянутому труду Амирбекяна С.Г., заметим, что, по его мнению, направленность отношений между Арменией и Турцией сегодня характеризуется тем, что эти два государства, и де-юре, и де-факто признавая друг друга, контактов и дипломатических связей не имеют, граница между ними закрыта.

Соглашаясь с этим мнением, мы со своей стороны должны подчеркнуть, что в настоящее время, несмотря на усилия политических деятелей ведущих стран, включая Президента Российской Федерации, напряженность пока сохраняется и еще далека от разрешения.

Поэтому очевидно, что армяно-турецкие отношения сегодня представляют собой наиболее напряженный и сложный вид международных отношений. В этой связи, с нашей точки зрения, эта тема, в ракурсе нашего исследования, требует системного, поэтапного рассмотрения. Поэтому мы вправе заключить, что армяно-турецкие отношения, впрочем как и рассмотренный нами в предыдущих главах Армянский вопрос, должны быть исследованы на основе метода поэтапного анализа доступных нам материалов.

---

[5] **Шутова Н.Е.,** указ. соч., с. 7.

[6] **Кочар М.,** указ. соч., с. 7, 12-13.

В силу данного тезиса армяно-турецкие отношения мы вправе условно разделить на следующие части:

1. Роль исторического прошлого в армяно-турецких отношениях.

2. Факторы, влияющие на состояние современных армяно-турецких отношений.

3. Перспективы армяно-турецких отношений.

Историческое прошлое, по нашему мнению, является, безусловно, важнейшим и решающим фактором в этой чрезвычайно сложной и, кажется, неразрешимой проблеме. Кроме того, очевидно, что это направление арменоведения невозможно рассматривать в отрыве от Армянского вопроса, возникшего еще в раннем средневековье.

Однако наша статья имеет целью исследовать не саму суть армяно-турецких отношений, их зарождение, этапы основных противоречий и т.д., а представить эту проблему сквозь призму арменоведения. Попытаемся дать обзор русскоязычной литературы об армяно-турецких отношениях, придерживаясь выделенных нами трех аспектов: исторического, аспекта основных факторов, оказывающих влияние на современные армяно-турецкие отношения, и их перспектив в будущем.

Говоря об армяно-турецких отношениях, подавляющая часть арменоведов, как правило, не обходит стороной существующие глубокие исторические противоречия между Арменией и Турцией. При этом тезис о том, что «анализ современного состояния, динамики и перспектив политических отношений между Арменией и Турцией невозможен… без изучения политической истории армянского вопроса»[7], выдвигается в качестве главного.

Еще раньше, но в несколько ином аспекте, по этому поводу высказался и современный исследователь армяно-турецких отношений, профессор Р. Сафрастян. По его мнению, «…позицию Турции в армяно-турецких отношениях нужно интерпретировать с применением понятийного аппарата наступательного реализма, а Армении – оборонитель-

[7] **Амирбекян С.Г.,** указ. соч., с. 8-9.

ного»[8]. Мнение автора не представляется спорным. Выше мы отмечали, что в историческом плане корнем непримиримых противоречий в армяно-турецких отношениях являются Армянский вопрос и геноцид армян. В связи с этим «оборонительная позиция Армении», на наш взгляд, не требует обоснования какими-либо другими обстоятельствами.

В арменоведческой литературе уже высказывалась мысль о том, что «весомая часть армяно-турецких противоречий лежит в плоскости неадекватного восприятия сути исторических реалий. Проблема геноцида армян затрагивает глубинные основы национального самосознания армянского и турецкого народов»[9].

Полностью соглашаясь с данной позицией и не вступая в полемику, все же считаем необходимым отметить следующее. Полагаем, речь должна идти не о «весомой части», а об основном содержании. Ведь других таких фундаментальных противостояний в международных отношениях, по сей день продолжающих будоражить как все армянство, так и подавляющую часть мирового сообщества, нет.

Кроме того, говоря о сути исторических реалий, по нашему мнению, автору следовало бы назвать и Армянский вопрос, который является непосредственным предшественником и основной причиной геноцида армян.

Между тем здесь нелишне указать на еще одно обстоятельство. С нашей точки зрения, Армянский вопрос, помимо чисто политических и географических, включал в себя и другие факторы, уходящие своими корнями в глубь веков. На протяжении тысячелетий находясь под игом различных государств, под бременем беспрерывного и жесткого давления чужой культуры, армянский народ не растворился в этой среде, сумев сохранить национальную самобытность.

---

[8] **Сафрастян Р.** Армяно-турецкие отношения. Попытка теоретической интерпретации с позиций реалистической школы (вводные замечания) (Ориентиры внешней политики Армении, Е., 2002, с. 47).

[9] **Амирбекян С.Г.,** указ. соч., с. 14.

Именно в силу данного обстоятельства армяне сохранили обостренное чувство национального и морального единства, осознавая себя первыми и бесспорными хозяевами своих территорий. И то, что Армянский вопрос приобрел столь огромное значение для всего армянства, в настоящее время вполне закономерно.

Близкое к нашей мысли мнение в арменоведческой литературе уже высказывалось. В этом плане о сути современных армяно-турецких отношений точно и емко высказался Католикос Великого Дома Киликии, Его Святейшество Арам I. Он дал чрезвычайно жесткую оценку турецкому государству относительно Армянского вопроса и армяно-турецких отношений. Эмиграцию армян с территории исторической родины, продолжающуюся в больших масштабах и сегодня, он назвал «национальным кровотечением». «Наши враги–турки,–заявил он,–они хотели оставить Армению без армян»[10].

С эмоциональной и жесткой позицией Святейшего Католикоса, с которой, на наш взгляд, трудно не согласиться, косвенно перекликается и позиция современного армянского ученого и дипломата В. Кардумяна. По его мнению, неурегулированность армяно-турецких отношений таит в себе опасность не только для стабильности жизни в Армении, но и для всего Южно-Кавказского региона[11].

Далее он утверждает, что напряженность армяно-турецких отношений, а значит и безопасность Республики Армения усугубляются и стратегическим союзом Турецкой и Азербайджанской республик. Мысль автора может быть дополнена тем обстоятельством, что упомянутый стратегический союз, безусловно, имеет общие для этих государств глубокие исторические корни.

Между тем некоторые ученые, в частности директор Института ЕвразЭС В. Лепехин, высказал тезис, который, на наш взгляд, являет-

[10] «Сегодня нам нужен мост – между сердцами, душами и мыслями, между нашими общинами, между Арменией и Спюрком» (Газета «Еркрамас», № 7 (209), июль-август 2012).

[11] **Кардумян В.** Коллективня безопасность на Южном Кавказе: концептуальный подход стран региона (Caucasica. Труды Института политических и социальных исследований Черноморско-Каспийского региона, М., 2013, с. 226).

ся оторванным от реальности: «Одновременное вхождение Армении и Азербайджана в ЕвразЭС означает не только новый интеграционный уровень союза, но и нормализацию отношений между Арменией и Азербайджаном, обеспечение безопасности на Южном Кавказе».

Мнение представляется не только далеким от реальности, но и глубоко ошибочным, поскольку, по мысли автора, это означало бы автоматическое урегулирование Карабахской проблемы. Кроме того, это подразумевало бы обоснованность утверждений Баку о пришлости армян, т.е. армяне не являются автохтонами на своей исторической родине, с чем ни один историк, пусть даже и не армянин, не согласится.

Однако профессор В. Лепехин далеко не одинок в подобном видении проблемы. Ученый из Ростова-на-Дону С.С. Субботин, перечисляя конфликтогенные факторы Черноморско-Каспийского региона, Ближнего и Среднего Востока, вообще не упоминает об армяно-турецком противостоянии и Карабахской проблеме[12]. Между тем очевидно, что обе названные нами проблемы представляются наиболее острыми в регионе Южного Кавказа, входящем в Черноморско-Каспийский регион.

Рассуждая об армяно-турецких отношениях, нельзя не отметить еще одно важнейшее, на наш взгляд, обстоятельство. В частности, для современной турецкой политики весьма характерно и даже закономерно, что отрицание геноцида армян турецкая сторона, как очевидно, считает само собой разумеющимся фактом. Ведь именно об этом свидетельствовало приглашение Р.Т. Эрдоганом Президента Армении на празднование 100-летия сражения в Галлиполи, причем приглашение было приурочено к 24 апреля 2015 года – ко дню столетия геноцида армян в Османской империи.

[12] **Субботин С.С.** Использование США конфликтогенного фактора для геополитического контроля Черноморско-Каспийского региона, Ближнего и Среднего Востока (Caucasia. Труды Института политических и социальных исследований Черноморско-Каспийского региона, т. 2, М., 2013, с. 271).

Президент Института Ближнего Востока Е. Сатановский это расценил как «плохо завуалированное издевательство над памятью жертв геноцида армян»[13].

Весьма спорной, но примерно такой же позиции придерживаются обозреватели и известные политологи Р. Киракосян и А. Ханбабян. Начав с того, что процесс нормализации армяно-турецких отношений не отменен, а лишь отложен в долгий ящик, они приходят к выводу о необходимости открыть армяно-турецкую границу. По их мысли, это помогло бы усилить конкурентоспособность экономики Армении[14].

Не вступая в дискуссию с выводами названных авторов, заметим лишь, что, во-первых, открыть армяно-турецкую границу в первую очередь было бы на руку Анкаре, упрямо и бездоказательно отрицающей геноцид. Во-вторых, для Республики Армения, на наш взгляд, это означало бы согласие с позицией турецкой стороны в вопросе геноцида.

Однако ради объективности все же мы должны отметить, что по мнению А. Ханбабяна, «…нынешняя ситуация в сложном и тяжелом процессе армяно-турецкого урегулирования не означает полного отказа от возможного взаимодействия в будущем»[15].

С автором здесь нельзя не согласиться. Нам представляется, что Республика Армения никогда не откажется от своей цели – добиться признания геноцида Анкарой и на этой почве – урегулирования армяно-турецких отношений.

Таким образом, относительно роли исторического прошлого в армяно-турецких отношениях мы придерживаемся позиции, согласно которой из всего массива исторических факторов во главу угла ставятся два важнейших, неразрывных друг с другом, фактора: Армянский вопрос и непризнание геноцида Турцией.

---

[13] **Сатановский Е.** Армения, Турция Израиль в преддверии 100-летия геноцида армян (Газета «Ноев ковчег», апрель 2015 года).

[14] **Ханбабян А.** Армяно-турецкая нормализация: полный крах или временное торможение (Газета «Ноев ковчег», апрель 2015 года).

[15] Цитируется по: **Ханбабян А**., указ. соч.

Переходя к факторам, влияющим на современные армяно-турецкие отношения, считаем необходимым указать, что все они в той или иной степени связаны с Армянским вопросом и геноцидом.

В свете сказанного С.Г. Амирбекян в своей диссертации о проблемах армяно-турецких отношений в первую очередь выделяет факт развала Советского Союза, что, по его мнению, вызвало напряженность во всем Южно-Кавказском регионе, включая и сферу армяно-турецких отношений. Кроме того, автором указывается и такой дестабилизирующий фактор, как переплетение интересов великих и макрорегиональных государств, что в результате наложения внешних и внутренних пластов также усугубляет проблемы всех соседних государств. По мысли автора, развал СССР открыл перед Турцией принципиально новые возможности для стратегического расширения своего присутствия на Южном Кавказе.

Связывая эту проблему с Россией, С.Г. Амирбекян, на наш взгляд, обоснованно подчеркивает двойственность политики России: она должна придерживаться прерогатив развития политических отношений между Арменией, являющейся традиционным союзником и партнером России в этом регионе, и Турцией, естественным соперником России на протяжении веков[16].

В связи с последними событиями в этом регионе, связанными с новым витком российско-турецких государственных отношений, позиция представляется обоснованной. Относительно упомянутого нами нового витка отношений между Москвой и Анкарой необходимо отметить следующее. Россия еще в 1996 году признала геноцид, поэтому новые отношения между Россией и Турцией ни в коем случае не должны отодвинуть в сторону вопрос непризнания геноцида Турцией.

В этом плане изменение политики Кремля в пользу Анкары фактически означало бы отказ от Армении, как от наиболее давнего, стратегического союзника на постсоветском пространстве.

---

[16] **Амирбекян С.Г.**, указ. соч.

А.А. Мкртчян в своей диссертации, посвященной исследованию панисламизма в геостратегии Турции, характеризуя обстановку на Южном Кавказе, помимо развала СССР обоснованно выдвигает такое обстоятельство, как возросшую, с помощью военного блока НАТО, военную мощь Турции. По мысли автора, это обстоятельство не может не сказаться и на армяно-турецких отношениях[17].

На наш взгляд, очевидно, что говоря об отрицании Турцией геноцида армян, в первую очередь необходимо учитывать этот важнейший фактор.

Не вступая в дискуссию с этим автором, отметим, что здесь же им высказана спорная мысль относительно причин возникновения панисламизма. Он считает, что этому во многом способствовали освободительные движения подвластных Османской империи народов: армян, сербов, болгар[18].

Турецкий автор Танер Акчам, говоря о причинах, приведших к геноциду армян, пишет следующее: «Львиная доля причин, приведших к геноциду армян, связана с возникновением турецкого «я» и его сущностью. Эта национальная особенность стала определяющей также в период провозглашения республики и стала причиной наложения табу на армянский вопрос»[19].

Схожую с вышеприведенным автором позицию занимают и другие турецкие исследователи геноцида армян – Рагип Зараколу, Саит Четиноглы и другие.

О турецком «я» высказался и профессор В.Г. Тунян. «В зеркальном «я» современной политической элиты Турции,– пишет он,– признание геноцида армян означает необходимость решения и проблемы Армянского вопроса (Западной Армении), требующей пересмотра либо нивелирования политики предшественников».

---

[17] **Мкртчян А.А.** Панисламизм в геостратегии Турции на Кавказе как глобальная проблема современных международных отношений (политологический анализ). Автореферат дисс. к.и.н., М., 2003, с. 4-6.

[18] Там же, с. 15.

[19] Цитируется по: **Амирбекян С.Г.,** указ. соч., с. 10-11.

Далее он указывает на очень важное обстоятельство, которое, в связи с углублением российско-армянских отношений за последний период, принято упорно замалчивать. «…Присутствует младотурецкий почерк в армянском вопросе, –сохраняется напряженность турецкого режима в отношении к армянскому меньшинству и негативность позиции по армянскому вопросу. Турецкое общество оказалось в очередном переходном состоянии. В борьбе исламистов, кемалистов и радикальных националистов определится современное состояние турецкого общества. Содержание, как ответ вызову времени, будет определяться турецким национальным «я». Если оно окажется раздвоенным, то девиантность поведения Турции сохранится. Если же великим державам потребуется приструнить политическую элиту Турции, то армянский вопрос будет пробным камнем для проверки зрелости ее демократических воззрений»[20].

В связи с рассматриваемым вопросом арменовед А. Марукян озвучил весьма актуальные выводы. Говоря об исторических причинах геноцида, автор вполне обоснованно считает, что вина правительства России здесь состоит в том, что Россия не контролировала территорию Западной Армении и те действия, которые совершались местными властями.

Кроме того, по его мнению, идея «византийской миссии», наметившейся в России до Первой мировой войны, заключалась в том, что Россия должна была завладеть Константинополем и проливами. Эта доктрина напрямую отразилась на Армянском вопросе, которому отводилась определяющая роль в осуществлении данного проекта.

А. Марукян также считает, что Россия не всегда была самостоятельна и независима в своих действиях по Армянскому вопросу, в частности, в годы геноцида,. Находясь в составе Антанты, она постоянно подвергалась дипломатическому давлению союзников, которым не нравилась активизация России в Армянском вопросе[21]. Эти мысли

[20] **Тунян В.Г.** Армянский вопрос: мифотворческий аспект, Е., 2015, с. 9.

[21] **Марукян А.,** указ. соч., с. 458-459.

автора вполне обоснованны. Главное в них, на наш взгляд, то, что автором подчеркнута непоследовательность позиции России в годы, предшествующие геноциду и в ходе чудовищного процесса геноцида. Кроме того, с нашей точки зрения, данное обстоятельство и сегодня продолжает оказывать влияние на судьбу Армянского вопроса.

Вместе с тем мы ни в коем случае не должны упускать из виду глубоко ошибочную, можно сказать даже волюнтаристскую политику Советской России в отношении Первой Республики Армения и Турции Мустафы Кемаля Ататюрка. Ограничимся лишь упоминанием о политике Советской России первых лет Советской власти, имевшей катастрофические последствия для Армении. В этой связи немаловажное значение имеет и другое обстоятельство. Советское государство вплоть до середины 1960-ых годов никак не реагировало на многочисленные обращения Армении, направленные на то, чтобы озвучить вопрос геноцида. Лишь после 1965 года, то есть после состоявшегося грандиозного стихийного митинга по случаю 50-летия геноцида, советское правительство вынуждено было разрешить публикацию материалов о геноциде.

Академиком НАН Армении А.А. Мелконяном в арменоведческой литературе была высказана мысль о том, что руководство Первой Республики неспособно было выявить существенные различия в военно-политической обстановке России 1918-1919 годов, хотя правительство Ованеса Качазнуни приоритетом своей политики считало установление отношений с Советской Россией[22].

По данным другого автора, профессора В. Байбуртяна, подобная политика молодой Советской России чревата была усилением агрессии Турции, ее захватнических притязаний, что в действительности имело место позднее. Между тем, как считает этот автор, «…в политических кругах Республики Армения сложилось мнение, что Красная Ар-

[22] **Мелконян А.А.** В поисках научной истины (**Петросян Г.А.,** указ. соч., с. 7-8).

мия, избавившись от Деникина, попытается объединиться с националистической Турцией Мустафы Кемаля»[23].

Позиции обоих авторов приемлемы. Эти обстоятельства, безусловно, негативно сказались на армяно-турецких отношениях последующих лет – Армения лишилась огромных исторических территорий. Это были решающие факторы, последствия которых имели отрицательный резонанс для Армянского вопроса. Именно эти обстоятельства, наряду с непризнанием Турцией и всей международной общественностью геноцида и его последствий, и по сей день являются ключевыми в Армянском вопросе.

На эти же обстоятельства обратил внимание и профессор О.А. Колобов. Он особо подчеркнул то обстоятельство, согласно которому, «советско-турецкое сотрудничество, а конкретно, политический альянс между собой России и Турции стал крайне негативным фактором в развитии независимости Армении. Страна потеряла ряд исторических территорий и оказалась в сложнейшей геополитической ситуации»[24].

Четкие оценки событиям первых лет Советской власти, относительно армяно-турецких отношений, в своей фундаментальной монографии дал Г.А. Петросян. Он пишет, что Первая Республика Армения Советской России представлялась как агент международного империализма, а связь с Добровольческой армией А. Деникина расценивалась как деятельность, направленная против Советской России[25].

Следует также отметить, что для советских руководителей того периода, искренне веривших в мифическую мировую революцию, события в Турции после прихода к власти М.К. Ататюрка, несомненно, были гораздо привлекательнее, нежели буржуазная, а значит «вражеская», Первая Республика Армении.

---

[23] **Байбуртян В.** Российско-армянские отношения 1918-1920 годов в новом научном исследовании историка Г.А. Петросяна (**Петросян Г.А.,** указ. соч., с. 15).

[24] **Колобов О.А.** Новое слово в армянской и русской историографии (**Петросян Г.А.,** указ. соч., с. 21-25).

[25] Там же, с. 21-25.

Позиция профессора Э.Р. Григорьяна относительно факторов, влияющих на современное состояние армяно-турецких отношений, также заслуживает внимания. Согласно его мнению, Турция не только до сих пор не признала массовые убийства и бесчеловечную депортацию сотен тысяч армян в Дэйр эль–Зор в годы Первой мировой войны, но и занимает откровенно проазербайджанскую позицию по Карабахской проблеме. Она пытается навязать сторонам свое решение проблемы, то есть вернуть Нагорный Карабах под юрисдикцию Республики Азербайджан.

После наложения эмбарго на импорт из Армении турецкие власти последовательно следили за тем, чтобы не позволять развиваться стратегическим и важнейшим отраслям экономики Армении. Из-за этого даже предприятиям с российским капиталом не удавалось преодолеть эмбарго.

Отношениям Анкары и Еревана, пишет Э.Р. Григорьян, активно мешает также Баку, который прилагает максимум усилий для недопущения завязывания каких-либо отношений между Арменией и Турцией. Он считает, что если Турция станет сотрудничать с Арменией, то Азербайджан останется в регионе без поддержки, учитывая весьма напряженные отношения с Ираном[26].

Обращает на себя внимание и следующее, но, на наш взгляд, весьма спорное утверждение названного автора: «созданное полулегальное «правительство Западной Армении в изгнании», возможно, является делом рук спецслужб Турции, умело играющих на настроениях армян».

В своей противоречивой диссертационной работе «Армянский вопрос в российско-турецких отношениях (1911-1921)» Н.Е. Шутова приходит к весьма ошибочным выводам.

Так, по ее мнению, армяно-турецкая война была шансом для Советской России. Однако реализации этого шанса мешали дашнаки,

[26] **Григорьян Э.Р.** Международное и внутреннее положение Армении с точки зрения креативного подхода (Армения и мир, М., 2013, с. 17-21).

«уклонявшиеся» от советизации. Кроме того, автор здесь же утверждает, что Россия не отрицала муссируемый турками факт о неслыханных издевательствах со стороны армян. Вместе с тем ниже Н. Шутова говорит обратное, а именно: Россия защищала армян, не раз выступала против их угнетения и геноцида. «Тем не менее,– пишет она, – насиль-ственный путь советизации был спасением для Армении»[27].

Потери Арменией большей части своих исконных территорий в результате подписания Московского договора между Советской Россией и Турцией автор считает «лучшим решением для урегулирования отношений между Россией, Арменией и Турцией». Тем самым, заключает Н.Е. Шутова, Республика Армения сыграла положительную роль в развитии российско-турецких отношений. «Именно Московский и Карсский договоры дали возможность армянскому народу восстановить силы, избавили его от гнета и войн»,– подытоживает автор.

В начале статьи мы уже обращались к неадекватным оценкам этого автора по поводу политических событий в Армении в исключительной привязке их к Советской России, которая «принудительной советизацией» Армении, якобы, спасла её от неминуемой катастрофы.

Российский арменовед и обозреватель А.Г. Арешев также высказал спорную мысль о перспективах армяно-турецких отношений. Так, он считает, что «…соответствующая оценка событий вековой давности (то есть геноцида –Р.З.) может негативным образом повлиять или даже прервать успешно начавшийся процесс нормализации армяно-турецких отношений»[28].

Большим аналитическим исследованием армяно-турецких отношений явилась монография Мери Кочар «Армяно-турецкие общественно-политические отношения и Армянский вопрос в конце XIX – начале XX века», изданная в 1988 году Ереванским университетом. Как и большинство работ советского периода, исследование М. Кочар осно-

---

[27] **Шутова Н.Е**., указ. соч., с. 177-179.

[28] **Арешев А.Г.** О возможной нормализации армяно-турецких отношений (**Захаров В.А., Арешев А.Г.** Кавказ после 08.08.2008-старые игроки в новой расстановке сил, М., 2010, с. 251).

вано на советской тоталитарной идеологии. Автор жестко, без достаточной доказательной базы критикует армянские национальные партии: Социал-демократическая партия «Гнчак», АРП «Дашнакцутюн» и «Рамкавар Арменакан». По ее мнению, их основным недостатком и главной ошибкой было следующее обстоятельство. Они действовали лишь среди армянского населения, исключив сотрудничество с российскими народами. Нетрудно заключить, что по логике автора, эти партии не признавали такой набивший оскомину в советское время тезис, как «дружба народов»[29].

Определенную попытку анализа армяно-турецких отношений в своей диссертации «Армянский вопрос и российская дипломатия 1912-1914 гг.» предпринял М.Е. Мартиросян. Однако настоящая работа, как и все работы, написанные в советский период, не содержит оценок и выводов относительно сути армяно-турецких отношений в рассматриваемый период[30]. Очевидно, что такую позицию автора можно объяснить стереотипами советского идеологизма.

Учитывая все изложенные выше обстоятельства и факты, мы, на наш взгляд, вправе констатировать, что Турция до сих пор продолжает вести антиармянскую политику. Эта политическая линия, по сути, является продолжением политики младотурок, на что указывают следующие факторы: отрицание очевидных и вопиющих фактов геноцида, признанных многими странами, открытая поддержка Азербайджана по вопросам Нагорного Карабаха и Нахичевани, издевательское приглашение Р.Т. Эрдоганом Президента Армении 24 апреля 2015 года на юбилей Галлипольского сражения, использование для давления на Армению своего «младшего партнера» – Азербайджана и т.д.

И в заключение, в качестве итога к изложенному материалу, приведем наши выводы относительно перспектив урегулирования армяно-турецких отношений.

---

[29] **Кочар М.,** указ. соч., с. 21-36.

[30] **Мартиросян М.Е.** Армянский вопрос и русская дипломатия 1912-1914 гг. Автореферат дисс. к.и.н., Е., 1990, с. 11-16.

Современные задачи урегулирования и развития армяно-турецких отношений предполагают следующее: Армении и Турции необходимо разработать и реализовать взаимосогласованные меры по разрешению существующих сегодня напряженных отношений между двумя странами. Однако очевидно, что это невозможно без решения Карабахской проблемы, без урегулирования армяно-азербайджанских враждебных отношений.

А важнейшим обстоятельством для нормализации армяно-турецких отношений, по нашему глубокому убеждению, является необходимость обязательного признания Турцией геноцида. В этом случае, покаявшись (как Германия за фашизм), Турция должна решительно и жестко осудить действия правительства султана Абдул-Гамида и младотурок. Это предполагает и другое, не менее важное условие: геноцид, как и холокост, должен быть признан и осужден всем мировым сообществом.

Важнейшим условием также должна быть бескомпромиссность политики Республики Армения в вопросах, касающихся геноцида. Любое послабление государственной линии армянской стороны, направленной на обеспечение признания геноцида Турцией и мировым сообществом, будет на руку лишь турецкой стороне, не признающей факт геноцида. Это обстоятельство может существенно ухудшить общественно-политическую ситуацию как в самой Армении, так и за ее пределами – в Спюрке.

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԻ ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՁԻՆՈՒՐՈՎ Ռ.Ն. (ՌԴ, Մոսկվա)

Ամփոփում

Հայ-թուրքական հարաբերությունների հիմնահարցը հայագիտական կտրվածքով վերհանելիս հարկ է առանձնացնել երեք տեսանկյուններ՝

պատմական, արդի հայ-թուրքական հարաբերությունների վրա ներազդող գործոններ և ապա դրանց հեռանկարային զարգացումներ: Նշված հարաբերություններում պատմական անցյալի դերը առավել ևս ընդգծվում է փոխադարձորեն պայմանավորված երկու գործոնների նշանակությամբ, որպիսիք են Հայկական հարցը և ցեղասպանության ժխտումը Թուրքիայի կողմից: Այս հիմնահարցի վերաբերյալ ռուսալեզու հայագիտական աշխատություններում, անկախ հեղինակների այս կամ այն տարակարծություններից, կենսունակ է այն տեսակետը, որ բազմաթիվ պետությունների ճանաչած ցեղասպանության ժխտումը և Լեռնային Ղարաբաղի ու Նախիջևանի հիմնահարցերում անվերապահ սատարումը Ադրբեջանին՝ Թուրքիայի քաղաքական ուղեգիծն է, որն, ըստ էության, երիտթուրքերի հակահայ քաղաքականության շարունակությունն է, և որի դեմ պետք է ուղղված լինեն հայագետների ջանքերը:

ARMENIAN STUDIES ON CONTEMPORARY ARMENIAN-TURKISH RELATIONS AND THEIR PERSPECTIVES

R. ZINUROV (RF, Moscow)

Abstract

Concerning the problem of Armenian-Turkish relations in context of Armenian Studies three aspects should be mentioned: historical factor, factors affecting on contemporary Armenian-Turkish relations as well as perspectives of their developments. From the point of the mentioned relations the role of historical past is especially emphasized by the mutually conditioned meaning of two problems: Armenian Issue and the denial of Genocide by Turkey. In corresponding works written in Russian language, regardless various opinions, the idea is always emphasized that the Genocide denial, as well as countenance of Azerbaijan concerning the problems of Nagorno Karabakh and Nakhijevan, is the political marker of Turkey. This should be regarded as a direct extension of anti-Armenian policy of the Young Turks, against which the efforts of armenologists should be directed.

ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ Ա.Ս.

Թուրքիայի կողմից Հայաստանի Հանրապետության (այսուհետև՝ Հայաստան) հանդեպ որդեգրած մերժողական և անթաքույց թշնամական քաղաքականությունը տարածաշրջանի անվտանգության միջավայրն ապակայունացնող և բաժանարար գծեր ձևավորող իրական գործոն է[1]: Թուրքիայի որդեգրած քաղաքականությունը պայմանավորված է Լեռնային Ղարաբաղի հակամարտությամբ և Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման խնդրով[2]: Հայաստանի և հայ ժողովրդի նկատմամբ Թուրքիայի վարած քաղաքականությունը բացասական ազդեցություն է ունենում նաև Թուրքիայի հասարակության վրա: Թուրքիայի ղեկավարության կողմից սեփական ժողովրդի նկատմամբ վարած ինքնախաբեության քաղաքականությունը, սեփական պատմության կոծկումը և աղավաղումը հասարակության մեջ ծնում են այնպիսի հիվանդագին երևույթ, ինչպիսին ազգայնամոլությունն է: Երկու երկրների հարաբերությունների կարգավորման գործում գնահատելի ջանքեր են գործադրում միջազգային կառույցները, հատկապես Եվրամիությունը[3]: Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը Թուրքիայի համար Եվրամիությանն անդամակցելու նախապայման կարող է հանդիսանալ[4]: Սեփական պատմության հետ հաշտվելը, Հայոց ցեղասպանության ճանաչումը, Հայաստանի և մյուս հարևան պետությունների հետ հարաբերությունների կարգավորումը անհրաժեշտ են Թուրքիային, քանի որ դա ժողովրդավարացման

---

[1] **Քոչարյան Տ.,** Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգության ապահովումը ազգային անվտանգության համատեքստում, Ե., 2012, էջ 327:

[2] **Bulent A.** Turkey and the Crisis in the Caucasus (CSIS 09.09.2008).

[3] **Kouchner.** Armenian-Turkish Dialog Vital for Peace in Caucasus (www.panarmenian.net//news/eng).

[4] Солана предлагает использовать армяно-турецкие отношения для решения Карабахской проблемы (http://www.armtoday.inf/default.asp/04/23/2009).

լուրջ խթան կհանդիսանա և կնպաստի բարեփոխումներ իրականացմանը և Եվրամիությանը անդամակցելուն[5]:

2002-2003 թթ.՝ դեռ մինչև 2008 թվականի «ֆուտբոլային դիվանագիտության» մեկնարկը, հայ-թուրքական հարաբերություններում զգալի աշխուժացում նկատվեց: 2003 թ. հունիսին Մադրիդում երկու երկրների արտգործնախարարներ Վ. Օսկանյանի և Ա. Գյուլի հանդիպման ժամանակ որոշվեց ակտիվացնել երկկողմ հարաբերությունների հաստատմանն ուղղված քայլերը, առևտրատնտեսական հարաբերությունները դարձան քննարկվող գլխավոր թեմաները: Միևնույն ժամանակ, թուրք դիվանագետները և հայ պաշտոնյաները, հայկական սփյուռքի որոշ ներկայացուցիչներ ներգրավվեցին «երկրորդ մակարդակի» դիվանագիտական գործընթացի մեջ[6]: 2003 թ. ամռանը թուրք զինվորականները մասնակցեցին ՆԱՏՕ-ի «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի շրջանակներում Երևանում անցկացվող զորավարժություններին: Նույն թվականին պաշտոնական այցով Վաշինգտոնում գտնվող Էրդողանը հայտարարեց Հայաստանի հետ սահմանի բացման հավանականության մասին՝ հարուցելով ադրբեջանական կողմի դժգոհությունը[7]: 2004 թ. ապրիլին Թուրքիայի նախկին արտաքին գործերի նախարար Իլթեր Բյուրքեմենը «Հյուրիեթ» օրաթերթում հանդես եկավ Թուրքիայի կառավարության դեմ ուղղված քննադատությամբ, որում Հայոց ցեղասպանության ճանաչման դեմ ուղեգիծը համարեց անօգուտ և կոչ արեց աստիճանաբար մերձանալ Հայաստանին՝ նպաստելու Եվրոպայում հակաթուրքական տրամադրության նվազմանը[8]: «Սաբահ» օրաթերթի մեկ այլ հոդվածում նույնպես քննադատվում էր Հայաստանի նկատմամբ Թուրքիայի վարած քաղաքականությունը և ավելի չեզոք լինելու կոչեր էր արվում՝ նշելով, որ Ադրբեջանի հետ սերտ շփումները Թուրքիային զրկեցին միջնորդ լինելու հնարավորությունից և դարձրեցին Լեռնային Ղարաբաղի հակամարտության

[5] European Parliament Looking Forward to Normalization of Armenian-Turkish Relations (www.armtown.com/news).

[6] Turkey Seen Holding Secret Talks with Yerevan, Armenian Diaspora (Foreign Broadcast Information Service. Daily Report-Soviet Union, 16 June 2003 #0613).

[7] **Zulfugar Agayev.** Azerbaijani Could Turkey Spoil Nagorno-Karabakh Peace? 13 April 2004(http://wwww.tol.cz/look/TOLruslarticle.tpl?IdLanguage=1&IdPublication=4&NrIssue=59&NrSection=1&Nr.Aricle=11908).

[8] Հայ-թուրքական հարաբերություններին անդրադարձը անհրաժեշտ է (Ազգ, 8.VII.2004):

աչառու կողմ[9]: 2004 թ. ապրիլին «Ֆրանկֆուրտեր Ալգեմանյե Ցայտունգ» օրաթերթում տպագրված հարցազրույցում ՀՀ նախկին արտգործնախարար Վ. Օսկանյանը նշել է. «Անցած տարվանից ի վեր Թուրքիայի արտաքին գործերի նախարար Ա. Գյուլի հետ ունեցել եմ երեք հանդիպում: Առաջին հանդիպումը լավ էր, երկրորդը՝ պակաս լավ, երրորդը՝ վատ: Առաջին հանդիպման ընթացքում մեր ուշադրության կենտրոնում երկկողմ թեմաներն էին: Երկրորդ հանդիպման ընթացքում բանակցությունների առարկա դարձավ նաև Ղարաբաղյան հիմնահարցը: Երրորդ հանդիպման ընթացքում Ղարաբաղյան հիմնահարցը դարձավ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման նախապայման: Այսպիսով, մենք հայտնվեցինք նախկին դիրքերում, ինչպես Թուրքիայի նախկին կառավարության օրոք»[10]: 2005թ. ապրիլին Թուրքիայի նախկին վարչապետ Ռ.Թ. Էրդողանը ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանին նամակ գրեց, որում առաջարկում էր ստեղծել պատմաբանների խումբ՝ 1915 թ. իրադարձությունները քննելու և որակելու համար: Հայկական կողմի պատասխանը մերժողական էր:

2008 թվականին Թուրքիայի վարչապետ Ռ.Թ. Էրդողանին հաջողվեց հաղթահարել խոր ներքաղաքական ճգնաժամը և ակտիվորեն ներգրավվել աշխարհաքաղաքական և տարածաշրջանային գործընթացներում: Թուրքիայի վարչապետը հավաստիացնում էր, որ պատրաստ է հանդես գալ միջնորդական առաքելությամբ՝ հարավօսեթական հնգօրյա պատերազմում և ԼՂ հակամարտությունում, զուգահեռաբար ներկայացնելով «Կովկասում խաղաղության և հակամարտության կարգավորման պլատֆորմի» նախագիծը: Դրան նպաստեց այն, որ ՀՀ նախագահ Ս. Սարգսյանի նախաձեռնությամբ 2008 թ. հունիսին մեկնարկեց հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացը, այսպես կոչված «ֆուտբոլային դիվանագիտությունը»: Էրդողանի համար այս գործոնների համադրումը լավ հնարավորություն էր նորովի ներկայանալու տարածաշրջանի պետություններին: Թուրքիայի համար ակնհայտ էր, որ առաջարկած

[9] Columnist Says Turkish Foreign Ministry Opposes Opening Border Gate with Armenia (Foreign Broadcast Information Service. Daily Report-Soviet Union, 13 October 2007#1011).

[10] **Hermann R.** Ein Gespräch mit Armenias Außenminister Vartan Oskanian "Die Ungewißheit wird ausdauern" 23.04.2004 (http://www.deutscharmenischegesellschaft.de/wp-content/uploads/2009/11/rbkkt-interviw-faz-oskanian.pdf).

նախագիծը ենթակա է ձախողման առանց Հայաստանի աջակցության[11]: Հայ-թուրքական բանակցությունները տևեցին մի քանի փուլ և ավարտվեցին 2009 թ. հոկտեմբերի 10-ին Ցյուրիխում՝ արձանագրությունների ստորագրմամբ: Ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, Թուրքիան պատրաստ էր բանակցությունների, սակայն պատրաստ չէր դրանց հետևանքներին: Հայ-թուրքական բանակցությունների սկզբնական փուլում թուրք-ադրբեջանական հարաբերությունները ստացան բավական լարված բնույթ՝ փոխադարձ մեղադրանքներով, սակայն հետագայում դրանք ավելի սերտացան: Թուրք-ադրբեջանական հարաբերությունների իրավապայմանագրային հենքը շարունակում է զարգանալ, և մինչ օրս կնքվել են մոտ 500 միջպետական պայմանագրեր[12]: Վերջին ժամանակներս գաղափարախոսական առումով Թուրքիայի վարած քաղաքականությունում նկատվում են ճգնաժամային տարրեր, թուրքական քաղաքական էլիտան ձգտում է երկիրը այդ գործընթացից դուրս բերել՝ որպես տարածաշրջանային գերտերություն և իսլամական դերակատար[13]: ԼՂ հակամարտության կարգավորման գործընթացի մասով սա պայմանավորված է հիմնականում երկու հանգամանքով՝ Թուրքիայի ակտիվացմամբ Մերձավոր Արևելքում և Ռուսաստանի Դաշնության մտահոգությամբ՝ կապված Հարավային Կովկասում Թուրքիայի աննախադեպ ակտիվացմամբ: ԱՄՆ-ի և ՌԴ-ի հակասությունների դաշտում Թուրքիայի մանևրելու ազատությունը որոշակի չափով սահմանափակվել էր՝ Իսրայելի հետ հակասությունների և միջուկային ծրագրերի շուրջ Թուրքիայի և Իրանի Իսլամական Հանրապետության մերձեցման հանգամանքից ելնելով: Թուրքիայի արտաքին քաղաքականությունը շեղվել է դեպի Հարավ և Արևելք: Այդ քաղաքականության մեջ մեծ դեր ունի կրոնական գործոնը, որի ապացույցն էր նաև իսլամական կոչերով հանդես եկող «Արդարություն և զարգացում» կուսակցության բացարձակ հաղթանակը Թուրքիայի 2011 թվականի խորհրդարանական ընտրություններում: Թուրքիայի քա-

[11] Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության Դրաստամատ Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ (Ռազմավարական անվտանգային հետազոտություններ, հ. 3, Ե., 2014, էջ 333):

[12] **Kanbolat H.** Towards a New Era in Turkish-Azerbaijan Relations (http://www. today szama.com/columnist-254100-towards-a-new-turkish-azerbaijan-relations.html).

[13] **Հարությունյան Ս.,** Թուրքիա. հայտ կայսերական քաղաքականության համար (21-րդ դար, 2008, N 2, էջ 132):

ղաքական փոփոխությունը մեծավ մասամբ պայմանավորված է Եվրամիությանն անդամակցելու մերժման փաստով: Թեև Եվրամիությունը բացեիբաց չի հայտարարել մերժման մասին, սակայն այդ գործընթացի ձգձգումը, այլ խոչընդոտների առաջքաշումը մեկնաբանվում են նմանապես թուրք հասարակության և քաղաքական ուժերի կողմից[14]: Սա է փաստում նաև 2011 թ. ապրիլին Շանհայան համագործակցության կազմակերպությանը Թուրքիայի ներկայացրած հայտը՝ նրա հետ երկխոսության գործընկեր դառնալու վերաբերյալ[15]:

Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացը շարունակում է մնալ սառեցված վիճակում: Թեև ԱՄՆ-ի կողմից հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հարցում Թուրքիայի վրա գործադրվել են որոշակի ճնշումներ՝ Թուրքիայի ներքաղաքական և արտաքին քաղաքական մակարդակներում շարունակում են շեղվել ձեռք բերված պայմանավորվածությունից՝ հարցի կարգավորումը կապելով Լեռնային Ղարաբաղի հակամարտության հետ[16]: Չնայած հարաբերությունների կարգավորման գործում Թուրքիայի բացասական դիրքորոշմանը՝ թուրքական իշխանությունները փորձում են միջազգային հանրությանը մոլորության մեջ գցել՝ պնդելով, որ հայկական կողմի հետ շարունակվում են բանակցությունները[17]: Հայաստանի իշխանությունների՝ թուրքական ապակողմնորոշիչ դիվանագիտական ջանքերից հեռու մնալու քայլը նպաստում է տարածաշրջանային հարցերում առաջատար դեր զբաղեցնելու Թուրքիայի նկրտումների զսպմանը՝ ՌԴ-ի դերի ակտիվացման ներքո: Տարածաշրջանային անվտանգության համատեքստում թուրք-ադրբեջանական ռազմավարական հարաբերությունները բարելավվում են՝ հայ-

[14] **Владимир С.** Евросоюз должен активизировать свою политику в Закавказье /The Wall Street Journal, USA (hptt://www.memo.ru/hr/hotpoints/caucas1).

[15] **Bulent A.** Turkish Policy towards Central Asia, Foundation For Political, Economic and Social Research, Policy Brief, April 2008#12.

[16] **Gorvett J.** Turkey Plays Big Brother to Azerbaijan in Opening Skrimishes over Control, ինչպես նաև **Овсепян Л.** Турецко-американское сотрудничество в контексте модернизации турецких ВВС, Регион и мир (Научно-аналитический журнал ИПП, вып. 1, Е., 2010).

[17] Եվրոպական իրավունքի և ինտեգրման կենտրոն, Թուրքիա-Եվրամիություն-Հայաստան, մարտահրավերներ և հնարավորություններ, միջմասնագիտական հետազոտություն, Ե., 2009:

թուրքական հարաբերությունների սառեցմանը զուգահեռ[18]: Ադրբեջանի հետ Թուրքիայի ռազմավարական պարտավորություններն ակնհայտորեն գերակայում են հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացում[19]: Թուրքիայի խորհրդարանը 2011 թ. մարտի 11-ին վավերացրել է 2010 թ. օգոստոսի 16-ին ստորագրված՝ «Թուրքիայի և Ադրբեջանի միջև ռազմավարական գործընկերության և փոխադարձ օգնության մասին» համաձայնագիրը, որը Ադրբեջանի Միլի Մեջլիսը վավերացրել է 2010 թ. դեկտեմբերի 21-ին[20]:

ՀՀ ազգային անվտանգության տեսակետից Թուրքիայի տարածաշրջանային դերի փոփոխությունը վտանգներ է պարունակում՝ կապված թե՛ Հայաստանի նկատմամբ վարվող ոչ բարենպաստ քաղաքականության, թե՛ թուրք-ադրբեջանական դաշինքի հետագա ամրապնդման հետ: Թուրքիայի՝ տարածաշրջանային գերտերության վերածման քաղաքականության կարևոր բաղադրիչն է նաև Հարավային Կովկասում նրա դիրքերի ամրապնդումը՝ Ադրբեջանի հետ ռազմաքաղաքական դաշինքի ձևավորման միջոցով, որն ամրագրված է «Նպատակ-2023» ծրագրում և ամրապնդված 2010 թ. օգոստոսի 16-ի Բաքվի համաձայնագրով[21]:

Թուրք-ադրբեջանական քաղաքականությունն ուղղված է Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հաղորդակցային մեկուսացմանը, այդ թվում՝ տարածաշրջանային մակարդակում, ինչպես նաև հայկական պետությունների տնտեսական հյուծմանը: Ադրբեջանին հաջողվեց ձախողել ԱՄՆ-ի, ՌԴ-ի, Ֆրանսիայի և Շվեյցարիայի ներգրավումը հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացին, որն ուղղված էր տարածաշրջանում լարվածության թուլացման առավել կարևոր խոչընդոտներից մեկի հաղթահարմանը: Ադրբեջանի և Թուրքիայի մարտավարությունն է հայ-թուրքական հարաբերությունների կար-

---

[18] Armenia-Turkey: The Great Debate, August 2009, European Stability Initiative (http://www.esweb.org/index.php?lang=en&id=322&debateID=2&slideID=1#ftnref2010).

[19] **Арешев А.** Вооруженные силы и внешнеполитический курс Турции на современном этапе (Вопросы стратегии и безопасности, Е., 2009).

[20] **Овсепян Л.** Модернизация вооруженных сил Турции и военная промышленность, Е., 2010.

[21] **Էվոյան Լ.** Ադրբեջանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև ռազմավարական գործընկերության և փոխադարձ օգնության մասին պայմանագիրը՝ թուրք-ադրբեջանական երկկողմ հարաբերությունների որակապես նոր փուլի սկիզբը (Ակունք, 2012, N 3, էջ 68-80):

գավորումը պայմանավորել Ղարաբաղյան հիմնահարցի կարգավորման հետ, որը հնարավոր է ոչ միայն ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում, այլ նաև տարածաշրջանային զարգացումներում Անկարային հատուկ դեր վերապահելու դեպքում: Լեռնային Ղարաբաղը և Հայաստանը թուրք-ադրբեջանական ցամաքային շրջափակման պայմաններում պահելու քաղաքականության շրջանակներում Ադրբեջանն օգտագործում է քաղաքական, դիվանագիտական և տնտեսական լծակներ՝ տարածաշրջանային և արտատարածաշրջանային տրանսպորտային, հաղորդակցային և այլ ենթակառուցվածքներում Հայաստանը և Լեռնային Ղարաբաղը շրջանցող ուղիներով անցկացնելու, Հայաստանը աշխարհին կապող ռազմավարական նշանակության հաղորդակցային ուղիների վրա վերահսկողություն հաստատելով[22], ինչպես նաև երկու հայկական պետությունների էներգետիկ անվտանգությունը խաթարելու համար[23]: Հաղորդակցային մեկուսացման քաղաքականության ընդհանուր շրջանակներում պետք է դիտարկել նաև Ստեփանակերտի օդանավակայանի վերագործարկման հեռանկարների շուրջ Թուրքիայի և Ադրբեջանի բարձրացրած աղմուկը և սպառնալիքները, այդ թվում՝ ուժի գործադրումը՝ Թուրքիայի օդային տարածքը հայաստանյան չվերթների համար փակելու վերաբերյալ[24]: Տարածաշրջանում առկա հակասությունների խորացմանն է նպաստում նաև Ադրբեջանի սանձազերծած և թուրքական կողմի հետ սերտ համագործակցությամբ իրականացվող սպառազինության մրցավազքը[25]: Ադրբե-

[22] **Kotanjian H.** Demythologization of Nabucco and Resetting of the Madrid Principles: Key to Peacefully Breaking the Karabakh Deadlock (http://www.ingepo.ru/en/materials/405/Demythologization-of-Nabucco-resetting-of-the-Madrid-principlesia-key-to-peacefully-breaking-the-karabak-deadlock) ինչպես նաև И.А."REGNUM" "Баку проявил интерес к покупке грузинского отрезка газовой магистрали из России в Армению„ 20.08.2010 (http://www.regnum.ru/news/1317137.html) ինչպես նաև И.А."REGNUM" **Акопян В.** Газопровод из России-важнейший элемент энергетической безопасности Армении (http://www.regnum.ru/news/1317256.html) ինչպես նաև И.А."REGNUM" Ереван не против вхождения Баку в частичное владение стратегической газовой трубой Россия-Армения, 02.03.2011 (http://www.regnum.ru/news/1379773.html).

[23] Տե՛ս Азербайджан в СБ ООН призвал остановить деятельность АЭС Мецамор, "Day.Az"21 апреля 2012 (http://www.news.day.az/politics/328216.html).

[24] И.А."REGNUM" Турция может закрыть для Армении свое воздушное пространство-источник, 08.10.2012 (http://www.regnum.ru/news//578909%.html).

[25] **Мурад Б**. Аяр-секретарь Министерства национальной обороны Турции: Турция может передать Азербайджану технологии для прозводства всех видов классического вооружения, "azeri.ru"(http://www.azeri.ru/papers/azerizzv_az/910321).

ջանը քայլեր է ձեռնարկում հայկական կողմի նկատմամբ գերազանցության հասնելու և ուժերի ռազմաքաղաքական հավասարակշռությունը իր օգտին փոխելու, Ղարաբաղյան հարցում իր քաղաքական և ռազմաքաղաքական շանտաժի արդյունավետությունը մեծացնելու ուղղությամբ[26]: Թուրք-ադրբեջանական նշված քաղաքականությունը լրացուցիչ հնարավորություն է ստեղծում Վրաստանի համար, որը հավակնում է Հայաստանի և Ադրբեջանի տարածաշրջանային հաղորդակցային հանգույցի դերին[27]: Ադրբեջանի և Վրաստանի շահերը համընկնում են տարածքային ամբողջականության սկզբունքի՝ միջազգային իրավունքի այլ հիմնարար սկզբունքների, այդ թվում՝ ազգերի ազատ ինքնորոշման սկզբունքի նկատմամբ գերակայության հարցում. նրանք տարբեր միջազգային կազմակերպություններում սատարում են միմյանց: Թուրքիան, չնայած Հյուսիսային Կիպրոսի հիմնախնդրում իր հակառակ դիրքորոշմանը, սատարում է Ադրբեջանին և Վրաստանին[28]: Թուրքիայի ներդրումները և Տրանսանատոլիական գազամուղի կառուցման պայմանագրի ստորագրումը Ադրբեջանի համար հնարավորություն ստեղծեցին Թուրքիայում ձևավորելու ազդեցիկ տնտեսական լոբբի, որը մեծավ մասամբ զբաղվում է քաղաքական գործունեությամբ: Այդ լոբբին եղել է 2012 թ. փետրվարի 26-ին Ստամբուլում կայացած «Խոջալուի ցեղասպանությանը» նվիրված երթի կազմակերպիչներից մեկը: Հայաստանի անվտանգության տեսակետից դա վտանգավոր զարգացում է, քանի որ «եղբայրական Ադրբեջանի» շահերի պաշտպանությունը Թուրքիայի համար, բացի քաղաքական նշանակությունից, ձեռք է բերում նաև տնտեսական նշանակություն[29]:

Հայոց ցեղասպանության հարյուրամյակի նախաշեմին Թուրքիան ակտիվացրել էր դրա միջազգային ճանաչմանը խոչընդոտելու քաղաքականությունը՝ ձևավորելով հակազդման նոր մեխանիզմներ: Թուրքիայի

[26] Президент Ильхам Алиев “Азербайджан восстановит свою территориальную целостность„“Day.Az” 26.06.2012 (http://www.news.day.az/politics/340417.html).

[27] **Минасян С.** Армяно-грузинские отношения:динамика и современное состояние (http://www.bs-kavkaz.org/2012/02/armjano-gruzinskie-otnoshenija-dinamika-i-sovremennoe-sostojanie).

[28] Новый формат грузино-азербайджано-турецкого сотрудничества не направлен против какой-либо третьей страны “ArmeniaToday” 09.06.2012 (http://www.armtday.ifo).

[29] Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության Դրաստամատ Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ (Ռազմավարական անվտանգային հետազոտություններ, հ. 4, Ե., 2014, էջ 47):

որդեգրած ռազմավարության մեջ էական էին երեք զարգացումներ: Առաջին՝ հակահայկական գործունեություն ծավալող կառույցների ջանքերի միավորման և համակարգման մեխանիզմների ստեղծում, օրինակ՝ «Նորագույն պատմության ուսումնասիրության կենտրոնը», որի աշխատանքները համակարգում է վարչապետի գլխավոր խորհրդականը[30]: Երկրորդ՝ Ադրբեջանի հետ պետական մակարդակով համագործակցություն՝ «Խոջալուի ցեղասպանության» քարտի խաղարկման առումով՝ ուղղված Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման կասեցմանը: Թուրք-ադրբեջանական լոբբինգի միավորման նախաքայլը 2012 թ. ապրիլին թուրքական «Հայերի անհիմն պնդումների դեմ պայքարի կազմակերպության» և «Աշխարհասփյուռ արբեջանական համայնքների կենտրոնի» միջև համագործակցության պայմանագրի կնքումն էր[31]: Երրորդ՝ Թուրքիայի ռազմավարությունը նպատակաուղղված է Հայկական սփյուռքի պառակտմանը՝ հակասություններ առաջ բերելով նրա ներսից քայքայմանը: Թուրքիան իր դեսպանությունների և պատվիրակությունների միջոցով ձգտում է ուղիղ կապեր հաստատել Հայկական սփյուռքի տարբեր կառույցների հետ՝ դրանով իսկ ջանալով Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման խնդրում նրանց դրդելու դեպի ավելի մեղմ դիրքորոշման: Թուրքիան Հայոց սփյուռքի հետ կապերի հաստատման գործում ձգտում է օգտագործել թուրքահայերին: 2016 թ. ապրիլյան քառօրյա պատերազմում Թուրքիայի աջակցությունը Ադրբեջանին առավել քան ակնհայտ էր: Հայաստանը պետք է օգտագործի Թուրքիայում 2016 թվականի հուլիսյան հեղաշրջման անհաջող փորձից հետո ստեղծված իրավիճակը, որպեսզի հնարավորինս չեզոքացնի Թուրքիայի միջամտությունը Լեռնային Ղարաբաղի հակամարտությունում: Հայաստանը ինչպես հարկն է չօգտագործեց այն լարված իրավիճակը, որը առաջացել էր Ռուսաստանի և Թուրքիայի միջև ռուսական Սու-24 ինքնաթիռի խոցման հետևանքով: Թուրքիայի և Ռուսաստանի հարաբերություններին նոր հարված հասցվեց 2016թ. դեկտեմբերին՝ Թուրքիայում Ռուսաստանի դեսպանի սպանությամբ: Այսպիսով, Հայաստանը կարող է օգտվել Թուրքիայում ստեղծված իրավիճակից՝

[30] **Omer Sahin** "Hasan Cemal՝in 2015, Devet՝ in 2015, Devletin icinde"gizlice kurulan merkez "Radikal" 24.09.2012.

[31] ASIMDER ve BDM՝ deb Ermeni Diasporasina karsi isbirligi (http://www.hristiyangazete.com/2012/04/asimder-ve-bdmden-ermeni-diaspora-karsi-isbirligi//#UMRDeuRORQA).

վերջինիս Լեռնային Ղարաբաղի հակամարտությունում միջամտության և հակահայկական լոբբինգի չեզոքացման համար:

АРМЯНО-ТУРЕЦКИЕ ОТНОШЕНИЯ В КОНТЕКСТЕ НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ РА

МНАЦАКАНЯН А.С.

Резюме

Напряженность армяно-турецких отношений прежде всего обусловлена выдвижением Турцией определенных предварительных условий и отсутствием дипломатических отношений. Сказанное создает ряд угроз для национальной безопасности Армении. Республика Армения стремится к урегулированию отношений с Турцией и готова вступить в конструктивный диалог без каких-либо предварительных условий.

ARMENIAN-TURKISH RELATIONS IN THE CONTEXT OF NATIONAL SECURITY OF THE RA

A. MNATSAKANYAN

Abstract

The tension in Armenian-Turkish relations first of all is determined by rising of certain pre-conditions to Armenia by the side of Turkey, and by the absence of diplomatic relations between two countries. This policy has given rise to a number of threats to the national security of Armenia. Armenia seeks to achieve regulation in relations with Turkey and is ready to start a constructive dialogue without any pre-conditions.

ԿՈՎՍԱԿԱՆ-ՔԱՇՈՒՆԻՔԻ ՍՅՈՒՆԻՆԵՐԸ

ՄԻՐՈՒՄՅԱՆ Ժ.Ա.

Կովսականը պատմական Սյունիքի գավառներից էր: Կոչվել է նաև Կուսական, Կոսական և Գրհամ՝ համանուն գլխավոր բերդի անունով[1]: Ստ. Օրբելյանը այն նշում է որպես Սյունիքի 8-րդ նահանգ, որն այժմ Գրհամ են կոչում[2], իսկ ըստ «Աշխարհացույցի»՝ Կովսականը Սյունիքի 12-րդ գավառն էր, ուներ 625 կմ^2 տարածություն և համապատասխանել է Ադրբեջանական ԽՍՀ-ի Զանգելանի շրջանին[3], որը ներկայիս ԼՂՀ-ի Կովսականի շրջանն է: Ըստ հայր Ղևոնդ Ալիշանի՝ գավառը հիմնականում զբաղեցրել է Բասուտ (Ծավ) գետի հովիտը և Ողջի գետի աջակողմյան մի շարք վտակների ավազանները: Գավառի արևմտյան սահմանն անցել է Խուստուփ լեռան հյուսիսային լեռնաճյուղով և Բասուտի արևմտյան ջրբաժանով, հարավարևելյանը՝ Արաքսով, հյուսիսարևելյանը՝ Ողջի գետով[4], որը ստորին հոսանքով անցել է գետի ձախ ափը և հասել Հագարի գետին[5]: Բ. Հարությունյանը գտնում է, որ Կովսականը զբաղեցրել է Կապանի հարավարևելյան և Ադրբեջանական ԽՍՀ-ի Զանգելանի շրջանի հարավային մասերը: Հարավից և արևելքից գավառը սահմանակցել է Արաքս և Հագարի գետերին[6]:

Քաշունիք գավառը Արևելյան կամ Մյուս Բաղքն էր՝ ընկած Աղավնո գետից արևելք[7]: Հետագայում կոչվել է Բարկուշատ[8]: Քաշունիքն ուներ 52 բնակավայր, վճարում էր 444 դահեկան հարկ[9]:

---

[1] **Հակոբյան Թ.**, Հայաստանի պատմական աշխարհագրություն, Ե., 1968, էջ 201:

[2] **Ստ. Օրբելյան**, Սյունիքի պատմություն, Ե., 1986, էջ 70:

[3] **Երեմյան Ս.**, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, Ե., 1963, էջ 60, 109, 117:

[4] **Ղ. Ալիշան**, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 286:

[5] **Կարագյոզյան Ա.**, Սյունյաց աշխարհի Կովսական գավառի տեղադրությունը (X в.), [ՀՀ ԳԱԱ Լրաբեր հասարակական գիտությունների (այսուհետև՝ Լրաբեր), 1980, № 12, էջ 100-101]:

[6] Հայ ժողովրդի պատմություն, հ. III, Ե., 1976, էջ 126:

[7] **Ստ. Օրբելյան,** էջ 432, ծանոթ. 218:

[8] Նույն տեղում, էջ 114:

[9] **Գրիգորյան Գ., Հախվերդյան Ս.,** Սյունիքի պատմություն, Ե., 2001, էջ 17:

Սյունիքի իշխանական տան վերաբերյալ VIII դարի սուղ տեղեկությունները հնարավորություն չեն տալիս հստակորեն որոշելու Կովսականի Սյունի գահակալ իշխանության առաջացման հանգամանքները: Ստ. Օրբելյանը չի նշում Կովսականի իշխանների ազգակցության աստիճանը Սյունիքի գահերեց իշխանների ճյուղի հետ: Հ. Ութմազյանի կարծիքով՝ ավատական այս տան՝ IX դարում մեզ հայտնի իշխան պետք է համարել Սահակին, որ գործել է Վասակ մեծ նահապետի ժամանակ՝ իբրև առանձին գահակալ իշխան Կովսականում և Քաշունիքում[10]: Մյուս ուսումնասիրողները ևս, Կովսական-Քաշունիքի առաջին իշխան նշելով Սահակին, չեն նշում նրա ազգակցության աստիճանը Սյունիքի գահերեց իշխանների ճյուղի հետ:

Անուղղակի մի շարք փաստերի հիման վրա կարող ենք եզրակացնել, որ Կովսականի իշխանությունն առաջացել է VIII դարի վերջին, և նրա առաջին ներկայացուցիչն էր իշխան Սահակի հայրը, որի անունը սկզբնաղբյուրները չեն հաղորդում: Հաշվի առնելով Սահակի ավագ որդի Հրահատի անունը՝ կարծում ենք, որ նա նույնպես կրել է **Հրահատ** անունը, քանի որ միջնադարում հայ նախարարական տներում ընդունված սովորույթ էր ավագ որդուն պապի անունով անվանակոչելը: Նա, ամենայն հավանականությամբ, Սյունիքի Ատրներսեհ (760-780 թթ.) գահերեց իշխանի կրտսեր որդին էր և, իր հայր Ատրներսեհից ստանալով Սյունիքի հարավային գավառները՝ Կովսականն ու Քաշունիքը, հանդիսանում է այդ գավառների գահակալ իշխանության հիմնադիրը:

Սահակի մոտ ազգականներից էր Վարդան Սյունի իշխանը, որի որդիներ իշխան Ատրներսեհը և իշխան Վահանը որպես վկաներ հիշվում են Փիլիպպե II-ի 839 և 844 թվականների վճռագրերում[11]: Այն փաստը, որ Ատրներսեհը հիշվում է Կովսականի իշխան Հրահատից, իսկ Վահանը՝ Սյունյաց տեր հիշատակվող Գրիգորի որդիներից՝ Հրահատից ու Գագիկից անմիջապես հետո, մեզ հիմք է տալիս ենթադրելու, որ Վարդանը գրեթե նույն ազգակցական կապի և Սյունի իշխանների աստիճանական սանդղակում էր, ինչպես որ Կովսականի իշխան Հրահատը: Հաշվի առնելով նաև Վարդանի որդի Ատրներսեհի անունը՝ կարծում ենք, որ նա պետք է լիներ Սյունիքի գահերեց իշխան Ատրներսեհի (մոտ 760-780թթ.)

[10] **Ութմազյան Հ.**, Սյունիքը IX-X դարերում, Ե., 1958, էջ 320:
[11] **Ստ. Օրբելյան**, էջ 196-197:

թոռը՝ վերոհիշյալ Սահակի եղբայրը: Հ. Աճառյանը ևս հավանական է համարում, որ Ատրներսեհն ու Վահանը Վարդան Սյունու որդիները լինեին[12]: Նրա կարծիքով՝ Վահան Սյունու որդիներն էին վերոհիշյալ վճռագրերում Վահանի որդիներ հիշատակվող Աշնակ-Արշակը և Ձագիկը[13]: Ղ. Ալիշանը հենց այս Վահանի որդի Ձագիկին է համարում Բաղքի Ձագիկյան իշխանական տան հիմնադիրը[14]: Եթե վերոհիշյալ Ձագիկը կամ նրա հայր Վահանը հիշատակվեին իշխան տիտղոսով կամ Բաղքի կամ Ձորքի հետ առնչվող որևէ արձանագրության կամ հիշատակության մեջ, ապա միանշանակ կարելի էր ընդունել նրանց տեսակետը և անգամ Ձագիկյանների նախահայր համարել Ատրներսեհի և Վահանի հայր Վարդան Սյունուն: Սակայն նրանց՝ վերոհիշյալ իշխան Վահանի որդիներ լինելը կասկածելի է, քանի որ նրանք հիշվում են ոչ թե որպես իշխաններ, այլ որպես Փիլիպպեի ազատներ, իսկ եթե նրանք եղբայրներ լինեին, ապա կհիշատակվեին ոչ թե առանձին-առանձին, այլ միասին, ինչպես սովորաբար նման դեպքերում նշում էր Ստ. Օրբելյանը:

Սահակի գործունեության մասին սկզբնաղբյուրները որևէ տեղեկություն չեն հաղորդում: Կարծում ենք, նրա որդի Հրահատն է որպես իշխան վկայված Սյունիքի Տեր-Դավիթ եպիսկոպոսի 839 թ. Արծիվ գյուղի գնման կալվածագրում[15], այլ ոչ թե Գեղարքունիքի Սահակ իշխանի որդի Հրահատը, ինչպես նշում է Հ. Ութմազյանը[16]: Նա՝ որպես Կովսականի ու Քաշունիքի իշխան, հիշվում է նաև 844 թ., Կովսական գավառի Նորաշինիկ գյուղը Տաթևի վանքին նվիրելու կտակագրում[17]: Ա. Մանուչարյանի կարծիքով՝ նա է վկայված Մեղրու տարածաշրջանի Ափկէս գյուղատեղիում 2013 թ. հայտնաբերված խաչաքանդակ քարի արձանագրության մեջ՝ «ԻԹՈՒԻՆ ՄՀՋ (827)… /ԱԲ ԽԱՉՍ/ ՀՐԱՀԱՏԱ»[18]: Եթե արձանագրության մեջ հիշատակվող Հրահատը իսկապես Կովսականի իշխան Սահակի որդի Հրահատն է, ապա պետք է ընդունել, որ Սահակը մահացել

---

[12] **Աճառյան Հ.**, Հայոց անձնանունների բառարան, հ. Ե, Ե., 1962, էջ 79:

[13] Նույն տեղում, էջ 15:

[14] **Ղ. Ալիշան**, նշվ. աշխ., էջ 273:

[15] **Ստ. Օրբելյան**, էջ 196:

[16] **Ութմազյան Հ.**, նշվ. աշխ., էջ 309:

[17] **Ստ. Օրբելյան**, էջ 198:

[18] **Մանուչարյան Ա.**, Վիմագրերը որպես Հայաստանի քաղաքական պատմության սկզբնաղբյուրներ (IX-XIV դդ.), Ե., 2015, էջ 52-56:

է մինչև 827 թ., այլ ոչ թե մինչև 844 թ., ինչպես կարծում է Հ. Ութմազյանը[19]: Հրահատը ամուսնացել էր Վասակ Նահապետի դուստր Քուպղիդուխտի հետ[20], որին Ութմազյանը սխալմամբ համարում է Վասակի որդի Փիլիպե Ի-ի դուստր[21]:

Հրահատը սկզբնաղբյուրներում կոչվել է «մեծ իշխան», վարել է բազմամեղ կյանք և զավակներ չի ունեցել[22]: Հրահատի կին Քուպղիդուխտի 867 թ. վճռագրից պարզվում է, որ Հրահատը այդ ժամանակ արդեն մահացած էր[23]:

Բացի Հրահատից, Սահակն ունեցել է ևս երկու որդի՝ Գրիգոր Արուման և Ջևանշեր անուններով: Ըստ Հ. Ութմազյանի՝ Կովսականի իշխան Սահակն ունեցել է 4 որդի՝ Հրահատ, Գրիգոր, Արուման և Ջևանշեր, կարծելով, որ Ստ. Օրբելյանի երկում Փիլիպպե Ի-ի կողմից Տաթև գյուղը վանքին նվիրելու վճռագրում. «Ապա տեսեալ և զայս մեծ իշխանին Հրահատայ Սահակայ որդւոյ, և Գրիգորի՝ Արումանայ եղբօր, Հայկազնի ի նույն Սիսական տոհմէ..»[24] հիշատակվող Գրիգորից հետո դրված բութը պետք է փոխարինել կա'մ ստորակետով, կա'մ **և**-ով: Այս դեպքում իսկապես, Գրիգորը և Արումանը կդառնան առանձին անուններ: Ղ. Ալիշանը ևս նրանց տարբեր անձնավորություններ է համարում, սակայն իր կազմած տոհմածառում՝ Գեղարքունիքի իշխան Սահակի որդիներ[25], չնայած մեկ այլ տեղ Արումանին համարում է Կովսականի իշխան Ջևանշերի եղբայր[26], իսկ այլ դեպքում Կովսականի իշխան Հրահատի եղբայրներ է համարում Գրիգորին և Արումանին[27]: Լորանը նույնպես Գրիգորին, Արումանին և Ջևանշերին համարում է Գեղարքունիքի Սահակ իշխանի որդիներ[28]: Կարծում ենք, որ ավելի ճիշտ է Ա. Աբրահամյանը, որը Ստ. Օրբել-

---

[19] **Ութմազյան Հ.**, նշվ. աշխ., էջ 320:

[20] **Ստ. Օրբելյան**, էջ 204:

[21] **Ութմազյան Հ.**, նշվ. աշխ., էջ 320:

[22] **Ստ. Օրբելյան**, էջ 198, 204:

[23] **Ութմազյան Հ.**, նշվ. աշխ., էջ 321, տե'ս նաև **Օրբելյան Ստ.,** էջ 204:

[24] Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին (այսուհետև՝ Պատմութիւն տանն Սիսական), Մ., 1861, էջ 152:

[25] **Ղ. Ալիշան**, նշվ. աշխ., տոհմածառ:

[26] Նույն տեղում, էջ 277:

[27] Նույն տեղում, էջ 287:

[28] **Laurent J.** 'Armenie Entre Byzance Et L'Islam, Depuis La Conquete Arabe Jusqu'en 886 (Histoire), Paris, 1919, p. 349.

յանի աշխարհաբար թարգմանության մեջ Գրիգորին և Արումանին համարում է նույն անձնավորությունը[29]: Դրա ապացույցը կարող է լինել այն փաստը, որ Ստ. Օրբելյանի հետագա վկայություններում Գրիգորը և Արումանը միասին չեն նշվում որպես Հրահատի կամ Ջևանշերի եղբայրներ, այլ առանձին-առանձին[30]: Կարծում ենք, դա էական նշանակություն չունի, քանի որ Գրիգոր Արումանի բաժին կալվածքի և ժառանգների վերաբերյալ տվյալներ չունենք: Հավանաբար իր անժառանգ եղբայր Հրահատի մահից հետո՝ մոտ 867 թ., նա մյուս եղբոր՝ Ջևանշերի հետ իրար միջև բաժանել են Կովսական-Քաշունիքի իշխանությունը: Ըստ երևույթին, նրա բաժին կալվածքն էր Կովսականը, իսկ Ջևանշերինը՝ Քաշունիքը և Ձորքը՝ Կապան քաղաքով: Վերջին անգամ Արումանը հիշատակվում է իր եղբայր Ջևանշերի 871 թ. վճռագրում: Ստ. Օրբելյանը նշում է. «Յայսմ ժամանակի իշխան մի Սիսական Ջևանշէր անուն՝ որդի Սահակայ՝ Սիւնեաց տեառն, գայ առ Տէր Սաղօմօն, և խնդրէ ի նմանէ զիւղն Բեխ, որ ի Կովսական գաւառի, որ էր սեպհական ժառանգութիւն սուրբ խաչին… փոխանակէ զիւր սեպհական գիւղն Արուքս որ ի Բաղք գավառի»[31]: Այս գործարքի վկաների թվում հիշվում էին Ջևանշերի եղբայր Արումանը և իր որդի Տիգրանը[32]: Նրա որդին կարող էր լինել Տաթևի վանքի սահմանների վերաբերյալ Սյունիքի գահերեց իշխան Աշոտի 906 թ. վավերագրում Սյունի Ձագիկի հետ հիշվող Հրահատը[33]: Այն հանգամանքը, որ նրանք վկաների թվում հիշվում են միասին, փաստում է վերջիններիս մոտ ազգակից-ներ լինելը: Մեր կարծիքով՝ նրանք կարող էին լինել հորեղբոր որդիներ, իսկ Հրահատը Կովսականի իշխանն էր և կառավարել է մոտ 880-910 թթ.: Ըստ Հ. Ութմազյանի՝ Հրահատը կապ չունի Ձագիկի հետ, նրանք՝ իբրև սյունեցիներ, միասին են հիշված, որպեսզի տարբերվեն իրենցից առաջ և հետո ստորագրած Աղվանքի և Գարդմանի իշխաններից[34]: Հնարավոր է, որ նրա թոռը լիներ այն Հրահատ իշխանը, որի տապանաքարը

[29] **Ստ. Օրբելյան**, էջ 198:
[30] Նույն տեղում, էջ 197, 204:
[31] Պատմութիւն տանն Սիսական, էջ 216:
[32] **Ստ. Օրբելյան**, էջ 204:
[33] Նույն տեղում, էջ 214:
[34] **Ութմազյան Հ.**, նշվ. աշխ., էջ 323:

հայտնաբերվել է Վահանավանքում՝ «ԹՎ(ԱԿԱՆԻ)Ն:ՆԳ: (954) ...ՋՀՐԱ-ՀԱՏ ՅԻՇԵԱ Ք(ՐԻՍՏՈ)Ս Ա(ՍՏՈՒԱ)Ծ» [35]:

Այս փաստերը մեզ հնարավորություն են տալիս պնդելու, որ Գրիգոր Արումանի ժառանգները հաջորդաբար իշխել են Կովսականում նաև X դարի ընթացքում:

Արուքս գյուղը գտնվելիս է եղել Կապանի շրջանի Բեխ գյուղի դիմաց՝ Ղաթարի տարածքում, որի միջով անցնում է դեպի Լենհանքեր տանող ճանապարհը[36]: Այն փաստը, որ Ջևանշերի կալվածքների մեջ է մտել Բաղք գավառի մի մասը, հիմք է տալիս եզրակացնելու, որ իշխան Սահակի տիրույթների մեջ էին ոչ միայն Կովսականն ու Քաշունիքը, այլև Բաղքի մի մասը, և հետևաբար նրա ժառանգներն էին Բաղքի Ձագիկյանները: Հ. Ութմազյանը գտնում է, որ Ձագիկյանների հայրենական տիրույթ Բաղքը ոչ թե գահերեցների տիրույթ Բաղքն է, այլ Քաշունիքը կամ Մյուս Բաղքը[37]: Բացի Քաշունիքից՝ նրանց տիրույթների մեջ էր մտնում նաև Ձորքը՝ Կապան քաղաքով: Կարծում ենք, որ Բաղքի իշխան հիշատակված Ձագիկ I-ը վերոհիշյալ Ջևանշերի որդին էր: Դրա օգտին է վկայում նաև այն փաստը, որ Ձագիկ I-ի ավագ որդին նույնպես կրում էր Ջևանշեր անունը: Ստ. Օրբելյանը, ներկայացնելով Սյունիքի գահերեց իշխանների գործերը, նշում է, որ. «Պայծառանայր և յայն աւուրս համազգի սոցին իշխանացս 'ի Սիսական տոհմէ Ձագիկ մեծ իշխանն ամենայն բարեպաշտութեամբ, որ ուներ 'ի բաժնի զԲաղաց գաւառն և Կապան քաղաք, որ և յետ բազում բարեկարգութեանց վախճանի և դնի ընդ հարս իւր, և թողու ժառանգ զքաջազօրն Ջևանշէր և զՎահան»[38]: Այդպիսի ազգականներ կարող էին լինել Վասակ III-ի կրտսեր եղբայր, գահերեց իշխան հիշատակվող Գրիգորի կամ Կովսականի Սահակ իշխանի ժառանգները: Քանի որ Գրիգորի որդիներ Հրահատի և Գագիկի վերաբերյալ մեր տեղեկությունները սահմանափակվում են մեկ-երկու վկայությամբ, որոնցում նշված չեն նրանց բաժին տիրույթները, ապա մնում է միայն այդ ազգակցությունը փնտրել Սահակի ժառանգները լինելու հան-

[35] **Գրիգորյան Գ.**, Վահանավանք, Ե., 2007, էջ 42:

[36] **Գրիգորյան Գ.**, Պատմական Սյունիքի մի շարք գյուղերի տեղադրության հարցի շուրջը [Պատմա-բանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ), 1966, № 4, էջ 234]:

[37] **Ութմազյան Հ.**, նշվ. աշխ., էջ 124:

[38] Պատմութիւն տանն Սիսական, էջ 146:

գամանքի մեջ, առավել ևս, որ Զագիկյանների տիրույթները նույնպես Բաղք և Քաշունիք գավառներում էին:

Ղ. Ալիշանը Զագիկյանների առաջին ներկայացուցիչ է համարում «Վահան ոմն ժառանգորդ գաւառիս Բաղաց, ժամանակակից Վասակայ տեառն Սիւնեաց և նոր նահապետի Սիսականաց, քանզի որդի նորին Զագիկ իշխան Բաղաց յիշի յամի 844»[39]: Հ. Ութմազյանն իրավացիորեն գտնում է, որ հիշյալ Վահանի որդի Զագիկն ընդամենը Վայոց ձորի իշխանի ազատներից էր և չէր կարող Բաղքի իշխանը լիներ[40]: Իսկապես, Ստ. Օրբելյանը հիշյալ Զագիկին համարում է Փիլիպպե II-ի ազատներից մեկը և չի նշում նրա Բաղքի իշխան լինելու փաստը[41]:

Հ. Ութմազյանը Բաղքի իշխանական այս տան առաջին իշխան է համարում Ղ. Ալիշանի նշած Զագիկ II-ին[42], սակայն չի նշում, թե ազգակցական ինչ կապ կարող էր լինել Սյունիների և Զագիկյանների միջև: Հ. Աճառյանը, հետևելով Ղ. Ալիշանին, այս Զագիկին նույնպես համարում է 844 թ. հիշվող Զագիկի թոռ[43]:

Մեր կարծիքով՝ Բաղքի Զագիկյանները սերում են Կովսական-Քաշունիքի Սյունիներից, Ղ. Ալիշանի հիշատակած Զագիկ II-ը կամ Հ. Ութմազյանի նշած Զագիկ I-ը վերը հիշատակված Բաղքի իշխան Ջևանշերի որդին է: Ժամանակագրական առումով ևս այդ համընկնում է: Սահակի որդի Ջևանշերը վերջին անգամ հիշատակվում է վերոհիշյալ 871 թ. թվագրվող վճռագրում, իսկ Զագիկ I-ը առաջին անգամ հիշվում է 895 թ. Տաթևի կաթողիկե եկեղեցու կառուցման նախապատրաստությանը մասնակից իշխանների թվում[44]: Ըստ մեզ՝ Սահակի որդի Ջևանշեր I-ը իշխել է մինչև 870-ական թվականների վերջը, իսկ Զագիկ I-ի կառավարման սկիզբ կարելի է համարել 880-ական թվականների սկիզբը:

Ղ. Ալիշանը և Հ. Աճառյանը Զագիկի կառավարման ժամանակաշրջան են նշում 895-906 թվականները[45]: Ինչպես իրավացիորեն նշում է Հ. Ութմազյանը, «Այդ թվերին մենք նրան տեսնում ենք միայն գործի մեջ:

---

[39] **Ղ. Ալիշան**, նշվ. աշխ., էջ 273:
[40] **Ութմազյան Հ.**, նշվ. աշխ., էջ 324:
[41] Պատմութիւն տանն Սիսական, էջ 151:
[42] **Ութմազյան Հ.**, նշվ. աշխ., էջ 324:
[43] **Աճառյան Հ.**, Հայոց անձնանունների բառարան, հ. Գ, Ե., 1946, էջ 111:
[44] **Ստ. Օրբելյան**, էջ 207:
[45] **Ղ. Ալիշան**, նշվ. աշխ., էջ 273, տե'ս նաև **Աճառյան Հ.**, նշվ. աշխ., էջ 111:

Անշուշտ, դեռ 895 թվից էլ առաջ Զագիկն իշխան էր և այն էլ բավականին ազդեցիկ իշխան, որ կաթողիկե եկեղեցու կառուցման համար եպիսկոպոսը դիմել է նրան՝ խորհուրդ և օժանդակություն ստանալու համար: Իսկ նրա մահվան տարեթիվը ընկնում է 906-911 թվերի արանքը, որովհետև… 911 թվին իշխան էր նրա որդին՝ Ջևանշերը»[46]:

Զագիկ I-ն ունեցել է 2 որդի՝ Ջևանշեր և Վահան[47]: Վահան Ա-ն Զագիկ I-ի (880-910 թթ.) կրտսեր որդին էր և «վասն դիւաբախ մոլեգնելոյն եղև կրօնաւոր, և կամեցաւ շինել վանս և հաստատել կրօնաիորական դասս մշտապաշտօն քահանայից»[48]: Նա Բաղաբերդի դիմաց 911 թ. կառուցում է իր անունով Վահանավանք կոչված վանքը[49]: 1969 թ. Վահանավանքում Գ. Գրիգորյանի պեղումների շնորհիվ հայտնաբերվել է Վահան Ա-ի տապանաքարը՝ «ՏԷՐ ՎԱՀԱՆ ՆԱԽԱՇԻՆՈՂ ՏԵՂ(Ե)ԱՑՍ» մակագրությամբ[50]:

Զագիկ I-ի ավագ որդի Ջևանշեր II-ը 911թ. Վահանավանքի կառուցման ժամանակ հիշվում է որպես Բաղքի իշխան[51]: Նա իր հոր Զագիկ I-ի հետ մասնակցել է Տաթևի կաթողիկե եկեղեցու նավակատիքին[52]: Ճշգրիտ չենք կարող նշել ինչպես նրա, այնպես էլ Բաղքի մյուս իշխանների կառավարման տարիները: Ղ. Ալիշանի կազմած Բաղքի Զագիկյանների տոհմածառում, ինչպես իրավացիորեն նկատել է Հ. Ութմազյանը, կան որոշակի անճշտություններ[53]: Հավանաբար իշխել է մոտ 10 տարի՝ մինչև 920-ական թվականների սկիզբը, քանի որ 925 թ. վճռագրում իշխան է հիշատակված նրա որդի Զագիկ II-ը[54]: Ջևանշեր II-ը (910-920 թթ.) ունեցել է 2 որդի՝ Զագիկ և Վահան[55]:

---

[46] **Ութմազյան Հ.,** նշվ. աշխ., էջ 325:

[47] **Ստ**. **Օրբելյան**, էջ 192:

[48] **Պատմութիւն տանն Սիսական,** էջ 174:

[49] Նույն տեղում, էջ 174:

[50] **Գրիգորյան Գ**., Վահանավանք, նշվ. աշխ., էջ 40: Տե՛ս նաև նույնի՝ Վահանավանքի պեղումների նախնական արդյունքները (1966-1970 թթ.) (Լրաբեր, 1970, № 10, էջ 89):

[51] **Ստ**. **Օրբելյան**, էջ 218:

[52] Նույն տեղում, էջ 212:

[53] **Ութմազյան Հ**., նշվ. աշխ., էջ 322-332:

[54] **Ստ**. **Օրբելյան**, էջ 238-239:

[55] **Ութմազյան Հ**., նշվ. աշխ., էջ 327:

Վահան Բ-ն կրթությունն ստացել է իր հորեղբայր՝ Վահանավանքի հիմնադիր Վահան Ա-ի մոտ: Այնուհետև ընդունելով հոգևոր կոչում՝ օծվել է եպիսկոպոս և դարձել Վահանավանքի վանահայր՝ հաջորդելով իր հորեղբայր Վահան Ա-ին: Նա հիմնովին վերակառուցել է Վահանավանքի գլխավոր Ս. Գրիգոր եկեղեցին՝ կառուցելով գավիթն ու սյունասրահը, սեղանատունը[56]: 958թ. Հայոց կաթողիկոս Անանիա I Մոկացի (946-968թթ.) կաթողիկոսի կողմից ձեռնադրվում է Սյունիքի եպիսկոպոս՝ աթոռակալելով 6 տարի[57] (958-964 թթ.): Մ. Օրմանյանի կարծիքով՝ Վահանի՝ Սյունիքի եպիսկոպոս ընտրվելը տեղի է ունեցել 961/2թ. «Պէտք է ընդունիլ թէ բաւական միջոց մը անցուց Անանիա Սիւնիքի մէջ, զի Վահան Սիւնին, Անանիայի մահուան ատեն միայն 6 տարի եպիսկոպոսութիւն ըրած կը ցուցուի (ՕՐԲ. Բ. 32 եւ 247), ուստի հազիւ 962, առ առաւելն 961 թուականին տեղի ունեցած կ'ըլլայ անոր ձեռնադրութիւնը»[58]: Գ. Գրիգորյանը գտնում է, որ Վահան Բ-ի նստավայրերը Տաթևն ու Վահանավանքն էին[59]: Վահանը Սյունիքում իր եպիսկոպոսության տարիներին շինարար գործունեությամբ մեծ համբավ էր ձեռք բերել «..ամենէն ալ վկայուած էր վասն առաւել սրբութեանն եւ իմաստութեանն, ուստի միաձայն ընտրութեամբ ամենայն ժողովոյն կաթողիկոսական աթոռին յաջորդութեան կոչուցեաւ»[60]:

Մ. Ուռհայեցու վկայությամբ՝ եկեղեցական ժողովը, որ գլխավորում էր Աղվանից կաթողիկոս տեր Հովհաննեսը, «...ձեռնադրեցին հանդերձ բազմութեամբ յաթոռ կաթուղիկոսութեան Հայոց զլաւն ի բնաւիցս զերանելին զՎահան»[61]: Նույնն է վկայում նաև Ստ. Օրբելյանը. «Ապա ամենայն ժողովոյն ընտրեալ զՎահան վասն առաւել սրբութեանն և իմաստութեանն՝ դնեն ձեռն ի վերայ բազմութիւն եպիսկոպոսացն և օծանեն զնա կաթողիկոս Հայոց»[62]: Սակայն «Որչափ փառօք եւ վստահութեամբ աթոռ բարձրացաւ Վահան, այնչափ ալ անակնկալ եղաւ անոր անկումը, եւ կա-

[56] **Գրիգորյան Գ.**, **Հախվերդյան Ս.**, նշվ. աշխ., էջ 114:

[57] **Ստ. Օրբելյան**, էջ 247-249:

[58] **Օրմանեան Մ.**, Ազգապատում, հ. Ա, մասն Ա, Բ, Պէյրութ, 1958, էջ 565:

[59] **Գրիգորյան Գ.**, Սյունյաց եպիսկոպոսների շինարարական գործունեությունը (IX XIV դարեր) (ՊԲՀ, 1999, № 2-3, էջ 169):

[60] **Օրմանեան Մ.**, նշվ. աշխ., էջ 575:

[61] **Մ. Ուռհայեցի**, Ժամանակագրութիին, գրաբար բնագրերը Մ. Մելիք-Ադամյանի և Ն. Տեր-Միքայելյանի, Ե., 1991, էջ 38:

[62] Պատմութիւն տանն Սիսական, էջ 211:

թողիկոսական աթոռէն վար առնուիլը եպիսկոպոսական ժողովի վըճռով»[63]: Մեկ տարի անց մեղադրվելով քաղկեդոնականությանը հարելու մեջ՝ Աշոտ Ողորմած թագավորի հրավիրած եկեղեցական ժողովի կողմից գահընկեց լինելով՝ ապաստանում է Վասպուրականում, որտեղ էլ մահանում է երկու տարի անց և թաղվում Զորավանքի եկեղեցու բակում[64]: Մ. Ուռհայեցու վկայությամբ՝ Վահանը վախճանվել է Հայոց ՆԼԲ (983) թվականին՝ հինգ տարի աթոռակալելուց հետո[65]: Կարծում ենք, այստեղ ժամանակագրական անճշտությունն ակնհայտ է: Մ. Բրոսեն ևս Վահանի աթոռակալության ժամանակը նշում է հինգ տարի՝ 965-970 թթ.[66]:

Ջևանշեր II-ի ավագ որդի Զագիկ II-ի վերաբերյալ ունենք ընդամենը մեկ վկայություն: Հիշատակվում է որպես «Սիւնեաց իշխան, աստվածապահ տեառն»[67]: Ստ. Օրբելյանը վկայությամբ՝ Սյունյաց եպիսկոպոս Հակոբը (917-958 թթ.) Սոդքի սահմանում գտնվող Վաղավեր գյուղը փոխանակումով հանձնում է Ջևանշերի որդի Զագիկին՝ նրանից վերցնելով Տաշտակերտ գյուղը[68]: Հայոց 374 (925) թվով թվագրվող այս վճռագրում որպես վկաներ հիշատակվում են նաև Զագիկի որդիներ Ջևանշերն ու Վասակը[69]: Դժվար է հստակ որոշել Զագիկ II-ի իշխանության տարիները: Ղ. Ալիշանը նրան անվանում է Զագիկ III և կառավարման համար նշում է 911-925 թվականները[70]: Հ. Աճառյանը ևս, հետևելով Ղ. Ալիշանին, նրան նույնպես համարում է Զագիկ III ու Ջևանշերի և Վահանի հայր[71]: Հ. Ութմազյանի համոզմամբ՝ Զագիկ II-ի իշխանության սկիզբը 910-ական թթ. 2-րդ կեսն է[72]: Մեր կարծիքով՝ Զագիկ II-ի իշխանության տարիները կարելի է համարել 920-ական թթ. սկզբից մինչև 930-ական թթ.վերջը կամ 940-ական թթ. սկիզբը, քանի որ նրա որդի Ջևանշեր III-ը որպես իշխան առաջին անգամ հիշատակվում է Անանիա I Մոկացու

---

[63] **Օրմանեան Մ**., նշվ. աշխ., էջ 575:

[64] Պատմութիւն տանն Սիսական, էջ 212:

[65] **Մ. Ուռհայեցի**, էջ 40:

[66] Histoire de la Siounie par Stephanos Orbelian; traduite de l'armenien par M. Brosset, premier livraison, Histoire de la Siounie, Saint-Petersbourg, 1864, p. 276.

[67] Պատմութիւն տանն Սիսական, էջ 199:

[68] Նույն տեղում, էջ 199:

[69] Նույն տեղում, էջ 199:

[70] **Ղ. Ալիշան**, նշվ. աշխ., էջ 273:

[71] **Աճառյան Հ**., նշվ. աշխ., էջ 112:

[72] **Ութմազյան Հ**., նշվ. աշխ., էջ 330:

(946-968 թթ.) կաթողիկոս ընտրվելուց հետո դեպքերի նկարագրության ժամանակ: Ստ. Օրբելյանը Անանիա Մոկացու Հայոց կաթողիկոս ընտրվելու տարեթիվ է նշում հայոց 390 (941) թիվը[73]:

Ձագիկ II-ի կրտսեր որդի Վասակի մասին, վերոհիշյալ հիշատակությունից բացի, այլ տեղեկություն չունենք:

СЮНИДЫ КОВСАКАН–КАШУНИКА

МИРУМЯН Ж.А.

Резюме

Ковсакан и Кашуник являлись южными регионами исторического Сюника. Скудные сведения о княжеском доме Сюника позволяют заключить, что княжество Ковсакан возникло в конце восьмого века, и его первым представителем был отец князя Саака, имя которого не указано в первоисточниках. Он был младшим сыном князя Сюника Атнерсея (760-780 гг.) и, получив от своего отца Атрнерса южные регионы Сюника – Ковсакан и Кашуник, основал княжество Сюнидов. Представителями Кашуникского княжеского рода Сюни являются князья Бахка, которых в историографии принято называть Джакикяны. На основе сравнительного анализа рукописных источников можно утверждать, что князья княжеского дома Сюни–Ковсакан Кашуника поочередно княжили в южных регионах Сюника с конца восьмого века до падения царства Сюника в 1170 г.

[73] **Ստ**. **Օրբելյան**, էջ 241:

THE SYUNIES OF KOVSAKAN-QASHUNI

J. MIRUMYAN

Abstract

Both Kovsakan and Qashuni were southern provinces of the Syunik Region. The present article briefly refers to the time period of the formation of the Prince Dynasty of the Syunies of Kovsakan-Qashuni and their relations to the crowned princes of Syunik. The name list and family tree of the Syunies of Kovsakan-Qashuni is also considered in the article, resulting from the comparative analysis of the corresponding historical data.

ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏԱԿԱՆ ԵՐԿՈՒ ՀԵՏԱՁՈՏՈՒԹՅՈՒՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՄԱՍԻՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Է.Հ.

Ղարաբաղի XIX դարի սոցիալ-տնտեսական պատմության լուսաբանումը մեր պատմագիտության առաջնահերթ հիմնախնդիրներից է: Այն առավել կարևորվում է ներկա ժամանակներում. գաղտնիք չէ, որ մեր հարևան երկրի գործընկերները փորձում են գունազարդել մահմեդական կառավարման տարիները՝ ներկայացնելով դրանք որպես ծաղկուն ժամանակաշրջան Ղարաբաղի պատմության մեջ[1]: Մեզ համար, թերևս, նման պնդումների շարժառիթները հասկանալի և ըմբռնելի են. սակայն միայն ռուսական նշանավոր Կովկասի հնագրական հանձնաժողովի վավերագրերը բավական են իրենց այդ պնդումներին հակադարձելու համար: Այս հրապարակման համար աղբյուրագիտական այդ ծավալուն ժողովածուից մենք առանձնացրել ենք ընդամենը երկու փաստաթուղթ, որոնք ոչ միայն լրացնում են Ղարաբաղի այդ ժամանակահատվածի սոցիալ-տնտեսական պատմությունը, այլև հստակորեն բնութագրում են մահմեդական կառավարման հետևանքները:

Փաստաթղթերից առաջինը, որը հրապարակվել է Կովկասի հնագրական հանձնաժողովի իններորդ հատորում, ռուս պաշտոնյա Կոցեբուի զեկույցն է կառավարչապետ Գոլովինին 1838թ. նոյեմբերի 7-ին: Զեկույցն իր բովանդակությամբ ու բարձրացրած հարցերի տեսակետից բացահայտում է Ղարաբաղում խանական կառավարման տարիներին և դրանից հետո մահմեդական բեկերի և նայիբների կատարած ապօրինություններ ի ողջ պատկերը: Հավելենք, որ ներկայացված զեկույցը Ղարաբաղում

---

[1] Տե՛ս **Джамиль Гасанлы.** Карабах: поиск исторической правды (Кавказ и глобализация, 2010, т. 4, вып. 3-4). http://cyberleninka.ru, Հասանելիության աստիճանը՝ http://cyberleninka.ru/article/n/karabah-poisk-istoricheskoy-pravdy. **Рафика Агакишибекова.** Кровавые страницы истории азебайджанского народа. http://azpress.az/. Հասանելիության աստիճանը՝ http://azpress.az/index.-php?lang=ru&sectionid=news&id=26181 և այլն:

ռուս պաշտոնյայի սեփական ուսումնասիրության արդյունքն է. «Պատիվ ունեմ ձեզ տեղեկացնել... որ ինձ մոտ գտնվող և Ղարաբաղի մարզին վերաբերող տեղեկագրերը վկայում են պետական գույքի անպատիժ կերպով յուրացման մասին... Սակայն դեռևս ոչ բոլոր թալագներն (հավաստագրերը՝ Է.Հ.) են ինձ տրվել. ես այդպես էլ չկարողացա համոզել տեղի բեկերին, որ ես չեմ եկել նրանց ձեռքից խլելու անարդարացիորեն զավթած սեփականությունը, այլ միայն տեղյակ պահելու գանձարանին, որպեսզի վերջ տրվի անընդհատ խժդժություններին և մարդկանց անօրինական գործողություններին, որոնք սովոր են եղել այս տասնհինգ տարվա ընթացքում պետական ունեցվածքը համարել ընդհանուր»[2], - գրում է Կոցեբուն: Դատելով ռուս պաշտոնյայի զեկույցից՝ փաստորեն նա անօրինական շատ փաստեր է արձանագրել, և որ Ղարաբաղում նման երևույթները, ինչպես վկայում են նրա գրառումները, համատարած բնույթ են կրել. «Շատ-շատերի ...խիղճը նրանց հետ է պահում իրենց ունեցվածքի մասին վկայություններ տրամադրելու համար, ուստի իմ վրա դրված պարտականությունները բարդանում են, չնայած մարզի ղեկավարության բազմիցս արված հրահանգներին, որն ինձ մեծ աջակցություն է ցուցաբերում: Ղարաբաղի նշանավոր ընտանիքներից մի քանիսը, ինչպես օրինակ, գնդապետ Ջաֆար Ղուլի աղան, Ազատ-Բեգյումը, Հասան Ալի բեկօղլին և մյուսները ընդհանրապես հրաժարվել են հավաստագրեր ներկայացնել և ինձ նամակ են գրել, թե խանական կառավարման ժամանակ իրենք չէին կարող մտածել, որ երբևէ ռուսական պաշտոնյան իրավունք կունենա ապացույցներ պահանջել իրենց ունեցվածքի մասին»[3]:

Որքանով նկատում ենք, Ղարաբաղի հարուստներ նշվածները բոլորն էլ թաթարական ծագում ունեցող մարդիկ են, և նրանց շարքում չկա և ոչ մի հայկական ազգանվամբ ընտանիք. կնշանակի, որ հենց թաթարներն են ունեցել իրենց ունեցվածքի տիրակալման մասին ապացույցների բացակայություն, որը մեկ անգամ ևս ապացուցում է նրանց կողմից հայկական մելիքներին կամ ընդհանրապես հայերին պատկանող գույքի բռնագրավման փաստը, ինչպես դա տեղի ունեցավ XVIII դարի վերջին և XIX

[2] Акты, собранные Кавказской археографической комиссиею. Այսուհետև՝ АКАК, Тифлис, 1884, т. IX, Документ 215. Рапорт н.с. Коцебу ген. Головину, от 7-го ноября 1838 года, N 67, с. 189-190.

[3] Նույն տեղում, էջ 190:

դարի սկզբին, երբ համատարած հայկական նշանավոր մելիքական ընտանիքները Իբրահիմ խանի և նրա որդու հետապնդումների ու հալածանքների հետևանքով ստիպված եղան իրենց գյուղացիների հետ մեկտեղ լքել հայրենի եզրերը: Բնական հարց է ծագում. ինչո՞ւ չեն կարողացել այդ մահմեդական բեկերը ապացույցներ ներկայացնել ռուսական իշխանություններին, պատասխանն էլ կարծես թե դժվար չէ կռահել. չեն ներկայացրել, քանի որ այդպիսի «պատմական» հավաստագրեր ու փաստաթղթեր նրանք ուղղակի չեն ունեցել և չէին էլ կարող ունենալ: Ուրեմն եզրակացությունը մեկն է. տեղի է ունեցել Ղարաբաղի հայկական տարրի գույքի և սեփականության բռնազավթում և բռնագրավում:

Շարունակենք հետևել զեկույցին. «Մինչդեռ դժվար չէ կռահել, - այնուհետև գրում է Կոցեբուն,-որ նախկին բռնատիրական կառավարման ժամանակ որևէ մեկը չէր կարող իր սեփականությունը դարձնել որևէ գյուղ կամ հողատարածք, չունենալով դրա համար խանի ցանկությունն ու կամքը»[4]: Այլ խոսքով՝ ռուս պաշտոնյան անուղղակի հաստատում է նաև այն փաստը, որ այդ բռնագրավումները կատարվել է հենց խանական կառավարման օրոք և նրանց թողտվությամբ: Հետևաբար մահմեդական իշխանությունների կողմից հետևողականորեն իրագործված ծրագիր է, որի արդյունքը հայկական տարրի աստիճանական նվազումն էր Արցախ-Ղարաբաղում, և դա պատմագիտական բացահայտ ճշմարտություն է, որը չեն ուզում ընդունել հարևան երկրի պատմաբանները: Այս փաստի ընդգծումը ներկա հրապարակման հիմնական եզրակացություններից մեկն է, եթե չասենք գլխավորը: Իսկ ռուսական հեղինակավոր աղբյուրը՝ Կովկասի հնագրական հանձնաժողովի վավերագրերը, դրա իրավունքը մեզ լիովին տալիս է: Ավելին, ինչպես երևում է զեկուցագրից, Ղարաբաղի մահմեդական բեկերը բոլոր հնարավոր միջոցներով խոչընդոտել են ռուս պաշտոնյային գույքի տիրակալման հետ կապված հետաքննություն անցկացնելու խնդրում... «Այդ իսկ պատճառով,- գրում է Կոցեբուն,- ստիպված եմ դիմել ձեզ՝ հրահանգելու Ղարաբաղի բեկերին, որոնք իրենց ենթակայության տակ ունեն գյուղացիներ, հողատարածք, ջրանցքներ, այգիներ, աղացներ և ընդհանրապես անշարժ գույք, ինձ ներկայացնեն այդ ամենը վկայող փաստաթղթերը՝ պատժի ենթարկելու սպառնալիքով, այն է՝ եկամուտների

[4] Նույն տեղում:

և գույքի բռնագրավմամբ, եթե դրանց տիրակալման մասին ապացույց չներկայացվի»[5]:

Ռուս պաշտոնյայի զեկույցում պատմագիտական բնութագրումները հստակ են, որոնք մեզ հնարավորություն են տալիս կատարելու նույնքան հստակ պատմագիտական եզրակացություններ: «Այն ջնջումներն ու ավելացումները, որոնք արված են փաստաթղթերում, - կարդում ենք այնուհետև Կոցեբուի զեկույցում, - ինչ-որ տեղ թերևս կարելի է համարել հարգանք ռուսական օրենքների հանդեպ, որ իբր նրանք վախեցել են խախտել, քանի որ չէին կարող որևէ կերպ արդարացնել իրենց արարքը: Սակայն **դա չի կարելի ասել մյուս բեկերի մասին, որոնք տիրացել են ողջ գյուղերի և հողատարածքների՝ առանց որևէ ապացույցի ու հիմքի** (ընդգծումը մերն է՝ Է.Հ.) և, օգտվելով տեղական կառավարչի իրենց շահադիտական իրավունքից, իսկ երբեմն էլ նայիբների լուռ համաձայնության արդյունքում, նրանք ուղղակի ծաղրի են ենթարկել կառավարությանը»[6]: Թվում է, թե բեկերի և նայիբների մասին այս բնութագրությունում Կոցեբուն նորություն չի ասում, որովհետև Կովկասի հնագրական հանձնաժողովի նյութերում տեղ գտած այդ բնույթի երկու աղբյուրից մեկը աներկբա հաստատում է Ղարաբաղի մահմեդական բեկերի և նայիբների կամայականությունների փաստը: Սակայն որ այդ ամենի մշտական զոհը մեծավ մասամբ ու գլխավորապես հայ գյուղացիությունն է եղել, կարծում ենք, որ ևս անառարկելի փաստ է:

Եվ այդուհանդերձ, պատմագիտական ուշագրավ ընդգծումը Կոցեբուն կատարում է իր զեկույցի վերջում. «Այդպիսի ծաղրի հեղինակներից մեկը, օրինակ, Սամադ Սուլթանն է, որը բոլորին ասում է, թե լավ գիտի ռուսական օրենքները և, այնուհետև խփելով իր գրպանին, ավելացնում է՝ «այստեղ է նա, աստծուն փառք, ես դրանից բավական շատ ունեմ»[7]: Որքանով նկատելի է, ռուս պաշտոնյան կրկին մահմեդական-թաթարական ծագումով բեկին է մատնացույց անում. ուրեմն այստեղ էլ դժվար չէ եզրակացնել, որ հայերին պատկանող գույքը և հողատարածքները խանական կառավարման տարիներին խլվել են զանազան կաշառքների ու խարդավանքների գնով. ավելին՝ նրանցից շատերը, ինչպես, օրինակ, այս

[5] Նույն տեղում:
[6] Նույն տեղում:
[7] Նույն տեղում:

թաթար բեկը խանի կողմից չի ունեցել իր գույքը հաստատող որևէ փաստաթուղթ: Եվ, վերջապես, մեր վերջին եզրակացությունը՝ ուրեմն որքան անպատիժ են գործել թաթար բեկերը, որ նույնիսկ «զլացել են» փաստաթուղթ «ձեռք բերել» խանից: Ուստի, պարզից էլ պարզ է, թե որտեղից է գալիս Ղարաբաղի հայությանը պատկանող գույքի ու հողերի անպատիժ տիրանալու վերջիններիս «պատմական ապացույցը»: Վերջում ավելացնենք, որ ռուս պաշտոնյան բարեխղճորեն տողատակում նշում է, որ իր մեջբերած խոսքերը վերցված են Սամադ Սուլթանի դեմ հարուցված քրեական գործից[8]:

Ղարաբաղում խանական կառավարման տարիներին կատարված ապօրինությունների մասին վկայող Կոցեբուի զեկույցն այսքանով չի ավարտվում. «Ներկա պահին արդարացի կլիներ պետական հողերի վրա գտնվող բեկերի մեծ մասից վերցնել դրանք: Մեր մոտավոր հաշվումներով,- գրում է նա,- Ղարաբաղում կան 1.400 բեկեր, որից գրեթե յուրաքանչյուրը հողատեր է կամ մի քանի գյուղացիական ընտանիքների սեփականատեր, որոնք նախկինում պետական են եղել: Նրանցից շատերը նույնիսկ բեկական ծագում չունեն, սակայն իրենց են վերագրել թե՛ պաշտոնը և թե՛ գույքը: Նրանց իրավունքների և վարքագծի մասին քննարկումները կարող են հանգեցնել մոտ 1.000 նախաձեռնող ու քաջարի մարդկանց աղքատացման բացահայտմանը, քանի որ նրանք ամեն տեսակի օրենքի խախտմանը պատրաստ են եղել: Կարելի է կանխորոշել նաև այն իրավիճակը, երբ նման դեպքում բեկերի մի մասը նույն ժամին կփորձի հեռանալ Պարսկաստան, հատկապես փիսիանացիների, շահսեվացիների, իգրիմիդորցիների և քեյլանցիների բեկերը (ուշադրություն դարձնենք՝ խոսքը կրկին թաթարական ծագման բեկերի մասին է՝ Է.Հ.) իրենց ավազակություններով ու թալանով անմիջապես աչքի կընկնեն, կամ, հավանաբար, մարզի մի քանի մահմեդական մաղալներում անկարգություններ կհրահրեն…»[9]:

Ինչպես ասում են՝ ավելի հստակ բնութագրել Ղարաբաղի թաթարական զանգվածի բեկերին, հնարավոր չէր: Եվ դա Ղարաբաղի հայ բնակչության հողերին տիրացած թաթար կառավարիչների իրական բնութագիրն է, որն իր արտացոլումն է ստացել Կովկասի հնագրական հանձնա-

[8] Նույն տեղում:

[9] Նույն տեղում, էջ 190-191:

ժողովի գրեթե բոլոր հատորներում: Իսկ այս տողերի մեջ ռուս պաշտոնյան արդեն որոշակիացնում է իր ասելիքը. «Նրանց սաստելով, կառավարությունը փայլուն կերպով ցույց կտա իր իշխանության ուժը ժողովրդին, որը հնուց ի վեր **ստիպված է եղել ենթարկվելու այդ ուժին** (ընդգծումը մերն է՝ Է.Հ.): Նկատենք, որ Կոցեբուն չի օգտագործում «բնակչություն» եզրույթը, որը կնշանակեր, որ նկատի ունի նաև տեղի թաթարներին, այլ օգտագործում է «ժողովուրդ» եզրույթը, որի միակ հասցեատերը Ղարաբաղի հայ ժողովուրդն է, և այստեղ երկու կարծիք լինել չի կարող: Կոցեբուն իր զեկույցի վերջում այդպիսի ուշագրավ մեկ ընդգծում ևս կատա-րում է. «Պարտք եմ համարում տեղեկացնել, որ ես լավ գիտեմ, որ ընդվզումների մասին լուրերն այստեղ մեծավ մասամբ չափազանցված են և նույնիսկ մտացածին. դրանք ցանկանում են կառավարությանը թյուրիմացության մեջ գցել, թե իբր այստեղի ժողովուրդը Ռուսական կառավարությանը հավատարիմ չէ»[10]: Ակնհայտ է, որ խոսքը հայ ժողովրդի մասին է, երբ ռուս հեղինակը օգտագործում է «հավատարիմ» բառը, քանի որ Կովկասի հանձնաժողովի վավերագրերի մինչ այդ հանդիպած փաստաթղթերում այդ որակումն օգտագործվել է բացառապես հայ ժողովրդի առումով:

Ղարաբաղում ֆինանսական ոլորտում մահմեդական իշխանությունների կամայականությունների վկայությունն է նաև հետևյալ փաստի ընդգծումը.«Նախկին խաները, ինչպես և ներկայիս պարետները, իրենց ձեռքում են կենտրոնացրել ողջ իշխանությունը և գործում էին, չունենալով որևէ վերահսկողություն իրենց հանդեպ… Նրանք առանց հաշիվ տալու մարդկանց զրկել են կյանքից, լինի դա հարուստ, թե թալանչի, …կառուցել են ջրանցքներ ու ամբարտակներ, ճանապարհներ, որոնք առատ տոկոսներ էին բերում իրենց…»,- գրում է Կոցեբուն[11]:

Կովկասի հնագրական հանձնաժողովի վավերագրերում տեղ գտած և Ղարաբաղի սոցիալ-տնտեսական կյանքի լուսաբանությանը վերաբերող երկրորդ փաստաթղթի հեղինակը ևս ռուս բարձրաստիճան պաշտոնյա է՝ կոմս Կիսելյովը: Զեկույցը գրվել է 1845 թ. հունվարի 25-ին և կրկին այն ուղղված է Կովկասի կառավարչապետին՝ այս անգամ արդեն Գոլովինին փոխարինած Միխայիլ Վորոնցովին: Զեկույցի սկզբում ռուս

[10] Նույն տեղում, էջ 191:
[11] Նույն տեղում, էջ 189:

պաշտոնյան Ղարաբաղի նախկին տիրակալից ուշագրավ խոստովանություն է մեջբերում. «Մեհտի Ղուլի խանը ինձ հասցեագրած նամակում հաղորդում է մարդկանց մասին, որոնք անօրեն տնօրինում են Ղարաբաղի հողերին: Խանի նամակից պարզ երևում է, որ նա մատնացույց է անում ժամանակին իր կողմից հովանավորության արժանացրած մարդկանց, մոռանալով, որ ինքը ևս բազում հողերի անօրինական սեփականատերն է և կամայականորեն է տիրացել այդ հողերին»[12]:

Այն, որ ռուս բարձրաստիճան պաշտոնյան հերթական անգամ հաստատում է մահմեդական խաների կողմից Ղարաբաղի հայությանը պատկանող հողերի բռնագրավման մասին, իհարկե, նորություն չէր: Սակայն ռուսական հեղինակավոր աղբյուրում այս հաստատումները պատմագիտական տեսակետից այլևս անհնարին են դարձնում մեր հարևան երկրի պատմաբանների կողմից փաստի հերքումը. «Իրականում,- շարունակում է Կիսիլյովը,- Ղարաբաղում մահմեդական շատ բեկեր, օգտվելով երկրամասի կառավարչական ամենատարբեր փոփոխություններից, անօրինաբար տիրացել են **պատմական հողերին և գյուղացիներին** (ընդգ. մերն է՝ Է.Հ.) և այդ ամենի գլխում առաջին հերթին ժամանակին կանգնած էր Մեհտի Ղուլի խանը և նրա ազգական Ջաֆար Ղուլի աղան, ինչպես նաև նրանց կողմից հովանավորվող ազգականներն ու մերձավորները»[13]: Սա դեռ ամենը չէ. ռուսական պաշտոնյան «ջրի երես է հանում» Ղարաբաղյան մահմեդական կլանի գործունեության գլխավոր «արդյունքները» (և որքան նմանություն կա ադրբեջանական ներկա և մինչև 1988 թ. ղարաբաղյան կլանի միջև՝ Է.Հ.). «Գրեթե ողջ Ղարաբաղի հայերին պատկանող հողերը,- շարունակում է այնուհետև Կիսիլյովը, - Մեհտի Ղուլի խանը բաժանեց իր կողմից հովանավորվող բեկերին և նրանք այդ «շնորհագրերով» ժառանգական իրավունքով տիրացան հայերին պատկանող կալվածքներին… Սակայն այն ժամանակ, երբ խանը փախավ Պարսկաստան, Ղարաբաղում դեռևս կային մեծ թվով գյուղացիներ և գանձարանին պատկանող լայնածավալ հողեր, բացառությամբ խանական ընտանիքի հողերից: 1826 և 1827 թվականներին այդ հողերին անօրինաբար տիրացած մահմեդական ազնվականությունը գրեթե ամբողջովին դավա-

[12] Նույն տեղում, т. X, Документ 294. Отношение гр. Киселева к гр. Воронцову, от 25-го января 1845 года, N 117, с. 289.

[13] Նույն տեղում:

ճանեց Տիրակալ Թագավորին և անցավ Աբաս-Միրզայի հովանավորության տակ: Պարսկական պատերազմից հետո այդ դավաճանները ներվեցին և նրանք, Մեհտի Ղուլի խանի հետ, կրկին ընդունվեցին մեր կողմից՝ իրենց նախկին կալվածքներին տիրանալու իրավունքով: Կառավարության ներողամտությունը դավաճանների հանդեպ անսահման էր և հասավ նրան, որ (ուշադրությամբ հետևենք ռուս բարձրաստիճան պաշտոնյայի խոստովանությանը՝ Է.Հ.) **հայերից կազմված քրիստոնյա բնակչության մեծ մասը, որոնք մշտապես հավատարիմ եղել ռուսական կառավարությանը, և դա հատկապես ապացուցեցին 1826-1827 թվականների պատերազմի տարիներին, դարձան Ռուսաստանին դավաճանածների ստրուկները**»[14]: Առավել խոսուն ասել հնարավոր չէր, և եթե կուզեք՝ այս մեկ պարբերությունն անգամ լիովին ապացուցում և հաստատում է Ղարաբաղում հայերի հանդեպ մահմեդական տիրապետության ողջ իրողությունն ու հետևանքները: Ակնհայտ է՝ ռուս բարձրաստիճան պաշտոնյայի այս տողերի մեջ ընդգծված անհամաձայնություն կատարվող քաղաքականության հանդեպ և առաջին հերթին՝ Պասկևիչի՝ ժամանակին կատարած անհեռատես քայլի հանդեպ:

Եվ այդուհանդերձ, շարունակելով Կովկասի կառավարչապետին ներկայացնել Ղարաբաղում տիրող իրական պատկերը, Կիսիլյովը հավելում է. «Բեկերը, վերադառնալով Պարսկաստանից, սկսեցին իշխանություններին ներկայացնել իրենց կալվածքների տնօրինությունը հաստատող «շնորհագրեր», որոնցից շատերը, հավանաբար, կեղծ էին, քանի որ հեշտությամբ կարելի էր կեղծել խանական կնիքը»[15]:

Կոմս Կիսիլյովի նամակում Ղարաբաղի իրականությանը վերաբերող կարևոր մեկ վկայություն ևս կա. ռուսական պաշտոնյան բեկերից մեկի օրինակով ցույց է տալիս, թե ինչպես էին ընդհանրապես կատարվում ապօրինությունները, և թե ինչ ճանապարհով էին նրանք տիրանում Ղարաբաղի հայերին պատկանող գույքին ու հողերին: Նամակում ներկայացված էր Մեհտի Ղուլի խանի մերձավորներից մեկի՝ Միրզա Ջեմալի պատմությունը. «Մեհտի Ղուլի խանի կառավարման ժամանակ,- հայտնում է Կիսիլյովը,- Միրզա Ջեմալը վեզիր էր և խանի փախուստից հետո տեղավորվել էր Ղարաբաղի մարզային դատարանում: Իր ճարպկության

[14] Նույն տեղում:
[15] Նույն տեղում:

շնորհիվ նա կարողացել էր ձեռք բերել գեն. Երմոլովի վստահությունը, թեպետ իրականում դրան երբեք արժանի չի եղել. 1826 թվականին Ղարաբաղի բեկերի կողմից Տիրակալին դավաճանության մեջ նրա դերը պակաս չի եղել: Եվ ահա, խանի վերադարձից հետո Միրզա Ջեմալը կրկին վայելում էր խանի հովանավորությունը, սակայն երբ հետագայում Ջեմալը սկսում է մերձենալ Ջաֆար Ղուլի աղայի հետ, Մեհտի Ղուլի խանն արդեն չվստահեց նրան և նույնիսկ ատելությամբ էր լցված նրա հանդեպ և միայն հիմա է «տեղեկացնում», թե նա Ջեմալին հողեր չի նվիրել և որ իր մոտ վեզիր եղած ժամանակ իր օգտին կեղծել է այդ շնորհագրերը»[16]:

Առաջին հայացքից, իհարկե, այս պատմությունը ասիական-մահմեդական բռնատիրության սովորական մի դիպվածի նկարագրություն է, իսկ ահա որպես պատմագիտական ընդգծում, անշուշտ, նշանակությունից զերծ չէ. կրկին հաստատում է հայերին պատկանող գույքի հանդեպ կատարված անօրինականությունների և բռնագրավումների փաստը. ի վերջո՝ ո՞ւմ հաշվին էին «շնորհագրվում» այդ կալվածքներն ու հողերը. իհարկե՝ հայերի: Կիսիլյովի նամակում այնուհետև կարդում ենք. «Այս առումով խանի հաղորդած տեղեկությունները մի մասով իրոք, արդարացի են, քանի որ Ղարաբաղի ներկայիս ընդհանուր վիճակը այդ նույնն է հաստատում: Սակայն խնդիրն էլ հենց այն է, որ Ջեմալը կարողացել է օրինականություն հաղորդել իր շնորհագրերին մեր կառավարման ժամանակ և օգտվելով այդ հանգամանքից, Ջեմալն ամենայն հավանականությամբ, նույն գնդապետ Ջաֆար-Ղուլի աղայի օրինակով, ապօրինաբար բռնագրավել է պետական գանձարանին և հայերին պատկանող հողերը և նույնիսկ ավելին, քան ներկայացված է շնորհագրում: Դրանց մի մասն անձամբ ստուգվել են իմ կողմից մարզի այցելության ժամանակ: Այս ամենից կարելի է եզրակացնել, որ Ջաֆար Ղուլի աղան ևս իր հողերին տիրացել է նույն կերպ, չունենալով դրա համար և ոչ մի իրավունք, քան իր կամայականության իրավունքը»[17]:

Համաձայնվենք, որ Կովկասի կառավարչապետին ուղղված կոմս Կիսիլյովի նամակն իր նշանակությամբ, անշուշտ, ավելին է, քան սովորական և հերթական դարձած շատ այլ պաշտոնյաների զեկույցները: Այն,

[16] Նույն տեղում:

[17] Նույն տեղում, էջ 289-290:

անկասկած, տեսության աստիճանի հասնող աղբյուր է, որտեղ ներկայացված է Ղարաբաղի ոչ վաղ անցյալի պատմության իրական պատկերը: Այլ խոսքով, ներկայացված նյութը, անկասկած, պատմագիտական արժեք ունի և առաջին հերթին՝ հայագիտական հստակ ընդգծումներով. «**Հնում Ղարաբաղի տեղաբնիկները** (բնականաբար, նկատի ունի հայերին՝ Է.Հ.), տեսնելով, որ անհնարին է ձեռք բերել խանական շնորհագրերը, դիմեցին այլ միջոցի. օրինակ, իրենց կալվածքներին սկսեցին ամրագրել պետական հողեր... սակայն Ղարաբաղի մահմեդական բեկերը ուղղակի բռնագրավեցին և տիրացան այդ հողերին, չունենալով նույնիսկ խանական կեղծ շնորհագրեր... ի վերջո, ո՞վ է նրանց հանդիմանելու դրա համար, առավել ևս, որ պետական հողերը գրեթե հայտնի չէին բնակիչներին: Սակայն, եթե փորձենք այդպիսի գործերի մեջ պարզություն մտցնել, ուրեմն պետք է ոտքի հանենք ողջ Ղարաբաղը, սակայն դա ամենը չէ. պետք կլինի նաև երկար տարիների համար կազմել մի մեծ հանձնաժողով, քանի որ անկասկած, այդ անդամներին դժվար կլինի բացահայտել ճշմարտությունը բոլոր այս գործերում, էլ չենք խոսում, որ այդպիսի շատ մութ գործեր այդպես էլ կմնան չբացահայտված: Եվ, վերջապես,- ավարտում է իր խոսքը Կիսիլյովը,- այդ բարդությունները գնալով կավելանան, իսկ արդյունքում պետական հողերը Ղարաբաղում ավելի կնվազեն...»[18]: Համաձայնվենք, որ ռուսական բարձրաստիճան պաշտոնյան բավական իրատեսական կարծիք է հայտնել խանական կառավարման շնորհիվ Ղարաբաղում ստեղծված սոցիալ-տնտեսական իրավիճակի մասին:

Այսպիսով, Կովկասի հնագրական հանձնաժողովի վավերագրերում զետեղված այս երկու զեկույց-ուսումնասիրությունները ոչ միայն բնութագրում են Ղարաբաղում մահմեդական կառավարման ծանր հետևանքները, այլև մատնանշում են Ղարաբաղում հայկական տարրի նվազման իրական պատճառներն ու հետևանքները:

[18] Նույն տեղում, էջ 290:

ДВА ИСТОЧНИКОВЕДЧЕСКИХ ИССЛЕДОВАНИЯ О КАРАБАХЕ

ОГАНЕСЯН Э.А.

Резюме

Вопросы истории Карабаха (Арцаха) остаются одними из приоритетных в армянской историографии. Не секрет, что наши коллеги из соседней республики пытаются всячески приукрасить магометанское правление в Карабахе, представляя его как яркую страницу в истории Карабаха. Однако одни лишь архивные документы, изданные в Актах Кавказской археографической комиссии (АКАК), уже доказывают обратное.

TWO SOURCE STUDIES ON KARABAKH

E. HOVHANNISYAN

Abstract

The problems of the history of Karabakh (Artsakh) remain one of the priorities in Armenian historiography. It's no secret that our colleagues from the neighboring republic are trying every way to embellish the mohammedan rule in Karabakh, presenting it as a flourishing era in the history of Karabakh. However, the archival documents published in the Acts of the Caucasian Archaeographic Commission (ACAC) are more than enough to prove the opposite.

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՇԱՐԺԱՌԻԹՆԵՐԸ

ԳՐԻԳՈՐՅԱՆ Ա.Վ.

Խորհրդարանական դիվանագիտության գաղափարը հին պատմություն ունի: Իսպանացի սենատոր Գ. Էլորիագան պնդում է, որ դրա նախատիպը կարելի է գտնել Հին Հռոմի Սենատի քրմական կոլեգիայում (ֆեցիալներ), որը պատասխանատվություն էր կրում օտարերկրյա դեսպանությունների անձեռնմխելիության ապահովման, պատերազմի և խաղաղության վերաբերյալ հայտարարությունների փոխանցման, ինչպես նաև այլ երկրների հետ կնքված դաշնագրերի ու համաձայնագրերի կատարումը վերահսկելու համար[1]:

Ըստ մի շարք հեղինակների, խորհրդարանական դիվանագիտության զարգացման շրջանն աշխարհում սկիզբ է առել XIX դ.՝ պայմանավորված Միջխորհրդարանական միության ստեղծմամբ (1889 թ.), երբ Վ.Ռ. Քրիմերի (Մեծ Բրիտանիա) և Ֆ. Պասսիի (Ֆրանսիա) նախաձեռնությամբ Փարիզում տեղի ունեցավ միջազգային միջնորդության հարցերով առաջին Միջխորհրդարանական համաժողովը, որին մասնակցում էին եվրոպական ինը երկրների պատվիրակներ[2]: Մինչ այդ, ըստ Արևմտաեվրոպական միության վեհաժողովի խորհրդարանական և հասարակայնության հետ կապերի հանձնաժողովի անդամ Վ. Սկարչիալուպիի, խորհրդարաններն ավանդաբար պահպանել են փոխադարձ քաղաքավարության հարաբերություններ: Դրանք եղել են հրավերներ, այցեր կամ փաստերի սահմանման նպատակով առաքելություններ խորհրդարանների խոս-

---

[1] **Rodrigo Obrador Castro** y **Edmundo Serani Pradenas,** "Funciones del parlamento y diplomacia parlamentaria: desafíos y oportunidades". Hemiciclo: Revista de Estudios Parlamentarios. Año 1. Número 1. Segundo semestre de 2009**.** Capitulo III. Academia Parlamentaria de la Cámara de Diputados, Chile, pp. 39-40. Disponible en: https://www.camara.cl/camara/media/seminarios/revista_hemiciclo.pdf. (última visitada 06.05.2016, 10:00).

[2] **Leonides Ortiz Sánchez,** Diplomacia parlamentaria en México. Comité Ejecutiv Nacional de Convergencia, Partido Político Nacional. México, Mayo del 2006. Disponible en: http://www.convergenciamexico.org.mx/DIPPAR.pdf. p. 11 (última visitada 10.06.2016, 09:20).

նակների կամ նրանց ներկայացուցիչների համար, իսկ խորհրդարանականները, որոնք պաշտոնական պարտականություններ չունեին, արտաքին շփումներում ներգրավված չեն եղել[3]:

Մինչև XX դ. կեսերը միջազգային խորհրդարանական համագործակցությունը թույլ էր զարգացած: Գործառում էին միջխորհրդարանական կապերի զարգացմամբ զբաղվող եզակի կազմակերպություններ (Խորհրդարանների գլխավոր քարտուղարների ասոցիացիա, Համագործակցության (բրիտանական) խորհրդարանական ասոցիացիա, Ներկայացուցչական և խորհրդարանական ինստիտուտների պատմության հարցերի միջազգային հանձնաժողով և այլն)[4]: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո աշխարհում ինտեգրացման գործընթացների աշխուժացումն սկիզբ դրեց միջազգային խորհրդարանական ներկայացուցչության գաղափարի ինստիտուցիոնալացմանը միջազգային խորհրդարանական վեհաժողովների՝ բազմակողմ պառլամենտարիզմի ներկայացուցչական հաստատությունների ստեղծման տեսքով: Ըստ ռուս քաղաքագետ Ա. Վինոգրադովայի՝ հենց XX դ. կեսերից սկսվեց միջազգային հարաբերությունների «խորհրդարանականացման» յուրօրինակ դարաշրջանը: Արևմտաեվրոպական միջկառավարական բոլոր առանցքային կազմակերպություններն սկսեցին իրենց մեջ խորհրդարանական բաղադրիչ ներառել[5]:

Ըստ սոցիալական տեսաբան Դ. Բիթհամի՝ խորհրդարանական դիվանագիտությունը հզոր գործիք դարձավ հատկապես սառը պատերազմի ժամանակաշրջանում: Բերվում է այն օրինակը, որ երբ կառավարություններն սկսել էին, այսպես կոչված, «Հելսինկյան գործընթացը»՝ Եվրոպայում անվտանգության և համագործակցության համար երկխոսության մեխանիզմը, խորհրդարանականներն իրականացնում էին զուգահեռ

---

[3] **Squarcialupi V.** Parliamentary Diplomacy: The Role of International Assemblies. Report Submitted on behalf of the Committee for Parliamentary and Public Relations. Document a/1685. Assembly of the Western European Union (WEU, 2000). (Availableat: http://dspace.africapotal.org/jspui/bitstream/123456789/17678/1/Parliamentary%20Diplomacy%20The%20 Role%20of%20International%20Assemblies.pdf?1.(last accessed 15.05.2016, 12:00).

[4] **Саидов А.Х.** Рецензия на книгу "Международные парламентские организации: справочник", М., 2003, 256 с. [Электронный ресурс]: Режим доступа: http://w.pc-forums.ru/o5459.html (Дата обращения: 16.10.2016, 13:35).

[5] **Виноградова А.А.** Парламентская ассамблея ОБСЕ как тип межпарламентского института: генезис, функции и перспективы. Дис. на соиск. учен. степ. канд. полит. наук, М., 2011, с. 51-52.

գործունեություն Միջխորհրդարանական միության շրջանակում: Դա ծառայեց իբրև Արևելք-Արևմուտք երկխոսության ճանապարհ՝ խորհրդարանական դիվանագիտության միջոցով փակուղիները հաղթահարելով այնպիսի իրավիճակներում, երբ կառավարության անունից բանակցողներն ի զորու չէին որևէ առաջընթաց արձանագրել[6]:

Սառը պատերազմի ավարտով, Խորհրդային Միության և երկբևեռ աշխարհի փլուզմամբ ձևավորվեց միջազգային նոր կարգ, ինչն էապես անդրադարձավ միջազգային հարաբերություններում խորհրդարանների ներգրավվածության ծավալի վրա: Ակտիվ միջազգայնացումը և լայնորեն տարածվող ժողովրդավարացումը դարձան միջազգային համակարգի նոր առանձնահատկությունները: Խորհրդարանական ժողովրդավարությունը տարածվեց ողջ աշխարհում[7]: Խորհրդարանականների մասնակցությունը որոշումների ընդունման գործընթացին բխում էր ժողովրդավարական այն սկզբունքներից, ըստ որոնց, մարդիկ պետք է մասնակցություն ունենան իշխանության իրականացմանն իրենց ընտրովի ներկայացուցիչների միջոցով: 1980-ական թթ. վերջին և 1990-ական թթ. եվրասիական մայրցամաքի հսկայական տարածքում նորանկախ պետությունների ի հայտ գալով նոր նախադրյալներ ստեղծվեցին միջխորհրդարանական կապերի զարգացման համար: Ընդ որում, եթե Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի նոր պետությունները ձգտում էին համագործակցել եվրոպական միջազգային խորհրդարանական կազմակերպությունների հետ (ԵԽԽՎ, ԵԱՀԿ ԽՎ), ապա ԽՍՀՄ-ի նախկին հանրապետություններն ստեղծեցին իրենց սեփական տարածաշրջանային միջխորհրդարանական կազմակերպությունները, որոնցից խոշորագույնը դարձավ ԱՊՀ ՄԽՎ-ն[8]:

Ժողովրդավարության ընդլայնման և ամրապնդման շրջանակում խորհրդարանների միջազգային ակտիվությունը, հետևաբար և խորհրդարանական դիվանագիտությունը զարգացման աննախադեպ ազդակ

---

[6] **Beetham D.** Parliament and Democracy in the Twenty-First Century. *A Guide to Good Practice*. Inter Parliamentary Union 2006, p. 173. Availableat: http://www.ipu.org/PDF/publications/democracy_en.pdf. (last accessed 24.05.2016, 10:51).

[7] **Bajtay P.** Shaping and Controlling Foreign Policy - Parliamentary Diplomacy and Oversight, and the Role of the European Parliament. Policy Department, Directorate-General for External Policies. July 2015, pp. 6-7. Availableat: http://www.europarl.europa.eu/RegData/etudes/STUD/2015/549045/EXPO_STU(2015)549045_EN.pdf. (last accessed 19.05.2016, 10:00).

[8] **Виноградова А.А.,** նշվ. աշխ., էջ 53:

ստացան XX դ. վերջին[9]: Ստեղծվեցին միջազգային խորհրդարանական մեծաքանակ կազմակերպություններ, նկատելիորեն ակտիվացան միջխորհրդարանական կապերը: Այդ գործընթացն աշխարհում չի դադարել մինչ օրս: Հեղինակները համակարծիք են այն հարցում, որ միջազգային հարաբերություններում խորհրդարանների ազդեցության աճը պայմանավորված է համաշխարհային զարգացման նոր միտումներով, հատկապես գլոբալացմամբ, որն աշխարհը վերածել է տնտեսական, սոցիալական, մշակութային ու քաղաքական տեսանկյուններից փոխկախված և փոխկապակցված համակարգի՝ անխուսափելիորեն հանգեցնելով նախկինում գործադիր իշխանության մենաշնորհը դարձած արտաքին քաղաքականության արդիականացմանն ու հանրայնացմանը[10]: Կարևորվում է նաև գիտատեխնիկական առաջընթացի դերը[11]: Իսպանիայի խորհրդարանի փաստաբան Պ.Գ.Է. Մարկեսը փաստում է, որ հասարակության զարգացման մեջ առաջ եկած գործոնների ազդեցությամբ դիվանագիտական գործունեության և խորհրդարանական կյանքի միջև նախկին տարանջատումը այժմ զգալիորեն հաղթահարվել է: Չնայած արտաքին քաղաքականությունն ի սկզբանե իրականացվել է դեսպանությունների միջոցով, սակայն հաղորդակցության արդի միջոցները, նոր տեխնոլոգիաները հանգեցրել են խորհրդարանների միջազգային գործունեության աշխուժացմանը, ինչը հայտնի է իբրև «խորհրդարանական դիվանագիտություն»[12]:

Ըստ հոլանդացի տեսաբաններ Ֆ. Վայսգլասի և Ջ. դե Բոյերի՝ հավանաբար, ժամանակի հայտանիշն է, որ «խորհրդարանական դիվանա-

---

[9] **Leonides Ortiz Sánchez,** Diplomacia parlamentaria en México. Comité Ejecutivo Nacional de Convergencia, Partido Político Nacional. México, Mayo del 2006, p. 11. Disponible en: http://www.convergenciamexico.org.mx/DIPPAR.pdf.(última visitada 11.05. 2016, 10:05).

[10] **Mauricio Burgos Quezada** y **José Luis Javier Riffo Muñoz** (editores), Diplomacia Parlamentaria. Valparaíso:Senado de Chile, 2014, p. 27. Disponible en:file:///C:/Users/ Publish %20User1/Downloads/libro%20DIPLOMACIA%20PARLAMENTARIA.pdf. (última visitada 20.05.2016, 11:20).

[11] Centro de capacitación y estudios parlamentarios. Disponible en: http://www4.congreso.gob.pe/DGP/CCEP/estudios/Articulo_Diplomacia_Parlamentaria.pdf. Lima, setiembre de 2011, p. 1 (última visitada 10.05.2016, 10:45).

[12] **Piedad García-Escudero Márquez,** Diplomacia y Cooperación Parlamentarias: las Cortes Generales. "Asamblea. Revista Parlamentaria de la Asamblea de Madrid", N⁰. 19, 2008 Madrid. P. 4. Disponible en: http://www.asambleamadrid.es/RevistasAsamblea/ASAMBLEA%2019%20COMPLETA.pdf. (última visitada 10.05.2016, 11:10).

գիտություն» եզրույթն այժմ առաջադրվել է: «Չնայած դիվանագիտությունն ավանդաբար համարվել է գործադիր իշխանության առանձնաշնորհը՝ սակայն արտաքին և ազգային գործերի միջև սահմանների լղոզումը հանգեցրել է խորհրդարանականների՝ իրենց առջև դրված խնդիրները նոր, գլոբալ մտածողությամբ դիտարկելու սուր անհրաժեշտությանը»,-գրում են համահեղինակներն ու հավելում, որ խորհրդարանականների առավել ակտիվ գործունեությունը միջազգային հարաբերություններում արդյունք է մի երևույթի, որը մտահղացվել է իբրև «գլոբալացում»[13]: Միևնույն ժամանակ, ըստ նրանց, միջազգային կազմակերպություններում կառավարությունների գործունեության աճն առաջ է բերել այն ավելի լավ վերահսկելու անհրաժեշտություն՝ հանգեցնելով վերջին տասնամյակի ընթացքում միջազգային մի շարք խորհրդարանական ինստիտուտներ ստեղծելուն՝ այդ վերահսկողությունը հեշտացնելու համար: «Մյուս կողմից, խորհրդարանները նաև հասկացել են, որ չեն կարող այլևս ակնկալել, որ կառավարությունն իր վրա կվերցնի արտերկրում գործողությունների միայնակ ղեկավարումն ու պատասխանատվությունը»,-գրում են Ֆ. Վայսգլասն ու դե Բոյերը և փաստում են՝ միջազգային շփումների նշանակությունն աճում է, և առաջիկա տարիների ընթացքում այդ գործընթացը հազիվ թե դադարի[14]:

«Դա օբյեկտիվ գործընթաց է, որն արտացոլում է աշխարհի շատ երկրներում քաղաքացիական հասարակության և հանրային ուժերի սոցիալ-քաղաքական նախաձեռնության գործոնի ուժեղացումը: Լայն իմաստով, կարելի է ասել, որ այդ միտումը որոշակիորեն արտացոլում է միջազգային հարաբերությունների ողջ համակարգի ժողովրդավարացման գործընթացը նրա՝ բազմաբևեռ մոդելին անցման ժամանակաշրջանում»,-2010թ. ապրիլին Հռոմում Եվրոպական սենատների ասոցիացիայի՝ «Խորհրդարանական դիվանագիտության զարգացումը 21-րդ դարում. սենատների դերը» թեմայով նիստում խորհրդարանական դիվանագիտության դերի աճն այսպես էր մեկնաբանել ՌԴ Դաշնային ժողովի Դաշնության

[13] **Weisglas F.** and **de Boer G.** "Parliamentary Diplomacy", The Hague Journal of Diplomacy, Vol. 2 (2007), pp. 93-94. Availableat: http://www.fransweisglas.nl/images/uploads/file/parliamentary%20diplomacy.pdf. (last accessed 10.05.2016, 18:00).

[14] Նույն տեղում, էջ 93:

խորհրդի նախագահ Ս. Միրոնովը՝ այն համարելով արդի համաշխարհային քաղաքականության կարևոր առանձնահատկություն[15]:

Ռուս քաղաքագետ Ե. Կոնդրաշովան խորհրդարանական դիվանագիտության զարգացումը դիտարկում է միջազգային հարաբերություններում նկատվող երկու առանցքային միտումների՝ գլոբալացման և ռեգիոնալացման շրջագծում: Մասամբ հակադիր լինելով՝ այս երկու միտումներն, ըստ հեղինակի, միևնույն ժամանակ կարող են նպաստել խորհրդարանի արտաքին քաղաքական լիազորությունների իրականացման հնարավոր ուղիների ընդլայնմանը[16]:

Ըստ իսպանացի պատմաբան Մ.Ա.Խ. Մարտինեսի (Կաստիլիա-Լա Մանչայի համալսարան)՝ խորհրդարանական դիվանագիտությունը գլոբալացման և իշխանությունների տարանջատման համադրման արդյունք է, այլ կերպ ասած՝ առաջանում է երկու երևույթների՝ ժողովրդավարացման և գլոբալացման զուգադիպումից[17]:

Ռուս քաղաքագետ Ա. Վինոգրադովան ևս հաստատում է, որ միջազգային կազմակերպությունների և միջազգային հարաբերությունների խորհրդարանականացման գործընթացը չի կարող տեղի ունենալ համաշխարհային քաղաքականության գլոբալացման և ժողովրդավարացման վեկտորներից կտրված: «…Ժողովրդավարացման գործընթացները փաստացիորեն ապրիորի ենթադրում են խորհրդարանական չափման դերի զուգահեռ ուժեղացում ինչպես ներպետական, այնպես էլ միջպետական համատեքստում»,-նշում է ռուս քաղաքագետը[18]:

Որոշ հեղինակներ ընդգծում են որոշումների ընդունման և ժողովրդավարական ներկայացուցչության միջև ինստիտուցիոնալ խզումը, ինչը հանգեցրել է միջազգային հարաբերություններում ժողովրդավարության

---

[15] Официальный сайт Совета Федерации Федерального Собрания Российской Федерации. «Сергей Миронов: Межпарламентские форумы все увереннее заявляют о себе в глобальной и региональной политике» [Электронный ресурс]: Режим доступа: http://www.council.gov.ru/events/news/19256/. (Дата обращения: 10.06.2016, 15:00).

[16] **Кондрашева Е.В.** Эволюция парламентаризма в контексте внешнеполитической деятельности России. Дис. на соиск. учен. степ. канд. полит. наук, М., 2008, с. 149-150.

[17] **Miguel Ángel Giménez Martínez,** Los inicios de la diplomacia parlamentaria en España durante la Legislatura Constituyente (1977-1979). Espacio, tiempo y forma. Serie V, Historia contemporánea, N⁰ 26, 2014, p. 405. Disponible en: file:///C:/Users/Publish%20User1/Downloads/10847-23901-2-PB.pdf. (última visitada 10.05.2016, 13:00).

[18] **Кондрашева Е.В.,** նշվ. աշխ., էջ 49:

պակասուրդի, և նշում են՝ խորհրդարանական դիվանագիտության առաջացումը, պետության միջազգային գործերում խորհրդարանների ներգրավվածության ընդլայնմանը զուգընթաց, պատասխանում է գլոբալացման համատեքստում քաղաքական լեգիտիմության նոր պահանջմունքին[19]: Ահա թե ինչպես է դա պարզաբանում սոցիալական տեսաբան Դ. Բիթհամը. «Բախվելով այն բանի գիտակցմանը, որ ազգերը փոխկախված են՝ միջազգային հանրությունն ստեղծեց ավելի մեծ թվով միջազգային կազմակերպություններ: …Այդ ինստիտուտները բանակցությունների վարման միջազգային համաժողովներ էին, որտեղ կառավարական ներկայացուցիչներն ընդունում էին որոշումներ և համաձայնագրեր: Գրեթե բոլոր համաձայնագրերի ընդունման ժամանակ խորհրդարանների ճնշող մեծամասնության հետ խորհրդատվություն չէր լինում բանակցությունների ընթացքում: Նրանք ընդամենը հրավիրվում էին համաձայնագիրը վավերացնելու, դրանց իրականացման համար օրենքներ ընդունելու կամ փոփոխելու: …Պատմական տարածայնությունները հաղթահարելու, տարածաշրջանային խաղաղության և կայունության ապահովման նպատակով շահագրգիռ պետությունները ձգտում էին միասնության՝ աստիճանաբար միավորելով իրենց շուկաները, տնտեսությունը և պետության այլ բաղադրիչները՝ ուշադրություն դարձնելով սուբսիդարության սկզբունքին, համաձայն որի՝ որոշակի հարցեր ավելի լավ կլուծվեն ազգային և ոչ թե պետական մակարդակում: Դա անխուսափելիորեն ուղեկցվում էր մարդկանց կյանքին առնչվող որոշումների հետ կապված լիազորությունները մայրաքաղաքից և ազգային խորհրդարանի կողմից իրականացվող վերահսկողությունից հեռու փոխանցելով»[20]: «Ժողովրդավարության համար այդ իրադարձությունների հետևանքները ակնհայտ են», - գրում է հեղինակն ու հռետորական հարցով շարունակում. «Ո՞րն է ազգային պետության մակարդակում ինստիտուտներից ամենաժողովրդավարականի արժեքը, եթե երկրի քաղաքացիների կյանքի համար կարևոր, այդ թվում և

[19] **Mauricio Burgos Quezada** y **José Luis Javier Riffo Muñoz** (editores), Diplomacia Parlamentaria. Valparaíso:Senado de Chile, 2014, p. 49. Disponible en: file:///C:/Users/Publish%20User1/Downloads/libro%20DIPLOMACIA%20PARLAMENTARIA.pdf. (última visitada 19.05.2016, 14:10).

[20] **Beetham D.** Parliament and democracy in the twenty-first century. A guide to good practice. Inter Parliamentary Union 2006, pp. 155-156. Availableat: http://www.ipu.org/PDF/publications/democracy_en.pdf. (last accessed 19.05.2016, 15:00).

անվտանգությանը վերաբերող որոշումներից շատերն ընդունվում են նրա սահմաններից դուրս կամ միջազգային կազմակերպությունների կողմից, որոնք որևէ ժողովրդավարական վերահսկողության և հաշվետվականության չեն ենթարկվում: Այդ խզումն ազգային մակարդակի (որում պատմականորեն տեղակայված են ժողովրդավարական ինստիտուտները) և գլոբալ ու տարածաշրջանային մակարդակների միջև դառնում է աղբյուրը մի երևույթի, որն անվանում են միջազգային «ժողովրդավարության պակասուրդ»[21]: Ըստ Դ. Բիթհամի՝ խորհրդարանները և նրանց անդամները լիովին գիտակցում են դա և ձգտում լուծել այն խնդիրները, որոնք առաջացնում է ժողովրդավարության միջազգային պակասուրդը:

2011 թ. Հնդկաստանի Ջավահարլալ Ներուի անվան համալսարանում կարդացած զեկույցում անդրադառնալով խորհրդարանական դիվանագիտության զարգացման պատճառներին՝ Ավստրիայի Ազգային խորհրդի նախագահ Բ. Պրամմարը ևս նշել է, որ քաղաքական որոշումների գործընթացի վերահսկողության կորստին հակազդելու համար խորհրդարանները պետք է ռազմավարություն զարգացնեին, ուստի նրանք սկսեցին պայքարել արտաքին քաղաքականության ոլորտում երկխոսության ավելի մեծ իրավունքի համար, ուժեղացնել իրենց արտաքին քաղաքական պրոֆիլը և ինտենսիվացնել անդրսահմանային համագործակցությունը»[22]:

Այսպիսով, պատմականորեն, խորհրդարանները սահմանափակ դեր են ունեցել միջազգային հարաբերություններում՝ այն պատճառով, որ արտաքին քաղաքականությունն ավանդաբար համարվել է գործադիր իշխանության բացառիկ իրավասության տակ գտնվող ոլորտ և իրականացվել է հիմնականում դեսպանությունների և արտաքին քաղաքական այլ գերատեսչությունների միջոցով: Համաշխարհային զարգացման նոր միտումների ազդեցությամբ, խորհրդարանների միջազգային ակտիվությունն սկսել է աստիճանաբար աճել: Բոլոր ժողովրդավարական պետություններում խորհրդարանները՝ իբրև ժողովրդավարության կենտրոնական ինստիտուտներ, իրենց ավանդական գործառույթներից բացի, ակտիվո-

[21] Նույն տեղում, էջ 156:

[22] Parlamentarische Diplomatie wird zunehmend wichtiger. NR-Präsidentin Prammer zu Gast an der Jawaharlal Nehru University. Die offizielle Website des Parlament der Respublik Österreich. Parlamentskorrespondenz Nr. 125 vom 08.02.2011. Verfügbar um: https://www.parlament.gv.at/PAKT/PR/JAHR_2011/PK0125/index.shtml. (zuletzt aufgerufen 12.05.2016, 15:40).

րեն մասնակցում են երկրի միջազգային գործունեությանը և ունեն սահմանադրական լիազորություններ արտաքին քաղաքականության այնպիսի առանցքային խնդիրներում, ինչպիսիք են պատերազմի ու խաղաղության հարցերը, միջազգային պայմանագրեր վավերացնելն ու չեղյալ հայտարարելը, կառավարության գործունեության վերահսկողությունը, արտաքին քաղաքականությանն առնչվող հարցերի վերաբերյալ ուղերձներով և հայտարարություններով հանդես գալը, իսկ որոշ երկրներում՝ նաև բարձրագույն դիվանագիտական պաշտոններում նշանակումների հաստատումը: Խորհրդարանների արտաքին քաղաքական գործունեության կարևոր ուղղություններից է նրանց աշխատանքը միջազգային խորհրդարանական կառույցներում, որոնց թիվն աշխարհում լայնորեն տարածված ժողովրդավարական գործընթացներին զուգընթաց շարունակաբար աճում է, գործունեության ոլորտն՝ ընդլայնվում: Միջխորհրդարանական համագործակցությունն այլևս իր կայուն տեղն է գտել միջազգային հարաբերությունների պրակտիկայում: Սակայն, ինչպես իրավամբ նշում է հույն միջազգայնագետ Ս. Ստավրիդիսը, դա չի նշանակում, որ խորհրդարաններն արտաքին քաղաքականության մեջ դարձել են ավելի կարևոր դերակատարներ: Գործադիրներն առաջվա նման մնում են արտաքին քաղաքականության հիմքում, բայց նրանք առաջվա պես բացառիկ խաղացողներ չեն[23]: Միջազգային խորհրդարանական միջոցառումներն այլևս անհերքելի իրականություն են, կա խորհրդարանական դիվանագիտություն: Միջազգային պրակտիկայում երևույթը նոր չէ, ինքը՝ բնորոշումն էլ առարկություն չի հարուցում ո'չ փորձագետների, ո'չ խորհրդարանականների շրջանակներում[24]:

[23] **Malamud A.** у **Stavridis S.** Parliaments and Parliamentarians as International Actors. Bob Reinalda (ed.), The Ashgate Research Companion to Non-State Actors, Ashgate, Aldershot, 2011, p. 1. Availableat: http://apps.eui.eu/Personal/Researchers/malamud/Ashgate-Malamud-Stavridis.pdf. last accessed (22.05.2016, 20:00).

[24] **Косов Ю.В., Торпыгин А.В.** Содружество независимых государств: институты, интеграционные процессы, конфликты и парламентская дипломатия, М., 2009, с. 190.

ОСНОВНЫЕ МОТИВЫ РАЗВИТИЯ ПАРЛАМЕНТСКОЙ ДИПЛОМАТИИ

ГРИГОРЯН А.В.

Резюме

Исторически парламенты играли ограниченную роль в международных отношениях, поскольку внешняя политика традиционно была сферой, находящейся под исключительной юрисдикцией исполнительной власти. Однако под влиянием новых тенденций мирового развития международная активность парламентов постепенно возросла, и межпарламентское сотрудничество вошло в практику международных отношений. Международная деятельность парламента на сегодняшний день стала неоспоримой реальностью, что дает нам возможность говорить о возрастающей роли парламентской дипломатии в современной мировой политике.

MAIN CAUSES OF DEVELOPMENT OF PARLIAMENTARY DIPLOMACY

A. GRIGORYAN

Abstract

Historically parliaments have played a limited role in international relations, because foreign policy has traditionally been an area under the exclusive jurisdiction of the executive. However, under the influence of new trends in world developments the international activity of parliaments gradually increased and interparliamentary cooperation entered into the practice of international relations. Today Parliament's international activities are an undeniable reality, which gives us an opportunity to talk about the growing role of parliamentary diplomacy in modern world politics.

ՄԱՐՇԱԼ Հ. ԲԱՂՐԱՄՅԱՆԻ ԵՎ ԾՈՎԱԿԱԼ Հ. ԻՍԱԿՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ԳԱՍՊԱՐՅԱՆ Վ.Ա.

Խորհրդային Միության բոլոր ժողովուրդների հետ հայ ժողովուրդը ևս ամենաակտիվ մասնակցությունն ունեցավ 1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմին և իր արժանի ավանդը ներդրեց գերմանաֆաշիստական զավթիչների դեմ տարած հաղթանակում: Պատերազմին մասնակցել է 600 000 հայ, որից 300 000-ը՝ Խորհրդային Հայաստանից, ավելի քան 200 000-ը՝ ԽՍՀՄ մյուս հանրապետություններից, իսկ շուրջ 100 000-ը՝ աշխարհի այլ երկրներից, որոնցից ավելի քան 200 000-ը զոհվեցին ռազմաճակատում: Հայերը ոչ միայն քանակով աչքի ընկան, այլև մարտերում ցուցաբերած իրենց մարտավարական տաղանդով ու սխրանքներով: Պատերազմին մասնակից հայ զինվորականներից Իվան Ստեփանի Իսակովին շնորհվեց Խորհրդային Միության նավատորմի ծովակալի կոչում (հիշեցնենք, որ այդ կոչմանն արժանացել է ընդամենը 3 մարդ), Իվան Քրիստափորի Բաղրամյանին՝ Խորհրդային Միության մարշալի, Համազասպ Խաչատուրի Բաբաջանյանին՝ զրահատանկային զորքերի գլխավոր մարշալի, Սերգեյ Ալեքսանդրի Խուդյակովին (Արմենակ Արտեմի Խանփերյանցին)՝ ավիացիայի մարշալի, իսկ Սերգեյ Քրիստափորի Ագանովին՝ ինժեներական զորքերի մարշալի կոչում:

1945 թ. դեկտեմբերի 31-ի տվյալներով պատերազմին մասնակցել են 64 հայ գեներալներ, իսկ պատերազմի մասնակից հայ սպաներից ևս 83 հոգու շնորհվել է գեներալի, իսկ 8-ին՝ ծովակալի կոչում: Մարտերում սխրանքներով աչքի ընկած 99 հայորդու շնորհվել է Խորհրդային Միության հերոսի կոչում: Ընդհանուր առմամբ, այդ բարձր կոչմանն է արժանացել 106 հայ, ընդ որում 4-ը՝ 1939-1940 թթ. Խորհրդաֆիննական պատերազմում, իսկ 3-ը՝ հետպատերազմյան տարիներին: Հովի. Բաղրամյանը և լեգենդար օդաչու Նելսոն Ստեփանյանը դարձել են Խորհրդային Միության կրկնակի հերոսներ: Հայրենական մեծ պատերազմում կատա-

րած սխրանքների համար 26 հայ ռազմիկներ, պարգևատրվելով Փառքի շքանշանի 3-րդ, 2-րդ և 1-ին աստիճաններով, դարձել են այդ շքանշանի լրիվ ասպետ: Հայրենական մեծ պատերազմի տարիներին գիտության և արդյունաբերության բնագավառներում ակնառու ծառայությունների համար 8 հայորդու շնորհվել է Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում: Պատերազմի մասնակից 3 հայ ականավոր գիտնականների՝ «ՄԻԳ» կործանիչ ինքնաթիռների գլխավոր կոնստրուկտոր, ինժեներատեխնիկական ծառայության գեներալ-գնդապետ Արտեմ Իվանի Միկոյանին հրթիռամիջուկային վահանակի ստեղծման գլխավոր կոնստրուկտոր, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սամվել Գրիգորի Քոչարյանցին և Հայաստանի գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վիկտոր Համազասպի Համբարձումյանին, այդ բարձր կոչումը շնորհվել է կրկնակի: 1994 թ. հոկտեմբերի 11-ին Վ. Համբարձումյանին շնորհվել է նաև Հայաստանի Հանրապետության ազգային հերոսի կոչում: Հայրենական մեծ պատերազմի մասնակից Կիրիլ Իվանովիչ Շոլկինին (Կիրակոս Հովհաննեսի Մետաքսյանին՝ 1949, 1951 և 1958 թթ.) շնորհվել է Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում՝ միջուկային և ջրածնային ռումբի ստեղծման համար[1]: Այդ առումով էլ Հայրենական մեծ պատերազմին հայ ժողովրդի զավակների մասնակցության թեման մշտապես եղել է հայ պատմագրության ուշադրության կենտրոնում, հատկապես պատերազմի մասնակից հայ ականավոր զորավարների կյանքի ու գործունեության հիմնահարցը:

Հայ պատմաբաններից առաջինը, որ առանձին մենագրություն է գրել Խորհրդային բանակի ականավոր զորավար, Խորհրդային Միության մարշալ, Խորհրդային Միության կրկնակի հերոս Հովի. Բաղրամյանի մասին, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արամայիս Մնացականյանն էր: 1978 թ. «Հայաստան» հրատարակչությունը լույս ընծայեց նրա «Մարշալ Բաղրամյան» (կյանքի և գործունեության ուրվագիծ) մենագրությունը[2]՝ բաղկացած առաջաբանից, վեց բաժիններից և օգտագործված գրականության ցանկից (ընդամենը՝ 314 էջ): Պրոֆեսոր Ա. Մնացականյանը անձամբ ծանոթ էր մարշալին, ձեռք էր բերել բավականաչափ

[1] **Арутюнян К.А.** Участие сынов армянского народа в битве под Москвой, Е., 2015, с. 19-22.

[2] **Մնացականյան Ա.Ն.,** Մարշալ Բաղրամյան, Ե., 1978:

հարուստ փաստական նյութեր, որոնց հիման վրա շարադրել էր իր աշխատությունը: Աշխատության մեջ հեղինակը լուսաբանել է ապագա զորավարի ծննդյան և ուսումնառության հետ կապված հարցեր, անդրադարձել նրա զինվորական ծառայությանը Կովկասյան ռազմաճակատում՝ ընդդեմ թուրքական զավթիչների, բացահայտել Հայաստանի առաջին Հանրապետության և Խորհրդային Հայաստանի զինված ուժերի կայացման գործում ապագա զորավարի ներդրած ավանդը, ցույց տվել 1920-1930-ական թթ. Հովի. Բաղրամյանի ծառայությունը Խորհրդային Միության բանակի շարքերում և վերջապես զգալի տեղ հատկացրել նրա մասնակցությանը Հայրենական մեծ պատերազմին՝ առաջին օրերից մինչև հաղթանակ: Պրոֆեսորի աչքից չի վրիպել նաև մարշալի բեղմնավոր աշխատանքը հետպատերազմյան տարիներին:

Խորհրդային Միության մարշալ Հովի. Բաղրամյանի 90-ամյակի առթիվ ակադեմիկոս Գևորգ Ղարիբջանյանը և պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աբել Սիմոնյանը հրատարակել են «Մարշալ Բաղրամյան» գրքույկը[3]՝ նախատեսված «Գիտելիք» ընկերության դասախոսների համար: Գրքույկում համառոտակի լուսաբանվում է մարշալի կենսագրությունը:

1997 թ. մարշալ Բաղրամյանի ծննդյան 100-ամյակի առթիվ աշխատություն է հրատարակում պատմական գիտությունների դոկտոր Գրիգոր Աբրահամյանը[4], որում անդրադառնում է զորավարի կյանքի և գործունեության հիմնական փուլերին: Իսկ ծննդյան 110-ամյակի առթիվ (2007 թ.) մենագրություն է հրատարակում պատմական գիտությունների դոկտոր Կլիմենտ Հարությունյանը[5]: Արխիվային նորահայտ փաստերի հիման վրա, որոնք հեղինակը ձեռք էր բերել ԽՍՀՄ և ՌԴ պաշտպանության նախարարության կենտրոնական արխիվից, հեղինակը քննական վերլուծության միջոցով լուսաբանել է ականավոր զորավարի կյանքի ու գործունեության գլխավոր դրվագները: Աշխատության 40 էջ լուսանկարները պատկերում են մարշալի կյանքի և գործունեության բնորոշ պահերը, իսկ գրքի հավելվածում 1920-1943 թթ. Բաղրամյանի հուզիչ նամակներն են՝ ուղղված կնոջը՝ Թամարային:

---

[3] **Ղարիբջանյան Գ.Բ., Սիմոնյան Ա.Պ.**, Մարշալ Բաղրամյան, Ե., 1997:

[4] **Абрамян Г.С.** Полководец Баграмян, Е., 1997.

[5] **Арутюнян К.А.** Маршал Советского Союза, дважды герой - И.Х. Баграмян, Е., 2007.

Կլիմենտ Հարությունյանը, բացի վերոհիշյալից, 1997 թ. հայերեն հրատարակել էր «Մարշալ Բաղրամյան», իսկ 2002-ին՝ «Маршал Победы–И.Х. Баграмян» աշխատությունները: 1997 թ. Կ. Հարությունյանը ակտիվ մասնակցություն ունեցավ մեծ զորավարի կյանքի ու գործունեության մասին փաստաթղթերի ու նյութերի կազմման աշխատանքներին[6]: Մարշալ Բաղրամյանի մասին առանձին հոդվածներ էին տպագրել պատմական գիտությունների թեկնածու Երվանդ Խալեյանը[7], լրագրող Արմո Մալխասյանը[8] և գեներալ-մայոր, Խորհրդային Միության հերոս Աշոտ Ղազարյանը[9]:

Հայ պատմագրությունն անդրադարձել է նաև Խորհրդային Միության նավատորմի ծովակալ, Խորհրդային Միության հերոս Իվան (Հովհաննես) Ստեփանի Իսակովի (Տեր-Իսահակյան) կյանքի ու գործունեության կարևոր դրվագներին: Հայ պատմաբաններից առաջինը ականավոր ծովակալի մասին աշխատություն է հրատարակել պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արշակ Վարդապետյանը[10]: Աշխատությունը բաղկացած է երկու բաժնից և հավելվածից: Առաջին բաժնում լուսաբանվել է ծովակալի կյանքն ու գործունեությունը, երկրորդում՝ նրա գիտական ժառանգությունը: Հավելվածում բերված են փաստաթղթեր, որոնք վերաբերում են Հ.Ս. Իսակովի կյանքի ու գործունեության 1925-1959 թվականներին: Անվանի ծովակալի, գիտնականի ու գրողի կենսագրության ուշագրավ էջեր բացահայտելուց հետո հեղինակը ճիշտ չի նշել Հովհ. Իսակովի ծննդավայրը: Գրքի հենց սկզբում Ա. Վարդապետյանը նշում է, որ Իսակովը ծնվել է 1894 թ. օգոստոսի 22-ին Կարսի շրջանի Հաջիքենդ գյուղում[11]: Այնինչ նա ծնվել է Հյուսիսային Արցախի Գետաշենի ենթաշրջանի Հաջիքենդ ամառանոց ավանում, գետաշենցու ընտանիքում[12]: «Советская военная энциклопедия»-ի երրորդ հատորի 599-րդ էջում նշված է, որ Հովհ.

[6] Маршал Баграмян. Сборник документов и материалов, Е., 1997.
[7] Գիրք հերոսների մասին, Ե., 1964, էջ 14-2; Книга о Героях, Е., 1985, с. 99-101.
[8] **Մալխասյան Ա.Ե.**, Սովետական բանակի հայ գեներալներ, Ե., 1963, էջ 167-192:
[9] **Казарьян А.В.** Война, люди, судьбы, Е., кн. 1, 1975, с. 9-19.
[10] **Վարդապետյան Ա.Վ.,** Հ.Ս. Իսակով, Ե., 1973:
[11] Նույն տեղում, էջ 3:
[12] **Սիսյան Բ.Խ., Չիլինգարյան Ռ.Վ.,** Գետաշեն, Ե., 2007, էջ 251:

Իսակովը ծնվել է Ադրբեջանի Հաջիքենդ գյուղում[13]: Ա. Վարդապետյանի աշխատության մեջ նշված չի նաև 1940 թ. հունիսի 4-ին նրան ծովակալի կոչում շնորհելու մասին: Հյուսիսային Արցախի Հաջիքենդ գյուղում ծնվելու մասին վկայում է նաև ՀՀ զինկոմ, գեներալ-մայոր Աշոտ Ղազարյանը[14]:

Ծովակալ Իսակովի կյանքի և գործունեության ուսումնասիրության ասպարեզում մեծ ավանդ է ներդրել պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայրենական մեծ պատերազմի ակտիվ մասնակից Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր արխիվային վարչության պետ, գնդապետ Աշոտ Հարությունյանը: 1975 թ. նա արխիվային վարչության ավագ գիտաշխատող Օկտյաբրինա Բալիկյանի հետ կազմել և ռուսերեն հրատարակել է «Սովետական Միության նավատորմի ծովակալ Հովհաննես Ստեփանի Իսակովի» փաստաթղթերի և նյութերի ժողովածուն: Խմբագիրն է նավատորմի ծովակալ Ն.Դ. Սերգեևը, գրախոսը՝ պատմական գիտությունների դոկտոր, 1-ին կարգի կապիտան Վ.Ի. Աղկասովը: Առաջաբանը գրել է Ն. Սերգեևը, որը համառոտ, բայց գործիմաց մասնագետի իմացությամբ տվել է Հովի. Իսակովի կենսագրության հիմնական դրվագները, բարձր գնահատել Հայրենական մեծ պատերազմում ծովակալի գործունեությունը հայրենիքի պաշտպանության գործում, ցույց տվել, որ նրա կյանքն անխզելիորեն կապված է եղել Խորհրդային Միության ռազմածովային նավատորմի ստեղծման և զարգացման հետ, բացահայտել Իսակով գիտնականի, գրողի և մարդու հատկանիշները, ըստ արժանվույն գնահատել ժողովածուն կազմողների շնորհակալ աշխատանքը:

Ժողովածուն բաղկացած է 4 բաժիններից և հավելվածից: Առաջին բաժնում տրված են թիվ 1-128 փաստաթղթերը, որոնք արտացոլում են ծովակալի կյանքի և գործունեության հիմնական փուլերը: Երկրորդ բաժնում տեղակայված թիվ 129-150 փաստաթղթերը վերաբերում են նրա ռազմագիտական գործունեությանը: Երրորդ բաժնում Հովի. Իսակովի նամակներն են՝ ուղղված բարեկամներին ու ընկերներին: Չորրորդ բաժնում տեղադրված թիվ 281-300 փաստաթղթերը ներկայացնում են ժամանակակիցների հուշերը նրա մասին: Ընդարձակ հավելվածում տրված են ծովա-

[13] Советская военная энциклопедия, М., 1977, т. 3, с. 599 (Հյուսիսային Արցախի կամ Ռուսաստանի կայսրության Ելիզավետպոլի նահանգի փոխարեն գրված է Ադրբեջանական ԽՍՀ):

[14] **Казарьян А.В.** Война, люди, судьбы, кн. 2, 1977, с. 7:

կալի կյանքի և գործունեության հիմնական տարեթվերը, աշխատությունների մատենագրությունը, նրա մասին գրված հոդվածների ցանկը, օգտագործված աղբյուրների լուսանկարների ցանկը և այլն:

1984թ. պատմական գիտությունների դոկտոր Աշոտ Հարությունյանը և Օկտյաբրինա Բալիկյանը «Հայաստան» հրատարակչությունում հրատարակում են «Սովետական Միության նավատորմի ծովակալ Իսակով Իվան Ստեփանի» փաստաթղթերի ու հոդվածների ժողովածուն (ռուսերեն): Ժողովածուի խմբագրական կոլեգիան էր՝ նավատորմի ծովակալ Ն.Դ. Սերգեև (պատասխանատու խմբագիր), պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսորներ՝ Հրաչիկ Սիմոնյան, Աշոտ Հարությունյան, ծովակալ Ի.Ն. Սոլովյով: Ժողովածուն բաղկացած է առաջաբանից, 4 բաժիններից և հավելվածից, ծավալը՝ 396 էջ: Առաջաբանում համառոտ տրված է Իսակովի կենսագրությունը, այնուհետև վերլուծված են նրա ռազմապատմական, հրապարակախոսական և գրական աշխատությունները: Առաջին բաժնում թ. 1-35 փաստաթղթերն են, որոնք վերաբերում են ծովակալի գործունեությանը: Երկրորդ բաժնի թ. 36-65 փաստաթղթերը ծովակալի հոդվածներն են: Երրորդ բաժնում Ի. Իսակովի նամակներն են (թ. 66-107): Չորրորդ բաժնում թ. 108-120 փաստաթղթերն են, որոնք ժամանակակիցների գնահատականներն են նրա անձի և գործունեության վերաբերյալ: Ընդարձակ հավելվածում կյանքի և գործունեության նշանավոր տարեթվերն են, աշխատությունների, օգտագործված գրականության ցանկը, փաստաթղթերի ցուցակները և այլն: Այդ փաստաթղթերը ոչ միայն բացահայտում են ծովակալի կյանքի ու գործունեության բազմաբովանդակ կողմերը, նրա գիտական, գրական, հրապարակախոսական աշխատությունների գիտական, ճանաչողական և ուսուցողական մեծ արժեքը, այլև կարևոր սկզբնաղբյուրներ են նրա կենսագրությամբ հետաքրքրվող ուսումնասիրողների համար: Պրոֆեսոր Ա. Հարությունյանը Հովի. Իսակովի մասին հոդված է տպագրել նաև 1985 թ. ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի աշխատակիցների կազմած «Գիրք հերոսների մասին» աշխատության մեջ[15]: Հոդվածում տրված են ծովակալի համառոտ կենսագրությունը, մինչպատերազմական, պատերազմական և հետպատերազմական տարիների կարևոր դրվագները:

[15] Книга о Героях, Е., 1985, с. 217-219 (А.О. Арутюнян, Исаков Иван Степанович).

Ականավոր ծովակալի մասին իրենց աշխատություններում առանձին էջեր են հատկացրել պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Մնացականյանը[16], պատմական գիտությունների դոկտորներ Մարատ Սահակյանը և Կլիմենտ Հարությունյանը[17]:

Բացի պատմաբաններից, Հովի. Իսակովի մասին աշխատություններ են գրել հայ գրողները և լրագրողները: Այսպես, օրինակ, դեռևս 1963 թ. վաստակավոր լրագրող Արմո Մալխասյանը Երևանում հրատարակեց «Սովետական բանակի հայ գործիչները» աշխատությունը («Հայպետհրատ»), որի առաջաբանը 1962 թ. նոյեմբերի 22-ին գրել է ծովակալ Հովի. Իսակովը: Գրքի երկրորդ մասում՝ «Հայրենական մեծ պատերազմի հրամանատարներ և քաղաշխատողներ», Ա. Մալխասյանը հոդված է տպագրել «Սովետական Միության նավատորմի ադմիրալ Հովհաննես Իսակով» վերնագրով (էջ 193-214):

1973 թ. Երևանում հրատարակվում է գրող, լրագրող, պատմաբան Աշոտ Արզումանյանի «Адмирал» փաստավավերագրական-գեղարվեստական աշխատությունը[18], որտեղ հեղինակը արխիվային փաստերի, ծովակալին անձամբ ճանաչած ծառայակիցների և Հովի. Իսակովի հետ ունեցած հանդիպումների ժամանակ արված գրառումների հիման վրա հայ իրականության մեջ առաջին անգամ ստեղծել է արժեքավոր և հուզիչ մի լայնածավալ պատմություն, որտեղ ամենայն մանրամասնությամբ լուսաբանված են ռազմագետ, գիտնական, գրող ծովակալի կյանքի համարյա բոլոր կարևոր դրվագները: Գրքի վերջում Ա. Արզումանյանը տալիս է նրա կյանքի և գործունեության հիմնական տարեթվերը:

Հովի. Իսակովի մասին է գրել նաև Լևոն Բրուտյանը իր «Ծովի կանչով» ակնարկների ժողովածուում՝ նվիրված 10 հայ ծովակալների կյանքին ու գործունեությանը[19]: Գրքի 7-24 էջերում տրված է «Նշանավոր ծովակալի

---

[16] **Մնացականյան Ա.Ն.,** Միասնական շարքերում, Ե., 1975, էջ 144-145:

[17] **Հարությունյան Կ.Ա., Սահակյան Մ.Գ.,** Նրանք մարտնչել են հանուն հայրենիքի, Ե., 1988, էջ 27-30 (Իսակով Հովհաննես Ստեփանի): **Арутюнян К.А.** Участие армянского народа в Великой Отечественной войне Советского Союза (1941-1945), Е., 2004, с. 490-493; **Арутюнян К.** Участие сынов армянского народа в героической обороне Ленинграда, Е., 2011, с. 36-40.

[18] **Арзуманян А.М.** Адмирал, Е., 1973.

[19] **Բրուտյան Լ.Հ.,** Ծովի կանչով, Ե., 1983:

հիշատակին» ակնարկը, որտեղ պատմվում է Խորհրդային Միության նավատորմի ծովակալ Հովհ. Իսակովի մասին:

1985 թ. «Սովետական գրող» հրատարակչությունը լույս է ընծայում ՀԽՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր արխիվային վարչության հրատարակչության բաժնի խմբագիր Տիգրան Խաչատրյանի «Ձեր՝ Հովհաննես Իսակով» փաստագրական վիպակը՝ նախատեսված դպրոցական միջին և բարձր տարիքի համար: Առաջաբանը գրել էր Արխիվային վարչության պետ, պրոֆեսոր Աշոտ Հարությունյանը[20]:

Անվանի ծովակալի մասին է գրել նաև տեխնիկական գիտությունների դոկտոր, Ռուսական ռազմական գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Արկադի Սարգսյանը[21], ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ Հրանտ Պողոսյանը[22], ՀՀ զինկոմ, գրողների միության անդամ, գեներալ-մայոր, Խորհրդային Միության հերոս Աշոտ Ղազարյանը[23] և լրագրող Արմո Մալխասյանը[24]:

Այսպիսով, ամփոփելով Հայրենական մեծ պատերազմի մասնակից հայ ականավոր զորավարներ Հովհաննես Բաղրամյանի և Հովհաննես Իսակովի կյանքի ու գործունեության լուսաբանումը հայ պատմագրության մեջ մեր ուսումնասիրությունը, հանգում ենք այն եզրակացության, որ հայ պատմաբաններն առ այսօր արժանին են մատուցել իրենց հայրենակից զորավարներին՝ նրանց մասին տպագրելով առանձին հոդվածներ, մենագրություններ, փաստավավերագրական երկեր, կազմել արխիվային փաստաթղթեր ու նյութերի ժողովածուներ: Դրա հետ մեկտեղ հայ պատմագրությունը դեռևս անելիքներ ունի կատարելու այս բնագավառում: Հայ պատմաբաններն առ այսօր պատմագիտական հատուկ աշխատություն չեն ստեղծել Խորհրդային Միության նավատորմի ծովակալ Հովհ. Իսակովի կյանքի ու գործունեության վերաբերյալ, չնայած տպագրվել են փաստաթղթերի ու նյութերի արժեքավոր երկու ժողովածուներ, գրական այլ երկեր: Այդ աշխատանքը մեծ չափով կնպաստի մատաղ սերնդի,

---

[20] **Խաչատրյան Տ.Հ.,** Ձեր Հովհաննես Իսակով, Ե., 1985:

[21] **Саркисян А.Е.** Армяне-военные ученые, конструкторы, производственники и испытатели XX века, т. 3, Е., 2005, с. 108-112.

[22] **Арутюнян К.А., Погосян Г.Р.** Вклад армянского народа в победу в Великой Отечественной войне (1941-1945), Е., 2010, с. 551-558.

[23] **Казарьян А.В.** Война, люди, судьбы, кн. 1, с. 5-22.

[24] **Մալխասյան Ա.Ե.**, Սովետական բանակի հայ գործիչները, Ե., 1963, էջ 196-214:

հատկապես ՀՀ զինուժին և Արցախի Հանրապետության պաշտպանության բանակին հերոսական մարտական ավանդույթների ոգով դաստիարակելու գործին:

ОСВЕЩЕНИЕ ДЕЯТЕЛЬНОСТИ МАРШАЛА И. БАГРАМЯНА И АДМИРАЛА И. ИСАКОВА В АРМЯНСКОЙ ИСТОРИОГРАФИИ

ГАСПАРЯН В.А.

Резюме

Вместе с другими народами Советского Союза армянский народ внес свой достойный вклад в дело победы над фашизмом. В войне приняло участие более 600 000 армян, из коих 300 000–граждане Советской Армении, более 200 000–представители армянского народа из других республик СССР, а около 100 000–армяне из других стран. Более 200 000 армян погибло на фронте. Своими подвигами и тактическими способностями армяне прославились на всех фронтах Великой Отечественной.

О доблестных сынах армянского народа было издано множество монографий, сборников, статей, освещавших жизнь и деятельность выдающихся армянских полководцев, особенно И.Х. Баграмяна и И.С. Исакова, А.Х. Бабаджаняна, С.А. Худякова (А.А. Ханферянца) и С.Х. Аганова. Однако имена многих участников войны, равно как и их подвиги еще не вписаны в анналы истории. "Белые пятна" армянской историографии должны быть восполнены нашими учеными, что окажет огромное влияние как на военно-патриотическое воспитание подрастающего поколения, так и на подъем боевого и нравственного духа личного состава вооруженных сил Армении и Арцаха.

THE ELUCIDATION OF ACTIVITIES OF MARSHAL H. BAGHRAMYAN AND ADMIRAL H. ISAKOV IN ARMENIAN HISTORIOGRAPHY

V. GASPARYAN

Abstract

Armenian people, together with all the nations of Soviet Union, had active participation in the Second World War and had its great contribution to the Victory against Fascism.

600 000 Armenians participated in the War, 300 000 of which were from Soviet Armenia, 200 000 – from USSR other republics, and the rest 100 000 – Armenians were from other countries. More than 200 000 Armenians passed away in the front line. Armenians were noticed not only due to sending so many people to Army, but also for their tactical talents and heroic deeds during the battles.

Up till today, monographs, collections, articles covering the life and activities of famous Armenian commanders, particularly Hovhannes Baghramyan and Hovhannes Isakov, have been published. Armenian historiography still has a lot of work to do in this regard. The archival documents and materials about the mentioned Armenian commanders should be published and the works in Russian should be translated into Armenian for making them accessable for Armenian readers. The latter will greatly contribute to the organization of military-patriotic upbringing for the RA Armed Forces and Nagorno Karabakh Defense Army.

ՊԱՐՍԿԱ-ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՆԴԵՊ VII ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ

ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ Ա.Ա.

VI դ. սկզբին Վրաց եկեղեցին, Կյուրիոն կաթողիկոսի գլխավորությամբ, Բյուզանդական եկեղեցու ազդեցությունը կրելով, քաղկեդոնականացվեց խզելով դարավոր կապը Հայոց եկեղեցու հետ: Հայ հոգևորականությունը բազմաթիվ փորձեր արեց վրացիներին հետ բերելու ուղղադավան միաբնակության, սակայն ապարդյուն: Վրաց եկեղեցին 608 թ. վերջնականապես բաժանվեց Հայոց եկեղեցուց:

Այս բաժանումից հետո, Քաղկեդոնական եկեղեցին դավանական պառակտության սերմեր ցանեց նաև Աղվանքի եկեղեցում՝ հույս ունենալով դավանափոխության միջոցով փոխել այդ երկրի քաղաքական ուղեգիծը՝ հօգուտ Բյուզանդիայի: Թեև Հայկական Աղվանքի որոշ հոգևորականներ (հատկապես Ամարասի և Մեծ կողմանց եպիսկոպոսները) հակվեցին քաղկեդոնականության կողմը, սակայն Աղվանքի եկեղեցին հավատարիմ մնաց Հայոց հետ դավանակցությանը[1]:

Մինչև հայերն ու վրացիները լուծում էին իրենց դավանաբանական խնդիրները, Պարսկաստանն ու Բյուզանդիան պատերազմում էին միմյանց դեմ: Պարսից արքա Խոսրով Փարվեզը (590-628) զորքը շարժում էր առաջ, և որևէ ուժ չկար, որ կարող էր կասեցնել նրա առաջխաղացումը: Բյուզանդական կայսր Փոկասի (602-610) կողմից դիմադրություն ցուցաբերելու բոլոր փորձերը անհաջող էին անցնում: Խոսրով արքայի փորձառու զորավարներ Շահր-Վարազը և Շահենը բյուզանդացիներին հաջողության հասնելու ոչ մի հնարավորություն չէին տալիս[2]:

---

[1] **Վարդանյան Վ.,** Հայոց եկեղեցին վաղ միջնադարի քաղաքական խաչուղիներում, Վաղարշապատ, 2005, էջ 294-295:

[2] **Дмитриев В.** «Всадник в сверкающей броне»: Военное дело Сасанидского Ирана и история римско-персидских войн, СПб., 2008, с. 319.

608 թ. պարսիկները գրավում են Բյուզանդիայի տիրապետության տակ գտնվող Հայաստանի արևմտյան մասը և, դրա հետևանքով՝ ամբողջ Հայաստանը: 610 թ. Խոսրովի հրամանով Կարինի քաղաքացիները բռնի գաղթեցվում են Պարսկաստանի Ահմատան (Համադան) քաղաք: Գերիների հետ էր նաև ծերացած Հովհաննես Բագարանցի հակաթոռ Հայոց կաթողիկոսը, որը մահանում է գերեվարվելուց մեկ տարի անց: Կայսրությունը այլևս նոր կաթողիկոս չի նշանակում, ուստի վերջ է տրվում Հայոց եկեղեցու հակաթոռ կաթողիկոսությանը[3]: Վերջինիս վերացումից հետո Հայաստանի բյուզանդական մասի եկեղեցականները գալով Դվին՝ նզովում են Քաղկեդոնի ժողովն ու Լևոնի տոմարը և Աբրահամ կաթողիկոսին խնդրում են, որ իրենց վերցնի Մայր Աթոռի հովանու տակ. «...եկեալ յանդիման մեր՝ զբարեպաշտութիւն խոստովանեցին, նզովելով նոյնաձեւս ըստ երանելի հարցն մերոց զամենայն հերձուածողսն ե՛ւ զԱրիոս, ե՛ւ զՄակեդոն, ե՛ւ զՆեստոր, ե՛ւ զԵւտիքոս, ե՛ւ զչար ժողովն Քաղկեդոնի, ե՛ւ զպիղծ տոմարն Լեւոնի»[4]:

Այս դեպքերը հիշատակված են քաղկեդոնական աղբյուրում. «Աբրահամի կաթողիկոս դառնալուց երեք տարի անց պատերազմ տեղի ունեցավ Բասենում, և պարսիկները պարտության մատնեցին հռոմայեցիներին, պաշարվեց Կիթարիճ քաղաքը և Թեոդոսուպոլիսը՝ Փոկաս կայսեր Ե տարին և Խոսրովի Ի տարին: Նրանք գրավեցին բազմաթիվ այլ քաղաքներ, գերեցին նաև Հովհաննես կաթողիկոսին, որը թեպետ Հայաստանում էր գտնվում, բայց ենթարկվում էր հռոմայեցիներին: Այն ժամանակ էր, որ հերետիկոս Աբրահամ կաթողիկոսը ստիպեց Հովհաննեսի բաժնի եպիսկոպոսներին նզովել Քաղկեդոնի ժողովը, հակառակ դեպքում հեռանալ Հայաստանի շրջաններից: Վերջիններս չհամաձայնվեցին և նրանցից ոմանք անցան Տայք, ոմանք հոռոմոց երկիրը և վախճանվեցին օտարության մեջ»[5]:

Նույն ժամանակաշրջանում Բյուզանդիան գտնվում էր շատ ծանր վիճակում: Արևմուտքից երկիրն ասպատակում էին ավարներն ու սլավոննե-

---

[3] **Իսկանյան Վ.,** Հայ-բյուզանդական հարաբերությունները IV-VII դդ., Ե., 1991, էջ 428:

[4] **Ուխտանէս եպիսկոպոս,** Պատմութիւն Հայոց, Մատենագիրք Հայոց, հ. ԺԵ, Ժ դար (այսուհետև՝ Ուխտանես), Լիբանան, 2010, էջ 553:

[5] **Բարթիկյան Հ.,** "Narratio de rebus Armeniae", հունարեն թարգմանությամբ մեզ հասած մի հայ-քաղկեդոնական սկզբնաղբյուր (այսուհետև՝ Narratio de rebus Armeniae), Բանբեր Մատենադարանի, 1962, № 6, էջ 467:

րը, իսկ արևելքից՝ պարսիկները: 610 թ. Կոստանդնուպոլսում տեղի ունեցավ մի նոր պետական հեղաշրջում, գահընկեց արվեց և մահապատժի ենթարկվեց Փոկաս կայսրը: Նոր կայսր դարձավ Բյուզանդիայի աֆրիկյան նավատորմի հրամանատար Հերակլը (610-641): Նրա հայրը աչքի էր ընկել դեռևս Մորիկ կայսեր օրոք պարսիկների դեմ մղած ճակատամարտերում, հատկապես Հայաստանում[6]: Հերակլի հաջողությանը նպաստեց ոչ միայն աֆրիկյան հզոր նավատորմը, այլև Փոկասի հանդեպ ունեցած ժողովրդի ատելությունը և երկրի տնտեսական վիճակը: Հերակլը, տաղանդավոր զորավար լինելուց բացի, խոշոր ավատատերերի, սենատորների և բարձրաստիճան հոգևորականության ներկայացուցիչն էր[7]:

Սակայն Բյուզանդիայի գործերը արևելյան սահմաններին գնալով վատանում էին, և պարսիկները հերթով նվաճում էին կայսրության տարածքները, իսկ Հերակլը չէր կարողանում Խոսրովին արժանի հակահարված տալ: 611 թ. պարսիկները տիրացան Սիրիային՝ իր Անտիոք մայրաքաղաքով, հաջորդ տարի՝ Փոքր Ասիային, իսկ 613 թ., պարսից զորավար Սարվարը, գրավելով Դամասկոսը, պաշարեց Երուսաղեմը[8]: Երեք շաբաթ[9] տևող պաշարումից հետո պարսիկները գրավեցին քաղաքը, հազարավոր քրիստոնյաներ կոտորվեցին, շուրջ 35 000 հոգի գերվեցին: Գերի ընկավ նաև Երուսաղեմի Զաքարիա պատրիարքը, իսկ սուրբ քաղաքը ենթարկվեց խոշոր ավերածությունների: Ամենաթանկ կորուստներից մեկը «Խաչափայտն» էր, որի վրա, ըստ ավանդության, խաչել էին Հիսուսին: Երուսաղեմի գրավումը և ավերումը աղետ էր ամբողջ քրիստոնյա աշխարհի համար[10]: Սակայն Խոսրով արքան շուտով հրաման է արձակում ազատել գերիներին և վերականգնել քաղաքը: Երուսաղեմի պատրիարքի տեղապահ է նշանակվում Մոդեստոսը: Քաղաքը վերականգնելուն մասնակցում էին նաև հայ ուխտավորները: Մոդեստոսը հայոց Կոմիտաս կաթողիկոսին ուղղած իր թղթում հայերի այցը Երուսաղեմ համարում էր Աստծո մխիթարություններից մեկը. «Աւրինյալ է Աստուած… որ մխիթարեաց զմեզ մխիթարութեամբ բազմաւ ի վերայ ամենայն նեղու-

[6] **Լեո,** Հայոց պատմություն, հ. Բ, Ե., 1967, էջ 235-236:

[7] **Пигулевская Н.** Византия и Иран на рубеже VI и VII веков, М., 1947, с. 189-190.

[8] **Успенский Ф.** История Византийской империи VI-IX вв., М., 1996, с. 426.

[9] Ըստ Սեբեոսի՝ 19 օր:

[10] **Успенский Ф.,** նշվ. աշխ., էջ 426-427: Տե՛ս նաև **Սեբեոս,** էջ 155:

թեանց մերոց ի գալստեան ձերոյ հաւտիղ»[11]: Ի պատասխան նամակում Հայոց կաթողիկոսը գրում է. «Մի՛ այսուհետեւ ողբասցէ Սիովն, եւ մի՛ զգեցցի սուգ Երուսաղէմ, քանզի աւադիկ եկեալ հասեալ է արքայն Քրիստոս փրկել եւ մխիթարել. Այլ պսակ մխիթարութեան քո ի ծաղկացու չարչարանաց նորա բոլորի, եւ մահ նորա թագ մխիթարութեան եղիցի ի վերայ գլխոյ քոյ»[12]:

Երուսաղեմի գրավումը առիթ դարձավ, որ Խոսրով Փարվեզը նույնպես խառնվի քրիստոնյաների դավանաբանական վեճերին, քանի որ արդեն իր տիրապետության տակ էր մի ավելի ընդարձակ քրիստոնյա աշխարհ, որտեղ իր ազդեցությունը ուներ նաև բյուզանդականությունը:

Ինչպես հայտնի է, Խոսրով Փարվեզի հոր՝ Որմիզդ արքայի (579-590 թթ.) կառավարման ժամանակ Պարսկաստանում հովանավորվում էին նեստորականները: Սակայն Խոսրովի գահակալությունից հետո իրավիճակը փոխվեց: Պարսկաստանում հովանավորության արժանացան նաև միաբնակ քրիստոնյաները, քանի որ Խոսրով արքան կնության էր առել Մորիկ կայսեր դստերը՝ Մարիային և քրիստոնյա Շիրին թագուհուն, որը միաբնակ էր[13]: 609 թ. սկսած՝ Խոսրովը նեստորականներին զրկեց կաթողիկոս ընտրելու իրավունքից, և այդ արտոնությունը տվեց Գաբրիել բժշկապետին, որը Շիրին թագուհու մտերիմն էր և մեծ ազդեցություն ուներ պարսից արքունիքում: Գաբրիելը ևս միաբնակ քրիստոնյա էր և նրա դրդմամբ, արքան հրամայեց նեստորականների պարագլուխներին բանտարկել, իսկ նրանցից ամենանշանավորին՝ Գեորգ Իզալացուն խաչել տվեց[14]: Այդպիսով, Տիզբոնի կաթողիկոսական աթոռը դուրս եկավ նեստորականների իրավասությունից:

Խոսրովը, որոշելով վերջ դնել իր կողմից նվաճված քրիստոնյաների դավանաբանական վեճերին, Տիզբոնում ժողով է հրավիրում: Ասողիկը

---

[11] **Սեբեոս,** Պատմութիւն (այսուհետև՝ Սեբեոս), քննական բնագիրը՝ Գ. Աբգարյանի, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Գ. Խաչատրյանի և Վ. Եղիազարյանի, Ե., 2005, էջ 156:

[12] Նույն տեղում, էջ 164:

[13] **Луконин В.** Древний и раннесредневековый Иран, М., 1987, с. 183-184.

[14] **Տեր-Մինասյան Ե.,** Պատմա-բանասիրական հետազոտություններ, Ե., 1971, էջ 53-54:

վկայում է, որ այդ ժողովը կայացել է Երուսաղեմի գրավումից հետո[15]: Հայտնի է, որ Խոսրով Փարվեզի զորքերն այդ քաղաքը գրավել են 614թ., հետևաբար նշյալ ժողովը պետք է կայացած լինի դրանից հետո, հավանաբար 615 թ.: Երվանդ Տեր-Մինասյանը Տիզբոնի ժողովի թիվ է նշում 612 կամ 613 թթ.[16]: Սակայն ժողովը Երուսաղեմի գրավումից առաջ չէր կարող լինել նաև այն պատճառով, որ պարսից արքան կլանված էր Բյուզանդիայի դեմ մղվող պատերազմով, ուստի հազիվ թե ժամանակ տրամադրեր դավանական խնդիրներին[17]:

Տիզբոն էին ժամանել բազմաթիվ քրիստոնյա հոգևորականներ (որոնց թվում նաև Երուսաղեմից գերեվարված Զաքարիա պատրիարքը), իմաստասերներ, նեստորական և քաղկեդոնական եպիսկոպոսներ: Հայաստանից ժողովին ներկա էին Կոմիտաս Մամիկոնյան[18] և Մատթեոս Ամատունի եպիսկոպոսները[19]: Խոսրով Փարվեզը ժողովի վերակացու էր նշանակել Սմբատ Բագրատունուն և Գաբրիել բժշկապետին[20]: Արքայի հրամանով, ժողովը քննարկելու էր միայն առաջին չորս տիեզերական ժողովների (Նիկիայի, Կոստանդնուպոլսի, Եփեսոսի, Քաղկեդոնի) դավանությունների հարցը, իսկ տարատեսակ աղանդներին անդրադարձ չէր լինելու: Ժողովում իրենց կարծիքը հայտնեցին նաև Զաքարիա պատրիարքը և Ալեքսանդրիայից գերեվարված հոգևոր հայրերը. «...հաւատ ճշմարիտ այն է, որ ի Նիկիայն ասացաւ առ երանելեաւն Կոստանդիանոսիւ, եւ նմին միաբան են Կոստանդնուպոլսին եւ Եփեսոսին. եւ նոցին

---

[15] **Ստեփանոս Տարաւնեցի Ասողիկ,** Պատմութիւն տիեզերական, Մատենագիրք Հայոց, հ. ԺԵ, Ժ դար (այսուհետև՝ Ասողիկ), Ե., 2011, էջ 697:

[16] **Տեր-Մինասյան Ե.,** նշվ. աշխ., էջ 47-52:

[17] **Վարդանյան Վ.,** նշվ. աշխ., էջ 297:

[18] Կոմիտաս Աղցեցու կաթողիկոսության թվականները ստույգ չեն: Ըստ Սեբեոսի, նա միանգամից հաջորդեց Աբրահամ Աղբաթանեցուն (տե՛ս **Սեբեոս,** էջ 146): Նույնը ասում է նաև Հովհաննես Դրասխանակերտցին [տե՛ս **Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ** Պատմութիւն Հայոց (այսուհետև՝ Հովհաննես Դրասխանակերտցի), Ե., 1996, էջ 76]: Իսկ Մ. Օրմանյանը կարծում է, որ Աբրահամ կաթողիկոսի մահից հետո Կոմիտասը գլխավորել է Հայոց եկեղեցու եպիսկոպոսներին, սակայն պաշտոնապես կաթողիկոս է ձեռնադրվել Տիզբոնի ժողովից հետո (տե՛ս **Օրմանյան Մ.,** Ազգապատում, Կոստանդնուպոլիս, 1912, սյունյակ 658, 659):

[19] Հայ ժողովրդի պատմություն, հ. II (այսուհետև՝ ՀԺՊ, հ. II), Ե., 1984, էջ 294:

[20] **Լեո,** նշվ. աշխ., էջ 242: Տե՛ս նաև **Ակինյան Ն.,** Կիւրոն կաթողիկոս վրաց, Վիեննա, 1910, էջ 163:

միաբան Հայոց հաւատն է ճշմարտութեամբ: Իսկ Քաղկեդոնի ասացեալն ոչ է միաբան նոցին, որպէս ձեր իսկ բարերարութիւնդ ծանեաւ»[21]:

Երկար քննարկումներից հետո Տիզբոնի ժողովը վճռեց մերժել Քաղկեդոնի ժողովի որոշումները և վերահաստատեց առաջին երեք տիեզերական ժողովների դավանությունը: Ուշագրավ է Ասողիկի վկայությունը այս մասին. «Եւ հրաման տուեալ թագաւորին խնդիր առնել ի գանձս արքայի, եւ խնդրեալ գտին տետրեայս գրեալ ի վերայ հաւատս ճշմարիտս ըստ միաբանութեան հաւատոյ աշխարհիս Հայոց, որ էր կնքեալ մատանեաւ Կաւատայ արքայի եւ որդւոյ նորին Խոսրովու: Յորոյ վերայ հրաման ետ եւ արքայ Խոսրով, եթէ «Ամենայն քրիստոնեայք, որք ընդ իմով իշխանութեամբ են, հաւատ զՀայոցն կալցին»: Եւ որ միաբանէին ընդ Հայոց հաւատոյս ի կողմանս Ասորեստանի՝ կամ Կայեշով մետրապալիտ եւ այլ տասն եպիսկոպոսք եւ նոցին միաբան աստուածասէր թագուհին Շիրէն եւ քաջն Սմբատ եւ բժշկապետն մեծ: Իսկ զպատճէն ուղիղ խոստովանութեանն արքայ Խոսրով հրամայեաց կնքել իւրով մատանեաւ եւ տալ ի գանձն արքունի»[22]:

Կոմիտաս Աղցեցին Հայոց եկեղեցու դավանության «թուղթը» տալիս է ժողովին, և նրա հետ միանում են Կամյիշով մետրոպոլիտը, Սմբատ Բագրատունին, Շիրին թագուհին, Գաբրիել բժշկապետը և տասն եպիսկոպոսներ, որոնց անունները հիշատակված են Կոմիտասի «Հաւատոյ թղթի» մեջ[23]: Կոմիտաս Աղցեցին ժողովականներին ներկայացավ իբրև Հայոց կաթողիկոս. «Ես Կումիտաս Մամիկոնէից եպիսկոպոս, որ յաջորդեցայ ի կաթողիկոսութիւն Հայոց Մեծաց», և հանդես եկավ Հայաստանի իր «հավատացյալ հոտի» անունից[24]: Շատ հնարավոր է, որ նա եպիսկոպոսների ու իշխանների կողմից արդեն ընտրված էր և Ամատունյաց եպիսկոպոսի հետ գնացել էր Պարսից դուռ, որպեսզի Խոսրով Փարվեզի անհրաժեշտ հաճությունն ու հաստատությունը ստանա: Սմբատ Բագրատունու և Գաբրիել բժշկապետի միջնորդությամբ, որպես միաբնակության ներկայացուցչի դա հաջողվում է Կոմիտասին: Վերջինս ժողովականներին է ներկայացնում Հայոց եկեղեցու դավանանքի բովանդակությունը:

---

[21] **Ասողիկ,** էջ 700:

[22] Նույն տեղում:

[23] Տե՛ս Գիրք Թղթոց, Մատեանագրութիւն նախնեաց, Թիֆլիս, 1901, էջ 212-219:

[24] Նույն տեղում, էջ 218:

Հավատի այդ գիրը կտրականապես մերժում էր քաղկեդոնականությունը և հիմնավորում Հայոց եկեղեցու որդեգրած հավատամքը, որի էությունն էր՝ «Մի բնութիւն աստուածութեանն, մի իշխանութիւն, մի զաւրութիւն, մի պետութիւն» գաղափարը: Հայոց հավատքի ամփոփումը ներկայացնող այդ գրությունն արժանացավ Խոսրով արքայի հավանությանը, քանի որ այն համապատասխանում էր նրա քաղաքական շահերին[25]:

Ինչպես տեսնում ենք, Խոսրով արքայի հրամանով, Հայոց հավատը դառնում է պարսից պետության կողմից ընդունված միակ դավանանքը քրիստոնյաների համար: Ըստ այդմ, Հայոց Առաքելական Եկեղեցին իր հովանու տակ պետք է միաբաներ Պարսկաստանի բոլոր քրիստոնյաներին: Անգամ Երուսաղեմի եկեղեցին ստիպված էր ապավինել Հայոց եկեղեցու հովանավորությանը՝ ըստ երևույթին հրաժարվելով նախկինում որդեգրած քաղկեդոնամետ ուղեգծից[26]: Այս որոշումը բխում էր Սասանյանների քաղաքական շահերից, քանի որ 451 թ. Քաղկեդոնի ժողովում որոշվել էր, որ արևելքի եպիսկոպոսները վեճերի դեպքում կարող էին ուղղակի դիմել Կոստանդնուպոլսի պատրիարքին, իսկ դա նաև նշանակում էր, որ արևելյան եկեղեցիների թեմերն ընդգրկվում էին կայսրության քաղաքականության ոլորտը, որին հաջորդելու էր դրանց եկեղեցական համայնքներին պատկանող տարածքների զավթումը: Բնականաբար, Սասանյանները չէին կարող հանդուրժել նման իրավիճակը, և այդ պատճառով արքան հանդես եկավ Հայոց եկեղեցու «հովանավորի» դերում, որպեսզի կարողանա իրականացնել իր քաղաքական ծրագրերը[27]: Ամեն դեպքում, սա զիջում էր Հայոց եկեղեցու նկատմամբ:

Հայոց նորընծա կաթողիկոս Կոմիտաս Աղցեցին (615-628) ձեռնամուխ է լինում մի շարք կարևոր գործերի, ինչպես, օրինակ, սուրբ Հռիփսիմեի տաճարի նոր շենքի կառուցմանը. «Եւ եղև ամի ԻԸ-երորդի թագաւորութեանն Ապրուէզ Խոսրովու քակեաց կաթուղիկոսն Կումիտաս զմատուռ սրբոյն Հռիփսիմեայ ի Վաղարշապատ քաղաքի…»[28]:

---

[25] **Վարդանյան Վ.,** նշվ. աշխ., էջ 298:

[26] Նույն տեղում:

[27] ՀԺՊ, հ. II, էջ 295:

[28] **Սեբեոս,** էջ 166: Տե՛ս նաև **Հովհաննես Դրասխանակերտցի,** էջ 76, 78:

Կոմիտասը գրել է նաև քերթվածներ, որոնցից հատկապես նշանավոր է Հռիփսիմյանց կույսերին նվիրված շարականը՝ «Անձինք նուիրեալք» վերնագրով[29]:

Լուծելով Պարսկաստանի ներսում ծագած դավանաբանական խընդիրները՝ Խոսրով արքան շարունակեց իր արշավանքները: 616 թ. պարսիկները գրավեցին Եգիպտոսը, և արդեն 610-ականների վերջին՝ Էգեյան ծովի մի շարք կղզիներ, որոնց մեջ էր գտնվում նաև Ռոդոսն ու ծովափնյա Քաղկեդոն քաղաքը, որոնք համարվում էին Բյուզանդիայի հիմնական հենարանները Բոսֆորում: Բյուզանդիան զրկվել էր իր ասիական և եգիպտական ամենահարուստ տիրույթներից և ամեն կողմից ենթարկվում էր հարձակումների: Թվում էր, թե նման ճնշումների կայսրությունը երկար չի դիմանա ու կփլուզվի[30]:

Պարսիկներին համարելով որպես կայսրությանը սպառնացող ամենամեծ վտանգ՝ Հերակլը 620 թ. հաշտություն է կնքում ավարների հետ: Պատերազմ սկսելու համար կայսրին անհրաժեշտ էր դրամական միջոցներ, որոնց հիմնական աղբյուրը Բյուզանդական եկեղեցին էր: Կոստանդնուպոլսի պատրիարք Սերգիոսը կողմ էր եկեղեցու գանձերը բանակին տրամադրելուն, քանի որ Երուսաղեմի գրավումից և Սուրբ Խաչափայտը Տիզբոն տանելուց հետո, նա Բյուզանդիայի սկսած պատերազմը ընդդեմ Պարսկաստանի համարում էր սրբազան[31]:

Սկսվում են Պարսկաստանի դեմ բյուզանդական արշավանքները (623-628 թթ.): Հերակլը Պարսկաստանի դեմ հարձակման հենարան է դարձնում Հայաստանը և կովկասյան մյուս երկրները՝ Լազիկան, Վրաստանը և Աղվանքը: Այս անգամ ևս Հայաստանը դառնում է պարսկա-բյուզանդական ընդհարումների թատերաբեմ[32]:

623 թ. գարնանը Հերակլը Հայաստանով անցնում է դեպի Ատրպատականի Գանձակ քաղաք: Նրա երթուղին Պոնտոսի, Փոքր Հայքի, Կարինի, Վանանդի և Շիրակի վրայով հասնում էր Դվին, ապա Նախիճավան, այնտեղից՝ Ատրպատականի Գանձակ[33]:

---

[29] Շարականների ընտրանի, Ե., 2004, էջ 41:
[30] **Дмитриев В.,** նշվ. աշխ., էջ 319-320:
[31] **Успенский Ф.,** նշվ. աշխ., էջ 429-430:
[32] **Իսկանյան Վ.,** նշվ. աշխ., էջ 431:
[33] ՀԺՊ, հ. II, էջ 297:

Ատրպատականում Խոսրովը չկարողացավ դիմադրություն ցույց տալ կայսերական զորքին և պարտություն կրելով՝ անցավ Միջագետք: Հերակլը գրավեց Ատրպատականի մայրաքաղաք Գանձակը, սակայն բյուզանդացիները առաջ գնալ չկարողացան, քանի որ արդեն ձմեռնամուտ էր: Բյուզանդական զորքը նահանջեց Կովկաս՝ այնտեղ ձմեռելու[34]:

Որոշելով ձմեռել Աղվանից բարեբեր դաշտավայրում, կայսրը հրաման ուղարկեց Պարտավ մայրաքաղաք, որպեսզի տեղի իշխաններն ու ժողովուրդը բյուզանդական զորքին պարեն մատակարարեն[35]: Բյուզանդացիները գրավեցին Պարտավը և ճամբար դրեցին Տրտու գետի ափին գտնվող Դյութական գյուղի մոտ[36]:

Այսպիսով, 623 թ. Հերակլի սկսած արշավանքը առաջխաղացում չունեցավ[37]:

626 թ. Հերակլը ձեռնամուխ է լինում պարսկական երկրորդ արշավանքին: Այդ նպատակով նա գալիս է Լազիկա և խազարների առաջնորդ Ջեբուխաքանի հետ ռազմական դաշինք է կնքում: Խազարները ասպատակում են Աղվանքն ու Վրաստանը և 627 թ. պաշարում են Թիֆլիսը[38]: Դա ոչինչ չտվեց Հերակլին, և նա խազարներից վերցնելով 40 000–անոց հեծելազոր՝ գնաց դեպի Պարսկաստան: Նա իր զորքով շարժվում է դեպի Ատրպատականի ծայրում գտնվող Զարասպ լեռան մյուս կողմը և հասնում է Նինվե[39]: Այստեղ 627 թ. դեկտեմբերի 12-ին երկու երկրների միջև տեղի ունեցավ խոշոր և վճռական ճակատամարտ: Պարսկական բանակը պարտվեց, իսկ նրա հրամանատարը սպանվեց: Այնուհետև Հերակլը հարվածներն ուղղեց պարսից մայրաքաղաքից ոչ հեռու գտնվող պալատների վրա, որոնցից մեկում էլ տոնեց Քրիստոսի ծնունդն ու հայտնությունը[40]:

Սակայն Հերակլը որոշեց չգնալ Տիզբոն, այլ այրելով ու ավերելով իր ճանապարհին հանդիպած ամեն ինչ, շարժվեց դեպի Ատրպատական և

---

[34] **Լեո,** նշվ. աշխ., էջ 246:

[35] **Մովսէս Կաղանկատուացի,** Պատմութիւն Աղուանից աշխարհի, Մատենագիրք Հայոց, հ. ԺԵ, Ժ դար (այսուհետև՝ Մովսես Կաղանկատվացի), Լիբանան, 2010, էջ 178-179:

[36] Նույն տեղում, էջ 179:

[37] **Լեո,** նշվ. աշխ., էջ 247-248:

[38] **Իսկանյան Վ.,** նշվ. աշխ., էջ 437:

[39] **Սեբեոս,** էջ 177: Տե՛ս նաև ՀԺՊ, հ. II, էջ 300-301:

[40] **Լեո,** նշվ. աշխ., էջ 251:

այնտեղ սպասեց Պարսկաստանում տեղի ունեցող դեպքերի հետագա զարգացմանը[41]:

Իսկ Պարսկաստանում պալատական հեղաշրջում էր կազմակերպվել պարսից տիրակալի դեմ: Խոսրով արքան իր փախուստով կորցրել էր հարգանքը արքունի մեծամեծերի մոտ, բացի այդ, նա իր անդրանիկ որդի Կավատին զրկել էր գահը ժառանգելու իրավունքից և հրամայել էր նրան փակել մի ամրոցում: Պալատականները Կավատին ազատ արձակեցին և 628 թ. փետրվարի 25-ին նրան թագավոր հռչակեցին: Կավատը սպանեց իր հորը և եղբայրներին ու հետո բանակցություններ սկսեց Հերակլ կայսեր հետ: Այսպիսով, մահացավ պարսից ամենահզոր արքաներից մեկը, ով իր երկրի սահմանները գրեթե հասցրել էր Աքեմենյանների ժամանակաշրջանի Պարսկաստանի սահմաններին[42]:

Չնայած որ Կավատ Բ-ին վիճակված չէր թագավորել երկար ժամանակ, այնուամենայնիվ, նրա օրոք տեղի ունեցան որոշ կարևոր իրադարձություններ:

Խորհրդակցելով արքունի մեծամեծերի հետ՝ Կավատը իշխան Ռաշնանիի գլխավորությամբ պատվիրակություն ուղարկեց Հերակլի մոտ: Պարսից իշխանը ճոխ ընծաներով ներկայացավ Հերակլին: 628 թ. խաղաղության դաշն կնքեց պարսիկների հետ և հրամայեց ազատ արձակել բոլոր գերիներին և վերադարձնել ողջ ավարը[43]: Կայսրության համար բարեհաջող բանակցություններից հետո Հերակլը վերադարձավ Կոստանդնուպոլիս, որտեղ նրան դիմավորեցին մեծ ցնծությամբ: Հատկապես ուրախ էր հոգևորականությունը, քանի որ կայսրի հրամանով նեստորական կաթողիկոս Իշոյասը «Սուրբ Խաչափայտը» Տիզբոնից Կոստանդնուպոլիս էր տարել:

Այսպիսով, ավարտվեց Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև տեղի ունեցող երկարատև պատերազմը, և երկու երկրների միջև խաղաղություն հաստատվեց:

Կավատ Բ-ն Հայաստանի մարզպան նշանակեց Վարազտիրոց Բագրատունուն՝ Սմբատ Բագրատունու (Վրկանի) որդուն: Դեռևս Խոսրով

---

[41] Նույն տեղում:

[42] **Նեօլդեքե Թ.,** Պատմութիւն Սասանեան տէրութեան, Վաղարշապատ, 1896, էջ 79-80:

[43] **Սեբեոս,** էջ 183:

արքան Վարազտիրոցին նշանակել էր իրեն մատռվակ՝ նրան տալով Ջավիտյան-Խոսրով[44] պատվանունը:

Կավատ Բ-ն Վարազտիրոցին վերապահեց նաև Հայոց կաթողիկոսի ընտրությունը: Երբ նորանշանակ մարզպանը եկավ Հայաստան, Կոմիտաս կաթողիկոսը արդեն վախճանվել էր, և հարկ էր նոր կաթողիկոս ընտրել:

628 թ. մարզպանը գումարեց եկեղեցականների ու իշխանների ժողով, որտեղ Ռշտունյաց իշխան Թեոդորոսի առաջարկով կաթողիկոս ընտրվեց Քրիստափորը: Սակայն վերջինս երկպառակություն մտցրեց Վարազտիրոցի և հայ նախարարների միջև: Անգամ կարողացավ Վարազտիրոցի եղբորը լարել նրա դեմ: Կաթողիկոսի պահվածքը խորշելի էր նախարարների ու հոգևորականների համար, ուստի երկու տարի հետո նրանք հավաքվեցին և քննելով Քրիստափորի արարքները՝ անարգանքով կարգալույծ արեցին նրան[45]: Վարազ տիրոցը կաթողիկոս կարգեց Եզր Փառաժնակերտցուն (630-641):

Կավատ Բ-ն թագավորեց ընդամենը կես տարի: Ենթադրվում է, որ նա թունավորվել է Շիրին թագուհու ձեռքով[46]: Կավատի մահից հետո պարսից գահին նստեց նրա յոթնամյա որդի Արտաշիր Գ-ն: Սակայն Խոսրով Փարվեզի զորավար Շահր-Վարազը ապստամբեց մանուկ թագավորի դեմ և սպանելով նրան՝ 630 թ. խլեց պարսից գահը: Շահր-Վարազն իշխեց մեկ ու կես ամիս և սպանվեց պարսից իշխանների ձեռքերով. սրանք չէին կարող թույլ տալ, որ Սասանյաններից բացի, որևէ մեկը նստի պարսից գահին: Նրա սպանությունից հետո գահը անցավ Խոսրով Փարվեզի դստերը՝ Բորանին (Բուրանդուխտ): Այս թագուհին 630 թ. վերջնական հաշտություն կնքեց Հերակլ կայսեր հետ: Բորանին ևս վիճակված էր շատ կարճ թագավորություն, ինչպես և նրա քրոջը՝ Ազերմիդուխտին, որը 631 թ. բազմեց պարսից գահին: Վերջինս ինչ-ինչ պատճառներով սպանել տվեց Ատրպատականի կուսակալ Խոռոխ-Որմիզդին, որի որդին՝ զորավար Ռոստոմը կարողացավ գահընկեց անել թագուհուն: Այս դեպքից հետո պարսից ավագանին բաժանվում է երկու կուսակցության՝ մեկը Տիզբոնում թագավոր է կարգում Ֆերրոխզադ Խոսրովին, իսկ

[44] Նշանակում է՝ հավիտյան Խոսրով:

[45] **Սեբեոս,** էջ 185:

[46] **Дьяконов М.** Очерк истории древнего Ирана, М., 1961, с. 319.

մյուսը՝ 633 թ. Պերսեպոլիսում թագավոր է հռչակում Հազկերտին, որը Խոսրով Փարվեզի թոռն էր: Շուտով, սակայն, առաջինը սպանվում է, և Հազկերտ Գ-ն է հաստատվում Տիզբոնի գահի վրա: Նրանով էլ ավարտվում է Սասանյան թագավորությունը[47]:

VII դ. առաջին կեսին, մինչ Պարսկաստանն ու Բյուզանդիան զբաղված էին պատերազմներով, Արաբական թերակղզում ձևավորվում է նրանց ընդդիմադիր նոր ուժ: 630-ական թ. առաջացած Արաբական խալիֆայությունը դառնում է ժամանակի հզոր տերություններից մեկը:

Արաբական աճող սպառնալիքի պայմաններում Բյուզանդիայի քրիստոնեական արևելքը (որտեղ մեծամասնություն էին կազմում հակաքաղկեդոնականները) կայսրության հետ սերտորեն կապելու համար անհրաժեշտ էր վերացնել դավանական անջրպետը, որն առաջացել էր Քաղկեդոնական և նրան հակոտնյա եկեղեցիների միջև: Այս իրավիճակում Բյուզանդիայի համար առաջնակարգ նշանակություն էր ձեռք բերում նաև Հայոց եկեղեցու դիրքորոշումը: Կայսրության սահմաններում բնակվող քրիստոնյաներին համախմբելու խնդիրը լուծելու համար Հերակլ կայսրը առաջ քաշեց դավանական այնպիսի բանաձև, որն ընդունելի լիներ թե՛ քաղկեդոնականների և թե՛ հակաքաղկեդոնականների համար[48]: Սիրիայի Սերգիոս պատրիարքը (610-638) տալիս է դավանական մի նոր ձևակերպում, ըստ որի, Քրիստոսի մեջ երկու բնություն կա՝ աստվածային և մարդկային, որոնք միացած են մեկ անձի մեջ, ուստի կամքը մեկ է: Այս նոր դավանանքը կոչվեց «մոնոֆելիզմ» (միակամություն): 634 թ. այն հաստատվեց որպես Բյուզանդիայի պաշտոնական դավանանք[49]:

Այս բանաձևը, առաջնություն վերապահելով երկաբնակությանը, այդ կերպ ընդառաջում էր Հայոց և մյուս եկեղեցիների վարդապետությանը: Հերակլը և Սերգիոս պատրիարքը ամեն կերպ փորձում էին մերձեցնել Հայ և Բյուզանդական եկեղեցիները: Կայսրը հույս ուներ այդ կերպ Հայաստանը ներգրավել իր քաղաքական ծրագրերի մեջ և նրան դարձնել իր դաշնակիցը[50]:

---

[47] **Սեբեոս,** էջ 187: Տե՛ս նաև **Լեո,** նշվ. աշխ., էջ 264-265:
[48] **Վարդանյան Վ.,** նշվ. աշխ., էջ 302:
[49] **Իսկանյան Վ.,** նշվ. աշխ., էջ 443-444:
[50] **Վարդանյան Վ.,** նշվ. աշխ., էջ 303:

Արևմտյան Հայաստանի սպարապետ Մժեժ Գնունու միջոցով, Հերակլը Հայոց կաթողիկոս Եզրին առաջարկում է ներկայանալ իրեն և հաստատել եկեղեցական միությունը: Եզրը բանակցում է հայ նախարարների և Մարզպանական Հայաստանի սպարապետ Թեոդորոս Ռշտունու հետ, և միասնական որոշում է ընդունվում. կաթողիկոսը պետք է ներկայանա բյուզանդական կայսրին, սակայն պետք է պաշտպանի Հայոց եկեղեցու իրավունքը: Եզրը մի քանի նշանավոր եկեղեցականների ուղեկցությամբ դուրս է գալիս Դվինից[51]: Հանդիպման տեղն ու ժամանակը մեզ հայտնի է քաղկեդոնական աղբյուրից. «Խոսրովի մահվան Դ տարին և Հերակլի թագավորության ԻԳ տարին (Հերակլը) գալով Մեծ Հայք, հրամայեց Թեոդոսուպոլսում մեծ ժողով գումարել՝ բոլոր եպիսկոպոսների և վարդապետների, կաթողիկոս Եզրի և բոլոր ազատների մասնակցությամբ՝ քննելու և եզրակացության հանգելու համար Քրիստոսի՝ մեր Աստուծո երկու բնությունների և Քաղկեդոնի ժողովի հարցի շուրջը: Երեսուն օր նրանք քննեցին այդ հարցը, և հայերը համոզվեցին (սուրբ հայրերի) գրքերից և իրենց ձեռքով ստորագրեցին ու երդվեցին այլևս այդ մասին երբեք չհակաճառել»[52]:

Այդ ժողովում նզովվեցին բոլոր հերձվածները, բայց դրանց շարքում չդասվեց միաբնակությունը, որը Քաղկեդոնական եկեղեցին հերձված էր համարում: Այս հանգամանքը նույնպես Եզրին հիմք էր տվել Հերակլին դիտել որպես ուղղափառ և հաղորդվել նրա հետ[53]:

Չնայած որ Կարինի ժողովից հետո հայերը շարունակեցին հավատարիմ մնալ միաբնակությանը, այնուամենայնիվ, Եզրի միաբանելը կայսեր առաջարկին հայ եկեղեցականների կողմից դիտվեց իբրև քաղկեդոնականության ընդունում և խիստ դատապարտվեց: Այս մասին Հովհաննես Դրասխանակերտցին գրում է. «Բայց քո յիրաւի, կոչեցաւ անունդ Եզր, վասն զի յեզր տարեալ հաներ տրոհեցեր զՀայաստանեայսս՝ քակեալ զսահման հաւատոյ Հարցն մերոց ուղղափառաց և խրամատեալ զցանկն առաքելական և ի մարդադաւան տօմարն Լևոնի կործանեալ»[54]:

[51] **Իսկանյան Վ.,** նշվ. աշխ., էջ 445-446:
[52] Narratio de rebus Armeniae, էջ 468:
[53] **Վարդանյան Վ.,** նշվ. աշխ., էջ 306:
[54] **Հովհաննես Դրասխանակերտցի,** էջ 80, 82:

Հայրենիք վերադառնալով՝ Եզրը շարունակեց մնալ իր դավանանքին (հակառակ դեպքում նա չէր մնա Հայոց հայրապետի պաշտոնում) և խրախուսեց քաղկեդոնամերժ քարոզչությունը: Չնայած կայսրության քաղաքական և եկեղեցական գործիչների ճիգերին՝ երկու երկրների եկեղեցիների միության փորձը միակամության ասպարեզում լուրջ հաջողություն չունեցավ և կորցրեց իր քաղաքական նշանակությունը Արաբական խալիֆայության առաջխաղացման հետ զուգահեռ[55]:

634 թ. հետո իրար են հաջորդում արաբների խոշոր հաղթանակները: Արաբները, քաղաքական մեծ հեռատեսություն ցուցաբերելով, իրենց արշավանքների ժամանակ տանելի պայմաններ էին առաջարկում նվաճված երկրների ու քաղաքների ազգաբնակչությանը, ինչը անջատողական տրամադրություններ էր ծնում Բյուզանդական կայսրության և Պարսկաստանի ներսում[56]:

637 թ. նրանք արևելքում գրավեցին Երուսաղեմը, իսկ արևմուտքում՝ պարսից մայրաքաղաք Տիզբոնը: Երուսաղեմը գրավելով՝ արաբ խալիֆ Օմարը տեղի քրիստոնյաներին թույլ տվեց մնալ իրենց կրոնին կամ ցանկության դեպքում իսլամ ընդունել[57]: Երուսաղեմի հայ գաղութի համար Օմարի նվաճումը ազատություն էր հույն կղերի հալածանքներից, քանզի տեղի պատրիարք Սոփրոնիոսը, որ ազդեցիկ քաղկեդոնական էր, անհանդուրժող վերաբերմունք ուներ միաբնակների նկատմամբ: Արաբների նվաճումից հետո բազմաթիվ հայեր, որոնք քաղկեդոնականների պատճառով փախել էին Երուսաղեմից, կրկին վերադարձան սուրբ քաղաք[58]:

637 թ., երբ արաբները գրավեցին նաև պարսից մայրաքաղաքը, Հազկերտ Գ-ն, իր հետ վերցնելով երկրի գանձերի մեծ մասը, շտապեց փախչել դեպի արևելք[59]: Նա օգնություն խնդրեց Չինաստանի կայսրից, սակայն ապարդյուն: Չկարողանալով դաշնակից ուժ գտնել՝ Հազկերտ Գ-ն ստիպված եղավ սեփական ուժերով դուրս գալ արաբների դեմ. 642 թ. Նեհավենդ կոչվող գյուղի մոտ Պարսից զորքը ջախջախվեց, իսկ արքան դիմեց փախուստի: Նա գնաց Քերման, ապա Սիջիստան, հետո Խորա-

[55] **Դանիելյան Է.,** Հայաստանի քաղաքական պատմությունը և Հայ առաքելական եկեղեցին (VI-VII դարեր), Ե., 2000, էջ 153:

[56] **Լեո,** նշվ. աշխ., էջ 280-281:

[57] **Успенский Ф.,** նշվ. աշխ., էջ 534:

[58] **Լեո,** նշվ. աշխ., էջ 282-283:

[59] **Дьяконов М.,** նշվ. աշխ., էջ 320:

սան՝ իր նախկին տերության հյուսիս-արևելյան մասը: Սակայն Մերվ քաղաքի կառավարիչը, չցանկանալով իր հարաբերությունները սրել արաբների հետ, հրաժարվեց ընդունել պարսից արքային և որոշեց սպանել նրան: Իմանալով այդ մասին՝ Հազկերտ Գ-ն գիշերով միայնակ փախավ Մերվից և ճանապարհից հոգնած մտավ մի ջրաղաց՝ հանգստանալու: Ջրաղացպանը, տեսնելով նրա թանկարժեք զգեստն ու զարդերը սպանեց նրան, թալանեց, իսկ դին նետեց գետը: Այսպիսի անփառունակ վախճան ունեցավ Սասանյանների վերջին արքան, և նրա մահով (651 թ.) վերջ դրվեց նաև Սասանյանների դինաստիային, որը կառավարեց Իրանում 425 տարի[60]:

Այսպիսով, Սասանյան Պարսկաստանի անկմանը զուգընթաց, Հայաստանի արևելյան նահանգները անցան արաբների տիրապետության տակ: Հայոց երկիրը կրկին ենթարկվեց ասպատակությունների և նորանոր փորձությունների: Այս պայմաններում անհրաժեշտություն առաջացավ համախմբվելու և կազմակերպված դիմադրություն ցույց տալու Հայոց նոր, հզոր և այլակրոն թշնամուն:

ПЕРСИДСКО-ВИЗАНТИЙСКАЯ ПОЛИТИКА В ОТНОШЕНИИ АРМЯНСКОЙ АПОСТОЛЬСКОЙ ЦЕРКВИ В ПЕРВОЙ ПОЛОВИНЕ VII ВЕКА

ТЕР-ГРИГОРЯН А.А.

Резюме

В период персидско-византийских войн в первой половине VII века обе страны пытались путем религиозных уступок привлечь армян на свою сторону. В этой связи в 615 году по указу персидского царя Хосрова армянская вера становится единственной христианской религией, принятой персидским государством для своего христианского населения. Соответственно, Армянская Апостольская церковь должна была объединить всех христиан, живущих в Персии. Позже, при растущей арабской угрозе, византийский император Ираклий вынужден был выдвинуть общепринятую религиозную формулу, приемлемую как для халкидонитов, так и для

[60] Նույն տեղում, էջ 320-321:

антихалкидонитов, чтобы объединить живущих в империи христиан. Новое вероучение называлось «монофелизм». В 634 году монофелизм был признан в качестве официального вероучения в Византийской империи.

PERSIAN-BYZANTINE POLICY TOWARDS THE ARMENIAN APOSTOLIC CHURCH IN THE FIRST HALF OF THE 7TH CENTURY

A. TER-GRIGORYAN

Abstract

During the Persian-Byzantine wars in the first half of the 7th century, both countries wanted to attract Armenians to their side by religious concessions. That is why in 615 by Khosrov king's decree, the Armenian belief becomes the only Christian religion adopted by the Persian state for its Christian population. Accordingly, the Armenian Apostolic Church had to unite all the Christians living in Persia. Later, under increasing of the Arab threat, Byzantine Emperor Heraclius was forced to propagate a common religious formula acceptable for both the Chalcedonians and the Anti-Chalcedonians in order to unite the Christians living within the empire. That new religion was called "monophilism". In 634 monophilism was established as an official religion in the Byzantine Empire.

ԵՐԵՎԱՆԻ ՊԱՇԱՐՈՒՄՆ ՈՒ ԳՐԱՎՈՒՄԸ ՇԱՀ ԱԲԱՍԻ ԿՈՂՄԻՑ՝ ԸՍՏ ՎԱԽՈՒՇՏԻ ԱՐՔԱՅԱԶՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Դ.Ա.

XVI դ. վերջին տասնամյակից արևելյան երկու հզոր տերությունների՝ Օսմանյան կայսրության և Սեֆյան Իրանի միջև սկսում է փոխվել ուժերի հարաբերակցությունը, ինչը, անկասկած, հանգեցնելու էր վաղեմի ախոյանների հերթական բախմանը: Շահ Աբասի (1587-1629 թթ.) գահակալության տարիները, նրա վարած ներքին ու արտաքին քաղաքականությունը նպաստեցին Սեֆյան Իրանի դիրքերի ամրապնդմանը: Ի հակադրություն դրա, Օսմանյան կայսրությունը գտնվում էր վայրէջքի փուլում: Կայուն չէր նաև կայսրության ներքին իրավիճակը: Այդ մասին Զաքարիա Սարկավագը գրում է. «Քանզի որպէս պատմէ Առաքեալ պատմագիր, թէ՝ ելուզակք՝ որ է Ջալալիք, որոց անուանքն գրեալ է, զի բազմացան նոքա ՚ի Կոստանդնուպօլսէ մինչ ՚ի Երեւան. վասն որոյ զօրացաւ նա եւ ժողովեալ զօրս իւր, և գնացեալ էառ զամենայն երկիրն, զոր առեալ էին օսմանցիքն ի Պարսից»[1]: Գրիգոր Կամախեցին օսմանյան Թուրքիայում տիրող ծանր դրությունը և Շահ-Աբասի արշավանքի համար այնտեղ ստեղծված նպաստավոր պայմանները նկարագրելիս գրում է, որ ջալալիների ապստամբության պատճառով ավերվել էին ամբողջ Անատոլիան, Էրզրումը, Կարսը, Երևանը, և ամբողջ երկրում տիրում էին «սովը, մահը, գազանակերութիւնը»[2]:

Շահ Աբասը, օգտագործելով բարենպաստ պայմանները՝ բանակի վերակազմավորումը, Հարավային Կովկասի ժողովուրդների ու հատկապես հայերի ու վրացիների շահեկան դիրքորոշումը, վճռեց հարմար առիթի դեպքում նոր պատերազմ սկսել՝ Կ. Պոլսի 1590 թ. պայմանագրով կորցրած տարածքները հետ բերելու նպատակով[3]:

---

[1] **Զաքարիա Սարկավագ,** Պատմագրութիւն, հ. I, Վաղարշապատ, 1870, էջ 18-19:

[2] **Գրիգոր Դարանաղցի,** Ժամանակագրութիւն Գրիգորի վարդապետի Կամախեցւոյ կամ Դարանաղցւոյ, Երուսաղէմ, 1915, էջ 298-299:

[3] **Զուլալյան Մ.,** Թուրք-պարսկական պատերազմները Հայաստանում և նրանց հետևանքները (1590-1639 թթ.), էջ 80-81 (ՀՍՍՀ ԳԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 1966, № 2):

Վախուշտին (մոտավորապես 1696-1757 թթ)*, նշում է. «Քարթլիի Գեորգի արքան, որը գահին էր բազմել, հոր՝ Սիմոն արքայի մահից հետո, 1601 թ. գրավեց Լոռին»[4]: Այս հանգամանքը ևս օսմանյան պետության թուլացման լավագույն ապացույցներից է, քանի որ թուրքական կողմը չէր կարողանում պատասխան գործողություններ ձեռնարկել Քարթլիի նման սահմանափակ ուժեր ունեցող ախոյանի դեմ: Առաքել Դավրիժեցին, ներկայացնելով Հայաստանում օսմանյան իշխանությունների անտանելի հարկային քաղաքականությունը և հալածանքները քրիստոնյաների դեմ, գրում է, որ տեղական ժողովուրդների՝ թուրքական իշխանությունների ծանր հարկային ու կրոնական քաղաքականությունից ազատվելու միակ ելքը տարածաշրջանի ժողովուրդների համար Շահ Աբասի սպասվելիք արշավանքն էր, որի մասին գիտեին և որին սպասում էին[5]:

Պատերազմը սկսվեց Շահ Աբասի նախաձեռնությամբ, որի գլխավորությամբ իրանական բանակը 1603 թ. սեպտեմբերի 13-ին գրավեց Թավրիզը[6]: Կողմերի միջև բախում տեղի ունեցավ քաղաքից ոչ հեռու, և թուրքերը կրկին պարտություն կրեցին: Թավրիզի բերդի կայազորը, որը շարունակում էր դիմադրել, այլևս օգնության հույս չունենալով անձնատուր եղավ[7]:

Թավրիզի գրավումից հետո Շահ Աբասը որոշեց շարժվել դեպի Նախիջևան ու Երևան: Առաքել Դավրիժեցու հիշատակության համաձայն, Նախիջևանի թուրք բնակիչներն ու կայազորը, լսելով պարսիկների կողմից Թավրիզի գրավման և դեպի Նախիջևան շարժվելու մասին, մեծ տագնապ են ապրում[8]: Իսկ Թավրիզի գրավման ժամանակ փախուստի դիմած օսմանյան բանակը, որը հասել էր Նախիջևան, շահ Աբասի գալու լուրը

---

* Վախուշտի Արքայազն - վրաց հայտնի պատմաբան ու աշխարհագրագետ, Քարթլիի Վախթանգ VI արքայի արտամուսնական որդին: Նրա աշխատությունը հրատարակվել է Քարթլիի կյանքի IV հատորում. տե՛ս ქართლის ცხოვრება, ტომი 4, ბატონიშვილი ვახუშტი, აღწერა სამეფოსა საქართველოსა, თბილისი, 1973 (այսուհետև՝ ქართლის ცხოვრება, ტომი 4):

[4] Նույն տեղում, էջ 903:

[5] Տե՛ս Պատմութիւն **Առաքելի վարդապետի Դաւրիժեցւոյ**, Վաղարշապատ, 1884, էջ 9-10:

[6] **Զուլալյան Մ.,** Հայ ժողովրդի 15-18-րդ դարերի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների, Ե., 1990, էջ 137:

[7] **Առաքել Դավրիժեցի,** էջ 14:

[8] Նույն տեղում:

ստանալով, շտապ թողնում է Նախիջևանը և փախչում Երևան. «Իսկ այն զօրքն օսմանցւոց փախեան ի Թավրիզու եւ եկին ի Նախչուան, ոչ կարացին մնալ անդէն՝ եւ կալ ընդդէմ, այլ երկիւղիւ մեծաւ ըմբռնեալ ի սիրտ եւ յոգի, հապճեպ տագնապաւ ելին ի Նախչուանայ՝ եւ ժամանեալ անկանէին ի քաղաքն Երեւան»[9]:

Նախիջևանի գրավման մասին խոսելիս Անտոնիո Դե Գուվեան նշում է, որ քաղաքը հեշտությամբ ենթարկվեց թագավորին, որին ողջ բնակչությունը դիմավորեց ցնծությամբ[10]: Առաքել Դավրիժեցին վկայում է, որ Նախիջևանից փախած զինվորները «հարաւային կողմն բերդին Երեւանայ կից ընդ նմա պատեցին պարիսպ եւ շինեցին միւս եւս բերդ, եւ մտին ինքեանք ի ներս պատերազմական զինուք»[11]: Թուրքերը պատրաստվում էին պարսկական զորքին վճռական դիմադրություն ցույց տալ Երևանում: Քաղաքի մատույցներում Շահ Աբասը հայտնվեց 1603 թ. վերջերին[12]: Ամրանալով գլխավոր բերդում՝ օսմանյան կայազորը պատրաստ էր դիմադրության: Թուրքերը ավարտել էին նաև Նախիջևանից Երևան տեղափոխված թուրքական ուժերի համար նախատեսված նոր ամրությունների կառուցումը: Շահ Աբասը հստակ գիտակցում էր, որ նման պաշտպանություն ունեցող քաղաքի գրոհը կարող է հսկայական կորուստների ու անցանկալի հետևանքների հանգեցնել, սկսեց Երևանի պաշարումը:

Շահ Աբասի պալատական պատմիչ Իսքանդար Մոնշին, Առաքել Դավրիժեցին և Վախուշտին նշում են վրացական երկու թագավորների՝ Քարթլիի արքա Գեորգիի, Կախեթի* արքա Ալեքսանդրի՝ Աբասի բանակին միանալու մասին, իսկ դա ենթադրում էր պարսկական գերիշխանության ընդունում: Փաստորեն, մինչև Երևանի գրավումը Շահ Աբասը վերստին վերականգեց գերակայությունը վրացական այս պետական կազմավորումների նկատմամբ:

---

[9] Նույն տեղում:

[10] **Զուլալյան Մ.,** Հայ ժողովրդի 15-18-րդ դարերի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների, Ե., 1990, էջ 138:

[11] **Առաքել Դավրիժեցի,** էջ 22:

[12] **Զուլալյան Մ.,** նշվ. աշխ., էջ 140:

* Քարթլիի թագավորությունը զբաղեցնում էր արևելյան և կենտրոնական Վրաստանը: Կախեթի թագավորությունը պետական կազմավորում էր Վրաստանի արևելքում 1466-1762 թթ.: 1762 թ. այս պետական կազմավորումները միավորվել են:

Այս մասին հիշատակություն ունի նաև Անտոնիո Դե Գուվեան. «Իբերիա երկիրը, որը մենք այսօր Գյուրջիստան ենք անվանում, բաժանված է չորս փոքրիկ թագավորների միջև, որոնցից մեկը և ամենագլխավորը Սիմոն խանն է, որը դեռևս կենդանի է ու գտնվում է Կոստանդնուպոլսում գերության մեջ: Վերջին պատերազմներում պարսիկների կողմն անցնելով թուրքերի դեմ կռվելու համար, իր հոր բացակայության ժամանակ նրա ավագ որդի Գեորգին կառավարում էր պետությունը: Այս իշխանը, որի երկիրն այնքան մոտ է Մեծ Հայքին, տեղեկանալով հարևան թագավորի հաղթանակների մասին հարևան մի երկրում՝ նրա մոտ ուղարկեց դեսպանություններ և մեծ քանակությամբ սննդամթերք, պատրաստակամություն հայտնելով ծառայել նրան այս պատերազմում և կատարել նրա ցանկացած հրամանները: Այս նույն երկրի մի այլ թագավոր՝ Ալեքսանդր խանը, որի որդին երկար տարիներ ի վեր ընդունել էր մահմեդականություն և գտնվում էր թագավորի կողքին, արեց նույնը»[13]: Իսքանդար Մոնշիի հիշատակությունը այս իրադարձության վերաբերյալ սահմանափակվում է միայն փաստի արձանագրումով[14]: Այս իրադարձությունների մասին Վախուշտին նշում է. «Նա իր մոտ կանչեց Գեորգիին ու կախեթցիների արքա Ալեքսանդրին: Նրանք բանակ հավաքեցին ու եկան Շահի մոտ Երևան: Երեք կողմից քաղաքը պաշարեցին Շահի զորքերը, իսկ չորրորդ կողմից՝ նրանք: Մի քանի օրից Շահը հրամայեց գրոհել քաղաքը: Այդ ժամանակ վրացիները պարսիկներից շուտ մտան ու ավերեցին ու գրավեցին քաղաքը: Հետո մտան պարսիկները, ու Շահ Աբասը գրավեց քաղաքը: Դրանից հետո Շահ Աբասը դիմեց Գեորգիին՝ ասելով. «Քանի որ սուլթանը եղել է իմ թշնամին, բայց ավելի շատ՝ քոնը, իսկ հաղթանակը եղել է իմ ուժերով, ուստի դու պետք է ինձ որպես պարգև տաս Լոռին Բերդուջ գետի հետ»: Դա տխրեցրեց Գեորգիին, որը պատասխանեց. «Ես սպասում էի, որ ինձ որպես պարգև այլ քաղաք տաս՝ իմ հոր ծառայության դիմաց, ոչ թե իմ տարածքները խլես»: Քանի որ Շահ Աբասը դաժան էր ու ցանկանում էր, որ Քարթլին թուլանա, բացի այդ, Լոռիի՝ իսլամ ընդունած ու Շահ Աբասի մոտ փախած էրիսթավը խորհուրդ էր տալիս այդ մեծ ուժից զրկել Քարթլին՝ նրան տալով Լոռին ու Բերդուջ գետը…:

[13] **Զուլալյան Մ.,** նշվ. աշխ., էջ 142:

[14] **Iskandar Big Turkiman,** Tarikh-i Alam-arayi Abbasi, Tehran, 1355, p. 648 (պարսկերեն):

Լոռիի փոխարեն Շահը Գեորգիին տվեց Փուշտուկունին, Խվին ու տարեկան երեք հարյուր թուման: Գայթակղվելով դրանով՝ Գեորգին Լոռին հանձնեց շահին»[15]:

Շահ Աբասը հստակ գիտակցում էր, որ վրացական թագավորությունները, հատկապես Քարթլիի թագավորությունը, որն ուներ սեփական, թեև սահմանափակ, սակայն մարտունակ ուժեր, նույնիսկ ընդունելով պարսկական գերիշխանությունը, կարող էր ինքնուրույն քաղաքականություն վարել ու ցանկացած հարմար առիթի դեպքում ձգտելու էր անկախության՝ ընդհուպ մինչև թուրքերի հետ համագործակցության գնով, փորձեց անդամահատել ու թուլացնել այն: Ինչպես փաստում է Վախուշտին, պատըրվակ բերելով, որ մինչև իր արշավանքը Լոռին եղել է թուրքերի իշխանության ներքո, Շահ Աբասը պահանջեց ու ստացավ այն Գեորգի արքայից: Սակայն հստակ գիտակցելով, որ Քարթլին շարունակելու է հավակնություններ ունենալ հայկական բնակչություն ունեցող այս տարածքի նկատմամբ, նա միջոցառումներ ձեռնարկեց այնտեղ ամրապնդվելու և կայուն հենարան ունենալու համար, քանի որ Լոռին կարևորագույն ռազմավարական դիրք ուներ՝ մոտ լինելով Քարթլիի թագավորությանը: Այստեղ մշտական ներկայություն ունենալու և երկրամասը Քարթլիի քաղաքական ազդեցությունից հեռու պահելու նպատակով Շահ Աբասը Լոռիում բնակեցրեց բորչալու ցեղին[16]: Շահ Աբասի այս միջոցառման հետևանքները խոր հետք թողեցին Լոռու էթնոդավանական պատկերի վրա, իսկ դրա հետևանքները երևացին ավելի ուշ շրջանում: Բացի այդ, Վախուշտին հիշատակում է ոմն հավատափոխ հայ մելիքի, որի դրդմամբ Աբասը Գեորգիից պահանջեց ու ստացավ Լոռին ու վերջինիս ղեկավարությամբ այնտեղ ստեղծեց մելիքություն[17]: Սակայն Վախուշտիի այս վկայությունը խիստ կասկածելի է, քանի որ Առաքել Դավրիժեցին նշում է. «Պատանդք կային առ թագաւորսն Պարսից, որ էր եղբայր Աթաբէկ իշխանին Սոմխէթու՝ որում անունն էր Թահմազղուլի»[18]: Այս փաստարկից պարզ է դառնում, որ Լոռիում Վախուշտիի նշած մելիքությունը գոյություն է ունեցել դեռևս մինչև Շահ Աբասի արշավանքը:

---

[15] ქართლის ცხოვრება, ტომი 4, გვ. 419.

[16] Նույն տեղում, էջ 312:

[17] ქართლის ცხოვრება, ტომი 4, გვ. 419-420:

[18] **Առաքել Դավրիժեցի**, էջ 9:

Քարթլիի Գեորգի արքայի ու Շահ Աբասի հարաբերությունների վերաբերյալ հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում Առաքել Դավրիժեցին. նա նշում է, որ Երևանի պաշարման ժամանակ շահին ներկայացած Գեորգին թունավորվել է շահի հրամանով, ուշ ներազդող թույնով: Եվ Գեորգին մահացել է Քարթլի վերադառնալուց հետո[19]: Այս տեղեկությունը հաստատելու կամ ժխտելու համար այլ հիշատակություններ չկան: Վախուշտին ևս, արձանագրելով Գեորգիի մահը, հավելյալ տեղեկություններ չի հաղորդում[20]:

Երևանի բերդը Շահ Աբասը գրավել է 1604 թ. օգոստոսին[21]: Պատմագիտական գրականության մեջ բերդի գրավման հետ կապված կան մի շարք հակասություններ: Որոշ հեղինակներ նշում են, որ բերդը գրավվել է գրոհով, մյուսները գրում են, որ թուրքերը հասկանալով, որ դիմադրությունն անիմաստ է, և երաշխիքներ ստանալով անձամբ շահից՝ բերդը հանձնել են ու հեռացել: Վախուշտին ոչ միայն նշում է, թե բերդը գրավվել է գրոհով, այլև հավելում է, որ այդ գրոհի ժամանակ վրացական զինված ուժերը վճռական դեր են ունեցել: Դրան հակառակ Առաքել Դավրիժեցին նշում է, որը օսմանցիները օգնության հույս չունենալով՝ հանձնել են բերդը, իսկ Շահ Աբասը նրանց թույլ է տվել հեռանալ. «Եւ յորժամ էառ շահն զբերդն, հրաման ետ մունետկաց քարոզել եւ հրատարակել ի մէջ բանակին Պարսից եւ Օսմանցւոց: Հրաման է ի մեծ արքայէն Շահաբասայ, որ ոք սիրէ զայս աշխարհս՝ եւ զշահն, եւ կամեցի կալ ի հայրենիս իւր՝ սիրով կացցէ, եւ ի շահէն պատիւս եւ ընդունելութիւն գտցէ ըստ արժանւոյն. եւ որ ոք գնալ կամիցի յազգ եւ ի ժողովուրդ իւր, խաղաղութեամբ երթիցէ իւրովք ընչիւք եւ ստացուածովք»[22]: Կարծում ենք՝ առավել արժանահավատ է Դավրիժեցու վկայությունը, քանի որ նա այդ իրադարձությունների ժամանակ տասնչորս կամ տասնհինգ տարեկան պետք է եղած լիներ (ծնվել է մոտավորապես 1590 թ.[23]): Բացի այդ, Դավրիժեցու տեղեկությունը հաստատում է նաև Փեչևի-Իբրահիմը, որը նշում է, թե Շահ Աբասը օսմանյան զորքերի՝ տեղում մնալու կամ հեռանալու իրա-

[19] Նույն տեղում, էջ 71:

[20] ქართლის ცხოვრება, ტომი 4, გვ. 419-420:

[21] **Հակոբյան Թ.,** Երևանի պատմությունը (1500-1800), Ե., 1971, էջ 32:

[22] **Առաքել Դավրիժեցի,** էջ 24:

[23] **Առաքելյան Վ.Դ.,** Առաքել Դավրիժեցի (մահվան 300 ամյակի առթիվ) (ՊԲՀ, 1970, № 3, էջ 34):

վունքը տվեց նրանց՝ զինվորներին, իսկ Խդըր փաշայի որդուն՝ Սուլեյման փաշային, բազմաթիվ ընտանիքներով ապահով կերպով ուղարկեց Կարս. «Մնացած զինվորներին ասաց. «Ով ուզում է, թող ինձ կուլ լինի, ով ուզում է, թող գնա օսմանցու մոտ»[24]: Մինչև անգամ Խդըր փաշայի մյուս որդուն՝ Մուհամմեդ փաշային, 300-400 ընտանիքով և երեխաներով Շահի մարդկանց ուղեկցությամբ Կարս ուղարկեց: Իսկ Երևանի բերդը ավերեց, այրեց և հողին հավասարեցրեց»[25]: Սա ամենևին չի նշանակում, որ Վախուշտին սխալ տեղեկություն է հայտնում: Երևանի ամրությունների համակարգում կային երեք բերդեր, որոնցից միայն գլխավորի մասին են խոսում վերոնշյալ պատմիչները: Բացի այդ, Երևան քաղաքը գրավել էին գրոհով, գլխավոր բերդի գրավումից շատ ավելի վաղ, և, ըստ երևույթին, վրացական զինված ուժերը մասնակցել են հենց քաղաքի գրավմանը: Գ. Տեկտանդերը ևս հաղորդում է, որ Երևանը դիմադրել է հինգ շաբաթ միայն, այնուհետև այն գրավել են պարսիկները, որոնք բնակչության զգալի մասին կոտորել են[26]: Այս դեպքում ևս, ինչպես փաստում է Մ. Զուլալյանը, խոսքը քաղաքի և ոչ թե գլխավոր բերդի մասին է[27]:

Այսպիսով, Շահ Աբասի արշավանքը դեպի Երևան և նրա կողմից քաղաքի գրավումը փոխեցին ուժերի հարաբերակցությունը տարածաշրջանում: Վրացական թագավորություններից Քարթլին ու Կախեթը վերստին ընդունեցին Սեֆյանների գերիշխանությունը: Լոռիի նկատմամբ հավակնություններ ունեցող Քարթլիի արքան ստիպված էր հրաժարվել իր նկրտումներից՝ հօգուտ Շահ Աբասի, իսկ Լոռիում բնակեցված թուրքական տարրը հենք էր դառնալու դեպի Վրաստան Շահ Աբասի հետագա արշավանքների համար:

---

[24] Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին: Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հ. Ա, կազմ.՝ Սաֆրաստյան Ա.Խ., Ե., 1961, էջ 55 և 73:

[25] Նույն տեղում, էջ 55:

[26] **Զուլալյան Մ.,** նշվ. աշխ., էջ 139:

[27] Նույն տեղում:

ОСАДА И ВЗЯТИЕ ЕРЕВАНА ШАХОМ АББАСОМ СОГЛАСНО ЦАРЕВИЧУ ВАХУШТИ

КАРАПЕТЯН Д.А.

Резюме

Грузинский историк и географ Вахушти Багратиони в своём труде приводит ценные сведения о турецко-персидских войнах и о последствиях этих войн для армянского и грузинского народов. Осада Еревана и его взятие Шахом Аббасом в 1604 году изменили соотношение сил в регионе. Из грузинских царств Картли и Кахетия отошли к Сефевидам. Царю Картли, претендующему на Лори, пришлось отказаться от своих планов в пользу Шаха Аббаса, а наличие тюркского элемента в Лори послужило основой для будущих набегов шаха Аббаса на Грузию.

THE SIEGE AND CAPTURE OF YEREVAN BY SHAH ABBAS, ACCORDING TO PRINCE WAKHUSHT

D. KARAPETYAN

Abstract

Wakhusht Bagration provides valuable information about the Turkish-Persian wars and the consequences of these wars for the Armenian and Georgian nations. Thus, the blockade of Yerevan by Shah Abbas and the capture of the city in 1604 changed the balance of power in the region. From the Georgian kingdoms Qartli and Kakheti returned under the rule of the Safavids. The king of Qartli, who had ambitions for Lori, had to abandon his goals in favor of Shah Abbas, and the Turkic element in Lori served as the basis for Shah Abbas's future attacks on Georgia.

ԶԼՄ-Ի ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԵՆՍԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆԸ

ԽԱՌԱՏՅԱՆ Լ.Ա.

Ինչպես հայտնի է, ժամանակակից լրատվամիջոցները իրենց գործունեության և հետաքրքրությունների ոլորտում ընդգրկում են հասարակական կյանքի կենսագործունեության (նաև որոշ սահմանափակումներով հանդերձ՝ անհատական կյանքի) գրեթե բոլոր կողմերը: Հայաստանյան իրականության մեջ զանգվածային լրատվության միջոցները (այսուհետև՝ ԶԼՄ) ստանձնել են հասարակության ժողովրդավարական ինստիտուտների կենսագործունեությունը մի հայտնի չափով ապահովողի՝ օրենսդիր, գործադիր և դատական մարմինների միջև փոխադարձ կապն ու առնչությունները կարգավորողի որոշակի դեր, որն առիթ է տալիս եզրակացնելու, որ ժամանակակից լրատվամիջոցներն իրականացնում են «չորրորդ իշխանության» գործառույթները: Վերոհիշյալին նպաստելու խնդրի իրականացումը պայմանավորված է ԶԼՄ-ի կողմից իրենց հատուկ գործառույթների կատարմամբ, որին հասնելու համար լրատվամիջոցները փորձում են հնարավորին չափ առաջնորդվել սեփական փորձով և ազատության վրա հենվող մտածելակերպով (նաև գրելաոճով) և, դրան համապատասխան, ԶԼՄ-ի և լրագրողական գործունեությանն առնչվող խնդիրների իրականացման համար նոր մոտեցումներ մշակելով: Գրեթե բոլոր ժողովրդավարական հասարակարգերում լրատվամիջոցները այսօր դարձել են գործիք, որոնց օգնությամբ քաղաքացիները տեղեկանում են հասարակության քաղաքական կյանքի, իրավական գործընթացների, տնտեսական, մշակութային և սոցիալական խնդիրների, պետական իշխանության մարմինների գործունեության մասին, այդ գործունեության օրինականության և իրավաչափության, հասարակության անդամների վրա թողած քաղաքական գործընթացների հետևանքների և ազդեցության մասին, հատկապես երբ տեղեկությունն առնչվում է պետական իշխանության մարմինների գործո-

ղություններին և որոշումներին: Այսպիսով, պետական իշխանության մարմինների գործողությունների լուսաբանումն ու հրապարակայնությունը, ինչպես նաև պետության կառավարման գործերում բնակչության ներգրավվածությունը ապահովվում են ազատ լրատվամիջոցների գործունեությամբ: Չափազանց մեծ է ԶԼՄ-ի դերը նաև քաղաքացիների իրավական մշակույթի ձևավորման, իրավագիտակցության բարձրացման գործում, որի իրականացման համար պահանջվում է պետության օրենսդրությանը համահունչ՝ իրավական նիհիլիզմի հաղթահարում և ՀՀ քաղաքացիներին պետության օրենքների և օրենսդրության հանդեպ հարգանքի և վստահության ներշնչում:

ՀՀ հանրային կառավարման համակարգում ԶԼՄ-ի առանձնահատկությունն այն է, որ դրանք իրենց գործունեությամբ հնարավորություն են ընձեռում բնակչությանն իրազեկելու, ստանալու և տարածելու ցանկացած բնույթի տեղեկություններ[1]: ԶԼՄ-ում ՀՀ քաղաքական կյանքի, իրադարձությունների և գործընթացների լուսաբանումն ուղղված է բնակչության և հասարակության անդամների շահերի և հետաքրքրությունների, տարբեր սոցիալական խմբերի տեղեկատվական պահանջմունքների և հետաքրքրությունների բավարարմանը: Այս առումով, լրատվամիջոցների գործունեությունը և ընդհանրապես լրատվամիջոցները դիտարկվում են երկու տարբեր տեսանկյունից. մի կողմից՝ ապահովում են «պետություն-ԶԼՄ», «ԶԼՄ-հասարակություն» և «պետություն-հասարակություն» միջև փոխգործողությունն ու հարաբերակցությունը, մյուս կողմից՝ հանդես են գալիս որպես պետական տեղեկատվական քաղաքականությունն իրագործող միջոցներ: 2015 թ. ՀՀ սահմանադրական բարեփոխումների հայեցակարգային դրույթներով սահմանվեց, որ պետական իշխանության և կառավարման մարմինների ձևավորման գործում սահմանադրական երաշխիքների ապահովման նպատակով անհրաժեշտ է ստեղծել «օրենսդրական գործունեության և խորհրդարանի վերահսկողական կառուցակարգերի (վերահսկողական գործառույթների և վերահսկողական առաքելության) արդյունավետ համակարգ»[2]: Սակայն այսօր խորհրդարանի գործունեության հասանելիության և մատչելիության ապահովումը հնարավոր չի լինի առանց

[1] Տե՛ս **Քալանթարյան Է.,** Զանգվածային լրատվամիջոցները ՀՀ պետական կառավարման համակարգում (Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն, 2015, №2 (17), էջ 32):

[2] Տե՛ս Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ, Ե., 2014, էջ 25:

ԶԼՄ-ի մասնակցության: Արդարացի է այն տեսակետը, որ օրենսդիր մարմնի գործունեության հրապարակայնության շնորհիվ ձևավորվում է պառլամենտարիզմը[3]: ԶԼՄ-ն և պառլամենտարիզմը հանդես են գալիս որպես ժողովրդավարական հասարակության ժողովրդաիշխանության հիմնասյուն[4]:

2015 թ. ՀՀ Սահմանադրությամբ զգալիորեն բարձրացվեց օրենսդիր իշխանության դերը, որի իրավասությանը վերապահվեցին մի շարք նոր և տարաբնույթ գործառույթներ.

Ա) օրենսդիր իշխանության՝ խորհրդարանի բազմաթիվ գործառույթների շարքում, ի թիվս այլոց, ներառվեց խորհրդարանական վերահսկողությունը, որն ուղղված է գործադիր մարմինների և դրանց ներկայացուցիչների գործունեության օրինականության պահպանման կարգավորմանը: Պետք է նաև նշել, որ խորհրդարանական վերահսկողության գործառույթը ներառում է նաև պետական մարմինների կողմից իրավախախտումների կանխարգելման և վերացման կառուցակարգեր, իսկ դրանց առկայության դեպքում՝ հարկադրանքի միջոցների կիրառման հնարավորություն[5]: Խորհրդարանական վերահսկողությամբ ապահովվում է ՀՀ Սահմանադրության դրույթների և օրենսդրական նորմերի պաշտպանությունը, մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների պաշտպանության սահմանադրական երաշխիքների, սահմանադրական կարգի և օրինականության պահպանումը: Միևնույն ժամանակ, որպես խորհրդարանական վերահսկողության օբյեկտ, դիտարկվում է ոչ միայն գործադիր իշխանության գործունեությունը, այլև քննվում են պետական կառավարման համակարգի մյուս մարմինների և ինստիտուտների գործողությունները և լիազորությունները՝ պետության գլխի, դատական իշխանության, տեղական ինքնակառավարման մարմինների, պետական և մասնավոր սեկտորի գործունեությունը և այլն: Մեր կարծիքով, խորհրդարանական վերահսկողության օբյեկտ կարող է լինել նաև լրատվամիջոցների գործունեությունը՝ հաշվի առնելով վերջիններիս քաղաքական համակարգի տարր հանդիսանալու և ըստ այդմ՝ քաղաքական գործընթացներում անհրաժեշտ և պարտադիր

---

[3] Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ. Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի ընդհանուր խմբագրությամբ, Ե., 2010, էջ 681:

[4] Տե՛ս **Акаемов П.И.** Тема диссертации и автореферата. Взаимодействие средств массовой информации и законодательной власти в условиях демократических преобразований в России, М., 2009, Введение, с. 3:

[5] Տե՛ս **Коврякова Е.В.** Парламентский контроль: зарубежный опыт и российская практика, М., 2005, с. 11:

մասնակցությունը: Իրենց հերթին, պետական իշխանության մարմինները պարտավոր են առաջնորդվել մատչելիության, թափանցիկության և հրապարակայնության սկզբունքներով և իրենց գործողությունների և որոշումների վերաբերյալ տրամադրել օբյեկտիվ, արժանահավատ և հավաստի տեղեկություններ: Նույն սկզբունքներով ղեկավարվելը պարտադիր է լրատվամիջոցների համար՝ տեղեկատվության հավաքման, մշակման, տարածման և հրապարակման ընթացքում: Պետական մարմինների գործունեության թափանցիկության ու հրապարակայնության վերաբերյալ իրավական դիրքորոշում է արտահայտել Սահմանադրական դատարանը իր որոշումներում: Մասնավորապես, «...Հանրային տեղեկատվության մատչելիությունը ժողովրդավարության և հանրության առջև պատասխանատու պետական կառավարման թափանցիկության էական նախապայմաններից է: Հասարակական կարծիքի միջոցով իրականացվող ժողովրդավարական վերահսկողությունը խթանում է պետական իշխանության գործողությունների թափանցիկությունը և նպաստում պետական մարմինների և պաշտոնատար անձանց հաշվետու գործունեությանը» (ՍԴՈ–1010, 06.03.2012թ.):

Քաղաքական իրադարձությունները լուսաբանելիս բոլոր ՋԼՄ-ների համար շատ կարևոր է այն, թե ինչ տեղեկատվության հետ պետք է առնչվեն, ինչ չափանիշների պետք է համապատասխանի դա, որ լինի որակյալ և ընդգրկի հանրային կարևորություն և հետաքրքրություն: Տարբեր հեղինակներ տեղեկատվության որակյալ չափանիշների հարցում արտահայտում են տարբեր տեսակետներ: Հիմնականում նշվում են տեղեկատվության օբյեկտիվությունը, տեղեկատվական աղբյուրի արժանահավատությունը, տեղեկատվության անկողմնակալությունը և հաշվեկշռությունը, չեզոքությունը, թափանցիկությունը, տեղեկատվության ամբողջականությունը, տեղեկատվության բազմազանությունը և բազմակարծությունը, ազգային մշակույթն ու շահերը, հասարակական հետաքրքրությունը, պետական մարմինների գործունեության լուսաբանումը, լրագրողների արհեստավարժությունը և այլն[6]: Կարծում ենք, քաղաքական իրադարձությունների լուսաբանման համար կարևոր են, մասնավորապես, տեղեկատվության հետևյալ չափանիշները.

1) զանգվածային լրատվության միջոցներով, որպես կանոն, տարածվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար անձանց գործողությունների, այդ մարմինների և պաշտոնա-

[6] Տե՛ս **Киселев А.Г.** Теория и практика массовой иинформации, СПб., 2011, с. 26-29:

տար անձանց կողմից իրավաչափ վարքագիծ դրսևորելու, իրավախախտումների և պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ տեղեկատվություն: Այսինքն՝ բավարար չէ տեղեկատվության միայն առկայությունը, այն պետք է ներկայացնի հասարակական մեծ հետաքրքրություն և կարևորություն[7]: Հասարակական կարևորությամբ և հետաքրքրություն հարուցող տեղեկատվությունը արտահայտվում է ԶԼՄ-ի հրապարակումներում իրադարձությունների և փաստերի արժանահավատ լուսաբանմամբ, հանրային լսարանի շահերի և հետաքրքրությունների առավելագույն հաշվառմամբ[8]: Ընդհանուր առմամբ, հասարակական մեծ հետաքրքրություն և կարևորություն ներկայացնող տեղեկատվությունը ներառում է հետևյալը.

- հանցագործության կամ լուրջ իրավախախտման բացահայտում,
- հասարակական անվտանգության և բնակչության առողջության պաշտպանություն.

2) հասարակությանը մոլորեցնելու նպատակով ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից որևէ գործողության կատարման կամ հայտարարության դեմ ուղղված կանխարգելող միջոցների կիրառում[9]: Այսպիսի տեղեկությունները, սակայն, չեն կարող սպառիչ համարվել՝ հաշվի առնելով այն, որ քաղաքական գործընթացներում նշանակալի դեր և պահանջվող և որակյալ տեղեկատվության հիմնական չափանիշներից է նաև օբյեկտիվությունը: Այսպես, լրատվական նյութեր, հաղորդումներ և տեղեկատվական ծրագրեր պատրաստելու և թողարկելու ընթացքում լրատվամիջոցների աշխատակիցները պետք է կարողանան հստակ տարանջատել անկախ տեղեկատվական աղբյուրներից ստացված տեղեկատվությունը փաստերից և գնահատողական դատողություններից: Օբյեկտիվության չափանիշի համաձայն՝ լրատվական գործակալությունների և լրագրողների մասնագիտական անձնակազմից պահանջվում է զերծ մնալ անձնական կարծիք հայտնելուց և ձգտել փաստերի ու իրադարձությունների արժանահավատ լուսաբանման՝ լսարանի նախասիրությունների հաշվառմամբ:

3) Տեղեկատվական աղբյուրի արժանահավատություն: Ընթացիկ իրադարձությունների մասին նյութերի և հաղորդումների տարածման դեպքում նախապատվությունը տրվում է սկզբնաղբյուրներին, որպիսիք անմիջականորեն առնչվում են տրամադրվող տեղեկատվությանը: Ընթա-

[7] Նույն տեղում:
[8] Նույն տեղում, էջ 28:
[9] Նույն տեղում:

ցիկ իրադարձությունների վերաբերյալ մեկնաբանություններ և վերլուծություններ կատարելիս ՋԼՄ-ների աշխատակիցները պետք է փնտրեն տեղեկատվության իրավասու և հավաստի աղբյուրներ՝ տվյալ ոլորտի մասնագետներից ստացված տեղեկություններ, որոնք անմիջական մասնակցություն են ունեցել այդ իրադարձություններին: Ընդհանուր առմամբ, տեղեկատվությանը ներկայացվող պահանջները բխում են՝

- տեղեկատվական հասարակություն և որակյալ աշխատուժ ունենալու անհրաժեշտությունից,
- քաղաքացիների տեղեկատվություն ստանալու պահանջմունքից, որ նրանք հնարավորություն ունենան մասնակցելու իրենց քաղաքական ղեկավարների ընտրություններին և ժողովրդավարական որոշումների ընդունման գործընթացներին: Սակայն այն դեպքերում, երբ ՋԼՄ-ով տարածված տեղեկատվությունը չի համապատասխանում վերը նշված չափանիշներից որևէ մեկին, պարունակում է սուտ, ակնհայտ անհիմն և զրպարտչական բնույթի տեղեկություններ պաշտոնատար անձի կամ քաղաքական գործչի մասին, ապա այդ լրատվամիջոցը կրում է պատասխանատվություն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ տուժած անձին պատճառված վնասի փոխհատուցման պարտավորության կատարմամբ (ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, 05/05/1998, հոդվ. 1087.1, մաս 1, 2, 3, 4):

Վերոշարադրյալի հիման վրա գալիս ենք այն եզրահանգման, որ ՋԼՄ-ի և պետական մարմինների հետ հարաբերություններում ՋԼՄ-ի գործունեության հիմնական ուղղվածությունը պետք է լինի պետական կառույցների գործունեության նկատմամբ տեղեկատվական հսկողությունը, մասնավորապես՝

ա. հասարակության սոցիալ-քաղաքական ինստիտուտների, քաղաքական կուսակցությունների և կազմակերպությունների, պաշտոնատար անձանց գործողությունների և վարքագծի համակողմանի լուսաբանում,

բ. հասարակական կարևորություն և հետաքրքրություն ներկայացնող հարցերի քննարկման նպատակով լայն ամբիոն տրամադրելու հնարավորություն,

գ. պետական մարմինների (այդ թվում՝ վարչական) կողմից որոշումների ընդունման նկատմամբ ՋԼՄ-ների կողմից որոշակի ազդեցության հնարավորություն:

Բ) Օրենսդիր իշխանության և ՋԼՄ-ների միջև հարաբերակցության արդյունքում ձևավորվում են այնպիսի հարաբերություններ, որոնք հիմն-

ված են տեղեկատվություն ստանալու, տարածելու և հրապարակելու վրա, հետևաբար այդ հարաբերությունները տեղեկատվական բնույթի են: Տեղեկատվական հարաբերությունների իրացմամբ հասարակությունում ձևավորվում է տեղեկատվության նոր տեսակ՝ հանրային տեղեկատվություն:

Հանրային տեղեկատվությունը հասարակական մեծ հետաքրքրություն և կարևորություն ներկայացնող տվյալների ամբողջություն է՝ ուղղված քաղաքացիների և հասարակության նյութական և հոգևոր պահանջմունքների բավարարմանը: Հանրային տեղեկատվությունը ձևավորվում է հանրության և իշխանության փոխադարձ կամքի համաձայնեցման արդյունքով և ներառում է պետության քաղաքականությանը, քաղաքական ծրագրերին և իրավական գործընթացներին վերաբերող տվյալներ: Դրանց շուրջ քննարկումները պետք է հասանելի և մատչելի լինեն քաղաքացիներին և հասարակության տարբեր սոցիալական խմբերին: Եվ քանի որ հասարակության տեղեկատվություն ստանալու պահանջմունքներն արտահայտվում են հասարակական շահով, ապա այդ նպատակով ստեղծվում են հատուկ տեղեկատվական ինստիտուտներ[10]:

Այսպես, օրենսդիր մարմնի գործունեության լուսաբանման հրապարակայնությանը, բացի ԶԼՄ-ից, մասնակցում են խորհրդարանի լրատվական ծառայություններն ու մամուլի քարտուղարները: Վերջիններիս գործողությունները և աշխատաոճը էապես տարբերվում են ԶԼՄ-ի գործողություններից: Այսպես, լրատվական ծառայությունները և մամուլի քարտուղարները հանդես են գալիս բացառապես խորհրդարանի շահերից, իրականացնում են խորհրդարանական գործունեության հետ կապված հրապարակայնության ապահովում և նպատակ ունեն հասարակությունում ձևավորելու բացառապես դրական կարծիք խորհրդարանի, խորհրդարանական մարմինների և խորհրդարանականների գործողությունների վերաբերյալ: Մինչդեռ ԶԼՄ-ի մասնակցությամբ հրապարակայնության ապահովումը ենթադրում է տարաբնույթ տեղեկությունների, խորհրդարանական գործունեության ինչպես դրական, այնպես էլ բացասական տեղեկությունների հանրայնացում:

Գ) Զանգվածային լրատվության միջոցները խորհրդարանական աշխատանքների շրջանակներում ներկայանում են որպես պետության տեղեկատվական քաղաքականությունն իրագործող միջոցներ:

---

[10] Տե'ս http://studbooks.net/1190369/marketing/obschestvenno_znachimaya_informatsiya: 06/05/2017.

Ընդհանուր իմաստով, պետության տեղեկատվական քաղաքականությունը՝ բնակչության տարբեր սոցիալական խմբերի (քաղաքագետների, գիտնականների, լրագրողների, ընթերցողների և այլն) կենսագործունեության հատուկ ոլորտ է, կապված տեղեկատվության վերարտադրության և տարածման հետ՝ ուղղված հասարակության սոցիալական խմբերի և հասարակական ինստիտուտների հետաքրքրությունների և պահանջմունքների բավարարմանը, այդ ինստիտուտների, սոցիալական խմբերի և նրանց ներկայացուցիչների միջև ստեղծագործական և կառուցողական երկխոսության հաստատմանը[11]:

ՋԼՄ-ի դերը պետության տեղեկատվական քաղաքականության գործընթացում հանգում է հետևյալին. «Զանգվածային լրատվության միջոցները այն չափով պետք է բավարարեն և պաշտպանեն պետության և իշխանությունների շահերը, որչափով որ պետությունը և իշխանությունները պարտավորվում են պաշտպանել յուրաքանչյուր անհատի, քաղաքացիների և հասարակության շահերը»: Այս սկզբունքը պետական տեղեկատվական քաղաքականության առանցքային սկզբունքն է: Որպեսզի լրատվամիջոցները կարողանան գործել այս սկզբունքի համաձայն, առավել արդյունավետ կազմակերպել իրենց գործունեությունը, անհրաժեշտ է առաջին հերթին իրավական կարգավորման ենթարկել պետական իշխանության մարմինների և ՋԼՄ-ի հարաբերակցության հիմնախնդիրը, երկրորդ՝ կանխարգելել ապատեղեկատվությունը, այնուհետև՝ պետության տեղեկատվական քաղաքականության հայեցակարգի հիման վրա ընդունել առանձին օրենք: Վերոնշյալ պայմանների առկայությունը ՋԼՄ-ին հնարավորություն կընձեռի ձեռք բերելու որակապես նոր հատկանիշներ և օժտել վերջիններիս քաղաքական սուբյեկտի կարգավիճակով: Ներկայումս լրատվամիջոցների ոլորտում տեղի է ունենում այսպես կոչված ՋԼՄ-ի քաղաքականացում և «քաղաքականության մեդիականացում»: Հարկ է նշել, որ «քաղաքականության մեդիականացում» եզրույթն առաջին անգամ կիրառել է Ի. Զասուրսկին, որը նշում է. «դա այնպիսի գործընթաց է, որում քաղաքական կյանքը ներթափանցում է լրատվամիջոցների խորհրդանշական դաշտ»[12]: Լրատվամիջոցների գործունեության կարևորությունը հանրային քաղաքականության ոլորտում խորապես ըմբռնելու համար «ան-

[11] Նույն տեղում:

[12] Տե՛ս **Засурский И.И**. Реконструкция России. Масс-медиа и политика России в девяностых. http://read.virmk.ru/TEMATIKA/info-polbnika/GIP.htm 11/12/2017.

հրաժեշտ է կենտրոնանալ մեդիա ոլորտում տեղեկատվության հավաքման ներքին տեխնոլոգիաների և տեղեկատվության գիտակցական վերլուծության վրա»[13]:

Վերոշարադրյալը հիմք ընդունելով, գալիս ենք այն եզրահանգման, որ լրատվամիջոցի օրենսդիր իշխանության գործունեության հրապարակայնության ապահովումը պետք է ընթանա բացառապես հասարակական մեծ հետաքրքրություն և կարևորություն ներկայացնող խնդիրների շուրջ: Միևնույն ժամանակ, խորհրդարանական գործունեության լուսաբանման օբյեկտ է քաղաքական տեղեկատվությունը՝ որպես հանրային տեղեկատվության տեսակ: Մասնավորապես՝ քաղաքական է այն տեղեկատվությունը, որը ներառում է հանրային նշանակության այնպիսի տվյալներ, որոնք գրավում են պետական մարմինների ուշադրությունը և մեծ ազդեցություն ունենում դրանց գործունեության նկատմամբ: Հետևաբար՝ ԶԼՄ-ով հրապարակված այդ տեղեկատվությունը ներառում է բացառապես խորհրդարանի, կառավարության, քաղաքական կուսակցությունների և հասարակության մյուս ինստիտուտների գործունեության մասին տեղեկություններ և փաստեր: Իսկ որքանո՞վ է արդյունավետ ԶԼՄ-ի գործունեությունը ՀՀ հանրային կառավարման համակարգում, փորձենք պարզել՝ անդրադառնալով քաղաքական գործընթացներում հայաստանյան ԶԼՄ-ի գործունեության առանձնահատկություններին.

Ա) ԶԼՄ-ն պետք է գործի լրատվամիջոցի արդյունավետ գործունեության սկզբունքի համաձայն՝ հիմնված լինելով օբյեկտիվ, արժանահավատ և անաչառ տեղեկություններ տարածելու վրա: Սակայն այսօր հայաստանյան լրատվամիջոցների համար արդյունավետ գործունեության սկզբունքով գործելու ջանքերը հանդիպում են լուրջ խոչընդոտների: Այդ խոչընդոտների հաղթահարումը պայմանավորված է երկրում առկա մի շարք իրավական, տնտեսական, քաղաքական և սոցիալական չլուծված խնդիրներով: Հետևաբար՝ ԶԼՄ-ի գործունեության արդյունավետությունը որոշվում է պետության կողմից վերջիններիս համար բարենպաստ պայմաններ ստեղծելու անհրաժեշտությամբ:

Բ) Զանգվածային լրատվամիջոցները իշխանության հետ փոխհարաբերություններում իրականացնում են տեղեկատվական քաղաքականության տարածման գործառույթ: Սակայն օրենսդիր իշխանության գործունեությունը լուսաբանելիս հստակ պետք է սահմանազատվեն ԶԼՄ-ի, լրա-

[13] Նույն տեղում:

գրողների և խորհրդարանի գործառույթները: Սովորաբար ԶԼՄ-ի միջոցով օրենսդիր իշխանության գործընթացների լուսաբանումն ընթանում է երկու ուղղությամբ.

1. ԶԼՄ-ի միջոցով օրենսդիր իշխանության գործունեության՝ խորհրդարանի բնականոն աշխատանքի, պատգամավորների և խորհրդարանում այլ գործառույթներ իրականացնող անձանց գործողությունների և վարքագծի մասին դրական տեղեկատվության հրապարակմամբ,

2. ԶԼՄ-ի միջոցով օրենսդիր իշխանության գործունեության մասին բացասական տեղեկատվության հրապարակմամբ, որն ուղղորդվում է իշխանությունների, պետական և քաղաքական գործիչների վարքագծի և գործողությունների քննադատությամբ:

ԶԼՄ-ի ներկայացուցիչները, հատկապես ընդդիմադիր ԶԼՄ-ի լրագրողները, պարտավոր են հանրությանը ներկայացնել օբյեկտիվ և արժանահավատ տեղեկատվություն, որը նշանակում է, որ տեղեկատվության հրապարակումը չի կարող լինել միակողմանի՝ միայն դրվատելով կամ նսեմացնելով իշխանություններին: Իրենց հերթին՝ իշխանությունները պարտավոր են չխոչընդոտել ԶԼՄ-ի և լրագրողների մասնագիտական գործունեությանը, մասնավորապես՝ պետք է զերծ մնան նրանց նկատմամբ ֆիզիկական հաշվեհարդարից կամ որևէ բռնություն գործադրելուց: Սակայն իրականում քիչ չեն դեպքեր, երբ ԶԼՄ-ն և նրանց ներկայացուցիչները աշխատանքի կատարման ընթացքում իշխանությունների կողմից ենթարկվում են անօրինական միջամտության: Այսպես, 2015 թ. հունիսին Երևանի կենտրոնում խաղաղ ցույցը ցրելու նպատակով ՀՀ իրավապահ մարմինները արձանագրել են լրագրողներին ծեծելու և բերման ենթարկելու դեպքեր, որից մեկ տարի անց տվյալ գործին մասնակից դարձած չորս լրագրողների աշխատանքը խոչընդոտելու փաստով մեղադրանք ներկայացվեց չորս ոստիկանների: Լրատվական կազմակերպությունների գնահատմամբ՝ ՀՔԾ-ի (որը զբաղվում էր այդ գործի քննությամբ) նման որոշումը համարժեք չէր կարող լինել լրագրողների նկատմամբ կիրառվող բռնություններին, քանի որ ոստիկանության աշխատակիցների գործողությունների հետևանքով տուժել էին երկու տասնյակից ավելի լրագրողներ, իսկ տեղի ունեցածը կատարվել էր բարձրաստիճան ոստիկանների հրամանով[14]:

[14] Տե՛ս http://khosq.am/ Մարդու իրավունքների զեկույց, 2016 թ. Ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի բյուրո, էջ 22:

Գ) ԶԼՄ-ի և իշխանությունների հարաբերություններում հաճախ հանդիպող խնդիրներից են թաքնված գրաքննության կամ ինքնագրաքննության դրսևորումները: Ինչպես նշված է «Մարդու իրավունքների 2016 թ. զեկույցի» ամփոփիչ ակնարկում՝ լրատվամիջոցները, մասնավորապես հեռարձակող լրատվամիջոցները խուսափում են, անգամ վախենում իշխանություններին քննադատող տեղեկություններ հրապարակելուց: Այդ հրապարակումների հետևանք կարող են լինել իշխանությունների պատասխան քայլերը՝ հաշվեհարդարի միջոցով: Հաշվեհարդարի դրսևորումներ կարող են լինել դատական հայցերը, հեռարձակման լիցենզիա կորցնելու սպառնալիքը, կամայական հարկային ստուգումները և այլն[15]: Այս ամենը հանգեցնում է ԶԼՄ-ում ինքնագրաքննության: Այդուհանդերձ, պետք է նշել, որ թեև ՀՀ-ում ԶԼՄ-ի արդյունավետ գործունեության համար գոյություն ունեն համապատասխան իրավական և քաղաքական հիմքեր՝ ժողովրդավարական սկզբունքների տեղայնացում, ժողովրդավարական կառավարման համակարգի առկայություն, լրատվական դաշտը կարգավորող օրենսդրական և իրավական ակտեր, սակայն դեռևս կան լուրջ խնդիրներ լրատվամիջոցի ինքնակառավարման և ինքնակարգավորման ուղղությամբ:

Այսպիսով, հանրային տեղեկատվական քաղաքականության գործընթացներում զանգվածային լրատվության միջոցները ներգրավված են որպես հատուկ քաղաքական սուբյեկտներ, որոնց մասնակցությամբ ապահովվում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների գործունեության հրապարակայնությունը: Խորհրդարանի գործունեության բազմակողմանի լուսաբանումը լայն հասարակայնությանը հնարավորություն է ընձեռում մասնակցելու պետական իշխանական կառույցների ձևավորմանը և որոշումների կայացմանը: Թերևս այս է պատճառը, որ բազմաթիվ իրավաբաններ և վերլուծաբաններ պետական իշխանության ներկայացուցչական մարմինների ընտրությունների արդյունքները վերագրում են բացառապես ԶԼՄ-ի և առաջին հերթին՝ հեռուստատեսության ազդեցությանը՝ որպես տեղեկատվության հավաստի և արդյունավետ աղբյուրի:

[15] Նույն տեղում:

УЧАСТИЕ СМИ В ОБЕСПЕЧЕНИИ ПУБЛИЧНОСТИ ДЕЯТЕЛЬНОСТИ ОРГАНОВ ЗАКОНОДАТЕЛЬНОЙ ВЛАСТИ

ХАРАТЯН Л.А.

Резюме

В Армении в условиях перехода от полупрезидентской формы правления к парламентской особую значимость приобретает прозрачность и открытость деятельности законодательного органа. В обеспечении открытости работы парламента, а также устранении противоречий в отношениях парламента и гражданского общества особую роль играют независимые СМИ, которые путем взаимодействия с представительными органами выступают в качестве посредников в проведении политики властей, тем самым исполняя функции общественного контроля. Взаимодействие СМИ и парламента на современном этапе и информированность гражданского общества о работе парламента являются основой демократического государства.

PARTICIPATION OF THE MASS MEDIA IN ENSURING THE TRANSPARENCY OF THE ACTIVITIES OF THE LEGISLATIVE AUTHORITY

L. KHARATYAN

Abstract

In conditions of transition from semi-presidential form of government to parliamentary one, transparency and openness of the activity of the legislative body acquire special significance. In order to ensure the openness of the work of the parliament, as well as to eliminate contradictions in relations between the parliament and civil society, a special role is assigned to independent media, that, through interaction with representative bodies, acts as intermediary in carrying out the policy of the authorities, thereby fulfilling the functions of public control. The interaction of the media and parliament, as well as the reporting of reliable information about the work of the parliament to civil society, is the foundation and the key support of a democratic state.

ԱԶԱՏԱԶՐԿՎԱԾՆԵՐԻ ԸՆՏՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

ԳԻՆՈՍՅԱՆ Ս.Ա.

Ընտրական իրավունքը քաղաքացու հիմնարար իրավունքներից մեկն է, որով նա մասնակցում է պետության կառավարմանը՝ անմիջականորեն կամ ընտրված ներկայացուցիչների միջոցով: Սակայն պետք է հասկանալ՝ արդյո՞ք բոլոր քաղաքացիները հավասար հիմունքներով են օգտվում ընտրելու իրավունքից թե՞ ոչ: Արդ, փորձենք պարզաբանել, թե ազատազրկվածների ընտրելու իրավունքի ինքնաբերաբար սահմանափակումը կարո՞ղ է համապատասխանել ժողովրդավարության սկզբունքներին, թե՞ այդ սահմանափակումը կհակասի մարդու հիմնարար իրավունքներն ու ազատություններն ամրագրող իրավական տեքստերի նորմերին:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի[1] 21-րդ և **Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիային**[2] (այսուհետև՝ Կոնվենցիա) կից առաջին արձանագրության՝ «*Ազատ ընտրությունների իրավունք*» վերնագրված 3-րդ հոդվածներն ամրագրում են, որ ժողովուրդը իրավասու է ընտրել երկրի իշխանություններին: Ուստի, յուրաքանչյուր ոք կարող է մասնակցել իր երկրի կառավարմանը ողջամիտ պարբերականությամբ, գաղտնի քվեարկությամբ կազմակերպված ազատ ընտրությունների միջոցով՝ իրացնելով սեփական ընտրական իրավունքը, որը բաղկացած է **ակտիվ ընտրական և պասիվ ընտրական իրավունքներից**[3]: Ակտիվ ընտրական կամ ընտրելու

---

[1] Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր՝ ընդունված 1948 թ. դեկտեմբերի 10-ին, հոդվ. 21, http://www.un.org/fr/universal-declaration-human-rights/index.html:

[2] Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա. ընդունվել է 1950 թ. նոյեմբերի 4-ին, ուժի մեջ է մտել 1953 թ. սեպտեմբերի 3-ին, Առաջին արձանագրություն, հոդվ. 3. Ազատ ընտրությունների իրավունք՝ http://www.echr.coe.int/Documents/Convention_FRA.pdf:

[3] Droit à des élections libres, Unité de presse, fiche thématique, mai 2013, http://www.echr.coe.int/Documents/FS_Free_elections_FRA.pdf: **Վ. Այվազյան** և ուրիշներ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրական իրավունք, Ե, 2012, էջ 278:

իրավունքը քաղաքացուն հնարավորություն է տալիս մասնակցել երկրի ներկայացուցչական մարմինների ընտրությանը և կատարել համապատասխան (համապետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների) ընտրություններին առաջադրված որևէ թեկնածուի ընտրություն: Պասիվ ընտրական կամ ընտրվելու իրավունքը իրականացնելիս քաղաքացին ընտրություններին մասնակցում է թեկնածուի կարգավիճակով, այսինքն՝ սա քաղաքացու անմիջական հնարավորությունն է զբաղեցնելու պետական պաշտոններ: Եվրոպայի խորհրդի անդամ-պետությունները անձի այս հիմնարար իրավունքի իրականացման վերաբերյալ ունեն տարբեր մոտեցումներ: Հիմնականում քննարկման առարկա է այն հարցը, թե *արդյո՞ք անձի ընտրելու իրավունքը բացարձակ իրավունք է թե՞ ոչ:* Չնայած ընտրելու իրավունքը ժողովրդավարական հասարակության հիմնական սկզբունքներից է, այն ունի որոշակի սահմանափակումներ: Այսօր պետությունները հիմնականում նախատեսում են տարիքային, քաղաքացիության, անձի գործունակության հետ կապված ընտրելու իրավունքի սահմանափակումներ: Պետությունները հաճախ, սահմանափակ կերպով մեկնաբանելով այս հիմնարար իրավունքը, ազատազրկվածներին նույնպես զրկում են իրենց ակտիվ ընտրական իրավունքը իրականացնելու հնարավորությունից: Հայաստանի Հանրապետությունը մինչև 2015 թ. դեկտեմբերի 6-ի Սահմանադրական փոփոխությունների հանրաքվեն նույնպես դասվում էր այդ պետությունների շարքին: Մասնավորապես, 2005 թ. նոյեմբերի 27-ի փոփոխություններով ՀՀ Սահմանադրությունը (այսուհետև՝ 2005թ. փոփոխություններով Սահմանադրություն) և 2011 թ. մայիսի 26-ին ընդունված ՀՀ ընտրական օրենսգիրքը ամրագրում էին. «*Ընտրել և ընտրվել չեն կարող դատարանի վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև օրինական ուժի մեջ մտած դատավճռով ազատազրկման դատապարտված և պատիժը կրող քաղաքացիները*»[4]: Ինչպես 2005 թ. փոփոխություններով Սահմանադրությունը, այնպես էլ Ռուսաստանի Դաշնության Սահմանադրությունը սահմանափակում են ազատազրկվածների ընտրելու իրա-

[4] Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (ՀՀՊՏ 12.05.2005/Հատուկ թողարկում, հոդվ. 1426), հոդվ. 30, պարբ. 3: Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք (ՀՕ-164-Ն, ՀՀՊՏ 2011.06.16/36(839), հոդվ. 852, որը ուժը կորցրած է ճանաչվել 01.06.2016 թ.), հոդվ. 2, 3-րդ մաս, www.arlis.am:

վունքը[5]: Միացյալ Թագավորության 1983 թ. Ժողովրդի ներկայացուցչության ակտի (Representation of the People Act 1983) 3-րդ հոդվածն ամրագրում է. «*Քրեակատարողական հիմնարկում իր պատիժը կրող ազատազրկված կամ ապօրինի ազատության մեջ գտնվող անձը, որն այլապես կլիներ դատապարտված և ազատազրկված, չի կարող մասնակցել կառավարության, Պառլամենտի և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին*»[6]:

Վերոնշյալ իրավական ակտերը վերլուծելիս պարզ է դառնում, որ այս երկրներում, նման կարգավորման դեպքում, ազատազրկվածները առհասարակ ընտրելու իրավունքից չեն կարող օգտվել, և հետաքրքիրն այն է, որ այսպիսի ակտիվ ընտրական իրավունքի սահմանափակումը ոչնչով պատճառաբանված և արդարացված չէ: Հետևաբար, հարց է առաջանում, թե արդյո՞ք ազատազրկվածների ընտրելու իրավունքի չպատճառաբանված սահմանափակումը համապատասխանում է Կոնվենցիային կից առաջին արձանագրության 3-րդ հոդվածին:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետև՝ Դատարան) իր մի շարք որոշումներում արձանագրում է, որ պետությունները միանշանակ կարող են սահմանափակել ազատազրկվածների ակտիվ ընտրական իրավունքը, սակայն ցանկացած տիպի սահմանափակում պետք է լինի արդարացված: Երկրի իշխանությունները, այս հիմնարար իրավունքը սահմանափակելիս, պիտի հաշվի առնեն կատարված հանցանքի ծանրությունը, բնույթը, սահմանված պատժի տևողությունը, ազատազրկվածի անձը բնութագրող հատկանիշները, որպեսզի սահմանափակումը չլինի ինքնաբերաբար և չտարբերակված: Դատարանը ***Հըրսթն ընդդեմ Միացյալ Թագավորության 2005 թվականի հոկտեմբերի 6-ի*** գործով արձանագրում է. «*Կոնվենցիայով երաշխավորված այս իրավունքի ընդհանուր, ինքնաբերաբար և չտարբերակված սահմանափակումը, որն անցնում է պետության հայեցողության սահմանները, պետք է համարել սույն Կոնվենցիայի առաջին արձանագրության 3-րդ հոդվածի խախ-*

[5] Конституция Российской Федерации, ст. 32, параграф 3, http://www.constitution.ru/fr/part2.htm.

[6] Representation of the People Act 1983, Article 3: Disfranchisement of offenders in prison etc., Paragraph 1, http://www.legislation.gov.uk/ukpga/1983/2#commentary-c14478171.

տում»[7]: Այդ նույն որոշման մեջ դատարանը նշում է նաև. *«…ազատազրկվածները շարունակում են օգտվել իրենց՝ Կոնվենցիայով երաշխավորված հիմնարար իրավունքներից և ազատություններից, բացառությամբ ազատության իրավունքի…»* [8]: Այսինքն, միայն ազատազրկման փաստը բավարար չէ անձին իր ակտիվ ընտրական իրավունքից զրկելու համար, քանի որ այդպիսի սահմանափակումը պետք է լինի հիմնավորված՝ ցանկացած տիպի կամայականություն բացառելու համար: Ազատազրկվածների ընտրելու իրավունքի անհիմն սահմանափակման մասին Դատարանը նշում է իր մեկ այլ՝ ***Գրինսը և Մ.Թ.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության 2010 թվականի նոյեմբերի 23-ի*** գործում[9]: Նախ, դատարանը արձանագրում է Կոնվենցիային կից արձանագրության 3-րդ հոդվածի խախտում, այնուհետև, տեսնելով, որ Միացյալ Թագավորության իշխանությունները որոշակի դժվարություններ ունեն իր վճիռները կատարելու հարցում, որոշում է այս գործին տալ, այսպես կոչված, **«Ուղեցույց որոշման» (Pilot judgement)** կարգավիճակ[10]: «Ուղեցույց որոշում» ասելով՝ պետք է հասկանանք այնպիսի վճիռ, որում Դատարանը ոչ միայն որոշում է թե տվյալ գործով առկա՞ է արդյոք Կոնվենցիայի այս կամ այն հոդվածի խախտում, այլև մատնանշում է համակարգային և կրկնվող խնդրի առկայությունը Կոնվենցիայի անդամ տվյալ պետությունում ինչպես նաև անդամ-պետության կառավարությանը տալիս է հստակ ցուցումներ՝ հնարավոր խնդիրների լուծման կապակցությամբ[11]: Վերոնշյալ գործով Դատարանը, փաստորեն, փորձել է գտնել Միացյալ Թագավորության օրենսդրական այն համակարգային խնդիրները, որոնք խոչընդոտ էին ազատազրկված-

[7]AFFAIRE HIRST c. ROYAUME-UNI (No 2), Requête no 74025/01 (6 octobre 2005), §82 http://hudoc.echr.coe.int/eng#{"respondent":["GBR"],"kpthesaurus":["574","39","112","163","306","447","476","499"],"documentcollectionid2":["GRANDCHAMBER","CHAMBER"],"itemid":["001-70443"]}.

[8] Նույն տեղում, §69-71:

[9] AFFAIRE GREENS et M.T. c. ROYAUME-UNI, Requêtes nos 60041/08 et 60054/08 (23 novembre 2010), http://hudoc.echr.coe.int/eng#{"respondent":["GBR"],"kpthesaurus":["574","39","112","163","306","447","476","499"],"documentcollectionid2":["GRANDCHAMBER","CHAMBER"],"itemid":["001-101857"]}.

[10] Նույն տեղում,§104-109:

[11] PilotJudgments:Whatispilotjudgementprocedure?,http://www.echr.coe.int/Documents/FS_Pilot_judgments_ENG.pdf.

ների՝ իրենց ընտրելու իրավունքից օգտվելու համար, և առաջարկել է ի հայտ եկած խնդիրների լուծման եղանակներ:

Իր այլ՝ ***Ֆըրֆը և ուրիշներն ընդդեմ Միացյալ Թագավորության 2014 թվականի օգոստոսի 12-ի***[12] ու ***Մքիյուֆը և ուրիշները ընդդեմ Միացյալ Թագավորության 2015 թվականի փետրվարի 10-ի***[13] գործերով, Դատարանը կրկին արձանագրում է Կոնվենցիայի արձանագրության 3-րդ հոդվածի խախտում՝ նշելով, որ, չնայած Միացյալ Թագավորությունը փորձում է ամեն կերպ լուծել այս օրենսդրական բացը՝ ներկայացնելով ազատազրկվածների ընտրելու իրավունքի իրականացմանն ուղղված օրենքի նախագիծ, սակայն ներկայիս օրենսդրությունը, մնալով անփոփոխ, թույլ չի տալիս ազատազրկվածներին օգտվել իրենց ակտիվ ընտրական իրավունքից: Դատարանը, ցանկանալով իմանալ, թե ինչպես են Կոնվենցիայի անդամ-պետությունները իրենց ներպետական ակտերում կարգավորում ազատազրկվածների ընտրելու իրավունքը, արդյո՞ք սահմանափակում են այն թե՛ ոչ, իր՝ ***Սկոպոլան ընդդեմ Իտալիայի 2012 թվականի մայիսի 22-ի***[14] գործով կատարել է Եվրոպայի խորհրդի անդամ-պետությունների օրենսդրությունների համեմատական խորը վերլուծություն: Այս վերլուծության շնորհիվ Դատարանը եզրահանգել է, որ Կոնվենցիայի անդամ 19 պետության ազգային օրենսդրություն ընդհանրապես որևէ ձևով չի սահմանափակում ազատազրկվածների ընտրելու իրավունքը (Կիպրոս, Իռլանդիա, Չեխիայի Հանրապետություն, Իսպանիա, Շվեդիա, Շվեյցարիա, Ուկրաինա և այլն), 7 պետություն նախատեսում է այդ իրավունքի ինքնաբերաբար, առանց որևէ հիմնավորվածության սահմանափակում (Հայաստանի Հանրապետություն, Բուլղարիա, Էստոնիա, Վրաստան, Հունգարիա, Միացյալ Թագավորություն, Ռուսաստանի Դաշնութ-

[12]CASE OF FIRTH AND OTHERS v. THE UNITED KINGDOM, Applications nos. 47784/09, 47806/09, 47812/09, 47818/09, 47829/09, 49001/09, 49007/09, 49018/09, 49033/09 and 49036/09 (12 August 2014), http://hudoc.echr.coe.int/eng#{"respondent":["GBR"],"kpthesaurus":["574","39","112","163","306","447","476","499"],"documentcollectionid2":["GRANDCHAMBER","CHAMBER"],"itemid":["001-146101"]}.

[13]CASE OF McHugh AND OTHERS v. THE UNITED KINGDOM, Application no. 51987/08 and 1,014 others (10 February 2015), http://hudoc.echr.coe.int/eng#{"itemid": ["001-151005"]}.

[14]AFFAIRE SCOPPOLA c. ITALIE (No 3), Requête no 126/05 (22mai 2012), http://hudoc.echr.coe.int/eng#{"dmdocnumber":["908351"],"itemid":["001-111043"]}.

յուն): Մնացած պետությունների մասով դատարանն արձանագրել է, որ 16 պետություններ (Գերմանիա, Ավստրիա, Բելգիա, Բոսնիա և Հերցեգովինա, Ֆրանսիա, Հունաստան, Լյուքսեմբուրգ, Մալթա, Մոնակո, Նիդեռլանդներ, Լեհաստան, Պորտուգալիա, Ռումինիա, Սան-Մարինո, Սլովակիա և Թուրքիա) կազմում են մի միջանկյալ խումբ, որտեղ ազատազրկվածի ընտրելու իրավունքի սահմանափակումը կախված է կատարված իրավախախտման տեսակից և ծանրությունից: Իտալիայի օրենսդրությունը ավելի մոտ է գտնվում վերոնշյալ կատեգորիայի պետությունների օրենսդրական համակարգերին: Վերջին խումբ պետություններից մի քանիսը (Գերմանիա, Ավստրիա, Բելգիա, Ֆրանսիա, Հունաստան, Լյուքսեմբուրգ, Նիդեռլանդներ, Լեհաստան, Պորտուգալիա, Ռումինիա և Սան-Մարինո) ազատազրկվածների ակտիվ ընտրական իրավունքի սահմանափակման հարցը թողնում են քրեական գործերով դատավորի հայեցողությանը: Հունաստանում և Լյուքսեմբուրգում ազատազրկվածները չեն կարող օգտվել իրենց ընտրելու իրավունքից, եթե կատարել են առանձնապես ծանր հանցագործություններ[15]: ՀՀ-ում իրավիճակը էապես փոխվել է 2015 թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեից հետո, երբ ՀՀ Սահմանադրությունում կատարվեցին մի շարք փոփոխություններ, այդ թվում՝ ընտրական իրավունքի վերաբերյալ: Նոր խմբագրությամբ Սահմանադրության *«Ընտրական իրավունքը և հանրաքվեին մասնակցելու իրավունքը»* վերնագրով 48-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ընտրելու և ընտրվելու, ինչպես նաև հանրաքվեին մասնակցելու իրավունք չունեն դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև դիտավորությամբ կատարված ծանր հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք: Ընտրվելու իրավունք չունեն նաև այլ հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք[16]: Նույն սկզբունքով, Հայաստանի Հանրապետության նոր՝ 2016 թ. մայիսի 25-ին ընդունված ընտրական օրենսգրքի 2-րդ հոդվածի 3-րդ մասն ամրագրում է, որ ընտրելու իրավունք չունեն դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև դիտավորությամբ կա-

[15] Նույն տեղում, § 45-48:

[16] ՀՀ Սահմանադրություն (ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում, հոդվ. 1118), հոդվ. 48, մաս 4-րդ:

տարված ծանր և առանձնապես ծանր հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք[17]:

Ինչպես տեսնում ենք, ՀՀ Սահմանադրության և ընտրական օրենսգրքի համապատասխան հոդվածներն արտացոլում են Դատարանի որոշումներում արված մեկնաբանությունները և ցուցումները: Սահմանադրությունը, այդուհետև, առանձնացնում է **ընտրելու իրավունք չունեցողներին** և **ընտրվելու իրավունք չունեցողներին**: Այժմ, ընտրվելու իրավունք չունեն ցանկացած հանցանքի համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք, իսկ արդեն ընտրելու իրավունք չունեն միայն այն անձինք, որոնք կատարել են ծանր հանցանքներ, այսինքն՝ ծանր և առանձնապես ծանր հանցագործություններ: Բացի այդ, կատարված հանցանքներում մեղքի ձևը նույնպես կարևորվում է, քանի որ անձի ընտրելու իրավունքի սահմանափակում հնարավոր է միայն այն դեպքում, երբ վերջինս հանցանքը կատարել է ուղղակի կամ անուղղակի դիտավորությամբ: Վերոգրյալը թույլ է տալիս ասել, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունում, այդ թվում և մայր օրենքում՝ Սահմանադրությունում, ազատությունից զրկված և պատիժը կրող անձի ակտիվ ընտրական իրավունքի սահմանափակումը հիմնավոր է, ինքնաբերաբար չէ և տարբերակված է:

Այսպես, ծանոթանալով Կոնվենցիայի անդամ-երկրների տարբեր օրենսդրական մոտեցումներին, ինչպես նաև վերլուծելով Դատարանի համապատասխան որոշումները՝ կարող ենք նշել, որ ակտիվ ընտրական իրավունքը բացարձակ չէ և նույնը չէ բոլոր քաղաքացիների համար: Մասնավորապես, ազատազրկվածները որոշ երկրներում ընդհանրապես չեն կարող օգտվել այդ իրավունքից: Իհարկե, Դատարանը պետությունների լայն հայեցողությանն է թողնում ազատազրկվածների ընտրելու իրավունքի սահմանափակումը, սակայն դրա հետ մեկտեղ մի բան միանշանակ է. ոչ մի անդամ-պետություն իրավասու չէ առանց որևէ հիմնավորման, ինքնաբերաբար, չտարբերակված ձևով սահմանափակել ազատությունից զրկված անձի ակտիվ ընտրական իրավունքը:

[17]ՀՀ ընտրական օրենսգիրք (ՀՕ-54-Ն,ՀՀՊՏ 2016.05.30/42(1222)), հոդվ. 2, մաս 3-րդ:

ВОПРОСЫ ИЗБИРАТЕЛЬНОГО ПРАВА ЗАКЛЮЧЕННЫХ В РА И ЕВРОПЕЙСКИХ СТРАНАХ

ГИНОСЯН С.А.

Резюме

Изучение различных законодательных подходов стран Европейской конвенции о защите прав человека и основных свобод, а также соответствующих решений Европейского суда по правам человека приводит к заключению, что в некоторых странах активное избирательное право не является абсолютным и одинаковым для граждан, лишенных свободы. Разумеется, Европейский суд по правам человека оставляет на усмотрение государства ограничение прав заключенных. Однако ни одно государство, являющееся членом Европейской конвенции, без какого-либо обоснования не имеет права лишить заключенного его избирательного права.

RESTRICTIONS OF THE RIGHT TO VOTE OF PRISONERS IN RA AND EUROPEAN COUNTRIES

S. GINOSYAN

Abstract

The suffrage is one of the basic rights of the citizen, giving him the opportunity to participate in governing of a state directly or through elected representatives. Having familiarized with various legislative approaches of the member states of the European Convention on Human Rights and Fundamental Freedoms, as well as analyzing the relevant decisions of the European Court of Human Rights, it can be noted that in some countries, active suffrage is not an absolute right and is not the same for citizens deprived of their liberty. Of course, the European Court of Human Rights leaves the questions concerning the restrictions of the rights of prisoners to a largemargin of appreciationof a state (margin of state discretion). However, no member state of the European Convention, without any justification, has the right to deprive the prisoner of his/her suffrage.

ИНКЛЮЗИВНОЕ ОБРАЗОВАНИЕ И СОЗДАНИЕ ДОСТУПНОЙ ОБРАЗОВАТЕЛЬНОЙ СРЕДЫ

МЕЛКУМЯН Ю.Г.

Положение о том, что “получение качественного образования – это право каждого ребенка”[1], не вызывает споров. Оно основано на концепции прав человека, уважении достоинства ребенка и необходимости обеспечения оптимального развития.

Несомненно, реализация этих положений требует изменений, реформирования системы образования таким образом, чтобы оно соответствовало потребностям и особенностям всех учащихся. Речь идет о подходах и содержании образования, о структурах и методах, применяемых в работе с детьми.

Доступность качественного образования для всех находится в центре внимания международного сообщества начиная с 1990-х гг., когда были приняты 2 основополагающих документа: Конвенция о правах ребенка[2] и Всемирная декларация об образовании для всех[3]. Спустя 4 года в Испании (г. Саламанка) была принята декларация, провозглашающая основные принципы инклюзивного образования. Развитие концепции инклюзивного образования и соответствующих

[1] **Фаркас Э.** Концептуализация инклюзивного образования и его контекстуализация в рамках Миссии ЮНИСЕФ, Детский фонд ООН, 2014.

[2] Convention on the Rights of the Child. Adopted and opened for signature, ratification and accession by General Assembly resolution 44/25 of 20 November 1989 entry into force 2 September 1990, in accordance with article 49 (http://www.ohchr.org/en/professionalinterest/pages/crc.aspx).

[3] Всемирная декларация об образовании для всех и рамки действий для удовлетворения базовых образовательных потребностей. Всемирная конференция по образованию для всех. 5-9 марта, 1990 г., Джомтьен, Таиланд (http://www.un.org/ru/ documents/decl_conv/declarations/pdf/jomtien.pdf).

нормативных документов происходило под эгидой ЮНЕСКО. В 1996 году была принята Конвенция о борьбе с дискриминацией в области образования[4]. В 2008 году на 48-ой международной конференции по образованию в Женеве был обсужден ряд основных положений, необходимых для развития концепции инклюзивного образования и разработки программ по его внедрению[5].

Внедрение инклюзивного образования в Армении проходило в несколько этапов. Законодательная основа была заложена в 2005-ом году. Однако на практике инклюзивное образование стали апробировать начиная с 2001 года. Сначала на примере одной школы, которая поддержала идею общественной организации “Мост Надежды” о необходимости адаптации школьной среды к потребностям детей с проблемами моторно-двигательного аппарата. В 2007 году статус инклюзивных школ в Армении получили уже 10 столичных учебных заведений. В следующем году добавились еще 7 региональных школ в Араратском, Гегаркуникском, Вайоцдзорском и Лорийском марзах. Динамика роста количества инклюзивных школ в республике продолжалась[6]. По данным Министерства образования и науки РА, в 2016 г. в Армении действовало 260 инклюзивных школ, в которых обучались порядка 6700 детей[7].

"Закон РА Об образовании лиц с потребностями в особых условиях образования" и план имплементации инклюзивного образования

---

[4] Convention against Discrimination in Education 1960. Paris, 14 December 1960 (http://portal.unesco.org/en/ev.phpURL_ID=12949&URL_DO=DO_TOPIC&URL_SECTION = 201.html).

[5] Defining an Inclusive Education Agenda: Reflections around the 48th Session of the International Conference on Education. Geneva, Switzerland, 23-28 November, 2008, UNESCO, International Bureau of Education (http://unesdoc.unesco.org/images/0018/001868/186807e.pdf).

[6] Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2011-2015 թթ. պետական ծրագիր (http://parliament.am/law_docs/190711HO246havelvats.pdf).

[7] ՀՀ ԿԳՆ 2016 թվականի գործունեության հաշվետվություն, ՀՀ ԿԳՆ պաշտոնական կայք (https://www.armedu.am/index.php/am/news/view/526).

были приняты в 2005 году[8]. А в 2012 году по инициативе Министерства образования и науки Армении основные положения этого закона были включены в закон об общем образовании во избежание разночтений и дискриминаторного отношения. Как следствие, школы больше не будут делиться на инклюзивные и не инклюзивные, т.к. речь уже идет о всеобщей инклюзии; все школы будут обеспечивать инклюзивное образование.

Переход к всеобщему инклюзивному образованию был законодательно обеспечен Национальным Собранием РА изменениями в законе об общем образовании, внесенными 1-ого декабря 2014 г. В соответствии с этими изменениями все школы Армении перейдут на систему инклюзивного образования до 1-ого августа 2025 года[9]. А в 2016-ом году Правительство РА приняло план действий по переходу на систему всеобщего инклюзивного образования.

В связи с этим изменились также процесс, процедуры и инструменты оценивания лиц с потребностями в особых условиях образования. Суть изменений состоит в том, чтобы производилась функциональная оценка ребенка с целью обеспечения необходимой среды для получения им образования. На сегодняшний день закон предусматривает трехступенчатую систему оценивания:

1. Оценивание первого порядка производится в школе с участием педагога и членов междисциплинарной команды специалистов. Оценка производится посредством наблюдения. На данном этапе цель оценки заключается в том, чтобы понять, нужна ли учащемуся особая поддержка и если нужна, то какая (мониторинг и контроль, минимальная поддержка, легкая поддержка, средняя поддержка или полная поддержка).

2. Оценивание второго порядка производится только для детей, нуждающихся в поддержке. Оно проводится территориальными Цен-

[8] Закон РА Об образовании лиц с потребностями в особых условиях образования. Принят 25.05.2005 (http://parliament.am/legislation.php?sel=show&ID=2336&lang=rus).

[9] ՀՀ օրենքը ««Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու» մասին (http://www.parliament.am/draftreading_docs5/2/K-037_DR2.pdf).

трами педагогико-психологической поддержки, которые сформированы на базе спецшкол. На данном этапе проводится более детальное оценивание с участием родителя и педагога, работающего с ребенком в школе, и определяется, поддержка какого порядка необходима ребенку. Дополнительное государственное финансирование школа получает в случае, если ученику требуется поддержка средней степени или полная поддержка.

3. Оценивание третьего порядка производится только в сложных, спорных и неоднозначных случаях, при наличии множественных проблем, когда встает вопрос о продолжении образования ребенка в спецшколе или при поддержке других специалистов. Оценивание производит Республиканский центр педагогико-психологической помощи, созданный 12 января 2017 года решением 10-N Правительства РА[10].

Качественного образования можно достигнуть только тогда, когда каждый ребенок (в том числе наиболее уязвимые и исключенные дети) посещает школу и получает качественное образование, которое обеспечивает его знаниями и навыками, необходимыми для жизни и развития. Этот подход согласуется с Международной классификацией функционирования, ограничений жизнедеятельности и здоровья Всемирной организации здравоохранения, которая объясняет уровень функционирования человека в динамическом взаимодействии между состоянием здоровья и факторами окружающей среды[11]. Указанная классификация определяет функционирование и ограничения жизнедеятельности как многомерные концепции, связанные с:

- функциями и структурами организма людей;
- видами деятельности людей и сферами жизни, в которых они участвуют;
- факторами окружающей среды, которые влияют на этот жизненный опыт;

[10] Կոռուպցիոն ռիսկերի գնահատում ՀՀ հանրակրթության բնագավառում, Ե., 2017 (https://transparency.am/files/publications/1489693195-0-123422.pdf).

[11] Международная классификация функционирования, ограничений жизнедеятельности и здоровья. Всемирная организация здравоохранения, СПб., 2003.

- индивидуальными факторами.

Этот подход признает важность контекста и факторов окружающей среды для включения (инклюзии) или исключения (сепарации, эксклюзии) отдельных лиц из эффективного участия в жизни общества, что по сути отражает "социальную модель инвалидности"[12].

Инклюзивный подход начинается со всемирно известного слогана: “Ничего для нас без нас!” Фраза выражает желание людей с инвалидностью принимать участие во всех решениях, касающихся не только их самих, но и общества в целом. По сути, слоган знаменует переход к активной позиции осознания себя субъектом социальных интеракций и социальных изменений, отказ от пассивной позиции объекта, предписываемой патерналистской системой социальной защиты, по сей день характерной для многих стран постсоветского пространства. Подобная трансформация во взаимоотношениях личность-общество-государство одинаково применима ко всем социальным категориям: детям, беженцам, бедным, безработным, лицам с инвалидностью и т.д.

“Образование для всех” представляет собой международное движение и обязательство обеспечить получение качественного образования каждым ребенком и взрослым. Оно основано на концепции прав человека и на убеждении, что образование является важнейшим фактором индивидуального благосостояния и национального развития.

“Образование для всех” преследует следующие цели на макроуровне:

- обеспечение бесплатного и обязательного образования для всех;
- расширение комплексных мер по уходу и воспитанию детей;
- поощрение знаний и жизненных навыков детей и взрослых;
- повышение грамотности взрослого населения;

[12] **Մելքումյան Յու.,** ՀՀ բուհերում հաշմանդամություն ունեցող ուսանողների ներառման մեթոդական առաջարկություններ (ՀՀ ԳԱԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 3 (645), 2015):

- обеспечение гендерного равенства;
- повышение качества образования[13].

Инклюзия подразумевает доступ к обучению в обычных школах для всех категорий детей. Инклюзивные школы являются наиболее эффективным средством борьбы с дискриминаторным отношением, создания благоприятной атмосферы в обществе и общине, построения инклюзивного общества и обеспечения образования для всех[14]. Инклюзивные школы–это не только средство для прекращения сегрегации, но и возможность создать общество, где эффективно удовлетворяют потребности всех детей. Инклюзия обеспечивает реализацию демократических принципов, поскольку в ее основе заложены идеи равенства и социальной справедливости. Различия в физических и умственных способностях, этнической принадлежности, гражданстве, расе и вероисповедании следует рассматривать как разницу в образе жизни, что по сути является отражением социальной модели инвалидности, которая объясняет «инвалидность» как результат взаимодействия нарушения жизнедеятельности человека и окружающей среды[15]. Ограниченные возможности являются частью человеческого разнообразия, и лица, которым необходимы особые условия образования, представляют собой гетерогенную группу. Многомерный опыт детей с ограниченными возможностями необходимо принимать во внимание при проектировании инклюзивной среды, работы информационно-образовательных и коммуникационных кампаний и разработке отдельных программ.

Акцентирование инклюзивного образования и инклюзивных школ отнюдь не означает, что образование–это единственный социальный институт, который затрагивает или обеспечивает инклюзию. Прави-

---

[13] Дакарские рамки действий. Образование для всех: выполнение наших общих обязательств. Всемирный форум по образованию, Дакар, Сенегал, 26-28 апреля 2000 г.

[14] ЮНЕСКО (1994). Саламанкская декларация и Рамки действий по образованию детей с особыми потребностями, p.iii, http://www.unesco.org/education/pdf/SALAMA_E.PDF [по состоянию на 27 июля 2014].

[15] **Մելքումյան Յու.,** указ. соч.

тельство, донорские и международные организации, гражданское общество, частный сектор, благотворительные фонды, учителя, преподаватели и представители других профессий должны прибегнуть к координированным действиям для выполнения обязательств по обеспечению социальной инклюзии. Однако школа остается тем социальным звеном, которое в состоянии обеспечить наибольший социальный охват и фундамент для реализации инклюзии. Для начала следует определить, какие группы детей наиболее подвержены рискам эксклюзии, дискриминации и изолирования, то есть не включены в образовательный процесс, и помочь им полностью реализовать свой потенциал.

В отличие от других подходов, которые направлены на то, чтобы приспособить детей к системе образования или обеспечить специальное обучение вдали от социума, инклюзивный подход признает необходимость трансформировать культуру, политику и повседневные школьные практики, чтобы адаптировать их к различным потребностям различных детей. В основе инклюзивного подхода лежат простые положения. **Во-первых, все дети разные. Во-вторых, все могут обучаться.** Инклюзивный подход преобразует не только образовательную среду, делая ее доступной, но и систему в целом. Школа берет на себя обязательство по устранению барьеров, препятствующих реализации прав детей на образование, жизнь в общине и в семье. Принято выделять 3 основных вида барьеров, затрудняющих интеграцию:

- институциональные факторы;
- недоступная физическая среда;
- отношение и стереотипы[16].

Эти барьеры в той или иной степени присутствуют во всех общественных системах. Но каждое общество осознает и борется с этими барьерами различными методами и с различной эффективностью. Естественно, преодоление всех этих барьеров–процесс взаимосвязан-

[16] Там же.

ный. Но важно понимать, что **устранение институциональных барьеров** требует, в первую очередь, политической воли для принятия концепции инклюзии на государственном уровне, что естественно предполагает ратификацию соответствующих конвенций и обеспечение законодательной базы для реализации инклюзии. Вышеописанные законодательные реформы свидетельствуют о том, что в этом плане Армения преуспела. Это обеспечивает необходимую, но не всегда достаточную базу для создания инклюзивной среды.

Следующий шаг – **трансформация физической среды в соответствии с нуждами людей с особыми потребностями** – требует не только политической воли, но и серьезных финансовых инвестиций. Инвестиции необходимы для строительства и реорганизации городской среды. Это требует физических приспособлений (например, пандусы вместо лестницы, достаточно широкие дверные проемы для инвалидных колясок, дидактические материалы, приспособленные для той или иной группы учащихся и т.д.). Реорганизация физического пространства только в школе, естественно, недостаточна для полноценного инклюзивного образования. Необходимы комплексные меры по обустройству и переустройству транспортной инфраструктуры, общественных зданий и городского пространства. Но и этих мероприятий недостаточно, если нет квалифицированных кадров, способных спроектировать, реорганизовать и соответственным образом эксплуатировать это пространство. Наряду с этим нельзя забывать и о необходимости разработки и модификации учебных программ для детей с различными потребностями. Причем, учебные программы должны отвечать потребностям и интересам полного спектра людей в обществе (не только представителей уязвимых групп и лиц с ограниченными возможностями). Таким образом, создание безбарьерной физической среды требует не только институциональной и законодательной базы и соответствующего финансирования, но и современных научных разработок и подготовки квалифицированных кадров (как педагогов и методистов, так и узких специалистов в сфере инженерии, эрготерапии и т.д.).

Что касается **отношения и стереотипов**, то здесь, с одной стороны, все обстоит намного проще, поскольку не нужны ни дополнительные финансовые средства, ни законодательные меры, ни институциональные изменения. С другой стороны, изменение отношения, основанного на давно укоренившихся стереотипах,–задача весьма сложная, но выполнимая. Основой для изменения отношения и нейтрализации стереотипов является, в первую очередь, распространение идей гуманизма, которыми обусловлены не только недискриминаторное отношение, но и уважение к иному, отличному образу жизни и человеческому разнообразию. Работа со стереотипами – непростой процесс, требующий четкого целеполагания и периодического мониторинга. Основной риск работы со стереотипами заключается в том, чтобы не допустить подмены уже существующих стереотипов новыми, зачастую противоречащими уже существующим, что может не только не изменить, но и усугубить ситуацию. К примеру, дискриминаторное отношение к девочкам может смениться дискриминаторным отношением к мальчикам вместо равноправного, взвешенного подхода к представителям обоих полов. Подобным образом дискриминаторное отношение к лицам с ограниченными возможностями в результате несбалансированных мероприятий зачастую поспешно сменяется чрезмерным вниманием к лицам с особыми потребностями и недостаточным вниманием к остальным, что в итоге приводит к новой волне сепарации вместо инклюзии и равноправия.

Важно также понимать, что устранение институциональных и физических барьеров способствует изменению отношения и стереотипов, поскольку наглядно демонстрирует преимущества инклюзии для всех, а не только для таргетных групп. Устранение институциональных барьеров, а в некоторых случаях даже позитивная дискриминация в отношении уязвимых групп никак не ограничивает возможностей остальных граждан. Напротив, система становится более гибкой и благоприятной для всех, барьеров становится, в принципе, меньше для всех. Сказанное касается и устранения физических барьеров. Соз-

дание безбарьерного физического пространства одинаково выгодно для всех категорий граждан.

Вся сложность организации образования детей с особыми потребностями состоит в том, что нет стандартных методов и приемов, которые способствовали бы полноценному развитию их потенциала. Одни и те же проблемы могут получать различное развитие, и последовательная апробация, адаптация и отбраковка различных дидактических практик в каждом конкретном случае приводит к ощутимым результатам, в то время как сепарация учащихся в специальных школах ограничивает не только дидактические возможности, но и широту и глубину учебной программы, что отрицательно отражается как на когнитивном, так и социальном развитии выпускников специальных школ. Как правило, в специальных школах меньше времени тратится на академическое участие, и ожидания успеваемости от детей с особыми потребностями низкие из-за долгосрочных эффектов системы образования и общества, которое не надеется на достижение хороших результатов той или иной группой детей. Еще один отрицательный эффект сепарации детей в специальных школах связан с тем, что количество специальных школ в каждой стране ограничено, поэтому дети, посещающие эти школы, часто остаются вдали от своих семей в течение длительного времени, в результате наличные проблемы усугубляются еще и последствиями депривации. Исследования показывают, что дети с ограниченными возможностями, в том числе с ограниченными возможностями обучения, достигают бóльших успехов в академических результатах и поведении в традиционных школах, чем их сверстники с подобными ограниченными возможностями в сегрегированных классах. Кроме того, когда учителя получают соответствующую подготовку для работы с детьми с ограниченными возможностями, уровень и стандарт обучения детей с ограниченными возможностями повышается, и уровень обучения учащихся, не имеющих ограниченных возможностей, также возрастает.

Важно подчеркнуть, что инклюзивное образование заключается не в обучении детей тому, как справиться с невосприимчивой систе-

мой образования. Это средство, с помощью которого методы обучения, учебная программа, персонал и педагогическая поддержка адаптируются к обучению всех учащихся, в том числе тех учащихся, которые не вписываются в традиционную систему образования. Инклюзивное образование трансформирует учебную программу в соответствии с нуждами ученика, признавая потенциал каждого ребенка, а не сосредотачивая внимание на ограничениях учащихся.

Инклюзивное образование предполагает принципиально иной педагогический подход к учащимся. Оно раскрывает потенциал обучения каждого ученика, а не иерархию когнитивных навыков. Активное участие детей в процессе обучения является ключевым аспектом инклюзивного образования, знание той или иной дисциплины перестает быть доминирующей целью образования. По сути, инклюзивное образование основано на дифференцированном индивидуальном обучении, а не на альтернативных учебных программах, которые разрабатываются для учащихся с низкой успеваемостью, заранее обрекая их на получение более ограниченного объёма знаний и навыков по сравнению с остальными.

Инклюзивное образование пользуется инструментарием общеобразовательных школ, смещая акценты не в пользу той или иной группы учащихся, вопреки распространенному заблуждению, а обеспечивая благоприятную образовательную среду для всех. Акцент в инклюзивном образовании ставится, прежде всего, на учащемся. Для реализации инклюзивного образования каждый ученик оценивается специалистами междисциплинарной группы с целью разработки индивидуального плана обучения. Междисциплинарная группа включает не только специалистов разного профиля: педагогов, врачей, психологов, социальных работников, логопедов и реабилитологов, но и родителей, в обязательном порядке. Роль междисциплинарной группы состоит не только в разработке индивидуального плана обучения, но и в постоянном мониторинге прогресса ребенка и целесообразности выбранных методов работы с учеником, а также в сотрудничестве разноплановых специалистов с целью повышения эффективности мero-

приятий по инклюзии. Поскольку большую часть времени ребенок проводит с родителями, в семье, усилия семьи и профессионалов должны быть согласованы.

Индивидуальный план обучения, основываясь на потребностях и особенностях данного конкретного ребенка, может рекомендовать использование тех или иных дидактических материалов и методик в работе с ним, сокращать/продлевать, замещать и исключать те или иные занятия. При этом инклюзивное образование не ограничивает и тем более не исключает профессиональную поддержку и специализированное вмешательство в случае необходимости. Оно разрабатывает стратегии для учителей и стимулирует совместное решение проблем. В итоге, меняется школа, что проявляется не только в преимуществах интегрирования для учащихся с особыми потребностями, но и в повышении качества образования для всех учащихся.

Инклюзивное образование ведет к улучшению результатов обучения для всех. В инклюзивной образовательной среде все дети могут получить пользу с социальной точки зрения. Дети, обучающиеся в инклюзивной среде, становятся добрее, учатся заботиться не только о себе, но и о других людях. Когда все дети учатся вместе, есть положительные поведенческие изменения как в школах, так и в более широкой социальной среде, ведущей к меньшей стигматизации и большей социальной инклюзии.

Существуют также убедительные экономические аргументы в пользу инклюзивного образования, в частности, в отношении сокращения масштабов бедности и снижения расходов на образование. Таким образом, инклюзивное образование становится еще и экономически эффективной стратегией решения социальных проблем в целом. Те члены общества, которые ранее не рассматривались в качестве рабочей силы, способной создавать добавочную стоимость и, более того, воспринимались исключительно с позиции объекта социальной защиты, а следовательно затрат, компенсируемых другими членами общества, в системе инклюзивного образования развивают свой потенциал таким образом, чтобы впоследствии быть не только в состоянии

самостоятельно удовлетворять свои самые разнообразные потребности, но и заниматься общественно-полезной деятельностью и быть экономически выгодными для общества. В итоге каждый укрепляет грамотную, дееспособную общину.

Инклюзивное обучение важно, поскольку данная проблема оказывает влияние не только на отдельных лиц, но и на их семьи и на лиц, осуществляющих уход. Инклюзивное образование гарантирует, что все дети могут жить, учиться и играть вместе, что даёт всем детям возможность узнать о способностях, талантах, а также о личностных особенностях и потребностях друг друга и принять их. Это позволяет им развивать дружеские отношения, которые помогают формировать социальную компетенцию и уверенность в их способности взаимодействовать друг с другом и с миром вокруг них. Они узнают, что все дети являются частью их общины, и появляется осознание принадлежности к ней, стираются границы, мир перестает восприниматься с позиции своих и чужих на основании таких факторов, как пол, расовая или этническая принадлежность, гражданство, вероисповедание, статус здоровья и т.д. Очевидным является то, что все дети учатся толерантности, принятию различий и уважению к разнообразию, а также узнают об опыте других людей.

Социальная инклюзия рассматривается как конечная цель многоступенчатого процесса, которой в реальности невозможно достичь на 100%. Кроме того, инклюзия, по сути, не имеет конкретного константного содержания, это скорее многомерный процесс, подверженный влиянию множества факторов. По мнению МкКонки[17], инклюзию следует рассматривать как процесс, предполагающий следующие этапы:

1. **Социальное присутствие.** Дети с особыми потребностями присутствуют и визуально наблюдаемы в различных социальных ситуациях и публичных местах, в том числе и в школах, что подразумевает ограниченные возможности эпизодического общения, которые, по

[17] **Abbott S., McConkey R.** The Barriers to Social Inclusion as perceived by People with Intellectual Disabilities (Journal of Intellectual Disabilities, 2006 Sep; 10(3): 275-87).

большей части, просто констатируют их присутствие. Они являются, по сути, *“наблюдателями”*.

2. **Социальная интеракция.** Дети с особыми потребностями общаются вербально и невербально, участвуют в социальной коммуникации, которая зачастую опосредована другими людьми. Они приобретают *“знакомства”*.

3. **Социальное участие.** Дети с особыми потребностями сами инициируют и реагируют на попытки коммуникации со стороны других людей. Они влияют на содержание коммуникации и совместных действий, а также участвуют в них наравне с другими людьми, становятся *“членами”* социального сообщества (класса, школы и т.д).

4. **Социальная инклюзия.** Дети с особыми потребностями учатся, работают, конкурируют, играют вместе со всеми на равных правах и с равными возможностями, как и другие дети. Они становятся “равноправными гражданами, членами общества”[18].

Естественно, границы между вышеописанными этапами очень размыты, нет правил, позволяющих разграничить и упорядочить эти этапы. Однако именно в указанной последовательности обычно достигается социальная инклюзия. На каждом этапе возникают и преодолеваются новые барьеры. Неудивительно, что для обеспечения “присутствия” необходимо преодоление одновременно всех трех вышепроанализированных факторов: стереотипизированного отношения, институциональных и физических барьеров. Но на последующих этапах наиболее существенным и сложнопреодолимым барьером становятся стереотипы, и, следовательно, их преодоление, изменение отношения и формирования позитивного восприятия отличного образа жизни является ключевым “облегчающим фактором”[19].

---

[18] **Simplican, S.C., Leader, G., Kosciulek, J. & Leahy, M.** Defining Social Inclusion of People with Intellectual and Developmental Disabilities: An Ecological Model of Social Networks and Community Participation (Research in Developmental Disabilities, 38, 18-29, 2015).

[19] Международная классификация функционирования, ограничений жизнедеятельности и здоровья. Всемирная организация здравоохранения, СПб., 2003.

Критически важно, что в системе инклюзивного образования физические, поведенческие и политические барьеры, в том числе негативные стигмы и дискриминация, рассматриваются и устраняются.

ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆԱՐԳԵԼՔ ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ

ՄԵԼՔՈՒՄՅԱՆ ՅՈՒ.Գ.

Ամփոփում

Բոլորի համար որակյալ կրթության հասանելիության հիմնախնդիրը միջազգային հանրության ուշադրության կենտրոնում է 1990-ականներից ի վեր: Հայաստանում ներառական կրթության ներդրման գործընթացն ունեցել է մի քանի փուլ: 2001 թ. ներառական կրթությունը փորձարկվել է մեկ դպրոցում, այնուհետև ձևավորվել է համապատասխան օրենսդրական բազան: Տարեցտարի ներառական դպրոցների քանակը Հայաստանում ավելանում է, իսկ համընհանուր ներառականության համակարգին անցնելու գործընթացը կավարտվի 2025 թ. օգոստոսի մեկին, որից հետո ՀՀ բոլոր դպրոցները կդառնան ներառական և կիրականացնեն ներառական կրթություն: Այս նպատակով փոփոխվել է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կարիքների գնահատման համակարգը, որը դարձել է եռաստիճան և պահանջում է համակարգի էական վերակազմավորում: Ներառական կրթությունը մոտեցում է, ըստ որի, որակյալ կրթություն հնարավոր է ապահովել միայն այն ժամանակ, երբ բոլոր երեխաներն են դպրոց հաճախում և ստանում են կրթություն, որը նրանց ապահովում է կյանքի և զարգացման համար անհրաժեշտ գիտելիքներով ու հմտություններով: Ներառականության հիմքում դրված են երկու հիմնական գաղափարներ: Նախ՝ բոլոր երեխաները տարբեր են: Եվ երկրորդ՝ բոլորն ունակ են սովորելու: Դպրոցն է ձևավորում անարգելք կրթական միջավայր՝ վերացնելով ինստիտուցիոնալ և ֆիզիկական արգելքներն ու մեղմելով կարծրատիպերը:

INCLUSIVE EDUCATION AND THE CREATION OF EDUCATIONAL ENVIRONMENT WITHOUT BARRIERS

Yu. MELKUMYAN

Abstract

Ever since the 1990s the problem of availability of quality education for everyone has been in the center of international attention. The inception of inclusive education in Armenia has undergone a few stages. In 2001 inclusive education was tested in one school, then the corresponding legislative base was developed. Year by year the number of inclusive schools in Armenia has been growing. The transition to total inclusion will be completed on August 1, 2025, after which all Armenian schools will become inclusive and will implement inclusive education. For that purpose, the need assessment procedure for children with special needs has been changed; it has become a three-staged process and requires substantial reorganization of the system. According to the inclusive education approach, quality education is provided only when all children attend school and receive education that provides them with the knowledge and skills necessary for their life and development. The idea of inclusion is based on two main statements. First, all children are different, and secondly, everyone can learn. The school creates an educational environment without barriers by eliminating institutional, physical and aspirational barriers.

ՄԱՆԿԱՏԱՆ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ Ա.Մ.

Որբությունը, որպես սոցիալական երևույթ, գոյություն է ունեցել և հավանաբար գոյություն կունենա միշտ: Սակայն փաստենք, որ սույն երևույթի դրսևորումները պայմանավորված են ինչպես տվյալ ժամանակաշրջանում ձևավորված տնտեսական և սոցիալ-մշակութային միջավայրով, այնպես էլ կառավարման համակարգի սահմանված գերակայություններով, արժեքներով: Անհերքելի է, որ մանկատանն արտացոլվում են «ընտանիք» սոցիալական ինստիտուտում տեղի ունեցող փոխակերպումները՝ պայմանավորված քաղաքական, իրավական, տնտեսական ու մշակութային համալիր և փոխկապակցված գործոններով:

Երեխայի մեջ ադապտիվ ամենանշանակալի մեխանիզմները ձևավորվում են ընտանիքում: Ընտանեկան նորմերն ու դաստիարակությունը կանխորոշում և ձևավորում են հասարակության մեջ երեխայի սոցիալականացման գործընթացները՝ հիմքում ունենալով հասարակության ընդհանրական պատկերը:

Ներկայացնելով «ընտանիքի» ինստիտուցիոնալ ճգնաժամը և երկսերունդ ընտանիքին անցման պատմական փուլերը՝ մասնագետները փաստում են, որ, կենսական պայմանների բարելավմամբ պայմանավորված, «ժամանակակից» ընտանիքի ամուր լինելու գաղափարն այլևս սպառել է իրեն: Այդ գաղափարն այսօր ի զորու չէ հիմնավորելու ամուսնալուծությունների, չգրանցված ամուսնությունների և միայնակ մայրերի թվի աճը: Ա. Անտոնովի համոզմամբ՝ ընտանիքը կատարում է ամորտիզացիոն դեր հասարակության և անհատի փոխհարաբերություններում, որտեղ առկա է շահերի բախում: Ընտանիքի ճգնաժամը խոչընդոտում է ընտանիքի՝ որպես անհատի և հասարակության միջև բնականոն կապի ձևավորման

սոցիալ-մշակութային առաքելությանը[1]: Ըստ Ջ. Դեյվիսի՝ XX դարի կեսերից ավանդական ընտանիքի վերացումն արդեն ակնառու փաստ է: Ժամանակակից պետությունը (հատկապես մասնավոր արդյունաբերական արտադրություն ունեցողները) առավելապես կենտրոնանում է ոչ թե հավասար իրավունքներ ունեցող զույգի, այլ մոր և երեխայի վրա: Ընդ որում, մոր դուրսմղումն ընտանեկան, տնային տնտեսության արտադրությունից դեպի շուկայական համակարգ՝ աշխատանքի անհատական վարձատրությամբ, հիմք հանդիսացավ կանանց և տղամարդկանց միջև մրցակցության, ամուսնալուծությունների, ամուսնալուծությունների հետևանքով կամ միայնակ մայրերի պարագայում՝ միածնող ընտանիքների թվի աճի համար: Մասամբ փոխհատուցելով կնոջ բեռը տանից դուրս և թեթևացնելով մայրության ու աշխատանքի համատեղումը՝ մայրության նման «պաշտպանությունը» նպաստեց ընտանիքի ինստիտուտի արժեզրկմանը: Այսպիսի «խնամքը» շղթայաբար օտարում էր հորն իր հայրական գործառույթներից: Փաստորեն, պետությունը, վերցնելով այդ գործառույթները, կազմալուծում էր ընտանիքում տղամարդու դերը[2]:

Սոցիալական աշխատանքի, խնամքի և պաշտպանության և այլ ծառայությունների համար առկա սոցիալական ինստիտուտները ձեռք էին բերում գործունեության լայն դաշտ: Միաժամանակ առաջանում էր շահերի բախում, քանի որ մի կողմից իրենք մատուցում են սոցիալական ծառայություն ի բարօրություն ընտանիքի, իսկ մյուս կողմից՝ աշխատանքն առավել արդյունավետ է անհատի հետ: Դասական առումով սոցիալական աշխատանքը ենթադրում է ընտանիքի ներուժի հզորացում: Սակայն, ծրագրերի շնորհիվ, կենտրոնում հայտնվում է որոշակի սոցիալական կատեգորիայի անդամը՝ անհատը[3]:

Այն պարագայում, երբ ընտանիքի շահերն ստորադասվում են սոցիալական ինստիտուտների շահերին, ընտանիքն ի զորու չի լինում կատարելու իր վերարտադրողական, դաստիարակչական և այլ գործառույթները. ըստ այդմ՝ ընտանեկան հարաբերությունները խեղվում են, ընտա-

[1] **Антонов А.И.** Микросоциология семьи (методология исследования структур и процессов): учебн. пособие для вузов, М., 1998, с. 11-12.

[2] **Davies J.** The Family: Is it Just Another Lifestyle Choice? IEA Health and Welfare Unit, London, 1993, p. 100.

[3] **Morgan D.H.J.** New Directions in Family Research and Theory. In The Sociology of the Family, Vol. 28, 1980, p. 3-18.

նիքը և երեխաները դադարում են լինել անհատի անհրաժեշտ և բավարար պահանջմունք[4]:

Ընտանիքի կենսագործունեության ներքին կազմակերպման հարցում շատ կարևոր է, թե ով է ընտանիքի գլխավորը: Ավանդաբար հայ ընտանիքի գլխավոր համարվել է տան մեծը՝ տղամարդ թե կին: Խորհրդային Միության տարիներին այդ դերակատարությունը կրեց սկզբունքային փոփոխություններ:

1970-ականներին արդեն եռասերունդ ընտանիքներում փաստացի գլխավոր սկսեցին համարվել ընտանիքի առավել կրթված անդամները: Քաղաքի համեմատությամբ՝ դանդաղ և ոչ բացահայտ, բայց նման միտում սկսեց արտացոլվել նաև գյուղական համայնքներում: Կրթականից բացի, կարևոր հանգամանք էր նաև նյութականը, քանի որ զարգացող արդյունաբերության մեջ ավելի շատ ներգրավվում էին լավ կրթություն ստացած երիտասարդներ՝ և՛ տղամարդիկ, և՛ կանայք: Արդի ընտանիքի առաջնորդության հարցում կարևոր գործոն է համարվում նաև ընտանիքի անդամների եկամուտների չափը, որը որոշակի փոփոխություններ է առաջ բերում նաև ընտանիքում տղամարդկանց և կանանց կարգավիճակներում և դերերում: Անշուշտ, այս ամենն իր ազդեցությունն է թողնում Հայաստանի բնակչության տեղաբաշխվածության և ժողովրդագրական ցուցանիշների վրա: Այսօր մտահոգիչ է թերևս այն փաստը, որ 2012 թվականից գյուղական համայնքներում արդեն ծնելիության ցուցանիշն սկսել է զիջել քաղաքայինին, ընդ որում՝ միտումը կայուն շարունակվում է:

Խորհրդային Հայաստանում սոցիալական քաղաքականությունը համապատասխանում էր ԽՍՀՄ-ի միասնական գաղափարախոսության սկզբունքներին: Ըստ պատմաբան Է. Մինասյանի՝ Հայաստանում միաժամանակ գործում էին սոցիալական պաշտպանության սեփական մեխանիզմներ՝ հիմնված ազգային սովորույթների վրա: Ընտանեկան ազգակցական-դրացիական սերտ հարաբերությունները երեխաների պաշտպանության և սոցիալական վերահսկողության կարևոր գործոն էին: Միասնական սոցիալական քաղաքականության կիրառումը և երեխաների շուրջ հայ իրականության մեջ և ընտանիքում ձևավորված ազգային արժեհամակարգի առկայությունը հանգեցրել էին նրան, որ այդ շրջանում մանկատնե-

[4] **Антонов А.И.** Социология рождаемости, М., 1980; **Антонов А.И., Медков В.М.** Социология семьи, М., 1996, с. 34.

րի և դրանց սաների թիվը շատ փոքր էր: Այսպես, 1999 թ. մանկատներում խնամվում էր 513 երեխա, որոնցից 155-ը 16-18 տարեկան էին[5]:

Անկախության հռչակումից հետո Հայաստանի իշխանությունների համար նոր իրավահարաբերությունների և փորձի բացակայության պայմաններում սոցիալական քաղաքականության արդի մոդել մշակելու խնդիր էր դրված, որը հաշվի պետք է առներ նաև հանրապետությունում ձևավորված քաղաքական և սոցիալ-տնտեսական նոր իրողությունները: Շուկայական հարաբերությունների ձևավորման սկզբնական փուլում՝ 1990-1995 թթ., Հայաստանում սոցիալական քաղաքականությունը դիտարկվում էր որպես ընդհանուր տնտեսական ռազմավարության բաղկացուցիչ մաս: Հաջորդող տարիներին տնտեսական համատեքստում սոցիալական աջակցության և սոցիալական ապահովագրության համակարգերը տարանջատվեցին[6]:

Հայաստանում շուկայական տնտեսության զարգացման ուղու որդեգրման հետևանքով սոցիալական քաղաքականությանը նոր մոտեցում ցուցաբերվեց. նախկին «հայրիշխանական» մոդելին փոխարինելու եկավ ազատական մոդելը: Եթե Խորհրդային Միության քաղաքացու կյանքը խիստ կանխատեսելի էր՝ աշխատանքի ապահովում, առողջապահական համակարգ, բնակարանով ապահովում, կենսաթոշակ, իսկ նվազագույն աշխատավարձը բավարարում էր առաջանային պահանջները, ապա հետխորհրդային ժամանակաշրջանում սկսեցին գործել այլ արժեհամակարգեր՝ մրցակցություն, անկախություն, գործարարություն և այլն:

Հետխորհրդային Հայաստանում քաղաքական–իրավական նոր մշակույթի ձևավորման պայմաններում երեխայի պաշտպանության դաշտում առաջ եկան իրավական հարաբերությունների անցումային, խառը ձևեր՝ խախտելով իրավական փորձառության փոխանցման մեխանիզմը, ինչպես նաև սոցիալական առանձին խմբի կապը հասարակության հետ: Նման իրավիճակը նպաստեց, որ սոցիալական որոշ խոցելի խմբերի շրջանում ձևավորվի որոշակի ենթամշակույթ՝ իր սոցիոնորմատիվ կանոններով, որն առանձնանում էր հասարակության միասնական արժեհամակարգից: Փոխակերպման ենթարկվեց նաև ընտանիք սոցիալական ինստիտուտը. ամուսնալուծությունների, միայնակ մայրերի, իսկ արտագաղ-

[5] **Մնացականյան Ա.,** Հայաստանի մանկատները, Ե., 2014, էջ 217:

[6] **Մինասյան Է.,** ՀՀ սոցիալական քաղաքականությունը (1990-2003 թթ.), (http://lraber.asj-oa.am/3/1/2003-2(3).pdf).

թով պայմանավորված՝ ոչ լիարժեք ընտանիքների թվի աճի հետևանքով գերակշռող դարձան միասերունդ ընտանիքները: Ընտանեկան հարաբերությունների և արժեքների փոփոխությունները հանգեցրին հայ ընտանիքում ավանդական՝ աշխատանքի բաժանման հարցում կանանց և տղամարդկանց կարգավիճակների, երեխայի դերի և տեղի փոփոխության: Ընտանիքի՝ որպես հասարակության բազային միավորի դիրքը սասանվեց, քանի որ բացակայում էր նրա նկատմամբ սոցիալական քաղաքականության համակարգված մոտեցումը:

Այժմ անդրադառնանք երեխաների հիմնախնդիրներին առնչվող որոշ իրավական ակտերի: ՀՀ «Երեխայի իրավունքների մասին» օրենքը (1996 թ.) սահմանեց երեխայի իրավունքները, պետության, համապատասխան մարմինների և քաղաքացիների պարտականությունները, ինչպես նաև երեխայի իրավունքների պաշտպանության բնագավառում պետական քաղաքականության իրականացման ծրագրային հիմունքները[7]: 2000 թ. հաստատվեց «Երեխայի որդեգրման կարգը հաստատելու մասին» որոշումը[8]:

ՀՀ կառավարությունը 2003 թվականին արձանագրեց այն փաստը, որ մանկական խնամակալական կազմակերպություններում խնամվող երեխաների թիվն աճում է, ընդ որում՝ հաստատությունները համալրվում են սոցիալական որբերով: Սոցիալ-տնտեսական իրավիճակը, այլընտրանքային ծառայությունների բացակայությունը և այլ օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառներ նպաստում էին երևույթի խորացմանը: Հետևաբար Կառավարությունը հաստատեց «Երեխաների խնամքի հարցերով զբաղվող հաստատությունների բարեփոխման պետական ռազմավարական ծրագիրը հաստատելու մասին» որոշումը[9]: Ռազմավարական ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ցանկում տեղ գտավ «Մանկատների բեռնաթափում» ձևակերպումը:

Կառավարությունը 2003 թվականին հաստատեց «Երեխայի իրավունքների պաշտպանության 2004-2015 թվականների ազգային ծրա-

[7] http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=69115.

[8] ՀՀ կառավարության 2000 թ. փետրվարի 12-ի N 64 որոշում, http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=7736.

[9] ՀՀ կառավարության 2003 թ. նոյեմբերի 27-ի N 1654-Ն որոշում, http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=11647.

գիրը»[10]: Թեև փաստաթուղթը ներառում էր տարբեր բնագավառներում երեխաների հանդեպ իրականացվող քաղաքականությունը, սակայն ծրագիրն իրեն սպառեց սահմանված ժամկետներից շատ ավելի շուտ, և անհրաժեշտություն առաջացավ մշակել նոր փաստաթուղթ: Կառավարությունը 2006-ին հաստատեց «ՀՀ-ում երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունում (մանկատուն, գիշերօթիկ) երեխաների տեղավորման կարգը»[11], իսկ 2008-ին մշակվեց և հաստատվեց «Երեխային խնամատար ընտանիք հանձնելու կարգը... հաստատելու մասին որոշումը»[12]:

Ծրագրերի շնորհիվ մանկատների և այնտեղ խնամվող երեխաների թիվը կտրուկ նվազեց: Այսպես, եթե 2010 թ. Հայաստանում գործում էր 12 մանկատուն, որտեղ խնամվում էր 1240 երեխա, ապա 2015-ին մանկատների թիվը նվազեց մինչև 8-ի, իսկ երեխաներինը՝ 864-ի: Սակայն գերակշռում են միայնակ մայրերի և սովորաբար երկու ծնող ունեցող հաշմանդամ երեխաները. եթե կենտրոնացված հաշվառման վերցված որդեգրման ենթակա երեխաների թվի մեջ 2002 թվականին միայնակ մայրերի երեխաների թիվը 22,9 % էր, ապա 2015-ին թիվն աճել է մինչև 37.1%, իսկ երկու ծնող ունեցող երեխաների թիվը համապատասխանաբար 54,3%-ից նվազել է մինչև 47%[13]: Երկկողմանի ծնողազուրկ երեխաների թիվը շարունակաբար չի գերազանցում 2%-ը:

Թեև երեխայի պաշտպանության դաշտում իրականացված կառուցվածքային բարեփոխումները (ոլորտը կանոնակարգող բազմաթիվ իրավական ակտերի առկայությունը, համագործակցությունը միջազգային կառույցների հետ, բազմաթիվ ծրագրերի իրականացումը, սոցիալական աշխատանքի դաշտում լուրջ ձեռքբերումները) ակնառու են, սակայն վերոնշյալ իրավական ակտերի թերությունների և սխալների զգալի մասը պայմանավորված է այն հանգամանքով, որ խնդիրներին առնչվող բոլոր

[10] ՀՀ կառավարության 2003 թ. դեկտեմբերի 18-ի N 1745-Ն որոշում, http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=11712.

[11] ՀՀ կառավարության 2006 թ. նոյեմբերի 9-ի N 1735-Ն որոշում, http:// www.arlis.am/documentview.aspx?docid=29609.

[12] ՀՀ կառավարության 2008 թ. մայիսի 8-ի N 459-Ն որոշում, http://www.arlis.am/documentview.aspx?docID=51983.

[13] ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Հրապարակումներ, 2002-2015, ՀՀ սոցիալական վիճակը, Մանկատների գործունեություն, Որդեգրում, www.armstat.am.

գերատեսչություններն իրենց տրամադրության տակ չունեն ռազմավարական համապարփակ փաստաթուղթ:

«Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ 2003 թվականին Կառավարությունը հաստատեց «Պետական աջակցություն ՀՀ մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին» ծրագիրը[14]: Տարբեր խնդիրների շարքում առկա էր նաև բնակելի տարածքով ապահովման բաղադրիչը: 2006-2009 թթ. բնակարանով ապահովվեց մանկատան 166 շրջանավարտ: Մանկատանը հայտնվելիս շրջանավարտների 97%-ն ունեցել է առնվազն մեկ ծնող, ծնողների գերակշիռ մեծամասնությունը անօթևան, դեգրադացված մարդիկ են: Չնայած այն փաստին, որ մանկատանը երեխան ստանում է բավարար խնամք, մանկատնից դուրս գալուց հետո նա սովորաբար ունենում է սոցիալականացման դժվարություններ՝ պայմանավորված «մանկատան երեխա» ենթամշակույթի սուբյեկտիվ առանձնահատկություններով՝ ժառանգական լուսանցքայնացումը, երբ երեխան կրում է «ծնողներից ժառանգած» անբարենպաստի դրոշմը, ինքնուրույն կյանքի անցնելիս հոգեբանական պատնեշների հաղթահարման դժվարությունները[15]:

Առկա սոցիալական ծառայությունների և մասնավորապես նպաստների համակարգի ձևավորած դաշտում մանկատան շրջանավարտները սովորաբար միաժամանակ պատկանում են 2 կամ ավելի սոցիալական կատեգորիաների՝ իրականում չպատկանելով և ոչ մեկին: Դա սովորաբար առաջացնում է կորուսյալ, հուսահատ զգացումներ և սոցիալական ամորֆության դրսևորումներ: Այսպես, 53.7% ամուսնացած շահառուների մեծ մասը գերադասում է չգրանցել ամուսնությունը՝ կանանց պարագայում համարվելով միայնակ մայր՝ այս կամ այն սոցիալական ծառայությունից օգտվելու հնարավորությունը չկորցնելու նպատակով: Նույնիսկ եթե դա կրում է ձևական բնույթ, երևույթն ընդհանրացնում և խնդրի մեջ ներառում է ողջ ընտանիքը, և սոցիալական կատեգորիայի դրոշմը գամվում է ողջ ընտանիքի վրա: Ընտանիքը փորձում է ընդունել տվյալ սոցիալական կատեգորիայի կերպը, սկսում է վերարտադրել խնդիրը և այն փո-

[14]ՀՀ կառավարության 2003 թ. հոկտեմբերի 30-ի N 1419-Ն որոշում, http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=33931.

[15] Տե՛ս **Մնացականյան Ա.,** Հայաստանի մանկատները, Ե., 2014:

խանգել ժառանգաբար, և երեխան այդ դրոշմն ընկալում է որպես նորմ: Քանի որ բնակարանը մանկատան շրջանավարտին տրված է 10 տարի անհատույց օգտագործման իրավունքով, նա դուրս չի գալիս նաև այդ կատեգորիայից: Խնդիրների անլուծելիությունը հաճախ հանգեցնում է նրան, որ անհատը չի կարողանում դառնալ սոցիալական և ոչ մի աշխարհի լիարժեք մասնակից: Դա նպաստում է նրան, որ անհատն ստիպված է խաղալ տարբեր դերեր, որոնք հաճախ ներառում են իրար հակասող պահանջներ և պարտականություններ, որոնց (պահանջները) նա միաժամանակ չի կարող բավարարել: Բազմաթիվ են դեպքերը, երբ շրջանավարտը փորձում է դուրս գալ մեկ սոցիալական կատեգորիայից և չի մտնում մեկ այլ, օրինակ՝ տնտեսական կատեգորիա՝ օբյեկտիվ կամ սուբյեկտիվ պատճառներով: Մտահոգիչ է, օրինակ, շահառուների աշխատանքային ընթացիկ կարգավիճակը, քանի որ նրանց 31.8%-ը գործազուրկ է: Իսկ ինչ վերաբերում է զբաղվածներին, ապա նրանց 65%-ը ընդգրկված է ցածր որակավորում պահանջող, ժամանակավոր աշխատանքներում: Այնուամենայնիվ, ծրագրի շրջանակներում տրամադրված 166 բնակարաններում այսօր բնակվում է 459 անձ: Շրջանավարտների շուրջ 73%-ը կազմել է ընտանիք, որտեղ ծնվել է 211 երեխա, ընդ որում՝ երեխաների 78%-ը ծնվել է շրջանավարտներին բնակարանով ապահովվելուց հետո: Ընտանիքների 42%-ն ունի երկու երեխա, 17%-ը՝ 3 և ավելի: Բնակարանով չապահովված շրջանավարտների շրջանում ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նրանց ընդամենը 37%-ն է կազմել ընտանիք, 63%-ը չունի մշտական բնակության վայր, ապրում են որտեղ պատահի, իսկ 12%-ը վարում է անօթևան կյանք, 23%-ը մեկնել է արտերկիր՝ հավանաբար անվերադարձ: Այսպիսով, բնակարանով ապահովման բաղադրիչը կարելի է որոշ չափով համարել մանկատան շրջանավարտի անձնական խնդիրների ինդիկատոր և միաժամանակ սոցիալականացման դժվարությունների հաղթահարման ներքին հենակետ: ՀՀ կառավարությունը 2013-ին նոր միայն հաստատեց «Սոցիալական բնակարանային ֆոնդի ձևավորման ռազմավարական ծրագրին հավանություն տալու մասին» արձանագրային որոշումը[16]:

[16] ՀՀ կառավարության 2013 թ. օգոստոսի 1-ի N 894-Ն որոշում, http://www.arlis.am/documentview.aspx?docid=85281: ՀՀ կառավարության 2013թ. դեկտեմբերի 26-ի N 53 արձանագրային որոշում, http://www.irtek.am/views/act.aspx?aid=76710.

Ընտանիքի կարևորագույն գործառույթներից է սերունդների միջև կապի և ընտանեկան, նաև նյութական, մշակութային և այլ կապիտալի փոխանցումը հաջորդ սերունդներին: Արձանագրելով ժողովրդագրական անբարենպաստ զարգացումների համակարգային բնույթը՝ Կառավարությունն ստանձնեց ՀՀ ժողովրդագրական քաղաքականության ռազմավարության և դրա իրականացումն ապահովող միջոցառումների ծրագրի մշակման գործընթացը, որը և հաստատվեց 2009-ին: Ընդ որում, առաջարկվել էր ծրագիրը հաստատել 2009-2035 թթ. համար[17]: Այսպիսով, ՀՀ ժողովրդագրական քաղաքականության ռազմավարությունը հայտարարվեց որպես պետական քաղաքականության գերակայություն, ազգային-պետական անվտանգության ապահովման կարևորագույն տարր, իսկ ըն-տանիքը՝ պետական ժողովրդագրական քաղաքականության հիմնական սուբյեկտ: Տարածքային զարգացման անհամաչափության հետ կապված խնդիրների, ինչպես նաև միգրացիայի գործընթացների հաղթահարման համար միջոցառումների ցանկում որոշվեց ներառել նաև բնակարանային քաղաքականությանն ուղղված ինստիտուցիոնալ և կազմակերպական ռեսուրսների կենտրոնացումը:

Մանկատան շրջանավարտների ծրագրի շրջանակներում, օրինակ, 2005-2006 թթ. ձեռք բերված 166 բնակարանների շուրջ 45%-ը գտնվում է Երևանում և 19%-ը՝ Աբովյանում, որը չի համապատասխանում տարածքային համաչափ զարգացման սկզբունքներին:

Կառավարությունը 2012-2013 թթ. քննարկեց «Բազմազավակ ընտանիքների աջակցության և բազմազավակ մայրերի պետական խրախուսման մասին» ՀՀ օրենքի նախագիծը[18], որը տարբեր պատճառներով չհաստատվեց: 2014 թ. հաստատվեց երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը, ըստ որի՝ երրորդ և չորրորդ երեխաների դեպքում, 2014 թ. հունվարի 1-ին և դրանից հետո ծնվածները պետության կողմից կստանան 1 միլիոն դրամ նպաստ, իսկ հինգերորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծնվելու դեպքում՝ 1 մլն 500 հազար դրամ[19]: Անշուշտ, այս իրավական ակտի շնորհիվ 4 և 5 երեխա ունեցող ընտանիքների թիվն աճեց, սակայն այդ

[17] ՀՀ կառավարության 2009 թ. հուլիսի 2-ի N 27 արձանագրային որոշում, http://www.mlsa.am/forum/forum.php?sec=conference&forum_id=-2&topic_id=93.

[18] http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=4794&Reading=0.

[19] ՀՀ կառավարության 2014 թ. մարտի 6-ի N 275-Ն որոշում, http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=89331.

միտումն առավելապես նկատվում է դեգրադացված կատեգորիայի շրջանում, որոնց համար երեխա ունենալու փաստն առանձնապես հագեցած չէ երեխայի խնամքի պատասխանատվությամբ, սակայն գումարը վերարտադրման լուրջ շարժառիթ է: Մանկատան շրջանավարտների ծրագրի վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ նրանց ընտանիքներում երրորդ և չորրորդ երեխաների 17%-ը ծնվել է այս կարգի ընդունումից հետո:

2015 թ. դեկտեմբերին շրջանառության մեջ դրվեց «ՀՀ ընտանիքի պետական քաղաքականության հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը[20], որը ներառում է ընտանիքի պետական միասնական քաղաքականության ռազմավարական երկարաժամկետ նպատակներ, ինչպես նաև կարճաժամկետ խնդիրների համար մարտավարական մոտեցումներ: Սույն փաստաթղթի հիմնական ուղղությունները, այդ թվում՝ ընտանիքի ընդհանրական և առանձնահատուկ հիմնախնդիրների լուծման գերակայությունները, սահմանված են 2016-2090 թթ. ընկած ժամանակահատվածի համար:

Հայաստանում գործող սոցիալական ինստիտուտների նորօրյա մոտեցումները և մտածողությունը հանգեցնում են նրան, որ ընտանիքը չի դիտարկվում որպես ամբողջություն: Առանձին դասակարգվում են երեխաները, ընդ որում, ոչ թե որպես ընտանիքի որդի կամ դուստր, այլ ընդհանրապես երեխա, իսկ հիմնականում երեխա եզրույթն օգտագործվում է դժվարին իրավիճակում հայտնված, հաշմանդամ, առանց ծնողական խնամքի մնացած դասակարգմամբ:

Այսօր ՀՀ-ում սոցիալական ոլորտի բարեփոխումները, որոնք ուղղակիորեն պայմանավորված են հասարակական կյանքի բոլոր ասպարեզներում տեղի ունեցող գործընթացներով, չեն բխում հստակ մշակված սոցիալական քաղաքականությունից և կրում են առավելապես մարտավարական և ոչ ռազմավարական բնույթ: Իրականացվող սոցիալական քաղաքականությունը դեռևս հետխորհրդային է: Բովանդակային նոր մոտեցումներն ու մտածողությունը դեռևս սաղմնային փուլում են, իսկ առկա բացթողումները պայմանավորված են ՀՀ-ում հայեցակարգային միասնական մոտեցումների և սկզբունքների, տնտեսական իրական հնարավորությունների վրա հիմնված սոցիալական քաղաքականության միաս-

[20] http://www.mlsa.am/forum/forum.php?sec=conference&forum_id=-2&topic_id=808.

նական ռազմավարական ծրագրի բացակայությամբ: Եթե մարտավարական ծրագրերը չեն բխում ազգային գաղափարախոսության վրա հենված ռազմավարությունից, ապա այդ մեխանիզմը չի գործում կամ ունենում է ցածր օգտակար գործողության գործակից:

ОСОБЕННОСТИ СОЦИАЛИЗАЦИИ ВЫПУСКНИКОВ ДЕТСКИХ ДОМОВ В РА

МНАЦАКАНЯН А.М.

Резюме

Преобразования, имеющие место в социальном институте "семьи", связаны со многими политическими, правовыми, экономическими и культурными факторами.

Деятельность существующих социальных институтов в Армении заключается в том, что семья не рассматривается ими как единое целое. Реформы социального сектора не исходят из единой социальной политики и носят в основном тактический, но не стратегический характер. Социальную политику Армении можно охарактеризовать как постсоветскую, а это отнюдь не означает, что она является новой. Креативный подход и новое мышление все еще находятся в зачаточном состоянии, а имеющиеся пробелы обусловлены отсутствием единой стратегической линии в социальной политике РА, основанной на принципах согласованности с реальными экономическими возможностями.

SPECIFIC FEATURES OF SOCIALIZATION OF GRADUATES OF ORPHANAGES IN RA

A. MNATSAKANYAN

Abstract

Manifestations of the “orphanhood” phenomenon are conditioned by economic and socio-cultural environment of the given time, as well as by the

priorities established by the government. One should not deny that the orphanages reflect the transformations happening in the social institute of "family", which in their turn depend on complex and interrelated political, legal, economic and cultural factors.

The new approaches of existing social institutes in Armenia do not consider the family as a whole. The social sector reforms do not stem from integrated social policy and are mostly of tactical, but not strategical character. The social policy of Armenia can be characterized as post-Soviet, which in no way means that it is new. Essential approaches and new mentality are still in embryonic state and the gaps are due to the lack of integrated social policy strategic plan in Armenia – based on the principles of coherence with the real economic potentials.

ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴԻ ԲՆՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԱՊԱԳԱՅԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ Ս.Ժ.

ՄԱԿ-ի բնապահպանության և զարգացման հարցերով միջազգային հանձնաժողովի «Our Common Future» զեկույցում «կայուն զարգացում» եզրույթը մեկնաբանվում է որպես զարգացման մի ձև, որը բավարարում է ժամանակակից պահանջմունքները՝ միաժամանակ վտանգի մեջ չդնելով հաջորդ սերունդների կողմից իրենց իսկ սեփական պահանջմունքների բավարարման համար անհրաժեշտ ունակությունների առկայությունը[1]:

Հատկանշական է, որ ներկայումս գոյություն չունի «կայուն զարգացում» եզրույթի մեկ միասնական սահմանում, քանի որ այն պարունակում է մի շարք հակասություններ: Այսպես, օրինակ, հատուկ բառարաններում "sustainable"՝ **կայուն** բառը բնորոշվում է որպես գործընթացի կամ վիճակի այնպիսի նկարագիր, որը կարող է պահպանվել անորոշ երկար ժամանակով, իսկ "sustainable development" հասկացությունը նշանակում է **մարդու կենսապայմանների բարելավում** գործող էկոհամակարգերի անընդհատ ներգործության պայմաններում[2]:

Դրա հետ մեկտեղ, սակայն, գործնականում անհնար է համադրել ներկա և ապագա սերունդների պահանջմունքները, քանի որ հասարակական զարգացմանը զուգընթաց՝ վերջիններս անընդհատ փոփոխվում են, հետևաբար փոփոխվում են նաև դրանց բավարարման ձևերն ու միջոցները:

1972 թ. Ստոկհոլմում տեղի ունեցած ՄԱԿ-ի համաժողովում ընդունվեց «Միացյալ ազգերի շրջակա միջավայրի ծրագիրը» (UNEP)՝ շրջակա

---

[1] Our Common Future: Report of the World Commission on Environment & Development//World Commission on Environment and Development. Oxford Paperbacks, 1987.

[2] Англо-русский экономический словарь [Электронный ресурс]. Режим доступа: http://translate.academic.ru/sustainable%20development/en/ru/.

միջավայրի պաշտպանությանն ուղղված միջազգային ջանքերը համակարգելու համար: Հարկ է նշել, որ այն մտապատկերը, որը խթանեց միջազգային օրակարգում կայուն զարգացման հայեցակարգը, հիմնված էր աղքատության, անհավասարության և շրջակա միջավայրի դեգրադացիայի փոխադարձ կապերի վրա:

Ավելի ուշ՝ 1992 թ., Ռիո դե Ժանեյրոյում գումարվեց Շրջակա միջավայրի և զարգացման հարցերով ՄԱԿ-ի համաժողովը: Երկրի գագաթաժողովը (Earth Summit) նշում էր. «որպեսզի հասնել կայուն զարգացման, շրջակա միջավայրի պաշտպանությունը պետք է զարգացման գործընթացի անբաժան մասը կազմի և չի կարող դիտվել որպես առանձին մաս»:

«Կայուն զարգացման» հայեցակարգը միջազգային հանրությունը մշակել է աստիճանաբար: Այդ գործընթացում առանձնացվում են երեք հիմնական, սկզբունքորեն կարևոր բաղկացուցիչներ.

- տնտեսական աճ
- սոցիալական առաջընթաց
- շրջակա միջավայրի պահպանություն:

Սա նշանակում է, որ կայուն զարգացման գաղափարը ներառում է երեք կարևորագույն ուղղություն՝ տնտեսական, սոցիալական և էկոլոգիական, և այս եռամիասնության հաջող գործարկումը կնպաստի հասարակական առաջընթացին:

Կայուն զարգացման հիմքում ընկած է բավական պարզ գաղափար՝ մարդ-բնություն-հասարակություն ներդաշնակության ձեռքբերումը: Տնտեսական, սոցիալական, էկոլոգիական, ինստիտուցիոնալ և նորարարական-տեխնոլոգիական բաղադրիչների փոխկապվածությունը և հավասարակշռությունը հանուն հասարակական բարեկեցության հենց կայուն զարգացում են:

Կայուն զարգացման հասարակության կառուցումը ենթադրում է երկարատև, հաջորդական գործընթաց, մինչդեռ այսպիսի հասարակության մոդելավորումը տնտեսական մոդելների հետազոտության մեթոդաբանության հիման վրա հնարավոր է նաև այսօր: Սակայն ոչ մի տնտեսական մոդել, նաև «կայուն տնտեսական զարգացման» մոդելը, չի կարող տալ ներկա իրողության բացառիկ նկարագիրը: Դրա մշակումն անգամ ժամանակակից առաջադեմ հայեցակարգերի առկայության պայմաններում չի

կարող հաջողված համարվել համապատասխան տեսական գիտելիքների բացակայության պատճառով, որոնք կարտահայտեին հետազոտվող հասարակության օրինաչափ կապերն ու խորքային կառուցվածքները:

Ապագայի տնտեսության հետ կապված տեսական գիտելիքների անբավարարությունը պայմանավորված է մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով.

- ապագա սերունդների նյութական պահանջմունքների անորոշություն.
- համաշխարհային մեկ միասնական տնտեսական համակարգի բացակայություն.
- համաշխարհային տնտեսական համակարգը կարգավորող ինստիտուցիոնալ մեխանիզմների և կառուցվածքների բացակայություն, որոնք կարող էին ազդել տնտեսական զարգացման շարժունակության վրա.
- տնտեսական մտածողության առկա մակարդակի անհամապատասխանությունն արտադրության նոր ձևերին:

Քանի որ միջազգային համայնքում դեռևս բացակայում են համաշխարհային տնտեսական համակարգը կարգավորելու ունակ համապատասխան ինստիտուցիոնալ կառույցները, ներկա տնտեսական զարգացման շարժունակության վրա ներգործությունն իրականացվում է համաշխարհային շուկայի մասնակից ազգային տնտեսական համալիրների փոխազդեցության մակարդակում. այսինքն՝ տարածաշրջանային տնտեսական հավասարակշռության պայմաններում (օրինակ՝ Եվրոպական միությունը)[3]:

Կայուն զարգացման որակական և քանակական բնութագրերի վրա ուշադրություն սևեռելիս պետք չէ մոռանալ նրա նոր էական ցուցանիշների մասին: Այսպես, օրինակ, գիտելիքը՝ որպես նոր արտադրական ռեսուրս, ներդրվում է արտադրության մեջ՝ փոխակերպելով գործող ինստիտուտները, ձեռնարկատիրական գործունեության ձևերն ու մեխանիզմները: Եթե կապիտալիզմը զանգվածային արտադրության ժամանակաշրջան էր, ապա մարդու և գիտելիքի համացման սիներգիան կարող է արտահայտել ցանկացած անսպասելի ձևով:

Գիտելիքը՝ որպես արտադրական գործոն և նոր տնտեսության առանցքային արտադրական ուժ, ներկայումս հետազոտման փուլում է:

[3] **Jackson T.** Prosperity Without Growth (2009, pp. 79-81, http://www.sd-commission.org.uk/data/files/publications/prosperity_without_growth_report.pdf).

Գիտելիքն արտադրական ուժի վերածելը հանգեցնում է արտադրության դեռևս անհայտ ձևերի առաջացման: Որոշակի գիտելիքների տիրապետումը բացահայտում է յուրաքանչյուր անհատի ներուժը և մղում նրան ինչպես հասարակության, այնպես էլ մասնակցության համաշխարհային հանրության կյանքին:

Այսպիսով, բացի որակական և քանակական չափորոշիչներից, առկա են նաև կայուն զարգացման մի շարք այլ նշանակալի բնութագրեր[4].

- «գիտելիք» հասկացության սահմանումը հատուկ տեղ ունի արտադրական ուժերի համակարգում,
- գրանցվել է սեփականության և եկամուտների բաշխման հարաբերական հավասարակշռություն,
- համաշխարհային համակարգող մեխանիզմների ստեղծում,
- ազգային շահերի ենթակայությունը համաշխարհային շահերին,
- համաշխարհային տնտեսական մտածողության ձևավորում:

Առաջարկված դրույթները թույլ կտան զարգացնելու տնտեսության զարգացման հետարդյունաբերական մոդելների նկատմամբ մեթոդաբանական մոտեցումները և կորոշեն տնտեսական զարգացման վեկտորը, որին պետք է հետևեն դեպի կայուն տնտեսական զարգացումը կողմնորոշված երկրները: Արտադրության հետարդյունաբերական ձևի օրինաչափությունների ընկալումը հենվում է կայուն զարգացման գաղափարի վրա, այսինքն՝ կայուն զարգացումը կարելի է դիտարկել որպես զարգացման հետարդյունաբերական մոդելների հիմքում ընկած հայեցակարգ: Արտադրության արդյունաբերական ձևի գործարկման պայմաններում տվյալ մոդելի իրականացումը գործնականում անհնար է այն պատճառով, որ արտադրական ուժերի գոյություն ունեցող մակարդակը և արտադրության գործող ձևը թույլ չեն տա հասնել դրված նպատակներին:

Գիտելիքի վերածումն արտադրական գործոնի պահանջում է նրա ստեղծման, բաշխման, կուտակման և սպառման ձևերի ուսումնասիրություն: Գիտելիքը համաշխարհային հանրային բարիք է, որի նկատմամբ

[4] **Перелет Р.А.** Выявление показателей устойчивого развития (Проблемы окружающей среды и природных ресурсов, ВИНИТИ, 1995, № 6).

դեռևս ստեղծված չէ իրավական, կազմակերպական-ինստիտուցիոնալ և տնտեսական կարգ[5]:

Կայուն զարգացման գաղափարը հնարավոր է արդյունավետորեն գործարկել համաշխարհային մեկ տնտեսական համակարգի առկայության պայմաններում, որի ուրվագծերը դեռ նոր-նոր են սկսել երևալ, անհրաժեշտ է նոր տնտեսական մտածողություն: Նորագույն տեխնոլոգիաներն ունեն համաշխարհայնության բնութագրեր, որոնք, իրենց հերթին, կարող են ազդել արտադրա-տնտեսական հարաբերությունների համաշխարհայնացման վրա:

Ինչ վերաբերում է նոր սերնդի բնապահպանական տեխնոլոգիաների կիրառմանը, ապա հարկ է նշել, որ դա չի կարող ազդել մոլորակի էկոհամակարգի վրա: Սա նշանակում է, որ բնապահպանական հիմնախնդիրներն ազգային մակարդակից պետք է փոխանցվեն համաշխարհային մակարդակ, որի հետևանքով պետք է ստեղծվի բնապահպանական անվտանգության մեկ միասնական, համաշխարհային համակարգ, առանց որի հնարավոր չէ հետագա տեխնոլոգիական զարգացումը:

ՄԱԿ-ը 2015 թվականին ամփոփեց իր հռչակած Հազարամյակի զարգացման նպատակների ծրագիրը, որը մեկնարկել էր 2000-ին: Զգալի առաջընթաց արձանագրելով՝ դրանց իրականացմանը ձեռնամուխ է եղել նաև Հայաստանը: Մասնավորապես, վերջինս Հազարամյակի զարգացման նպատակների ծրագրին միացած մյուս պետությունների պես խոստացել էր մինչև 2015 թ. իրագործել հետևյալ 8 տեղայնացված նպատակները[6].

1. Ծայրահեղ աղքատության և սովի վերացում:
2. Տարրական ընդհանուր կրթության ապահովում:
3. Գենդերային հավասարության խթանում և կանանց լիազորությունների ընդլայնում:
4. Երեխաների մահացության նվազեցում: Երկու երրորդով կրճատել մինչև 5 տարեկան երեխաների մահացության մակարդակը:
5. Մայրական առողջության բարելավում: Երեք քառորդով կրճատել մայրական մահացության մակարդակը:
6. Պայքար ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, մալարիայի և այլ հիվանդությունների դեմ:

[5] **Трофимова В.В., Кобзева Н.А., Сабаев А.А.** Проблемы и перспективы реализации модели устойчивого развития (Молодой ученый, 2015, № 12, с. 509-510).

[6] ՄԱԿ-Հայաստան, http://www.un.am/hy/p/mdgs-and-armenia.

7. Շրջակա միջավայրի պահպանության ապահովում:

8. Զարգացման նպատակով համաշխարհային համագործակցության ձևավորում:

2012 թ. կայացել էր «Ռիո+20» կայուն զարգացման գագաթնաժողովը, որն ընդունել է «Ապագան, որ մենք ուզում ենք» եզրափակիչ փաստաթուղթը՝ հիմք դնելով Կայուն զարգացման նպատակներին (ԿԶՆ) և այս ամենի ընդգրկմամբ մի նոր համապարփակ փաստաթղթի նախապատրաստմանը: Բանակցային երկար գործընթացի հետևանքով փաստաթուղթը ներառել է Կայուն զարգացման նպատակները, դրանց իրականացման եղանակներն ու միջոցները, ընդհանուր առմամբ՝ 17 նպատակ ու 169 թիրախ:

2000 թ. մեկնարկած Հազարամյակի զարգացման նպատակների ծրագիրը 2015 թ. մոտեցավ ավարտին: Արձանագրելով նպատակների հաջողությունը՝ երկրները 2012 թ. կայացած «Ռիո+20» համաժողովում համաձայնեցին աշխատանքային խումբ ստեղծել, որը կկազմի կայուն զարգացման նպատակները: Մեկ տարվա աշխատանքից հետո Բաց աշխատանքային խումբը ներկայացրեց 17 նպատակից կազմված ցանկ: 2015 թ. օգոստոսի սկզբին ՄԱԿ-ի 193 անդամները փաստաթղթի շուրջ համաձայնության եկան, որն էլ հաջորդիվ ընդունվեց սեպտեմբերի 25-27-ը Նյու Յորքում կայացած Գլխավոր վեհաժողովի շրջանակում:

Ամփոփելով Հազարամյակի զարգացման ութ նպատակների կատարողականը՝ ՄԱԿ-ի անդամ պետությունները, որոնց թվում է նաև Հայաստանը, ձեռնամուխ են եղել ավելի հավակնոտ և ընդգրկուն՝ Կայուն զարգացման նպատակների ծրագրի իրականացմանը, որի մեկնարկը տրվեց սեպտեմբերի 25-ին:

ՄԱԿ-ի անդամ 193 պետություն համաձայնության եկան մեկ ընդհանուր փաստաթղթի շուրջ, որի խորագիրն է՝ «Փոխակերպելով աշխարհը. 2030 թ. Կայուն զարգացման օրակարգ: Այն 17 նպատակ և 169 թիրախ է ընդգրկում, 17 նպատակները հետևյալն են. աշխարհին առանց աղքատության, աշխարհին առանց սովի, առողջ ապրելակերպ, որակյալ ուսում, կանանց ու տղամարդկանց իրավունքների հավասարություն, մաքուր ջրի և կոյուղու հասանելիություն, էներգիայի վերականգնվող աղբյուրներ, աշխատատեղեր և տնտեսական աճ, նորարարություններ ու ենթակառուցվածք, աշխարհին առանց անհավասարության, քաղաքների անվտանգու-

թյուն և մատչելի բնակարան, խելամիտ սպառում, կլիմայի փոփոխության դեմ պայքար, ջրային ռեսուրսների պահպանում, ցամաքում էկոհամակարգի պահպանություն, խաղաղություն և օրենքի գերակայություն, նպատակների համատեղ իրագործում:

Աշխարհի առաջնորդները սեպտեմբերի 25-ին պաշտոնապես հաստատեցին այս օրակարգը. ըստ այդմ՝ աշխարհում պետք է վերջ դրվի աղքատությանը, ու հաջորդ 15 տարվա ընթացքում ավելի կայուն հասարակություն կառուցվի: Օրակարգի հիմքում Հազարամյակի զարգացման նպատակներն են, որոնք հաստատվել էին 2000 թվականին, և որոնցով առաջնորդվում էին վերջին 15 տարվա ընթացքում: Դրանք հաստատեցին, որ գլոբալ նպատակները կարող են լուծել միլիոնավոր մարդկանց աղքատության խնդիրը:

Նոր թիրախները կայուն զարգացման հավակնոտ օրակարգի մաս են կազմում, որը հիմնված է լինելու կայուն զարգացման 3 փոխկապակցված տարրի վրա՝ տնտեսական աճ, սոցիալական ինտեգրում և շրջակա միջավայրի պահպանություն: Կայուն զարգացման նպատակները գլոբալ բնույթ են կրում և կիրառվում են ամենուրեք, հաշվի առնելով ազգային առանձնահատկությունները, ներուժն ու զարգացման մակարդակը, ինչպես նաև ազգային ռազմավարությունն ու գերակայությունները: Դրանք անկախ չեն իրարից և պետք է իրագործվեն համալիր մոտեցման հիման վրա: Այդ նպատակները 3 տարվա աշխատանքի արդյունք են, որը ներառում է ինչպես շահագրգիռ կողմերի, այնպես էլ մարդկանց կարծիքը: Սա աննախադեպ համաձայնություն է կայուն զարգացման գերակայությունների վերաբերյալ ՄԱԿ-ի անդամ 193 երկրների միջև, որի դրույթները հավանության են արժանացել քաղաքացիական հասարակության, գործարարների, խորհրդարանականների և այլ շահագրգիռ դերակատարների կողմից[7]:

[7] http://www.panarmenian.net/arm/details/200866/.

СОВРЕМЕННЫЕ ХАРАКТЕРИСТИКИ УСТОЙЧИВОГО РАЗВИТИЯ И ПУТИ ФОРМИРОВАНИЯ ЭКОНОМИКИ БУДУЩЕГО

ЕГИАЗАРЯН С.Ж.

Резюме

Идея устойчивого развития как концепт, указывающий на уникальную траекторию формирования и развития современного общества, сейчас более важна в плане рассмотрения как в научно-академических кругах, так и со стороны общественности. Определяя концепцию «устойчивого развития», следует выделить все ее особенности: экономический рост, социальный прогресс, преодоление экологических вызовов, которые, прежде всего, связаны с удовлетворением человеческих потребностей и, в конечном счете, с улучшением условий жизни общества. Реализация концепции устойчивого развития, как правило, ведет к формированию будущей экономики, в которой экономические, социальные и экологические составляющие образуют новое общество, действуя в соответствии с требованиями современной экономики.

MODERN CHARACTERISTICS OF SUSTAINABLE DEVELOPMENT AND WAYS FOR FORMATION OF THE FUTURE ECONOMY

S. YEGHIAZARYAN

Abstract

The idea of sustainable development, as a concept, expressing the unique trajectory of formation and development of the modern society, is now more important in scientific and social circles. The concept of "sustainable development", which we have set out to emphasize, is an economic and social progress, the ecological challenges of which, in the long run, are connected with human-to-human needs and, in the ever-present, with prosperity of society. Realization of the concept of sustainable development, as a rule, shapes the future of the economy, the economic, social and environmental components of the new society, in accordance with requirements of the modern economy.

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Ա.Ռ.

Շուկայական տնտեսության պայմաններում պետության տնտեսական գործառույթները մեծապես պայմանավորված են աշխատանքի շուկայի անկատարությամբ կամ սահմանափակումներով: Պետության դերը կարևորվում է հատկապես բնակչության զբաղվածության արդյունավետ կառավարման բնագավառում: Սոցիալական կառավարման տեսանկյունից մեծ նշանակություն ունի աշխատանքի շուկայի ուսումնասիրությունը, քանի որ էական է դրա ազդեցությունը մակրոտնտեսական հավասարակշռություն ստեղծելու գործում:

Գործազրկության հիմնախնդիրը արդեն մի քանի հարյուրամյակ է, ինչ գտնվում է գիտական տարբեր ուղղությունների և դպրոցների ներկայացուցիչների ուշադրության կենտրոնում: Թեպետ Ա. Սմիթը, Դ. Ռիկարդոն, Ա. Մարշալը, Կ. Մարքսը, Ջ. Մ. Քեյնսը, Յ. Հայեկը, Մ. Ֆրիդմենը և այլ գիտնականներ գործազրկության էությունը և պատճառները դիտարկել են տարբեր տեսանկյուններից, այդուհանդերձ, նրանք բոլորն էլ նշել են, որ զբաղվածության պետական կարգավորումը ուղղակի անհրաժեշտություն է:

Զբաղվածության պետական կարգավորման անհրաժեշտությունն առավել զգալի է անցումային տնտեսություն ունեցող երկրներում, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում: Դա հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ անցումային երկրների տնտեսական համակարգերին ընդհանրապես հատուկ է աշխատանքի շուկայի քանակական և որակական քրոնիկ անհավասարակշռությունը: Աշխատանքի շուկան տնտեսության առավել բարդ բաղադրիչներից է: Այստեղ են բախվում գործատուների և վարձու աշխատողների շահերը, այստեղ են ձևավոր-

վում բնակչության հիմնական եկամուտները, կենսամակարդակը բնորոշող տարրերը, որոնք էլ արտացոլում են հասարակության սոցիալական վիճակը: Ուստի պետության մասնակցությունը զբաղվածության կարգավորման ոլորտում խիստ անհրաժեշտ է: Ըստ էության, աշխատանքի շուկայում արտացոլվում են նաև պետության շահերը, քանի որ բնակչության զբաղվածության ապահովումը պետության տնտեսական քաղաքականության նպատակներից է: Դրանով հանդերձ, պետական կարգավորումը չպետք է ճնշի շուկային և խոչընդոտի դրա ինքնակարգավորմանը:

Հայաստանի տնտեսության կառուցվածքային վերափոխումները չէին կարող չազդել բնակչության զբաղվածության և կենսամակարդակի կըտրուկ անկման վրա, ինչի հետևանքով էլ մեծացավ աշխատուժի առաջարկի և պահանջարկի միջև եղած անհավասարակշռությունը, էականորեն փոխվեց զբաղվածության ճյուղային կառուցվածքը, արագորեն ընդլայնվեց և ամրապնդվեց թաքնված զբաղվածությունը, դրան համարժեք աճեցին ինքնազբաղվածությունն ու չգրանցված գործազրկությունը: Հանրապետության աշխատանքի շուկայում ձևավորվեց լարված մթնոլորտ, ինչը նպաստեց բնակչության հոծ խմբերի գործազրկության աճին, նրա համատարած աղքատացմանը, եկամուտների անահավասարությանն ու հասարակության տագնապալի չափերի հասնող բևեռացմանը[1]: Այդ ամենի հետևանքով մեծացավ աշխատանքի շուկան բնութագրող չափորոշիչների բացասական ազդեցությունը գործազրկության մակարդակի, հաճախականության և տևողության բարձրացման վրա: Նշված բացասական միտումները զուգակցվել են զբաղվածության պետական պասիվ քաղաքականությամբ:

Տնտեսության վերափոխումները, սեփականության զանգվածային մասնավորեցումը, տնտեսական-իրավական անկայուն դաշտը, հաճախ չհիմնավորված տնտեսական քաղաքականությունը և այլ գործոններ բազմաթիվ ձեռնարկությունների փակվելու կամ թերբեռնված գործելու պատճառ դարձան: Աշխատողների գերակշիռ մասն ընկավ հարկադիր պարապուրդների մեջ: Աճեց լատենտային գործազրկությունը: Աննշան աշխատավարձը և անարդյունավետ զբաղվածությունը փոխհատուցվում էին պե-

[1] **Ստեփանյան Կ.Կ.,** Աշխատանքի շուկան որպես ՀՀ սոցիալ-տնտեսական հարաբերությունների զարգացման կարևորագույն գործոն (ՀՀ ԳԱԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 2006, № 2, էջ 70):

տության թույլտվությամբ անլեգալ զբաղվածության և աշխատանքի սև շուկայում ձեռներեցությամբ զբաղվելու հնարավորությամբ:

Այդուհանդերձ, սկսած 1990-ական թթ. կեսերից, Հայաստանը ևս դարձավ արագ զարգացող անցումային երկրներից մեկը: Շուկայական ուղղվածություն ունեցող բարեփոխումների հետևողական իրականացման շնորհիվ 1994-2001 թթ. ընթացքում գրանցվեց համեստ, բայց կայուն տնտեսական աճ (միջինը՝ տարեկան 5%), 2002-2007 թթ. ընթացքում տնտեսական աճը եղել է երկնիշ, սակայն համաշխարհային տնտեսական ճգնաժամը հարվածեց նաև մեր երկրի տնտեսությանը: Տնտեսական անկման ազդեցությունը սկսեց զգացվել 2008 թ. չորրորդ եռամսյակից, երբ տարեկան ՀՆԱ-ի աճը կազմեց 6.9%, 2007 թ. 13.7% երկնիշ աճի փոխարեն: 2009 թ. գրանցվեց իրական ՀՆԱ-ի 14.1% անկում, որին հաջորդեց դանդաղ վերականգնում, սկսած 2010 թ. (2010 թ. ՀՆԱ հավելաճը նախորդ տարվա համեմատ կազմել է 2.2%, 2011 թ.՝ 4.7%): Բավական զգալի էր 2012 թ. ՀՆԱ-ի աճը՝ 7.2%, սակայն դա դեռևս բավարար չէր հասնելու 2008 թ. մակարդակին: 2013 թ. տնտեսության զարգացման միտումները շարունակվում էին, սակայն նախորդ տարվա համեմատ ավելի դանդաղ տեմպերով՝ հիմնականում պայմանավորված շինարարության ոլորտում գործունեության վատթարացմամբ: 2014 թ., չնայած տարվա առաջին երեք եռամսյակներին տնտեսական աճը արագացման միտումներ էր դրսևորել, սակայն տարեվերջին դրա տեմպը դանդաղեց, և տարեկան աճը կազմեց 3.6%: 2015 թ. տնտեսական աճը նախորդ տարվա համեմատ նվազել է 0.6 տոկոսային կետով՝ կազմելով 3%: 2015 թ. տնտեսական իրավիճակը մեծապես կրում էր արտաքին պահանջարկի աճի տեմպերի նվազման, Ռուսաստանից ներհոսող դրամական փոխանցումների կրճատման հետևանքով տնօրինվող եկամտի աճի տեմպերի դանդաղելու ազդեցությունը[2]: 2016 թ. տնտեսական աճը կազմել է 0.4%[3]: Այն պետք է հանգեցներ գործազրկության նվազման, սակայն տեղի է ունեցել հակառակ երևույթը. Այսպես թե այնպես ցածր տնտեսական աճի պայմաններում ավելանում է գործազրկությունը: Պատճառն այն է, որ տնտեսության ակտիվությունը պայմանավորված է սահմանափակ ոլորտներում տեղի ունեցող զարգացումներով: Խոսքն առաջին հերթին վերաբերում է գյուղատնտեսությանը,

[2]Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, ՀՀ ԱՎԾ, Ե., 2016, էջ 30:
[3]Տե'ս http://www.armstat.am/am?nid=126&id=01001.

որտեղ տնտեսական աճը հիմնականում քիչ կապ ունի զբաղվածության ավելացման հետ: Արդյունաբերության մեջ տնտեսական ակտիվություն է գրանցվել հանքարդյունաբերության, ծխախոտի արտադրության և որոշ այլ ոլորտներում: Բայց դրանցում աշխատատեղերի ավելացումը բավարար չի եղել այլ ոլորտներում արձանագրված կրճատումները չեզոքացնելու համար:

Անկախացումից ի վեր Հայաստանում աշխատանքի շուկան խոր փոփոխություններ է կրել՝ կապված 1990-ական թթ. սկզբին տնտեսության համակարգային ճգնաժամի, տնտեսական և սոցիալական բարեփոխումների և ավելի քան մեկ տասնամյակ տևած տնտեսական աճի հետ. 1990-ականների կեսերից մինչև 2008 թ., երբ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցության տակ սկզբում նվազեցին, ապա բացասական դարձան տնտեսական աճի տեմպերը, իրական գործազրկության մակարդակը կայուն տեմպերով պահպանվեց երկնիշ մակարդակի վրա:

2009 թ. անկումից հետո տնտեսության աճը Հայաստանում աստիճանաբար վերսկսվեց, սակայն այն դեռևս չի հասել նախաճգնաժամային մակարդակին[4]: 2000-ականների բարձր տնտեսական աճը չհանգեցրեց զբաղվածության զգալի ընդլայնման, քանի որ առավելապես պայմանավորված էր արտադրողականության աճով և տնտեսությունում տեղի ունեցող կառուցվածքային փոփոխություններով: Մասնավորապես, շեշտակի աճեց շինարարության ոլորտի կշիռը, սակայն այդտեղ զբաղվածության աճը տեղի ունեցավ արդյունաբերությունում զբաղվածների թվի կրճատման հետևանքով[5]:

Այսօր ՀՀ աշխատաշուկան դեռևս գտնվում է կայացման փուլում, շուկան հավասարակշռված չէ և բնորոշվում է անցումային տնտեսության առանձնահատկություններով: Այն դեռևս գտնվում է տեղեկատվական անհամաչափությունների էական ազդեցության տակ, որի հետևանքով առա-

[4] Ճգնաժամի ազդեցությունը աղքատության կրճատման և ընդհանուր բարեկեցության գործընթացի վրա, համաշխարհային բանկի խումբ, 2015, էջ 5 (https://openknowledge.wordbank.org/bitstream/handle/10986/23699/101680Armenian.pdf?sequence=4&isAllowed=y):

[5] Հայաստանի Հանրապետության 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր, հավելված ՀՀ կառավարության 2014 թ. մարտի 27-ի N 442-Ն որոշման, էջ 74:

ջարկի և պահանջարկի միջև մեծ ճեղքվածք է առաջանում: Աշխատաշուկայում առկա տեղեկատվական անհամաչափությունները հիմնականում ի հայտ են գալիս այն պատճառով, որ գործատուների և աշխատուժի միջև բացակայում է այն կապող օղակը, որը կարող է խթան դառնալ պահանջարկված և նպատակային առաջարկի ձևավորման համար:

Հիմնական խնդիրները, որոնք խոչընդոտում են հայկական աշխատաշուկայի զարգացումը, ներառում են.

. բարձր գործազրկությունը և ուղեղների արտահոսքը,
. աշխատուժի ցածր գինը,
. աշխատուժի առաջարկի որակական անհամապատասխանությունը արդի տնտեսության պահանջներին,
. տնտեսության զարգացման կառուցվածքային և տարածքային անհամամասնությունները, այդ թվում՝ գյուղական շրջաններում բնակչության թերզբաղվածությունը և ոչ գյուղատնտեսական զբաղվածության ցածր մակարդակը, ստվերային զբաղվածությունը,
. եկամուտների անհավասարությունը և աղքատությունը,
. աշխատաշուկայի ենթակառուցվածքների թույլ զարգացումը,
. թույլ արհմիությունները,
. ինստիտուցիոնալ միջավայրի թերությունները[6]:

Աշխատաշուկայի ձևավորված ինստիտուցիոնալ միջավայրը, որտեղ գործում են չգրված կանոնները և բանավոր պայմանավորվածությունները, նպաստում է աշխատավարձի ցածր մակարդակի սահմանմանը, աշխատողների շահագործմանը և գործատուների հաճախակի չարաշահումներին: Նման միջավայրը շահեկան չէ աշխատաշուկայի հիմնական սուբյեկտների միջև վստահության ամրապնդման, ներքին շուկաների զարգացման համար, այն զգալիորեն իջեցնում է աշխատաշուկայի սուբյեկտների վարկանիշը, արտացոլում գործատուների և աշխատողների ոչ հավասար մրցակցային հնարավորությունները:

Աշխատանքի հայկական շուկայի առանձնահատկություններից է նաև այն, որ գործատուների և աշխատողների մի զգալի մասը զբաղված է գործունեության ստվերային ոլորտում: Տնտեսագիտական գրականության մեջ «ստվերային տնտեսություն» կամ «ոչ ֆորմալ զբաղվածություն» հասկացությունների տարբեր բնորոշումներ կան: Առավել ընդունված է այն բնո-

[6] **Մելքումյան Ա.Ս.,** Աշխատանքի շուկա, Ե., 2017, էջ 107:

րոշումը, համաձայն որի, ստվերային տնտեսությունը չգրանցված տնտեսական գործունեությունն է, որն ընդգրկում է վիճակագրության կողմից հաշվի չառնված և չհարկվող, ինչպես նաև հակաօրինական, թաքցվող տնտեսական գործունեությունը:

Ըստ տնային տնտեսություններում աշխատուժի ընտրանքային հետազոտության արդյունքների, ՀՀ-ում 2015 թ. զբաղվածների գրեթե 48%-ը տնտեսական գործունեությունն իրականացրել է բացառապես տնտեսության ոչ ֆորմալ հատվածում, որտեղ զբաղվածությունը կազմել է շուրջ 526 հազար մարդ. դրանց գերակշիռ մասը՝ 76%-ը զբաղված էր գյուղատնտեսական, իսկ 24%-ը՝ ոչ գյուղատնտեսական գործունեությամբ[7]:

Գծապատկեր 1



Ոչ ֆորմալ զբաղվածության մակարդակը ՀՀ-ում 2011-2015 թթ.

Փաստորեն, չգրանցված աշխատողները աշխատում են բանավոր պայմանավորվածությամբ, ինչն արհեստականորեն կրճատում է աշխատավարձի ֆոնդը և համապատասխան սոցիալական վճարումները, սակայն ստվերային զբաղվածության առավելություններից է գործազրկության հետ կապված սոցիալական լարվածության նվազումը:

Չնայած վերջին տարիների որոշակի բարելավման միտումներին, աշխատանքի շուկայում դեռևս առկա են պահանջարկի և առաջարկի միջև ծավալային և կառուցվածքային անհամապատասխանություններ:

[7] Աշխատանքի շուկան Հայաստանի հանրապետությունում, 2011-2015, ՀՀ ԱՎԾ, Ե., 2016, էջ 82:

ՀՀ աշխատաշուկայում կայուն անհավասարակշռության հաղթահարումը պահանջում է օրենսդրական, ինստիտուցիոնալ և գործառնական համալիր բարեփոխումներ հետևյալ ուղղություններով՝ օրենսդրության օպտիմալություն, կրթության և զբաղվածության պետական քաղաքականություն, մակրոտնտեսական քաղաքականություն:

Օրենսդրության օպտիմալության հարցը կապվում է աշխատաշուկայի, վարձատրության ու զբաղվածության օրենսդրության հավասարակշռության ապահովման հետ:

Կրթության և զբաղվածության քաղաքականության առումով կարևոր խնդիր է ՀՀ կառավարության մակրոտնտեսական քաղաքականության հարթեցումը զբաղվածության և վարձատրության քաղաքականության հետ: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է փոխգործակցությունը այս քաղաքականությունների մշակման և իրացման աշխատանքներում[8]: Մեր կարծիքով, էական է նաև բուհ-աշխատաշուկա անմիջական կապի ամրապնդումը և որոշակի միջոցառումների նախատեսումը այս առումով: Այս պայմաններում էապես կարևորվում են զբաղվածության պետական կարգավորումը և բարեփոխումների շարունակական անհրաժեշտությունը:

Տնտեսապես զարգացած և զարգացող երկրների շուկայական տնտեսությունների տարբերությունները բերում են շուկաների կարգավորման գործառույթների և քաղաքականությունների տարբերակման: Բացառություն չէ նաև գործազրկությունը: Այսպես, եթե տնտեսական բարձր զարգացում ունեցող երկրներում գործազրկությունը հիմնականում պայմանավորված է շուկայում պահանջարկի կառուցվածքային փոփոխություններով՝ կապված ԳՏԱ-ի հետ, ապա անցումային երկրներում, այդ թվում նաև ՀՀ-ում, գործազրկությունը տնտեսության անկման և տնտեսական ճգնաժամի արդյունք է: Եթե զարգացած երկրներում ապրանքների և ծառայությունների շուկաները հագեցած են, և չափազանց դժվար է արտադրության ոլորտում նոր աշխատատեղեր ստեղծելը, ապա անցումային տնտեսություններում այդ առումով մեծ հնարավորություններ կան. անհրաժեշտ է միայն ստեղծել այնպիսի արտադրություններ, որոնք կկարողանան մրցապայքարի մեջ մտնել այն ֆիրմաների հետ, որոնք արդեն ներթափանցել են երկրի ներքին շուկա: Այս տեսակետից կարևոր է հան-

[8] Հետազոտություն գործատուների շրջանում՝ ըստ տնտեսության ճյուղերի, Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ, 2016, Ե., էջ 6:

րապետությունում փակ պարբերաշրջանային արտադրությունների ստեղծումը: Քանի որ Հայաստանը հումքային ռեսուրսներով աղքատ երկիր է, ուստի այստեղ զարգանում են ավանդական այնպիսի ճյուղեր, որոնց համար նպաստավոր պայմաններ կան՝ սննդի, թեթև արդյունաբերություն, բարձր տեխնոլոգիաների արտադրություն, թանկարժեք քարերի մշակում: Օրինակ, սննդի վերամշակող ձեռնարկությունների զարգացումը խթանում է նաև գյուղատնտեսության զարգացումը, որն, իր հերթին, ստեղծում է նոր աշխատատեղեր:

Զբաղվածության պետական կարգավորման տեսանկյունից անհրաժեշտ է նաև վերափոխել մարդկանց հոգեբանությունը: Այսպես, տնտեսության անցումային փուլում խիստ կարևոր է ճկուն մեղմացուցիչ համակարգի ստեղծումը, որը որոշակիորեն կթեթևացնի ճգնաժամային անկման, արտադրությունների վերակառուցման և արդիականացման հետևանքները: Խոսքը վերաբերում է փոքր և միջին գործարարության, ինչպես նաև ինքնազբաղվածության խթանման, հեռանկարային աշխատատեղերի պահպանման ու նորերի ստեղծման հարցում պետության աջակցությանը, հասարակական աշխատանքների ընդլայնմանը, դրա հայեցակարգի փոփոխմանը: Սրանք կհանգեցնեն աշխատանքի առաջարկի և պահանջարկի որոշակի հաշվեկշռվածության: Բացի այդ, պետական կարգավորումը պետք է ուղղված լինի մրցունակ քաղաքացիների ձևավորմանը, որոնք համապատասխանելով գործատուների կողմից ներկայացվող պահանջներին՝ կկարողանան դիմակայել շուկայական պայմաններին: Այստեղ կարևոր է վերափոխել մարդկանց հոգեբանությունը, որպեսզի նրանք պետության կողմից նվազագույն սոցիալական օգնություն հայցողներից վերածվեն աշխատանքային ոլորտում ակտիվ գործունեություն ծավալողների:

Զբաղվածության պետական կարգավորումը խիստ անհրաժեշտ է նաև այն տեսանկյունից, որ լուծում է մի շարք այլ խնդիրներ, մասնավորապես, աղքատությունը, արտագաղթը, ծնելիության և ամուսնությունների թվի նվազումը, հանցագործությունների քանակի աճը, գնողունակ պահանջարկի նվազումը, խնայողությունների, ինչպես նաև առաջարկի կրճատումը, արտադրության անկումը, անմրցունակ խավերի պաշտպանությունը և այլն:

Գործազրկության կրճատման քաղաքականությունը պետք է նպատակաուղղված լինի հատկապես երիտասարդների գործազրկության խնդիրների լուծմանը:

Գծապատկեր 2



Երիտասարդների թիվը զբաղվածների ընդհանուր թվաքանակում, հազար մարդ

Համաձայն ԱՎԾ-ի տվյալների՝ 2016 թ. Հայաստանի Հանրապետությունում աշխատուժի առաջարկի 77%-ը կազմել են 30 և ավելի տարիք ունեցող անձինք, իսկ 16-29 տարեկանները աշխատուժի ընդհանուր առաջարկում կազմել են 23%:

Զբաղվածների ընդհանուր թվաքանակում մինչև 2015 թ. երիտասարդների թվի տատանումները աննշան էին: 2016 թ. զբաղվածների մեջ երիտասարդների մասնաբաժինը նախորդ տարվա համեմատ նվազել է մոտ 16%-ով:

Սա կարևոր է հատկապես ցածր ծնելիության և արտագաղթի պայմաններում: Երիտասարդ և միջին տարիքի բարձր որակավորում ունեցող գործազուրկների համար անհրաժեշտ է մշակել և իրականացնել զբաղվածության առավել արդյունավետ ակտիվ ծրագրեր՝ ուղղված թափուր և բարձր որակավորում պահանջող աշխատատեղերի մասին տեղեկատվության ապահովմանը, վերապատրաստմանը, փոքր ու միջին գործարարության ստեղծմանը, սուբսիդավորվող և տնային պայմաններում համակարգչային միջոցների կիրառմամբ աշխատատեղերի ստեղծմանը և այլն:

Անհրաժեշտ է կանխարգելել երիտասարդ ուղեղների արտահոսքը, մասնավորապես՝ բարձր վարձատրվող, բարձրորակ երիտասարդ մասնագետների համար՝ նրանց տրամադրելով արտոնություններ:

Այսպիսով, տնտեսության ընթացիկ և հեռանկարային զարգացման մակարդակից անկախ՝ զբաղվածության կարգավորումը համարվում է երկրի սոցիալ-տնտեսական կայունության ապահովման առաջնահերթ ուղղություններից: Զբաղվածության պետական կարգավորումն ունի օբյեկտիվ անհրաժեշտություն, դրա առանցքային ուղղություններն են՝ առաջարկի և պահանջարկի հավասարակշռության ապահովումը, աշխատաշուկայի տարածքային կառավարման մեթոդների և գործիքակազմի կատարելագործումը, անմրցունակ անձանց զբաղվածության ապահովումը, կանանց զբաղվածության աճը, առաջին անգամ աշխատաշուկա մուտք գործող երիտասարդների՝ աշխատանքի տեղավորման հնարավորությունների ընդլայնումը, պետական-մասնավոր հատվածների գործընկերային և փոխշահավետ համագործակցության ընդլայնումը, ոչ ֆորմալ զբաղվածության կրճատումը:

ПРОБЛЕМЫ ГОСУДАРСТВЕННОГО РЕГУЛИРОВАНИЯ ЗАНЯТОСТИ НАСЕЛЕНИЯ РА

ОГАНЕСЯН А.Р.

Резюме

В условиях рыночной экономики роль государства становится более значимой особенно в области эффективного управления занятостью населения. Независимо от текущего и перспективного уровня развития экономики, государственное регулирование занятости населения считается одним из первоочередных направлений обеспечения социально-экономической стабильности страны, эффективность которого обусловлена наличием целенаправленного балансирования приоритетных отраслей и сфер экономики, а также рынка труда.

STATE REGULATION OF POPULATION EMPLOYMENT PROBLEMS IN THE RA

A. HOVHANNISYAN

Abstract

In a Market economy, the role of the state becomes more important, especially during effective management of employment. Besides the current and prospective development of economy, state regulation of employment is considered one of the major directions of the country's socio-economic stability, the effectiveness of which is determined in the priority sectors and spheres of economy, as well as in targeting equilibrium of the labour market.

ԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՓՈԽԿԱՊՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

ԳՐԻԳՈՐՅԱՆ Կ.Հ., ԳԵՎՈՐԳՅԱՆ Դ.Ս.

Համաշխարհային տնտեսության զարգացման ժամանակակից փուլի հրամայականներից մեկը և հիմնական միտումը առաջանցիկ տեմպերով ընթացող գլոբալացումն է:

Տնտեսական տեսանկյունից գլոբալացման գործընթացի արագացումը դրսևորվում է ապրանքների, ծառայությունների, կապիտալի, տեղեկատվության միջերկրային և միջճյուղային հոսքերի բազմակի ավելացումներով, ինչպես նաև ֆինանսական և արտադրական գործառույթների միջազգայնացմամբ, ներառյալ՝ առանձին կազմակերպական և տեխնոլոգիական գործառույթների միջազգային բաժանումը:

Ընդհանուր առմամբ, գլոբալացումը կարելի է բնութագրել որպես տարբեր պետությունների ու տարածաշրջանների տնտեսությունների փոխկապակցվածությունների ինտենսիվացում, փոխազդեցությունների ուժեղացում և համաշխարհային տնտեսությունում զանազան ոլորտների, հատվածների, ինստիտուտների ու գործընթացների ինտեգրման խորացում: Գլոբալացման հետևանքով տեղի է ունենում բաց տիպի տնտեսական համակարգերի ձևավորում: Ընդ որում, հենց բաց տիպի տնտեսության հայեցակարգը փոփոխվում է աշխարհատնտեսական կապերի հարթեցմանը զուգահեռ:

Ինտեգրման հետ կապված մշտապես տեղի ունեցող փոփոխությունների ուսումնասիրությունը, դրան պատրաստվելն ու հարմարվելը ունեն առաջնակարգ նշանակություն այնպիսի տնտեսության համար, ինչպիսին Հայաստանի Հանրապետությանն է, որին բնութագրելիս արդեն ավելի քան երկու տասնամյակ է որակում են որպես անցումային վիճակում գտնվող տնտեսություն: Համաշխարհային տնտեսությունում երկրների դիրքը որոշվում է առաջին հերթին իրենց ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) մրցունակությամբ: Եվ քանի որ ՀՀ տնտեսութ-

յունն էականորեն զիջում է առաջատար երկրներին, հետևաբար ապրանքների և ծառայությունների մրցունակության բարձրացման խնդիրն առավել մեծ կարևորություն է ստանում:

Սոցիալական վիճակի բարելավումը, տնտեսական աճը, հայրենական արտադրողների՝ արտաքին և ներքին շուկաներում մասնակցության պահպանումն ու ավելացումը կարող են վտանգված լինել, եթե հայրենական արտադրանքն իր գնով, որակով, գործառութայնությամբ և այլ բնութագրիչով շարունակի զիջել արտասահմանյան արտադրանքի նույն ցուցանիշներին: Համեմատաբար ցածր մրցունակությունը մեկնաբանվում է նրանով, որ Խորհրդային Միության փլուզման ընթացքում տնտեսությունը հայտնվեց այնպիսի վիճակում, որից մեկնարկը որոշ տեսանկյուններից ոչ միայն դժվար է, այլև երբեմն՝ նաև անհնար:

Ավերիչ երկրաշարժը, Արցախյան պատերազմը, տևական շրջափակումն ու տնտեսական ճգնաժամերը, արտադրական հզորություններ անգործության մատնելով, կանգնեցրին ՀՀ տնտեսության աճը, քանդեցին տասնամյակների ընթացքում երկրում ձևավորված համակարգերը, և տնտեսությունը հայտնվեց այնպիսի վիճակում, որ նույնիսկ նախկին հզորությունների վերականգնումն արդեն իսկ նշանակում է հետ մնալ մնացյալ աշխարհից, իսկ որպես հետևանք՝ նվազել են բնակչության եկամուտներն ու բարեկեցությունը: Սրանք են հիմնական պատճառները, որ նախկին խորհրդային հանրապետությունների շարքում արդյունաբերության զարգացման, դրա գիտատարության բարձր ցուցանիշներով առաջատար համարվող երկրներից մեկը՝ Հայաստանը, Համաշխարհային տնտեսական ֆորումի գլոբալ մրցունակության տարեկան զեկույցներում հայտնվել է 73-98-րդ տեղերում (տե՛ս աղյուսակ 1): Եվ չնայած 2009 թ. համեմատությամբ 2017 թ. գրանցած առաջընթացին՝ միտումներն այնքան էլ հուսադրող չեն, քանի որ առանձին տարիների բարելավումների մեջ մեծ ազդեցություն ունեն նաև զեկույցում ներառված երկրների թվի փոփոխությունները: Այս տեսանկյունից պատկերն առավել ուշագրավ է, երբ զեկույցում գրաված դիրքը դիտարկում ենք Հայաստանից հետո երկրների թվի հետ համեմատությամբ, կամ որ նույնն է՝ Հայաստանի գրաված դիրքը վերջից հաշվելիս: Այս դեպքում պատկերն ավելի նպաստավոր կարելի է համարել, որովհետև 2007-2016 թթ. ընթացքում արձանագրվել է դիրքերի բարելավում 37-64-րդ հորիզոնական, թեև 2012 թվականին, երբ զեկույ-

ցում ներառված են եղել նախորդ և հաջորդ տարիների համեմատ 4-ով ավելի երկրներ, ցուցանիշը գրեթե նույնքան էլ բարձրացել է:

Աղյուսակ 1

ՀՀ մրցունակության դիրքը՝ ըստ Համաշխարհային տնտեսական ֆորումի[1]

	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016
Երկրների թիվը	134	133	139	142	144	148	144	140	138	137
Մրցունակության կարգը	97	97	98	92	82	79	85	82	79	73
Մրցունակության կարգը՝ հակառակ դասավորվածությամբ	37	36	41	50	62	69	59	58	59	64

Սա այն պարագայում, որ բացառությամբ 2009 թ., անկախ Հայաստանի գոյության բոլոր տարիներին արձանագրվել է մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի ցուցանիշի շարունակական աճ (տե՛ս գծապատկեր 1):

Գծապատկեր 1

Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ցուցանիշի դինամիկան ՀՀ-ում ընթացիկ գներով՝ ըստ գնողունակության համարժեքության (հազ. ԱՄՆ դոլար)[2]



Ակնհայտ է, չնայած արձանագրված ՀՆԱ-ի ցուցանիշի բավական տպավորիչ աճին, մրցունակության ցուցանիշի էական առաջընթաց չի գրանցվել: Այս վիճակի հիմնական «մեղքը» պայմանավորված է նրանով, որ ՀՆԱ-ի ոլորտային բաղադրիչների մեջ զգալի տեսակարար կշիռ ունի

[1] Տվյալները վերցված են Global competitiveness report-ի համապատասխան տարիների հրապարակումներից՝ 2008-09՝ էջ 90-91, 2009-10՝ էջ 72-73, 2010-11՝ էջ 82-83, 2011-12՝ էջ 100-101, 2012-13՝ էջ 92-93, 2013-14՝ էջ 108-109, 2014-15՝ էջ 112-113, 2015-16՝ էջ 98-99, 2016-17՝ էջ 100-101, 2017-18՝ էջ 48-49:

[2] Տվյալների աղբյուր՝ Արժույթի միջազգային հիմնադրամի կայքէջ՝ http://www.imf.org/en/Countries/ARM.

հանքահումքային արդյունաբերությունը, և դա զուտ միայն արդյունահանման, այլ ոչ թե վերամշակման հաշվին է տեղի ունեցել:

Հաշվի առնելով ժամանակակից միտումներն ու որակական փոփոխությունների խնդիրները՝ ներկայումս ՀՀ տնտեսության համար կարող է լինել միայն մեկ ուղղությամբ լուծում՝ բարձրացնել վերամշակող արդյունաբերության արտադրանքի մրցունակությունը, նվազեցնել ռեսուրսների սպառումը, խթանել հայրենական արտադրանքի նկատմամբ պահանջարկը ներքին և արտաքին շուկաներում: Ընդ որում, բարձր սպառողական որակների պահպանման պայմաններում ինչքան մեծ է լինում ապրանքների գների վերին և ստորին սահմանների տարբերությունը, այնքան մեծ է շուկայում մանևրելու հնարավորությունը, կամ, որ նույնն է, այնքան բարձր է ապրանքի կամ դրա արտադրողի մրցունակությունը: Այս տեսանկյունից մրցունակության գործոնների մեջ որպես ակտիվ նորարարական գործունեության արդյունք բացառիկ կարևոր նշանակություն ունեն գիտատեխնիկական մակարդակը և կյանքի որակը, որը արտադրության ծախսերի կրճատման և իրացման նոր շուկաների ներթափանցման ռազմավարական գործիք է:

Ավելին, մրցակցային առավելությունների տեսության և համաշխարհային տնտեսական ֆորումի զեկույցների հիմքում ընկած մեթոդաբանության հիմնադիր Մ. Պորտերի՝ դեռևս 2005 թ. վերլուծական գնահատմամբ ՀՀ հիմնական մրցակցային առավելությունները, որոնց արդյունավետ օգտագործմամբ հնարավոր է ստեղծել մրցունակ տնտեսություն կամ կազմակերպություն և թողարկել մրցունակ ապրանքներ, ձևավորվում են ի հաշիվ սփյուռքի, կրթության և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի և զբոսաշրջության զարգացման[3]:

Գլոբալացման գործընթացների ազդեցությանը ենթակա ազգային տնտեսությունների զարգացման ներկա փուլում կարևորվում են ոչ միայն արտադրվող արտադրանքի, այլև տնտեսավարող սուբյեկտների, առանձին վարչատարածքային միավորների ու հենց պետության մրցունակության բարձրացման խնդիրները: Անկասկած, յուրաքանչյուր տարածքային-

[3] **Michael E. Porter,** Armenian Competitiveness: Towards a Strategy for Economic Development, Armenia 2020 Summit Cambridge, Massachusetts 8 March 2005, հասանելի է http://www.hbs.edu/faculty/Publication%20Files/Armenia_Competitiveness_2005.03.08_763d105b-0e80-4fc2-896f-de0934ab9632.pdf հղումով:

կառավարչական (մարզային, համայնքային) միավորի համար ռազմավարական գործոնները, որոնք կհանգեցնեն մրցունակության բարձրացմանը, տարբեր են և արտացոլում են այդ միավորի բնութագրիչ հատկանիշները, սակայն կան մի քանի ընդհանուր գործոններ, որոնցից են՝

- նորմատիվային իրավական հենքը, պետական կառավարման և հասարակական ինստիտուտների որակը.
- ներդրումային գրավչությունը և ներդրումային միջավայրը.
- տնտեսավարող սուբյեկտների և հատկապես փոքր ու միջին բիզնեսի ներկայացուցիչների նորարարական ակտիվությունը.
- ներքին և արտաքին շուկաներում ձեռնարկությունների թողարկած մրցունակ արտադրանքի տեսակարար կշիռը.
- հիմնական ֆոնդերի և ենթակառուցվածքների ընդհանուր վիճակը.
- կադրային ներուժը, տնտեսության հավասարակշռվածությունը և արտադրության գործոնների օգտագործման արդյունավետությունը.
- շրջակա միջավայրի վիճակը և բնօգտագործման համակարգի արդյունավետությունը:

Հաշվի առնելով վերոհիշյալ գործոնների շարքը (որը, բնականաբար, ամենևին էլ ամբողջական չէ)՝ մրցունակության աճի տեմպերի խնդիրը պահանջում է բազմաթիվ հիմնախնդիրների համակարգային լուծում և, նախ և առաջ, նոր մոտեցումների ու մեթոդների որոնում:

Համաշխարհային փորձը, սակայն, վկայում է, որ ժամանակակից շուկայական տնտեսության պայմաններում մրցակցային դիրքերի բարելավումը հիմնականում պայմանավորված է տնտեսությունը նորամուծություններով զարգացնելով: Մ. Պորտերը, անդրադառնալով այս խնդրին, նշում է, որ կազմակերպությունները և երկրները մրցակցային առավելություններ ձեռք են բերում կազմակերպությունների զարգացման տնտեսական միջավայրը որոշող վեց բնութագրիչներով՝

- ռեսուրսային գործոններ՝ բնական ռեսուրսներ, աշխատուժ, ենթակառուցվածքներ.
- պահանջարկի պայմաններ՝ պահանջարկի ծավալ և գնորդների պահանջմունքներ.
- կազմակերպության ռազմավարություն՝ կազմակերպության կառուցվածք և մրցակիցներ.
- հարակից և մատակարարող ճյուղեր՝ մրցունակ մատակարարնե-

րով ապահովվածություն.

- պատահականություններ՝ նորույթներ, անսպասելի շրջադարձեր և այլն.
- պետական քաղաքականություն, որն ի վիճակի է կամ ուժեղացնելու, կամ թուլացնելու տնտեսական միջավայրը ձևավորող մնացած բոլոր պարամետրերի ազդեցությունը[4]: Վերը նշված յուրաքանչյուր բնութագրիչ անխզելիորեն կապված է մյուսների հետ, և բոլորն ակտիվորեն ազդում են միմյանց վրա: Այս գործոնները որոշակի արժանիքներով ապրանքների արտադրության հնարավորություն են ստեղծում: Պահանջարկը որոշում է դրանց օգտագործման ուղղությունները: Սակայն գործոնների օգտագործման ինտենսիվությունը կախված է մրցակցության աստիճանից: Արտադրության գործոնների զարգացածությունից կախված՝ առանձնացնում են երկրի մրցունակության զարգացման չորս հիմնական փուլեր (տե՛ս գծապատկեր 2)[5]: Դրանց են վերաբերում արտադրության գործոնները, ներդրումները, նորամուծությունները և հարստությունը:



ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ

Առաջին փուլում մրցունակությունը ձեռք է բերվում բացարձակապես արտադրության գործոնների հիման վրա, և մրցակցությունը տեղի է ունենում գների իջեցման հաշվին: Սա մրցունակության բարձրացման էքստենսիվ ուղին է: Երկրորդ փուլը հիմնված է նվաճողական ներդրումների վրա: Սա մասշտաբից էֆեկտ ստանալուն ուղղված միջոցառումների փուլն է, երբ արտադրության գործոնների էքստենսիվ շահագործումից աստի-

[4] **Портер М.** Конкурентная стратегия: методика анализа отраслей и конкурентов, М., 2005, с. 64.

[5] **Данейко П.В.** Национальная конкурентоспособность: новая парадигма, с. 8. http://www.research.by/webroot/delivery/files/ecowest/1999n2r01.pdf հասցեով, 20.11.2017.

ճանաբար անցում է կատարվում տեխնոլոգիաների բարելավումների ու զանազան բարեփոխումների: Իսկ երրորդը բացարձակ ակտիվացման և նվաճումների փուլն է, երբ կազմակերպություններն ստեղծում են սեփական տեխնոլոգիաները և մրցունակությունը պահպանում բարձր արտադրողականության և ոչ թե արտադրության գործոնի ցածր գնի հաշվին: Այս երեք փուլերում տեղի է ունենում երկրի տնտեսական աճ, իսկ այն պետությունները, որոնք հասնում են չորրորդ փուլին, թևակոխում են անկման փուլը: Չորրորդ փուլում տնտեսության քարշող ուժն արդեն ձեռքբերվածն է, և եթե շարժ կա, ապա միայն իներցիայի հետևանքով: Բնակչության հարուստ մասի պահանջմունքների հիման վրա ձևավորվում են որոշակի յուրահատուկ ոլորտներ, որտեղ երկիրը պահպանում է իր մրցակցային առավելությունը: Մնացած ճյուղերն անկում են ապրում, և մրցակցությունը տեղը զիջում է համագործակցությանը: Մրցակցային առավելությունը առաջին երկու փուլերում հնարավոր է միայն այն ոլորտներում, որտեղ առկա է խիստ կախվածություն բնական ռեսուրսներից, կամ այն ոլորտներում, որտեղ շատ քիչ են օգտագործվում բարդ տեխնոլոգիաները և նորամուծությունները: Գործոնների ինտենսիվ օգտագործումը հանգեցնում է արտադրության զարգացմանը և խթանում նոր ճյուղերի զարգացումը: Վերջնական արտադրանք թողարկող ոլորտները, իրենց հերթին, խթանում են պահանջարկի քանակական ավելացումը և որակական զարգացումը: Մրցունակության փուլերի առանձնացման կարևոր հետևանքն այն խնդիրների ըմբռնումն է, որոնք առաջացել են տվյալ երկրում և դրսևորվում են տնտեսական քաղաքականության մեջ: Երկրի տնտեսության վերածննդի կարևորագույն նախադրյալներից մեկը կայունացումն ու արտադրության աճն է բոլոր ոլորտներում և առանձին կազմակերպություններում: Սակայն, ի տարբերություն վարչահրամայական պլանային տնտեսության, շուկայական տնտեսությանն անհրաժեշտ են ոչ բոլոր տիպի արտադրություններ և ոչ ամեն գնով զարգացումներ, այլ միայն մրցունակները: Այսօր մրցունակությունը օբյեկտի անվտանգության կարևորագույն, այն է՝ «գործունեության դժվար պայմաններում» գոյատևման և հետագա արդյունավետության բարձրացման գործոնն է: Նոր տիպի տնտեսությունում նորարարությունները մրցակցային պայքարի ամենակարևոր գործիքն են, որի հաշվին ձևավորվում է երկրի բարի համբավը, որը

նպաստում է ներդրումային գրավչությանը[6]: Միջազգային փորձը վկայում է, որ ներկայումս գրեթե անհնար է առանց նորարարությունների թողարկել մրցունակ և որակյալ արտադրանք: Միայն նորարարական կողմնորոշում ունեցող կազմակերպությունները, որոնց գործունեության հիմքում դրված է գիտատեխնիկական վերջին նվաճումների օգտագործումը, - կարող են ստեղծել որակյալ ապրանքներ ավելացած արժեքի առավել բարձր ցուցանիշով, սպառողների մեծ պահանջարկով և դառնալ մրցունակ: Հայաստանն այսօր ձգտում է կառուցել գիտելիքի և նորարարությունների վրա հիմնված տնտեսություն, ուստի նորարարությանն օժանդակող ենթակառուցվածքի ստեղծումն ու զարգացումը Հայաստանի հիմնական մարտահրավերներից են: Միջազգային ասպարեզում Հայաստանի մրցունակությունը մեծապես կախված է ձեռնարկությունների նորարարական ապրանքներ և ծառայություններ ստեղծելու և օտարերկրյա շուկաներ հանելու կարողությունից: Հայաստանում շատ քննարկումներ են արվում և գործնական քայլեր կատարվում նորարարական համակարգի տարրերի ստեղծման ուղղությամբ, թեև դրանք բնույթով դեռևս անհետևողական են: Կառավարությունն ընդունել է նորարարական համակարգի ներդրման ծրագրեր, բայց դրան հատկացված միջոցները շատ փոքր են, չկա դրա համար պահանջվող հենքը, իսկ քաղաքականության ընդհանուր համատեքստում դրա տեղն ու դերը դեռ պատշաճ ներկայացված և բնութագրված չեն: Թերևս հենց դա է պատճառը, որ գլոբալ մրցունակության համաթվի բաղադրիչների մեջ վերջին 10 տարիների ընթացքում նորարարության բաղադրիչը (12-րդ հենասյուն) միայն 2016 թ. է ավելի լավ դիրքում հայտնվել, քան ընդհանուր մրցունակությունը: Եվ տպավորություն է ստեղծվում, որ Հայաստանում նորարարությունների վրա հիմնված տնտեսության մրցունակությունն իրատեսական չէ, և հնարավոր չէ նորարարությունների հաշվին կառուցել առավել մրցունակ տնտեսություն: Սակայն, երբ ուսումնասիրում ենք նույն նորարարությունների հիմնասյան ենթացուցանիշները, պատկերն առավել հստակ է դառնում. երևում են այն հիմնական խոչընդոտները, որոնց հաշվին նորարարությունների ցուցանիշը անկում է գրանցում (տե՛ս աղյուսակ 2):

[6] **Портер М.** Международная конкуренция. Конкурентные преимущества стран, М., 1993, с. 35.

Աղյուսակ 2

Նորարարության հիմնասյան և դրա բաղադրիչ ցուցանիշների շարժընթացը ՀՀ-ում 2007-2016 թթ.[7]

	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016
Գլոբալ մրցունակության համաթիվ	**97**	**97**	**98**	**92**	**82**	**79**	**85**	**82**	**79**	**73**
Նորարարություններ	106	108	116	112	105	103	104	107	87	70
Նորարարությունների կարողություն	68	66	65	61	62	77	98	87	63	59
Գիտահետազոտական կառույցների որակ	101	98	103	107	111	106	105	105	100	88
Կազմակերպությունների ԳՀՓԿԱ հատկացումներ	96	115	127	117	111	109	102	109	92	71
Կազմակերպությունների ու բուհերի համագործակցություն ԳՀՓԿԱ շրջանակներում	116	114	124	125	122	107	112	111	92	88
Առաջավոր տեխնոլոգիաների արդյունքների պետական գնումներ	122	124	134	124	108	111	121	109	93	80
Գիտնականների ու ինժեներների առկայություն (հասանելիություն)	80	91	93	87	73	74	75	59	52	48
Մտավոր սեփականության առևտրայնացման արտոնագրեր (դիմումներ 1մլն բնակչի հաշվով)	63	69	90	64	61	58	53	49	57	57

Ստացվում է, որ նորարարությունների կարողության, գիտնականների ու ինժեներների առկայության, ինչպես նաև մտավոր սեփականության առևտրայնացման արտոնագրերի մասով Հայաստանը 15-20 նիշով ավելի բարձր է ընդհանուր մրցունակության աստիճանակարգում, սակայն գիտահետազոտական կառույցների որակի, առևտրային կազմակերպությունների կողմից գիտահետազոտական ու փորձարարական աշխատանք-

[7] Տվյալները վերցված են Global competitiveness report-ի համապատասխան տարիների հրապարակումներից՝ 2008-09՝ էջ 90-91, 2009-10՝ էջ 72-73, 2010-11՝ էջ 82-83, 2011-12՝ էջ 100-101, 2012-13՝ էջ 92-93, 2013-14՝ էջ 108-109, 2014-15՝ էջ 112-113, 2015-16՝ էջ 98-99, 2016-17՝ էջ 100-101, 2017-18՝ էջ 48-49:

ների հատկացումների, առաջավոր տեխնոլոգիաների արդյունքների պետական գնումների ու կազմակերպությունների ու բուհերի համագործակցության մասով՝ նույն չափով վատ: Ըստ էության, հենց այս հանգամանքով էլ կարելի է բացատրել ՀՀ մրցունակության համաթվի ընդհանուր ցածր լինելը, որովհետև մնացած հիմնասյուներում առկա ցուցանիշներից 100-երորդին մոտ կարգային համար ապահովում են մակրոմիջավայրի գործոնները և շուկայի չափերին վերաբերող ցուցանիշները, որոնք, կարծում ենք, առավել լուծելի խնդիր են նորարարությունների զարգացման պայմաններում:

Նորարարության ռազմավարության մշակման և կիրառման վերջին տարիներին նկատվող միտումները զարգացած երկրների մեծ մասում և հատկապես Արևմտյան Եվրոպայի երկրներում ցույց են տալիս, որ դրանցում մեծ տարածում են ստանում կլաստերների զարգացմանն ուղղված միջոցառումները: Ի տարբերություն նորարարական ազգային համակարգեր ստեղծելուն ուղղված ավանդական ընդհանրական մոտեցումների, որոնք էլ իրենց հերթին հիմնվում են նորարարության տարածման և լրացուցիչ ու կողմնակի դրական ազդեցություններ ունենալու ներուժի վրա, քլաստերային զարգացման մոդելի հիմքում գործունեության տեսակով և իրականացվող գործառույթներով միմյանց փոխկապակցված տնտեսական միավորների զարգացումն է, որտեղ յուրաքանչյուր ձեռնարկություն դիտարկվում է որպես մեկ ընդհանուր քլաստերի բաղադրիչ մասնիկ:

Ձեռնարկությունները մեկուսացած և առանձին, չեն կարող նորն արարել, այլ դա անում են գործընկերների, մատակարարների և այլոց հետ ունեցած կապերի ցանցի միջոցով: Բնական է, որ կլաստերների զարգացումն ավելի արագ է ընթանում այն ոլորտներում, որտեղ նորարարությունն ավելի է կարևորվում: Այդ ճյուղերում կլաստերները կարելի է դիտարկել որպես նորարարության փոքր համակարգեր: Նորարար կլաստերներն ավելի հզոր են, երբ դրանց շարժիչները գործարկվում և առաջնորդվում են շուկայով: Սակայն տնտեսական զարգացման մեջ գիտելիքի և նորարարության ավելի ու ավելի մեծացող դերի հետ մեծանում է նաև պետության դերը: Շատ երկրներում պետական միջամտությունները հաջողվել են, երբ կառավարությունն ստանձնել է գլխավորապես կապերի հաստատումը դյուրինացնողի և արդյունավետ աջակցության ու համագործակցության համար պահանջվող ինստիտուցիոնալ հենքը զար-

գացնողի դերը: Դրանից ելնելով՝ շատ երկրներում կառավարությունները նորարարության աջակցման ուղղակի միջամտությունները փոխարինել են անուղղակի միջամտություններով, որոնք կոչված են խթանելու համագործակցությունն ու ստեղծել բարենպաստ ինստիտուցիոնալ դաշտ: Կլաստերային ընդհանուր մոտեցումը, որն ուղղված է նորարարական և արտադրողական ձեռնարկատիրության խթանմանը, կարող է ներդաշնակ հենք դառնալ Հայաստանում նորարարության քաղաքականության համար: Այդպիսի հենքը թույլ է տալիս պատասխաններ գտնել նորարարության քաղաքականության երեք հիմնարար հարցերի համար.

1. Որտե՞ղ միջամտել (գերակա ոլորտներ):
2. Ինչպե՞ս միջամտել (ի՞նչ գործիքներ օգտագործել):
3. Որո՞նք են միջամտությունն իրականացնող հաստատությունները:

Գերակա համարվող կլաստերները պետք է առաջնահերթ դառնան նաև նորարարության քաղաքականության համար, ինչը պետք է հիմնվի առանձին քլաստերներում նորարարական գործընթացներին աջակցելու կարիքների վրա:

Հայաստանում գործարար միջավայրի թույլ կողմերից մեկը նորարարությունը ու համագործակցությունը խթանող միջոցների ու պետական աջակցության պակասն է:

Նորարարության քաղաքականությունն իրականացնող պետական հաստատությունների միջև գործառույթների բաշխումը առանձին երկրների համար կարող է խիստ տարբեր լինել: Սովորաբար այդ գործում ներգրավվում են գիտության ու կրթության, ընդհանուր տնտեսական զարգացման և ֆիսկալ քաղաքականությունների վարման համար պատասխանատու հաստատություններ, ինչպես նաև պետական ու մասնավոր հատվածների համագործակցության վրա հիմնված այլ հաստատություններ: Հայաստանի չափերը, ինչպես նաև Հայաստանում վարվող քաղաքականության համատեքստը և ընթացակարգերը հուշում են, որ նպատակահարմար է ունենալ նորարարության քաղաքականության իրականացման միասնական կառույց: Եթե նույնիսկ քաղաքականությունն ու դրա իրականացման միջոցները պետք է մշակվեն պետական մարմինների միջև գործառույթների ներկա բաշխման պարագայում (կառավարության ընդհանուր համակարգմամբ), ապա միջոցների ու գործիքների մեծ մասի գործնական իրականացումը պետք է համախմբվի մեկ կառույցի ներքո,

որը պատասխանատու է պետական աջակցության մեծ մասը դեպի մասնավոր հատված ուղղորդելու համար:

Մյուս կողմից, երբ գլոբալ մրցունակության զեկույցներում ուսումնասիրում ենք բիզնեսի վարման հիմնական խոչընդոտները, դրանցում միշտ իրենց կարևոր տեղն ունեն այնպիսի գործոններ, որոնք, ըստ էության, նորարարությունների հետ այդքան էլ կապ չունեն (կոռուպցիա, հարկային դրույքաչափեր և վարչարարություն և այլն), սակայն նույնիսկ դրանց վերացման գործում մեծ է նորարարությունների դերն ու նշանակությունը: Կարելի է նշել պետական կառավարման համակարգում էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության ներդրումը, հարկային համակարգում էլեկտրոնային վճարումների ու հաշվետվությունների համակարգերի ներդրումը և այլն: Սակայն, պետք է նկատել, որ բիզնեսի վարման առավել խնդրահարույց գործոնների թվում տեղ ունեն նաև հենց նորարարությունների հիմնասյան բաղադրիչները, ինչպիսիք են աշխատուժի ոչ համարժեք կրթական որակները, նորամուծություններ կատարելու ոչ բավարար կարողությունը, համալսարանների ու կազմակերպությունների միջև համագործակցության ոչ բավարար մակարդակը և այլն:

Ասվածից կարելի է հետևություն անել, որ տնտեսության մրցունակության բարձրացման համար կարևոր է ոչ թե կարճաժամկետ արդյունքներ ապահովող միջոցառումներով (օրինակ՝ ՀՆԱ-ի կամ բյուջեի եկամուտների հավաքման բարձր ցուցանիշներ ապահովելը), այլ երկարաժամկետ ռազմավարության շնորհիվ հասնել այնպիսի կարգավիճակի, երբ մարդկային որակյալ ռեսուրսների համապատասխան ոլորտներում աշխատանքով ստեղծվում են ինտենսիվ զարգացման խթաններ:

ВЗАИМОСВЯЗЬ МЕЖДУ КОНКУРЕНТОСПОСОБНОСТЬЮ И ИННОВАЦИОННОЙ СИСТЕМОЙ НАЦИОНАЛЬНОЙ ЭКОНОМИКИ

ГРИГОРЯН К.Г., ГЕВОРГЯН Д.С.

Резюме

На современном этапе глобализации и интеграции, когда границы между странами почти изчезают, роль конкуренции возрастает, в силу чего

одним из важнейших факторов становится повышение тех качеств продуктов и услуг, что сделает их более конкурентоспособными. Исследования показывают, что среди факторов, формирующих конкурентоспособность, следует выбрать те, которые обеспечивают долгосрочный эффект, и таковыми являются инновации.

Конкурентоспособность за счет природных ресурсов и факторов производства не обеспечивает высоких результатов в глобальной системе конкурентоспособности, и посему необходимо стимулировать инновации для обеспечения устойчивого и долгосрочного роста и развития.

RELATIONSHIP BETWEEN COMPETITIVENESS AND INNOVATIVE SYSTEM OF THE NATIONAL ECONOMY

K. GRIGORYAN, D. GEVORGYAN

Abstract

At the present stage of globalization and integration, when the borders between countries are almost disappearing, the role of competition is growing. That's why the most important factors are the improvement of those qualities of products and services that will make them more competitive. Studies show that among the factors which shape competitiveness, one should choose those that provide a lasting effect, and such are innovations.

Competitiveness based on natural resources and factors of production does not ensure high results in the global system of competitiveness, and therefore it is necessary to stimulate innovations to ensure sustainable and long-term growth and development.

ԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՃԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ԹՈՐՈՍՅԱՆ Կ.Ա.

Տնտեսական ***աճի*** և ***զարգացման*** վերաբերյալ տնտեսագիտության մեջ նկատելի են տարբեր, բայց ոչ իրարամերժ մոտեցումներ: Տնտեսագետների մի մասն այդ հասկացությունները դիտարկում է միասին, մյուսը՝ առանձին-առանձին, երրորդը՝ քննարկում է աճն առանց զարգացման, չորրորդը՝ զարգացումն առանց աճի: Իրականում դրանք միմյանց հետ փոխադարձ և անմիջական կապ ունեն, թեև հարաբերականորեն առանձնացված են[1]:

Ազգային տնտեսությունը ժամանակավորապես կարող է աճել առանց կենսամակարդակի զարգացման: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նման բան տեղի կունենա այն դեպքում, երբ աճած բարիքները տարբեր պատճառներով չեն հասնում արտադրողներին և չեն ծառայում ամբողջ ազգի պահանջներին: Այդ բանը արդեն իսկ նկատելի է գրականության մեջ տնտեսական աճի և դրա զարգացման մակարդակների բնորոշումներից: Տնտեսական աճը որոշվում է այն գործակցով, որը ցույց է տալիս ընթացիկ և անցած տարում արտադրված բարիքների հարաբերակցությունը: Մինչդեռ, տնտեսական զարգացումը ենթադրում է նաև այլ գործոններ, հատկապես բնակչության աճող պահանջների անմիջական բավարարում և ազգային տնտեսության ընդլայնված վերարտադրության կազմակերպում: Առաջին դեպքում գործ ունենք ***բնակչության մեկ շնչին ընկնող*** հասարակական ամբողջական արդյունքի (ՀԱԱ), համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ), ազգային եկամտի (ԱԵ), ազգային հարստության (ԱՀ) և այլ տնտեսական գործոնների տարեկան վերելքի հետ: Երկրորդ դեպքում՝ նաև հոգևոր բարիքների, արտադրողական ուժերի և արտադրողական հարաբերությունների, բնակչության սոցիալ-

[1] Տե՛ս Экономическая теория: Учебник В. И. Видяпина и др. Основы экономической теории. Курс лекций, 2-е идз. под общ. ред. А.А. Кочеткова, М., 2004, с. 360-382, Տնտեսագիտության տեսություն (ուսումմնական ձեռնարկ), խմբ.՝ Գ.Ե. Կիրակոսյանի և Ի.Ե. Խլղաթյանի, Ե., 2009, 546-596, **Самуэльсон П.** Экономика, т. II, М., 1992, с. 315-344:

տնտեսական և սոցիալ-քաղաքական վիճակի, ամբողջ քաղաքակրթության առաջընթացի հետ:

Տնտեսական աճը և տնտեսական զարգացումը միաժամանակ կապված են նյութական և հոգևոր բարիքների արտադրության էքստենսիվ և ինտենսիվ տեմպերի, առավել ևս աշխատանքի արտադրողականության արդյունավետ բարձրացման հետ: Այստեղ կարևոր է նկատի ունենալ, այն հանգամանքը, որ անկախ բարիքների ստեղծման ոլորտից և ճյուղից՝ արտադրողական ուժերը կարող են իրենց սահմանային օգտակարությամբ արդյունավետ գործել, եթե արտադրության էքստենսիվ և ինտենսիվ կողմերի միջև գոյություն ունենա օպտիմալ, ***փաստացի*** տնտեսական աճ՝ ի տարբերություն ***պոտենցիալ*** տնտեսական աճի:

Տնտեսական աճը և տնտեսության զարգացումը, գտնվելով փոխադարձ կապի մեջ, խարսխված են մեկ հիմնական բնատնտեսական հակասության վրա: Դա այն համընդհանուր հակասությունն է, որը դրսևորվում է ***արտադրության համար անհրաժեշտ ռեսուրսների սահմանափակության և հասարակական անսահմանափակ սպառման միջև:*** Դա այնպիսի հարաճուն բնույթ ունեցող հակասություն է, որը վերջնական (ավարտուն) լուծում չունի և անխուսափելիորեն տանում է երկրագնդի «կեղեքման»՝ հանուն մարդկանց զանգվածների անսահմանափակորեն աճող սպառման պահանջների բավարարման: Տեղին է նշել, որ սպառման շահերը վերջնականապես կմարեն այն ժամանակ, երբ ***Երկիր*** կոչվող համընդհանուր «մայրը» արտադրողական ուժերի գերզարգացման և սպառման շահերի գերբավարարման պատճառով կմխրճվի տիեզերական պայթյունածև վիճակի՝ կոլապսի մեջ:

Տնտեսագիտությանը հայտնի են ***տնտեսական աճի*** երկու հիմնական մեկնաբանություններ: ***Նախ,*** որպես ազգային տնտեսության բնութագրման հանրագումար, տնտեսական աճը, ըստ էության, արտացոլում է ոչ թե աճը, այլ զարգացման մակարդակը, քանզի անմիջապես կապված է ՀՆԱ-ի և ԱՀ-ի աճի հետ, ապա՝ որպես բնակչության մեկ շնչին ընկնող չափաբաժնի որոշիչ: ***Երկրորդ,*** անմիջական կապի մեջ լինելով ***ազգային արտադրության հետ*** և արտացոլելով դրա առաջնային դերը

բնակչության աճի համեմատությամբ՝ այն առավել սերտորեն է կապված քաղաքակրթության զարգացմանը[2]:

Հասարակական շահերի տեսակետից, տնտեսական աճի և զարգացման հիմնախնդրին անդրադառնալիս անհրաժեշտ է նկատի ունենալ դրանց ***նորմատիվ և պոզիտիվ կողմերը:***

Նորմատիվ կողմը ենթադրում է այն նվաճումները, որոնք համապատասխանում են հասարակության զարգացմանը, և որոնց հասնելը ցանկալի է: Տնտեսության զարգացման այդ կողմը նմանվում է սոցիալիզմի պայմաններում գործող հեռանկարային պլանավորմանը, որը ԽՍՀՄ-ում համարվում էր ժողովրդական տնտեսության սկզբնական օղակների «կյանքի» օրենք և բաժանվելով ընթացիկ պլանների, դառնում էր կատարման համար ճակատագրական պարտավորություն: Նման պարտավորություն չկատարողները տարբեր ձևերով դուրս էին մղվում արտադրության ոլորտից: Այդ փաստը, մի կողմից, արտադրությունը զրկում էր փորձված, բանիմաց աշխատուժից, մյուս կողմից՝ լրացնում սոցիալիզմին քաղաքականապես հարմարված այն մարդկանց բանակը, որ ձևավորվել էր տնտեսական պետական քաղաքականությանը ուժ տալու, բռնություններ հիմնավորելու, քաղաքական տարակարծությունները վերացնելու մենատիրական նպատակներով:

Մասնավոր սեփականության և շուկայական հարաբերությունների պայմաններում տնտեսության աճով և զարգացման խնդիրներով զբաղվում են ձեռնարկատերերը, տնայնագործները, նաև քաղաքական իշխանությունը, որը ձգտում է կարգավորել շուկայական հարաբերություններում ընդգրկված վերոհիշյալ, ինչպես և այլ հասարակական շերտերի անհատների ու հանրությունների լայնաչափ փոխհարաբերությունները:

Քաոսային, ոչ բավարար գիտական մոտեցումը նկատելի է, եթե տնտեսական առաջընթացը դիտենք ***պոզիտիվ (դրական)*** տեսանկյունից: Մինչդեռ տնտեսական աճի և դրա զարգացման ***պոզիտիվ*** մոտեցումը ենթադրում է ձեռնարկատերերի և տնայնագործների գործունեության սթափ վերլուծություն: Այդ գործունեության նպատակը ոչ միայն ***շահույթ ստանալն է***, այլև դրա ավելացումը: Վերջինս պատճառ է դառնում արտադրության շրջանակներն անընդհատ աճի՝ լրացուցիչ կապիտալ ներդրումների միջոցով կազմակերպելով ընդլայնված վերարտադրություն:

[2] Տե՛ս **Самуэльсон П.** Экономика, т. I, М., 1992, с. 179-197.

Նման վերարտադրությունն է հնարավոր դարձնում բարելավելու ապրանքների և ծառայությունների որակը, ավելացնելու դրանց քանակը, խորացնելու աշխատողների մասնագիտացումը և աշխատանքի կոոպերացումը, մշակելու և ներդնելու աշխատանքի կազմակերպման առաջավոր մեթոդներ, նոր տեխնոլոգիաներ և այլն:

Տնտեսական աճը չի կարող հասարակության լիարժեք զարգացում ապահովել առանց սոցիալական խնդիրների լուծման: Այստեղ առաջնային նշանակություն ունեն բնակչության նյութական պահանջների բավարարումը, անձի զարգացման համար **ազատ ժամանակի** ավելացումը և հոգևոր պահանջների հագեցումը, լրացուցիչ կապիտալ ներդրումների ավելացումը, սոցիալական ինֆրաստրուկտուրայի վերելքը, մարդկանց կյանքի, աշխատանքի անվտանգության, երկրի պաշտպանության ապահովումը, լրիվ զբաղվածության իրականացումը բնակչության աճի պայմաններում[3]:

Տնտեսության լավագույնս զարգանալու՝ նշված բաղադրիչների արդյունավետությունը կբարձրանա միայն այն ժամանակ, երբ բարիքների արտադրությունը կզարգանա համաչափ կերպով և համամասնորեն: Այլ դեպքում, օրինակ, որևէ մենաշնորհ կազմակերպության, բաժնետիրական ընկերության, միավորված տնայնագործների ժամանակավոր թռիչքաձև առաջընթացը զարգացմանն օգուտ բերելու փոխարեն խոչընդոտներ կհարուցի՝ վերածվելով իր նպատակի հակադրությանը:

Օպտիմալ զարգացումն ամբողջապես տեղի է ունենում մի շարք գործոնների օգնությամբ, որոնք որոշիչ նշանակություն ունեն արտադրության ***արդյունավետության, արտադրանքի որակի և փաստացի ծավալի ավելացման,*** աշխատանքի արտադրողականության բարձրացման համար: Այդ տեսանկյունից տնտեսագիտությունը, ըստ ազդեցության եղանակի, արտադրության գործոնները տրոհում է ուղղակի և անուղղակի խմբերի: Կարծում ենք՝ համախառն արտադրության և առաջարկի ուղղակի ազդեցության գործոններից են՝ 1. Բարձրորակ և համապատասխան քանակի աշխատուժը, 2. Կատարելագործված և բարձր արտադրողականության հիմնական կապիտալը, 3. Արտադրության կատարելագործված տեխնոլոգիաները, 4. Արտադրության գործընթաց ներգրավված բնական ռեսուրսների

[3] Տե'ս **К. Маркс.** Капитал. Критика политической экономии, т. I, М., 1973, с. 529-539.

օպտիմալ քանակը և բարձր որակը, 5. Մենեջերական (արտադրության կառավարման և ուղղորդման) որակյալ ունակությունը:

Անուղղակի ազդեցության գործոնները վերաբերում են առաջարկի, պահանջարկի և բաշխման հարաբերություններին: Հատկապես դրանց թվին են պատկանում՝ 1. Շուկաների մենաշնորհի աստիճանի իջեցումը, 2. արտադրական ռեսուրսների գների իջեցումը, 3. Շահութահարկի ամենաբարենպաստ չափի սահմանումը, 4. Վարկավորման հնարավորությունների ընդլայնումը: Եթե սույն գործոնները դադարեն կատարել իրենց գործառույթը, ապա տեղի կունենա ազգային տնտեսության զարգացման տեմպերի անխուսափելի հետաճ, որի տևականությունը հասարակությանը կսպառնա հայտնվելու աղետալի իրավիճակի մեջ:

Տնտեսական աճը հավասարակշռված է համարվում, երբ բնակչության ***աճող պահանջների բավարարումը և ազգային հարստության կուտակումը*** ժամանակի յուրաքանչյուր պարբերությունում տեղի են ունենում կայուն տեմպերով, երբ միաժամանակ պահանջարկը և առաջարկը հիմնականում հավասարակշռված վերելք են ապրում: Դա ազգային տնտեսության այնպիսի վիճակ է, երբ ապրանքների գները կայուն ձևով են արտացոլում դրանց արժեքը, մակրոտնտեսական ցուցանիշներն աճում են առաջընթաց ուղեգծով, առանց որևէ շեղումի կամ լուրջ խափանումների[4]:

Չնայած տնտեսության հավասարակշռված աճին և զարգացման վերընթացին, այն անհրաժեշտորեն ընկնում է շրջափուլային (ցիկլային) վիճակի մեջ: Այստեղ նկատի ունենանք, որ դա այնպիսի օրինաչափ երևույթ է, որը ենթադրում է ազգային տնտեսության աճ և անկման հաջորդականություն, և որը ցույց է տալիս, որ արդյունավետ զարգացման համար կարևոր նշանակություն ունի տնտեսության անկման հետագիծը իր դինամիկ զարգացման հետագծին մոտեցնելու իրողությունը: Այդ հետագծերը մակրոտնտեսագիտությունն ուսումնասիրում է դրանց հատուկ՝ ***կայուն և անկայուն*** տեսակներով: Առաջինն այն հավասարակշռված հետագիծն է, որն այս կամ այն ներքին (թաքուն) կամ արտաքին (բաց) գործոնի հակազդեցության պատճառով շեղվելիս հնարավորություն ունի անմիջապես վերադառնալու նախկին հետագծին: Երկրորդ՝ անկայուն հետագիծը պայմանավորված է նախ ***շուկայական տնտեսության*** այն առանձնահատկություններով, որոնք գործում են հնարավոր հավասարակշռութ-

[4] Տե՛ս **Гэлбрейт Дж.** Экономическая теория и цели общества, М., 1976:

յունը վերականգնելու օգտին, այնուհետև տնտեսության այն ներքին հարմարվողական մեխանիզմներով, որոնք հավասարակշռության խախտումից հետո գործում են դրա վերականգնման օգտին: Ի դեպ, անկայուն հետագիծն ուղղելու գործում մեծ է ազգային պետության տնտեսական քաղաքականության դերը:

Տնտեսական աճի և զարգացման վերաբերյալ գոյություն ունեն ամբողջական տեսություններ: Դրանց մեջ առավել ուշադրության են արժանի Կ. Մարքսի՝ ***հասարակարգային*** և Ու. Ռոսթոուի՝ ***ժամանակագործոնային*** տեսությունները:

Մարքսյան տեսությունը հիմնված է ժամանակադասակարգային գործոնների, արտադրողական ուժերի և հարաբերությունների, հավելյալ արժեքի արտադրության և դրա անփոխհատույց յուրացման վրա: Այստեղ իշխում է մոտեցման հասարակարգային մեթոդը, որի համաձայն, զարգացումը տեղի է ունենում արտադրական հարաբերությունների և արտադրողական ուժերի միջև գոյություն ունեցող հակասությունների լուծման միջոցով, որից անբաժան են ստրուկների, ճորտ գյուղացիների տարատեսակ ըմբոստությունները և այդ ամենը «պսակող»՝ բանվոր դասակարգի քաղաքական հեղափոխական շարժումները: Հենց այս նպատակով էլ մարքսիստները գործ ունեն ***դասակարգեր*** կոչվող և հակամարտ դիրքերում գտնվող սուբյեկտների հետ, մի կողմից՝ կապիտալիստներ, և մյուս կողմից, վարձու բանվորներ, գյուղացիներ:

Հակառակ մարքսիստների, Ու. Ռոսթոուն տնտեսական աստիճանական զարգացումը դնում է բարեշրջական հիմքի վրա և ոչ թե հեղափոխական: Նա զարգացման հիմքում տեսնում է երեք խոշոր փոխադարձորեն պայմանավորված գործոններ՝ ***տեխնիկայի զարգացում, ակտիվ, ռացիոնալ գործարարություն և սպառման մակարդակ***: Ելնելով դրանց որակական հատկանիշներից, Ու. Ռոսթոուն առանձնացնում է տնտեսական զարգացման հինգ աստիճաններ՝

1. ***Ավանդական կամ դասային*** (բայց ոչ դասակարգային), որտեղ իշխում է բնատնտեսությունն առանց կապիտալի նկատելի կուտակման, գիտության և տեխնիկայի (ԳՏ) վերելքի, բնակչության աճի բարձր տեմպերի, որը հանգեցնում է վերջինիս քանակի և եկամտի մակարդակի աստիճանական կայունացման:

2. ***Թափ առնելու պայմանների ստեղծում***, որն արտացոլվում է տնտեսական արդյունավետության աստիճանական աճով՝ կապված համապատասխան գործոնների զարգացման հետ:

3. ***Թափի ավելացում***, որի առանձնահատկությունը դրսևորվում է ԳՏ-ի նվաճումների ներդրման և սովորույթների վերանայման անմիջական կապի մեջ:

4. ***Հասունացման փուլի թևակոխում***, որին հատուկ է տնտեսական աճը՝ արտադրության տեմպերի առաջանցումը բնակչության աճի տեմպերից:

5. ***Հասարակության բարձր զանգվածային սպառում***: Այս աստիճանում արտադրական ռեսուրսների սահմանափակության հիմնահարցը վերանում է: Հակառակ դրան, կարևորվում են սպառման և բնապահպանական հիմնախնդիրները, աճում են երկարաժամկետ ծառայության ապրանքների արտադրությունը և ծառայությունների ծավալը:

Նման տեսակետները կապված են հասարակական արտադրության զարգացման ոչ միայն էքստենսիվ և ինտենսիվ տեսակների, այլ նաև դրա ***անկումային պարզ և ընդլայնված*** մակարդակների հետ: Արդի փուլում, առանց վերջիններիս ուսումնասիրության և ընդլայնված վերարտադրության կազմակերպման, անհնար է բավարարել բնակչության աճող պահանջները և ապահովել քաղաքակրթության առաջընթացը[5]:

Յուրաքանչյուր երկրի, ազգի տնտեսության աճի և առևտրաարդյունաբերական ճգնաժամերի հետազոտությունը, որն օգնում է բացահայտելու համապատասխան տնտեսության դինամիկան (շարժունակությունը), պատկանում է հույժ վիճելի հիմնախնդիրների շարքին: Այդ ուղղությամբ բանավեճն առկա է առաջին հերթին տնտեսագետների երեք հիմնական խմբերի միջև: Առաջին խմբին են պատկանում այն տնտեսագետները, որոնց կարծիքով, ճգնաժամային շրջափուլերը տնտեսական ցնցում առաջացնող պատահական ազդակների արդյունք են: Ըստ երկրորդ խմբի, արդյունաբերական շրջափուլը իրական աշխարհին հատուկ ընդհանրական և կրկնվող երևույթ է: Առհասարակ, շրջափուլը այս կամ այն կոնկրետ օբյեկտների փոխազդեցության հակադրությունն է: Նշանակում է՝ գործ ունենք հակադրությունների միասնությանը ներհատուկ հակասության հետ, որը պատճառ է դառնում նոր որակի և քանակի տնտեսա-

[5] Առավել մանրակրկիտ տե'ս **Торосян К.А.** Теория оптимальной цивилизации, Е., 2002:

կան հարաբերությունների ձևավորման՝ հանուն հաջորդ շրջափուլի առաջացման և այսպես շարունակ:

Երրորդ խումբը սկզբունքորեն չի ընդունում տնտեսության շրջափուլային զարգացումը: Այդպես են մտածում արմատական մարքսիստները, որոնց կարծիքով, անդասակարգ հասարակությունը զարգանում է առանց ճգնաժամերի:

Շրջափուլային զարգացման հիմնախնդիրը հետաքրքրել է դեռևս հույն փիլիսոփաներին, Արևելքի դասականներին դեռ մ.թ.ա. հարյուրամյակների խորքում, սակայն տնտեսագետներն իրենց առարկայի մասին տեսական մակարդակով խոսել են միայն XIX դ. սկզբներից: Նրանց թվում՝ Թ. Մալթուս, Ժ. Սիսմոնդի, Ա. Սմիթ, Դ. Ռիկարդո, Ա. Մարշալ և ուրիշներ:

Արժեքի աշխատանքային տեսության դասականների շարքում արդյունաբերական շրջափուլերի ամենաուշագրավ և գիտականորեն համոզիչ հետազոտությունը, անտարակույս, պատկանում է Կ. Մարքսին: Ըստ նրա, յուրաքանչյուր շրջափուլ բաղկացած է հետևյալ փուլերից՝ ***ճգնաժամ-կանգառում-աշխուժացում-վերելք-ճգնաժամ***, որն էլ տնտեսագետներն անվանում են արդյունաբերական շրջափուլ:

Կ. Մարքսը հավելյալ արժեքի արտադրությունը և յուրացումը դրեց դասակարգային քաղաքական հիմքի վրա և ստեղծեց այնպիսի աշխարհայացք, որը փոխում էր անգամ պատճառի ու հետևանքի տեղերը: Այս տեսությունը ուղեցույց համարվեց և դրդապատճառ դարձավ այնպիսի հասարակարգի կառուցման, ինչպիսին էր քաղաքական տոտալիտարիզմով և մարտնչող աթեիզմով բնութագրվող տառապող խորհրդային տիպի սոցիալիզմը, որ XX դ. 70-80-ական թվականներին մխրճվելով արտաքուստ զարգացած արտադրահարաբերությունների, իրականում դրանք քայքայող խոր հակասությունների մեջ, սպառեց «առաջատար» աշխարհայացքի պահանջներին համապատասխանող իր ծագումնաբանական կենսունակությունը և ավերվեց ներքին ճգնաժամի և ոչ թե այն անտեսող աշխարհայացքի պատճառով՝ դիմելով ինքնաբացասման:

Արդի տնտեսագիտությանը հայտնի են բազմաթիվ շրջափուլեր, որոնք, մի կողմից, լուրջ վնասներ են հասցրել սոցիալ-տնտեսական առաջընթացին, մյուս կողմից՝ դարձել դրա բարելավման գործոնը: Շրջափուլերի այդ բազմության մեջ հիմնականում նշվում են թվով վեցը, իսկ դրանց շարքում առավելագույնը՝ չորսը:

Տնտեսության ամենաքայքայիչ ճգնաժամերը տեղի են ունեցել 1920-1921, 1929-1933, 1937-1938 թթ.: 1929-1933 թթ. ճգնաժամն իր ավերիչ բնույթի պատճառով կոչվեց «մեծ լճացում»: Իսկ 1980-1990թթ. ԽՍՀՄ-ում, տեղի ունեցած ճգնաժամը, փաստորեն այդ կարծեցյալ անպարտելի քաղաքական-տնտեսական համակարգի փլուզման պատճառ դարձավ:

Ճգնաժամերին հատուկ են տնտեսության ***սպագնացիան*** (լճացում, դեպրեսիոն բնույթի զարգացում) և ***սպագֆլյացիան*** (կանգառում, արժեզրկում). սա տնտեսության այնպիսի վիճակ է, որի պայմաններում արտադրությունը կանգ է առնում, իսկ արժեզրկումը շարունակվում է: Դա կատարվում է այն պատճառով, որ, մի կողմից, ավելանում է գործազուրկների թիվը, մյուս կողմից՝ իջնում են ապրանքների, ծառայությունների, սպասարկումների գները:

Այսօր ճգնաժամի մեջ ընկնող ազգային տնտեսություններին հատուկ է ոչ թե ինֆլյացիան (արժեզրկումը), այլ ***սպագֆլյացիան:*** Այս պարագայում հսկա մենաշնորհների և պետության միջամտությամբ գների անկման փոխարեն տեղի է ունենում դրանց պահպանում, անգամ արժեզրկված փողերի՝ մինչև նախկին վիճակի վերականգնում (ռեվալորիզացիա կամ ռեվալվացիա):

Ներկայումս ճգնաժամի շրջափուլերի միասնական տեսություն չկա: Ուսումնասիրողները ելնում են էքզոգեն (արտաքին), էնդոգեն (ներքին) և էկլեկտիկ (համատեղված) գործոնային, ազդակային, պատճառահետևանքային կապերից: Տնտեսության շրջափուլային զարգացման հիմնախնդրի վերաբերյալ միասնական կարծիքի բացակայության մասին են վկայում գոյություն ունեցող հետևյալ տեսությունները՝ արտաքին գործոնների, զուտ մոնետար, գերկուտակման, թերսպառման, մարքսիստական, հոգեբանական, և վերջապես, նոր-դասական ու նորքեյնսական:

РОСТ И РАЗВИТИЕ НАЦИОНАЛЬНОЙ ЭКОНОМИКИ

ТОРОСЯН К.А.

Резюме

С формированием и развитием национальных экономик возникла необходимость в исследовании и познании таких экономических категорий,

каковыми являются «рост и развитие». В силу сказанного на первый план следует выдвинуть также совокупный общественный продукт (СОП), национальный доход (НД), национальное богатство (НБ) и иные, соответствующие перечисленным, категории. Не менее важное значение имеют нормативные и позитивные стороны производительности и эффективности товарного производства при учете роста национального дохода и накопления воспроизводимой части национального богатства, поскольку они нацелены на удовлетворение растущих потребностей народов тех или иных стран. Симптоматично, что развитие производства сопровождается неминуемыми экономическими кризисами с их "промышленными циклами", характеризующимися снижением уровня производства и, как следствие, жизненного уровня народа.

GROWTH AND DEVELOPMENT OF NATIONAL ECONOMY

K. TOROSYAN

Abstract

With the formation and development of nations and national economics arose the need to explore and understand such economic categories as “growth and development”. For this purpose the cumulative social product, national income, national wealth and other relevant categories including the normative and positive aspects of productivity and efficiency of commodity production are put forward, taking into account the growth of national income and the accumulation of a reproducible part of national wealth with the aim of meeting the growing needs of the people of the concerned countries. The “industrial cycles” (crisis) with their stages also found their reflection.

ԿԼԱՍՏԵՐՆԵՐԸ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Ս.Ս.

Վերջին տարիներին զբոսաշրջային ոլորտում ենթակառուցվածքային զարգացումը, մարզերում հյուրանոցային տնտեսությունների կառուցումը և վերագործարկումը, ռեստորանային գործարարության (բիզնեսի) ընդլայնումը, ավտոմայրուղիների բարեկարգումն ու նորերի կառուցումը, ճոպանուղիների գործարկումը լուրջ նախադրյալներ ստեղծեցին Հայաստանը զբոսաշրջային գրավիչ երկիր դարձնելու համար:

Ելնելով վերոնշյալից՝ ՀՀ-ում զբոսաշրջության զարգացման և արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ է կիրառել համալիր մոտեցում, ինչը հնարավոր է իրականացնել կլաստերների ձևավորման միջոցով: Այդ համատեքստում զբոսաշրջային կլաստերի հայեցակարգի հիմնական նպատակներն են՝ համայնքների հավասարաչափ զարգացման և տնտեսական աճի ապահովում, կադրերի հոսունության և գործազրկության մակարդակի նվազում, զբոսաշրջային այցելությունների թվաքանակի ավելացում, օտարերկրյա ներդրումների ներգրավում, մարզերի մրցունակության բարձրացում:

Ժամանակակից պայմաններում ինչպես որևէ երկրի, այնպես էլ տարածաշրջանային զբոսաշրջությանը վերաբերող տնտեսագիտական ուսումնասիրություններում մեծ դեր է հատկացվում կլաստերային մոտեցմանը: Զբոսաշրջային կլաստերների ձևավորման, զարգացման և աջակցության անհրաժեշտության մասին նշվում է զբոսաշրջային ոլորտի զարգացման գրեթե բոլոր ռազմավարական ծրագրերում: Եվ բնական է, որ զբոսաշրջային կլաստերների ձևավորումը, տնտեսության վրա դրանց ազդեցությունը և կառավարումը դառնում են ավելի արդիական:

Նախ նշենք, որ այդ գաղափարը առաջ են քաշել բազմաթիվ գիտնականներ և, կախված ուսումնասիրության համատեքստից, տարբեր կերպ են մեկնաբանել «կլաստեր» հասկացությունը: Տնտեսության մեջ կլաստերային մոտեցման հիմնադիրն է Մ. Պորտերը, որն այն սահմանում է որպես «որոշակի տարածաշրջանում փոխկապակցված կազմա-

կերպությունների խումբ, որոնք գործում են որոշակի ոլորտում, բնորոշվում են գործունեության ընդհանուր բնույթով և փոխլրացնում են միմյանց»[1]: Կարող ենք ասել, որ զբոսաշրջային կլաստերը կազմակերպությունների խումբ է, որը գործում է սահմանափակ տարածաշրջանում և զբաղվում է զբոսաշրջային արտադրանքի մշակմամբ, վաճառքով, ինչպես նաև զբոսաշրջային ծառայություններին առնչվող գործունեությամբ: Ընդհանուր առմամբ, կլաստերները ձևավորվում են սիներգիկ էֆեկտի շնորհիվ զբոսաշրջային շուկայում տարածաշրջանի մրցունակությունը բարձրացնելու, մասնավորապես կլաստերում ընդգրկված կազմակերպությունների գործունեության արդյունավետությունը բարձրացնելու, ներդրումները խթանելու և նոր ուղղություններ զարգացնելու համար:

Փաստորեն, զբոսաշրջային կլաստերների ստեղծումը որոշում է տարածաշրջանի դիրքը և ազդում երկրի կերպարի ձևավորման վրա: Կլաստերները, որպես նորարարական համակարգ, կարող են տնտեսական զարգացման հիմք դառնալ: Կլաստերային մոտեցումը նաև ապագայում նոր ձևաչափով միավորումներ ստեղծելու նախադրյալ է, քանի, որ ուղղակիորեն խթանում է նորամուծական ու գիտատեխնիկական ուղղությունները, ներդրումների ներգրավումը և անուղղակիորեն աջակցում գիտության, կրթության ու գործարարության ոլորտների զարգացմանը:

Պետք է նշել, որ միջազգային պրակտիկայում գոյություն ունեն ինչպես ճյուղային (ձևավորվում են գործունեության որոշակի ոլորտի շուրջ), այնպես էլ միջճյուղային կլաստերներ: Զբոսաշրջային կլաստերի ձևավորման առաջարկվող մոդելը (գծ. 1) պետք է ներառի բուն զբոսաշրջային կազմակերպությունները (զբոսօպերատորներ, զբոսգործակալներ և այլն), հյուրընկալության արդյունաբերության կազմակերպությունները (հյուրանոցներ, հյուրատներ և այլն), հասարակական սննդի օբյեկտները, տրանսպորտային, գովազդային և այլ կազմակերպությունները, որոնք զբոսաշրջային և հարակից ենթակառուցվածքների բաղադրիչներն են: Ընդ որում, զբոսաշրջության ոլորտի համար կիրառելի է «տարրական զբոսաշրջային կլաստեր» եզրույթը՝ որպես որոշակի տարածաշրջանի կամ կազմակեր-

[1] **Портер М.** Международная конкуренция (Международные отношения, М., 1993, с. 191).

պության սահմաններում կլաստերային համակարգի կառուցվածքային տարրերի (օղակների) ամբողջություն[2]:

Կարծում ենք՝ ՀՀ-ում կլաստերների ձևավորումն ու զարգացումը հիմք կդառնան երկրում գործարարության զարգացման կայուն ռազմավարության ձևավորման համար, քանի որ կլաստերային համակարգի ստեղծումն ու զարգացումն ընդհանրապես տարածաշրջանային տնտեսական զարգացման հիմքն են, ինչը ենթադրում է գործարարության նախաձեռնություն և աշխուժություն, ինչպես նաև պետության ու մասնավոր հատվածի համագործակցություն: Ընդ որում, կլաստերների ստեղծման ու զարգացման գործում պետության և մասնավոր հատվածի մասնակցության աստիճանը կարող է լինել տարբեր, միևնույն ժամանակ՝ փոխլրացնող: Փաստենք, որ ներկայումս ՀՀ զբոսաշրջային ոլորտի զարգացման ռազմավարության մեջ արդեն ձևավորվում են զբոսաշրջային կլաստերների ստեղծման որոշակի տարրեր:

Տարածաշրջանում կլաստերների ստեղծման դրական հետևանքներից կարող ենք համարել աշխատատեղերի պահպանման կամ նոր աշխատատեղերի ստեղծման երաշխիքը, փոքր և միջին ձեռնարկություններում զբաղվածների թվի ավելացումը, հարկային բազայի պահպանումը, ինչպես նաև առանձին կազմակերպությունների և, ի վերջո, ամբողջ կլաստերի մրցակցային դիրքի ամրապնդումը: Արդյունավետ գործող կլաստերները կվերածվեն ներդրողների և հատկապես խոշոր կապիտալ ներդրումների համար հեռանկարային կառույցների, ինչը խիստ կարևորվում է ՀՀ տնտեսության զարգացման համար: Հաշվի առնելով վերոնշյալ բոլոր գործոնները, որոնք ապահովում են զբոսաշրջային կլաստերի համակարգի ներդրման արդյունավետությունը, առաջարկում ենք զբոսաշրջության ոլորտում մրցունակ կլաստերի ձևավորման և կառավարման հետևյալ մոդելը (գծ. 1):

Համաձայն ներկայացված մոդելի՝ զբոսաշրջության արդյունքը ձևավորվում է անմիջապես զբոսաշրջային ոլորտի կազմակերպություններում, ենթակառուցվածքներում և զբոսաշրջության ոլորտին հարակից ենթակառուցվածքներում: Այսինքն՝ զբոսաշրջային արդյունքի բաղադրիչները ձևավորվում են առանձին կազմակերպություններում, ինչն ավելի դյու-

[2] **Ульрих Ю.А.** Основы кластерного подхода к управлению в туризме (Символ науки, N 11-1/23, 2016).

րին է դարձնում կապիտալի կառավարումը, սակայն, միևնույն ժամանակ, չի մեծացնում գործարար ռիսկերը: Կարծում ենք՝ նպատակահարմար կլինի ՀՀ-ում զբոսաշրջային կլաստերի ձևավորմանը մասնակից դարձնել նաև Զբոսաշրջության զարգացման համակարգող խորհրդին, որի կարևորագույն խնդիրներից է որոշումների ընդունումը՝ ուղղված գործարարության արդյունավետության բարձրացմանը, տարածաշրջանում զբոսաշրջային արդյունաբերության զարգացմանը, ոլորտի կազմակերպությունների գործունեության խթանմանը, ինչպես նաև զբոսաշրջային ուղերթների և երթուղիների ձևավորմանը և մասնակցությանը շուկայում զբոսաշրջային արդյունքի առաջմղման գործընթացին:

Գծանկար 1. Զբոսաշրջային կլաստերի ձևավորման և կառավարման մոդելը



Զբոսաշրջային կլաստերի առաջարկվող մոդելը կնպաստի ոչ միայն հնարավոր մրցակիցների թվի կրճատմանը, այլ նաև նվազագույնի կհասցնի արտադրական ծախսերը, ինչը դրական գործոն է գնային մրցակցության համար: Նշված մոդելում զբոսաշրջային արդյունքը, որը ձևավորվում է կազմակերպությունների նեղ շրջանակներում, ներառում է ոչ միայն սեփական արտադրության, այլ նաև գործընկեր կազմակերպությունների հնարավորությունները: Ուստի՝ առանցքային դրույթներից է այն, որ զբոսաշրջային կլաստերի ձևավորումը և զարգացումը պետք է պայմաններ ստեղծեն պատվերներ ստանալու գործընթացում կազմակերպությունների ավելի ընդարձակ շրջանակ ներառելու համար: Այս

ամենի շնորհիվ հնարավորություն է ստեղծվում կլաստերային կառուցվածքում ներգրավելու նոր կազմակերպություններ, այն է՝ իրավաբանական անձանց: Զբոսաշրջային կլաստերի կառուցվածքային օղակները ներկայացված են հետևյալ մոդելում (գծ. 2):

Գծանկար 2. Զբոսաշրջային կլաստերի կառուցվածքային օղակները



Սույն մոդելում ներկայացված՝ Զբոսաշրջության զարգացման համակարգող խորհրդի կազմում պետք է ընդգրկվեն մասնակիցներ, որոնք հետաքրքրված են տարածաշրջանում զբոսաշրջային արդյունաբերության զարգացման հեռանկարով, մասնավորապես՝ տարածաշրջանի կառավարման մարմինների, ինչպես նաև զբոսաշրջային կազմակերպությունների, զբոսաշրջային և հարակից ենթակառուցվածքների կազմակերպությունների ներկայացուցիչներ: Զբոսաշրջության զարգացման կոորդինացիոն խորհրդի ստեղծման նպատակներն են՝

- զբոսաշրջային կլաստերի զարգացման ռազմավարության իրականացման և տարածաշրջանի զբոսաշրջային արդյունքի առաջմղման համար պայմանների ստեղծումը,
- հետագա պատվերների ապահովումը,
- առավել հեռանկարային գործընկերների հետ երկարաժամկետ կապերի ամրապնդումը,
- շահույթը առավելագույնի հասցնելը,

- լրացուցիչ մարքեթինգային տեղեկատվություն ստանալը,

- շուկայում նոր հատվածներ զբաղեցնելու համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը,

- գործարարության համար առավել հեռանկարային ուղղությունների խթանումը:

ՀՀ տնտեսության համար կլաստերները (այդ թվում՝ զբոսաշրջային) կարող են համարվել հեռանկարային տնտեսական զարգացման նորամուծական մոդել այն տարածաշրջաններում, որոնք մինչ այդ կողմնորոշված էին դեպի արդյունաբերական զարգացումը: Այն ենթադրում է լավագույնս հաշվի առնել սոցիալ-տնտեսական զարգացման հնարավորությունները և արդյունավետ կառուցել ու իրականացնել տվյալ տարածաշրջանի երկարաժամկետ զարգացման ռազմավարությունը: Ելնելով վերոնշյալից՝ մշակվել և առաջարկվել է տարածաշրջանի նորամուծական զբոսաշրջային կլաստերի մոդել (գծ. 3):

Գծանկար 3. Տարածաշրջանում զբոսաշրջային կլաստերի առաջարկվող մոդել



Այս մոդելի բաղադրիչներն են.

- հիմք ձևավորող կազմակերպությունները, որոնց շուրջ ստեղծվում է կլաստերը, և որոնք իրականացնում են հիմնական գործունեությունը,

թողարկում վերջնական արդյունքը, այսինքն, անմիջապես զբոսաշրջային ոլորտի կազմակերպությունները, որոնք զբաղված են զբոսաշրջային արդյունքի մշակմամբ և առաջմղմամբ (զբոսգործակալներ, զբոսօպերատորներ, հյուրանոցներ և այլն),

- փոխլրացնող կազմակերպությունները, որոնց գործունեությունն ուղղակիորեն ապահովում է զբոսաշրջային կլաստերի հիմքը ձևավորող կազմակերպությունների գործունեությունը,

- զբոսաշրջային ենթակառուցվածքը՝ կազմակերպություններ, որոնց առկայությունը պարտադիր է, սակայն գործունեությունը ուղղակիորեն կապված չէ զբոսաշրջային կլաստերի հիմքը ձևավորող կազմակերպությունների գործունեության հետ (տրանսպորտ, կապ, հանրային սննդի կազմակերպություններ),

- հարակից ենթակառուցվածքը՝ կազմակերպություններ, որոնց առկայությունը ցանկալի է, սակայն պարտադիր չէ կլաստերի այլ կազմակերպությունների գործունեության համար, որոնք ներառում են ծառայությունների ոլորտի և խորհրդատվական կազմակերպություններ:

Առաջարկվող զբոսաշրջային կլաստերի հայեցակարգի հիմնական նպատակներն են.

1. տարածաշրջանում տնտեսական աճի ապահովում և համայնքների համաչափ զարգացում,
2. գործազրկության մակարդակի նվազեցում և աշխատուժի արտահոսքի կրճատում,
3. զբոսաշրջային այցելությունների քանակի ավելացում,
4. օտարերկրյա ներդրումների ներգրավում,
5. մարզերի մրցունակության բարձրացում:

Ամփոփելով նշենք, որ զբոսաշրջային ոլորտում առկա է զբոսաշրջային կլաստերների ստեղծման մեծ ներուժ, և դրանց կիրառումը կնպաստի տարածաշրջանի տնտեսական զարգացմանը, ներդրումների ներգրավմանը, պետություն-մասնավոր հատվածի համագործակցությանը, տարածաշրջանների համաչափ զարգացմանը:

КЛАСТЕРЫ В ТУРИСТИЧЕСКОЙ ОТРАСЛИ

КАРАПЕТЯН С.С.

Резюме

В последнее время развитие туристической инфраструктуры, реконструкция и строительство гостиничного хозяйства, расширение ресторанного бизнеса, улучшение состояния автомагистралей и построение новых, эксплуатация канатных дорог создали серьёзные предпосылки для признания Армении привлекательной туристической страной. Исходя из вышеизложенного, для эффективного управления и развития туризма РА необходим комплексный подход, который будет способствовать формированию кластеров. В этом контексте создание туристических кластеров способствует обеспечению экономического роста и равномерному развитию сообществ; снижению уровня безработицы и утечки кадров; увеличению числа туристических прибытий; привлечению иностранных инвестиций; повышению конкурентоспособности марзов.

THE CLUSTERS IN SPHERE OF TOURISM

S. KARAPETYAN

Abstract

During the last years infrastructure developments in tourism sphere, building and operating tourism sector in regions (marzes), expansion of restaurant business, building and improving highways creates the necessary prerequisites for making Armenia as an attractive tourism country. The purposefulness of the creation of tourist clusters is substantiated, which, in turn, takes into account the opportunities for complex development and suggests strategies for the future development of the region. The main objectives of the concept of the tourist clusters are: ensuring economic growth and the even development of communities; a reduction in the level of unemployment and the loss of personnel; increase in the number of tourist arrivals; attraction of foreign investments; increase in competitiveness of the regions.

ՀԱՐԿԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

ԲԵԳԼԱՐՅԱՆ Մ.Ա.

Փոքր և միջին ձեռնարկատիրության (ՓՄՁ) սուբյեկտների զարգացման կարևորագույն հիմնախնդիրները կապված են ռեսուրսների, մասնավորապես՝ սեփական միջոցների անբավարարության հետ: Այդ դեպքում լրացուցիչ կարևորություն է ստանում փոխառու միջոցների ներգրավումը, որի իրականացման արդյունավետությունը պայմանավորված է համապետական իրավական դաշտի և ֆինանսատնտեսական ենթակառուցվածքների զարգացման աստիճանով, այնպես, որ հնարավոր լինի ինչպես փոխառու, այնպես էլ փոխատու կողմերի համար ընդունելի եկամտաբերության և ռիսկայնության պայմաններով ներգրավել ֆինանսական ռեսուրսներ: Դա հատկապես լուրջ խնդիր է անցումային և հետանցումային երկրներում: Ավելին, ներկա ժամանակաշրջանում, երբ թարմ են համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի վերաբերյալ հիշողությունները, և տեսանելի են դրա թողած հետքերը, ֆինանսական ռեսուրսների ներգրավումը հնարավոր է ապահովել պետական աջակցության գործուն մեխանիզմների կիրառմամբ կամ փոխատու կողմի համար ապահովության լրացուցիչ միջոցների գործարկման պարագայում, ինչպիսիք են գրավը, երաշխիքները և այլն:

Նման պայմաններում ավելի է կարևորվում ՓՄՁ սուբյեկտների կառավարման բարձր արդյունավետության հարցը, քանի որ ձեռնարկատիրության այս տեսակի թերի կառավարումը կարող է հանգեցնել ինչպես ձեռնարկության սնանկացման, այնպես էլ պոտենցիալ շահույթի թերստացման՝ ուղղակիորեն վնաս հասցնելով սեփականատերերին: Հայաստանում պետական աջակցության համակարգի շրջանակում ՓՄՁ սուբյեկտների համար ֆինանսավորումն ապահովվում է գլխավորապես բանկային վարկավորման և նորաստեղծ ձեռնարկությունների ու գյուղմթերք արտադրողների համար նախատեսված հասցեական աջակցության որոշ

մեխանիզմների միջոցով: Դեռևս լիարժեքորեն կայացած չեն ֆինանսավորման այլընտրանքային աղբյուրները, մասնավորապես, լիզինգը, որը ՓՄՁ սուբյեկտների համար կարող է լինել բանկային ֆինանսավորման այլընտրանք:

Կազմակերպությունների գործունեության արդյունավետության և մըրցունակության ապահովման տեսանկյունից մեծ կարևորություն է տրվում հարկային բեռը բնութագրող ցուցանիշներին: Հարկերը, հանդես գալով որպես չփոխհատուցվող ծախս, իրենց դրոշմն են դնում թողարկվող արտադրանքի ինքնարժեքի վրա՝ պայմանավորելով վերջինիս շուկայական գնային մրցունակությունը: Ասվածն առավել ևս վերաբերում է ՓՄՁ ոլորտին, որտեղ մրցակցությունն առկա է ինչպես ՓՄՁ սուբյեկտների, այնպես էլ նրանց և խոշոր կազմակերպությունների միջև: Ուստի կառավարման խնդիրների ուսումնասիրության ժամանակ պետք է կարևորել կազմակերպությունների հարկային բեռի և այն մեղմելու հնարավորությունների քննարկումը: Կազմակերպությունների հարկային բեռը բնութագրող պարզագույն ցուցանիշներից մեկը կազմակերպության վճարած հարկերի և շրջանառության հարաբերությունն է: Իհարկե, առկա են հարկային բեռը բնութագրող այլ ցուցանիշներ[1], սակայն, հաշվի առնելով Հայաստանում ՓՄՁ ոլորտի վիճակագրության վարման սահմանափակությունը և հասանելի վիճակագրական տվյալների բնույթը, ՓՄՁ սուբյեկտների հարկային բեռի բնութագրման և շարժընթացի վերլուծության համար, որպես հարկային բեռը բնութագրող ցուցանիշ, օգտագործել ենք վճարված հարկերի և շրջանառության հարաբերության ցուցանիշը:

Աղյուսակ 1-ում բերված տվյալները ցույց են տալիս, որ հարկային բեռի ցուցանիշը տատանումների բավական մեծ միջակայք ունի՝ ինչպես ըստ գործունեության ոլորտների, այնպես էլ ըստ տարիների[2]: Հարկ է նշել, որ հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման վերաբերյալ պաշտոնական վիճակագրության հավաստիությունը կասկածելի է, քանի որ 2016 թ. համար հարկային բեռի ցուցանիշը կազմել է 97.1%, ինչը զուրկ է տնտեսագիտական տրամաբանությունից: Մյուս

[1] **Հարությունյան Տ.,** Հարկային բեռը և հարկման արդյունավետությունը: Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (հանրապետական գիտաժողովի նյութեր), Ե., 2010, էջ 105:

[2] ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն (http://mineconomy.am/hy/449):

ոլորտներում հարկային բեռի ցուցանիշը 2014-2016 թթ. կազմել է 7.3–ից մինչև 42.6 %՝ կախված գործունեության ոլորտից: Ըստ ոլորտների քննարկելիս պետք է արձանագրել, որ ներկայացվող ժամանակահատվածում հարկային բեռի ցուցանիշը նվազել է ՓՄՁ սուբյեկտների՝ գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն, փոխադրումներ և պահեստային տնտեսություն, կացության և հանրային սննդի կազմակերպում, տեղեկատվություն և կապ, կրթություն, ինչպես նաև առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում ենթախմբերում: Մյուսներում արձանագրվել է հարկային բեռի աճ: Ընդհանուր առմամբ, ըստ գործունեության բոլոր տեսակների, ՓՄՁ սուբյեկտների հարկային բեռը 2014-2016 թթ. աճել է՝ համապատասխանաբար կազմելով. 2014 թ.՝ 15.2%, 2015 թ.՝ 17.1%, իսկ 2016 թ.՝ 21.7%:

Աղյուսակ 1

ՓՄՁ սուբյեկտների հարկային բեռը շրջանառության նկատմամբ, 2014-2016 թթ., %[3]

Գործունեության ոլորտը	2014 թ.	2015 թ.	2016 թ.
Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն	13.4	10.7	7.3
Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	28.4	25.7	97.1
Մշակող արդյունաբերություն, այդ թվում՝	13.7	15.0	29.1
ոչ պարենային	14.0	14.4	34.4
պարենային	13.1	15.6	19.7
Շինարարություն	21.4	20.1	23.6
Մեծածախ և մանրածախ առևտուր, ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգում	9.3	11.9	13.2
Փոխադրումներ և պահեստային տնտեսություն	20.6	16.2	15.0
Կացության և հանրային սննդի կազմակերպում	24.7	21.7	15.1
Տեղեկատվություն և կապ	24.3	25.7	22.0
Կրթություն	36.5	32.9	18.8
Առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում	23.1	20.9	21.2
Մշակույթ, զվարճություններ և հանգիստ	26.9	36.2	32.7
Այլ ոլորտներ	25.3	30.1	42.6
Ընդամենը՝	15.2	17.1	21.7

Աղյուսակ 2–ում ներկայացված են հարկային բեռի ցուցանիշներն ըստ ՓՄՁ սուբյեկտների տարբեր խմբերի: Ինչպես և նախորդ աղյուսակի պարագայում՝ հարկային բեռի ցուցանիշը հանքագործական արդյու-

[3] Տե՛ս նույն տեղում:

նաբերություն և հանքերի շահագործում ենթախմբի գերփոքր կազմակերպության համար վստահելի չէ, քանի որ, ըստ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության ներկայացրած տվյալների, այն կազմում է 264.6 %, ինչը զուրկ է տնտեսական հիմնավորումից:

Աղյուսակ 2

ՓՄՁ սուբյեկտների հարկային բեռը շրջանառության նկատմամբ, ըստ կազմակերպության չափերի, 2016 թթ., %[4]

	Գերփոքր	Փոքր	Միջին	Ընդամենը
Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն	12.4	8.4	5.7	7.3
Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	264.6	38.8	20.8	97.1
Մշակող արդյունաբերություն, այդ թվում՝	48.4	27.5	21.1	29.1
ոչ պարենային	66.8	32.2	19.8	34.4
պարենային	11.9	19.2	23.4	19.7
Շինարարություն	20.3	16.9	30.2	23.6
Մեծածախ և մանրածախ առևտուր, ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգում	7.2	11.5	24.3	13.2
Փոխադրումներ և պահեստային տնտեսություն	14.5	15.2	15.0	15.0
Կացության և հանրային սննդի կազմակերպում	15.8	13.1	16.7	15.1
Տեղեկատվություն և կապ	13.9	20.5	28.1	22.0
Կրթություն	20.4	19.3	17.8	18.8
Առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում	22.7	17.2	21.9	21.2
Մշակույթ, զվարճություններ և հանգիստ	72.0	14.4	23.8	32.7
Այլ ոլորտներ	20.4	34.3	74.2	42.6
Ընդամենը՝	15.5	18.7	29.8	21.7

Այս աղյուսակի տվյալները հիմնավորում են այն իրողությունը, որ գերփոքր, փոքր և միջին ձեռնարկություններում հարկային բեռի ցուցանիշները զգալիորեն տարբերվում են, ինչը նշանակում է, որ դրանք գործում են մրցակցային անհավասար պայմաններում: Որոշ դեպքերում առավելությունները գերփոքր ձեռնարկությունների օգտին են, օրինակ, պարենային մշակող արդյունաբերության, մեծածախ և մանրածախ առևտրի, ավտոմեքենաների և մոտոցիկլների վերանորոգման, տեղեկատվության և կապի, ինչպես նաև այլ ենթախմբերում գործող կազմակերպությունները, որոնցում հարկային բեռի ցուցանիշը համապատասխանաբար կազմել է 11.9%, 7.2%, 13.9% և 20.4%: Հարկային բեռի տեսանկյունից միջին չափի դասակարգում ունեցող ձեռնարկությունները մրցակցային առավելութ-

[4] Տե՛ս նույն տեղում:

յուններ ունեն գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն, հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում, ոչ պարենային մշակող արդյունաբերություն ենթախմբերում, որտեղ հարկային բեռի ցուցանիշը կազմել է համապատասխանաբար 5.7%, 20.8% և 19.8%: Փոքր ձեռնարկությունները արտոնյալ հարկային բեռով են գործում կացության և հանրային սննդի կազմակերպման, առողջապահության և բնակչության սոցիալական սպասարկման, ինչպես նաև մշակույթի, զվարճությունների և հանգստի ոլորտներում՝ համապատասխանաբար 13.1%, 17.2% և 14.4% ցուցանիշներով: Ընդհանուր առմամբ, հարկային բեռի ցուցանիշը գործունեության բոլոր ոլորտների հանրագումարով, գերփոքր ձեռնարկությունների համար կազմել է 15.5%, փոքրերի համար՝ 18.7% և միջինների համար՝ 29.8%: Հետևաբար, կարելի է արձանագրել, որ հարկային օրենսդրությունը տարբերակված մոտեցում է ցուցաբերում ՓՄՁ դասակարգման տարբեր չափերի կազմակերպությունների համար, ինչը ոչ միայն կարող է խոչընդոտել ձեռնարկատիրության զարգացման հեռանկարները, այլև կաշկանդել կազմակերպությունների կառավարման ազատությունը, քանի որ խոշորանալուն զուգընթաց դրանք կհայտնվեն հարկային բեռի ավելի բարձր ճնշման ներքո:

Նման անբնական պատկերը իրականում կարող է պայմանավորված լինել մի քանի գործոններով: Նախ՝ ՓՄՁ ոլորտում հարկային հաշվառման կազմակերպման, հարկային վերահսկողության և ստվերային շրջանառություն առկայության պայմաններում, ըստ չափերի տարբեր դասակարգմամբ կազմակերպությունների վճարած հարկերը, հնարավոր է, չեն արտացոլում տնտեսության իրական պատկերը: Մյուս կողմից, կարելի է ենթադրել, որ հարկային եկամուտների նման կառուցվածքը կարող է պայմանավորված լինել ՓՄՁ-ների դասակարգման անկատար սկզբունքներով, որոնցով պայմանավորված, իրապես ՓՄՁ ձեռնարկատիրության ոգուն համապատասխանող ձեռնարկությունները չեն համարվում այդպիսին և դուրս են մնում ՓՄՁ վիճակագրության շրջանակից:

Կազմակերպությունների կառավարման գործընթացում մեծ կարևորություն է տրվում հարկային ծախսերի պլանավորման և նվազեցման քաղաքականությանը: Դրամական հոսքերի կառավարումը, անկախ կազմակերպության չափերից, ձեռնարկության կառավարման կարևորագույն հայեցակետերից է և բնութագրում է կազմակերպության կողմից ստացված և

վճարած բոլոր կանխիկ և անկանխիկ միջոցները: Դրամական հոսքերի կառավարումն ուղղված է դրանց ներհոսքերի և արտահոսքերի համապատասխանեցմանը, ժամկետանց պարտավորությունների կատարման ապահովմանն ու, ըստ անհրաժեշտության, լրացուցիչ ֆինանսական ռեսուրսների ներգրավմանը, ինչը ձեռնարկության կայունության և սեփականատերերի շահերի ապահովման հենքն է: Այս համատեքստում հարկային բնույթի ծախսերի արդյունավետ կառավարումն առանձնահատուկ կարևորություն է ստանում, քանի որ հարկերը կազմակերպության կատարած ծախսերում զգալի կշիռ ունեն: Ավելին, կապված հարկերի անհատույց բնույթի հետ, հարկերի վճարման դիմաց կազմակերպությունը որևէ իրացվելի ակտիվ կամ իրավունք ձեռք չի բերում, հետևաբար, կոնկրետ շրջանառության ծավալի պայմաններում վճարված հարկերի ծավալի կրճատումն ուղղակի ազդեցություն է թողնում կազմակերպության շահութաբերության վրա: Հարկերի պլանավորման գործընթացում պետք է լուծվեն մի քանի սկզբունքային հարցեր. թերի պլանավորումը, գլոբալ առումով, սահմանափակում է հետագա միջոցառումների շրջանակը: Դրանցից են՝

1. *Կազմակերպության գրանցման վայրի ընտրությունը:* Հարկային ռեժիմները կարող են տարբերվել ոչ միայն միջազգային, այլև ներպետական մակարդակներում: Պետության ներսում հարկային արտոնություններ կարող են սահմանվել սահմանային և կլիմայական անբարենպաստ գոտիներում գործունեություն ծավալելու համար, ինչպես նաև գործել տեղական հարկեր և հարկային բնույթ ունեցող այլ վճարներ, որոնք գրանցման և գործունեության վայրի ընտրությամբ կարող են ավելացնել կամ նվազեցնել հարկային պարտավորությունների մեծությունը: ՓՄՁ-ների կողմից կազմակերպության գրանցման վայրի ընտրության ազատությունը բավական բարձր է, ավելի բարձր, քան խոշոր կազմակերպությունների դեպքում: Դա պայմանավորված է ՓՄՁ-ներում նյութատեխնիկական բազայի չափերով, փոքր աշխատակազմով և տեղում աշխատանքային ռեսուրսների ներգրավման դյուրությամբ: Միաժամանակ, ՓՄՁ-ները խոշորներից ավելի հաճախ են կապված լինում որոշակի տեղանքի հետ, քանի որ ծառայություններ են մատուցում կամ ապրանք են մատակարարում տեղի բնակչությանը, ինչը սահմանափակում է գրանցման վայրի ընտրությունը:

2. *Հարկային օրենսդրության բացերի և առավելությունների, ինչպես նաև արտոնությունների հնարավոր առավելագույն շրջանակների օգտա-*

գործումը, հարկային պարզեցված և հատուկ ռեժիմների ընտրությունը: Այս համատեքստում գործնականում դիտարկվում են հարկային օրենսդրության չարաշահումներն ու հարկային մարմինների հետ ոչ ֆորմալ հարաբերությունները: Հարկային պարզեցված և հատուկ ռեժիմների ընտրությունը կարևոր է այնքանով, որ օրենսդրությամբ կարող են սահմանափակվել ցանկացած պահի հարկման ռեժիմի փոփոխության հնարավորությունները: Որպես կանոն, ռեժիմի ընտրության հնարավորությունը տրվում է ֆինանսական տարվա սկզբում, կազմակերպության ստեղծման պահին և ֆինանսատնտեսական որոշակի սահմանաչափերի գերազանցման ժամանակ: ՓՄՁ-ները, որպես կանոն, չեն տիրապետում համապատասխան իրավաբանների և բարձրակարգ հաշվապահների ռեսուրսին, և հարկային օրենսդրության առանձնահատկություններից օգտվելու քիչ հնարավորություններ են ունենում: Բացի այդ, հարկային օրենսդրության առանձնահատկություններին առնչվող մեքենայություններով ստացված օգուտը, կապված հարկվող բազայի սահմանափակ մեծության հետ, կարող է այնքան փոքր լինել, որ տնտեսապես նպատակահարմար չի լինում համապատասխան կադրերի ներգրավումն ու ենթակառուցվածքների ձևավորումը: Այս առումով ՓՄՁ-ներին վերաբերում են հարկային արտոնություններն ու հատուկ ռեժիմները, որոնք, սակայն, նմանատիպ ձեռնարկությունների միջև մրցակցային պայքարում մրցակցային առավելություն չեն ապահովում, քանի որ հավասարապես վերաբերում են բոլոր ՓՄՁ-ներին: Այլ է իրավիճակը ոչ ֆորմալ հարաբերությունների տեսանկյունից, որի շրջանակում ոչ միայն առանձին ՓՄՁ սուբյեկտներ կարող են հայտնվել արտոնյալ կարգավիճակում, այլև՝ փաստացիորեն խոշոր կազմակերպությունները, որոնք տիրապետում են ավելի լայնածավալ նյութատեխնիկական և մարդկային ռեսուրսների, համապատասխան ցուցանիշների արհեստական նվազեցմամբ դասվել ՓՄՁ-ների շարքում՝ հավասարապես օգտվելով հարկային արտոնություններից և հատուկ ռեժիմներից:

3. *Ձեռնարկության կազմակերպաիրավական կառուցվածքի ընտրությունը:* Ազգային հարկային օրենսդրությամբ տարբերություններ կարող են սահմանվել անհատ ձեռնարկատերերի և իրավաբանական անձանց առանձին խմբերի (սահմանափակ պատասխանատվության ընկերություններ, կորպորացիաներ, հիմնադրամներ) և միևնույն գործունեություն իրականացնող տարբեր կազմակերպությունների համար: Այդ տարբերություն-

ները վերաբերում են ինչպես հարկվող բազային, այնպես էլ հարկի դրույքաչափերին, հարկատեսակներին, հարկի գումարը վճարելու ժամկետներին և հարկման այլ տարրերի: ՓՄՁ-ները Հայաստանի իրականության պայմաններում հիմնականում ընտրություն են կատարում անհատ ձեռնարկատիրոջ և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների միջև: ՀՀ օրենսդրությամբ, նշված երկու կազմակերպաիրավական ձևերի միջև տարբերությունները վերաբերում են եկամտային և շահութահարկ (շրջանառության հարկ) վճարելուն:

4. *Հաշվապահության գրագետ կազմակերպումը:* Հաշվապահությունը պետք է իրականացվի համապատասխան օրենսդրության շրջանակում, սակայն չափօրինակները թույլ են տալիս որդեգրել հաշվապահական քաղաքականության տարբեր սկզբունքներ, որոնց շնորհիվ հարկային պարտավորությունների մեծությունը կարող է զգալիորեն տարբերվել: Դրանց շարքին են դասվում ամորտիզացիայի հաշվարկման եղանակի ընտրությունը, ակտիվների հաշվառումը, վերագնահատումը և այլն: Հաշվապահության իրականացումն անընդհատ փոփոխվող հարկային օրենսդրության պայմաններում լրացուցիչ աշխատանքային և ժամանակային ծախսեր է ենթադրում, ինչը լուրջ բեռ կարող է դառնալ ՓՄՁ-ների համար: Հաշվապահությունը վարելու արտապատվիրումը հատկապես կիրառելի է ՓՄՁ-ների պարագայում: Հարկ է նշել, որ ՀՀ–ում գործում են հաշվապահական հարյուրավոր գրասենյակներ, որոնց ծառայությունների մակարդակը գնահատելը և համեմատելը խրթին խնդիր կարող են դառնալ ՓՄՁ սուբյեկտների համար:

5. *Հարկային ոլորտում խախտված իրավունքների վերականգնման՝ տնտեսապես հիմնավորված ռազմավարության իրականացումը:* Չնայած կարող է կարծիք ձևավորվել, որ հարկատուների իրավունքները խախտվում են բացառապես չկայացած պետական կառավարման համակարգ ունեցող երկրներում, սակայն կյանքը ցույց է տալիս, որ նման դեպքեր գրանցվում են բոլոր երկրներում: Ընդ որում, զարգացածության ու ժողովրդավարության մակարդակը երաշխավորում է ոչ թե հարկատուների իրավունքների խախտումների բացակայություն, այլ դրանք վերականգնելու հեշտություն և ընթացակարգերի պարզություն: Հայաստանի պայմաններում ՓՄՁ ոլորտը հարկային վերահսկողության առումով գտնվում է բավական շահեկան կարգավիճակում, և այս ոլորտի խնդիրները կապված են

դատահիրավական համակարգի համընդհանուր հիմնահարցերի հետ:

Միջազգային շուկային ազգային շուկայի ինտեգրման դեպքում հարկային պլանավորման գործընթացն ավելի է բարդանում, քանի որ ձեռնարկությունները ստիպված են ուսումնասիրել արտաքին շուկաների տեղական հարկային համակարգերը՝ համապատասխան շտկումներ մտցնելով իրենց գործունեության մեջ: Եթե խոշոր կազմակերպությունները կարող են համապատասխան մասնագետներ ներգրավել կամ կազմակերպել իրենց մասնագետների վերապատրաստումը, ապա ՓՄՁ-ների պարագայում նման շռայլություն թույլ տալն արդեն խնդրահարույց է: Այս առումով խիստ կարևոր է, որ գործեն ՓՄՁ-ներին համապատասխան խորհրդատվական և գործառնական աջակցություն ցուցաբերող պետական և մասնավոր կառույցները, քանի որ միջազգային շուկաներ դուրս գալու դեպքում առանձին ՓՄՁ սուբյեկտի ստացած օգուտը կարող է բավարար չլինել նման ծախսերն ինքնուրույն ստանձնելու համար: Բնականաբար, սխալ է ենթադրել, որ միջազգային ինտեգրման գործընթացները բացառապես բացասական ազդեցություն են թողնում ձեռնարկությունների և մասնավորապես ՓՄՁ-ների վրա: Ընդհակառակը, առանձին հարկային իրավասության ներքո կարող են գործել այնպիսի հարկային կարգավորումներ, որոնց առկայությունը բարենպաստ ազդեցություն կթողնի այս կամ այն չափի ձեռնարկատիրության վրա[5]:

Հարկային և մաքսային օրենսդրության միջազգային միօրինակացումը այն եզակի գործիքներից է, որ հնարավորություն է տալիս վերացնել ազգային շուկայի սահմանները՝ հավասար հնարավորություններ ապահովելով ինչպես խոշոր, այնպես էլ ՓՄՁ սուբյեկտների համար միջազգային շուկայում գործունեություն ծավալելու համար: Սակայն ներկայումս հարկային և մաքսային օրենսդրության միջազգային չափօրինակներ, որպես այդպիսիք, գոյություն չունեն, առա են միայն միջազգային տարբեր հեղինակավոր կազմակերպությունների ցուցումները հարկային և մաքսային համակարգերի ձևավորման սկզբունքների վերաբերյալ: Ավելի գործնական տեսանկյունից հարկային և մաքսային օրենսդրության ընդհանրացման երևույթներ կարելի է տեսնել տնտեսական միությունների, իսկ մաքսային օրենսդրության առումով՝ մաքսային միությունների շրջանակում, ինչը

[5] **Карп М.В.** Специальные налоговые режимы на предприятиях, М., 2007, с. 148.

ՓՄՁ սուբյեկտներին առնվազն տեսականորեն հնարավորություն է տալիս ազատ մուտք ունենալ տարածաշրջանային շուկաներ:

ПРОБЛЕМЫ НАЛОГОВОГО УПРАВЛЕНИЯ В СФЕРЕ МАЛОГО И СРЕДНЕГО ПРЕДПРИНИМАТЕЛЬСТВА

БЕГЛАРЯН М.А.

Резюме

Налоговое бремя МСП в 2014-2016 гг. возросло с 15,2% до 21,7%. При этом для микропредприятий оно составляет 15,5%, для малых -18,7% и 29,8% - для средних, что может ограничить свободу управленческих решений. Налоговое планирование зависит от выбора места регистрации, использования преимуществ налогового законодательства и налоговых льгот, упрощенных налоговых и специальных режимов, организационно-правовой структуры и реализации экономически обоснованной стратегии восстановления налоговых прав.

TAX MANAGEMENT PROBLEMS IN SPHERE OF SMALL AND MEDIUM ENTREPRENEURSHIP

M. BEGLARYAN

Abstract

The analysis presented in the article shows that the tax burden of SMEs in 2014-2016 increased from 15.2% to 21.7%. At the same time, the tax burden differs significantly depending on the size of the organization, amounting to 15.5% for micro, 18.7% for small and 29.8% for medium-sized organizations, which may limit the freedom of management decisions. Some areas of tax planning have been identified: the choice of the place of registration, the use of the advantages of tax legislation and tax benefits, simplified tax and special regimes, the organizational and legal structure, and the implementation of an economically feasible strategy for restoring tax rights.

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ԱԼԻՖԻ ԵՎ ՀԱՄԶԱՅԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ԳՐԱԿԱՆ ԱՐԱԲԵՐԵՆԻ ՁԵՎԱՀՆՉՅՈՒՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ՝ ԸՍՏ ԱԼ-ԽԱԼԻԼ ԻԲՆ ԱՀՄԱԴԻ «ՔԻԹԱԲ ԱԼ-ԱՅՆ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Հ.Վ.

Արաբերենի ձևահնչյունային և վանկաչափական համակարգի նվազագույն միավորներն արաբական քերականական ավանդույթում անվանվում են ḥarf. դրանք, մի կողմից, վանկաչափական, մյուս կողմից՝ ձևաբանական քանակի նվազագույն միավորներ են՝ առաջին դեպքում ներկայանալով իբրև ամանակներ, իսկ երկրորդում՝ բառակազմական նվազագույն միավորներ: Հարֆն իր կազմում ընդգրկում է բաղաձայն հնչյուն՝ հաջորդող համապատասխան *a, u* կամ *i* ձայնավորով[1]: Որպես կանոն, յուրաքանչյուր հարֆ պետք է իր կազմում ունենա այս ձայնավորներից որևէ մեկը[2]: Ձայնավորի բացակայությունն անվանվում է sukūn՝ «դադար»[3]:

Հարֆերի թիվը, ըստ տարբեր մոտեցումների, կարող է լինել 28 կամ 29: Խնդիրը պայմանավորված է, այսպես կոչված, ʾalif և hamza հարֆերի բնույթով. ʾalif-ը հաճախ չի համապատասխանում հարֆի ընդհանուր չափանիշներին, սակայն համարվում է 28-րդ հարֆը[4]: Երբեմն hamza-ն է համարվում այդպիսին՝ ʾalif-ի փոխարեն, քանի որ հիմնականում համա-

---

[1] **Габучан Г.М.** К вопросу о структуре семитского слова в связи с проблемой внутренней флексии (Семитские языки. Сборник статей, М., 1963, с. 121).

[2] **Юшманов Н.В.** Грамматика литературного арабского языка, СПб., 1999, с. 12.

[3] Արաբերենի հնչյունները տառադարձելու համար ընտրված է EALL (Encyclopedia of Arabic Language and Linguistics) այբուբենը:

[4] **Jackson J.** Introducing Language and Intercultural Communication, New York, 2014, p. 80.

պատասխանում է հարֆի կանոններին[5]: Երբեմն երկուսն էլ համարվում են հարֆեր: ʾAlif-ի և hamza-ի կիրառության օրինակները քննենք միջնադարի արաբ առաջին քերականներից ալ-Խալիլ իբն Ահմադի «Kitāb al-ʿAyn» ութհատորյա աշխատության հիման վրա:

Արաբերենի հնչույթաբանական համակարգը ներառում է 29 բաղաձայն հնչյուններ, այդ թվում՝ խոսքի հոսքի որոշակի դիրքերում պարբերաբար սղվող և այդ պատճառով *թույլ* կամ *թերի* համարվող w և y հնչյունները, ինչպես նաև խնդրո առարկա ʾalif-ը («բաղաձայնից զուրկ» կամ զրո բաղաձայն մի հարֆ, որը հանդես է գալիս մշտական *ա* ձայնավորով), և hamza-ն (կոկորդային շփական, որը կարող է հանդես գալ բոլոր ձայնավորներով): ʾAlif-ը, սակայն, բաղաձայն բաղադրիչ ունեցող հարֆերին հատուկ գրային պատկեր ունի՝ դրանով իսկ տեղ ունենալով այբուբենում, մինչդեռ բաղաձայն արտահայտող hamza-ն գրառվում է ձայնավորների գրությանը հատուկ լրացուցիչ գրանշանների տեսքով: ʾAlif-ը հանդիպում է նաև սեմական այլ լեզուների գրային համակարգերում: Փյունիկերենում կոչվում է ʾĀlep (𐤀, մ.թ.ա. XII դ.), եբրայերենում՝ ʾĀlef (א, մ.թ.ա. II դ.), արամեերենում՝ Ālap (𐡀, մ.թ.ա. VIII դ.), դասական ասորերենում՝ ʾĀlap̄ (ܐ, մ.թ.ա. II դ.), ինչպես նաև հարավարաբական (𐩱) ու գեեզի (አ) այբուբեններում: Բացի վերջին երկուսից՝ մյուս դեպքերում ʾalif-ից է սկսվում նշված լեզուների գրային համակարգը[6]:

Hamza-ի և ʾalif-ի՝ որպես արաբերենի ձևահնչյունաբանական մասնիկների գործառույթային դերը երևան է գալիս վերոնշյալ աշխատության մեջ, որտեղ առաջին անգամ կիրառվել են ոչ միայն «hamza», այլև «ḥarf» եզրույթները:

Առաջին հատորի 17-րդ էջում տեսնում ենք հետևյալ ձևակերպումը: Դեռ չնշած որևէ հարֆի մասին՝ հեղինակը նախ ցույց է տալիս hamza-ի հարֆ լինելու փաստը՝

... hamza-ն առաջին արտասանվող հարֆն է... ... الهمزة هي أول الحروف مخرجا...

Այնուհետև 48-րդ էջում գրում է՝

[5] **Гранде Б.М.** Курс арабской грамматики в сравнительно-историческом освещении, М., 2001, с. 4.

[6] **Watson J.C.** The Phonology and Morphology of Arabic, New York, 2002, p. 2.

فلم يمكنه أن يبتدئ التأليف من أول ا، ب، ت، ث، وهو الالف، لان الالف حرف... معتل...

...Անհնար է սկսել աշխատությունը a, b, t, ţ հերթականությամբ, քանի որ ’alif-ը թույլ հարֆ է...

Հեղինակը ցանկացել է իր բառարանում գրել հարֆերի բոլոր հնարավոր տարբերակները և նշում է, որ չի կարող իր աշխատությունն սկսել այնպես, ինչպես արաբական գրային համակարգում է, քանի որ ’alif-ն ինքնին թույլ հարֆ է:

Նույն հատորի 50-րդ էջում հանդիպում ենք «միացնող ’alif» եզրույթի (ألف الوصل): Հարկ է նշել, որ արաբերենում բառը սկսվում է միայն բաղաձայնով, սակայն hamza-ի պարագայում վերջինս խոսքի հոսքում, հայտնվելով նախորդող բառի ավարտական և իրեն իսկ հաջորդող ձայնավորների միջև, պարբերաբար սղվում է: Հենց այդ երևույթով է պայմանավորված «միացնող ’alif» եզրույթի ներմուծումը:

Առաջին հատորի 53-րդ էջում առկա է այս ձևակերպումը՝

...صارت الياء والواو والالف عن غير طريقة الحروف الصحاح..

...’alif-ը, yā’-ն և wāw-ն տարբերվում են ճիշտ (ուժեղ հարֆերից)...

Հեղինակն այստեղ ցույց է տալիս, որ ինքն ’alif-ը հարֆ է համարում: Քիչ անց՝ 58-րդ էջում տրվում է դրա՝ արդեն ավելի հստակ ձևակերպում՝

وأربعة أحرف جوف وهي: الواو والياء والالف اللينة والهمزة فمخرجها من أقصى الحلق...

... Չորս հարֆեր դատարկ են՝ wāw, yā’, ’alif, hamza, և դրանք արտասանվում են կոկորդի խորքից...

والهمزة، وسميت جوفا لانها تخرج من الجوف فلا تقع في مدرجة من مدارج اللسان...

... Եվ hamza-ն կոչվում է կոկորդային, քանի որ արտասանվում է (բառացի՝ դուրս է գալիս) կոկորդից և չի դիպչում լեզվին...

...الالف اللينة والواو والياء هوائية أي أنها في الهواء..

... Երկար ’alif-ը, wāw-ն և yā’-ն օդային են, քանի որ արտասանվում են օդում...

Առաջին հատորի 59-րդ էջում հանդիպում ենք արաբական գրային համակարգի՝ ալ-Խալիլի դասավորման տարբերակին՝

هي تسعة وعشرون حرفا: ع ح ه خ غ، ق ك، ج ش ض، ص س ز، ط د ت، ظ ذ ث، ر ل ن، ف ب م، فهذه الحروف الصحاح

… Ահա և 29 հարֆերը՝ ʿayn ḥāʾ hāʾ xāʾ ġayn, qāf kāf, jīm šīn ḍād, ṣād sīn zāy, ṭāʾ dāl tāʾ, ẓāʾ, ḏāl ṯāʾ, rāʾ lām nūn, fāʾ bāʾ mīm, և սրանք ուժեղ հարֆերն են…

واي فهذه تسعة وعشرون حرفا منها أبنية كلام العرب

… wāw, ʾalif, yāʾ, hamza՝ սրանք էլ բոլոր 29 հարֆերը, որ կազմում են արաբական խոսքը…

Հաջորդ հատորներում հեղինակն առավել քիչ է գործածել ʾalif-ի ու hamza-ի սահմանումները, երբեմն կրկնել այլ բառերով արդեն սահմանածը: Հետաքրքրական են hamza-ի ու ʾalif-ի՝ որպես բառարանային բառերի բացատրությունները: Երկուսն էլ կան 8-րդ հատորում: 92-րդ էջում կարդում ենք *hamaza* բայի բացատրությունը՝ ծակել, բառացի՝ *ծակ, օղակ անել:* Եվ շարունակությունը՝

…الهمزة لانها أقوى من سائر الحروف الجوفية..

…Hamza անունն է կրում կոկորդային հարֆերից ամենաուժեղը…

Սույն հատորի 337-րդ էջում է ʾalif-ի՝ որպես բառարանային բառի բացատրությունը: Ավելորդ չենք համարում ասել, որ արաբերենում բառերի արմատները հիմնականում կազմված են երեք արմատական հարֆերից, թեև վերջիններիս թիվը, խիստ հազվադեպ, կարող է լինել երեքից ավելի: ʾAlif բառի արմատը ևս կազմված է երեք արմատական հարֆերից՝ ʾalif, lām և fāʾ: Սակայն ալ-Խալիլ իբն Ահմադը, որպես բառարմատի առաջին հարֆ, նշում է ոչ թե ʾalif-ը, այլ hamza-ն՝ hamza, lām և fāʾ: Բառիմաստը նշելով՝ ի վերջո հեղինակը հավելում է.

… ʾalif և ʾalīf՝ սրանք երկուսն էլ հարֆ են… … الالف والاليف.

…كلاهما حرف

Քննարկելով ʾalif-ի և hamza-ի գործածության բոլոր դեպքերը, ալ-Խալիլ իբն Ահմադի «Kitāb al-ʿAyn» աշխատությունում, կարող ենք եզրակացնել.

1. Ըստ Ալ-Խալիլ իբն Ահմադի, ʾalif-ը և hamza-ն երկուսն էլ արաբերենի թույլ կամ թերի հարֆեր են, դրանք միմյանցից անկախ միավորներ են, որոնք հանդես են գալիս որպես արաբերենի ձևաինչյունային և վանկաչափական համակարգի մասնիկներ:

2. Երբեմն ոչ միայն ʾalif-ն ու hamza-ն, այլև արաբերենի ևս երկու թույլ հարֆեր՝ «wāw» և «yāʾ», կարող են փոխարինվել մեկը մյուսով:

ФУНКЦИИ АЛИФА И ХАМЗЫ В ФОНОЛОГИЧЕСКОЙ И МОРФОЛОГИЧЕСКОЙ СИСТЕМЕ ЛИТЕРАТУРНОГО АРАБСКОГО ЯЗЫКА В КНИГЕ «КИТАБ АЛЬ-АЙН» АЛЬ-ХАЛИЛЯ ИБН АХМАДА

АРУТЮНЯН А.В.

Резюме

Согласно арабской грамматической традиции, минимальные сегменты фонологической и морфологической (словообразовательной) структуры арабского языка называются харфами - единицами, представляющими собой сочетание согласного и гласного. Традиционно принято выделять 28 таких харфов. Некоторые лингвисты включают в этот список не только так называемый алиф – харф, характеризующийся отсутствием согласного, но и коррелирующий с ним гортанный смычный, тем самым получая систему из 29-и харфов. Термины «харф» и «хамза» впервые употребил грамматист 8-го века аль-Халиль ибн Ахмад в своей восьмитомной работе «Китаб аль-Айн» («Книга харфа Айн»). Анализ примеров, в которых употребляются эти термины, дает возможность определить методические основы классификации фонологических и морфологических единиц в арабской грамматической традиции.

FUNCTIONS OF ALIF AND HAMZA IN PHONOLOGY AND MORPHOLOGY SYSTEMS IN LITERARY ARABIC LANGUAGE IN THE BOOK "KITAB AL-AYN" BY AL-KHALIL IBN AHMAD

H. HARUTYUNYAN

Abstract

According to the Arabic linguistic tradition, harfs are minimal segments of phonological and morphological (derivational) structure of Arabic, which are

combinations of consonants and vowels. Traditionally, 28 harfs like those are accepted. A group of linguists include not only the so-called alif in this list, which is a harf with absence of consonant, but also hamza, correlative with it as a guttural stop, thus, having not 28, but 29 harfs. The terms like "harf" and "hamza" were first used by an Arab grammarian of the 8th century al-Khalil ibn Ahmad in his 8-volume work called "Kitab al-Ayn" ("The book of harf Ayn"). The aim of this article is analysis of corresponding examples, in order to determine the methodological basis for classification of phonological and morphological units in the Arabic grammatical tradition.

ԺԱՄԱՆԱԿԻ ԿԱՐԳԻ ՆԵՐԱԿԱ ԲԱՌԱՅԻՆ ԱՐՏԱՀԱՅՏՉԱՄԻՋՈՑՆԵՐԸ ՈՒ. ՖՈԼԿՆԵՐԻ «ՇԱՌԱՉ ԵՎ ՑԱՍՈՒՄ» ՎԵՊՈՒՄ

ՄԱԼԽԱՍՅԱՆ Ս.Ա.

Գեղարվեստական ժամանակը տարբերվում է իրական ժամանակից: Իրական ժամանակը շրջելի է, գեղարվեստականը կարող է անցումներ կատարել ներկայից անցյալ, անցյալից ապագա և այլն, ինչն արտահայտվում է առաջահայման և հետահայման կարգերի միջոցով: «Գեղարվեստական ժամանակն իրադարձությունների նկարագրության հաջորդականությունն է՝ սուբյեկտիվ ընկալմամբ»[1]: Գեղարվեստական ներկան արդեն անցյալ է թե՛ ընթերցողի, թե՛ հեղինակի համար: Տեքստում ժամանակային հաջորդականությունն ապահովելու համար սովորաբար նշվում է որևէ մեկնարկային ժամանակակետ, և դրա շնորհիվ հստակեցվում են դեպի անցյալ և ապագա կատարվող անցումները: Զ. Տուրաևան տեքստի մեկնարկային այդ կետն անվանում է տեքստի *վեկտորային զրո* կամ տեքստի *այստեղ և հիմա*[2]:

Ժամանակի կարգը տեքստում մատնանշվում է ինչպես **քերականական** (տարբեր ժամանակաձևերի կիրառմամբ), այնպես էլ **բառային** միջոցներով, ինչպես, օրինակ, բառեր և արտահայտություններ, որոնք մատնանշում են տարվա եղանակը (ձմեռ, գարուն, ամառ, աշուն), ամիսը (հունվար, փետրվար), օրվա որևէ հատված (առավոտ, կեսօր, երեկո), կյանքի որևէ շրջափուլ (մանկություն, պատանեկություն, ծերություն) և այլն: Դրանք կարող են նշվել ինչպես **արտակա**, այնպես էլ **ներակա** ձևով, երբ գրվում է ոչ թե անմիջապես ժամանակը մատնանշող այդ բառը, այլ

---

[1] **Валгина Н.** Теория текста. Категории времени и пространства в художественном и нехудожественном тексте, М., 2003.

[2] **Тураева З.Я.** Категория времени. Время грамматическое и время художественное, М., 1979.

տվյալ ժամանակի հետ զուգորդվող բառեր, և ընթերցողն ինքը պետք է եզրակացնի, թե ժամանակային ինչպիսի հատված է նկարագրված:

Ուիլյամ Ֆոլկների «Շառաչ և ցասում» վեպը, լինելով գիտակցության հոսքի տեքստ, չի հետևում ժամանակային կարգի այն նորմերին, որոնցով շարադրված են ավանդական գեղարվեստական տեքստերը: Ինչպես նշում է Յու. Իվանովան, այնպիսի բարդ կառույցում, ինչպիսին գիտակցության հոսքի տեքստն է՝ «վեպ-առասպելը», ժամանակի բայական ցուցիչներն այլևս բավարար չեն[3]: Այստեղ քերականական միջոցները մեծ դեր չեն խաղում՝ ժամանակային հարացույցներից մեկից մյուսին անցումը ցույց տալու հարցում: Ինչպես մոտ, այնպես էլ հեռու անցյալը և ներկան նշվում են նույն անցյալ անորոշով, և չի հստակեցվում, թե որն է ավելի վաղ կատարվել: Հետահայման կարգն այս տեքստերում չի արտահայտվում այնպիսի ցուցիչներով, ինչպես, օրինակ՝ *արդեն նշվել է, որ…, նա հիշեց, որ…, նրա առջև արթնացավ անցյալի այն տեսարանը, երբ…* և այլն: Ի. Գալպերինն այս արտահայտությունները համարում է օբյեկտիվ-հեղինակային հետահայման տարրեր[4]: Այս վեպում հետահայումն արտահայտվում է ներակա ձևով՝ առանց այդ ցուցիչների:

«Շառաչ և ցասում» վեպը տրոհված է չորս մասերի: Հեղինակը չի հետևում բուն ժամանակի նորմերին, սակայն վեպի գլուխները վերնագրված են կոնկրետ ժամանակներով՝ մաս առաջին՝ 1928 ապրիլի 7, մաս երկրորդ՝ 1910 հունիսի 2, մաս երրորդ՝ 1928 ապրիլի 6, մաս չորրորդ՝ 1928 ապրիլի 8: Ինչպես տեսնում ենք վեպի ժամանակագրությունից, երկրորդ մասը շատ ավելի վաղ է կատարվել, իսկ մյուս մասերը՝ գրեթե նույն ժամանակահատվածում: Յուրաքանչյուր գլուխ ներկայացնում է մեկ օր, և հենց այդ օրվա ընթացքում բովանդակային կարևորություն ունեցող որևէ բան չի կատարվում: Սակայն հետահայման կարգի միջոցով տրվում են տարբեր ժամանակափուլերի գործողություններ, և սյուժետային գիծը դրա շնորհիվ ընդլայնվում է: Ժամանակային անցումները տեղի են ունենում զուգորդման հիմքով, իսկ ժամանակի կարգն արտահայտվում է ներակա միջոցներով:

---

[3] **Иванова Ю.** Категория мифологического времени в современном романе-мифе: на примере романа Дж. Джойса "Улисс", канд. дисс., СПб., 2002.

[4] **Гальперин И.** Текст как объект лингвистического исследования, М., 1981.

Հետահայումը վեր հանելու համար պետք է նախ հստակեցնել վեպի մեկնարկային կետը՝ «այստեղ և հիմա»-ն: Հետահայման դեպքեր են այն իրադարձությունները, որտեղ որոշ կերպարներ, որոնք այլևս «այստեղ և հիմա» չեն, ներկայացվում են որպես գործող սուբյեկտներ: Օրինակ՝

- **Caddy was walking. Then she was running, her booksatchel swinging and jouncing behind her[5].**

Քեդին գալիս էր: Հետո վազում էր, գրքերի տոպրակը մեջքին ցնցվում ու տարուբերվում էր[6]:

Այս օրինակում հետահայումն առկայացվում է ինչպես Քեդիի՝ գործող սուբյեկտ հանդես գալով, այնպես էլ booksatchel (գրքերի տոպրակ) գոյականի միջոցով, որը ներակա կերպով արտահայտում է տարիքային շրջափուլ, տվյալ դեպքում՝ դպրոցական ժամանակաշրջան: Նույն մենախոսության մեջ նշվում է, որ Caddy անունը կրող կերպարը վեպի մեկնարկային կետում չկա, նա վաղուց ամուսնացել և հեռացել է տնից՝

- **You cant do no good looking through the gate, T.P. said. Miss Caddy done gone long ways away. Done got married and left you** (The Sound and the Fury, p. 32).

– Բան չի փոխվի, ինչքան դարպասից նայես, – ասաց Թի Փին: – Միսս Քեդին շատ հեռու է: Պսակվել է ու քեզ մենակ թողել (էջ 38):

Հետևաբար, վեպի այն գլուխներում, որոնք նույն ժամանակաշրջանն են ընդգրկում, և այդ կերպարը հանդես է գալիս որպես գործող սուբյեկտ, հետահայման դեպքեր են: Այս անունով առկայացվող հետահայումն ունի մեծ հաճախականություն: Տվյալ կերպարը վեպի մեկնարկային կետում չկա, սակայն գործողությունները ծավալվում են նրա շուրջ: Միայն վեպի առաջին գլխում *Քեդի* անունը նշվում է 288 անգամ: Նույն կերպ, հետահայման դեպքեր են նաև մի շարք այլ կերպարների՝ գործող սուբյեկտներ ներկայացնելը, որոնք կամ հեռացել են, կամ մահացած են:

Ժամանակային ներակա ցուցիչները վեր հանելով՝ տեսնում ենք նաև, որ խախտված է հատվածների ժամանակային կապակցվածությունը՝

---

[5] **Faulkner W.** The Sound and the Fury, New York, 1987, p. 150. Այսուհետև սույն գրքից արվող մեջբերումների էջերը կնշվեն բնագրին կից:

[6] **Ֆոլկներ Ու.** Շառաչ և ցասում, թարգմանությունը՝ Գայանե Դալլաքյանի, Ե., 2003, էջ 9: Այսուհետև այս գրքից արվող մեջբերումների էջերը կնշվեն թարգմանությանը կից:

• **"Do you think buzzards are going to undress Damuddy". Caddy said. "You're crazy".**

"You're a skizzard". Jason said. He began to cry.

"You're a knobnot". Caddy said. Jason cried. His hands were in his pockets.

"Jason going to be rich man". Versh said. "He holding his money all the time".

Jason cried.

"Now you've got him started". Caddy said. "Hush up, Jason. How can buzzards get in where Damuddy is. Father wouldn't let them. Would you let a buzzard undress you. Hush up, now" (The Sound and the Fury, p. 22).

– Կարծում ես բազեները կհանե՞ն Տատիկի շորերը, – ասաց Քեդին: – Գիժ ես:

– Ապո՛ւշ, – ասաց Ջեյսընը: Լաց եղավ:

– Դմբո՛, – ասաց Քեդին: Ջեյսընը լաց եղավ: Նրա ձեռքերը գրպաններում էին:

– Ջեյսընը հարուստ մարդ կդառնա, – ասաց Վերշը: – Փողը պինդ է պահում:

Ջեյսընը լաց եղավ:

– Ջղայնացրիր՝ էլի սկսեց,–ասաց Քեդին–Սո՛ւս մնա, Ջեյսըն: Բազեները տատիկին ո՞նց կհասնեն: Հայրիկը չի թողնի: Դու փոքր հալովդ կթողնե՞ս, որ բազեն շորերդ հանի: Դե սո՛ւս մնա (էջ 28):

Սույն հատվածում ժամանակային կոնկրետ ցուցիչներ չկան, սակայն կան բառեր, որոնք ներակա արտահայտում են տարիքային որևէ հատված, տվյալ դեպքում՝ մանկություն: Տեսնում ենք, թե ինչպես Քեդին սփոփում է Ջեյսընին՝ ասելով, որ անգղները չեն կարող հասնել այնտեղ, որտեղ տատիկն է (How can buzzards get in where Damuddy is), հայրիկը թույլ չէր տա (Father wouldn't let them). դրանով ցույց է տալիս այն, որ հայրիկը հեղինակություն է իրենց, ինչպես և բոլոր երեխաների համար և պաշտպան ուժ է (որն իշխանություն ունի նույնիսկ բազեների վրա): Ջեյսընի մասին խոսելիս կիրառվում է ներկա շարունակական ժամանակը՝ արտահայտելով առաջահայում նրա ապագայի վերաբերյալ, որտեղ Վերշը կանխատեսում է, որ Ջեյսընը հարուստ մարդ է դառնալու (Jason going to be

rich man), քանի որ իր փողը ոչ մեկին չի տալիս (He holding his money all the time):

Այն, որ Ջեյսընը և Քեդին այս հատվածում դեռ երեխա են, ապացուցվում է նրանով, որ դիմում են իրար երեխաներին բնորոշ վիրավորական նրբերանգ ունեցող բառերով՝ մողես (skizzard-ը lizzard և skink բառերի միացումն է. երկուսն էլ մողեսների տեսակների անվանումներ են) և պընդագլուխ (knobnot): Այս բառերը մանկական վիրավորանքի արտահայտություններ են՝ *childish insult*[7] (չնայած թարգմանության մեջ նշված են *ապուշ* և *դմբո* ձևերը): Բացի այդ, տեսնում ենք, թե ինչպես է Ջեյսընը լաց լինում, որտեղ *cry* (լացել) բայը կիրառված է երկու անգամ (He began to cry, Jason cried), իսկ Քեդին փորձում է սաստել. հրամայական *Hush up* (սո՛ւս մնա) արտահայտությունը ևս գործածված է երկու անգամ: Այսպիսով, ներակա բառերից, այս դեպքում՝ գոյականներից, ածականներից և բայերից, ինչպես նաև ասույթների գործաբանական արժեքներից կարող ենք վեր հանել տեքստի տվյալ հատվածի ժամանակային, այս պարագայում՝ մանկության շրջափուլը: Իսկ այդ հատվածին քիչ անց հաջորդում է հետևյալը՝

You know what's down there, T.P. said. Soda water. I seen Mr Jason come up with both hands full of them (The Sound and the Fury, p. 23).

– Գիտե՞ս էստեղ ինչ կա, – ասաց Թի Փին: Սոդայաջուր: Տեսա, թե ոնց էր միսթր Ջեյսընը շշերը բռնած բերում (էջ 29):

Jason հատուկ անվան հետ կիրառված է *Mr*. (պարոն) դիմելաձևը, ինչից պարզ է, որ այստեղ նա արդեն հասուն մարդ է: Այսպիսով, երկու հատվածները ժամանակային տարբեր հարացույցների են պատկանում. մանկության փուլից անցում դեպի չափահասության ժամանակաշրջան, սակայն մեկի անցումը մյուսին ոչ մի ցուցչով արտահայտված չէ, հետևաբար, բառերի ներակա իմաստներից պետք է եզրակացնել, որ կերպարները ներկայացված են տարիքային տարբեր շրջափուլերում, և տեքստի այդ հատվածում ժամանակի կարգը տատանվում է:

Այս վեպում իրար հաջորդող հատվածներում ժամանակային տատանումները արտահայտվում են ոչ միայն տարիքային շրջափուլ մատնանշող բառերով, այլև այնպիսի բառերով և արտահայտություններով, որոնք ցույց են տալիս տարվա եղանակը կամ օրվա հատվածը, ինչպես՝

[7] Տե՛ս www.bookdrum.com.

- **Through the fence, between the curling flower spaces, I could see them hitting. They were coming toward were the flag was and I went along the fence. Luster was hunting in the grass by the flower tree** (The Sound and the Fury, p. 3).

Ցանկապատի արանքից, ծաղկած բաղեղների միջով տեսնում էի, թե ոնց էին խփում: Գալիս էին դրոշի կողմը, ու ես քայլեցի ցանկապատի կողքով: Լասթըրը խոտերի մեջ փնտրում էր, ծաղկած ծառի մոտ (էջ 8):

- **They were hitting little, across the pasture. I went back along the fence to where the flag was. It flapped on the bright grass and trees** (The Sound and the Fury, p. 3).

Նրանք խփում էին հազվադեպ՝ արոտի այն կողմում: Ցանկապատի կողքով ետ գնացի դեպի դրոշը: Այն ծփում էր վառ կանաչի ու ծառերի մեջ (էջ 8):

- **It was red, flapping on the pasture. Then there was a bird slanting and tilting on it. Luster threw. The flag flapped on the bight grass and the trees** (The Sound and the Fury, p. 3).

Այն կարմիր էր, ծփում էր արոտի վրա: Հետո մի ծիտ էր ճոճվում ու շուռումուռ գալիս վրան: Լասթըրը շպրտեց: Դրոշը ծփում էր վառ կանաչի ու ծառերի մեջ (էջ 8):

Վերոնշյալ պարբերությունները գրեթե հաջորդում են իրար: Ինչպես արդեն նշվեց, տարվա եղանակը արտակա ձևով արտահայտված չէ, սակայն կոնկրետ բառերից կարող ենք այն կռահել: Այսպես, կարելի է ենթադրել, որ գարնան վերջ է կամ ամռան սկիզբ, քանի որ բաղեղները փթթել են (curling flower), ծառերը ծաղկել (flower tree), խոտն արդեն վառ կանաչ գույնի է (bright grass), իսկ it was red արտահայտությունից կարելի է ենթադրել, որ կարմիր ծաղիկներ էին ծփում արոտի վրա, իսկ դրանց վրա մի ծիտ էր ճոճվում և շուռումուռ գալիս (a bird slanting and tilting on it): Վերոնշյալ օրինակներից զուգորդային կապակցվածությամբ անցում է կատարվում մեկ այլ պարբերության, որտեղ փոխվում են գործողությունների տեղն ու ժամանակը, վերջինի փոփոխությունը կարելի է կռահել եղանակը մատնանշող բառերի և ասույթների շնորհիվ՝

- **Keep your hands in your pocket, Caddy said. Or they'll get froze. You don't want your hands froze on Christmas, do you.**

“It’s too cold out there”. Versh said. “You don’t want to go out doors”.

“What is it now”. Mother said.

“He want to go out doors”. Versh said.

“Let him go”. Uncle Maury said.

“It’s too cold”. Mother said (The Sound and the Fury, p. 4).

– Ձեռներդ գրպաններումդ պահի, – ասաց Քեդին: Թե չէ կսառչեն: Հո չե՞ս ուզում ձեռներդ ծննդյան տոնին սառչեն:

– **Դրսում շատ է ցուրտ, – ասաց Վերշը: – Ի՞նչ գործ ունես դուրսը:**

– **Ի՞նչ է եղել, – ասաց Մայրիկը:**

– **Ուզում է դուրս գնա, – ասաց Վերշը:**

– **Թող գնա, – ասաց Քեռի Մորին:**

– **Ախր շատ ցուրտ է, – ասաց Մայրիկը** (էջ 9):

Նախորդող գարնանային և ամառային նկարագրությանը գրեթե անմիջապես հաջորդող այս հատվածում արդեն խորը ձմեռ է. Քեդին Բենջիին խորհուրդ է տալիս ձեռքերը գրպանում պահել (keep your hands in your pocket), այլապես կսառչեն (they'll get froze), նաև նշվում է, որ ծննդյան տոներին նախորդող օրերն են (on Christmas): Բացի այդ, մայրիկը դեմ է, որ Բենջին դուրս գնա, քանի որ շատ ցուրտ է (It’s too cold), որտեղ *too* բառով շեշտվում է ցրտի սաստիկ լինելը: Սակայն դժվար է ստույգ նշել՝ արդյոք նկարագրվող ամառը և ձմեռը հաջորդո՞ւմ են իրար, թե՞ դրանց մեջ տարիների տարբերություն կա:

Այսպիսով, վեպում իրար հաջորդող հատվածները կարող են վերաբերել տարբեր տարիների, եղանակների, օրվա տարբեր հատվածների, որոնք արտակա արտահայտություն չունեն: Տվյալ դեպքում ժամանակի կարգն արտահայտվում է ոչ թե ավանդական ժամանակային ցուցիչներով և մակբայներով, այլ ներակա բառերով՝ հատուկ անունների միջոցով, ածականներով, գոյականներով, բայերով, ինչպես նաև ասույթների գործաբանական արժեքով:

ИМПЛИЦИТНЫЕ СЛОВЕСНЫЕ СРЕДСТВА ВЫРАЖЕНИЯ КАТЕГОРИИ ВРЕМЕНИ В РОМАНЕ У. ФОЛКНЕРА “ШУМ И ЯРОСТЬ”

МАЛХАСЯН С.А.

Резюме

Произведение У. Фолкнера – это роман потока сознания, в нем категория времени выражается особыми средствами. В связи с этим в сюжетной линии романа резко меняется время повествования, что не всегда отмечено эксплицитными средствами или курсивом. Чтобы в тексте отметить переходы во времени, следует обратить внимание на разные лексические средства, которые выражают разные временные периоды в тексте.

IMPLICIT LEXICAL MEANS OF EXPRESSING TEMPORAL ARRANGEMENT IN W. FAULKNER’S NOVEL “THE SOUND AND THE FURY”

S. MALKHASYAN

Abstract

The novel is written with the stream-of-consciousness technique, thereby, the temporal arrangement between the parts greatly differs from that of traditional novels. In William Faulkner’s “The Sound and the Fury” there are abrupt shifts of time resulting in the break of text cohesion. To perceive those time shifts, various implicit lexical markers should be taken into consideration.

ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ВЛИЯНИЕ ВНЕШНИХ ФАКТОРОВ НА ТВОРЧЕСТВО ШЕКСПИРА

ЕРНДЖАКЯН А.А.

Творчество Шекспира, как правило, делят на три периода:

- Первый период (1590-1600) называют оптимистическим. Здесь доминируют два жанра – комедия и историческая хроника, где, с одной стороны, все построено на всеобщей радости и любви, с другой, несмотря на обилие крови, зрителя, тем не менее, не покидает оптимизм и вера в гуманистические идеалы.
- Второй период (1600-1608) – трагический. В это время были созданы “Гамлет”, “Отелло”, “Король Лир”, в которых Шекспир констатирует, что “мир безнадежно болен, в нем царствует зло. Со страниц трагедий веет отчаянием и болью за человека”[1].
- Пьесы последнего, третьего периода (1609-1612) принято считать романтическими драмами, которые “подчинены законам поэтической условности, в них случаются самые невероятные события, удивительные совпадения, чудесные превращения, они переносят нас в необыкновенные экзотические страны”[2].

Однако такая периодизация лишь в общих чертах передает реальную картину творчества великого драматурга. И чаще всего приходится лишь предполагать, что послужило поводом к созданию той или иной пьесы, выбору того или иного героя либо формы и содержания диалога.

Не следует забывать, что театральный Лондон в конце XVI столетия напоминал встревоженный античностью улей. После долгой “средневековой спячки” в столице забурлила светская жизнь, полная от-

[1] История зарубежного театра: в 3 ч. (под общ. ред. Г.Н. Бояджиева, ч. I, Театр Западной Европы, М., 1971, с. 196).

[2] Там же, с. 210.

крытий и чудес. В 1576 году здесь было построено первое театральное здание для выступлений профессиональных комедиантов, начали создаваться большие и малые труппы, которые боролись за каждого зрителя.

Это был чрезвычайно яркий период в истории английского театра. Драматурги заимствовали или попросту крали друг у друга сюжеты, эпизоды, на худой конец, понравившиеся строки. Ругались между собой, критиковали, унижали непристойными памфлетами.

В Лондоне Шекспир сразу оказался в эпицентре всех этих событий. В то время законодателями в английском театре были драматурги Джон Лили (ок. 1553/1554-1606), Джордж Пиль (1556-1596), Роберт Грин (1558-1592), Томас Кид (1558-1594) и Кристофер Марло (1564-1593).

Старший из них – Джон Лили – находился на пике своей славы. Особому стилю его прозы, известному под названием "эвфуизмы", стали подражать многие, в том числе и молодой Шекспир. Ряд его комедий ("Бесплодные усилия любви", "Сон в летнюю ночь" и др.) наверняка были созданы под влиянием творчества старшего коллеги, особенно его самой известной пьесы "Эндимион" (1588), построенной на романтической интриге и полной самой нежной любовной лирики.

У своего современника Джорджа Пиля, известного к тому же в качестве автора карнавальных шествий и уличных спектаклей, Шекспир заимствовал начало своей трагедии "Тит Андроник" и, в определенной степени, ее финал. Возможно, его вдохновило эффектное дефиле Смерти и Фурий в одной из пьес Пиля, где согласно ремарке, "входят Смерть и три Фурии, одна несет чашу с кровью, другая – блюдо с человеческими головами, третья – с костями мертвецов"[3].

Но наибольшее влияние на Шекспира оказали самые известные в тот период драматурги – Томас Кид и Кристофер Марло. Это были два друга, какое-то время они даже снимали одну квартиру и погибли с разницей в один год, не без участия тайной полиции.

---

[3] **Акройд П.** Шекспир. Биография, М., 2010, с. 206.

“Испанская трагедия” Кида и последовавший за ним “Тамерлан” Марло произвели настоящий фурор среди театральной публики Лондона. “Испанская трагедия” считается образцом чрезвычайно популярного на английской сцене на протяжении многих лет жанра “трагедии мести”.

Здесь было все: неистовые любовные диалоги, страшные речи жаждущих мести врагов, мнимое безумство главного героя, “сцена на сцене” (многое из этого Шекспир в дальнейшем использовал в своем “Гамлете”) и прочие театральные эффекты, маски, трупы, кинжалы, окровавленные платки...

Это все оказывало на зрителя ошеломляющее воздействие. Мы уже описывали переживания страстной поклонницы трагедии, которая на смертном одре звала своего кумира – героя пьесы Иеронимо.

Шекспир также многие годы находился под влиянием многочисленных приемов кидовской пьесы, страстных, душераздирающих реплик его персонажей.

Возможно, успех Кида вдохновил Марло к созданию “Тамерлана”, который произвел “революцию в английской драматургии”[4]. Публику воодушевляли честолюбивые настроения его героев.

Безусловно, Марло, как и Кид, оказал на Шекспира большое влияние. Он даже брал у него реплики, переделывал их и бесцеремонно вставлял в свои пьесы. Марло был для Шекспира одновременно и объектом зависти, и конкурентом, которого он мечтал непременно превзойти. В конце концов, Шекспир, как мы знаем, добился своего. Надо сказать, что это ему удалось, в том числе еще и потому, что он пережил своего беспокойного соперника почти на двадцать три года.

В начале 80-х годов XVI столетия Шекспир поступил в труппу “Слуг Ее Величества королевы”. Через несколько лет он перешел в труппу “Слуг лорда Стрейнджа”, которая ставила “Испанскую трагедию” Кида и “Мальтийского еврея” Марло. Возможно, он даже играл в этих пьесах.

---

[4] Там же, с. 210.

Приблизительно в это же время он начал создавать свои первые произведения. Однако и до сих пор не утихают споры о том, какой именно пьесой Шекспир дебютировал как драматург. Была ли это трагедия, комедия или историческая хроника?

Происхождение и авторство его ранних пьес невозможно точно определить. Ситуация осложняется еще и тем, что, возможно, эта самая ранняя пьеса исчезла, подобно раннему "Гамлету", или он написал ее в сотрудничестве с другим драматургом, и эта пьеса сегодня известна под чужим именем. А, может быть, первой пьесой является одно из ныне известных нам произведений, которое он, как нам кажется, написал уже в зрелом возрасте. Шекспир, как известно, регулярно переделывал свои сочинения, подстраиваясь под вкусы публики или в силу других причин. Поэтому приходится лишь гадать и строить всевозможные версии на этот счет.

В этой связи, почему бы, например, не допустить, что свою первую пьесу Шекспир написал именно в жанре трагедии. На это могут указывать ряд соображений, приводимых нами ниже.

Комедии и исторические хроники, скорее всего, появились позднее, когда Шекспир, скажем так, уже немного самоутвердился. А в начале карьеры, если учитывать амбиции молодого автора, ему, вероятно, хотелось бы сразу сразить своих ближайших соперников – Кида и Марло. И сразить их же оружием – кровавой "трагедией мести".

Скорее всего, это была трагедия "Тит Андроник" с рекордным (даже для подобного жанра) числом убийств и прочих ужасов. Представьте только, что главному герою прямо на сцене отрубают руку, а его дочь Лавиния, уже лишенная рук,тростью, зажатой во рту, пишет имя преступников на песке.

Кульминацией этой кровавой вакханалии является сцена, когда Тамора поедает пирог с мясом и растертыми в порошок костями своих сыновей. После этого Тит убивает ее и сам погибает, успев при этом заколоть свою невинную дочь, ставшую калекой…

Вот такой каскад ужасов от гениального Шекспира.

Но самое интересное заключается в том, что он все же достиг своей цели: пьеса пользовалась большим успехом и многие годы не сходила со сцены.

Продолжим строить версии о том, какими пьесами дебютировал Шекспир.

Думается, он не зацикливался только на коварных интригах Древнего Рима и параллельно с “трагедией мести” мог попробовать себя и в искусстве комедии. Тем более, что ни Марло, ни Кид в этом жанре не писали, и Шекспир мог одержать легкую победу, хотя бы в силу “неявки соперников”.

Вероятнее всего, первой шекспировской комедией, как считают исследователи, могла быть одна из следующих его пьес: “Укрощение строптивой” (ее ранняя версия), “Два веронца” или “Комедия ошибок”. При всей примитивности этих комедий в них, безусловно, проглядываются “солнечные блики” будущих шедевров.

Согласно известной версии М. М. Морозова[5], возможной причиной обращения молодого Шекспира к античным темам и к жанру комедии была связь с одним из блестящих вельмож своего времени – графом Саутгемптоном: принято считать, что драматург часто посещал дом графа, покровителя многих начинающих писателей. Это был дворец, где царил праздник: устраивались карнавалы, литературные и музыкальные вечера. Здесь была атмосфера постоянного восхищения Италией....

Однако ни в одном письме Саутгемптона, ни в одном связанном с ним документе нет упоминаний об актере и драматурге Уильяме Шекспире.

Впрочем, молодость сама по себе могла стать источником оптимистических сюжетов этих произведений. Подробности биографии Шекспира явствуют о том, что, будучи гениальным поэтом и драма-

[5] **Морозов М.** Жизнь замечательных людей, Шекспир, М., 1947, с. 27.

тургом, в повседневной жизни он был довольно трезвым прагматиком и точно рассчитывал каждый свой шаг.

Сам переезд из Стратфорда в Лондон свидетельствует о том, что его не устраивала карьера простого перчаточника – тот максимум, который ему могли предложить его отец и родной город. В столице он, недолго думая, поступил в актерскую труппу, где мог бы "изнутри освоить ремесло драматурга и наладить потом сбыт своей продукции"[6].

Обладая огромным талантом, он писал очень быстро, не гнушаясь при этом иногда использовать "строки и ситуации" своих коллег – Марло, Лили, Кида и других. Как точно отметил Т.С. Элиот, "плохие поэты заимствуют, в то время как хорошие крадут; у Шекспира получалось и то и другое"[7]. Темы многих пьес он выбирал с учетом возможных пожеланий сильных мира сего и вкусов публики. Уже начав писать пьесы и став достаточно известным, он тем не менее не оставил актерскую профессию, которая давала дополнительные средства к существованию. А когда появилась соответствующая возможность, не раздумывая, стал одним из пайщиков родного "Глобуса". В результате к жалованию Шекспира прибавился процент от эксплуатации самого театрального здания. Подсчитано, что в начале XVII столетия "за пьесу он получал около 10 фунтов; как актер – 1/8 партерного сбора и от половины сбора за места на галереях; как совладелец театра ("домовладелец") – 1/10 от второй половины галерейного сбора"[8].

Подобно своему отцу, Шекспир вкладывал деньги в недвижимость. В отличие от Марло или даже Нэша и Грина его инстинкт самосохранения "оберегал" его от рискованных действий. В результате к концу жизни он сколотил весьма серьезное состояние.

Шекспир (деньгами и связями) даже помог отцу в 1596 году получить дворянский титул и "золотой гербовый щит, на темном поясе посеребренное стальное копье"[9]. Между тем многие из его более

---

[6] **Холлидей Ф.Е.** Шекспир и его мир, М., 1986, с. 32.

[7] **Акройд П.,** указ. соч., с. 275.

[8] **Холлидей Ф.Е.,** указ. соч., с. 48.

[9] Там же, с. 41.

именитых коллег, так называемых "университетских умов", умирали молодыми от нищеты, пьянства, болезней*.

Естественно, такая горькая участь коллег Шекспира на фоне его относительно благополучной жизни не могла не стать причиной самой черной зависти. Его менее удачливые собратья по перу не могли понять, как этот необразованный и бездарный, по их мнению, писака смог вознестись так высоко!?

Роберт Грин, окончивший два университета (Оксфордский и Кембриджский) и безумно гордившийся этим, называя себя не иначе как "по-латыни Utriusque Academiaein Artibus Magister – обеих академий магистр искусств"[11], воспринимал стратфордца как выскочку. Вместе с Томасом Нэшем они организовали настоящую травлю против молодого Шекспира. Нэш обвинял его в подражании Киду и попытке превзойти Грина и Марло своими "напыщенными виршами". Друг Нэша Грин называл его невеждой и плагиатором, перенимающим чужие стили.

---

* Гений Кристофера Марло блеснул как комета в английском театре и погас, когда ему было всего 29 лет. Своими эпатажными выходками и своеобразными взглядами на общество и особенно на религию он настроил против себя власти и церковь и в конце концов был заколот кинжалом в глаз в нелепой драке.

Томас Кид–автор знаменитой "Испанской трагедии", которому подражали многие современные ему писатели, в том числе и Шекспир, был обвинен в государственной измене. Его пытали. После чего на свободе он прожил всего год, полный лишений и страха.

Джон Лили закончил жизнь в "благородной бедности". Бедняга до последней минуты жизни надеялся получить должность "распорядителя придворных увеселений", о которой он не раз просил королеву Елизавету.

Роберт Грин страдал от болезней и обжорства, умер в нищете в доме какого-то башмачника.

Джордж Пиль славился своей распутной жизнью. Даже Роберт Грин призывал Пиля к раскаянию. Умер от оспы.

Томас Нэш учился в Кембридже, мечтал прославиться – не получилось. Взял псевдоним "Пасквиль" и, помимо слабых пьес, писал пасквили на Шекспира и других драматургов. В результате превратился в "желчного и разочарованного типа" (**Акройд П.,** указ. соч., с. 224). Сидел какое-то время в Ньюгейтской тюрьме и умер в возрасте 34-х лет.

[11] **Аникст А.А.** Шекспир, М., 1964, с. 68.

В 1589 году в предисловии пасторального романа Грина "Менафон" Нэш, очевидно с благословения автора – своего старшего друга и патрона – грубо набрасывается на неучей (в первую очередь, имея в виду Шекспира), "которые рады присвоить труд Овидия или Плутарха и выдать его за собственный"[12].

В 1590 году в своем памфлете "Никогда не поздно" Грин решил "уничтожить" Шекспира-актера: "С чего это ты, Росций, возгордился вместе с Эзоповой вороной, хотя оперенье у тебя чужое? Ведь тебе-то самому сказать нечего...". Через два года, находясь уже при смерти, он пишет памфлет "Копейка ума, искупленная миллионом раскаяния", где, в частности, предупреждает своих друзей Нэша, Марло, Пиля: "Да, не верьте им, ибо среди них появилась ворона, нарядившаяся в наши перья с сердцем тигра под костюмом актера; этот выскочка считает себя способным смастерить белый стих не хуже любого из вас, и в качестве настоящего Johannes-Factotum (мастер на все руки) мнит себя единственным потрясателем сцены (Shakescene) в стране"[13].

Итак, в течение трех лет эти два пропойцы между сеансами обжорства строчили низкопробные опусы и всячески травили жизнь Шекспира или, как они его называли, "деревенского выскочки": ругали за плагиат, отсутствие университетского образования, и, как следствие, за плохое знание латыни и греческого...

А на самом деле, – только за то, что тот, в отличие от них, "имел наглость" пользоваться большим успехом у зрителей.

Шекспир, конечно, понимал, что эти выпады могли серьезно помешать ему в творческой карьере. Однако его и на этот раз не подвело отмеченное многими острое чувство самосохранения. Он не стал открыто воевать ни с Грином, ни с Нэшем. Более того, он никак не отреагировал на их ядовитую критику.

Молодой Шекспир решил найти себе могущественного покровителя, чтобы нейтрализовать злобные нападки своих менее талантли-

---

[12] **Акройд П.,** указ. соч., с. 224.

[13] **Брандес Г.** Неизвестный Шекспир. Кто, если не он, М., 2012, с. 26.

вых коллег. Среди кандидатов на эту роль были граф Пембрук и граф Ратленд. Но Шекспир решил сделать ставку на влиятельнейшего пэра Англии Генри Ризли, 3-го графа Саутгемптона, с которым мечтал породниться сам лорд-казначей Уильям Сесил, 1-й барон Берли.

Известно, что Шекспир не был завсегдатаем в доме графа, но знакомы они, наверняка, были. Генри Ризли очень любил театр и не мог не видеть Шекспира хотя бы на сцене. Дотошные исследователи указывают на ряд других поводов для их знакомства. В частности–через Джона Флория, учителя графа и в то же время приятеля многих драматургов (возможно, и Шекспира).

Так или иначе, летом 1592 года Шекспир сел писать свою первую поэму "Венера и Адонис", которую решил посвятить своему будущему покровителю. Как видим, время он подобрал очень удобное – период вынужденного простоя. Дело в том, что в это время в Лондоне разразилась очередная эпидемия чумы, и многие театры в этой связи временно были закрыты.

К поэме он сделал элегантную приписку, адресованную "его милости Генри Ризли графу Саутгемптону, барону Тичфилду":

> Ваша милость!
>
> Боюсь, не оскорблю ли Вашу милость, посвящая Вам мои слабые строки, и не осудит ли меня свет за избрание столь сильной опоры для такой легковесной ноши; но если она понравится Вашей милости, я сочту это высочайшей наградой и поклянусь посвятить весь свой досуг неустанному труду, пока не создам в Вашу честь творение более достойное. <…>
>
> Покорный слуга Вашей милости
> Уильям Шекспир[14].

Это был очень сильный ход. Граф Саутгемптон, возможно, сам того не ведая, оказал Шекспиру ту самую поддержку, на которую он так рассчитывал. Противники "потрясателя сцены" и "выскочки-во-

[14] **Шенбаум С.** Шекспир: краткая документальная биография, М., 1985, с. 230.

роны" сразу же ретировались. И не удивительно. Никому не хотелось осложнять отношения с одним из влиятельнейших людей Англии, который пользовавлся благосклонностью самой Елизаветы, друга могущественного Роберта Девере, 2-го графа Эссекса.

Первым дрогнул злоязычный Томас Нэш – товарищ и собутыльник Роберта Грина. При переиздании своего памфлета он самым подлым и трусливым образом отрекся от своего друга, представив его единоличным автором известного произведения: "И еще есть новость, о которой меня поставили в известность, будто бы подлый, низкий и лживый памфлет Грина "На грош ума"– моих рук дело. Да пусть Господь навсегда оставит своей заботой мою душу, да буду отвергнут им, коль слово или полслова выведены там моим пером, коль я был осведомлен о писании или печатании оного"[15].

Вторым был издатель Генри Четтл, который нес ответственность за публикации памфлетов. В предисловии к собственному сочинению "Сон добросердечного" он чистосердечно покаялся за содеянное: "Я сожалею так, как если бы вина была моей собственной, поскольку имел случай убедиться в том, что в его поведении столько же благовоспитанности, как в деле, которым он занимается, совершенства. К тому же люди весьма знатные рекомендовали его (Шекспира.– А.Е.) как человека прямодушного, что подтверждается его честностью, и наделенного счастливым даром письма, что подтверждается его искусством"[16].

Добавим, что поэма "Венера и Адонис" была издана другом Шекспира Ричардом Филдом и пользовалась в Лондоне огромной популярностью – в течение десяти лет ее девять раз переиздавали.

Генри Ризли–графу Саутгемптонскому как поэма, так и приписка понравились, и уже в следующем году Шекспир написал "Обесчещенную Лукрецию", которую также посвятил графу.

---

[15] **Шайтанов И.О.** Шекспир, М., 2013, с. 173.

[16] Там же.

Как видим, Шекспир создавал свои произведения не в “безвоздушном пространстве”, абстрагировавшись от окружавшей его действительности. Нет, он очень чутко реагировал на происходящие вокруг события, скрупулезно взвешивал целесообразность выбора того или иного сюжета, героев и даже реплик. Многие из его пьес, сонетов, поэм имеют вполне определенную мотивацию их создания.

Когда Англия одержала блестящую победу над “владычицей морей”, могущественной Испанией, разгромив ее “Непобедимую армаду” в морской битве 1588 года, в стране резко возросли патриотические настроения, возник небывалый интерес к национальной истории, появилось большое количество всевозможных сочинений, воспевающих Англию.

Изданные в 70-80 годах XVI столетия хроники Рафаэля Холиншеда, Уильяма Гаррисона, Джона Стоу и других оказали весомое влияние на драматургию и театр. С легкой руки “бурного гения Возрождения” Кристофера Марло они пользовались большой популярностью. Их более или менее успешно штамповали многие писатели самых разных творческих дарований[17], что позволило приобщить широкие слои публики к исторической информации. Современник Шекспира драматург Т. Хейвуд говорит в своей “Апологии актеров” о воспитательном значении этих исторических драм следующее: “Пьесы сделали невежду более восприимчивым, передали необразованным знание многих исторических фактов, натолкнули неграмотных, которые не могли читать, на знакомство с нашими английскими хрониками, и нет теперь человека, столь неспособного, который бы не мог спорить по поводу любого значительного факта со времен Вильгельма Завоевателя вплоть до наших дней”[18].

Шекспир, естественно, не мог оставаться в стороне от этого процесса. Он сочинил десять блестящих пьес, посвященных событиям английской истории. Никто из современников не написал больше

[17] В этот период было поставлено не менее ста пятидесяти таких пьес.

[18] **Гвоздев А.А.,** указ. соч., с. 180.

произведений на эту тему. Оставаясь верным своим принципам, Шекспир создавал их, опираясь не только на исторические факты, но и на конъюнктуру текущего момента. Замечено, что во многих из них он, кроме всего прочего, так или иначе откликался на события, происходящие в современной ему Англии.

Так, знаменитое произведение "Ричард III" повествует о поражении рода Йорков в борьбе с Ланкастерами и возвращении последним, точнее Тюдорам – боковой линии этого рода – английской короны. И если учесть, что в то время английским народом правила королева Елизавета Тюдор, то можно допустить, что тема будущего произведения выбиралась Шекспиром с учетом, так сказать, политических особенностей текущего момента.

Можно привести и другие примеры зависимости подобного рода. Есть мнение, что весь цикл исторических пьес был написан по заказу лорда Стрейнджа, который таким образом желал выслужиться перед королевой. Шекспир в это время числился в труппе "Слуги лорда Стрейнджа" и ему ничего другого не оставалось, как выполнить поручение своего непосредственного шефа. Более того, в "Генрихе VI" и "Ричарде III" Шекспир отвел родственникам Стрейнджа самые выигрышные роли. Например, граф Дерби – предок лорда Стрейнджа[19] – собственноручно короновал Генриха Болингброка...

Со сменой власти интерес к хронике еще какое-то время сохранялся. В 1605 году преемник Елизаветы, король Иаков I "намекнул" Шекспиру, что к празднествам по случаю приезда в Англию короля Кристиана IV Датского надо написать пьесу, посвященную истории Шотландии, откуда родом его предки.

Предложение нового главы государства Шекспир воспринял со всей серьезностью – ведь он теперь числился в труппе короля, т.е. работал в придворном театре. Высокое доверие начальства надо было оправдать, и Шекспир, отыскав у Холиншеда соответствующую историю, написал очередной шедевр –"Макбет", где, может быть, и не

[19] Лорд Стрейндж – Фердинандо Стэнли, впоследствии – 5-й граф Дерби.

совсем точно с исторической точки зрения, но с вполне оправданным желанием понравиться заказчику провел параллель между действующим королем Англии и легендарным Банко. Чтобы обеспечить королю Иакову незапятнанную родословную, он даже предусмотрительно убрал Банко из состава убийц Дункана. Как-никак тот был основателем династии Стюартов.

В пьесе Шекспир предрекает ему "великую славу, а его потомкам – корону и объединение двух держав под одним скипетром"[20].

Так что с идеологической точки зрения пьеса была написана безупречно. А чего стоит панегирик, который произносит Малькольм в честь английского короля, т.е., надо понимать, самого Иакова[21].

Кроме этого, Шекспир даже учел, что преемник Елизаветы был одним из ярких борцов за правое дело освобождения страны от ведьм и прочей нечисти. В свое время он, как известно, написал книгу "Демонологию", где была изложена официальная позиция в отношении противоправных действий сатаны и его клики. С этой целью (во всяком случае, это не исключено) Шекспир и ввел в состав действующих лиц трагедии трех ведьм.

Дописав "Макбет", Шекспир, наверное, посчитал, что сполна выполнил свой долг перед историографией и страной и больше хроник не писал, не считая совместной работы с Джоном Флетчером над злополучной пьесой "Все истинно" ("Генрих VIII")[22].

После того как Шекспир перестал писать хроники, мода на исторические пьесы в Англии пошла на спад.

Что касается "Гамлета", то и в этом случае можно предположить наличие ряда причин или поводов к его созданию. Действительно, после

---

[20] **Корбут В.** Шекспировские страсти (Планета, 2010, № 11 (67), с. 77).

[21] **Шекспир У.** Макбет (пер. Ю.Б. Корнеева, Шекспир У. Полн. собр. соч. в 8 т., т. 7, М., 1960, с. 79).

[22] Как известно, во время ее постановки в "Глобусе" 29 июня 1613 года в театре вспыхнул пожар: "…сначала показался просто дымок, на него зрители не обратили внимания, увлеченные пьесой; все вспыхнуло, и огонь побежал по стенам, будто цепь, и в течение часа уничтожил весь дом до основания"(**Акройд П.,** указ. соч., с. 696).

того как в 1576 году французский писатель Франсуа де Бельфоре воспроизвел в своих “Трагических повестях” скандинавское сказание, история злоключений бедного Гамлета приобрела в Англии определенную известность. Во всяком случае, имя Гамлет (или в просторечии Хемнет) пользовалось в ту эпоху популярностью. Так, в частности, звали не только многих друзей, но также и сына самого Шекспира (предполагается, что малыш получил это имя в честь своего крестного отца, стратфордского пекаря, друга семьи Шекспиров Хемнета Сэдлера).

Принято считать, что автором первого английского “Гамлета”, так называемого Ur-”Гамлета”, был Томас Кид, хотя достоверных данных об этом нет. Догадки строятся на известном памфлете Томаса Нэша, где, кстати, наряду с Кидом упоминается и Шекспир.

Так вот, если допустить, что первая версия о злоключениях принца Датского была написана не Кидом, а самим Шекспиром, то становится ясным, почему он спустя годы снова взялся за эту пьесу. Шекспир не мог простить себе ее провала.

Надо сказать, ничего необычного в этом не было–Шекспир очень часто обновлял свои уже готовые пьесы. Так он, возможно, поступил с ранним вариантом “Укрощения строптивой”, которую переделал в уже знакомую нам знаменитую комедию, и с первой версией “Короля Лира”. Не исключено, что именно благодаря уязвленному самолюбию Шекспир создал свое величайшее творение.

В 1596 году умер единственный сын Шекспира – одиннадцатилетний Хемнет. Это случилось всего за несколько лет до выхода в свет первого издания трагедии. Тяжелое потрясение, вызванное потерей ребенка, не могло не отразиться в творчестве писателя.

Таким образом, вполне допустимо, что каждое из этих событий или их совокупность могли оказать известное влияние на выбор тем его произведений.

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՇԵՔՍՊԻՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՎՐԱ

ԵՐՆՋԱԿՅԱՆ Ա.Հ.

Ամփոփում

Շեքսպիրի ստեղծագործության վրա ազդել են բազմաթիվ հանգամանքներ: Դրամատուրգն իր պիեսներով արձագանքել է շուրջը կատարվող իրադարձություններին՝ նկատի ունենալով իր ստեղծագործությունների նպատակայնությունը, սյուժեն, հերոսներին: Նրա գրեթե բոլոր պիեսները, սոնետներն ու պոեմներն ունեն ստեղծագործական հստակ դրդապատճառներ:

INFLUENCE OF EXTERNAL FACTORS ON SHAKESPEARE'S CREATIVITY

A. YERNJAKYAN

Abstract

The article deals with circumstances that, in one way or another, could affect the work of Shakespeare. It is indicated that Shakespeare created his works not in the "airless space", abstracting from the surrounding reality. He was very sensitive to the events around, scrupulously weighed the expediency of choosing a particular plot, heroes and even replicas. Many of his plays, sonnets, poems have a very definite motive, the reason for their creation.

ЗНАЧЕНИЕ МОСКОВСКОЙ ШКОЛЫ ДЛЯ МУЗЫКОВЕДОВ АРМЕНИИ

САРКИСЯН С.К.

Развитие армянской музыкальной науки со второй половины XIX века шло двумя путями. Один был связан с наследованием музыкально-эстетической и музыкально-теоретической мысли как составных частей средневековой экзегетики, опыт которой на протяжении веков сохраняет познавательное значение при изучении армянской духовной музыки. Другой путь, обусловленный формированием профессионализма в общеевропейском понимании, объединил деятельность композиторов, историков и теоретиков музыки, направленную на осмысление насущных задач национальной культуры. В этом плане для представителей армянской музыкальной науки большую роль сыграло образование в учебных центрах Западной Европы и России, в частности, в Санкт-Петербургской (Ленинградской) государственной консерватории им. Н.А. Римского-Корсакова и Московской государственной консерватории им. П.И. Чайковского.

К 140-летию Московской консерватории в 2006 году в статье «Значение московской школы для композиторов Армении»[1] нами исследовалась одна из сторон музыкальных связей – на уровне образования и творческого общения композиторов. Целью настоящей статьи – к 150-летию МГК – является рассмотрение музыкальных связей на уровне образования и научного сотрудничества музыковедов. Это первая попытка обобщения и систематизации деятельности ряда представителей армянского музыкознания, имеющих творческое общение с Московской консерваторией – ее ведущими профессорами и воспитан-

[1] **Саркисян С.К.** Значение московской школы для композиторов Армении (Московская консерватория: вчера–сегодня–завтра, сб. ст., отв. ред. Е.Г. Сорокина, М., 2008).

никами. Правда, в области музыкальной науки более широкий охват связей наблюдается с первой русской консерваторией, что объясняется официально установившимся в 1930-е годы шефством Ленинградской (Петербургской) консерватории над молодой Ереванской консерваторией (основана в 1921 году как студия, в 1923 преобразована в консерваторию), однако, начиная с послевоенных лет, только что завершивших учебу музыковедов (кафедра музыковедения в Ереванской консерватории была сформирована в 1938 году) стала привлекать и Московская государственная консерватория им. П.И. Чайковского.

Естественное стремление обрести знания в столице большой страны было обусловлено высокой концентрацией здесь научного и педагогического потенциала, как и общей творческой атмосферой вуза. И в последующие десятилетия наращивание внутреннего потенциала и разработка актуальной проблематики станут определяющими для развития Московской консерватории, что позволит ее руководителю, профессору А.С. Соколову в XXI веке констатировать следующее: «…Притягательная сила общения всегда привлекала в консерваторию выдающихся музыковедов, чьи исследования охватывают широкий спектр музыковедческих вопросов: историю, теорию, культурологию, эстетику, психологию исполнительства и творчества»[2].

Окидывая единым взглядом прошлое и настоящее армянского музыковедения в плане образовательных и научных контактов с Московской консерваторией, получаем картину, впечатляющую масштабом и обилием фактов, памятных для истории музыкальной культуры не только Еревана, но и Москвы. Если привести имена корифеев российской науки, вошедшие в биографии армянских музыковедов или оказавшие опосредованное воздействие на их общепознавательный уровень (через учебники, исследовательские труды, лекции, прочитанные в Ереване, участие в международных конференциях), станет очевидной прогрессивная направленность выбора. Это те, кто соз-

[2] **Соколов А.С**. Московская консерватория в третьем тысячелетии (Беседа с Е.Д. Кривицкой, Музыкальная академия, 2003, № 3, с. 19).

давал и, сохраняя лучшее, развивал гуманитарные знания о музыке, и те, с кем сегодня ассоциируется научный корпус Московской консерватории. Вот имена этих выдающихся профессоров: С.С. Скребков, Л.А. Мазель, В.Дж. Конен, В.П. Бобровский, В.М. Беляев, Р.И. Грубер, И.В. Способин, В.А. Цуккерман, В.В. Протопопов, В.А. Васина-Гроссман, Б.М. Ярустовский, Е.В. Гиппиус, А.В. Руднева, М.Е. Тараканов, Е.В. Назайкинский, Г.В. Крауклис, Дж.К. Михайлов, И.А. Барсова, Ю. Н. Холопов, Т.И. Чередниченко, В.С. Ценова, В.В. Задерацкий, В.Н. Холопова, Г.В. Григорьева, Е.Б. Долинская, Т.А. Курышева, Е.И. Чигарева, М.А. Сапонов, В.В. Медушевский, Е.Г. Сорокина, Н.Н. Гиляров а, С.И. Савенко, А.С. Соколов, В.Н. Юнусова, И.Е. Лозовая, Т.С. Кюрегян, К.В. Зенкин, Е.С. Власова, Ю.В. Москва, О.В. Комарницкая, Р.А. Насонов – всех не объять.

Каждому из названных ученых можно посвятить страницы в книге русско-армянских связей с тщательной характеристикой идей научных изысканий, наиболее созвучных профессиональным интересам армянских музыковедов. Особо следует говорить о значении пиетета к личности ученого, тем более, если он является руководителем научной работы или лектором определенной дисциплины. Кроме того, полезно подвергнуть анализу – что диктуется самой действительностью – не только факты прямолинейного воздействия, но и процессы взаимодействия, обоюдного стремления к сотрудничеству, общению, обмену научной информацией и знанием, активно развивавшиеся начиная со второй половины XX века. Рамки статьи не позволяют этого. В конструктивном отношении тему целесообразнее рассмотреть в плане отдельных областей классического музыкознания: история музыки, теория музыки, этномузыкология, медиевистика, влияющих на всю систему музыкального образования и науки.

Область **истории музыки**, наиболее востребованной, с середины 1940-х годов нашла протекцию в Московской консерватории в лице крупнейших авторитетов российской науки. Профессора Роман Ильич Грубер, Виктор Михайлович Беляев, Юрий Всеволодович Келдыш стали руководителями научных работ молодых музыковедов Армении.

В аспирантуре МГК с 1945 по 1949 год в классе Р.И. Грубера училась Анна Александровна Барсамян (1915-2016), впоследствии профессор кафедры истории музыки Ереванской государственной консерватории, заслуженный деятель искусств. Защита ее кандидатской диссертации на тему «Александр Спендиаров и его творчество» состоялась в МГК в 1955 году. Высокая оценка работы дана в отзывах оппонента проф. В.М. Беляева[3] и заведующего кафедрой Всеобщей истории музыки проф. Р.И. Грубера, характеризующего работу Барсамян как «серьезное самостоятельное исследование» и рекомендующего к защите на Совете теоретико-композиторского факультета[4].

Общение с Р. Грубером продолжалось до конца жизни ученого. Сохранилось его письмо к Барсамян, датированное 1958 годом, с просьбой предоставить информацию об исполнении в Ереване музыки Г.Ф. Генделя–Грубер готовил публикации к 200-летию со дня смерти композитора… Имя самой Барсамян вошло в число учеников Грубера: показательно, что профессор Г.В. Крауклис свою статью об учителе завершает списком избранных воспитанников Грубера, и первая в этом списке А.А. Барсамян[5].

С личностью Р. Грубера как научного руководителя, затем и коллеги связано имя Изабеллы Рубеновны Еолян (1923-1996), доктора искусствоведения, автора исследования «Традиция музыки арабского Востока», ведущего научного сотрудника ВНИИ (ныне Государственный институт искусствознания). Она училась в аспирантуре МГК с 1949 по 1952 год, защитила в 1954 году кандидатскую диссертацию

---

[3] **Аветисян Н.З.** Музыковеды – выходцы из Гюмри. Анна Александровна Барсамян (Диалог культур: Армяно-российские связи. Материалы Второй международной научной конференции, редкол: К.А. Авдалян и др., Гюмри, 2009, с. 188).

[4] **Шейранян С.А.** Барсамян Анна Александровна (Музыкальная Армения, 2001, № 1 (4), с. 2). Среди других статей о Барсамян см.: **Շագոյան Գ.,** Աննա Բարսամյանի՝ վաստակաշատ պրոֆեսորի ծննդյան 95-ամյակին (Երաժշտական Հայաստան, 2010, №1 (36), էջ 71-72):

[5] **Крауклис Г.В.** Роман Ильич Грубер (Выдающиеся деятели теоретико-композиторского факультета Московской консерватории. Общ. ред. Т.Ф. Мюллера, М., 1966, с. 177). Кстати, в списке указаны имена учеников Р. Грубера и в Ленинградской консерватории, среди них два армянина – Э.Р. Налбандян, Г.Г. Тигранов.

на тему «Комитас – опыт характеристики творческой личности». Об особом отношении к ней Грубера свидетельствует факт, что аспирантке Изабелле Еолян был доверен курс истории зарубежной музыки, она вела его с 1950 по 1959 год. И. Еолян творчески унаследовала научный метод своего учителя. Как и Груберу, ей были присущи широта охвата темы, включение в исследовательское поле эстетико-философских знаний и проблем стилевого анализа музыки.

Еще одна представительница Армении, почти одновременно с И. Еолян получившая высокую квалификацию в МГК, это Цецилия Геворковна Брутян (1918-2000), которая с 1945 по 1950 год была аспиранткой профессора Юрия Всеволодовича Келдыша (в бытность его заведования кафедрой истории русской музыки) и профессора Виктора Михайловича Беляева. В 1952 году Ц. Брутян в МГК защитила кандидатскую диссертацию на тему “Комитас и армянская народная музыка”. С 1953 года Ц. Брутян жила в Ереване. Профессор Музыкально-педагогического института им. Х. Абовяна, она посвятила себя изучению музыкальной культуры и музыкальных деятелей армянской диаспоры.

Аспирантское образование в МГК получил доктор искусствоведения, заслуженный деятель искусств Армении, один из наиболее значительных музыковедов второй половины XX века Георгий Шмавонович Геодакян (1928-2015). В 1952-1955 годах он совершенствовался в классе профессора Бориса Михайловича Ярустовского – вначале по проблемам советской оперы, затем, уже в Ереване, сконцентрировался на теме «Романос Меликян. Жизнь и творчество». В 1960 году в Ереване вышла его книга, следом состоялась защита кандидатской диссертации. Приверженец всестороннего изучения армянского культурного наследия, освещения во взаимодействии проблем истории и теории, жанра и стиля, национального и общемирового– то есть того, что определяло творческую индивидуальность Ярустовского-ученого, Геодакян дополнил их разработкой структурных и функциональных особенностей ладовой системы армянской народной музыки, а также изучением проблем хазовой нотописи, которым, в частности, он по-

святил последние два десятилетия жизни. Результатом разносторонней координирующей деятельности Г. Геодакяна стало многолетнее руководство отделом музыки в Институте искусств Академии наук Армении, статус научного консультанта Музыкального энциклопедического словаря, а главное, выпуск в свое время подготовленных Р.А. Атаяном восьми томов (с VII по XIV) Собрания сочинений Комитаса – с дополнениями и уточнениями.

Армянские музыковеды совершенствовались также в ВНИИИ, научные сотрудники которого одновременно были профессорами Московской консерватории. Так, с 1965 по 1968 год в аспирантуре ВНИИИ под руководством проф. Веры Андреевны Васиной-Гроссман создавалось исследование Маргариты Ашотовны Рухкян о путях развития армянской симфонии[6]. Защита диссертации М. Рухкян состоялась в Москве в 1971 году. В 1980 году в Ереване вышла ее книга (с дополнительным очерком о симфониях А. Тертеряна), которая в 1983 году была удостоена III премии на Всесоюзном конкурсе им. Б.В. Асафева, организованном Союзом композиторов СССР. Как и Г. Геодакян, доктор искусствоведения, заслуженный деятель искусств Армении М. Рухкян является автором большого числа статей в московских изданиях, в частности в журнале «Советская музыка» («Музыкальная академия»). Унаследованная от Васиной-Гроссман способность ярко передать образ исследуемой музыки до сих пор характеризует ее публикации.

Эстафету исторического музыкознания с выходом в сферу социально-психологических знаний продолжила кандидат искусствоведения, доцент ЕГК Лилит Карленовна Епремян, которая с 1990 по 1993 год была аспирантом Отдела Востока ВНИИИ. Под руководством профессора И.Р. Еолян Л. Епремян написала диссертацию на тему «К

[6] В Москве М. Рухкян посещала класс композиции А.И. Хачатуряна, которому позже посвятила несколько статей, в том числе о композиторском классе в МГК. На статью, опубликованную в 1969 году в Ереване в журнале «Советакан арвест», письмом к Рухкян отозвался сам композитор. Письмо было опубликовано в III томе «Письма Арама Хачатуряна» (Е., 2003, на арм. и рус. яз.).

проблеме этнических традиций в музыкальной культуре Армении (на примере городского фольклора Еревана 1980-х годов)». По совету доктора искусствоведения М.Г. Арановского одна из глав ее работы была посвящена рабису (рабочему искусству). Диссертация (защита состоялась в Москве в 1995 г.) была созвучна общему интересу к массовой культуре, получившему в те годы различное освещение в трудах В. Дж. Конен, В.В. Медушевского, Т.В. Чередниченко. Одновременно Л. Епремян была вольнослушателем лекций Ю.Н. Холопова в МГК, присутствовала на открытом заседании новосозданной по инициативе В. Н. Холоповой кафедры междисциплинарных специализаций, что инициировало введение в ЕГК спецкурса для музыковедов “Проблемы междисциплинарных исследований” (вела несколько лет, начиная с 1998 года).

В течение ряда лет соискателем МГК была воспитанница профессора Н.К. Тагмизяна Гоар Карленовна Шагоян. Вначале (1990-1992) научным руководителем ее работы был профессор Михаил Евгеньевич Тараканов, затем –профессор Елена Борисовна Долинская (2002-2004). Утвержденная в МГК новая тема – «Профессиональная музыка Армении для детей и юношества (этапное развитие и жанровая спецификация)» находится в процессе разработки. Одновременно с этим музыковедческая и журналистская деятельность Г. Шагоян получила результативность в общественной сфере: в 1998 году ею был основан журнал «Ержштакан Айастан» («Музыкальная Армения»), в 2004 г.– издательство Ереванской государственной консерватории, в 2005 г.– ежемесячная газета «Ержишт» («Музыкант»).

Говоря о **теоретическом музыкознании**, в первую очередь следует назвать имя Сусанны (Шушаник) Бабкеновны Аматуни (1924-2010) – кандидата искусствоведения, профессора кафедры теории музыки ЕГК, получившей базовое образование в Музыкально-педагогическом институте им. Гнесиных (1945-1950) под руководством профессора Валентины Джозефовны Конен. Среди учителей Аматуни – Л.А. Мазель, С.С. Скребков, В.Э. Ферман, Т.Н. Ливанова, М.С. Пекелис, Б.А. Левик. "Мазелевская" методология анализа формы, разработка це-

лостных концепций об эволюции стилей и системы средств музыкальной выразительности, диалектики истории и теории –вот основные постулаты, которыми С. Аматуни руководствовалась в науке и педагогике[7]. Особые отношения – коллегиальные и человеческие – сложились у Аматуни с В. Конен, о чем она рассказала в статье «Слово об учителе»[8]. Преклоняясь перед научной эрудицией, равно как и духовным стоицизмом Конен, С. Аматуни через всю жизнь пронесла высокий образ своего учителя. В 1964 году, работая над книгой «Театр и симфония», В. Конен выступила на эту тему в Ереванской консерватории. Будучи в Ереване, В. Конен живо интересовалась культурой Армении, восхищалась искусством древних зодчих[9]. Сама С. Аматуни защитила кандидатскую диссертацию в Ереване довольно поздно, после выхода в свет своей содержательной книги «Арно Бабаджанян. Инструментальное творчество» (1985), научная ценность которой сохраняет актуальность по сей день.

С профессором МГК М.Е. Тараканoвым связано научное общение доктора искусствоведения, профессора Ереванской консерватории, заслуженного деятеля искусств Армении Карине Азатовны Джагацпанян, подготовившей под его руководством в аспирантуре ВНИИИ (1977-1980) кандидатскую диссертацию «О закономерностях воздействия ритма словесной речи на вокальную и инструментальную мелодику» (защита в ВНИИИ в 1982 году, после выхода книги в Ереване в 1981г.). В 2001 году там же состоялась защита ее докторской диссертации на тему «Ритмика армянской музыки» (публикация книги «По следам ритмов национальной музыки» в Ереване в 1999 г.). В числе оппонентов обеих диссертаций Джагацпанян – профессор В.Н.

---

[7] С. Аматуни незадолго до смерти завершила перевод на армянский язык учебника Л.А. Мазеля «Строение музыкальных произведений», который пока ждет своего издания.

[8] Первая публикация статьи–в журнале «Музыкальная академия», 1998, № 1. Несколько сокращенно статья вышла в сборнике: Голос человеческий. К 100-летию Валентины Джозефовны Конен. Письма. Статьи. Отв. ред. М.А. Сапонов, М., 2011, с. 66-73.

[9] Там же, с. 73.

Холопова, чьи известные труды по ритму оказали прогрессивное воздействие на умы многих армянских музыковедов. Исследования Холоповой постоянно востребованы в Армении, благодаря ей Джагацпанян, как и другие ереванские музыковеды (С.К. Саркисян, Ж.П. Зурабян), стали участниками Всесоюзной научно-теоретической конференции по вопросам ритма в 1989 году[10].

Под руководством В. Н. Холоповой дважды – в 1978 и 1988 годах – на факультете повышения квалификации МГК совершенствовалась Светлана Корюновна Саркисян, до этого окончившая аспирантуру Ленинградской консерватории. В 1999 году в Московской консерватории ею была защищена докторская диссертация «Армянская музыка в контексте XX века» (оппоненты М.Г. Арановский, Р.Х. Лаул, В.Н. Холопова), в 2002 вышедшая книгой в издательстве «Композитор». Тесно связанная с Россией научная судьба профессора С. Саркисян определила круг ее интересов и тем. Заслуженный деятель культуры Армении и Польши, она участник 24 конференций только в России, из них 12 – в Москве[11]. С 1971 года С. Саркисян постоянно публикуется в журнале «Советская музыка» («Музыкальная академия») и в научных сборниках Московской консерватории, Российской академии музыки им. Гнесиных, Российской академии художеств, является автором статей в Музыкальном энциклопедическом словаре, Большой Российской энциклопедии, Православной энциклопедии, в журналах «Музыкальная жизнь», «Балет», «Искусство кино», а также книг, изданных в Москве[12].

Этномузыковедческие контакты, активные в советский период, в немалой степени были обусловлены деятельностью Союза композиторов СССР: сформированная из представительных ученых Всесоюзная комиссия по народному музыкальному творчеству курировала область фольклора и фольклористики всей страны. В бюро Комиссии

[10] Тема К. Джагацпанян–«О некоторых свойствах ритмики народной и профессиональной музыки Армении».

[11] Кстати, свое научное «крещение» С. Саркисян получила на студенческой конференции в Москве – к 100-летию консерватории.

[12] Последняя –На рубеже веков. Музыка и ее сферы. Избранные статьи, М., 2014, (на рус., арм., нем., англ., франц. яз.).

входила авторитетный знаток фольклора, основатель в 1969 году в Ереванской консерватории Кабинета народного музыкального творчества (с 1988 г.– Кафедра армянской музыкальной фольклористики) кандидат искусствоведения, профессор Марго (Маргарит) Арамовна Брутян (1922-2002)[13]. Член бюро фольклорной комиссии, М. Брутян в 1975, 1976, 1977 годах принимала участие в коллективных комиссиях[14], дважды по ее инициативе были организованы пленумы Союза композиторов Армении, посвященные народной музыке (1973, 1987), а в 1975 году совместно с В.Л. Гошовским–при содействии Института искусств АН Армении, Союза композиторов Армении, Ереванской консерватории, Ереванского политехнического института и Всесоюзной комиссии народного музыкального творчества – в Дилижане (в Доме творчества композиторов) был проведен Первый всесоюзный семинар по машинным аспектам алгоритмического формализованного анализа музыкальных текстов[15].

Будучи ереванской аспиранткой представителя ленинградской школы музыковедения, проф. Х.С. Кушнарева (позже она перевела на армянский его знаменитое исследование «Вопросы истории и теории армянской монодической музыки», Л., 1958), Брутян, тем не менее, склонялась к московской школе гармонии. В 1966 году в Ереване (2-е изд., 1978) вышел ее перевод "Учебника гармонии" т. наз. московской бригады–И. Дубовский, С. Евсеев, И. Способин, В. Соколов (3-е изд., М., 1956), до сих пор являющийся учебным подспорьем по курсу гармонии в Ереванской консерватории. И в Москве отвечали тем же уважением: в 1972 году, при присвоении ВАК СССР научного звания

[13] М.А. Брутян была заведующей с 1969 по 1992 год, передав кафедру кандидату искусствоведения, профессору А.А. Пахлеванян.

[14] **Բրուտյան Մ.,** Պատմության էջերից (Երաժշտական Հայաստան, 2008, № 4 (31), 2009, № 1 (32), էջ 5-7):

[15] Материалы Первого семинара – МААФАТ'75 под общей редакцией и с предисловием В.Г. Гошовского вышли в Ереване в 1977 году в издательстве АН Арм. ССР. Отметим, что в этом семинаре приняли участие 74 специалиста (музыканты и математики) из Еревана, Москвы, Ленинграда, Киева, Тбилиси, Алма-Аты, Вильнюса, Кишинева, а также ведущие ученые из Чехословакии, Польши, Германии, Болгарии.

профессора, к делу М.А. Брутян прилагались отзывы Е.В. Гиппиуса, А.В. Рудневой, а также Л.С. Мухаринской, З.Я. Можейко[16]. Сохранился отзыв Е.В. Назайкинского после посещения им в середине 1980-х годов Кабинета народного творчества ЕГК, охарактеризованного им как «замечательный островок подлинно музыкального и прогрессивного подхода»[17].

Прогрессивность М. Брутян проявилась и в том, что в качестве сотрудника Кабинета фольклора она пригласила крупного этномузыколога, ученика К.В. Квитки Владимира Леонидовича Гошовского (1922-1996), собравшего здесь Каталогизационную группу по комплексному анализу армянских народных песен. В. Гошовский (кстати, по матери–армянин) жил в Ереване с 1975 по 1986 год. Основным местом его научной деятельности был Институт искусств АН Армении, где он развернул (совместно с математиками И.Б. Мкртумяном и Э.В. Акопяном) колоссальную работу по созданию т. наз. Универсального структурно-аналитического каталога музыкальных текстов (УНСАКАТ) как «средства для описания, систематизации, классификации, синтезирования и передачи исчерпывающей информации о народной музыке различных музыкальных культур»[18].

С идеей классификации и систематизации фольклора В. Гошовский впервые выступил в 1973 году в Вильнюсе на выездном заседа-

---

[16] **Киракосян А.** Маргарит Брутян. Материалы к библиографии, 2-е изд., доп., Е., 2007, с. 45 (на двух языках – арм. и рус.).

[17] Приведем текст отзыва: «Кабинет народного творчества Ереванской государственной консерватории, его руководитель и сотрудники – замечательный островок подлинно музыкального и прогрессивного подхода к изучению того удивительного, что есть в армянской музыкальной культуре, отражающей в своей сфере все богатства истории армянского народа, его жизни, обычаев, его удивительных географических трансформаций, его богатую и красочную природу и прежде всего душу – то неуловимое, чему можно удивляться, чем можно восторгаться и что следует бережно хранить» (там же, с. 36).

[18] **Мкртумян И.** Воспоминания о В.Л. Гошовском (Памяти Владимира Гошовского. Сб. статей и материалов. Сост. В. Пасичник, Львов, 2006, с. 69, на двух языках– укр. и рус.). Об описании системы УНСАКАТ см: **Гошовский В.Л., Мкртумян И.Б., Акопян Э.В.** Армянский универсальный структурно-аналитический каталог музыкальных текстов (ՀՀ ԳԱԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 1983, № 5, էջ 88-91).

нии расширенного бюро Всесоюзной комиссии по народному музыкальному творчеству, где присутствовали и армянские фольклористы. Далее последовали переговоры с заведующим отделом народной музыки Института искусств М.О. Мурадяном, представление В. Гошовским проекта Армянского универсального музыкально-фольклорного каталога и, в конце концов, предложение переехать в Армению. Приезд в Ереван крупного ученого с международной репутацией, автора исследования «У истоков народной музыки славян. Очерки по музыкальному славяноведению» (М., 1971), подготовившего фундаментальное двухтомное издание трудов К.В. Квитки[19], осуществило прорыв в национальном музыкознании, еще более сблизив ученых Армении и России[20]. Став членом Союза композиторов Армении, он с 1977 года проводил Семинар по проблемам современного музыкознания (руководитель В.Л. Гошовский, координатор К.А. Джагацпанян, после отъезда ученого во Львов продолжившая его дело до 1991 года). Из Москвы на Семинаре выступали М.Е. Тараканов, В.Х. Холопова, Г.В. Григорьева, Н.Г. Шахназарова, Л.Г. Бергер, Дж. К. Михайлов[21].

В 1980 году, вновь в Дилижане, В. Гошовский организовал Международный этномузыковедческий коллоквиум к 100-летию со дня рождения К.В. Квитки, посвященный проблемам кавказоведения, историко-сравнительного и ареально-типологического исследования музыки. Публикация материалов, увы, осталась неосуществленной. Однако ранее В. Гошовский составил со своими комментариями сборник работ К. Квитки «Музыкальный фольклор и музыкальная фольклористика на Кавказе», который уже после его смерти к изданию на базе Союза композиторов Армении подготовила С.К. Саркисян. Как пишет В. Гошовский в комментарии к статье, посвященной пентато-

---

[19] **Квитка К.В.** Избранные труды в двух томах (сост. и коммент. В Л. Гошовского), М., 1975.

[20] **Саркисян С.К.** Подвижник армянской культуры (Памяти Владимира Гошовского, указ. соч., с. 73-79, на двух языках–укр. и рус.), **Пасичник В.** Армянский период Владимира Гошовского (там же, с. 96-110, на укр. яз).

[21] **Джагацпанян К.А.** Устремленный в будущее (Музыкальная Армения, 2001, № 1 (4), с. 9).

нике в армянских народных песнях, «Квитка начал научно-публицистическую деятельность в 1903 году и закончил в 1946-ом статьями об армянской музыке»[22]. Экземпляр изданного небольшим тиражом сборника работ Квитки был передан Центру народной музыки им. К. В. Квитки МГК (руководитель-профессор Н.Н. Гилярова).

В области **медиевистики** научные контакты отмечены представительными именами армянского и армяно-российского музыковедения. Получив образование на родине, где изучение национальной древней и средневековой культуры является магистральным направлением науки, армянские ученые распространяют знание о своей культуре – в области истории, теории, богословской экзегезы, герменевтики, эстетики, философии музыки, искусства музыки по всему миру, воздействуя на доктрины зарубежных исследователей. В этом отношении примечательны публикации сотрудника Саксонской Академии музыковедения в Лейпциге, д-ра Регины Рандховер, серьезно изучающей армянскую церковную музыку[23] и теоретическое наследие Комитаса (1869-1935), благодаря учебе в Берлине и последующему сотрудничеству с немецкими учеными оставившего свой след в берлинском музыкознании начала XX века[24]. Также и в России: научная деятельность в Ленинграде Христофора Степановича Кушнарева, а в Москве Александра Исааковича Шавердяна[25] сыграли роль своего рода катализатора арменоведения–составной части учения о культуре древнего мира.

---

[22] **Квитка К.В.** Музыкальный фольклор и музыкальная фольклористика на Кавказе, Е., 2001, с. 24.

[23] **Randhofer R.** Armenische Kirchenmusik (Riemann Musiklexikon. Bd. 1. Mainz, 2012, S. 89-91).

[24] **Randhofer R.** Komitas und die Berliner Musikwissenschaft. Eine deutsch-arme nische Beziehung an der Schwelle zum 20 Jahrhundert. Teil 1 (Armenisch-Deutsche Korrespondenz. Frankfurt/ M., 2013, Heft 2 (159), S. 32-34; Teil 2 //ADK. 2013, Heft 3 (160), S. 37-40).

[25] А.И. Шавердяну (1903-1954) принадлежат посмертные издания следующих книг в Москве: Очерки по истории армянской музыки XIX-XX веков. Досоветский период (Общ. ред., предисловие и комментарии Р.А. Атаяна, М., 1959); Комитас. Изд 2-е, доп. (Ред. Р.А. Атаян, Н.К. Тагмизян. Вступ. статьи Ю.В. Келдыша, Р.А. Атаяна, Н.К. Тагмизяна. 1-е изд., Е., 1956, на арм. яз).

Поистине революционный переворот в современной медиевистике осуществил доктор искусствоведения, профессор Ереванской консерватории, ведущий научный сотрудник ереванского Института древних рукописей им. Маштоца «Матенадаран» Никогос Киракосович Тагмизян (1926-2011), разработавший все области армянской медиевистики, оказавший влияние как на национальное, так и на российское музыковедение. Он публиковал свои многочисленные труды по истории, теории, эстетике и философии музыки в разных странах мира. Главный обобщающий труд Н. Тагмизяна «Теория музыки в древней Армении» был защищен в степени доктора искусствоведения в Московской консерватории в 1979 году (официальные оппоненты диссертации Е.В. Назайкинский, Т.С. Вызго, М.О. Мурадян). До этого, в 1977 г., изданное в Ереване на русском языке, это исследование сохраняет высокую научную ценность по сей день.

В настоящее время продолжающая разрабатывать идеи Н. Тагмизяна доктор искусствоведения, ведущий научный сотрудник Института искусств НАН Армении, профессор Ереванской консерватории, заслуженный деятель искусств Армении Анна Сеновна Аревшатян является связующим звеном между медиевистами Армении, странами ближнего и дальнего зарубежья. Ею немало сделано для объединения исследований, посвященных традициям сакральной музыки, в частности, составление и редакция международного музыковедческого сборника «Манрусум» по проблемам истории, теории и эстетики духовной музыки. В четырех выпусках сборника (2002, 2005, 2009, 2013), в числе прочих, опубликованы материалы представителей московской школы: И.Е. Лозовая, Е.И. Коляда, Ю.В. Москва, Р.Л. Поспелова, О.В. Тюрина, Е.А. Трубенок, Т.П. Разувакина, Н.С. Сторчак. С 1996 года А. Аревшатян периодически участвует в конференциях, организуемых Научно-исследовательским центром церковной музыки им.

протоиерея Д. Разумовского в Московской консерватории, публикует статьи в сборниках «Гимнология»[26].

Свою деятельность в Армении как медиевист начал выпускник Ереванской консерватории Левон Оганесович Акопян, по приглашению М.Г. Арановского с 1995 года ставший сотрудником Государственного института искусствознания. С 2010 г. он является заведующим Сектором теории музыки. Однако до этого, в 1986 году, тогда в ВНИИИ, состоялась защита кандидатской диссертации Акопяна на тему «Мелодические структуры армянского восьмигласия и их отражение в невменном (хазовом) письме» (оппоненты Ю.В. Келдыш, М.А. Брутян). В течение 10 лет после защиты диссертации Л. Акопян продолжал публиковать статьи (в Ереване[27], Эчмиадзине, Москве, Киеве, за рубежом) и выступать по вопросам теории духовной гимнодии, мелодической организации и стихосложения армянских шараканов, одновременно с этим формируя новые научные интересы и области, в том числе связанные с русской музыкой (исследование о Д. Шостаковиче, к примеру)[28]. В 1996 году в Москве Л. Акопян защитил докторскую диссертацию «Анализ глубинной структуры музыкального текста» (в 1995 г. вышла книгой в издательстве «Практика»), официальными оппонентами были Н.С. Гуляницкая, Т.В. Чередниченко, Ю.Г. Кон. За два десятилетия своей насыщенной московской жизни Л.О. Акопян утвердил репутацию высокоэрудированного ученого, труды которого обогащают интеллектуальный ландшафт как России, так и Армении, способствуя преемственности и консолидации современных научных знаний.

---

[26] Статьи А. Аревшатян вышли в вып. 1 (2000), вып. 3 (2003), вып. 5 (2008), вып. 6 (2011), вып. 7 (2017).

[27] В соавторстве с А. Аревшатян Л. Акопян написал развернутое предисловие к первому тому сборника духовных гимнов армянской апостольской церкви “Шаракан”, Е., 1997.

[28] **Акопян Л.О.** Дмитрий Шостакович: опыт феноменологии творчества, СПб., Дмитрий Булавин, 2004.

ՄՈՍԿՎԱՅԻ ԴՊՐՈՑԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԱԺՇՏԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՍԱՐԳՍՅԱՆ Ս.Կ.

Ամփոփում

Մոսկվայի կոնսերվատորիայի, ապա Մոսկվայի գիտական և կրթական կենտրոնների հետ կապն ընդգրկում է մեծ ժամանակաշրջան՝ 1940-ական թ. կեսերից մինչ օրերս: Սկսած 1938-ից՝ Երևանի կոնսերվատորիայում հիմնված Երաժշտագիտության ամբիոնի առաջին շրջանավարտներն իսկ արդեն կատարելագործվում էին Մոսկվայի Չայկովսկու անվան պետական կոնսերվատորիայում, Գնեսինների անվան երաժըշտա-մանկավարժական ինստիտուտում, Արվեստագիտության համամիութենական գիտահետազոտական ինստիտուտում. այստեղ էլ պաշտպանել են իրենց թեկնածուական և դոկտորական ատենախոսությունները: Հայաստանի և Ռուսաստանի գիտնականների միջև ձևավորված երկկողմանի համագործակցությունը դրական ազդեցություն է թողնում երկու երկրների գիտության զարգացման վրա:

Պահպանելով ժամանակագրական հաջորդականությունը՝ կապերի զարգացումը դիտարկել ենք երաժշտագիտության չորս հիմնական ոլորտներում.

1. պատմական երաժշտագիտություն,
2. տեսական երաժշտագիտություն,
3. երաժշտական ազգագրություն,
4. միջնադարագիտություն:

IMPORTANCE OF THE MOSCOW SCHOOL FOR ARMENIAN MUSICOLOGISTS

S. SARKISYAN

Abstract

The relations with the Moscow Conservatory and scientific-educational centres of Moscow span a long period of time – from the 1940's to this days.

Starting from the first graduates of the Musicology Chair founded in 1938, they have been perfecting themselves at the Moscow State Tchaikovsky Conservatory, the Gnessin State Music Pedagogical Institute, and the All-Union State Institute for Art Studies, where they defend theses for titles Candidate of Sciences and Doctor of Sciences. Thus, a reciprocal cooperation between Armenian and Russian scientists was shaped, leaving a positive impact on the scientific development of both countries.

By observing the chronological sequence, the author considers the development of corresponding relations within four fundamental spheres:

1. historical musicology,
2. theoretical musicology,
3. musical ethnography,
4. mediaeval studies.

«ԴԱՐՁՎԱԾՔ» ՁԱՅՆԵՂԱՆԱԿՆԵՐԸ ՀԱՅ ՀՈԳԵՎՈՐ ԵՐԳԱՐՎԵՍՏԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ ԵՐԳՎԱԾՔՈՒՄ (ԱՌԱՋԻՆ ՁԱՅՆ «ԴԱՐՁՎԱԾՔԻ» ՕՐԻՆԱԿՈՎ)

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Լ.Ա.

Դեռևս նախաքրիստոնեական ժամանակներում ձևավորված Ութձայն համակարգը, անցնելով զարգացման բազմադարյան ուղի, մեր օրերում ևս հանդիսանում է որպես հայ հոգևոր երգաստեղծության հիմնական կատեգորիա: Այն նաև հայ միջնադարյան մասնագիտացված երաժշտության ուսումնասիրության գլխավոր ելակետն է: Իր ձևավորումից ի վեր կրել է փոփոխություններ, ենթարկվել է դասակարգումների, ունեցել է բազմաթիվ ճյուղավորումներ: Վերջինների հիմնական տեսակը համարվում են «դարձվածք» ձայնեղանակները:

Ի տարբերություն լատինական ու բյուզանդական եկեղեցական երաժշտությունը սխեմայացնող Ութձայնի, հայկական երաժշտության մեջ, ըստ պահպանված երգային նմուշների, Ութձայնն իր բաղադրյալների ու ճյուղավորումների նույնպիսի փոխհարաբերություն չձևավորեց: Ձայնեղանակների կողքին հայկական «կողմ» ձայնեղանակները միայն անունով են ածանցյալ, իսկ ըստ էության, բոլորովին ինքնուրույն են, նույնքան ավտենտիկ[1], որքան բուն ձայները: Ասվածը վերաբերում է նաև ստեղիներին և «դարձվածք» ձայնեղանակներին:

Իր զարգացման երկարատև ժամանակաշրջանից հետո, որոշակի կարծրացման պայմաններում հայկական Ութձայն համակարգը շարունակում է գոյատևել գործնական երաժշտության ոլորտում՝ հիմնականում բանավոր ավանդույթով: Հայ հոգևոր երաժշտությունը XVIII-XIX դդ. սահմանագծին բաժանվել է հինգ ավանդական երգվածքների, որոնցից մեկը Վենետիկում կենցաղավարող՝ Մխիթարյան միաբանության ավանդական երգվածքն է[2]: Այդ երգվածքում արտացոլված «դարձվածք» ձայնեղանակ-

---

[1] Ըստ Սպիրիդոն Մելիքյանի, «ձայն» եղանակներն ավտենտիկ են, իսկ «կողմ» եղանակները՝ պլագալ (տե՛ս **Աթայան Ռ.**, Հայկական խազային նոտագրություն, Ե., 1959, էջ 160, տողատակ):

[2] **Թահմիզյան Ն.,** Մակար Եկմալյան, կյանքն ու ստեղծագործությունը, Ե., 1981, էջ 65-66:

ները ներկայացնում ենք՝ հիմնվելով շարականերգության վերլուծության վրա:

«Դարձվածք» ձայնեղանակների հիշատակումների հանդիպում ենք VIII դ. սկսած: Դրանք ինքնուրույն ձայնակարգային և մեղեդիական բնութագիր ունեցող ձայնեղանակներ են, թեև անունով կցվում են այս կամ այն ձայնեղանակին (ԱՁ «դարձվածք», ԱԿ «դարձվածք» և այլն):

Երաժշտագետ Ռոբերտ Աթայանը ներկայացրել է «դարձվածք» ձայնեղանակների՝ բուն ձայնեղանակներից տարբերակելու իր տեսակետը: Ըստ նրա, «դարձվածք» ձայնեղանակներն իրենց բուն ձայների հետ ունեն հետևյալ հարաբերությունները. ա) նոր հնչյունաշար՝ նոր վերջավորող ձայնով, բ) նույն վերջավորող ձայնը՝ նոր հնչյունաշարով, գ) նույն հնչյունաշարը՝ տարբեր վերջավորող ձայներով[3]:

Հայ հոգևոր երգվածքի մխիթարյան ճյուղի Ութձայն համակարգը երբևէ չի ենթարկվել տեսական վերլուծության: Ուստի բոլոր դիտարկումներն ու սահմանումները տալիս ենք Միաբանության երաժշտագետ Ղ. վրդ. Տայյանի՝ 1950-1960-ական թթ. հրատարակած Շարակնոցների երաժշտական նյութի մեր ուսումնասիրությունների հիման վրա: Այսպես, ինչպես էջմիածնական, այնպես էլ մխիթարյան ավանդույթում «դարձվածք» ձայնեղանակները հստակ նշումով հանդես են գալիս միայն Շարակնոցների սկսվածքներում: Դրան խիստ կարևորություն ենք տալիս, քանի որ բուն շարականների ձայնեղանակային ցուցչի հետ չի նշվում՝ «դարձվա՞ծք» է ձայնեղանակը, թե՞ ոչ: Սակայն նույնիսկ այստեղ «դարձվածք» ձայնեղանակները ցուցադրվում են միայն վերջավորող հատվածի տիրույթում: Այսինքն, այստեղ յուրաքանչյուր սկսվածքի վերջում ընդամենը բերվում է վերջավորող մեղեդիական մի հատված՝ «դարձվածք» ձայնեղանակային նշումով:

Մխիթարյան միաբանությունում կենցաղավարող սկսվածքները մեզ հասել են 1957 թ. գրված կամ արտագրված ձեռագիր տետրակով: Հայտնի չէ, թե տետրակն ում գրառածն է, սակայն գրառման ժամանակը համընկնում է Ղ. Տայյանի գործունեության տարիների, ինչպես նաև շարակնոցների հրատարակման տարեթվերի հետ: Բացի այդ, գրառման սկզբունքը լիովին համապատասխանում է տպագիր Շարակնոցների սկզբունքին՝ մասնավորապես, մեղեդու տակտավորումը, տեմպային նշում-

[3] Տե՛ս **Աթայան Ռ.,** նշվ. աշխ., էջ 161:

ներն ու ալտերացիայի նշանները: Հետևաբար, վստահ կարող ենք ասել, որ գրառումը պատկանում է կամ Ղ. Տայյանին, կամ էլ նրա սկզբունքներով առաջնորդվող այլ երաժշտի: Ուստի վերոնշյալ տետրակը վստահելի աղբյուր ենք համարում «դարձվածք» եղանակների մասին տեղեկություններ ստանալու համար:

Շարականներում ձայնեղանակների շարադրանքը նմանեցնելով տետրակից մեզ ծանոթ նկարագրին՝ փորձել ենք առանձնացնել ԱՁ, ԴՁ և ԴԿ «դարձվածք» եղանակները: Իսկ էջմիածնական երգվածքի՝ արդեն ուսումնասիրված Ութձայն համակարգի տախտակներից ելնելով՝ վերլուծության շնորհիվ դուրս ենք բերել նաև ԲՁ, ԲԿ, ԳՁ և ԳԿ «դարձվածքները»՝ իրենց վառ արտահայտված մեղեդիական նկարագրի շնորհիվ:

ԱՁ «դարձվածք» ձայնեղանակը ճանաչելի է իր մեղեդու զարգացման սկզբից մինչև վերջ: Այն հստակ ձևակերպված է և՛ սկսվածքներում՝ վերջավորող մեղեդիական դարձվածքի ձևով, և՛ Շարակնոցներում՝ բանալու մոտ բուն ԱՁ-ին հատուկ ալտերացիայի նշանների բացակայությամբ:

Ինչպես երևում է օրինակից, երկու տարբերակներն էլ ունեն «ԱՁ» հայերեն և 1er Mode ձայնեղանակային նշումը, սակայն տարբերվում են առաջին իսկ հայացքից՝ վերոնշյալ պատճառով:

Տայյանական Շարակնոցի հատորներում գտանք քառասունինը ԱՁ «դարձվածք» ձայնեղանակ պարունակող շարականներ[4]: Այդ թվում, կա տասներեք շարական, որտեղ մեղեդու զարգացման ընթացքում տեսնում ենք ԱՁ և ԱՁ «դարձվածք» ձայնեղանակների զուգորդում, անցում մեկից

[4] Դրանցից մեկը Շարակնոցում գրառված էր առանց որևէ ձայնեղանակային նշումի: Մեր ուսումնասիրության ընթացքում երևաց, որ այդ շարականը կատարվում է ԱՁ «դարձվածք» ձայնեղանակում (տե՛ս Շարական Հայաստանեայց Եկեղեցւոյ, հ. Ը, Վենետիկ, Ս. Ղազար, 1966, էջ 447):

մյուսին: Դրանցից յոթը[5] սկսվում և ավարտվում են բուն ԱՁ ձայնեղանակում, վեցը[6] սկսվում են ԱՁ-ում, իսկ ավարտվում են արդեն «դարձվածքում»: Երբեմն նաև հանդիպում ենք հակառակ երևույթի. ողջ շարականը երգվում է ԱՁ «դարձվածքում», սակայն ամենավերջում՝ շարակնոցի համար խիստ հատկանշական «և այլն» նշումից առաջ մեղեդում ի հայտ են գալիս բուն ԱՁ-ի դրսևորումներ: Դրանք են՝ ԱՁ-ի վերջավորող ձայնի ներքևի ձգտող տոնի և վերևի մեդիանտայի՝ քառորդ տոն բարձրանալը: Այստեղից կարող ենք ենթադրել, որ այս կտորները կամ անցում են ապահովում դեպի հաջորդիվ երգվող երգային միավորը, որը կատարվում է ԱՁ ձայնեղանակում, կամ էլ ներկայացնում են շարականի վերջին վերջավորող դարձվածքը, որը, ցավոք, գրանցված չէ ու թողնված է բանավոր ավանդույթին[7]:

ԱՁ «դարձվածքի» ձայնակարգն ունի տերցիային կամ կվարտային հիմք և կառուցված է երբեմն բարձրացվող առաջին ու երրորդ աստիճաններով իոնական տրիխորդի և ալտերացվող առաջին աստիճանով էոլական (ալտերացիաների արդյունքում երբեմն փռյուգիական կամ լոկրիական երանգ ձեռք բերող) հեպտախորդի միակցություն: Ստորև ներկայացնում ենք ԱՁ «դարձվածքի»՝ մխիթարյան և էջմիածնական տարբերակները:

Հանգչող ձայնի գործառույթ կատարում են վերջավորող ձայնը, վերջինիս ներքևի ձգտող տոնը և վերևի չորրորդ աստիճանը: Եզակի դեպքում հանդես է գալիս նաև վերջին վերջավորող ձայնը՝ վերջավորողից սեկունդա ներքև: Այս ձայնեղանակի ձայնակարգի հստակ ձևակերպումը

[5] Շարական Հայաստանեայց Եկեղեցւոյ, հ. Գ, Վենետիկ, Ս. Ղազար, 1963, էջ 31, հ. Դ, Վենետիկ, Ս. Ղազար, 1954, էջ 25 և 369, հ. Ե, Վենետիկ, Ս. Ղազար, 1957, էջ 61 և 148:

[6] Նույն տեղում, հ. Բ, Վենետիկ, Ս. Ղազար, 1960, էջ 203 և 381, հ. Գ, էջ 54 և 64, հ. Զ, Վենետիկ, Ս. Ղազար, 1965, էջ 5 և 96:

[7] Նույն տեղում, հ. Բ, էջ 192, 194, 250, 252, 268, 380 և 389, հ. Գ, էջ 25, հ. Դ, էջ 402 և հ. Ե, էջ 163, 166, 174 և 182:

հանդիպել ենք նաև Քր. Կուշնարյանի հիմնարար աշխատության մեջ: Այնտեղ ձայնակարգը բնութագրվում է որպես «փոփոխված ներքևի ձգտող տոնով հիպոդորիական-էոլական»[8]:

Ձայնեղանակի ներքևի մեդիանտան հաճախ չի երևում: Սակայն այդ հազվադեպ դրսևորման ժամանակ այն կարող է ալտերացվել (ներկայանալ բնական տեսքով կամ՝ կես տոն վերև)[9]: Երկու դեպքում (Բուն Բարեկենդանի կարգի «Ողորմեա ինձ... Որ զառաջինն» Ողորմեա և «Փառք յարութեան... Որ տրտմական» Տէր յերկնից շարականներում) հանդիպում ենք շարականի ծավալման ընթացքում հիմնաձայնի՝ դեպի վեր ալտերացիայի[10]:

ԱՁ «դարձվածքը» սկսող մեղեդիական դարձվածքները հետևյալն են.

ԱՁ «դարձվածք», սկսող մեղեդիական դարձվածքներ.

Սկսող դարձվածքներում հանդիպում ենք վերընթաց կվարտային թռիչքների՝ վերջավորող ձայնից դեպի չորրորդ աստիճան (օրինակներ 1, 2, 8, 9, 13, 15), ինչպես նաև կվինտային թռիչքների՝ ներքևի ձգտող տոնից դեպի նույն վերևի չորրորդ աստիճանը (օրինակ 6): Թռիչքների այս երկու տեսակներն էլ այնուհետև վարընթաց լուծվում են դիմող ձայնի մեջ՝ արտահայտված վերևի մեդիանտայով:

ԱՁ «դարձվածք», հանգչող մեղեդիական դարձվածքներ

[8] **Кушнарев Х.** Вопросы истории и теории армянской монодической музыки, Л., 1958, с. 388.

[9] Շարական Հայաստանեայց Եկեղեցւոյ, հ. Ե, էջ 173:

[10] Նույն տեղում, հ. Գ, էջ 26 և 28:

Հանգչող մեղեդիական դարձվածքներում վերոնշյալ կվարտային թըռիչքը հաճախ հանդես է գալիս հակառակ ուղղությամբ՝ չորրորդ աստիճանից դեպի հանգչող ձայնը (օրինակներ 1, 7, 12, 14, 15): Երբեմն էլ հանգչող ձայնը շրջազարդվում է:

Վերջավորող մեղեդիական դարձվածքներն իրենց դրսևորումներով համեմատաբար ավելի կայուն են:

ԱՁ «դարձվածք», վերջավորող մեղեդիական դարձվածքներ

Դրանք հանդես են գալիս հիմնականում զարդոլորուն ոճով (օրինակներ 1, 4, 6): Մեղեդին վարընթաց քայլերով իջնում է դեպի ձայնեղանակի վերջավորող ձայնը: Որոշ դեպքերում՝ վերջավորող մեղեդիական դարձվածքը սկսվում և ավարտվում է վերջավորող ձայնով (օրինակներ 3, 6):

Ողջ Շարակնոցում կարելի է գտնել միայն մեկ օրինակ՝ բոլորովին այլ վերջավորող մեղեդիական դարձվածքով (Մարտիրոսաց հարցնակարգերի «Զինաւորն Քրիստոսի» Մանկունքում): Այստեղ տարբեր է նույնիսկ վերջավորող ձայնը: Այն գտնվում է մեր սահմանած ԱՁ «դարձվածքի» վերջավորող ձայնից սեկունդա ցած: Քանի որ այս մեղեդիական կառույցը շարականի վերջում է, և դրան չի հաջորդում «և այլն» նշումը, ապա այն

կարող ենք անվանել վերջին վերջավորող դարձվածք (օրինակ 4): Բացի այդ, այս վերջին վերջավորող մեղեդիական դարձվածքում արտացոլված է նաև քիչ առաջ ներկայացված, հազվադեպ հանդիպող գործածվող ձայներից մեկը՝ այստեղ արտահայտված վերջին վերջավորող հնչյունի ներքևի ձգտող տոնով:

Խոսելով եզակի դեպքերի մասին՝ նշենք նաև, որ տայյանական Շարակնոցի չորրորդ հատորում, Ավագ շաբաթ օրվա կարգից հետո, «Ճաշու Գովեա Յինանց» նշումով «Գովեա Երուսաղէմ» Մանկունքը գրանցված է «ԱՁ» ցուցիչով, սակայն այդ երգային միավորի հնչյունաշարը չի համընկնում ոչ բուն ԱՁ-ի, ոչ էլ ԱՁ «դարձվածքի» հնչյունաշարին, ոչ էլ ձայնակարգին:

ԱՁ եզակի տարբերակ (մխիթարյան)



Որոշակի ճշտումներ կատարելու նպատակով նշենք, որ Էջմիածնի թաշճյանական Շարակնոցում կարող ենք գտնել «ՃԱՇՈՒ ԳՈՎԵԱՅՔ ՅԻՆԱՆՑՆ» նշումով, թվով վեց «Գովեա Երուսաղէմ» շարական՝ բոլորն էլ «ԱՁ» ցուցչով[11]: Այնուամենայնիվ, այդ վեցից առաջինի ու երրորդի ձայնեղանակի հնչյունաշարն ու ձայնակարգը տարբերվում են ԱՁ-ի էջմիածնական սահմանված տարբերակից:

ԱՁ «Գովեա երուսաղէմ» (էջմիածնական)



Օրինակում ամբողջ նոտայով նշված է երկու շարականների տներն ավարտող հնչյունը, իսկ քառակուսի փակագծերի մեջ վերցված է շարականների վերջին վերջավորող հնչյունը:

Այս և նախորդող (եզակի հանդիպող վերջին վերջավորող հնչյունի) խնդիրները թողնում ենք մեր հետագա ուսումնասիրություններին: Հնարավոր է՝ դրանք կարելի կլինի հստակեցնել՝ խնդրո առարկա շարական-

[11] Ձայնագրեալ Շարական հոգեւոր երգոց, Ի Վաղարշապատ, Ի տպարանի Սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի, 1875, էջ 437-440:

ների բանավոր կատարումը կամ այլ գրանցված աղբյուրներ (եթե այդպիսիք ապագայում կգտնենք) ուսումնասիրելով:

ГЛАСЫ ТИПА *“ДАРЦВАЦК”* В МХИТАРИСТСКОЙ ПЕВЧЕСКОЙ ТРАДИЦИИ АРМЯНСКОЙ ДУХОВНОЙ МУЗЫКИ (НА ПРИМЕРЕ ПЕРВОГО ГЛАСА *“ДАРЦВАЦК”*)

АРУТЮНЯН Л.А.

Резюме

Одной из основных проблем армянской медиевистики является изучение системы *Утдзайн* (Осьмогласия) армянского духовного песнетворчества. Анализ одного из главных ответвлений системы *Утдзайн* – гласов типа *“дарцвацк”, “дарцвацка”* Первого Гласа позволяет определить характеристики его мхитаристского варианта. За основу исследования были взяты *Шаракноцы* (Гимнарии) Мхитаристской конгрегации в Венеции.

“DARTSVATSQ” MODUSES IN MEKHITARIST SINGING TRADITION OF ARMENIAN SACRED MUSIC (ON EXAMPLE OF THE FIRST “DARTSVATSQ” MODUS)

L. HARUTYUNYAN

Abstract

One of the main issue of Armenian medieval studies is the study of the *Utzayn* (Octoechos) system of the Armenian sacred music. The article presents one of the main branches of the *Utzayn* system - *"dartsvatsq"* moduses, using the example of *"dartsvatsq"* of the First Mode. For the first time an attempt is made to determine the characteristics of its Venetian variant. The study was conducted on the basis of *Sharaknots* (Hymnary) of the Mekhitarist Congregation in Venice.

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՋԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՊԱՂԱՂԲՅՈՒՐԻ ԺԱՅՌԱՊԱՏԿԵՐՆԵՐԻ ԽՈՒՄԲԸ

ՀԵՐԼԵՍ Մ.Վ. (ԳԴՀ, Մյունխեն), ԴԱՎԹՅԱՆ Ռ.Հ.

2016 թ. հուլիս-օգոստոս ամիսներին Լոռու մարզի Ստեփանավանի և Տաշիրի շրջաններում հայ-գերմանական հնագիտական միացյալ խմբի կողմից հետազոտվեցին Պաղաղբյուր գյուղի (նախկին անվանումը՝ Սովուկբուլախ) ժայռապատկերները: Պաղաղբյուրը գտնվում է Լոռու մարզի հյուսիսարևմտյան ծայրում՝ Մեծավան գյուղից 9,4 կմ հարավ-արևելք՝ անմիջապես հայ-վրացական սահմանին կից: Տեղանքը հայտնի է պալեոլիթյան գտածոների շնորհիվ: Գյուղի մերձակայքում գտնվում է բացօթյա բնակավայրը, որտեղից «քմլո» տիպի գործիքներ են հայտնաբերվել, ինչը թույլ է տալիս բնակավայրը թվագրել մեզոլիթով և նեոլիթի սկզբով[1]:

Խնդրո առարկա ժայռապատկերների խումբը Պաղաղբյուր գյուղից արևմուտք ընկած հատվածում է, Սառնաղբյուր գետակի հովտում, ծովի մակարդակից մոտ 1900 մ բարձրության վրա: Տարածքը ներկայումս օգտագործվում է որպես արոտավայր: Կիրճի արևելյան մասում գտնվող բնական ժայռախորշում, որը հիմքում եռանկյունաձև է (բարձր.՝ մոտ 1,20 մ), առկա են մի խումբ ժայռապատկերներ, որոնք մինչ այժմ գրեթե չեն ուսումնասիրվել (նկ. 1, 2)[2]:

---

[1] «Քմլո» խմբի գործիքները Հայաստանում հայտնի են մ.թ.ա. IX հազարամյակի առաջին կեսից և իրենց արտաքինով համեմատելի են Չայոնուից հայտնի գործիքների հետ, բայց տեխնիկական և ձևաբանական առումով տարբերվում են վերջիններից (տե՛ս **Petrosyan A., Arimura M., Gasparyan B., Nahapetyan S., Chataigner Ch.** Early Holocene Sites of the Republic of Armenia: Questions of Cultural Distribution and Chronology, In: Gasparyan B, Arimura M (ed.), Stone Age of Armenia, 2014, Kanazawa, p. 143), **Dolukhanov P., Aslanian S., Kolpakov Ev., Belyaeva E.** Prehistoric Sites in Northern Armenia (http://antiquityacuk/projgall/dolukhanov301/ 01.12.2017):

[2] Մինչ խմբի այցելությունը Պաղաղբյուրի ժայռապատկերները հայտնի էին, սակայն բավարար ուշադրության չէին արժանացել: Տե՛ս **Սիմոնյան Հ.,** Վտանգված ժառանգություն (Մշակույթ, 1989, N 1, էջ 21): Ժայռապատկերներն ընդգրկված են նաև Լոռու մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակում՝ 5.90.3 համարով (http://wwwarlisam/DocumentViewaspx?DocID=37965,_01.12 2017):

Նկար 1. Պաղաղբյուրի ժայռապատկերների քարափի ընդհանուր տեսքը (Մ. Հերլես)

Նկար 2. Պաղաղբյուրի ժայռապատկերների ժայռախորշը (Մ. Հերլես)

Ժայռը մասնակիորեն վնասված է, այնպես որ դրա նախկին չափսի մասին կարելի է միայն ենթադրել: Ժայռապատկերներն արված են 1,20x 0,7 մ մակերեսի վրա, կազմված են բազմաթիվ մանր ակոսներից, որոնք արված են, հավանաբար, քարե թակիչի զարկերով (նկ. 3):

Նկար 3. Պաղաղբյուրի ժայռապատկերները (Մ. Հերլես)

Փորագրության այս եղանակը փաստագրված է Հայաստանի բազմաթիվ այլ վայրերում. այդպես են արված, օրինակ, Գեղամա[3] և Սյունիքի[4]

[3] Տե՛ս **Մարտիրոսյան Հ.,** Գեղամա լեռների ժայռապատկերները, Ե., 1981, էջ 8:

[4] Տե՛ս **Կարախանյան Գ., Սաֆյան Պ.,** Սյունիքի ժայռապատկերները, Ե., 1970, էջ 10:

լեռների ժայռապատկերները: Հատկանշական է ժայռի երկաթ-մանգանային կեղևը, որն էլ դրանց համար «կտավի» դեր է խաղացել[5]:



Նկար 4. Պաղաղբյուրի ժայռապատկերների գծանկարը (Մ. Լերխլ): 1, 2, 11-ոչ դիագնոստիկ չորքոտանիներ, 3-շուն, 4-8, 12, 13 այծ, 9-կատվազգի, 10-ցուլ

Պաղաղբյուրի ժայռապատկերները իրենց դասավորվածությամբ կարելի է պայմանականորեն բաժանել երկու խմբի: Դրանք իրարից բաժանվում են կեղևի քայքայումից առաջացած բնական խորշով: Անկանոն տեղադրությամբ պատկերախմբի մեջ կան ընդամենը 13 առանձին միավորներ. երևում են յոթ այծերի, մեկ շան, մեկ կատվազգիի, մեկ ցլի և երեք ոչ դիագնոստիկ չորքոտանիների պատկերներ (նկ. 4): Հատկանշական է, որ այս խումբը բազմաշերտ է, որն էլ դժվարացնում է պատկերված կենդանիների վերջնական նույնականացումը: Դրան նպաստում է պատկերների բնական վնասվածությունը:

Նույն քարափի արևմտյան մասում առկա են հիմնականում սպիտակ ներկով արված՝ նորագույն շրջանի ռուսագիր տառեր և տեղացի հովիվների անուններ: Այդ նորագույն գրաֆիտիներից մեկը չավարտված այծի պատկեր է՝ առանց փառի (պատինայի) և արված է քերման եղանակով,

[5] Տե՛ս **Krüger B., Borg G.** Des Künstlers Leinwand. Charakterisierung von Eisen-Mangan-Krusten der Felsbilder aus dem Hochland von Syunik, Südost-Armenien, In: Meller H., Avetisyan P. (Hrsg.), Archäologie in Armenien II, Halle (Saale), 2013, 235-243:

որն ակներևաբար տարբերվում է կետ-հարվածային եղանակից (նկ. 5): Ժայռապատկերների կրկնօրինակումը նորագույն շրջանում տարածված երևույթ է: Դրանք կարելի է տեսնել Հայաստանի այլ հնավայրերում ևս (նկ. 6):

Նկար 5. Պաղաղբյուր. ժայռապատկերների կրկնօրինակում նորագույն շրջանում (Մ. Հերլես)

Նկար 6. Երկու հին (1-ին և 2-րդ) և մեկ նոր (3-րդ)՝ այծի ժայռապատկերների օրինակներ Սեպասարից (Սյունիք) (Ֆ. Քնոլլ)

Քարափի հյուսիսային մասում՝ գետակի հակառակ ուղղությամբ հանդիպում են նաև բազալտ քարերից կազմված ուղղանկյուն հատակագծով կառույցների մնացորդներ (նկ. 7), ինչպես նաև քարերի շրջանաձև շարվածքներ (նկ. 8): Վերջիններս, հավանաբար, դամբարանների կրոմլեխներ են: Վերգետնյա խեցեղենի բացակայությունը դժվարացնում է այս շարվածքների թեկուզ և մոտավոր թվագրության հարցը: Մեր կարծիքով, սակայն, ինչպես Հայաստանի ժայառապատկերային մյուս լանդշաֆտներում, այս լեռնային շրջաններում ևս առկա շարվածքները կապվում են հիմնականում անասնապահական տնտեսաձևի հետ և կարող էին ունենալ փարախի գործառույթ:

Հայաստանից և շրջակա տարածքներից հայտնի ժայռապատկերների մեծ մասը այծերի կամ կենդանական աշխարհի այլ ներկայացուցիչների պատկերներ են, որոնք առնչվում են որսի և անասնապահության հետ[6]: Շարժուն անասնապահության համատեքստում հետաքրքրական է ժայռապատկերների խորշը: Պատկերների՝ համեմատաբար խիտ ու բազմաշերտ բնույթը և դեպի գետակը խորշի ուղղվածությունը խոսում

[6] Տե՛ս **Knoll F. և ուրիշ.,** Die Felsbilder im Hochland von Syunik, In: Meller H., Avetisyan P. (Hrsg.), S. 214-217:

են այստեղ մարդկային համեմատաբար երկարատև ներկայության մասին: Այսպես՝ ժայռախորշը, որտեղից հնարավոր էր հետևել հոտի տեղաշարժին, հավանաբար, օգտագործվել է եղանակային աննպաստ պայմաններից պատսպարվելու համար: Ըստ երևույթին, նախնադարյան այս հովիվներն են եղել Պաղաղբյուրի ժայռապատկերների հեղինակները:

Պաղաղբյուրի ժայռախորշին զուգահեռ հիմնականում կենդանակերպ պատկերներ են հայտնաբերվել նաև Գեղամավան-1 քարանձավում և Կաքավաձոր ժայռածածկում[7], որոնք նույնպես գետերի մոտ են գտնվում:

Լոռու մարզում հայտնի են նաև Ախթալայի մերձակա Նեղուց գյուղի ժայռապատկերները[8]: Այստեղ հայտնի են ժայռապատկերների առանձին, ինչպես նաև խմբային պատկերներ (հիմնականում եղջերավոր կենդանիներ. այս դեպքում նշված եղջերավորները շրջապատված են օձերի պատկերներով):

Չնայած ժայռապատկերների թվագրության հարցը դեռ ուսումնասիրության սկզբնական փուլում է, սակայն, կարելի է նշել, որ Պաղաղբյուրի օրինակները իրենց՝ դարերի ընթացքում գոյացած աննշան փառով և տիպաբանությամբ կրկնում են Հայաստանից և հարակից տարածքներից հայտնի մյուս ժայռապատկերները: Սա թույլ է տալիս խոսել վերջիններիս նախապատմական բնույթի մասին: Պաղաղբյուրի ժայռապատկերներին կից գտնվող կառույցների և դամբարանների պեղումները կարող են նպաստել դրանց թվագրության խնդրի լուծմանը:

Նկար 7. Պաղաղբյուր. ուղղանկյունաձև շարվածք ժայռապատկերներից հյուսիս ընկած տարածքում (Մ. Հերլես)

Նկար 8. Պաղաղբյուր. դամբարանի կրոմլեխ ժայռապատկերներից հյուսիս ընկած տարածքում

[7] Տե՛ս **Khechoyan A., Gasparyan B.** Rock-Paintings in the Republic of Armenia, In: Gasparyan B., Arimura M. (ed.), նշվ. աշխ., էջ 316-318, 319-320:

[8] Տե՛ս **Ավետյան Վ.,** Նորահայտ ժայռապատկերներ Նեղուց գյուղի տարածքում (ՀՀ ԳԱԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 2006, N 2, էջ 249-255):

ГРУППА НАСКАЛЬНЫХ ИЗОБРАЖЕНИЙ ПАГАГБЮРА

ГЕРЛЕС М.В. (ФРГ, Мюнхен), ДАВТЯН Р.А.

Резюме

Пещера с рассматриваемыми петроглифами находится к западу от деревни Пагагбюр (Марз Лори, РА), на северном берегу речки Сарнагбюр. Скала покрыта слоем из железа и марганца, на котором сохранились изображения. Петроглифы сделаны из многочисленных вдавленных точек. На петроглифах имеются изображения семи коз, одной собаки, одного представителя семейства кошачьих, одного быка и трех неидентифицируемых четвероногих. Среди этих доисторических петроглифов есть также граффити современных пастухов. Один из граффити являет собой скобленное изображение козы, имитирующее петроглиф.

THE GROUP OF PETROGLYPHS OF PAGHAGHBYUR

M. HERLES (FRG, Munich), R. DAVTYAN

Abstract

The rock shelter where the petroglyphs under consideration were found lies to the west from the village Paghaghbyur (Lori Region, RA), in the northern side of the tiny river Sarnaghbyur. The iron-manganese crust of the rock, on which the images were realized, can be observed. Those images consist of numerous picked holes. Out of 13 units of petroglyphs, depictions of seven goats, as well as of a dog, a felid, a bull and three non-diagnostic quadrupedal animals could be distinguished. Close to prehistoric petroglyphs there are also other modern graffiti, among which is an image of a scratched goat, which is very likely an imitation of the rock art.

ԱՐՏԱՇԵՍ Ա ԱՐՔԱՅԻ ԱՐՏԱՄԱՏ ՔԱՂԱՔԸ՝ ԸՍՏ ԹՈՎՄԱ ԱՐԾՐՈՒՆՈՒ «ԱՐԾՐՈՒՆՅԱՑ ՏԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ»

ՄԱՐԳԱՐՅԱՆ Հ.Զ.

Հայոց արքա Արտաշես Ա-ի (Ք.ա. 189-160 թթ.), որպես ժամանակի քաղաքական և ռազմական խոշորագույն գործիչներից մեկի[1] մասին եղած տեղեկությունները բավականին նշանակալից են: Նրա մասին բազմաթիվ հիշատակություններ են թողել անտիկ հեղինակներ Ստրաբոնը, Պլուտարքոսը, Պոլիբիոսը, Դիոդորոս Սիցիլացին, Ապպիանոսը, Պորփյուրը և Հիերոնիմոսը: Հատուկ հետաքրքրություն է ներկայացնում Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ առկա Արտաշես թագավորի պատմությունը: Աղբյուրների այս շարքում ուրույն տեղ է զբաղեցնում X դ. հեղինակ Թովմա Արծրունու «Արծրունյաց տան պատմություն» աշխատությունը, որի «Արտաշեսի թագավորելը Հայաստանում» գլուխն ամբողջությամբ նվիրված է հայոց արքայի՝ Վանա լճի ափին իրագործած բարենորոգումներին: Այդ գլխում տեղ են գտել նոր Արտամատ արքայական քաղաքի հիմնադրման և կառուցման մասին պատմական բազմաթիվ տվյալներ և փաստեր: Դրանց քննությունը թույլ է տալիս լրացուցիչ լույս սփռել հելլենիստական Հայաստանի պատմության ու մշակույթի բազում խնդիրների վրա:

Արտաշեսի և նրա հիմնած քաղաքի մասին Թովմա Արծրունու պատմությունը տարբեր գրավոր աղբյուրներից, բանավոր զրույցներից վերցված բազմազան տվյալների մի բարդ հյուսվածք է: Բացառված չէ, որ շատ գրավոր տվյալներ պատմիչը լրացրել է սեփական դիտարկումներով, քանի որ X դարում Վանա լճի ափին դեռևս պահպանվել էին բազմաթիվ հնագույն հուշարձանների ավերակներ. «...շուրջ զբերդանման ապարանօքն՝ պարսպէ զբլուրն շուրջանակի յապառաժուտ տաշելոց քարանց, քա-

[1] **Саркисян Г.Х.** Тигранакерт. Из истории древнеармянских городских общин, М., 1960, с. 32, **Polyb.** XXV, 2.

ղաք ամենալից զհովիտն ամրացուցանելով: Իսկ ի վերայ բղխեալ աղբիւրն, դարձեալ պարսպէ զքարաբլուրն ի պահպանութիւն ջրոյն ամրագունիք շինուածքովք և շէն մարմարգարիտ զքարաբլուրն յօրինէ պարսպաւոր անկասկածելիս անմատչելի ձեռաց պատերազմողաց, հեշտալիր առ զգուշութիւնն յօրինեալ՝ ի խորագոյնս ծովուն զպարիսպ յօրինեալ կազմէ: Գտանէ և ի վերագոյն լերինն անդր ի հարաւոյ կողմանէն աղբիւր սակաւաբուղխ, որոյ ջրմուղ կազմեալ ածեալ հասուցանէ ի մեջ հովտին: Իսկ ըստ բաւականութեան աչաց տեսութեանց դաշտավայրին ի մուտս կոյս, և առ եզերբ ծովուն պարսպաւորս յօրինէ զգոգն՝ լնուլ այգեստան տնկախիտ պատրաստութեամբ ականախիտ վայելչութեամբ: Իսկ ի մէջ երեքարմատեան գոգաձև հովտին փոքու, որ երից բլրոցն խոնարհի՝ շինէ աշտարակ բարձրաբերձ փորուածոյ միջոցաւ, և ի վերայ նորա կանգնէ զԱստղկեան պատկերն, և ի մօտ նորա զտուն գանձու պաշտպանութեան կռոցն. կարգէ և յօրինէ ի նմա փողոցս վաճառոց ամենալիցս և բավականս:

Եւ իբրև կատարեաց զյօրինուած շինութեան քաղաքին և անմատչելի անկասկածելի զամրոցն պատրաստեաց՝ կոչեաց զանուն ամրոցին *Զարդ,* այսինքն պայծառութիւն ի վերայ պայծառայարդար շինուածոյն: Եւ ածեալ զտիկինն Սաթինիկ զբօսնուլ յաշնանային յեղանակս յամարաստուն գեղեցկաշէն յապարանս զարդարեալ բերդին: Իսկ զանուն քաղաքին կոչեցին Արտամատ, որ թարգմանեալ ստուգաբանի Արտաշէսի ձեռակերտ, կամ թէ՝ Արտաշէսի եկք, զի ըստ Պարսիկ ձայնի Մատ՝ Եկք թարգմանի…»[2]: Թովմա Արծրունու նկարագրած Արտամատը մեր առջև ներկայանում է որպես տիպիկ հելլենիստական արքայական քաղաք՝ կենտրոնական իշխանության հենարան և Արտաշեսի լայն բարեփոխումների մի մաս:

Հելլենիստական Հայաստանի քաղաքաշինության հիմնական գծերն ու առանձնահատկությունները: Ուրարտական պետության անկումից հետո, Ք.ա. VI-IV դդ. Աքեմենյանների տիրապետության օրոք, ուրարտական քաղաքներից և բնակավայրերից շատերը կորցրեցին իրենց նշանակությունը և ամայացան: Շարունակում էին գործել միայն մի քանի, դեռևս ուրարտական շրջանում հիմնված խոշոր վարչակրոնական կենտ-

[2] **Թովմայի վարդապետի Արծրունւոյ** Պատմութիւն տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1917, էջ 97-98:

րոններ, ինչպիսիք էին Արմավիրը, Էրեբունին և Տուշպա-Վանը[3]: Հայաստանի հելլենիստական քաղաքների գերակշռող մասը, բազմաթիվ առաջավորասիական քաղաքների նման, հիմնվում և զարգանում էր ավելի վաղ՝ գլխավորապես ուրարտական ժամանակաշրջանի մեծ ու փոքր քաղաքների, ամրոցների և բնակավայրերի տեղում:

Քաղաքաշինության նոր վերելք է սկսվում Ք.ա. III-II դդ.՝ Երվանդունիների արքայատոհմի կառավարման ժամանակ: Հին վարչական կենտրոնների հետ միասին ստեղծվում է նոր քաղաքների ցանց՝ Երվանդաշատը, Երվանդակերտը, Երվանդավանը, Բագավանը: Ծոփք-Կոմմագենեի հայկական թագավորության տարածքում Եփրատ գետի երկայնքով ծաղկում են մի շարք մեծ և փոքր քաղաքներ՝ Արշամաշատը, Սամոսատը, Արկաթիոկերտը[4]: Նախկին ուրարտական քաղաքների պես, որոնք կրում էին արքայական անուններ (Մենուախինիլի, Արգիշտիխինիլի, Ռուսախինիլի), նոր քաղաքներից շատերը նույնպես ստանում էին հիմնադիր արքայի անունը: Նոր քաղաքների շինարարության մեջ, հելլենիստական քաղաքաշինական և ճարտարապետական սկզբունքների հետ մեկտեղ լավագույնս օգտագործվում էին հին, մասնավորապես, ուրարտական ավանդույթները: Տեղական, հին արևելյան և արդեն ձևավորված հելլենիստական ավանդույթների փոխազդեցությունն ու միահյուսումը Հայաստանի նոր քաղաքային կենտրոններին հաղորդում էր յուրահատուկ, անկրկնելի կոլորիտ և կերպարանք: Ցավոք, հայկական հելլենիստական քաղաքների մեծ մասը հնագիտորեն դեռ ուսումնասիրված չէ: Այդ բացը վերջին տասնամյակներին լրացվում է երկու խոշոր մայրաքաղաքների՝ Արմավիրի և Արտաշատի պեղումներից ձեռք բերված նյութերով: Անտիկ դարաշրջանում ուրարտական կառույցների օգտագործման և վերակառուցման շերտագրական պատկերը բավականին լավ ամրագրված է հին Հայաստանի առաջին մայրաքաղաք Արմավիրում՝ նախկին ուրարտական Արգիշտիխի-

[3] **Тирацян Г.А.** К вопросу о городах Армении доэллинистического времени (VI-IV вв. до н.э.) (Древний Восток, Е., 1973, с. 95-96).

[4] **Манандян Я.А.** О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен (V в. до н.э.-XV в. н.э.), Е., 1954, с. 30, **Еремян С.Т.** Развитие городов и городской жизни в древней Армении, М., 1953, с. 3, **Саркисян Г.Х.**, նշվ. աշխ., էջ 11:

նիլիում[5]: Հետաքրքիր տվյալներ են ստացվել Արտաշատի միջնաբերդի պեղումներից ուրարտական կառույցների օգտագործման մասին մ.թ.ա. II-I դդ. կառուցապատման մեջ[6]: Դրանցից պարզ է դառնում, որ մինչև Արտաշատի հիմնումը, նրա միջնաբերդի, հավանաբար, նաև քաղաքային թաղամասերի տարածքում, եղել է ավելի վաղ շրջանի քաղաքային բնակավայր:

Ծոփքի մայրաքաղաք Արշամաշատի (Ք.ա. III դ.) պեղումները Արածանի գետի ափին, բացահայտեցին հնագույն՝ խեթական և ուրարտական դարաշրջանների հնագիտական նյութ[7]:

Ուրարտական և հետագա փուլերի քաղաքաշինության միջև գոյություն ունեցող ժառանգական կապի վերաբերյալ հետաքրքիր տվյալներ են ընձեռում նաև տեղանունները: Միջնադարյան աղբյուրների Վանա լճի հյուսիսային ափին գտնվող Աղիովիտի Զարիշատ քաղաքը համապատասխանում է ուրարտական արձանագրությունների Ալի տաճարական տարածքին, որը տեղայնացվում է ներկայիս Երիշատ գյուղի տարածքում[8]:

Հայտնի է, որ Արտաշես Ա-ն հիմնել է ինը նոր քաղաքներ և համաձայն հելլենիստական ավանդույթի, տվել նրանց դինաստիական արքաների անուններ: Դրանցից հինգը կրում էին Արտաշեսի հոր՝ Զարեհի անունը: Երկու Զարիշատը հիմնվել էին Աղիովիտ և Վանանդ գավառներում, երեք Զարեհավանը՝ Վասպուրական նահանգում, Բագրևանդ և Արշարունիք գավառներում: Այս հինգ քաղաքները շղթայաբար ձգվում էին Ուրմիո լճից մինչև Վանանդ՝ Մեծ Հայքի հարավային սահմանները կապե-

---

[5] **Аракелян Б.Н.** О некоторых результатах археологического изучения древнего Армавира [Պատմա-բանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ), 1969, N 4, էջ 157-174], **Тирацян Г.А.** Культура древней Армении (VI в. до н.э.- III в. н.э.), Е., 1988, с. 77-78:

[6] **Խաչատրյան Ժ.,** Հայաստանի անտիկ շրջանի պաշտպանական կառույցները (ՊԲՀ, 1987, N 4, էջ 162-163), **Khachatrian Z.D.** Artaxata. Capitale dell'Armenia antica (II sec. A.C.- IVD.C.). "Al piedi dell'Ararat. Artaxata e l'Armenia ellenistico-romana", Torino, 1998, pp. 103-104, figs. 3, 4, 11:

[7] **Тирацян Г.А.** Новые археологические материалы послеурартского времени на территории Западной Армении (Турция) и их место в истории дрвнеармянской культуры, Древний Восток, Е., 1976, **Манандян Я.А.,** նշվ. աշխ., էջ 30, **Keban Project 1969** Activities, Ankara, 1971, **Keban Project 1970** Activities, Ankara, 1972 (Middle East Technical University Keban Project Publications) (Series 1, N 2, 3, pp. 43-46, 77-78), **Cohen G.M.** The Hellenistic Settlements in the East from Armenia and Mesopotamia to Bactria and India, Berkley and Los Angeles, 2013, p. 45.

[8] **Երեմյան U.S.,** Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Ե., 1963, էջ 52:

լով հյուսիսայինի հետ[9]: Մնացած չորս քաղաքները կրում էին Արտաշեսի անունը: Դրանցից ամենանշանավորը՝ Հայաստանի նոր մայրաքաղաք Արտաշատը գտնվում էր թագավորական տիրույթում՝ Արարատյան դաշտավայրի սրտում: Ստրաբոնի հիշատակած երկու ավելի փոքր քաղաքներ Արքսատան և Ազարան կառուցվել էին Ատրպատականի սահմանին մոտ վայրում[10]: Չորրորդ՝ Արտաշեսի անունը կրող Արտամատ քաղաքը տեղակայված էր Վանա լճի հարավային ափին, ներկայիս Արտամետ գյուղի տարածքում: Այստեղ եռանկյունաձև ժայռոտ բլրակի վրա երևում են միջնաբերդի ավերակներ, տարբեր հին կառույցներ և պարիսպների մնացորդներ, գտնվել են նաև ուրարտական սեպագիր արձանագրություններ[11]:

Քաղաքի տեղավայրի ընտրությունը և անվանակոչությունը: Արտաշեսի՝ Վասպուրական վերադառնալու մասին Թովմա Արծրունին հաղորդում է հետևյալը. «Եւ զհետ մտեալ Երուանդայ խոյզ և խնդիր լինել Արտաշէսի. Իսկ Սմբատ առեալ զԱրտաշէս գայ բնակէ ի բարձրավանդակ լերինն Վարագ: Իսկ Երուանդայ հետազօտեալ գայ բնակի առ ստորոտով լերինն ի գլուխս Տոսպ գաւառի, և կոչէ զտեղին Երուանդականս… Նոյն ժամայն առեալ Սմբատայ զԱրտաշէս գայ անցանէ ի լեռնէն. և թափառական զվէմս ապաստան արարեալ յանկարծագոյն տեղիս դարանի ի փոքր վիմամէջս ի կարկառս հովտաձևս հանդէպ հարաւոյ քաղաքաբերդին Վանի, մօտ յայն տեղի, յորում բղխէ աղբիւրաբար առ ստորոտով բլրակի միոյ, մօտ յեզր ծովուն, յորմէ շնչէ օդք բարեխառն, զովացուցանէ զտապ խորշակի ամարայնոյ՝ յարեգակնակէզն լինելոյ…»[12]:

Թովմայի տվյալ վկայությունը հայոց պատմագրության մեջ միակն է Երվանդական բնակավայրի մասին: Երվանդականը՝ Երվանդունի արքայական տոհմի բնօրրանը և նստավայրը, համընկնում էր Վան քաղաքի և

---

[9] **Саркисян Г.Х.,** նշվ. աշխ., էջ 43:

[10] **Strabo,** XIV, 14, 3, 6, **Մանանդյան Հ.,** Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Ա, Ե., 1977, էջ 124:

[11] **Էփրիկեան Ս.,** Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. 1, Վենետիկ, 1903, էջ 326, **Տեր-Ավետիսյան Ս.,** Ուրարտական թագավոր Մենուաս Առաջինի կառուցած Շամիրամի ջրանցքը (Տեղեկագիր ՍՍՌՄ գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալի, 1941, N 3-4, էջ 39), **Հակոբյան Թ.Խ.**, **Մելիք-Բախշյան Ստ. Տ., Բարսեղյան Հ.Խ.**, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան (այսուհետև՝ Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան), հ. Ա, Ե., 1986, էջ 490-491:

[12] **Թովմա վարդապետ Արծրունի,** էջ 93-95:

նրա շրջակա Տոսպ (ուր. Տուշպա) գավառի ու նրան հարող Հայոց ձորին և առնչվում է այդ հարստության ամենասկզբնական փուլի հետ[13]: Երվանդունիների հայրենական կալվածքի սրտում Արտաշեսը կառուցում է մի քաղաք, որին տալիս է խորհրդանշական մի անուն՝ «Արտաշեսը եկավ»: Այս միջոցառումով նոր Արտաշեսյան արքայատոհմի հիմնադիրը ազդարարում և հիմնավորում է իր կապը Երվանդյանների հետ և հաստատում իր իշխանության օրինականությունը, քանի որ, ինչպես հայտնի է, Արտաշեսը արյունակցական կապ չուներ իր նախորդի՝ Երվանդի հետ[14]: Երվանդին սպանելուց հետո էլ Արտաշեսը նրան արժանացնում է պատիվների և կառուցում մահարձան[15]: Այս քայլով նա ևս մեկ անգամ ազդարարում իր կապը նախորդ դինաստիայի հետ[16]:

Արտաշեսի կառուցած Արտամատ քաղաքը տեղադրված էր ժամանակակից Արտամետ գյուղի և նրա շրջակա տարածքում, որը բոլոր ժամանակներում հայտնի էր իր խաղողի և մրգատու այգիներով: Այս տարածքները ոռոգվում էին Մենուա թագավորի կառուցած ջրանցքով[17]: Պատահական չէ, որ իր ամառանոց-նստավայրի համար Արտաշեսն ընտրում այս վայրը, որն իր գալստյան ժամանակ արդեն ծածկված էր ծաղկուն դաստակերտներով. «…առաջի տեսնելով զկապուտակ ծիրանափայլ դաշ-

[13] **Երեմյան Ս.,** Երվանդունիների հայկական պետությունը (Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, Ե., 1971, էջ 437-438):

[14] **Strabo,** XI, 14, 15: Այժմ հայագիտության մեջ ամրապնդված է այն կարծիքը, որ Արտաշեսը մայրական գծով սերում էր Երվանդունիներից (տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, էջ 521):

[15] **Մովսիսի Խորենացւոյ** Պատմութիւն Հայոց, բնագիրը և ներածութիւնը՝ Մ. Աբեղեանի և Ն. Յարությունեանի, Տփղիս, 1913, II, ԽԶ:

[16] **Margaryan H.** The Titles of King Artashes I according to the Aramaic Inscriptions on Boundary stones (Aramazd. Armenian Journal of Near Eastern Studies, v. I, N 1-2, 2017, pp. 221-237).

[17] Արտամետի և նրա շրջակայքի ուրարտական կառույցների վերաբերյալ ավելի մանրամասն տե՛ս **Բադալյան Մ.,** Մենուա և Թարիրիա-Արտաշես և Սաթենիկ. Որոշ դիտարկումներ Թովմա Արծրունու հիշատակած Աստղիկ աստվածուհու աշտարակի վերաբերյալ: «Կղզյակ որ մեզ ետուր արև…» (Մխիթարյանների միաբանության հիմնադրման 300-ամյակին նվիրված հոբելյանական գիտաժողովի նյութեր, Ե., 2017, էջ 88-112): Արտամետի և նրա շրջակայքի տարածքում ուրարտական կառույցների առատությունը, ինչպես նաև որոշ այլ տվյալներ թույլ են տալիս հեղինակին եզրակացնելու, որ Թովմա Արծրունու հիշատակած Արտաշես արքայի իրականացրած շինարարական աշխատանքները ուրարտական Մենուա թագավորի գործունեության արձագանքն են՝ ներառված Արտաշեսի կերպարի մեջ:

տաձև ծովն. դաստակերտս մեծամեծս շուրջ զեզերբն անտառախիտ ծառովք և գինեբեր որթովք և զանազան պտղովք»:

Ըստ Ս. Երեմյանի, Վանի թագավորության ժամանակաշրջանում այս տարածքը համընկնում էր Taririahinili վայրին[18], իսկ Արտաշեսյանների օրոք՝ Աշխարհացույցի «Արտաշիսյան որ է Արտաւանեան գավառ»-ին, Վասպուրական նահանգի 27-րդ գավառին՝ 150 կմ^2 տարածքով: Ս. Երեմյանի կարծիքով, ներկայիս *Արտամետ* տեղանվան հիմքում ընկած է *Արտեմիս* (հայկ. Անահիտ) անունը: Նա կապ է տեսնում հելլենիստական քաղաքի այս անվան և կանացի աստվածության պաշտամունքի կենտրոն Թարիրիահինիլի տաճարական երկրի միջև[19]: *Արտամետ* տեղանվան՝ Ս. Երեմյանի մեկնաբանությունը, հավանաբար, հիմնված է Հ. Լինչի, Հ.Ղ. Ինճիճյանի և նրանց հետևող Հ. Հյուբշմանի ստուգաբանության վրա, որոնք այն բխեցնում են *Արտիմեդ, Արտամիտ* ձևերից[20]: Սակայն ժամանակակից *Արտամետ* տեղանունը լիովին համահունչ է պարսկերեն *Արտամատին*: Բացի այդ, «Աշխարհացույցում» հիշատակված *Արտաշիսյան ավանը* պահլավերեն *Արտ-ա-մատի* հայերեն տարբերակն է: Ըստ Դ. Մըք-Քենզիի, *amat* մասնիկը ծագում է միջին պարսկերեն *amadan*՝ *գալ* բառից[21]: Համեմատության համար կարելի է մեջ բերել Խորենացու վկայած *Մարմետ* անունը, որը ստացավ Երվանդակերտը քաղաքը Արտաշեսի հրամանով՝ Երվանդ արքայի անունը վերացնելու նպատակով: Այս անունը Խորենացին ստուգաբանում է «*Մար ամատ - մարը եկավ*»[22]:

Քաղաքի կառուցվածքն ու գլխավոր շինությունները: Ա. Արքայական պալատ: Արտաշեսը ժայռի վրա կառուցում է արքայական նստավայր.» զքարաբլուրն ապարանս արքայանիստ աշնանայինս, պայծառայարդարս, գեղեցկայարմար պարսպաւորս»[23], պալատական մի համալիր, որը բաղկացած էր մի քանի դղյակ-ապարանքներից (*զբերդանման ապարանօք)* և շրջապատված էր բազալտաշար պարսպով (*յապառաժուտ տա-*

[18] Այստեղ, Կատեպանց գյուղի տարածքում գտնվել է Մենուայի արձանագրությունը իր դստերը կամ կնոջը նվիրված խաղողուտի հիմնադրման մասին (տե՛ս **Пиотровский Б.Б.** Ванское царство, М., 1959, с.143-144):

[19] **Երեմյան Ս.Տ.**, նշվ. աշխ., էջ 41:

[20] **Հիւբշման Հ.,** Հին հայոց տեղւոյ անունները, Վիեննա, 1907, էջ 212-213:

[21] **MacKenzi D.N.** A Concise Pahlavi Dictionary, London, 1971, p. 7.

[22] **Մովսէս Խորենացի,** II, ԽԶ:

[23] **Թովմա վարդապետ Արծրունի,** էջ 93:

շելոց քարանց): Ժայռի ստորոտում տարածվող հովտում արքան կառուցում է բուն քաղաքը՝ կանոնավոր ուղիղ փողոցներով, որոնց երկայնքով տեղակայված էին առևտրական շարքերը (*յորինէ ի նմա փողոցս ամենալիցս և բավականս)*: Քաղաքային թաղամասերը Արտաշեսը սահմանագծում է Վանա լճի ափամերձ գոտու երկայնքով ձգվող գյուղատնտեսական, այգեգործական տարածքով, որն իր հերթին անջատված էր պարսպով: Այս դաստակերտներից ստացվող եկամուտը պատկանում էր թագավորին և նրա մերձավորներին[24]: Այս վայրը, շնորհիվ իր բարեխառն կլիմայի, ընտրվել էր որպես հարմար վայր նոր ամառանոց-նստավայր կառուցելու համար՝ նախատեսված թագավորական ընտանիքի և Սաթենիկ թագուհու համար: Թովմա Արծրունու նկարագրությունն իր բովանդակությամբ և ոճով հիշեցնում է՝ Տրդատ Ա թագավորի՝ իր քույր Խոսրովիդուխտի համար Գառնու ամրոցում ամառանոց-նստավայր կառուցելու մասին Խորենացու «Պատմության» դրվագը[25]:

Բ. Ջրամատակարարում: Ըստ Թովմա Արծրունու, Արտաշես արքան, մանկության և պատանեկության տարիներին, ստիպված լինելով փախչել իր հակառակորդ Երվանդի հետապնդումներից, իր դայակ Սմբատի հետ ապրում էր Վանա բերդի մերձակայքում, որի ստորոտում կար աղբյուր. «…հանդեպ հարաւոյ քաղաքաբերդին Վանի, մօտ յայն տեղի, յորում բղխէ աղբիւրաբար առ ստորոտով բլրակի միոյ, մօտ եզրն ծովուն»: Կարելի է ենթադրել, որ ջրի այդ առատ հոսքը ապահովում էր Մենուայի ջրանցքը, որը ոռոգման և խմելու ջուր էր մատակարարում Վան քաղաքին և նրա շրջակայքին, այդ թվում նաև Արտամետի ու նրա այգիներին[26]: Ուստի պատահական չէ, որ Արտաշեսը ընտրում է այս վայրը՝ քաղաքը ջրով սնելու

---

[24] **Սարգսյան Գ.,** Քաղաքը հելլենիստական դարաշրջանի Հայաստանում (Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, էջ 655-663), **Саркисян Г.Х.** О двух значениях термина “дастакерт” в ранних армянских источниках (Эллинистический Ближний Восток, Византия и Иран, М., 1967): Հետաքրքրական է, որ Արտամատի կառուցվածքը շատ է հիշեցնում Մովսես Խորենացու՝ Երվանդ Վերջինի կողմից Երվանդաշատ մայրաքաղաքից ոչ հեռու հիմնած Երվանդակերտ նոր դաստակերտի նկարագրությունը [տե՛ս **Մովսէս Խորենացի,** II, ՀԹ, **Առաքելյան Բ.Ն.,** Որտեղ են գտնվել Երվանդաշատ և Երվանդակերտ քաղաքները (ՊԲՀ, 1965, N 3, էջ 83-93), **Тер-Мартиросов Ф.** Ервандашат (Անտառ Ծննդոց), Ե., 2015, էջ 33-55]:

[25] **Մովսէս Խորենացի,** II, ԽԲ:

[26] Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, էջ 360; Մենուայի ջրանցքը այժմ էլ անցնում է Արտամետի կենտրոնական մասով և ոռոգում նրա այգիները (տե՛ս Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. Ա, էջ 490-491):

համար: Նա բարեկարգում է Արտամատի մոտով անցնող հին ջրանցքի հատվածը, որից դուրս է բերում ևս մեկ ճյուղ: Այս կարևոր ռազմավարական օբյեկտի պաշտպանության նպատակով նա ջրանցքը ամրացնում է մարմարյա (*մարմարգարիտ)* աշտարակներով՝ հելլենիստական ճարտարապետության ոճով: Ջրանցքի պաշտպանության համար դրա պաշտպանական համակարգի գիծը հասցնում է մինչև լճի առափնյա մաս և հատակը: Նման խոշոր ջրամատակարար համալիր էին կազմում Արտաշեսի նախորդի՝ Երվանդ արքայի կառուցած ժայռափոր ջրամբարները՝ Երվանդաշատի պարիսպների մոտ[27]:

Արտաշեսը կառուցում է նաև մեկ այլ ջրագիծ (*ջրմուղ կազմեալ*)՝ քաղաքային թաղամասերի և շրջակա այգեգործական գոտին ջրով ապահովելու համար, որի սնող ակունքն էր բլրի հարավային կողմով հոսող *«աղբիւր սակաւաբուղխ»-ը*[28]:

Արտամատ արքունի քաղաքի միջնաբերդը՝ իր պալատական համալիրով և մարմարապատ աղբյուրով՝ շրջապատված էր մրգատու այգիներով, ծաղկանոց-բուրաստաններով: Այն կարելի է բնորոշել որպես դեռևս աքեմենյան դարաշրջանից հայտնի արքայական պարադիս՝ ամառային նստավայր[29]: Այդպիսի մի արքայական պարադիս էր Երվանդաշատ մայրաքաղաքից հյուսիս գտնվող պարիսպներով ամրացված «Ծննդոց» անտառը, որը տնկել էր Երվանդ Վերջինը[30]: Նման կառուցվածք ուներ, հավանաբար, Տիգրանակերտի պարիսպներից դուրս գտնվող Տիգրան Բ-ի

[27] **Մովսէս Խորենացի,** II, ԼԹ, **Аракелян Б.Н.** Заметки о водоснабжении и банях городов древней Армении (ՀՍՍՀ ԳԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 1979, N 10, էջ 86):

[28] Բացառված չէ, որ դա ներկայիս Շամիրամագետն է, որը հոսում է Արտամետ գյուղի մոտով: Նրանից դուրս բերված ջրագիծը Արծրունին անվանում է *ջրմուղ կազմեալ*, որը, հավանաբար, առանձին կավե խողովակներից բաղկացած ջրագիծ էր: Կավե խողովակաշարի հետքեր հայտնաբերվել են, օրինակ՝ Արտաշատի հյուսիսային մատույցներում [տե՛ս **Khachatrian Z.D.** Artaxata. Capitale dell'Armenia antica (II sec. A.C.-IVD.C.), p. 106, fig. 15]:

[29] **Тирацян Г.А.** Возникновение древнеармянского государства (ՊԲՀ, 1966, N 4, էջ 85), **Тирацян Г.А.** Некоторые аспекты внутренней организации армянской сатрапии (ՊԲՀ, 1972, N 2, էջ 99-116), **Кошеленко Г.А, Акопян А.** Градостроительство Армении и градостроительство Парфии, Е., 1978, с. 7.

[30] **Մովսէս Խորենացի,** II, ԽՍ, **Тер-Мартиросов Ф.И.,** նշվ. աշխ., էջ 41-42:

պալատը՝ այգիներով, պուրակներով, աղբյուրներով, լճակներով և որսատեղիներով[31]:

Գ. Տաճար և գանձատուն: Ըստ Թովմա Արծրունու նկարագրության, քաղաքի գլխավոր կառույցներից էր բարձր ժայռափոր աշտարակաձև պատվանդանի վրա կանգնած Աստղիկ դիցուհու մոնումենտալ արձանը: Նրա շուրջը ձևավորվել էր տարբեր շինություններից բաղկացած ճարտարապետական համալիր, որի մեջ էր մտնում նաև գանձատունը, որի գործառույթներից էր, ըստ Թ. Արծրունու, դիցուհու կուռքի պաշտպանությունը: *Զփուն գանձու* բառակապակցությունը իր կազմությամբ և իմաստով համապատասխանում է արդեն սելևկյան ժամանակաշրջանում հայտնի *γαζοφυλάκειον*-ին՝ զինված պահակախումբ ունեցող թագավորական գանձարաններին[32], որոնք կառուցվում էին ամրացված վայրերում[33]: Այնտեղ հավաքվում էին ենթակա տարածքներից, այդ թվում նաև տաճարական համայնքներից գանձվող հարկերը[34]: Ստրաբոնը վկայում է, որ Արտաշատ քաղաքից ոչ հեռու գտնվում էր Տիգրանի և Արտավազդի ամրացված գանձատունը *οὐ πολυ δἀπωθεν της πόλέώς ἐστι τά Τιγράνου καί Ἀραούασδου γαζοφυλακια…*[35]*:*

Արտամատ քաղաքի, նրա շրջակայքի, ինչպես նաև բուն տաճարապատկան տարածքների բնակչությունից գանձվող հարկերը կուտակվում էին գանձատանը, որը, բացի ռազմական պաշտպանությունից, օգտվում էր նաև Աստղիկի տաճարի հովանավորությունից: Թովմայի վկայությունը կուռքի պաշտպանության ներքո գտնվող գանձատան մասին, հավանաբար, արտացոլում է Հին Արևելքում, հետագայում հելլենիստական երկրներում լայնորեն տարածված ασυλία-ի՝ անձի կամ մարդկային կոլեկտիվի գույքի և իրավունքների անձեռնմխելիության և ապաստանի՝ սրբազան

---

[31] **Appiani** Mithridatica, 83. **Саркисян Г.Х.,** նշվ. աշխ., էջ 23-24:

[32] **Бикерман Э.** Государство Селевкидов, М., 1985, с. 119: Այս անվանումը իր մեջ պահպանել էր պարսկերենից ուղիղ փոխառնված «gandz»-ը և կազմվել հին հունարեն φύλαξ՝ պահակակետ, կայազոր բառի կցումով (տե՛ս **Дворецкий И.Х.** Древнегреческо-русский словарь, т. 2, М., 1958, с. 1751):

[33] Բացառված չէ, որ Աստղիկի արձանի ժայռափոր աշտարակաձև պատվանդանի ներսում կարող էին լինել օժանդակ նշանակության տարբեր սենյակներ՝ գանձատան և շրջակա տարածքը սպասարկելու համար:

[34] **Периханян А.Г.** Храмовые объединения Малой Азии и Армении, М., 1959, с. 157 և հաջորդ:

[35] **Strabo,** XI, 14, 6.

տարածքի կողմից իրականացվող հովանավորության ավանդույթի կողմերից մեկը: Առաջավորասիական բոլոր խոշոր սրբավայրերը օժտված էին այդ իրավական իմունիտետով: Այդ արտոնությունը տաճարներին հելլենիստական երկրներում տալիս էր բացառապես թագավորը[36]: Թերևս հովանավորության և պաշտպանության իրավունքը Աստղիկի տաճարին տրված էր Արտաշեսի կողմից՝ արքայական գանձատան պաշտպանությունը առավել ապահովելու նպատակով:

Հելլենիստական Հայաստանի բոլոր հնագույն պաշտամունքային խոշոր կենտրոնները և տաճարները՝ Աշտիշատը, Եկեղիքը, Անի-Կամախը և Անգեղ–տունը[37], թերևս, ունեին պետությունից կիսանկախ կարգավիճակ և իրենք էին տնօրինում գանձարաններում կուտակված հարստությունները[38]: Արտաշեսի անցկացրած կրոնական բարեփոխումների և կենտրոնացված իշխանության ամրապնդման շնորհիվ իրադրությունը փոխվում է: Սահմանափակվում են քրմական դասի և նրա առաջնորդների իրավունքները: Արտաշեսը Հելլադայից Հայաստան է բերում Հերակլեսի, Արտեմիսի և Ապոլոնի արձանները և ցանկանում տեղադրել Արմավիրի հինավուրց կենտրոնում՝ արքայական նախնիների կողքին: Սակայն հնագույն Վահունի տոհմի քրմապետները, Արտաշեսի անսպասելի մահվան լուրը լսելով և արհամարհելով արքայի կամքը, Հերակլեսի պղնձաձույլ ոսկեզօծ արձանը համարելով իրենց նախնի Վահագնի պատկերը, այն կանգնեցնում են սեփական տաճարական տիրույթ Աշտիշատում: Արտաշեսի որդի Տիգրան Ա-ն Վահունիներին զրկում է քրմությունից և գյուղը «յարքունիս» գրավում[39]:

---

[36] **Rigsby K.J.** Asylia: Territorial Inviolability in the Hellenistic World, Berkeley and Los Angeles, 1997; **Бикерман Э.,** նշվ. աշխ., 139: Ըստ Ստրաբոնի, փոքրասիական Դափնե քաղաքում կար մի բնակավայր՝ մեծ, ստվերախիտ ծառերով, որտեղ գտնվում էր Ապոլոնի և Արտեմիսի սրբարանը: Այս սրբազան տարածքը օգտվում էր նշված հովանավորության իրավունքից (**Strabo,** XVI, 2, 6): Օժտված չէ՞ին արդյոք այդպիսի արտոնությամբ Արմավիրի Արեգի և Լուսնի տաճարը և դրան կից Սոսիների պուրակը, որտեղ Արտաշեսը կանգնեցրեց Արևմուտքից որպես ավար բերված Արտեմիսի և Ապոլոնի արձանները (տե՛ս **Մովսէս Խորենացի,** II, ԺԲ):

[37] **Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց,** Թիֆլիս, 1914, 22, 786, 790, 809, **Փաւստոս Բիւզանդ,** Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1832, IV, 24, **Հովհան Մամիկոնյան,** Տարոնի պատմությունը, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Վ. Վարդանյանի, Ե., 1989, էջ 36:

[38] **Периханян А.Г.,** նշվ. աշխ., էջ 9, 82 և հաջորդ:

[39] **Մովսէս Խորենացի,** II, ԺԲ, ԺԴ:

Թովմա Արծրունին վկայում է նաև Արտաշեսի իշխանության յոթերորդ տարում (Ք.ա. 167 թ.) Մեծ Հայքի Կորճայք նահանգի Փոքր Աղբակ գավառում Հերակլես և Դիոնիսոս աստվածների տաճարների կառուցման մասին՝ նպատակ ունենալով շենացնելու այդ տարածքները[40]: Այդ մեհյանները կառուցվեցին լեռնային և սակավ բնակեցված վայրերում, որոնք, ըստ միջնադարյան աղբյուրների, բնակեցված էին մարերով[41]: Կրոնական բարեփոխումների մաս կազմող այս տաճարների կառուցումը երկրի ծայրամասային հատվածներում ընդգրկված էր Արտաշեսի երկրի միավորման ծրագրի մեջ, նպաստում էր տարբեր էթնիկ խմբերի միաձուլմանը և միասնական պետականության ստեղծմանը, ինչի շնորհիվ «բոլորը միալեզու եղան»[42]:

Դ. Աստղիկի արձանը Զարդ ամրոցում: Դիցուհու պաշտամունքի ակունքները Վանա լճի շրջակայքում: *Աստղիկ*-ը միակ, զուտ հայկական ծագում ունեցող մեզ հայտնի պաշտամունքային անվանումն է: Այն հնագույն տեղական աստվածուհու անվան հայերեն թարգմանությունն է, որն արտացոլում է նրա պաշտամունքի բովանդակությունն ու գործառույթները: Նրա անվան հիմքում ընկած է հնդեվրոպական *haster-աստղ* արմատը, որն իր զուգահեռներն է գտնում աքքադական Իշտարի, փյունիկյան Աստարտեի հետ[43]: Հելլենիստական դարաշրջանում «Աստղիկ» անունն արտացոլում էր Անահիտ գերագույն աստվածուհու հատկանիշներից մեկը: *Աստղիկ*-ի ժողովրդական *Լուսաստղ* տարբերակը Արուսյակ-Վենեռա մոլորակի անվանումներից է, որը նաև սիրիական Աստարտե-Դերկետոյի խորհրդանիշն էր[44]: Պահլավերենում *Ard* նշանակում է աստվածուհի. դրանով նշում էին յուրաքանչյուր ամսվա 25-րդ օրը[45]:

Թովմա Արծրունին հատուկ բացատրություն է տալիս կարծես թե հասկանալի հայերեն *զարդ* բառին. «պայծառութիւն ի վերայ պայծառայարդար շինուածոյն»: Հայերեն *զարդ-ի* հիմքում ընկած է *արդ* տարբեր

[40] **Թովմա վարդապետ Արծրունի,** էջ 101:

[41] **Մանանդյան Հ.,** Պատմաաշխարհագրական հետազոտություններ, Ե., 1945, էջ 53:

[42] **Strabo,** XI, 14, 5.

[43] **Ջահուկյան Գ.,** Լեզվական նոր տվյալներ հայոց նախաքրիստոնեական կրոնի և հավատալիքների մասին (ՊԲՀ, 1992, N 1, էջ 17-18):

[44] **Աբեղյան Մ.,** Վիշապներ կոչված կոթողները իբրև Աստղիկ-Դերկետո դիցուհու արձաններ (Երկեր, հ. Ե, Ե., 1975, էջ 157):

[45] **MacKenzi D.N.,** նշվ. աշխ., էջ 11:

իմաստ պարունակող արմատը, որը *զ* նախածանցով նշանակում է *զարդ, գեղեցկություն, նախշ* և այլն[46]: «Արդ» արմատը ընկած է ուրարտական այն աստվածուհիների անունների հիմքում, որոնք կապված էին գիշերային լուսատուների հետ, ինչպես, օրինակ՝ *Արդի, Սարդի, Ծինուարդի*: Բ. Պիոտրովսկին նշում է, որ ուրարտական Սարդի աստվածուհու խորհրդանիշն էր Վեներա մոլորակը, իսկ *Ծինուարդիին* համապատասխանում էր աքքադական Իշտարը, որի նշանն էր ութթևանի աստղը[47]: Ուրարտական լուսնի և երկնային լուսատուների *Շելարդի* (Մելարդի) արական աստվածների անվան հիմքում նույնպես դրված է նույն՝ *արդ* արմատը: Ուրարտուի գլխավոր պաշտամունքային կենտրոն Մուսասիրը Խալդի աստծո տաճարով կրում էր Արդինի անվանումը, որում արտացոլված է նրա կապը Յուպիտեր մոլորակի միջև[48]: Այսպիսով, կարելի է որոշակի առնչություն տեսնել «զարդ»-պայծառություն անվան հիմքում ընկած *արդ* արմատի և ուրարտական *վաղորդյան աստղ* և Վեներա մոլորակը խորհրդանշող անունների միջև: Պատահական չէ, որ Արտաշեսը Աստղիկի արձանը կանգնեցնում է հնագույն Թարիրիահինիլի սրբազան տարածքում՝ այն կապելով ուրարտական Թարիրիայի կամ նրա հովանավոր երկնային լուսատու աստվածուհի Սարդիի հետ:

Հայագիտության մեջ լայնորեն շրջանառվել են Մովսես Խորենացու և Ագաթանգեղոսի հիշատակությունները Արտաշես Ա-ի և Տիգրան Բ-ի կողմից Զևսի, Հերակլեսի, Բարշամինի, Հեփեստոսի, Աթենասի, Արտեմիսի, Ապոլոնի, Աֆրոդիտեի արձանները Արևմուտքից Հայաստան բերելու մասին, որոնք կանգնեցվում էին հայոց մեհյաններում՝ տեղական աստվածների արձանների կողքի[49]: Այս հիշատակությունները վկայում են Արտաշեսի կրոնական բարեփոխումների մասին՝ ուղղված համապետական պաշտոնական հելլենիստական դիցարանի ստեղծմանը: Կասկածից վեր է, որ Արտաշեսի՝ Արևմուտքից բերված հելլենիստական աստվածների արձանների նշված շարքի մեջ կար նաև Աստղիկինը: Դժբախտաբար, պատմիչը որևէ տեղեկություն չի տալիս դրա արտաքին տեսքի և պատկերագրական գծերի վերաբերյալ: Սակայն աստվածուհու պատկերագրական

[46] **Աճառյան Հ.,** Հայերեն արմատական բառարան, հ. Ա, Ե., 1971, էջ 307:

[47] **Пиотровский Б.Б.,** նշվ. աշխ., էջ 226:

[48] **Հմայակյան Ս.,** Վանի թագավորության պետական կրոնը, Ե., 1990, էջ 36-37:

[49] **Առաքելյան Բ.,** Ակնարկներ հին Հայաստանի արվեստի պատմության, Ե., 1976, էջ 18-20:

առանձնահատկությունների մասին կարելի է որոշ հետևություններ անել՝ անդրադառնալով նրա պաշտամունքային բովանդակությանը վերաբերող տարբեր տվյալներին: Մովսես Խորենացին և Ագաթանգեղոսը հայտնում են, որ Աստղիկը՝ որպես գեղեցկության և սիրո աստվածուհի, հելլենիստական դարաշրջանում համադրվում էր Աֆրոդիտեի հետ: Նրա արձանը, որը Արտաշեսը բերել էր Արևմուտքից, դրվել էր Տարոնի Աշտիշատի բագինում, Աֆրոդիտեի սիրեցյալ Վահագնի կողքին: Այն կոչվում էր «սենեակ Վահագնի»[50]:

Աստղիկը, հավանաբար, իր մեջ էր ներառել նաև հունական արշալույսի աստվածուհի Էոսի գծերը, որը արևի աստված Հելիոսի և լուսնի աստվածուհի Սելենեի քույրն էր: Վաղ առավոտյան Էոսը կառքի վրա նստած դուրս էր գալիս օվկիանոսից: Հոմերոսը նրան անվանում է «ροδοδάκτυλος» այսինքն՝ «վարդամատն», որի հագին է զաֆրանագույն (կարմրադեղին, ծիրանի) պեպլոսը[51]: Անվանումը բացատրվում հետևյալ կերպ. արևաածագից առաջ երկնքի վրա հայտնվում են կենտրոնից ճառագայթող վարդագույն գոտիներ, որոնք հիշեցնում են ձեռքերի մատներ: Հատկանշական է, որ հայկական ավանդույթում և ժողովրդական հավատալիքներում Աստղիկը հայտնի է «վարդամատն» և «ոսկեձղի» (ոսկեձեռն) հոմանիշներով: Թովմա Արծրունին Զարդ ամրոցը նկարագրելիս օգտագործում է վաղ արշալույսի հետ զուգորդվող բնորոշումներ՝ «…ընդդէմ ծիծաղելով ծովուն ի հիւսիսի նայեցուածով, արեգակնային ի վերայ խաղալով ճառագայթաձիգ ճերմականացն, յելս և ի մուտս ձկան իմն թուելով ի վերայ մկանաց ալեացն խաղալով»:

Աստղիկին նվիրված հայկական Վարդավառ տոնին ժողովուրդը ջուր էր ցողում իրար վրա՝ ի հիշատակ ջրի և խոնավության հովանավորուհու: Հունական աստվածուհի Էոսը, լաց լինելով իր զոհված որդի Մեմնոնի համար, առատ արցունքներ՝ վաղորդյան ցող է թափում երկրի վրա[52]: Աստղիկը գիշերը լողանալով Եփրատ գետում՝ Էոսի պես դուրս է ելնում ջրից, որպեսզի առավոտյան շողա երկնքում: «Ոսկեգահ» Էոսի պես, որն ապրում էր բարձր երկնքում, նա նույնպես ուներ «գահեր», այսինքն՝

[50] **Ագաթանգեղոս,** 809, **Մովսէս Խորենացի,** II, ԺԲ, ԺԴ:

[51] **Homer,** The Odissey, XXIII, 244 (with an English Translation by Myrray A.T. in two volumes, London, 1919).

[52] **Hesiod.** Theogony 373-378 (The Homeric Hymnes and Homerica with an English Translation by Hugh C.E.-W., London, 1914).

սրբարաններ բարձր լեռներում: Նրա «գահերից» մեկը գտնվում էր Պաղատ լեռան վրա, Անձևյաց գավառում: Նրա անունով էին կոչվում շատ լեռներ և բլուրներ, օրինակ, Աստղաբերդը՝ Հաշտյանք գավառում[53]:

Աստղիկ-Աֆրոդիտեի գլխավոր բագինը Աշտիշատի տաճարում էր՝ Վահագնի բագինի կողքին, նա, ըստ Խորենացու և Ագաթանգեղոսի, Վահագն-Հերակլեսի տարփածուն էր: Սակայն հունական Աֆրոդիտեն երբեք չի եղել Հերակլեսի սիրեցյալը, այլ ռազմի աստված Արեսի սիրեցյալն էր: Հայկական Վահագնը համադրվում էր ոչ միայն Հերակլեսին, այլ նաև Արեսին, ինչը վկայված է Կոմմագենեի Նեմրուդ-դաղի սրբարանում[54]: Աստղիկի հայտնվելը Վահագնի կողքին կարելի է բացատրել նաև Աստղիկի և Էոսի կերպարների որոշ գծերի համադրումով: Էոսը, ըստ առասպելի, մի քանի անգամ հանդիպել է Արեսին, Աֆրոդիտեի սիրեցյալին, ինչի համար սա պատժում է Էոսին և նրա մեջ սերմանում տարփանք մահկանացու երիտասարդների նկատմամբ, որի հետևանքով էլ Էոսը հետապնդում և առևանգում է երիտասարդներին: Հայկական միջնադարյան ձոներից մեկում կա այսպիսի մի բնութագրական տող. «Աստղիկ զբոզութիւն առեալ փախչէր առ նմանիս իւր»[55]: Նա արձագանք է գտնում է հունական Էոսի, ինչպես նաև հինարևելյան մարմնական սիրո աստվածությունների մեջ, որոնք ունեին աստեղային կերպավորում:

Թովմա Արծրունու՝ Աստղիկի արձանի կարճ նկարագրությունը թույլ չի տալիս որևէ կոնկրետ եզրակացություն անել նրա արտաքին տեսքի վերաբերյալ: Սակայն կասկածից վեր է, որ դա մոնումենտալ չափեր ունեցող, ժայռափոր, բարձր, ատամնավոր աշտարակի վրա տեղադրված, հելլենիստական ոճի արձան էր, որը տեսանելի էր հեռվից. այն հանդես է գալիս որպես քաղաքի խորհրդանիշ:

---

[53] **Սրվանձտյանց Գ.,** Երկեր, հ. Ա, Ե., 1978, էջ 71:

[54] **Humann K. und Puchstein O.** Reisen in Kleinasien und Nordsyrien, Textband, Berlin, 1890, S. 232-352, **Waldmann H.** Der kommagenische Mazdaismus (Istanbuller Mitteilungen 1991, № 37, S. 33-38, 197-204), **Սարգսյան Գ.Խ.,** Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին, Ե., 1966, էջ 28-34:

[55] **Ալիշան Ղ.,** Հայոց հին հավատը կամ հեթանոսական կրոնը, Ե., 2002, էջ 144-145:

ГОРОД ЦАРЯ АРТАШЕСА I АРТАМАТ СОГЛАСНО “ИСТОРИИ ДОМА АРЦРУНИ” ТОВМЫ АРЦРУНИ

МАРГАРЯН А.З.

Резюме

В труде “История дома Арцруни” (VII и VIII главы Первой книги) автора X в. Товмы Арцруни приведен ряд достоверных исторических фактов, относящихся к периоду правления царя Арташеса I (189-160 гг. до н.э.) и основания нового царского города Артамат на южном берегу оз. Ван. Подробный анализ соответствующего фрагмента текста «Истории» в контексте ряда исторических, археологических, топографических, лингвистических, мифологических и иных данных дает возможность выявить круг вопросов и осветить ряд фактов, связанных с предпосылками основания нового эллинистического города, его локализацией, названием, структурой и главными постройками коммунально-бытового, административного и культового характера.

THE CITY OF ARTASHES I ARTAMAT, ACCORDING TO “THE HISTORY OF THE HOUSE OF ARTSRUNI” BY TOVMA ARTSRUNI

H. MARGARYAN

Abstract

In the work “The History of the House of Artsruni” by Tovma Artsruni a number of historical events and facts related to the years of the reign of King Artashes I (189-160 BC) are mentioned. The data presented in the VII and VIII chapters of the First Book of “History” concerning the foundation of the new royal city of Artamat, characterize it as a city of purely Hellenistic type. The analysis of the relevant fragment of text within the context of historical, archaeological, topographical, linguistic, mythological and other data, made it possible to reveal a range of certain issues and facts related to the prerequisites for founding the city in this place, to its name, structure and the main buildings of communal-household, administrative and cult nature.

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԿԱՊԱՆՈՒՄ

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ Տ.Ա., ՄԻՐԻՋԱՆՅԱՆ Դ.Հ., ԲԱԴԱԼՅԱՆ Հ.Կ.

Շահումյան բանավանը Սյունիքի մարզկենտրոն Կապան քաղաքից մոտ 5 կմ արևելք հեռավորության վրա է: Ներկայումս անբնակ դարձած ավանը պատկանում է «Դինո-Գոլդ» հանքարդյունաբերական ընկերությանը, որտեղ և գտնվում են հանքատարածությունները: Այստեղ առկա բնական պաշարների արդյունահանումը սկսվել է դեռևս XIX դարավերջից և շարունակվում է մինչև օրս[1]:

2012 թ. նոր հանքահորերի շահագործման նպատակով տարածքում կատարված հողային աշխատանքների ժամանակ այստեղ հայտնաբերվել են կարասային թաղումներ, առանձին կարասներ, քարե գործիքներ, տարբեր խեցանոթներ, բրոնզե դաշույն և այլն (նկ. 1)[2]: Կազմվել է հնագիտական արշավախումբ, որը նախնական տեղազննություն և կարճատև փրկարարական պեղումներ է իրականացրել նշված հանքավայրի տարածքում (արշավախմբի կազմում էին հնագետներ Տ. Ալեքսանյանը, Դ. Միրիջանյանը, պատմաբան Վ. Ծատրյանը):

Նկարագրվող տարածքները հիմնականում ծառածածկ բլրաշարեր են, որոնց լանջերին բացված ճանապարհների կտրվածքում հստակ տեսանելի է քարազուրկ, կավային հիմնահողը: Մինչև պեղումները կատարվեցին վերոհիշյալ արտեֆակտերի գտնվելու վայրերի քարտեզագրման և ընդհանուր տարածքի տեղազննության աշխատանքներ (նկ. 2): Ըստ այդմ՝ ուսումնասիրվող ամբողջ տարածքը բաժանվեց պայմանականորեն չորս տեղամասի՝ 1) գանգի բլուր, 2) ջրատար խողովակի տեղամաս 3) դաշույնի բլուր և սրանցից ներքև՝ չվտանգված տարածքում գտնվող թիվ 4 տեղամաս:

---

[1] **Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ս., Բարսեղյան Հ**., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 4, Ե., 1998, էջ 61:

[2] Նորահայտ դամբարանների, հայտնաբերված գտածոների մասին մեզ տեղեկացրել է հուշարձանների պահպանության Սյունիքի և Վայոց ձորի տարածքային ծառայության պետ Վ. Ծատրյանը, որի շնորհիվ հողային աշխատանքները դադարեցվել են, իսկ գտնված իրերը խնամքով հավաքվել և տեղափոխվել Կապանի պատմաերկրագիտական թանգարան:

Առաջին տեղամաս (Գանգի բլուր): Պեղավայրն այսպես է կոչվում բլրի գագաթին անցկացված ճանապարհի հետևանքով ի հայտ եկած գանգի մնացորդների պատճառով: Պեղումների շնորհիվ բացվեց ամբողջ կմախքը, որը դրված էր արևելք-արևմուտք ուղղությամբ, աջ կողմի վրա՝ կծկված վիճակում, ընդհանուր երկարությունը՝ 176 սմ: Ըստ մարդաբանական հետազոտության՝ հանգուցյալը 35-40 տարեկան տղամարդ է[3]: Թաղումը կատարվել էր մոտ 50 սմ խորությամբ գտնվող քարային շերտում: Ուղեկցող նյութն իսպառ բացակայում էր: Ենթադրելի է, որ թաղման կառույցի մանրամասներն ու հնարավոր թաղման գույքը ոչնչացվել են խոշոր տեխնիկայով կատարած հողային աշխատանքների հետևանքով:



Նկ. 1 Հողային աշխատանքների ժամանակ հայտնաբերված իրեր. 1-բրոնզե դաշույն, 2-աղորիքներ, 3-4-կարասներ, 5-կճուճ, 6-քրեղան

Նկ. 2 Պեղված տեղամասերի համայնապատկերը

[3] Մարդաբանական հետազոտությունները՝ Լ. Աղիկյանի, ԳԱԱ ՀԱԻ:

Երկրորդ տեղամաս: Քարե շինություն: Այս պեղավայրը պայմանականորեն կոչեցինք «Ջրատար խողովակի», քանզի այստեղով է անցնում խմելու ջրի խողովակաշարը: Մինչև պեղումները տեղում կատարած հողային աշխատանքների հետևանքով այստեղից հայտնաբերվել էին անոթի բեկորներ: Արշավախմբի ձեռնարկած պեղումներով 40 սմ խորությունից բացվեց հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք ձգվող, միջին չափերի կիսամշակ քարերով, առանց շաղախի շարված պատի՝ 80 սմ բարձրությամբ և 170 սմ երկարությամբ պահպանված հատված: Թափված քարերը հեռացնելուց հետո պատին անմիջապես կից բացվեց 60x50 սմ չափերի, օջախի նմանվող մի կառույց (նկ. 3): Հայտնաբերվեցին նաև կավամաններ առանձին բեկորներ, գնդաձև մեկ քարե գործիք և տարբեր չափերի սանդերի հատվածներ: Վերջիններս ցուցում են շինության տնտեսական գործառույթը, որը մեծապես տուժել է խորհրդային տարիներին այստեղով անցկացված ջրատարի հետևանքով:

Դամբարան: Տեղամասի հաջորդ կառուցվածքը թերի պահպանված դամբարանն է, որի առանձին հատվածներ նույնպես բացվել էին նախկինում կատարված հողային աշխատանքների շնորհիվ (նկ. 4): 140 սմ խորությունից բացված դամբարանի պեղումներով պարզ դարձավ, որ քարաշեն կառուցվածքից պահպանվել են միայն արևմտյան հատվածի վերին՝ 2-3 շարք քարերը: Այստեղից հայտնաբերված հնագիտական նյութը աղքատիկ էր: 180x250 սմ չափերով դամբարանախցի պեղումներով նրա արևելյան անկյունից հայտնաբերվեցին միայն իրար վրա լցված հարթ կղմինդրի մի քանի բեկորներ, սև (նաև մրապատ) ու կարմրավուն անոթների շրթնամասեր, կանթեր: Այս հանգամանքը ենթադրել է տալիս, որ ժամանակին դամբարանը թալանվել է:

Նկ. 3

Նկ. 4

Երրորդ տեղամաս (Դաշույնի բլուր): N 1 դամբարան: Վտանգված և պեղման ենթակա տարածք էր նաև պայմանականորեն Դաշույնի բլուր կոչվող N 3 տեղամասը, որտեղից նախկինում հայտնաբերվել էր բրոնզե դաշույնը (նկ. 1/1): Տրակտորի միջոցով բլրի գագաթը հարթեցնելու հետևանքով տեղանքում նշմարվում էին հողից դուրս ցցված քարերի եզրեր, որոնց մոտ և առանձնացրինք պեղման ենթակա երկու հատված: Դրանցից առաջինն ուներ 4.5x3 մ, իսկ երկրորդը՝ 3x1.8 մ չափեր: Առաջին հատվածի պեղումներով հայտնաբերվեց 170x77 սմ չափերի, ուղղանկյուն, արևելք-արևմուտք (չնչին շեղումով) ուղղությամբ քարարկղային դամբարան, որի արևմտյան հատվածը հողաշեն էր (նկ. 5):



Նկ. 5 N 1 դամբարան (չափագրությունը՝ Յ. Գևորգյանի)

Մոտ 1 մ խորություն ունեցող դամբարանախցի պեղումներով արևելյան պատից մոտ 70 սմ արևմուտք բացվեց կմախքը՝ դրված արևելք-արևմուտք ուղղությամբ, կծկված վիճակում, պառկած աջ կողմի վրա: Ըստ մարդաբանական նյութի՝ հուղարկավորվածը 25-30 տարեկան կին է: Դամբարանն աչքի էր ընկնում ուղեկցող նյութի առատությամբ: Կմախքն ամբողջությամբ պատված էր բրոնզե զարդերով՝ ձեռքերին և ոտքերին հագցված բրոնզե ապարանջաններ, հերակալներ, ականջօղեր, մեծ ու փոքր կոճակներ, մատանիներ և այլն (նկ. 6)[4]:

[4] Գտածոները ներկայացված են նախնական վիճակում, առանց լաբորատոր մշակման:



Նկ. 6 N 1 դամբարանից հայտնաբերված գտածոներ

1-բրոնզե կոճակներ, 2-բրոնզե օղեր, մատանիներ, 3-4-բրոնզե ապարանջաններ, 5-ոսկրե, բրոնզե և սարդիոնե ուլունքներ, 6-կնիք

Գտածոների շարքում առանձնանում է հուղարկավորվածի պարանոցի վրայից գտնված գլանաձև կնիքը, որն էլ փաստում է նրա սոցիալական բարձր դիրքի մասին (նկ. 6/6): Կմախքի գանգի տակ հայտնաբերվեց փայտի մի կտոր, որը ենթադրել է տալիս, որ ննջեցյալը դրված է եղել պատգարակի վրա:

N 2 դամբարան: Պեղվող մյուս քառակուսին առանձնացրինք N 1 դամբարանից 9.3 մ հարավ-արևելք՝ հիմք ընդունելով քարերի երևացող եզրերը: Պեղումների ընթացքում բացվեց 175x47 սմ չափերի, արևելք-արևմուտք ուղղությամբ կառուցված քարարկղային դամբարան:

Դամբարանախցի խորությունը՝ 1,5 մ է, արևմտյան հատվածը՝ հողաշեն: Դամբարանում կատարվել էր խմբակային թաղում. պեղումներով հնարավոր եղավ արձանագրել չորս կմախքների մնացորդներ (նկ. 7):

Նկ. 7 N 2 դամբարան (չափագրությունը՝ Տ. Կոստանդյանի)

Դամբարանախցի արևելյան պատից 50 սմ հեռավորության վրա բացվեց առաջին կմախքը՝ կծկված վիճակում, պառկած ձախ կողմի վրա: Հաջորդ կմախքը հայտնաբերվեց հյուսիսային պատի տակ՝ ևս կծկված դիրքով, բայց պառկած աջ կողմի վրա, ձեռքին և ոտքերին պահպանված բրոնզե ապարանջաններով: Հաջորդ երկու հուղարկավորվածների անատոմիական կմախքը բացակայում էր: Ձեռնարկված պեղումներով հնարավոր եղավ արձանագրել միայն դրանց սրունքների և ձեռքերի ոսկորների առանձին հատվածներ՝ պահպանված բրոնզե ապարանջաններով: Այս դամբարանի պեղումներից հայտնաբերվեցին նաև բրոնզե մեծ ու փոքր կոճակներ, մածուկից և սարդիոնից պատրաստված ուլունքներ (նկ. 8):

Նկ. 8 N 2 դամբարանից հայտնաբերված գտածոներ.
1-2-բրոնզե ապարանջաններ, 3-բրոնզե կոճակներ, 4-ուլունքներ

N 3 դամբարան: Նախորդի հարևանությամբ էր N 3 դամբարան համարվող քարե կառույցը՝ 165x80 սմ չափերի: Արևելք-արևմուտք ուղղությամբ արված քարե կառուցվածք է, որի պատերից պահպանվել էին միայն միաշար քարերը (նկ. 9):



Նկ. 9 N 3 դամբարան (չափագրությունը՝ Տ. Կոստանդյանի)

Նրա արևմտյան պատի մոտ հայտնաբերվեցին բրոնզե ապարանջան և ամբողջությամբ պահպանված եռականթ սափոր (նկ. 10):

Նկ. 10 N 3 Դամբարանից հայտնաբերված եռականթ անոթ

Դատելով վերոհիշյալից՝ ենթադրելի է, որ պահպանված քարե շինությունը դամբարանախցի ստորին հատվածն է, որի մյուս մասերը ոչնչացվել են հողային աշխատանքների հետևանքով:

Գտածոները: Նորահայտ հուշարձանի տարածքից պատահականորեն և կարճատև պեղումներով հայտնաբերված հնագիտական ամբողջ նյութն առայժմ նախնական վիճակում է՝ առանց լաբորատոր մշակման[5]: Այս հանգամանքը հնարավորություն չի տալիս առավել ստույգ և ամբողջական պատկերացում կազմելու դրանց պատրաստման մանրամասների, զարդամոտիվների, հետևաբար և թվագրության վերաբերյալ:

Այնուհանդերձ, պեղումներով բացված թաղման կառույցների, հայտնաբերված գտածոների համեմատությունը այլ հուշարձաններից հայտնի համանման օրինակների հետ ցույց է տալիս, որ դրանք պատկանում են ժամանակագրորեն տարբեր շրջափուլերի՝ Ք.ա. II հազարամյակի վերջից մինչև I հազարամյակի կեսերը:

Բրոնզե դաշույն: Հայտնաբերվել է պատահականորեն, պեղումներին նախորդած հողային աշխատանքների ժամանակ: Ամբողջական է, պատրաստված է բրոնզից, ունի եռանկյունաձև միջնաջիղով շեղբ, կտրվածքում օվալաձև դաստակ և կորնթարդ գլխիկ (նկ. 1/1): Գլխիկի վրա պահպանված է եռանկյունաձև երեք անցք: Առհասարակ, տարատեսակ գլխիկներով դաստակավոր բրոնզե դաշույնների կիրառումը սկսվում է դեռևս

[5] Հնագիտական իրերը ժամանակավորապես ի պահ են տրված Կապանի պատմա-երկրագիտական թանգարանին:

միջինբրոնզեդարյան ժամանակաշրջանից և գոյատևում մինչև Ք. ա. VI-IV դդ.: Քննարկվող դաշույնի օրինակը տեղավորվում է Ա. Փիլիպոսյանի դաստակով դաշույնների դասակարգման երրորդ ենթախմբի տասներորդ տարբերակի մեջ[6] և ունի բազմաթիվ զուգահեռներ Հայաստանի տարբեր վայրերից՝ Սևանի ավազանից[7], Սյունիքից[8], Դիլիջանից[9], Կոտայքից[10], Շիրակից[11], Արցախից[12]: Այս տեսակի դաշույնները պատրաստվել են երկու եղանակով՝ զոդման, երբ գլխիկն ամրացված է դաստակին, և առանձին, երբ գլխիկը և դաստակն իրար են միացվել միջնապատերի միջոցով: Այս օրինակ դաշույնների թվագրման շուրջ ուսումնասիրողների շրջանում կան տարակարծություններ: Մի մասի կարծիքով դրանք թվագրվում են Ք. ա. II հազ. II կեսով[13], մյուս տեսակետի հեղինակների համաձայն՝ Ք. ա. I հազ. սկզբով կամ I քառորդով[14]: Մեր գտածոն ամենամոտ նմանություններն ունի Նորաշենիկի և Էլառի դաշույնների հետ, ուստի այն կարելի է թվագրել Ք. ա. II-I հազարամյակի սահմանագծով:

Ապարանջաններ: Հնագիտական իրերի մեջ առկա են նաև բրոնզե ապարանջաններ, որոնք բոլորն էլ գտնվել են պեղումների ընթացքում:

---

[6] **Փիլիպոսյան Ա.,** Հին արևելքի շրջանակավոր դաստակով դաշույններն ու սրերը, Հայաստանի հնագիտական հուշարձանները, 17, Ե., 1999, էջ 23:

[7] **Мартиросян А.** Армения в эпоху бронзы и раннего железа, Е., 1964, с. 194-196, рис. 76/7, таб. XX, 20; **Есаян С.** Оружие и военное дело древней Армении, Е., 1966, с. 69; **Мнацаканян А.** Лчашенские курганы (Раскопки 1956 г.) (Краткие сообщения Института археологии, М., 1961, с. 68, 72, т. 25, 1-3); **նույնի՝** Раскопки курганов на побережье оз. Севан в 1956 г. (Краткие сообщения Института истории материальной культуры, М., 1954, рис. 12).

[8] **Xnkikyan O.** Syunik during the Bronze and Iron Ages, Barington, 2002, plete, XXXI, il. 5-6, p. 55, **նույնի՝** Հին Հայաստանի դաշույնատեսակների տեղայնացման փորձ, Բանբեր Երևանի համալսարանի, Ե., 1991, N 2, էջ 86, աղ. III, **նույնի՝** Պեղումներ Գորիսի շրջանի Տեղ գյուղում, Հնագիտական աշխատանքները Հայաստանի նորակառույցներում, Ե., 1993, աղ. LXXXIII 3, **Есаян С.,** նշվ. աշխ., էջ 73, նկ. XII, 7.

[9] **Мартиросян А.**, նշվ. աշխ., էջ 155, 197, նկ. 63, 3, 77, 12.

[10] **Խանզադյան Է.,** Էլառ-Դարանի, Ե., 1979, էջ 98-99, նկ. 131, **Խնկիկյան Օ.,** Հայաստանի ուշ բրոնզի դարաշրջանի դաշույնների տեսակներն ու պատրաստման եղանակները, Պատմա-բանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ), 1969, N 1, 235, աղ. II, 3:

[11] **Хачатрян Т.** Древняя культура Ширака, Е., 1975, с. 200, рис. 113; **նույնի՝** Артикский некрополь, Е., 1979, с. 70, 265.

[12] **Кушнарева К.** Некоторые памятники эпохи поздней бронзы в Нагорном Карабахе (Советская археология, 1957, XXVII, рис. 8/1).

[13] **Փիլիպոսյան Ա.,** նշվ. աշխ., էջ 24:

[14] **Мартиросян А.,** նշվ. աշխ., էջ 193:

Դրանք կարելի է բաժանել երեք հիմնական խմբի: Առաջին խումբը բարակ կամ հաստ մետաղալարից պատրաստված պարզ օրինակներն են, որոնց սուր ծայրերը չեն միանում իրար (նկ. 6/5, նկ. 8/1՝ վերին երկուսը): Նման ապարանջանները լայն տարածում են ստանում ուշ բրոնզեդարում և շարունակվում օգտագործվել մինչև Ք. ա. IV դ.: Հայտնաբերվել են բազմաթիվ վայրերից՝ Արարատյան դաշտից[15], հյուսիսարևելյան Հայաստանից[16], Սյունիքից[17], Եղեգնաձորից[18] և այլն[19], որոնք պատկանում են ուշ բրոնզ-վաղ երկաթի դարաշրջանին:

Երկրորդ խումբը բարակ մետաղալարից պատրաստված տարբեր չափերի ապարանջաններն են, որոնց ծայրերը հպվում և անցնում են իրար վրա (նկ. 8/1՝ ստորին երկուսը): Մեր պեղումների ընթացքում նմանատիպ ապարանջաններ հայտնաբերվել են N 2 դամբարանից: Դրանք սկսում են կիրառվել ուշ բրոնզ-վաղ երկաթի դարից, մեծ տարածում ստանում հատկապես IX-VIII դդ. և հասնում մինչև Ք. ա. IV դ.: Նմանատիպ ապարանջաններ հայտնի են բազմաթիվ հուշարձաններից՝ Էլառից[20], Օշականից[21], Արթիկից[22] և այլ հնավայրերից[23]:

---

[15] **Мартиросян А.** Город Тейшебаини, Е., 1961, с. 58, рис. 26 в; **Есаян С., Калантарян А.** Ошакан I. Основные результаты раскопок 1971-1983 гг., Е., 1988, таб. CV/2; **Кушнарева К.** Древнейшие памятнии Двина, Е., 1977, 32-33, таб. XXV/ 8, **Խնկիկյան Օ.,** Դամբարանադաշտեր Սիսիանի շրջանում (Լրաբեր հասարակական գիտությունների (այսուհետև՝ ԼՀԳ), 1984, N 9), աղ. III, նկ. 4:

[16] **Եսայան Ս.,** Հայաստանի պատմական թանգարանի ապարանջանները, Տեղեկագիր հասարակական գիտությունների, 1964, N 2, էջ 83:

[17] **Ավետյան Վ.,** Հին հուշարձաններ Տաթև գյուղի մերձակայքում (ՊԲՀ, 2001, N 3), էջ 261, աղ. 2, **Խնկիկյան Օ.,** Պեղումներ Գորիսի շրջանի Տեղ գյուղում, Հնագիտական աշխատանքները Հայաստանի նորակառույցներում, էջ 83, աղ. LXXXII, **Xnkikyan O.** Syunik during…, plate, XXVIII, il. 3-4, p. 49.

[18] **Խնկիկյան Օ.,** Դամբարանների պեղումներ Թումանյանի շրջանի Ծաղկաշատ գյուղում, Հնագիտական աշխատանքները Հայաստանի նորակառույցներում, աղ. LXXVIII, **Հովհաննիսյան Վ.,** Պեղումներ Եղեգնաձորի Ջոջ դար դամբարանադաշտում, Բրոնզ-երկաթեդարյան Սյունիքի սրբազան լանդշաֆտը, Ե., 2015, նկ. 5:

[19] **Թորոսյան Ռ., Խնկիկյան Օ., Պետրոսյան Լ.,** Հին Շիրակավան, Ե., 2002, աղ. LVII/1:

[20] **Խանզադյան Է.,** նշվ. աշխ., նկ. 134:

[21] **Есаян С., Калантарян А.,** նշվ. աշխ., LXXXI 4, CI 1.

[22] **Хачатрян Т.** Артикский некрополь, с. 98, 366, 372.

[23] **Եսայան Ս.,** Հայաստանի պատմական թանգարանի ապարանջանները, աղ. 1/11-12, աղ. 4/1, 3, **Պետրոսյան Լ.,** Լճաշենի դամբարանադաշտի պեղումները (2005-2006 թթ.), Հին Հայաստանի մշակույթը, XIV, 2008, էջ 135, աղ. VIII, 1, **Ավետիսյան Հ., Ավետիսյան Պ.,** Արարատյան դաշտի մշակույթը մ.թ.ա. XI-VI դդ. Ե., 2006, էջ 13,

Երրորդ տեսակի ապարանջանները ևս պատրաստված են բարակ մետաղալարից, սակայն ծայրերը կորանում են և չեն միանում իրար (նկ. 6/4): Մեր պեղումներով այս տեսակի ապարանջաններ գտնվեցին N 1 դամբարանից: Հայտնի է, որ կոր եզրերով ապարանջաններն ի հայտ են գալիս վաղ երկաթի դարում և գոյատևում մինչ VI-IV դդ.՝ իրենց տեղը վերջնականապես զիջելով ճկված մեջքով և կենդանակերպ ծայրերով ապարանջաններին: Կոր ծայրերով զարդեր հայտնի են հայաստանյան մի շարք հնավայրերից՝ Օշականից[24], Զոլաքարից[25], Տաթևից[26], Ռեդկին լագերից[27], Բջնիից[28] և այլ հուշարձաններից:

Մատանիներ, օղեր, ուլունքներ: Պեղումներով բացված N 1 դամբարանից հայտնաբերվեցին բրոնզե մատանիներ և օղեր: Մատանիները երկուսն են, որոնք պատրաստված են բրոնզե բարակ մետաղալարերը պարուրաձև պտտելով (նկ. 6/2՝ վերին երկուսը): Նման պարուրաձև մատանիները բավական լայն տարածում ունեին վաղ երկաթի դարում, գտնվել են Սիսիանի[29], Հաղարծնի[30] և Եղեգնաձորի Ջոջ դար[31] դամբարանադաշտերից, Կապանի Տանձավեր գյուղի մոտակայքում բացված դամբարանից[32]: Սրանք ևս թվագրվում են II հազարամյակի վերջով և I հազարամյակի սկզբով:

Գտնված օղերը պարզ՝ բրոնզե բարակ մետաղալարից պատրաստված օրինակներ են, ծայրերը սրված (նկ. 6/2): Այս տեսակի օղերը համաժամանակյա դամբարանների պեղումների ընթացքում առավել հաճախ

աղ. II/12, **Խնկիկյան Օ.,** Դամբարանների պեղումներ Թումանյանի շրջանի Ծաղկաշատ գյուղում, էջ 87, աղ. LXXXVII/8, **Мартиросян А.** Город Тейшебаини, նկ. 77, 22:

[24] **Есаян С., Калантарян А.,** նշվ. աշխ., էջ 102, աղ. LXXXI, 5.

[25] **Եսայան Ս.,** նշվ. աշխ., էջ 86:

[26] **Ավետյան Վ.,** նշվ. աշխ., էջ 261, աղ. 2:

[27] **Есаян С.А.** Древняя культура племен Северо-восточний Армении (III-I тыс. до н.э.), Е., 1976, с. 121, таб. 110.

[28] **Ղարիբյան Ի., Հակոբյան Հ., Գնունի Ա., Խաչատրյան Գ., Վարդանեսովա Տ.,** Հնագույն Բջնին (Նախնական դիտարկումներ) (ՊԲՀ, 2008, N 3, էջ 185), **Ղարիբյան Ի., Հակոբյան Հ., Գնունի Ա., Խաչատրյան Գ., Վարդանեսովա Տ.,** Բջնիի հուշարձանները (պեղումների արդյունքներ), Հուշարձան տարեգիրք, 2010, Զ, էջ 71:

[29] **Xnkikyan O.** Syunik during..., plete, XLII, il. 3-4, p. 62.

[30] **Мартиросян А.** Раскопки в Кировакане и некоторые памятники раннеурартского периода (IX-VIII вв. до н.э.) (Известия Академии наук Армянской ССР, 1956, N 9, с. 70, рис. 9).

[31] **Հովհաննիսյան Վ.,** նշվ. աշխ., էջ 109, նկ. 8, 11:

[32] **Խնկիկյան Օ.,** Պեղումներ Տանձավեր և Շիկահող գյուղերում (ՊԲՀ, 1975, N 2, էջ 241), աղ. III/9, 15, 18:

հանդիպող զարդերից են և հայտնի են ուշ բրոնզեդարյան և դրան հաջորդող դարաշրջանների բազմաթիվ հնավայրերից:

N 1 և N 2 դամբարանների պեղումներից գտնվեցին նաև բրոնզե կիսագնդաձև կոճակներ (նկ. 6/1, նկ. 8/3): Կոճակների մի քանիսի ներսում պահպանված են կտրվածքում շրջանաձև ծողեր, որոնց միջոցով դրանք կարվել են հագուստին կամ զրահին: Ընդհանրապես, տարբեր չափերի բրոնզե կոճակները բավական տարածված էին ուշ բրոնզ-վաղ երկաթեդարյան ժամանակաշրջաններում և հայտնի են Հայաստանի տարբեր հնավայրերից. Լոռի բերդ[33], Էլառ[34], Օշական[35], Քեթի[36] և այլն[37]:

Գտնված արդուզարդի իրերի թվում են նաև սարդիոնից պատրաստված անվաձև և օղակաձև, ինչպես նաև կապույտ մածուկից պատրաստված ուլունքները (նկ. 6/3, աղ. 8/4), որոնք տարածված էին վաղ երկաթի դարաշրջանում:

Կնիք: N 1 դամբարանից հայտնաբերված մեծաքանակ իրերի շարքում առանձնանում է մածուկե գլանաձև կնիքը, որի երկու ծայրերին պատկերված են զույգ եզրագծեր, իսկ մակերեսին՝ եղևնազարդ, որը, ըստ երևույթին, խորհրդանշում է կենաց ծառը (նկ. 6/6): Գլանաձև, նման պատկերով կնիք-ուլունքներ Հայկական լեռնաշխարհում հանդես են գալիս Ք. ա. III հազարամյակի I կեսից և շարունակվում օգտագործվել II հազարամյակում: II հազարամյակի կեսերով թվագրվող հուշարձաններից նման կնիքներ հայտնի են Արթիկի N 625[38], Հառիճից[39], Նորատուսի, Լոռի բերդի N 7[40],

---

[33] **Деведжян С.** Лори-Берд 1. Результаты раскопок 1969-1973 гг., Е., 1981, с. 46, 53, таб. XIII/ 6-17, XIX/ 5, **նույնի՝** Լոռի-Բերդի 1989-1990 թթ. պեղումների արդյունքները, 1989-1990 թթ. Հայաստանի Հանրապետությունում դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջանի զեկուցումների թեզիսներ, Ե., 1991, էջ 42:

[34] **Խանզադյան Է.,** նշվ. աշխ., էջ 89, 104, աղ. XXVI-XXVII:

[35] **Есаян С., Калантарян А.,** նշվ. աշխ., էջ 102.

[36] **Петросян Л.А**. Раскопки памятников Кети и Воскеаска (III-I тыс. до н.э.), Е., 1989, с. 59.

[37] **Хнкикян О.** Раскопки в селе Неркин Геташен и вопрос появления железа в Армении (ԼՀԳ), 1993, N 3, с. 109, таб. I/ 5, **նույնի՝** Դամբարանադաշտեր Սիսիանի շրջանում (ԼՀԳ, 1984, N 9), աղ. II/8, **Բիյագով Լ.,** Աղավնաձորից և Զորաղբյուրից հայտնաբերված նորահայտ իրեր (ԼՀԳ, 1985, N 4), աղ. I/7, **Հովհաննիսյան Վ.,** նշվ. աշխ., էջ 109, նկ. 5, **Ավետյան Վ.,** նշվ. աշխ., էջ 262, աղ. 2, **Եսայան Ս.,** Զանգեզուրի վաղ հնագիտական հուշարձանները (ԼՀԳ, 1972, N 4, էջ 70), **նույնի՝** Древняя культура племен Северо-восточной Армении, с. 138, таб. 128/14:

[38] **Хачатрян Т.** Древняя культура Ширака, рис. 77/3.

Ներքին Գետաշենի N 1[41] դամբարաններից: Նմանատիպ պատկերագրությամբ կնիքները շարունակվում են օգտագործվել նաև II հազարամյակի վերջում և I հազարամյակի I քառորդում, որոնցից հայտնաբերվել են Սարուխանից[42], Գյումրիից[43] և այլ հուշարձաններից: Այս տեսակին պատկանող որոշ կնիքներ պատվել են կապտականաչավուն ջնարակով:

Կարասը: Պեղումներին նախորդած հողային աշխատանքների ժամանակ հայտնաբերվել է երկու կարաս: Դրանցից մեկը ծառայել է իբրև թաղման անոթ և նախատեսված է եղել կարասային թաղում կատարելու համար (նկ. 1/3): Պատրաստման որակով և տեսակով հայտնաբերված խեցանոթն իր սերտ զուգահեռներն ունի Կապանից մոտ 8 կմ դեպի հյուսիս-արևելք գտնվող Կերենի դամբարանադաշտից պեղված և VII-VI դդ. թվագրվող թաղման անոթների հետ[44]: Մյուս կարասն ունեցել է տնտեսական կիրառություն (նկ. 1/4): Երկու անոթներն էլ գտնվել են բեկոտված վիճակում, ունեն դարչնագույն մակերես, դուրս ճկված, կորացող եզրով շուրթ, փքված և դեպի հատակ նեղացող իրան և նեղ, հարթ հատակ:

Քրեղան: Պեղումներին նախորդած հողային աշխատանքների ժամանակ է հայտնաբերվել նաև կավե քրեղան (նկ. 1/6): Այն դարչնագույն, փայլեցրած մակերեսով, նեղ, հարթ հատակով, դեպի հատակ կորացումով նեղացող իրանով անոթ է, որն ունի փոքր-ինչ ներս հակված, կոր գագաթով շուրթ: Շրթից սկսվում և իրանի վրա ավարտվում է կիսագնդաձև, փոքր կանթը: Քրեղանի վերին մասում առկա են փորադիր զույգ գծազարդեր: Անոթն իր զուգահեռներն ունի Սյունիքի համաժամանակյա մյուս հնա-

[39] **Դևեջյան Ս.,** Նորահայտ գլանաձև կնիքներ Հառիճից, Հայաստանի հնագույն մշակույթը, 3, Ե., 2003, էջ 68, նկ. 1:

[40] **Деведжян С.** Лори-Берд 1, с. 37, таб. IX/3.

[41] **Xnkikyan O.** Syunik during…, plate, XX, il. 33, 35, p. 43.

[42] **Փիլիպոսյան Ա.,** Հայկական լեռնաշխարհի կնիքները Հին Արևելքի կնքագործության համակարգում, Ե., 1998, էջ 30, **Փիլիպոսյան Ա., Գևորգյան Լ., Զաքյան Ա.,** Սարուխանի «Պալի տակ» դամբարանադաշտի նյութական մշակույթը (մ.թ.ա. II-I հազարամյակներ), Ե., 2011, էջ 27:

[43] **Ավագյան Ի.,** «Սև ամրոց» հուշարձանի դամբարանադաշտը, Հին Հայաստանի մշակույթը, 3, Ե., 2003, էջ 129, նկ. 15:

[44] **Գնունի Ա., Խաչատրյան Գ., Միքայելյան Գ.,** Կերենի դամբարանադաշտի հյուսիսային բլրի պեղումները, Հին Հայաստանի մշակույթը, XIV, Ե., 2008, էջ 183:

վայրերից՝ Շիկահողից[45], Խնածախից[46], Տաթևից[47], Հարժիսից[48], Սիսիանից[49] հայտնաբերված քրեղանների մեջ, որոնք թվագրվում են Ք.ա. VIII-VI դդ.:

Կճուճներ: Հնավայրից հայտնաբերված հնագիտական նյութերի մեջ առկա է նաև երկու կճուճ, որոնցից մեկը հայտնաբերվել է հողային աշխատանքների ժամանակ: Այն փոքր, լայնաբերան, անկանթ, դուրս հակված շրթով և հարթ հատակով անոթ է, որի աղյուսագույն մակերեսին առկա են իրար զուգահեռ, ներճկված գծեր (նկ. 1/5): Երկրորդ կճուճը հայտնաբերվեց N 3 դամբարանից (նկ. 6): Անոթն ունի գորշադարչնագույն, մրապատ մակերես, գնդաձև իրան, դուրս ճկված և սրացումով ավարտվող շուրթ, նեղ, հարթ հատակ: Կավամանն անզարդ է, իրանին պահպանված են ուղղահայաց արված կիսաշրջանաձև երեք կանթեր:

Այսպիսով, կատարված տեղազննության և կարճատև պեղումների արդյունքներով պարզ է դառնում, որ նշված դամբարանները և դրանց պեղումներով հայտնաբերված նյութերը թվագրվում են Ք. ա. II-I հազարամյակի սահմանագծով: Այս թվագրման օգտին են խոսում հատկապես կնիքը, կորացումով ավարտվող բրոնզե ապարանջանները, ինչպես նաև դաշույնը:

Հողային աշխատանքների շնորհիվ հայտնաբերված կարասային թաղման խոշոր անոթը, տնտեսական կարասը, դարչնագույն կճուճը և քրեղանն իրենց զուգահեռներն ունեն ժամանակագրորեն ավելի ուշ՝ երկաթի լայն տարածման ժամանակաշրջանի՝ VII-VI դդ. թվագրվող նյութերի մեջ:

Հետագա ծավալուն պեղումները առավել հստակ ու ճշգրիտ կդարձնեն մեր պատկերացումները վերոնշյալ բնակավայրի սահմանների, դամբարանադաշտի թվագրության վերաբերյալ:

---

[45] **Խնկիկյան Օ.,** Հետախուզական պեղումներ Ղափանի շրջանում (ՊԲՀ, 1973, N 3, էջ 339), **նույնի՝** Պեղումներ Տանձավեր և Շիկահող գյուղերում, էջ 244, աղ. III/15, 18:

[46] **Խնկիկյան Օ.,** Պեղումներ Գորիսի շրջանում (ՊԲՀ, 1985, N 3, էջ 167, 173), աղ. II/ 37:

[47] **Ավետյան Վ.,** նշվ. աշխ., էջ 261, աղ. 1/7:

[48] **Խնկիկյան Օ.,** Պեղումներ Գորիսի շրջանի Տեղ գյուղում, Հնագիտական աշխատանքները Հայաստանի նորակառույցներում, էջ 100, աղ. XCVII/ 19-20:

[49] **Xnkikyan O.** Syunik during…, plate, XLII, il. 1, p. 62.

АРХЕОЛОГИЧЕСКИЕ РАБОТЫ В КАПАНЕ

АЛЕКСАНЯН Т.А., МИРИДЖАНЯН Д.Г, БАДАЛЯН А.К.

Резюме

Поселок Шаумян находится в 5 км к востоку от Сюникского областного центра Капан. Для эксплуатации месторождений в 2012 г. на данной территории были проведены земляные работы, в ходе которых были найдены кувшинные погребения, различные сосуды, каменные орудия, бронзовый кинжал и т.д. В связи с этим была снаряжена археологическая экспедиция с целью проведения частичных раскопок данной территории.

Сравнительное исследование найденных при раскопках погребальных сооружений, артефактов приводит к заключению, что они принадлежат к разным хронологическим периодам и датируются концом II тыс. и до середины I тыс. до н.э.

ARCHAEOLOGICAL WORKS IN KAPAN

T. ALEKSANYAN, D. MIRIJANYAN, H. BADALYAN

Abstract

The village Shahoumyan is situated ca. 5 km to the West of Syunik's regional center Kapan. In 2012, during mining works, pithos burials, various vessels, stone tools, a bronze sword, etc. were discovered here. Based on this circumstance, an archaeological expedition was organized with the aim to provide short termed rescue excavations in the mentioned mining territory.

Comparative study of burial structures and artefacts found during excavations demonstrate that they can be dated to various chronological niveaus between the end of the 2nd and mid 1st millennia BC.

ԿՀԲԸ-Ի ԵՎ ARMENIAN REFUGEES (LORD MAYOR'S) FUND-Ի ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (1915-1916 ԹԹ.)

XX դ. սկիզբը հայ ժողովրդի բազմադարյան պատմության ամենածանր շրջաններից է: Առաջին աշխարհամարտի տարիներին, ի թիվս հայկական և ռուսական հասարակական-բարեգործական այլևայլ կազմակերպությունների, արևմտահայ գաղթականությանը մարդասիրական օգնություն էին ցուցաբերում նաև արտասահմանյան զանազան ընկերություններ:

Այս ժամանակահատվածում և դրանից հետո Մեծ Բրիտանիայում ակտիվ գործունեություն ծավալեցին հայանպաստ մի շարք կազմակերպություններ, որոնցից մի քանիսը հիմնվել էին մինչև Առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը, իսկ մյուսներն իրենց գործունեությունն սկսեցին պատերազմի ընթացքում[1]:

Պատերազմի տարիներին ստեղծված բրիտանական ընկերություններից էին Հայկական կարմիր խաչի և փախստականների ֆոնդը կամ ինչպես հաճախ անվանել են՝ Միսս Ռոբինզոնի կոմիտեն[I], Հայ փախստականների (Լորդ քաղաքագլխի) ֆոնդը ("Armenian Refugees (Lord Mayor's) Fund") և Հայ որբեր ֆոնդը[II]: Նշված ընկերությունների հիմնական նպատակը Արևմտյան և Արևելյան Հայաստանում որբանոցներ, սննդակայաններ հիմնելը, հայ գաղթականներին դեղորայք մատակարարելը, ինչպես նաև մարդասիրական այլ աշխատանքներ իրականացնելն էր: Նրանց աջակցությամբ գաղթականների համար արհեստանոցներ էին ստեղծվել Թիֆլիսում, Երևանում, Իգդիրում, Նոր Բայազետում, Դիլիջանում և այլ վայրերում[2]:

---

[1] Տե՛ս **Պողոսյան Բ.,** Հայանպաստ շարժումը Մեծ Բրիտանիայում (1914-1923 թթ.), Ե., 2005:

[2] **Акопян С.** Западная Армения в планах империалистических держав в период Первой мировой войны, Е., 1967, с. 92.

Հայ փախստականներին օգնություն տրամադրող բրիտանական կազմակերպություններից գլխավորը Հայ փախստականների (Լորդ քաղաքագլխի) ֆոնդն էր, որի ստեղծման մասին որոշումն ընդունվեց Լորդերի պալատի կողմից 1915 թ. հոկտեմբերի 6-ին, իսկ հոկտեմբերի 15-ին այդ որոշման մասին հայտարարվեց Լոնդոնում, Լորդ քաղաքագլուխ Չարլզ Ջանսթոնի նախագահությամբ հրավիրված ցույցի ժամանակ: Ֆոնդը հիմնելու գործում մեծ ներդրում ունեին Լոնդոնի՝ ապագա Լորդ քաղաքագլուխ Կարլ Ռեյկֆիլդը, հայանպաստ գործունեությամբ աչքի ընկնող պառլամենտականներ Անեուրին Ուիլյամսը, Նոյել Բաքսթոնը և ուրիշներ[3]: Նշված բարեգործական ընկերությունները հանգանակություններ էին անում տարբեր միջոցներով, ինչպես, օրինակ, Մեծ Բրիտանիայի խոշոր քաղաքներում, այսպես կոչված, «Հայկական դրոշի օրեր» (“Armenian flag days”) կազմակերպելով: Դրանց ընթացքում վաճառվում էին հայկական դրոշներ, վաճառքից գոյացած գումարներն ամբողջովին տրամադրվում էին ֆոնդին[4]:

Ուշադրության է արժանի այն փաստը, որ անգլիական կառավարությունը, ոչ մի ֆինանսական աջակցություն չէր հատկացնում ֆոնդերին, բայց ամբողջությամբ վերահսկում էր նրանց դրամական միջոցների շրջանառությունը: Նույնիսկ ընդունվել էր մի օրենք, որի համաձայն, ֆոնդերը պետք է հաշվետվություն ներկայացնեին դրամական միջոցների շրջանառության վերաբերյալ, և եթե այն չէր բավարարում կառավարությանը, վերջինս իրավունք ուներ կասեցնելու դրանց գործունեությունը:

Լոնդոնի Լորդ քաղաքագլխի ֆոնդը գրեթե ստեղծման պահից սկսեց միջոցներ փոխանցել Կովկաս: Այն առավել սերտ հարաբերություններ էր հաստատել Կովկասի հայոց բարեգործական ընկերության (ԿՀԲԸ)[III] և նրան կից գործող Հայկական կենտրոնական կոմիտեի (ՀԿԿ)[IV] նախագահ Սամսոն Հարությունյանի[V] հետ: 1916 թ. գարնանից սկսած, երբ Արևմտյան Հայաստանում ավելի նշանակալի դեր ստանձնեցին Հայաստանի վերաշինման հանձնաժողովը և Հայկական գյուղատնտեսական և արհեստագործական ընկերությունը, անգլիացիները որոշեցին համագործակցել նրանց հետ:

---

[3] Նույն տեղում, էջ 90, **Պողոսյան Բ.,** նշվ. աշխ., էջ 86: Անգլիական օգնության կոմիտեի (Անգլկոմ) գործունեությունը Հայաստանում 1920-ական թվականներին (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), կազմող՝ **Ավետիսյան Ս.Ռ.,** Ե., 2014, էջ 3-4:

[4] Համբաւաբեր, Թիֆլիս, 18.XII.1916, № 51, էջ 1622:

Լորդ քաղաքագլխի ֆոնդի գործադիր կոմիտեի նախագահ Անեուրին Ուիլյամսի՝ 1915 թ. դեկտեմբերին ՀԿԿ-ին ուղարկած հեռագրից տեղեկանում ենք, որ վերջինիս հատկացվել է 37.312 ռուբլի՝ հայ փախստականներին օգնելու համար[5], իսկ մեկ այլ հեռագրից հայտնի է դառնում, որ նրան փոխանցվել է ևս 74.625 ռուբլի[6]: 1916 թ. հունվարին Լորդ քաղաքագլխի ֆոնդը Վոլժսկո-Կամսկի բանկի միջոցով Ս. Հարությունյանին փոխանցել է 80.750 ռուբլի՝ ՀԿԿ-ին հանձնելու համար[7], իսկ փետրվարին՝ 64.000 ռուբլի[8]:

Հայ գաղթականությանն աջակցելու նպատակով 1916 թ. գարնանը ֆոնդն իր պատվավոր քարտուղար Հարոլդ Բաքսթոնի գլխավորությամբ կազմակերպում է 8 հոգուց բաղկացած մի խումբ, որն ապրիլին ժամանում է Կովկաս: Առաքելության՝ Թիֆլիս ժամանելուց հետո, ապրիլի 18-ին, տեղի ունեցավ ՀԿԿ-ի արտակարգ նիստը, որի ժամանակ նախագահ Ս. Հարությունյանը ներկայացրեց ՀԿԿ-ի դրամական հաշիվները: Հրապարակված տվյալների համաձայն՝ 1915 թ. դեկտեմբերից մինչև 1916 թ. ապրիլի 1-ը կոմիտեն տարբեր աղբյուրներից ստացել էր 841.000 ռուբլի, որից 252.000-ն ուղարկել էր Լորդ քաղաքագլխի ֆոնդը[9]:

Հրապարակվող փաստաթղթերը, որոնք վերաբերում են նշված բարեգործական հաստատություններին հայ փախստականներին օգնելու նպատակով փոխանցված դրամական միջոցներին, պահվում են Հայաստանի ազգային արխիվում: Վավերագրերը տպագրվում են առաջին անգամ: Կատարել ենք ուղղագրական և կետադրական որոշ շտկումներ: Միջամտություններն արել ենք ուղիղ փակագծերում: Փաստաթղթերը վերնագրել ենք մենք:

ԱԴԱՄՅԱՆ Ն.Ս.

---

[5] Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 28, ց. 1, գ. 423, թ. 13:

[6] Նույն տեղում, թ. 17, 21-22:

[7] Համբավաբեր, 10.I.1916, № 3, էջ 10, ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 423, թ. 18, 70:

[8] Համբավաբեր, 7.II.1916, № 7, էջ 210, ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 423, թ. 55:

[9] Համբավաբեր, 24.IV.1916, № 17, էջ 518-519: Տե՛ս նաև **Տերոյան Վ.,** Իմպերիալիստական ծիծեռնակներ. Միսիոներա-բարեգործական կազմակերպությունների աշխատանքը Մերձավոր Արևելքում և Անդրկովկասում, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Ռ.Օ. Սահակյանի, Ե., 2008, էջ 12, **Акопян С.,** նշվ. աշխ., էջ 93-95, **Պողոսյան Բ.,** նշվ. աշխ., էջ 89-90:

№ 1
ՀԵՌԱԳԻՐ՝ ՈՒՂՂՎԱԾ ԿՀԲԸ ՆԱԽԱԳԱՀ ՍԱՄՍՈՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԼՈՐԴ ՔԱՂԱՔԱԳԼԽԻ ՖՈՆԴԻՑ ԿՈՄԻՏԵԻՆ ԳՈՒՄԱՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

December 21st 1915
London

Samson Aroutanian Esq.[VI],
The Central Armenia War Victims Relief Committee,
Tiflis

Dear Sir

We have the pleasure to inform you that we yesterday cabled you the sum of roubles 37.312 for the relief of the Armenian refugees now in and around Tiflis.

We shall be glad to receive your acknowledgment of the money in due course.

Yours faithfully,
[Rita Retuwed]
Secretary

ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 423, թ. 67: Մեքենագիր: Բնագիր:

№ 2
ԱՆՈՒՐԻԵ ՈՒԻԼՅԱՄՍԻ ՀԵՌԱԳԻՐԸ՝ ՈՒՂՂՎԱԾ ՍԱՄՍՈՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻՆ ՑՈՒՑԱԲԵՐԱԾ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

January 18th, 1916
London

Samson Aroutounian, Esqr.,
The Central Armenia War Victims Relief Committee,
Tiflis

Dear Sir

We have the pleasure to inform you that we yesterday cabled you the sum of 80.750 roubles for the relief of the Armenian refugees now in and around Tiflis.

We shall be glad to receive your acknowledgement of the money in due course.

Yours faithfully,
Aneurin Williams

ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 423, թ. 49: Մեքենագիր: Բնագիր:

№ 3
ՀԿԿ-Ի ՆԱՄԱԿԸ ԼՈՐԴ ՔԱՂԱՔԱԳԼԽԻ ՖՈՆԴԻՆ ՍՏԱՑՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ԴՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

January 20, 1916
Tiflis

Aneurin Williams Esq. M.P.
Chairman of Armenian Refugees (Lord Mayor's) Fund House of Commons
London

Dear Sir,

We have much pleasure in acknowledging the reiceipt of your two telegrams of 24 December and 15 January conveying to us the sums of 37.712 and 80.785 roubles respectively.

We sincerely thank you for these two sums you have kindly forwarded to support us in our work of relieving hundreds and thousands of homeless refugees.

The Armenian Central War Victims Relief Fund consisting of 24 members and acting under the high presidency of his Holiness the Catholicos, was formed in September 1914 as an adjunct to our Armenian benevolent society formed some 40 years ago possessing at present some 74 branches throughout the Caucasus.

We began the relief work of our compatriots from Turkey in December 1914 when during the Russian retreat from the invaded Turkish territory, some 60.000 Armenians followed the Russian army. But of course we felt the great

pressure after the disastrous retreat of 250.000 Armenians from Van and Melazgert in August 1915. It was a terrible situation to cope with and it required much larger means than we possessed to deal with the tragedy.

At present there are more than 200.000 refugees spread over the various centres in the Caucasus, the greatest refugees camps being Erivan (28.000), Etchmiadzin (25.000), Alexandropol (30.000) etc. All these unfortunate countrymen of ours are devoid of all necessaries of life having left their homes under terrible conditions.

As a rule they get 15 kopecks per day as relief money: and as the cold weather basset in, they have been receiving warm cilthing and some bedding. This allowance of 15 kopecks owing to high prices now prevailing, would hardly suffice to buy mere daily bread (pound of bread costs 7 kopecks).

As our two combined societies possess organized branches throughout all towns and even larger villages in Transcaucasia, we have been able to attend to the relief of our refugees well to the measure of the means at our disposal.

One of the main concerns of our committees has been the care of thousands of orphan children left in miserable circumstances in consequence of their fathers and mothers being killed by Turks or dead from starvation and disease. Several hundred such orphans died from lack of care before they were rescued. We have been keeping 9 orphanages in Dilijan containing 800 orphans, 8 at Tiflis with more than 850 orphans, 5 at Erivan with 700 orphans, 4 at Etchmiadzin with 370 orphans, and one each at Kars, Nor-Bayasid etc. There are still some 5.000 orphans whom we have not been able to accommodate.

On the whole the conditions of the refugees are far from being satisfactory. Even now thousands of them have not yet received any warm clothing or bedding. Diseases due to bad housing conditions, unsufficient food and other unfavourable circumstances continue to decimate the remnant of the Turkish Armenians.

The devastation of Turkish Armenia on such a great scale seems to be unknown to the outside world.

People who were once well-to do stand in silent anxions crowds waiting their turn to get the doles of weekly remettance or flour. Thousands are living in stables considered to be unfit even for animals, or are sleeping on the bare

mud basement floors. Women with children in their arms have walked hundreds of miles to escape the horrors of Turkish brutality and have arrived in their destination so dazed and tired that the joy of seeing a friendly...[VII]

ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 423, թ. 28-29: Մեքենագիր: Բնագիր:

№ 4

ՀԵՌԱԳԻՐ՝ ՈՒՂՂՎԱԾ ԿՈՄԻՏԵԻՆ ԼՈՐԴ ՔԱՂԱՔԱԳԼԽԻ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Feb[ruary] 8th, 1916
London

Samson Aroutounian Esqr.
The Central Armenia War Victims Relief Committee,
Tiflis

Dear Sir

We have the pleasure to inform you that we yesterday cabled you the sum of 64.000 roubles for the relief of the Armenian refugees now in and around Tiflis.

We shall be glad to receive your acknowledgement of the money in due course.

Yours faithfully,
Aneurin Williams
Chairman.

ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 423, թ. 16: Մեքենագիր: Բնագիր:

№ 5
ՆԱՄԱԿ՝ ՈՒՂՂՎԱԾ ԱՆՈՒՐԻԵ ՈՒԻԼՅԱՄՍԻՆ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻՆ ՑՈՒՑԱԲԵՐԱԾ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

7 March 1916
N 531
Tiflis

Aneurin Williams Esq. M.P.
Chairman of the Armenian Refugees (Lord Mayor's) Fund
House of Commons.
London

Dear Mr. Williams,

We are much obliged to you for the 74.750 roubles cabled by your Fund and which we have duly received.

We express to your Fund also our deep gratitude for the sum of 80.750 roubles cabled by you on the 21st January last acknowledged by us on the 29th of the same.

Our Committee has under token the lask of repatrioting the refugees in their ruins as much as the military conditions are likely to secure their safety. The whole country in Erzerum, Mush, Bitlis etc. already occupied by our armies, is entirely devastated, and every piece of property, furniture or implement is either roped or destroyed. To enable refugees to go home and give them a chance of rebuilding their ruins, we are supplying them to the measure of the means at our disposal with agricultural requisites: seed corn, ploughs and cattle, as well as some means of erecting some sort of shelter for the next winter. No foodstuffs districts. We are trying to provide food for the able bodied male workers who are burning to go back and start cultivating their lauds, until the harvests is gathered next August.

We are urging as much as we can that women and children who are absolutely unable to help their men in the field warkspould he left here and provided with relief allowances until it is considered safe for them to join their breadwinners.

The Russian Army is advancing along the coast of the Black Sea. Rizeh was captured a few days ago and a telegram is just to hand from our agent

informing us that 60 Armenian orphans have already been rexued at Rizeh and that another lot of 200 Armenian women and children left behind by their Turkish opprenon during their hasty flight are on their way to Batum. We will at once send men to gather their ontraged remnant of our compatriots and give them every possible comfort they have been needing for such a long time. They are reported to have been shamefully ill-treated worn-out and almost left on the verge of starvation, your telegram inquiring whether it is desirable to send English doctors and nurses is most encouraging. As I wired you yesterday such medical help as you can send will greatly oblige us during this direst misery.

It demonstrates once more that in this saddest hour of our national history the generous British nation expressing itself through your Fund is kindly stretching us a hand to save Armenians so terribly reduced during the last year.

We are profoundly grateful for the help you propose to send.

I am [Samson Aroutounian], Sir
Yours very truly.

ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 423, թ. 26-27: Մեքենագիր: Բնագիր:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[I] **Հայկական կարմիր խաչի և փախստականների ֆոնդի** (“Armenian Red Cross and Refugees Fund”) հիմնադիր համաժողովը տեղի ունեցավ 1914 թ. դեկտեմբերի 18-ին: Ֆոնդի ստեղծումը հանձնարարված էր Հայկական ընկերության (“The Armenian Society”) (1913 թ.) հիմնադիր Էմիլի Ռոբինզոնին և քարտուղար Կատս Բոնին: Հայկական կարմիր խաչի և փախստականների ֆոնդը պատերազմի տարիներին Մեծ Բրիտանիայում ստեղծված անգլիական առաջին կազմակերպությունն էր, որն օգնում էր արևմտահայ գաղթականներին: Նախագահը լորդ Ջեյմս Բրայսի կինն էր [տե՛ս **Акопян С.,** նշվ. աշխ., էջ 90, **Պողոսյան Բ.,** Բրիտանական հայանպաստ կազմակերպությունների օգնությունը հայ փախստականներին Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին (Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր, 2003, № 8, էջ 31-32)]:

[II] **Հայ որբեր ֆոնդը** (“Armenian Orphans Fund”) հիմնվել է (11/24.III.1917) Մանչեստրում: Ֆոնդում ընդգրկված էին անվանի գործիչներ, որոնք մեծ խանդավառությամբ դրամ էին հանգանակում հայ որբերի օգտին, նախագահն էր Մանչեստրի քաղաքագլուխը՝ լորդ Ջոն Մուգը, պատվավոր քարտուղարն էր Մանչեստրի հայ հա-

մայնքի ներկայացուցիչ Ա. Մանաշյանը [տե՛ս Համբավաբեր, XI.VI.1917, № 22, էջ 480: **Акопян С.,** նշվ. աշխ., էջ 91, **Պողոսյան Բ.,** նշվ. աշխ., էջ 96-97]:

[III] **Կավկասի Հայոց Բարեգործական ընկերություն** – հիմնվել է բժիշկ Բագրատ Նավասարդյանի նախաձեռնությամբ (15.XI.1881) Թիֆլիսում: Նպատակը 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի հետևանքով Կովկաս գաղթած հայերին օգնելն էր: Ինչպես նաև պետք է լուսավորություն տարածեր և նյութապես աջակցեր Կովկասի ու Արևմտյան Հայաստանի հայությանը: ԿՀԲԸ-ն օժանդակել է հայ գրողներին, հրապարակախոսներին, նկարիչներին, երաժիշտներին և այլոց: Թոշակ է տրամադրել Ռուսաստանի և Եվրոպայի տարբեր բուհերում, նաև Ներսիսյան դպրոցում և Գևորգյան ճեմարանում սովորող հայ ուսանողներին: Ընկերությունը ֆինանսավորում էր 140 դպրոց, հրատարակում հայերեն գրքեր, որոնց թվում՝ դասագրքեր (անվճար): Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին և դրանից հետո օգնել է հայ փախստականներին ու գաղթականներին, բացել է դպրոցներ, հիվանդանոցներ, որբանոցներ և ապաստարաններ: Միջոցներ է հայթայթել հայ ռազմագերիներին օգնելու համար: 1915 թ. դեկտեմբերից հրատարակել է «Համբավաբեր» շաբաթաթերթը: Վրաստանում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո՝ 1921 թ. մարտի 2-ին, ԿՀԲԸ-ն դադարեցրել է գործունեությունը:

[IV] **Հայկական կենտրոնական կոմիտե** – հիմնադրվում է 1914 թ. սեպտեմբերի 14-ին, ԿՀԲԸ-ն կից՝ ՀԿԿ-ի փախստականներին և կամավորներին օգնություն ցույց տալու նպատակով:

[V] **Սամսոն Ստեփանի Հարությունյան** (1875–1941) – իրավաբան, հասարակական-քաղաքական գործիչ, ԿՀԲԸ նախագահ, Հայոց ազգային բյուրոյի անդամ: 1914–1916 թթ. ակտիվ մասնակցություն է ունեցել հայ կամավորական շարժմանը: Հայ ժողովրդական կուսակցության փոխնախագահ, 1918–1919 թթ.՝ ՀՀ արդարադատության նախարար:

[VI] Esq. (Esquire) – էսքուայր՝ պատվավոր տիտղոս Անգլիայում, նամակագրության մեջ Esq. հապավումը գործածվում է նաև *ազնվազարմ պարոն* իմաստով:

[VII] Բացակայում է մեկ էջ:

ԳՐԱԽՈՍԱԿԱՆՆԵՐ

S. GASPARYAN, SH. PARONYAN, A. CHUBARYAN, G. MURADYAN
Raphael Lemkin's Draft Convention on Genocide and the 1948 UN Convention (a comparative discourse study), Yerevan, Yerevan State University Press, 2016, 176 p.



The book "Raphael Lemkin's Draft Convention on Genocide and the 1948 UN Convention (a comparative discourse study)", written by S. Gasparyan, Sh. Paronyan, A. Chubaryan, G. Muradyan, represents a great achievement, so actual and important for legal scholars to realize how legal texts are made, to what extent the choice of the linguistic material turns out to be fundamental for preserving political correctness on the one hand and avoiding distortion of the subject matter on the other.

The comparison of the two texts of the same document, Raphael Lemkin's Draft Convention and the UN Convention on Genocide, which has been carried out from various linguistic angles – linguostylistics, pragmalinguistics, semasiology, grammar, etc., as well as words, word combinations, supraphrasal unities and texts, reveals the linguistic, hence the contextual damage caused to the final text of the Convention – weakening of the communicative power of the text which sometimes results in the lack of determination to resolve the important question of prevention and punishment of the crime of genocide.

The draft of the Convention, the so-called Lemkin's draft, is a legal text written by a person whose entire family perished in concentration camps in Poland. Thus, genocide was in R. Lemkin's experience, and he knew very well what he was drafting. But the official UN text of the Convention, after being discussed by representatives of different states, was finalized with a kind of polished moral, and not infrequently linguistic elements were narrowed down and deprived of their full semantic content sometimes diverging the final text from the actual intention of the drafter. This might be one of the reasons, why the idea of

cultural genocide was, largely speaking, omitted from the official UN text of the Convention. As rightly pointed out in the book and as the analysis shows: "Albeit the mentioned part of the UN Convention does draw attention to the damage caused to humanity (has inflicted great losses on humanity), it does not indicate the losses in the form of cultural and other contributions represented by human groups. This must be one of the reasons why it sounds more generalized, hence less distinct"[1]. It is a fact that often the English texts are not properly translated into other languages. French is a case to be indicated. In French "indiquer" means less than the English word "order". Reading the same legal text in different languages sometimes reveals differences in the meaning of the words. This, of course, can on the one hand be accounted for by the objectively unavoidable differences between languages. However, there are also cases of inaccuracy in translation, let alone distortions introduced into the translation intentionally. Albeit the problem of translation is not in the centre of the researchers' attention, for they concentrate on the discourse features of the two documents in question, their study is convincing and very useful, particularly for lawyers who do not always read legal texts from a linguistic point of view, while this is a very important aspect of any text and a legal text in particular.

There are quite many investigations concerning the analysis of the legal concept of genocide and the term created and put into circulation by R. Lemkin. But the description and investigation of the linguistic aspect of the text of the Genocide Convention has so far leaved much to be drsired. That is why it is my pleasure to mention that this book by S. Gasparyan, Sh. Paronyan, A. Chubaryanand G. Muradyan is rather unique and important not only for lawyers, but also for those involved in the analysis of legal texts at large.

The comparative analysis of both texts of the Convention leads us to the conclusion that, depending on the author and his intentions, the same text may have a different linguistic, let alone legal content. This is the authors' message and it is very valuable to everybody, interested in the issue of genocide. This book is undoubtedly a valuable item for all those who deal with the crime of genocide.

As Lemkin wrote in his autobiography, it was through his challenge that he became initially sure the delegates would not produce a genocide convention written according to "the Nazi experience," which "was not a sufficient basis for a

[1] Cf. **S. Gasparyan, Sh. Paronyan, A. Chubaryan, G. Muradyan.** Raphael Lemkin's Draft Convention on Genocide and the 1948 UN Convention (a Comparative discourse study), Yerevan, YSU Press, 2016, p. 75.

definition of genocide for international purposes." Jurists "cannot describe a crime by one example," Lemkin wrote, but must "draw on all available experiences of the past …The formulation must be made valid for all times, situations, and cultures"[2]. Of course he realized, that his task was basic, though very hard, indeed. He understood very well that he would have to fight persistently to preserve as much of his concept of genocide as possible in the face of the narrow interests of the delegations on the Sixth Committee.

Once the draft was accepted, the Genocide Convention was in the hands of the world's politicians and statesmen – people who, as R. Lemkin would describe, "lived in perpetual sin with history" and could hardly be trusted with "the lives of entire nations"[3]. The drafting of the Convention and the procedure of lobbying for it, so well described in the book under review, were recently referred to in two other publications that came out in the USA[4] and Great Britain[5]. However the value of the present book by S. Gasparyan, Sh. Paronyan, A. Chubaryan, and G. Muradyan cannot be overestimated for the approach to the study of the question of Genocide, elaborated by S. Gasparyan in her book „The Armenian Genocide: A Linguocognitive Perspective" (Yerevan, YSU Press, 2014) and applied to the investigation of the text of Genocide Convention by her research group, is very important and timely, particularly with the enhancement of the linguistic aspect of the research which seems to be rather fruitful in Genocide Studies and the investigation of legal documents at large. Of particular interest and praise are the frequency count diagrams in the final chapter of the book summarizing the basic features of the choice and arrangement of words and word-combinations in the discourses of both the documents – the Draft Convention and the UN Convention on Genocide and bringing out very valuable instances of vialations as far as the main purport of the UN Convention on Genocide is concerned.

I apprerciate the publication of this book very highly.

Dr. Ewa Salkiewicz-Munnerlyn
Polish diplomat at the Ministry of Foreign Affairs in Poland

[2] **Lemkin R.** Autobiography, Pagination Unclear. Cf. Lemkin R. Totally Unofficial, Yale University Press, 2013, p. 152.

[3] Նույն տեղում, էջ 115:

[4] **Irvin-Erickson D.**The Life and Works of Raphael Lemkin: A Political History of Genocide in Theory and Law, Philadephia, 2014.

[5] **Sands Ph.** East West Street: On the Origins of „Genocide" and „Crimes against Humanity", New York, 2016.

«ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ԱԶԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ԲԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ. ՄԻՋԳԻՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ». ՀՀ ԳԱԱ ՀԱԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ 15-ՐԴ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԸ

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում 2017 թվականի նոյեմբերի 8-10-ը տեղի ունեցավ երիտասարդ գիտնականների 15-րդ միջազգային գիտաժողովը *«Հնագիտություն, ազգաբանություն, բանագիտություն. Միջգիտակարգային մոտեցումներ»* խորագրով: Գիտաժողովի հիմնական նպատակն էր շարունակել ապահովել այն գիտական հարթակը, որը կհամախմբեր Հայաստանի ու այլ երկրների երիտասարդ հետազոտողների՝ ներկայացնելու իրենց հետազոտության նյութը և արդյունքները, փոխանակվելու մտքերով, մասնագիտական փորձառությամբ ու գիտելիքներով տվյալ դաշտի այլ հետազոտողների հետ և հնարավորություն ստանալու ակտիվ քննարկումների միջոցով գտնել ու զարգացնել նաև տվյալ թեմային վերաբերող այլ մոտեցումներ: Գիտաժողովը կրում էր միջգիտակարգային բնույթ՝ ներառելով հնագիտություն, պատմություն, աղբյուրագիտություն, մշակույթ, երկրաբանություն, ազգաբանություն, մարդաբանություն, բանագիտություն գիտաճյուղերը:

Եռօրյա գիտաժողովի 12 նիստերի ընթացքում լսվեց 40 զեկուցում, որոնք ներկայացրին երիտասարդ հետազոտողներ Հայաստանի, Արցախի և արտասահմանի (Վրաստան, Ռուսաստան, Շվեյցարիա, Գերմանիա) տարբեր գիտական ու մշակութային հաստատություններից: Գիտաժողովի ընթացքում հնարավոր եղավ կազմակերպել նաև առցանց զեկուցում:

Առաջին օրը բացման խոսքով հանդես եկավ և մասնակիցներին ու լսարանին ողջունեց ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Պավել Ավետիսյանը: Գիտաժողովի մասնակիցներին ու հատկապես նրանց, ովքեր առաջին անգամ էին գիտական զեկուցումներով հանդես գալու, ողջունեց նաև

ինստիտուտի Երիտասարդ գիտնականների խորհրդի նախագահ, պ.գ.թ. Աստղիկ Բաբաջանյանը:

Գիտաժողովն աշխատում էր երեք ուղղությունով՝ հնագիտություն, ազգաբանություն՝ իր առանձին ենթաբաժիններով, և բանագիտություն:

Առաջին օրը նվիրված էր հնագիտությանը. ելույթները խմբավորվեցին ըստ ժամանակագրական սկզբունքի՝ պալեոլիթից մինչև ուշ միջնադար: Թեմաները հետևյալն էին. *«Հայաստանի միջին պալեոլիթի ոչ օբսիդիանային արտադրահամալիրները և դրանց կիրառական նշանակությունը»* (Հայկ Հայդոսյան, ՀԱԻ), *«Վանակափի հումքի օգտագործման սկզբունքները բրոնզի դարում՝ pXRF վերլուծությամբ»* (Ալեքսան Ջուհարյան, ՀԱԻ), *«Անապափի օդապարուկների» կառուցվածքն ու ձևերը»* (Մարիամ Շախմուրադյան, ՀԱԻ), *«Հին Հայաստանի ուշ բրոնզի դարաշրջանի դամբարանային համալիրների սոցիալ-ժողովրդագրական և սեռատարիքային վերլուծությունների խնդիրները՝ ըստ Լճաշենի դամբարանադաշտի»* (Բենիկ Վարդանյան, ՇՀՀԿ), *«Հարավկովկասյան բրոնզե գոտիների ֆենոմենը. պատկերագրություն և հնագիտական համատեքստ»* (Սոնա Մանուկյան, ՀԱԻ), *«Արդաբիլյան խեցեղեն. նախնական դիտարկումներ»* (Նարինե Սարգսյան, ՀԱԻ), *«Նորահայտ մարդակերպ կոթողներ Նոր Կարմիրավան գյուղից (պեղումների նախնական արդյունքները)»* (Նժդեհ Երանյան, «Պատմական միջավայրի պահպանության պետական ծառայություն», ԱՀ), *«Գառնիի հոնիական տաճարը»* (Արմենուհի Մկրտիչեան, Ժնևի համալսարան):

Հնագիտության բաժնի վերջին երկու նիստերը վերաբերում էին միջնադարյան ժամանակաշրջանի տարաբնույթ խնդիրներին և նորահայտ վիմագրական սկզբնաղբյուրների շրջանառությանը. *«Սոթք 1. Դվին-Պարտավ առևտրական ճանապարհը վերահսկող ամրոցը»* (Ավետիս Գրիգորյան, ՀԱԻ), *«Անանուն ֆոլիսների ժամանակագրության որոշ ճշգրտումներ»* (Հասմիկ Հովհաննիսյան, ՀՊԹ), *«Դաշտադեմի ամրոցի 2015 թվականի պեղումներից հայտնաբերված կենցաղային քարե առարկաների փնտրեսական բաղադրիչի շուրջ»* (Արսեն Մարտիրոսյան, ՀԱԻ), *«Ռուսաստանի հին քաղաքների բնակչության ուսումնասիրությունը, հնագիտական պեղումներով հայտնաբերված մարդաբանական նյութերի հիման վրա»* (Աննա Տարասովա, Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի հնագիտության ինստիտուտ), *«Գնթունյաց իշխանական տան փիրույթները՝ ըստ տապանաքարային վկայագրերի»* (Դիաննա Միրիջանյան, Սոսե Աղայան, ՀԱԻ), *«Անգեղակոթի մեմորիալ հուշարձանները և Վարդան Մամիկոնյանի գերեզմանի տեղորոշման խնդիրը»* (Տիգրան Ալեքսանյան, ՀԱԻ), *«Քաղաքային և վանական գերեզմանատների*

հնագիտական ուսումնասիրությունն արդի Ռուսաստանում» (Ելենա Վասիլևա, Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի հնագիտության ինստիտուտ), *«Նորահայտ տապանաքարեր Հավուց թառում»* (Արման Նալբանդյան, ՀԱԻ), *«Նորահայտ վիմագրեր Մարտունու տարածաշրջանից»* (Սուսաննա Ադամյան, ՀԱԻ):

Այնուհետև գիտաժողովի աշխատանքները շարունակվեցին ազգաբանության ուղղությամբ՝ բաժանվելով թեմատիկ խմբերի: Առաջին թեմատիկ խմբում միավորվեցին հետևյալ զեկուցումները. *«Լավաշաթխման ավանդույթների փոփոխությունները Վայոց ձորում»* (Ռուզաննա Ծատուրյան, ՀԱԻ), *«Պղնձագործ վարպետաց սիրիահայոց դպրոցը»* (Նարինե Եղիկյան, Սարդարապատի Հայոց ազգագրության թանգարան), *«Հայ ավանդական պարերը իրանահայերի շրջանում. Փերիա գավառ (բանահավաք Ռուդիկ Հարոյանի գրառած պարերի հիման վրա)»* (Հայարփի Անանյան, ՀՊՄՀԹ), *«Սիրիահայերի ժամանցի կազմակերպման առանձնահատկությունները ՀՀ-ում»* (Գայանե Հակոբյան, ՀԱԻ): Հաջորդ թեմատիկ խմբում ներկայացվեցին *«Հարավարևելյան Թուրքիան՝ որպես «Դիմադրության մնեմոնիկական տարր». տեղի հիշողության փոխադրիչները և Հայոց ցեղասպանությունը (1915-1916)»* (Դավիդ Լեոպոլդ, Բեռլինի սոցիալական գիտությունների շրջանավարտների դպրոց), *«Սնունդ հայթայթելու միջոցները՝ որպես «բարոյական դիմադրության» արտահայտություն Հայոց ցեղասպանության ժամանակ. երեխաների փորձառությունները»* (Հասմիկ Գրիգորյան, ՀԱԻ), *«Թուրքացված վրացիների ինքնության ընկալումները Գումերսբախում (Գերմանիա)»* (Նինո Օքրոսցվարիձե, Թբիլիսիի Իլիա պետական համալսարան), *«Թուրքիայի մշակութային քաղաքականությունը Վրաստանում»* (Աննա Նալբանդյան, ԵՊՀ), *«Էթնիկության դրսևորումները Տավուշի սահմանային համայնքներում»* (Գարեգին Գրիգորյան, ՀԱԻ), *«2017 թ. նախընտրական քարոզարշավները Երևանի բակերում և դրանց առանձնահատկությունները»* (Լևոն Մարգարյան, ՀԱԻ): Մյուս թեմատիկ խմբում հավաքվել էին խորհրդային ժամանակաշրջանին առնչվող մշակութաբանական ուղղվածության զեկուցումներ. *«Խորհրդային Հայաստանում իշխանությունների դեմ բռնի և ոչ բռնի պայքարի դրսևորումները. խորհրդային դիմադրության առօրյան»* (Անահիտ Ղարիբյան, ՀԱԻ), *«Հաղորդակցման ստրատեգիաները աքսորյալների կողմից իշխանական կառույցներին ուղղված նամակներում»* (Հասմիկ Կնյազյան, Սանկտ Պետերբուրգի Եվրոպական համալսարան), *«Բանտի ազգագրությունը, ըստ Փարաջանովի ստեղծագործությունների»* (Անահիտ Միքայելյան, Փարաջանովի թանգարան), *«Մշակույթի տները խորհրդային և հետխորհրդային Հայաստա-*

նում. իմաստային և գործառութային փոխակերպումները և ժառանգականությունը» (Հայկուհի Մուրադյան, ԵՊՀ), *«Կուլտուրականության» դրսևորումները ուշխորհրդային բնակարանի ներսույթում. գրադարանը և դաշնամուրը սովետահայ մարդու առօրեականությունում»* (Լիլիթ Մանուկյան, ՀԱԻ): Ազգաբանությանը վերաբերող վերջին նիստում ներկայացվեցին *«Երբ մոգությունն անհայտանում է. ծիսական շրջանի տեսության առաջարկման փորձ»* (Սմբատ Հակոբյան, ՀԱԻ), *«Ծոմը հայոց մեջ (պատմական համառոտ ակնարկ)»* (Հասմիկ Աբրահամյան, ՀԱԻ) զեկուցումները:

Գիտաժողովի երրորդ օրվա վերջին հատվածը վերաբերում էր բանագիտությանը: Լսվեցին վեց զեկուցումներ հետևյալ թեմաներով. *«Հանցանքի և պատժի դրսևորումները հայ ժողովրդական հեքիաթներում»* (Քրիստինա Այվազյան, ՀԱԻ), *«Հայ ժողովրդական կենդանապատում հեքիաթների ժանրային-կառուցվածքային առանձնահատկությունների շուրջ»* (Լիլիթ Մկրտումյան, ՀԱԻ), *«Գործողության պոեզիան «Սասնա ծռեր» հերոսավեպի Մոկաց պատումներում»* (Աննա Պողոսյան, ՀԱԻ), *«Սնահավատական զրույցներ»* (Հասմիկ Գալստյան, ՀԱԻ), *«Թագվորի՛ մեր, դու՛րս արի» հարսանեկան կատակերգի հորինվածքը և գործառնականությունը ծեսում»* (Նվարդ Վարդանյան, ՀԱԻ), *«Բանահյուսական տարբեր ժանրերի ազդեցության դրսևորումը հայ ժողովրդական օրորներում»* (Նայիրի Խաչատուրեան, Կոմիտասի թանգարան-ինստիտուտ):

Նիստերի ավարտին ակտիվ քննարկումներով հանդես եկան հնագիտության և ազգագրության տարբեր ոլորտների մասնագետներ: Գիտաժողովին հնչած զեկուցումները հոդվածների տեսքով կամփոփվեն հնագիտության և ազգագրության ինստիտուտի «Աշխատություններ» հերթական պրակում:

ԲԱԲԱՋԱՆՅԱՆ Ա.Ա.
Պատմական գիտությունների թեկնածու

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅ ԱՐՎԵՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԳԻՏԱԿԱՆ XII ՆՍՏԱՇՐՋԱՆԸ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՅՎԱԶՈՎՍԿՈՒ ԾՆՆԴՅԱՆ 200-ԱՄՅԱԿԻՆ

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի նախաձեռնությամբ և ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի աջակցությամբ երիտասարդ արվեստաբանների խորհուրդը գումարեց Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական XII նստաշրջանը (2017 թ. նոյեմբերի 22-ին և 23-ին)՝ նվիրված Հովհաննես Այվազովսկու ծննդյան 200-ամյակին:

Նստաշրջանի աշխատանքներին մասնակցեցին երիտասարդ արվեստաբաններ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտից (ԱԻ), Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայից (ՀԳՊԱ), Երևանի պետական համալսարանից (ԵՊՀ), Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանից (ԵՊՄՀ), Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտից (ՄՄ), Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտից (ԹՃԹԻ), Կոմիտասի թանգարան-ինստիտուտից (ԿԹԻ), Քրիստափոր Քուշնարյանի անվան արվեստի դպրոցից (ՔԱԴ), Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանից (ՃՇՀ), նաև Իրանի Իսլամական Հանրապետությունից:

Բացման խոսքում Արվեստի ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, արվեստագիտության (ագ) դոկտոր, պրոֆեսոր *Արարատ Աղասյանը* նկատեց. «Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական տասներկուերորդ նստաշրջանը հոբելյանական է, այն նվիրված է հանճարեղ ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկու ծննդյան 200-ամյակին: Մասնակիցների թվով գիտաժողովը բավականին ներկայանալի է և չի զիջում նախորդ նստաշրջաններին: Երիտասարդ արվեստաբանների նստաշրջանները կարևորվում են ոչ միայն այն տեսակետից, որ երիտասարդներին հնարավորություն են տալիս իրենց գիտական աշխատանքները, կարծիքները, տեսակետները բարձր ակադեմիական ամբիոնից արտահայտելու, այլ նաև նպաստում են անձնական շփումների ձևավորմանը, և մասնակիցները տեղեկանում են, թե հարակից ոլորտներում ինչ է կատարվում:

Ողջույնի խոսքով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, դոկտոր, պրոֆեսոր *Հենրիկ Հովհաննիսյանը:* Նա նշեց. «Այսպիսի նստաշրջանները

շատ կարևոր են, որպեսզի եկող, փոխարինող սերունդը սովորի հրապարակորեն խոսել և բանավիճել: Մեզ համար կարևոր է իմանալ, որ մեզանից հետո մեր հետքով կամ ինքնուրույն ովքեր են գալիս և ինչպես…»:

Երկօրյա նստաշրջանի չորս նիստերի ընթացքում ընթերցվեց 34 զեկուցում. ներկայացվեցին արվեստագիտության տարբեր գիտաճյուղեր՝ կերպարվեստագիտություն, երաժշտագիտություն, ճարտարապետության պատմություն և տեսություն, կինոգիտություն:

Կերպարվեստ: ԱԻ սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի (Սփյուռքահայ արվեստ) ավագ գիտաշխատող, ագ թեկնածու *Մարտին Հարությունյանը* հանդես եկավ «Երևանի փողոցների ու դրանց հարակից կառույցների նախագծման, կոմպոզիցիայի, դիզայնի ու արտաքին ձևավորման խնդիրներն ու բարելավման հնարավորությունները» զեկուցմամբ: «Ռուդոլֆ Խաչատրյան. գծանկար լևկասի վրա» բանախոսության մեջ ԵՊՀ դասախոս, ագ թեկն. *Հռիփսիմե Վարդանյանն* անդրադարձավ արվեստագետի՝ լևկասի վրա արված ստեղծագործություններին: Սփյուռքահայ արվեստի բաժնի գիտաշխատող *Շուշանիկ Մուրադյանը* «Հակոբ Պարոնյանի երկերը Արա Բեքարյանի նկարազարդումներում» զեկուցման մեջ դիտարկեց նկարչի՝ 1953-1961 թթ. նկարազարդած էջերը: «Զոհաբերության մոտիվը Վանի թագավորության արվեստում» բանախոսության մեջ ՀԳՊԱ աշխատակից *Գայանե Պողոսյանը* ներկայացրեց Վանի թագավորության ծիսակատարությունների խորհրդաբանությունը և պաշտամունքային թիթեղների, զարդերի պատկերագրության մեջ սրբազան զոհաբերությունների տեսարանները: ԱԻ հայցորդ *Նարե Նադարյանը* քննության առավ քանդակագործ Խաչատուր Իսկանդարյանի «Գիքոր» քանդակաշարը: «Հովհաննես Թումանյանի դիմանկարները» զեկուցման մեջ Սփյուռքահայ արվեստի բաժնի ավագ գիտաշխատող, ագ թեկն. *Մարգարիտա Քամալյանը* վերլուծեց Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում, Հայաստանի ազգային պատկերասրահում, Հովհաննես Թումանյանի տուն-թանգարանում պահվող՝ հայ ականավոր նկարիչների վրձնած Հովհաննես Թումանյանի դիմանկարները:

ՀԳՊԱ դասախոս, ագ թեկն. *Անի Աճառյանի* «Ազդագրերի դիզայնի առանձնահատկությունները և դրսևորումները հայ արվեստում» զեկուցումը նվիրված էր հայկական ազդագրերի ստեղծման և զարգացման պատմությանը. լավագույն օրինակների վերլուծությամբ մատնանշվեցին ազդագրերի դիզայնի առանձնահատկությունները: ՄՄ կրտսեր գիտաշխատող *Արփինե Սիմոնյանն* անդրադարձավ Մատենադարանի N 3708 ձեռագրի մանրանկարչական արվեստին: *Սյուզաննա Գրիգորյանը* (ՀՊՄՀ) ներկայացրեց «Նա-

խաքրիստոնեական շրջանի խճանկարները Արտաշատում» թեման: Մատենադարանի՝ XVII դարով թվագրվող ձեռագրերում առկա Գրիգոր Լուսավորչի միակերպ պատկերին անդրադարձավ ԱԻ հայցորդ *Քնար Կատվալյանը*: *Անի Գրիգորյանը (*ԹՃԹԻ) Հայաստանի Երրորդ հանրապետության ժամանակաշրջանի պանթեոնային հուշակոթողների գեղարվեստական և տիպաբանական առանձնահատկություններին նվիրված զեկուցման մեջ խոսեց պանթեոնային հուշակոթողների տեղադրման և կառավարության կողմից սահմանված կարգերի ու չափորոշիչների մասին: ԱԻ հայցորդ *Մարի Աբրահամյանը* հանդես եկավ «Կնոջ կերպարը Ստեփան Աղաջանյանի արվեստում» թեմայով:

Երաժշտություն: «Մարգարիտ Բաբայանը Գոհարիկ Ղազարոսյանի մասին» բանախոսության մեջ ագ թեկն. *Նիկոլայ Կոստանդյանը* (ԿԹԻ) քննության առավ հայ կոմպոզիտոր և դաշնակահար Գ. Ղազարոսյանի (1907–1967) համերգային և ստեղծագործական գործունեության վերաբերյալ հայ դաշնակահարուհի, երգչուհի (մեցցո-սոպրանո), երաժշտագետ և մանկավարժ Մարգարիտ Բաբայանի (1874-1968) հոդվածները*:* Կոմպոզիտոր *Էդգար Գյանջումյանը* «Ռոք երաժշտության պատմության էջերից» զեկուցման մեջ դիտարկեց հայկական ռոք երաժշտության առաջացման և զարգացման հիմնական փուլերը: ԱԻ երաժշտության բաժնի ավագ գիտաշխատող, ագ թեկն. *Տաթևիկ Շախկուլյանն* անդրադարձավ ֆուգա երաժշտական ձևի էությանն ու տարածմանը՝ ցույց տալով տոնիկա-դոմինանտային հարաբերակցության փոխակերպումները Տիգրան Չուխաճյանի, Ալեքսանդր Հարությունյանի և Առնո Բաբաջանյանի ֆուգաներում: ԱԻ ասպիրանտ *Գոռ Սալնազարյանը* ներկայացրեց Մարիամ Թումանյանի հուշերը հայ օպերային երգիչ, բարիտոն Բեգլար Ամիրջանյանի մասին: «Լարային կսմիթային գործիքների պատկերները հնագույն գտածոների վրա և դրանց կապը կիթառի հետ» զեկուցմամբ հանդես եկավ ԱԻ հայցորդ *Մարիաննա Պողոսյանը:* Կոմիտասի աշակերտ, երաժշտագետ-բանահավաք, խմբավար Միհրան Թումաճանի (1890-1973) երաժշտագիտական-հրապարակախոսական գործունեությանն էր վերաբերում ԱԻ երաժշտության բաժնի հայցորդ *Սաթենիկ Ղափլանյանի* զեկուցումը, որտեղ Թումաճանի գեղագիտական հայացքները ներկայացվեցին նրա գործունեությունը բնութագրող մի քանի հոդվածների վերլուծությամբ: ԱԻ հայցորդ *Շուշանիկ Հովհաննիսյանի* զեկուցումը վերնագրված էր «Երվանդ Երկանյանի անդրադարձը Վահան Տերյանին»: «Վայոց Ձորի օրորների երաժշտական բարբառի հետազոտական փորձ՝ 33 և մեկ օրորերգի օրինակով» թեմայով ելույթ ունեցավ ԱԻ ժողովրդական երաժշտության բաժնի կրտսեր գիտաշխատող *Անի Հակոբյանը*: Նույն ինստիտուտի հայցորդ

Մերի Գրիգորյանի աշխատանքը վերաբերում էր հայ կոմպոզիտոր և դաշնակահար Ստեփան Էլմասի Դաշնամուրային առաջին կոնցերտին: «Գերմանացի երգեհոնահար՝ Մարտին Լյուկեր» զեկուցումով հանդես եկավ ԱԻ երաժշտության բաժնի գիտաշխատող, ագ թեկն. *Հովհաննես Մանուկյանը*: ԱԻ հայցորդ *Աննա Հայրապետյանը* «Հայաստանյան ջազի ակունքներում» բանախոսության մեջ կարևորեց կոմպոզիտոր Արտեմի Այվազյանի դերը ՀՀ պետական ջազ նվագախմբի կայացման գործում և ընդգծեց Հայաստանում ջազի զարգացման խթանիչ դերի ու այվազյանական նվագախմբի գործունեության նշանակությունը: «Հայկական երաժշտական համաժողով. անցած ուղին և ձեռքբերումները» ուսումնասիրության մեջ ԱԻ երաժշտության բաժնի ավագ գիտաշխատող, ագ թեկն. *Լիլիթ Արտեմյանը* ներկայացրեց Հայկական երաժշտական համաժողով հասարակական կազմակերպության անցած ուղին և ձեռքբերումները: Ինստիտուտի հայցորդ *Արմենուհի Բաբլոյանի* զեկուցումը անդրադարձ էր Գևորգ Արմենյանի «Խորտակում» օպերային: Հայ հոգևոր երաժշտության ութձայն համակարգի ուսումնասիրությանն էր նվիրված ԿԹԻ գիտաշխատող *Լիլիթ Հարությունյանի* «Դարձվածք ձայնեղանակները ութձայն համակարգի վենետիկյան համակարգում» բանախոսությունը:

Կինո: Սփյուռքահայ արվեստի բաժնի ավագ գիտաշխատող, ագ թեկն. *Արսեն Համբարձումովը* ներկայացրեց «Միմինո» ֆիլմը և ազգային բնավորության որոշ գծերը» թեման: «Բնույթով կատակերգական երկխոսությունների առանձնահատկությունները հայկական ֆիլմերում» զեկուցման մեջ ԱԻ հայցորդ *Ասյա Սահակյանը* քննության առավ ֆիլմերի այնպիսի երկխոսություններ, որոնք դարձել են թևավոր խոսքեր, այդօրինակ երկխոսությունների միջոցով շեշտեց կերպար կառուցելու և ֆիլմի «երկարակեցությունն» ապահովելու իրողությունը:

Ճարտարապետություն: «Սևանա վանքի ճարտարապետական հորինվածքը» հետազոտության մեջ ԱԻ ճարտարապետության բաժնի ավագ գիտաշխատող, ճարտարապետության (ճարտ.) թեկն. *Արեգ Հասրաթյանը* վերհանեց Սևանա վանքի Սբ. Առաքելոց և Սբ. Աստվածածին եկեղեցիների ճարտարապետական առանձնահատկությունները: Ճարտ. թեկն. *Դավիթ Նահապետկյանը* (ՃՇՀ) քննեց «Բանակի տաճարի քարտաշ վարպետների նշանները» և համեմատական զուգահեռներ անցկացրեց դրանց ու պաշտամունքային այլ կառույցների վարպետների նշանների միջև: ԱԻ ասպիրանտ *Յաշար Հոսսեինզադե Նաղադեի* (ԻԻՀ) աշխատանքը նվիրված էր «Հասարակական շինություններում էներգիայի հուսալիության և անվտանգության ապահովումը՝ վերականգնվող էներգիայի կիրառությամբ» թեմային: «Դիլիս-

կայի բնակելի համալիրի ճարտարապետական առանձնահատկությունները» զեկուցման մեջ մագիստրանտ Արմինե Քթոյանը ներկայացրեց Ջավախքի Դիլիսկա բնակավայրում գտնվող՝ Նահատակյանների բնակելի համալիրի ճարտարապետությունը և հանդես եկավ համալիրի վերակազմության առաջարկով: ԱԻ ճարտարապետության բաժնի գիտաշխատող, ճարտ. թեկն. Հրանտ Հովսեփյանի բանախոսությունն արծարծում էր Սոլակ Մայրավանքի (կիսավեր) Սբ. Աստվածածին եկեղեցու նախակազմության նախագծի մշակման ընթացքում առաջացած խնդիրները և վերակազմության նախագծին առնչվող հարցեր:

Գիտական նստաշրջանի եզրափակիչ՝ «Վլադիմիր Բարխուդարյանը և ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը» զեկուցման մեջ Սփյուռքահայ արվեստի բաժնի ավագ գիտաշխատող, ագ թեկն. *Մերի Կիրակոսյանը* խոսեց գիտության վաստակավոր գործիչ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյանի հեղինակած 3 աշխատություններում առկա կերպարվեստի անդրադարձների, ինչպես նաև մեծավաստակ գիտնականի և Արվեստի ինստիտուտի միջև հաստատված կապերի մասին:

Նստաշրջանն անցավ ակտիվ քննարկումների և կառուցողական հարցադրումների առողջ մթնոլորտում: Զեկուցումները առաջիկայում կհրատարակվեն ժողովածուի տեսքով:

Գիտաժողովի արդյունքներն ամփոփեց և եզրափակիչ խոսքով հանդես եկավ ագ դոկտոր, պրոֆեսոր *Աննա Ասատրյանը*:

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ Մ.Ա.
Արվեստագիտության թեկնածու

ЖИЗНЬ И ДЕЯТЕЛЬНОСТЬ СУРЕНА ТИГРАНОВИЧА ЕРЕМЯНА (К 110-ЛЕТИЮ СО ДНЯ РОЖДЕНИЯ)

В 2018 г. научная общественность Армении отметила 110-летие со дня рождения известного историка, востоковеда-кавказоведа, антиковеда, медиевиста, источниковеда Сурена Тиграновича Еремяна. В его научной биографии особое место занимало изучение истории, исторической географии и картографии древнего и раннесредневекового Кавказа в целом. С.Т. Еремяном были заложены основы научного исследования «Древнеармянской географии» («Ашхарhацуйц»-а). Опубликовав множество работ, посвященных изучению этого первоисточника, он тем самым создал фундаментальную научную базу по исследованию вопросов исторической географии Северного и Южного Кавказа, а также стран Передней Азии.

Сурен Тигранович Еремян родился 10 апреля 1908 г. в Тбилиси, в семье рабочего. Еще в школьные годы проявлял особый интерес к вопросам истории и исторической географии. В 1928-1931 гг. С.Т. Еремян учился на историко-филологическом факультете Ереванского государственного университета, с 1932 по 1935 гг. был аспирантом в Институте кавказоведения Закавказского филиала АН СССР в Тбилиси. В 1935 году С. Еремян переехал в Ленинград, поступил на работу в Институт востоковедения АН СССР, где работал до 1941 г., сочетая научную работу с преподавательской в стенах Ленинградского государственного университета. Среди его учителей были всемирно известные востоковеды И.А. Джавахишвили, Я.А. Манандян, Н.Я. Марр, И.А. Орбели, В.В. Струве.

Начиная с 1941 г. и до конца жизни С.Т. Еремян работал в АН Армянской ССР. Был ученым секретарем, и.о. директора (1941-1942 гг.), с.н.с. (1942-1943 гг.) Института истории и материальной культуры АрмФАН СССР. В 1945-1991 гг. заведовал отделом Истории древней Армении ИИ АН Арм. ССР, был директором этого института (1953-1959 гг.), советником директора (1991-1992 гг.) ИИ, членом Президиума, академиком-секретарем отделения гуманитарных наук АН Арм. ССР (1965-1968 гг.). В 1953 г. С. Еремян стал членом-корреспондентом АН Армянской ССР, в 1963 г. – академиком АН Армянской ССР. В 1961 г. ему было присвоено почетное звание Заслуженного деятеля науки Арм. ССР. С 1966 г. С.Т. Еремян стал членом редколлегии журнала «Вестник древней истории», экспертом ВАК СССР[1].

В 1938 г. С.Т. Еремян в Ленинграде защитил кандидатскую диссертацию на тему «Феодальные образования Картлии (Восточной Грузии) в период марзбанства (532-627 гг.)», в 1953 г.– докторскую диссертацию в Москве по теме «Рабовладельческое общество древней Армении».

Его первые научные труды носили общий характер. Ученый принял активное участие в написании работы «Очерки истории СССР. С древнейших времен до конца XVIII в.» (т. I., под ред. Б.Д. Грекова и др.), где им были написаны главы, посвященные политической, социально-экономической и культурной истории древней и раннесредневековой Армении (с древнейших времен до конца IX в.), а также главы по истории Кавказской Албании[2]. В данной работе ученый обращается ко многим спорным вопросам истории древней Армении, связанным как с ее исторической географией, так и социально-экономическим развитием, которые были предметом его исследований в статьях, опубликованных в журналах

[1] Подробнее см.: Сурен Тигранович Еремян. Материалы к библиографии ученых Армянской ССР, № 33, Вступит. статья Саркисяна Г.Х., Бархударяна В.Б. Библиография составлена: Бабаджанян Р.А, Согомонян Ж.О., Е., 1984, с. 9-12, 28 и далее (Սուրեն Տիգրանի Երեմյան, Նյութեր Հայկական ՍՍՀ գիտնականների կենսամատենագիտության, № 33, Ներածականը Գ.Խ. Սարգսյանի և Վ.Բ. Բարխուդարյանի, Մատենագիտությունը կազմել են Ռ.Ա. Բաբաջանյանը և Ժ.Հ. Սողոմոնյանը, Ե., 1984) (на арм. и рус. яз.).

[2] Очерки истории СССР, III-IX вв. Гл. ред. Дружинин Н.М., М., 1958.

СССР, и в первую очередь в ВДИ. Эти вопросы входили также в круг научных интересов акад. Я.А. Манандяна[3].

До С.Т. Еремяна в армянской историографии вопросами исторической географии занимались лишь два исследователя: Л. Инчичян (настоящая фамилия Микаелян, 1758-1833 гг.) и Г. Алишан (1820-1901 гг.). Однако их работы носили в основном хорографический характер (от др.-греч. χῶρος –местность и γράφω –описываю), не говоря уже о слабой аналитической базе исследования. Своими работами С.Т. Еремян способствовал развитию этой области исторической науки в армянской историографии. В российско-советской историографии основоположниками исторической географии и картографии стали известные исследователи Н. К. Лебедев (1879-1934 гг.) и А.Б. Дитмар (1911-1989 гг.). В этой сфере наряду с работами Еремяна важную роль играли труды другого его современника Л.А. Ельницкого. Статья С.Т. Еремяна «Народно-освободительная война армян против персов в 450-451 гг. (к 1500-летней годовщине)»[4] дает ответы на многие спорные вопросы по истории и исторической географии народно-освободительной войны армян 450-451 гг. Автор сделал не только историко-географические уточнения по вопросам локализации реки Тхмут и Аварайрской равнины, но и окончательно решил спорный вопрос об исторической роли Вардана Мамиконяна и Васака Сюни. Переломное для историографии значение имело решение проблемы этногенеза армян в статье «К вопросу об этногенезе армян»[5], в которой С. Т. Еремян однозначно доказал автохтонность армян. Ученый выдвинул теорию этногенеза армян, их обоснования в четырех точках Армянского нагорья: Хайаса, Арме-Шуприя, бассейн озера Ван и Араратская долина. В дальнейшем С.Т. Еремян был включен в состав редколлегии «Истории СССР с древнейших времен до наших дней», ставшей вехой в советской

[3] **Еремян С.Т**. Торговые пути Закавказья в эпоху Сасанидов (по Tabula Peutingeriana), ВДИ, 1939, № 1, с. 79-97); О рабстве и рабовладении в древней Армении, ВДИ, 1950, № 1, с. 12-26; Развитие городов и городской жизни в древней Армении, ВДИ, 1953, № 3, с. 11-31.

[4] **Еремян С.Т.** Народно-освободительная война армян против персов в 450-451 гг. (к 1500-летней годовщине), ВДИ, 1951, № 4, с. 41-60.

[5] **Еремян С.Т.** К вопросу об этногенезе армян (Вопросы истории, 1952, № 7, с. 101-108).

историографии. С.Т. Еремян был не только членом редколлегии первой серии этого издания (тт. I-VI), но и принимал самое активное участие в создании первых двух томов[6]. Он был соавтором введения ко второму разделу работы. В этом труде были использованы многие его исследования, посвященные истории и культуре древней Армении. С.Т. Еремяном были написаны все части второго тома по истории средневековой Армении (борьба против монголо-татарского ига, развитие Армении в XIII–в первой пол. XVII вв.)[7].

Издание этих известных работ сыграло важную роль в развитии армянской историографии. В 1951 г. вышел первый том трехтомного академического издания «История армянского народа» (далее сокр. ИАН), где разделы по древней и раннесредневековой истории Армении были написаны С.Т. Еремяном (под ред. Б.Б. Пиотровского, Б.Н. Аракеляна и др.). Далее на основе этого труда в 1971-1984 гг. был опубликован восьмитомный академический труд «ИАН», о котором речь пойдет ниже.

С.Т. Еремян считается не только основоположником армянской школы исторической географии и картографии. Неоспорим его вклад в развитие советской науки в целом. С.Т. Еремян первым обратил особое внимание на «Древнеармянскую географию» («Ашхарhацуйц») Анании Ширакаци (VII в. н.э.). Результатом многолетних исследований стал опубликованый им капитальный труд «Армения по «Ашхарhацуйц»-у[8], в котором впервые была представлена локализация многих топонимов, перечисленных в указанном первоисточнике. Их локализация по сей день не вызывает сомнений у исследователей. Сказанное касается как географических названий царства Великой Армении, так и Кавказа в целом, особенно

---

[6] История СССР. С древнейших времен до наших дней, в 12-ти томах. В двух сериях. Гл. ред. совета Пономарев В.Н. Первая серия, тт. I-VI. С древнейших времен до Великой Октябрьской революции. Председ. ред. комиссии Первой серии Рыбаков Б. А. т. I. Ред. Плетнев С.А., Рыбаков Б.А., М., 1966; т. II. Пред. редкол. тома Тихомиров М.И., М., 1966.

[7] См.: История СССР, т. II. с. 36-42, 501-583.

[8] **Еремян С.Т.** Армения по «Ашхарhацуйц»-у (Армянской географии VII века) (опыт реконструкции армянской карты VII века на современной картографической осно-ве)», Е., 1963, на арм. яз.) (**Երեմյան U.S.** Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի (Փորձ VII դարի հայկական քարտեզի վերակազմության ժամանակակից քարտեզագրական հիմքի վրա, Ե., 1963):

древней Грузии (исследователь в совершенстве владел грузинским языком, а также тремя диалектами древнегрузинского) и Кавказской Албании, отчасти – топонимов Передней Азии. Здесь ученый впервые в историографии провел сравнительный/сопоставительный анализ данных древнеармянского первоисточника со сведениями Страбона, Птолемея и Плиния Старшего. Следует констатировать, что до С.Т. Еремяна почти никто из армянских исследователей не обращался к работам Птолемея и Плиния Старшего. В дальнейшем его ученик Э.Л. Даниелян (1944-2017 гг.) в своих исследованиях пришел к заключению, что «Ашхарhацуйц» был написан в V в. историком Мовсесом Хоренаци, а в VII в. был дополнен Ананией Ширакаци. Основываясь на последних достижениях в области исторической географии, особенно на трудах А.В. Подосинова, можно утверждать, что авторы «Ашхарhацуйц»-а при изложении материала придерживаются северной, с географической точки зрения, ориентации.

С.Т. Еремян является составителем более 300 историко-географических, физических и политических карт Армении, Ближнего Востока и Кавказа разных исторических периодов. Ученым впервые была составлена подробная административно-политическая карта царства Великой Армении по «Ашхарhацуйц»-у, которая, по сей день не потеряв своей значимости, является своеобразным «маяком» для исследователей. С.Т. Еремян определил не только государственные границы царства Великой Армении, но и внутригосударственные границы (между 15-ю губерниями и 190-195 провинциями). С ювелирной точностью им впервые было подсчитано, какую территорию (кв. км.) занимали те или иные провинции либо губернии по «Ашхарhацуйц»-у. К сожалению, нам не удалось собрать воедино все карты (издан лишь Атлас книги «ИАН», более 30 карт С.Т. Еремяна опубликовано в книге «Армянская ССР»)[9].

Важнейшей вехой в его научной работе является участие в создании 8-томного академического издания «Истории армянского народа». Ученый был не только членом главной редколлегии, но и редактором и од-

[9] **Еремян С.Т.** Атлас книги ИАН, ч. первая, Е., 1952, 7 карт (на арм. яз.) (Ատլաս «Հայ ժողովրդի պատմություն» գրքի, առաջին մաս, Ե., 1952, 7 քարտեզ); Армянская ССР, Атлас, Е.-М., 1961, под ред. Багдасаряна А.Б. (на арм. яз.) (Հայկական ՍՍՌ Ատլաս, Ե.-Մ., 1961, խմբ. Ա.Բ. Բաղդասարյանի).

ним из авторов первых двух томов (оба тома вместе составляют почти 1700 страниц)[10]. Почти четверть этих книг, написанных Суреном Тиграновичем, охватывает огромный исторический период–начиная от первых государственных образований на территории ранней Армении (Хайаса-Аззи (XVI в. до н.э.), Арме-Шуприя (XII в. до н.э и т.д.) до армяно-персидской войны 449-451 гг. В процессе данной работы С.Т. Еремян выдвинул целый ряд научно-обоснованных концепций, которые сродни научным открытиям, что стало естественным итогом его многолетней исследовательской деятельности (различные вопросы истории Армении, особенно эпохи Оронтидов, Арташесидов и Аршакидов). Он был первым, кто обратил внимание на надписи Кааба Зороастра в упомянутой там стране «Махелония»[11] (надписи Кааба-и-Зардушт»), коснулся вопросов условного землепользования в государстве Великая Армения, о котором находим сведения лишь у историка Фавстоса Бузанда. До него никто не занимался этими вопросами. Особо важное значение имеют выявленные им в источниках сведения о собственных владениях армянских Аршакидов на территории Римской империи и Сасанидского Ирана. Ученый пришел к выводу, что часть территории Атропатены Сасанидами была отдана Аршакидам, в то время как римляне, в качестве дара, преподнесли Аршакидам часть территории Гиматене и Малой Армении[12]. За труд «История армянского народа» ученый был удостоен государственной премии Арм. ССР (1985 г.). Сурена Тиграновича Еремяна интересовало все. Может по-

[10] ИАН, т. I. Армения в эпоху первобытно-общинного и рабовладельческого строя, Е., 1971 (Հայ ժողովրդի պատմություն, հ. I, Հայաստանը նախնադարյան-համայնական և ստրկատիրական կարգերի ժամանակաշրջանում, Ե., 1971 (ՀԺՊ); т. II. Армения в период раннего феодализма, Е., 1984 (обе на арм. яз.) (ՀԺՊ, հ. II. Հայաստանը վաղ ֆեոդալիզմի ժամանակաշրջանում, Ե., 1984).

[11] Страна «Махелония» надписи Кааба-и-Зардушт, ВДИ, 1967, № 4; с. 47-59; ИАН, т. II, с. 35 и далее; Политическое положение Армении при Артавазде V (252/3-261), ВОН, Е., 1975, № 1, с. 13-22 (на арм. яз.) (Հայաստանի քաղաքական վիճակը Արտավազդ V–ի ժամանակ (252/3-261), ԼՀԳ, Ե., 1975, № 1, էջ 13-22); Раздел царства Великой Армении между Сасанидским Ираном и Римской империей (244-253 гг.). ИФЖ, Е., 1976, № 1, с. 67-88 (Մեծ Հայքի թագավորության բաժանումը Սասանյան Իրանի և Հռոմեական կայսրության միջև (244-253 թթ.), ՊԲՀ, 1976, № 1, էջ 67-88).

[12] На арм. эти территории называются дзеракан (в дословном переводе с арм. яз. – отданный в руки, на лат.– manualis, на древнегреч.– χειριός). См.: во многих составленных им картах.

казаться странным, но он является автором введения книги «Армянская кулинария»[13]. С.Т. Еремян был редактором армянского перевода грузинского эпоса «Витязь в тигровой шкуре», ибо владел не только древним и новогрузинским языками, но и тремя диалектами грузинского языка[14]. В «еремяновское время» имели место два эпохальных события–1500-летие армянского философа Давида Непобедимого и 1500-летие Мовсеса Хоренаци. В этой связи им был написан ряд статей, среди которых следует выделить две: «Армения в эпоху Давида Непобедимого (к 1500-летию Давида Непобедимого)» и «Истории Армении» Мовсеса Хоренаци 1500 лет»[15]. С.Т. Еремян принимал активное участие в научных конференциях, проводившихся в Москве, Ленинграде, Ереване, Кембридже, Оксфорде, Афинах, Париже, Варшаве и т.д. Был награжден многими медалями и орденами: Октябрьской революции, Трудового Красного знамени, Знаком почета и др. Ученый являлся членом многих научных обществ и организаций историков, географов. Несомненно, С.Т. Еремяна можно считать продолжателем великого дела, начатого Н.Г. Адонцем и акад. СССР Я.А. Манандяном. Он подготовил не одно поколение научных работников: руководил кандидатскими диссертациями, был членом многих советов, в том числе и специализированных, входил в состав президиума НАН РА.

Уже более 25 лет Сурена Тиграновича нет с нами, однако его труды по истории древней Армении и истории древней Передней Азии, Кавказа и сопредельных стран продолжают служить «путеводной звездой» для ученых, занимающихся вопросами древнего и раннесредневекового Востока.

АРУТЮНЯН А.Ж.
Доктор исторических наук

[13] См.: Армянская кулинария, М., 1960. Статья «Естественно-исторические основы питания армянского народа», с. 21-28.

[14] **Руставели Ш.** Витязь в тигровой шкуре, Е., 1966 (на арм. яз.) (Շ. Ռուսթավելի, Ընձենավորը, Ե., 1966).

[15] **Еремян С.Т.** Армения в эпоху Давида Непобедимого (к 1500-летию Давида Непобедимого), ВДИ, 1980, № 4, с. 3-10; «Истории Армении» Мовсеса Хоренаци 1500 лет, ВДИ, 1984, № 2, с. 184-195.

ՎԻԳԵՆ ՂԱԶԱՐՅԱՆ. ԳԻՏՆԱԿԱՆԻ ՈՒՂԻՆ

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, արվեստի ինստիտուտի կերպարվեստի բաժնի վարիչ, Երևանի գեղարվեստի ակադեմիայի արվեստագիտության և հասարակական գիտությունների ամբիոնի վարիչ Վիգեն Հովհաննեսի Ղազարյանը ծնվել է 1943 թ. Երևանում: 1950-55 թթ. սովորել է Տերյանի (նախկինում՝ Ստալինի) անվ., 1955-60 թթ.՝ Ա. Խանջյանի անվ. հ. 53 դպրոցներում, 1960-65 թթ. ստացել է նկարչի և մանկավարժի մասնագիտություն Խ. Աբովյանի անվ. հայկական մանկավարժական ինստիտուտում: 1965-66 թթ. աշխատել է թարգմանիչ Արմենպրեսում, 1968 թ.՝ խմբագիր Հայկական Սովետական հանրագիտարանում, 1969 թ.՝ էքսկուրսավար Հայաստանի ազգային պատկերասրահում, 1969-71 թթ. եղել է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ասպիրանտ, 1971-85 թթ.՝ նույն ինստիտուտի կրտսեր, 1985-88 թթ.՝ ավագ գիտաշխատող, 1988-ից առ այսօր՝ կերպարվեստի բաժնի վարիչ և թեմատիկ խմբերի ղեկավար, 1999-ից՝ նաև Երևանի գեղարվեստի պետ. ակադեմիայի արվեստի տեսության, պատմության և հումանիտար գիտությունների ամբիոնի վարիչ: 1975 թ. ստացել է արվեստագիտության թեկնածուի (ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ), 1992-ին՝ արվեստագիտության դոկտորի (ԽՍՀՄ մշակույթի նախարարությանն առընթեր արվեստագիտության ինստիտուտ) գիտական աստիճաններ՝ «Սարգիս Պիծակ» և «Խորանների մեկնությունները՝ իբրև միջնադարյան արվեստի տեսության վավերագրեր» աշխատությունների համար:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի և ԵԳՊԱ գիտխորհուրդների, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական աստիճաններ շնորհող խորհրդի անդամ է: Նրա ղեկավարությամբ տասնյակ ասպիրանտներ արժանացել են արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճանի: Գիտական զեկուցումներով հանդես է եկել հանրապետական, միութենական և միջազգային գիտաժողովներում (Երևան, Ախալքալաք, Ստեփանակերտ, Թիֆլիս, Մոսկվա, Վիչենցա, Բոլոնիա, Վենետիկ, Նյու Յորք), հեղինակ է վեց մենագրությունների, 100-ից ավելի գիտական հոդվածների և ալբոմների: Վ. Ղազարյանի մենա-

գրությունները գրախոսվել են ինչպես Հայաստանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս (արվեստագիտության դոկտորներ Հր. Հակոբյան, Գր. Օրդոյան, Է. Կորխմազյան, Պ. Տոնապետյան), ատենախոսությունները գրախոսել և դրանց մասին գրավոր կարծիքներ են տվել հայկական, բյուզանդական, արևմտաեվրոպական միջնադարյան արվեստի պատմության և փիլիսոփայության աչքի ընկնող մասնագետներ (Տ. Իզմայլովա, Վ. Լազարև, Կ. Յուզբաշյան, Ա. Սմիռնովա, Ա. Մոկրեցովա, Կ. Սվասյան, Կ. Միրումյան): Խմբագրել է մի շարք գիտական մենագրություններ և թարգմանություններ բնագրերից (արվեստաբաններ Լ. Զաքարյանի, Տ. Իզմայլովայի, Հ. Հովհաննիսյանի, Ի. Դրամբյանի, Հ. Ռիդի, «Սեզանի զրույցների, նամակների և հուշերի», Յու. Բատրուշայտիսի և այլոց ուսումնասիրությունների), գրախոսել է Ս. Տեր-Ներսեսյանի, Տ. Իզմայլովայի, Լ. Ազարյանի, Վ. Մաթևոսյանի, Հր. Հակոբյանի, Ֆ. Գանցհորնի, Ն. Սթոունի և այլ հեղինակների աշխատություններ: Վ. Ղազարյանը, գիտական և մանկավարժական աշխատանքին զուգահեռ, ստեղծագործել է՝ դիմելով գեղարվեստական գրականության տարբեր տեսակների՝ պոեզիա, արձակ, դրամա, զբաղվել գիտական-գեղարվեստական թարգմանությամբ գրաբարից, ռուսերենից, անգլերենից և գերմաներենից (Ներսես Շնորհալի, «Խորանների մեկնություններ», Գյոթե, Մայակովսկի, Օսկար Ուայլդ, Դիոնիսիոս Արեոպագացի, Շեքսպիր, Օդն, Կառլոս Ուիլյամս Կառլոս, Քամինգս, Օսկար Ուայլդ, Մայակովսկի, Դիոնիսիոս Արեոպագացի և այլն), գեղանկարչությամբ և գրաֆիկայով՝ ստանալով դրական արձագանքներ, մասնակցելով ցուցահանդեսների, իսկ 2008 թ. անհատական ցուցահանդես ունեցավ ՀՀ նկարիչների միության սրահում:

Իր գործունեության ընթացքում Վ. Ղազարյանն ակտիվորեն մասնակցել է գիտական թեմաների և աշխատանքների ծրագրավորմանը, հայ կերպարվեստին նվիրված հանրապետական և միջազգային գիտաժողովների կազմակերպական և խմբագրական աշխատանքներին: Վ. Ղազարյանի գիտական գործունեությունը 2003թ. գնահատվել է ՀՀ ԳԱԱ պատվոգրով, 2008 թ.՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության հուշամեդալով: Մեծանուն գիտնականն արժանացել է ՀՀ մշակույթի վաստակավոր գործչի, ՀՀ պետական մրցանակի պատվավոր կոչումների:

ՀԱԿՈԲՅԱՆ Հ.Հ.

Արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր

ՀԵՆՐԻԿ ՍՎԱԶՅԱՆ. ԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՆԽՈՆՋ ԱՇԽԱՏԱՎՈՐԸ
(ծննդյան 80-ամյակի առթիվ)

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հենրիկ Սուրենի Սվազյանը բոլորեց իր ութերորդ տասնամյակը:

Հ. Սվազյանը ծնվել է 1938 թ., Լենինականում (Գյումրի), 1955 թ. ավարտել է Հայաստանի երկրորդ քաղաքի Վ. Մայակովսկու անվ. թիվ 5 միջնակարգ դպրոցը, այնուհետև ծառայել խորհրդային բանակում: Զորացրվելուց հետո, 1961 թ. ընդունվել է Երևանի պետհամալսարանի պատմության ֆակուլտետ, որն ավարտել է 1966 թ.: Աշխատել է ՀՀ Հուշարձանների պահպանության վարչությունում, իսկ 1967 թ. արդեն ավագ գիտաշխատող էր Հեղափոխության պետական թանգարանում: 1968 թ. նա ընդունվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ասպիրանտուրա և ավարտելով այն՝ 1971 թ. աշխատանքի է անցել այդ ինստիտուտի Միջին դարերի պատմության բաժնում, որտեղ տասնամյակներ շարունակ և այսօր էլ մեծ հաջողությամբ ընթացք է տալիս իր գիտական գործունեությանը:

1975 թ. Հ. Սվազյանը պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, իսկ 1991 թ. շատ ավելի լայն ընդգրկումներով և գիտական բարձր մակարդակով աչքի ընկնող իր դոկտորական ատենախոսությունը՝ «Աղվանից աշխարհի պատմություն (հնագույն ժամանակներից VIII դ. ներառյալ): Պրոֆեսորի կոչում է ստացել 2003 թ.:

1997-2003 թթ. Հ. Սվազյանն աշխատում էր Վ. Սարգսյանի անվ. ռազմական ինստիտուտում՝ գլխավորելով իր իսկ հիմնած դաստիարակչական աշխատանքների և հասարակագիտական առարկաների ամբիոնը՝ իր ներդրումն անելով հանրապետության բանակի կազմավորման ու կայացման ասպարեզում: 2002 թ. տացել է ՀՀ բանակի գնդապետի կոչում: Իր ռազմա-

գիտական ամբիոնը գլխավորելուն զուգընթաց, այստեղ նա դասավանդել է «հայոց պատմություն» առարկան, ինստիտուտում կազմակերպել դասախոսական և կուրսանտական գիտաժողովներ, հանդես եկել բովանդակալի զեկուցումներով և ուղղորդել ուսանողների մտավոր նախասիրությունները՝ դրան տրամադրելով դասախոսական աշխատանքների իր հարուստ փորձը: Դեռևս ուսանողական տարիներին քանիցս մասնակցել էր Երևանում և երկրի մյուս քաղաքներում համամիութենական հնագիտական գիտաժողովներին, կարդացել ուշագրավ զեկուցումներ: Հետագայում ևս, ասպիրանտական ուսման շրջանակներում իր գործուն մասնակցությունն է բերել երիտասարդ գիտաշխատողների նստաշրջաններին: Հատկապես ուշադրություն են գրավել նրա հետաքրքիր և հրատապությամբ աչքի ընկնող ելույթները Երևանում (1991 և 2012 թթ.) և Արցախում (2006 և 2007 թթ.) տեղի ունեցած միջազգային գիտաժողովներում՝ Աղվանից պատմության հիմնահարցերի շուրջ:

Հ. Սվազյանի գիտական հետաքրքրությունների առանցքը Աղվանից աշխարհի պատմության հիմնահարցերն են, որոնց համակողմանի և խոր լուսաբանությամբ նա անվիճելիորեն առաջատարի տեղ է զբաղեցնում մեր արդի պատմագիտության մեջ: Աղվանից աշխարհի պատմության վերաբերյալ իր ուսումնասիրությունները նա առարկայացրել է իր մենագրություններում, բազմաթիվ հոդվածներում և հրապարակումներում ու ուսումնական ձեռնարկներում՝ թեման լուսաբանելով ամենատարբեր տեսանկյուններից և կտրվածքներով՝ գիտականորեն մշակված նյութին տալով նոր բովանդակություն և հաճախ անսպասելի, բայց և հիմնավոր մեկնաբանություններ: Առաջին անգամ մեր պատմագիտության մեջ նա գիտականորեն վերարտադրել է Աղվանից աշխարհի ամբողջական պատմությունը, որի արդյունքը եղավ նրա «Աղվանից աշխարհի պատմություն (հնագույն շրջանից VIII դարը ներառյալ» (Ե., 2006) մենագրության հրատարակությունը: Այս գիրքը հանրագումարի է բերում գիտնականի տասնյակ տարիների աշխատանքը, բայց իբրև նոր որակների դրսևորում, առանձնանում է հեղինակի՝ նյութի խոր ու հիմնավոր իմացությամբ և հայեցակարգային հետևողականությամբ: Քայլ առ քայլ նա բացահայտում է պատմագիտության մեջ մինչ այդ առկախ մնացած կամ վիճահարույց բազմաթիվ հիմնահարցեր, ինչպիսիք են իր աշխատության իմացական հիմքերը կազմող սկզբնաղբյուրների վերհանումն ու բնութագրերը (հայկական, հունահռոմեական, վրացական, ասորական և այլ օտարալեզու աղբյուրներ, հնագիտական փաստեր և վիմագրական արձանագրություններ), Աղվանքի քաղաքական սահմանների հստակ ու պատ-

ճառաբանված վերարտադրությունը, աղվանական ցեղային միությունների սոցիալ-տնտեսական ու էթնոմշակութային նկարագիրը և անցումը դեպի պետական կազմավորում, Աղվանքի քաղաքական կացությունը պարթևահռոմեական հարաբերությունների ոլորտից մինչև Սասանյաններ, այնուհետև Արշակունիներից մինչև Միհրանյանների ու Առանշահիկների ժամանակաշրջանը և այլն: Նկատենք, որ Աղվանքի՝ որպես արգասաբեր երկրի բնակիչներին Հ. Սվազյանը կոչում է «աղվանացիներ»՝ նկատի ունենալով նրանց՝ ցեղային միությունների մեջ ընդգրկված տարասեռ ցեղերի մակարդակը: Հ. Սվազյանն առանձնահատուկ ուշադրություն է դարձրել Աղվանից մարզպանության կազմավորմանը (V դ. երկրորդ կես) և ապա արաբական տիրապետությանն Աղվանքում: Անդրադառնալով նոր անվանակոչված *Աղվանք* հասկացությանը (հեղինակի տարողունակ եզրույթն է), դրա տարածքում Միհրանյան տոհմի իշխանությանը (VI դ. վերջեր), Հ. Սվազյանն անում է փաստերով հիմնավորված եզրակացություններ. արժեքավոր է հատկապես բացասական և միաժամանակ հույժ արդիական այն հետևությունը, որ հակապատմական ու միտումնավոր է կարծիքն այն մասին, թե, իբր, Միհրանյանները Աղվանից պետության վերածնողներն էին և ավանդութային շարունակողները: Նա ցույց է տալիս, որ պատմությունն աղարտող այդ քմածին մտադրույթը նշանակում է պատմությունը չարչրկել պրոկրուստյան մահճում, և որ նման մոտեցումը «նպատակ ունի արհեստականորեն երկարածգել ոչ միայն Աղվանից պետականության գոյության ժամանակաշրջանը, այլև Աղվանքի հետ կապել Ուտիքի և Արցախի (իմա՛ բուն հայկական-Խ.Ա.) նահանգները» (էջ 263): Այս աշխատության անհերքելի արժանիքներից է հեղինակի հետևողական հակադրությունը ադրբեջանական այլ ծանոթ կեղծարարություններին՝ իրենց արյունակից հռչակել աղվաններին և այդպիսով «ժառանգել» պատմական Աղվանքի տարածքը՝ այդպիսին համարելով Արցախն ու Ուտիքը: Անհերքելի փաստերով Հ. Սվազյանը հաստատում է այն ճշմարտությունը, որ աղվանական տարաշերտ ցեղերը պատմական բավիղներում լուծվել են պարսկական, արաբական և այլ ցեղերի մեջ և չքացել այդ զանգվածների խառնարաններում՝ բացարձակապես որևէ կապ չունենալով տարածաշրջան ներխուժած թուրքացեղ կազմավորումների հետ: Այս վերջիններս էլ հենց այժմյան ադրբեջանցիների նախորդներն են, և որոնց, ի դեմս իրենց ծնողների, մանկուրթի պես ճանաչել չեն ցանկանում ադրբեջանական ծնողուրաց հեղինակները:

Իր գիտական հագեցվածությամբ և թեմայի պատմականորեն ստույգ բովանդակությամբ Հ. Սվազյանի այս աշխատությունն ունի ճանաչողական մեծ

նշանակություն և արդիական արժեք, որն ըստ արժանվույն է գնահատվել XXI դ. մեր պատմագիտության կողմից:

Վերոհիշյալ աշխատության շատ կողմերով հղկումն ու լրացումը պետք է համարել Հ. Սվազյանի հաջորդ՝ «Աղվանից աշխարհի պատմության ուսումնասիրության հիմունքները» (Ե., 2017) եռալեզու (հայերեն, ռուսերեն, անգլերեն) գիրքը: Այստեղ հեղինակն ավելի է ամրապնդում և նոր ընդհանրացումներով հարստացնում Աղվանքի պատմության կարևորագույն հարցերի իր լուսաբանումները: Ուտիքի և Արցախի վարչական կացության հետ կապվող հանգույցների համոզիչ քննարկմամբ նա հիմնավորում է այդ նահանգների հայկական պատկանելությունը, ընդսմին, այստեղ ևս բացահայտելով այս ասպարեզում տեղ գտած կեղծիքներն ու աղբյուրների զանգվածային աղավաղումները: Ուշագրավ է Հ. Սվազյանի մշակած պատմաքննական մեթոդը՝ նշված կեղծիքները հերքելու և պատմական ճշմարտությունը վերականգնելու համար: Եվ այս իմաստով նա առաջարկում է խնդրո առարկա հարցի հստակեցում՝ վարչաքաղաքական և տարածական ընդգրկումներով միմյանցից տարբերվող՝ բուն Աղվանքի, Մարզպանական Աղվանքի և հետմարզպանական կամ Հայոց Աղվանքի առանձնական շրջանների ուսումնասիրության մեթոդը՝ երեք առանձին և ինքնաբավ ժամանակաշրջաններով: Այսպիսի սահմանաբաժանմամբ Հ. Սվազյանը վերհանում է այն պատմական իրողությունը, որ հայկական Արցախ և Ուտիք նահանգները ժամանակի ընթացքում ներառվել են Աղվանից մարզպանության կազմում, և որ վերջինիս տրոհումից հետո հայ Առանշահիկ տոհմի գլխավորությամբ ձևավորված և այդ նահանգների վրա տարածվող իշխանությունն ուներ միատարր հայ բնակչություն, որը հանդես է եկել «Աղվանք» եզրույթի ներքո: Աշխատության արժանիքներից են, մասնավորապես, վերոհիշյալ նահանգների տեղադրության ստույգ մատնանշումը՝ Կուրի աջափնյակի սահմաններում, այլև Ուտիքի և Արցախի քաղաքացիություն ստացած և անվանում հոմանիշների վկայակոչումը մեր մատենագրության մեջ (Խորին աշխարհ հայոց, Աղուանք հայոց, Աղուանից Հայք, Հայոց հիւսիս արեւելից կողմանք և այլն):

Իր համար նվիրական դարձած հետազոտական հիմնահարցերը շարունակում են աշխատանքի մղել Հ. Սվազյանին՝ դրանցում հայտնաբերելու նոր ծալքեր, վերարտադրության կարոտ նոր իրողություններ, որի համար վաստակաշատ գիտնականին բնավ չեն պակասում ոչ եռանդը, ոչ էլ տասնամյակներում թրծված աշխատասիրությունը: Հրատարակության ընթացքում է Հ. Սվազյանի «Հայ-աղվանական եկեղեցական հարաբերություններ» (սկզբնավորումից մինչև VIII դարը ներառյալ)» աշխատությունը՝ իբրև գի-

տական հիմնահարցերը հիմն ի վեր լուսաբանելու զարմանալի համառություն, որ այս էլ որերորդ անգամ ցուցաբերում է Հ. Սվազյանը՝ իբրև իր նախասիրած հետազոտական ասպարեզի նոր հանգրվանի վերհանում: Կան շատ մտահղացումներ, որոնք անպայման կիրականացնի միշտ գիտական նվաճումների պատրաստ այս համառ աշխատավորը:

Մեզ մնում է միայն ի սրտե շնորհավորել մեր արժանավոր հոբելյարին, ցանկանալ նրան անվթար առողջություն և կորով՝ իր ծրագրերն իրականացնելու երկար ու արգասավոր ճանապարհին:

ԽԱՌԱՏՅԱՆ Ա.Ա.
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» հանդեսի աշխատակազմը շնորհավորում է վաստակաշատ պատմաբանին՝ նրան մաղթելով գիտական նոր բացահայտումներ ի նպաստ հայագիտության:

«Լրաբեր հասարակական գիտությունների» հանդես

ՆՈՐԱՅՐ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ. ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հայագիտությունը կորցրեց իր տաղանդավոր մշակներից մեկին՝ ականավոր պատմաբան, պատմական գիտությունների դոկտոր Նորայր Սարուխանյանին:

Նորայր Բագրատի Սարուխանյանը ծնվել է 1935 թ. մայիսի 1-ին, Գորիսի շրջանի Տեղ գյուղում: 1953-1958 թթ. բարձրագույն կրթություն է ստացել Երևանի պետական համալսարանում՝ ավարտելով պատմության ֆակուլտետը: 1961-1963 թթ. ՀԽՍՀ նախարարների խորհրդին առընթեր Ռադիոհեռուստապետկոմի պրոպագանդի խմբագրությունում վարել է ավագ խմբագրի պաշտոնը, ապա ընդունվել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ասպիրանտուրա: 1968 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացման պրոբլեմը մինչհեղափոխական հայ պատմագրության մեջ» թեմայով: Նրա տարաբնույթ պատմագիտական հետազոտությունների մեջ այդուհետև առանձնահատուկ որակ պետք է կազմեր պատմագրությունը՝ նախընտրելի նրա գիտահետազոտական խառնվածքին: Պատմության ինստիտուտում ի հայտ բերելով իր գիտական նախասիրությունները և աշխատելով նախ որպես կրտսեր, ապա ավագ գիտաշխատող՝ այնուհետև մեկ և կես տասնամյակ, 1970 թ. սկսած, Ն. Սարուխանյանը եղել է հանրապետության կենտրոնական՝ «Խորհրդային Հայաստան» օրաթերթի գլխավոր խմբագրի տեղակալ՝ ապահովելով դրա հրապարակումների մասնագիտական հիմնավորվածությունը: 1986-1991 թթ., ԽՍՀՄ գոյության վերջին շրջանում, իր բացառիկ քաղաքացիական բծախնդրությամբ և անբասիր կենսակերպով վարել է «Հայգիրք» հանրապետական վարչության տնօրենի պաշտոնը, որից հետո ընդմիշտ վերադարձել է գիտություն: 1991-1997 թթ. աշ-

խատել է ՀՀ ԳԱԱ պատմության և տնտեսագիտության բաժանմունքում, որպես գիտական քարտուղար: 1998 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն՝ «Հայկական հարցը մինչխորհրդային հայ հասարակական-քաղաքական մտքի և պատմության մեջ» վերտառությամբ:

Իր առաջին աշխատությունից սկսած՝ Ն. Սարուխանյանը մեր ժողովրդի պատմության ընթացքը հետազոտել է հասարակական-քաղաքական մտքի և դրա ներկայացուցիչների գործունեության պատմագրական չափանիշներով: Դա նրան հնարավորություն է տվել անկաշկանդ դրսևորել սեփական քննադատական հայեցվածքը, անաչառ հայտնել իր վերաբերմունքը պատմության մեջ խոր հետք թողած մտավորականության, հասարակական-քաղաքական միջավայրի մասին: Նրա առաջին մենագրությունը՝ առավել հղկված և հիմնավոր, իր ատենախոսության թեմայի հետագա մշակումն էր համանուն վերնագրով, որ լույս տեսավ 1971 թ.: Ն. Սարուխանյանը բարձր է գնահատել հայ հասարակական գործիչների դրական վերաբերմունքը Ռուսաստանին Արևելյան Հայաստանի միացման իրադարձության նկատմամբ՝ այն դիտարկելով ազգահավաքման և քաղաքակրթական նոր փուլի անցնելու տեսանկյունից: Հեղինակն իր հետազոտությունը և դրանից բխող եզրակացությունները կառուցել է Ն. Աշտարակեցու, Մ. Թաղիադյանի, Խ. Աբովյանի, Գ. Պատկանյանի, Ստ. Նազարյանցի, Մ. Նալբանդյանի, Գր. Արծրունու, Մ. Մամուրյանի և այլ գործիչների մոտեցումների ու հայացքների հանգամանալի վերլուծությամբ: Այս աշխատության մեջ Ն. Սարուխանյանը կարողացել է հաղթահարել ժամանակի պարտադրիչ և քարոզչական նշանախեցերը՝ բացահայտելով այն ճշմարտությունը, որ Ռուսաստանին Արևելյան Հայաստանի միացման իրողությունը նշանակելու էր, միաժամանակ, հայ մտավոր գործիչների քաղաքական ակնկալիքների ձախողում, երբ Հայաստանի այս հատվածը, փաստորեն, հայտնվեց գաղութատիրական կայսրության կազմում՝ սրանից բխող բոլոր հետևանքներով:

Գաղափարախոսական տեսակետից այսօր կաղապարային ճշմարտության անդրադարձ կարող է թվալ Ն. Սարուխանյանի հաջորդ՝ «Ստեփան Շահումյանի պատմագիտական հայացքները» (Ե., 1979) աշխատությունը: Հեղինակին, սակայն, նյութը տրվել է յուրովի, երբ նա ի հայտ է բերում Ստ. Շահումյան հրապարակախոսի ու պատմության տեսաբանի հետաքրքրությունների շատ ավելի լայն շրջանակներ: Ն. Սարուխանյանը ուշագրավ շերտեր է լուսաբանում Ստ. Շահումյանի մարքսյան մտահայեցության մեջ՝ հատկապես հասարակական զարգացման գործընթացներում պատմական անհատի դերի ու նշանակության լայնախոհ ըմբռնման տեսանկյունից:

Իր հաջորդ՝ «Լեոն և Հայկական հարցը» աշխատության մեջ Ն. Սարուխանյանը հիմնավոր և ջրբաժան գիծ է անցկացնում այս խոշոր պատմաբանի նախախորհրդային և խորհրդային շրջանների միջև: Պատմաքննական հայեցվածքով նա գնահատական խոսք է ասում Լեոյի մտայնության մեջ բեկումնային փոփոխությունների մասին, այն, որ խորհրդային շրջանում, ի հակադրություն իր երբեմնի պատմահայեցողության, Լեոն վերանայեց ազատագրական պայքարի, ռուսական կողմնորոշման դրսևորումներն ու առանձնահատկությունները՝ հակվելով դեպի «սուբյեկտիվիստական պատմահայեցողություն»: Կարելի է ասել, որ Լեոյի հայացքների այս մետամորֆոզի գնահատմամբ Ն. Սարուխանյանը կանխում էր վերահաս անցումային շրջանում վերստին ոգի առած՝ Լեոյի վերջին մոտեցումների ծլարձակման նշանները հասարակական-քաղաքական մտայնության մեջ, երբ փորձեր էին արվում հախուռն զանգվածի մեջ թաղելու ազատագրական պայքարի փաստերը և նրա գործիչների առաջավոր մտայնությունը: Կարելի է կարծել նաև, որ բացասման այս մտայնությունը հետագայում ևս ի հայտ կգա հասարակական-քաղաքական մտքի մակարդակում, որչափով այս բանավեճը դեռևս չի սպառել երկուստեք միմյանց հերքող փաստարկներն ու մտադրույթները, և այս տեսակետից Ն. Սարուխանյանի աշխատությունը այսօր ևս պահպանում է իր հրատապ նշանակությունը՝ դուրս գալով սոսկ պատմագրական շրջանակներից:

Ն. Սարուխանյանի գիտական գործունեությունը տպավորիչ երանգներով է հարստացնում նրա «Ալեքսեյ Ջիվելեգովը որպես պատմաբան և Հայկական հարցը» (Ե., 2008) աշխատությունը: Այս դեպքում խոսքը վերաբերում է միջազգային չափանիշներով բնութագրվող մի գիտնականի, որի հետազոտությունները մեզանում քիչ են ուսումնասիրված և որոնց պատմագիտական մտածված գնահատականն ենք տեսնում Ն. Սարուխանյանի այս աշխատության էջերում: Այստեղ ընթերցողին է ներկայացվում վերածննդի շրջանի և Արևմտյան Եվրոպայի երկրների պատմության անդաստանում Ա. Ջիվելեգովի ուսումնասիրությունների համոզիչ նկարագիրը, հայտնի փաստերն ու իրողությունները հայեցակարգային նոր բովանդակավորմամբ լուսաբանելու նրա ինքնատիպությունը: Ն. Սարուխանյանը վերհանել է նրա գիտական նվաճումներին հատուկ՝ միջնադարյան Եվրոպայում տարածված գաղափարախոսությունների և հումանիզմի հակադրության լուսաբանումը՝ այս վերջինի բարոյագեղագիտական սկզբունքների լայնահուն մեկնաբանությամբ: Գրքում շատ ուշագրավ էջեր կան քաղաքականության մարզում հանրահայտ մի դեմքի՝ Մաքիավելիի նոր, ոչ ճիզվիտա-

կան կերպարի ջիվելեգովյան վերախմբագրման շուրջ, որոնք վերաբերում են այդ գործչի հանրապետական հայացքների հիմքում ընկած քաղաքացիական ազատությունների ողջամիտ ընկալմանը: Ն. Սարուխանյանն ամբողջացնում է Ա. Ջիվելեգովի բացառիկ դերակատարությունը Հայկական հարցի արդարացի հանգուցալուծման և հայանպաստ քարոզչության կազմակերպման ուղղությամբ, որի ընթացքում նա հենվում էր Ռուսաստանի ազնիվ մտավորական ներուժի վրա:

Ն. Սարուխանյանի պատմագրական ուսումնասիրությունների մեջ առանձին նվիրական անկյուն է զբաղեցնում հայ պատմագիտական մտքի վերջին կարկառուն ներկայացուցիչներից մեկի՝ Աշոտ Հովհաննիսյանի գիտական աշխատությունների գնահատականը: Իր ուսուցչի կերպարին նա նախ անդրադարձավ առավել քան հրապարակախոսական անկեղծ խոսքով՝ «Մտորումներ և հուշեր ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանի մասին» (Ե., 2012) աշխատությամբ: Անմիջական ու շիտակ գրչով և միաժամանակ՝ առանց չափազանցումների, Ն. Սարուխանյանն այստեղ հիմնականում նկարագծում է Ա. Հովհաննիսյան պատմաբանի վիթխարի անհատականությունը, որ շռայլորեն դրսևորվեց անգամ նրա՝ հալածանքների ու բռնությունների աղետալի իրականությունը ճաշակելուց հետո էլ: Գիտնականի կերպարն այստեղ առարկայական է դառնում հեղինակային հուշերով, որոնք վերհանում են Ա. Հովհաննիսյանի մարդկային նուրբ ներաշխարհը, հոգածությունը աշխատանքային միջավայրի և կրտսեր գործընկերների հանդեպ և, այնուհետև, ունեն ճանաչողական նշանակություն:

Իր մյուս՝ «Ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանի պատմագիտական ժառանգությունը» (Ե., 2015) ուսումնասիրությամբ Ն. Սարուխանյանը ցույց է տալիս մեծ գիտնականի աշխատությունների շրջադարձային նշանակությունը հատկապես 1950-1960-ական թթ. պատմագիտական մտքի իմաստավորման տեսակետից: Ն. Սարուխանյանը հիմնավորում է, որ Ա. Հովհաննիսյանը պատմական նյութը մատուցել է աննախընթաց խոր լուսաբանությամբ՝ այն կապելով ազգային շրջանակներից դուրս եկող լայնարձակ հորիզոններին: Ի թիվս նրա վերհանած այլ հիմնախնդիրների, Ն. Սարուխանյանը պատճառաբանված ուշադրություն է դարձնում XIX դ. երկրորդ կեսի հայ հասարակական հոսանքների դասակարգմանը և բնութագրին, որի շրջանակում, առավել քան երբևէ, լավագույնս գնահատական է տրվել ժամանակի հայ մտավոր շարժմանն ու դրա առանձնահատկություններին: Ի պատիվ պատմագրողի, հարկ է նկատել, որ նա գերազանցապես հաղթա-

հարել է հասկանալի ակնածանքը ուսուցչի նկատմամբ՝ սեփական բնութագրերն ամրապնդելով սկզբունքային չափանիշներով:

Հայ նոր պատմագիտության փուլային զարգացման խնդիրների հետազոտությունը շարունակում էր զբաղեցնել Մ. Սարուխանյանին՝ մասնավորապես նրա վերջին աշխատություններից մեկում՝ «Հայ պատմագիտությունը XIX դարում և XX դարասկզբին» (Ե., 2013) վերնագրով: Աշխատությունն ընդգրկում է մեր իրականության մեջ պատմական գիտության լինելության նախադրյալներից մինչև առաջատար մտքի վերածվելու շարունակական ընթացքը՝ արդեն XX դ. սկզբին իր դրսևորած հասուն մտայնությամբ: Հեղինակը կատարել է մտավոր պատկառելի աշխատանք՝ պատմագիտական մտքի վերընթաց շարժումը հետազոտելու ասպարեզում, ամենայն բծախնդրությամբ գնահատելով մեկ տասնյակից ավելի պատմաբանների (Մ. Էմին, Ք. Պատկանյան, Ստ. Պալասանյան, Ալ. Երիցյան, Ղ. Ալիշան, Մ. Օրմանյան, Ն. Ադոնց, Լեո և ուրիշներ) մնայուն ներկայությունն այդ բնագավառում: Աշխատությունը աչքի է ընկնում իր հետևողական քննական մեթոդով, այլև հիմնավորված քննադատական վերաբերմունքով, հատկապես պատմագիտական նվաճումների կողքին ցուցադրելով ժամանակի տիրահաճ, ինչպես և պահպանողական կաղապարներում ամփոփված մտավոր արդյունքներն այս բնագավառում: Այս վերջինը Ն. Սարուխանյանը կարևորում է այն եզրակացությամբ, որ պատմագիտական նոր միտքը իր ուղին հարթում էր դժվարությունների ու հակասությունների, անփույթ և ստեպ անզգա ու հեղձուցիչ հասարակական միջավայրում:

Ժամանակային կտրվածքով վերոհիշյալ աշխատության շարունակությունն է Ն. Սարուխանյանի «Խորհրդային պատմագիտությունը 1920-1930-ական թվականներին» (Ե., 2016) գիրքը, որտեղ նա քննարկում է պատմագիտական մտքի բնույթն ու ուղղվածությունը, ինչպես և որակապես նախորդներից կտրուկ տարբերվող դրսևորումները գաղափարախոսական ու հասարակական նոր պայմաններում: Այստեղ նա վերհանել է պատմաբանների ավագ և խորհրդային սերունդների ընդհանրություններն ու, միաժամանակ, ակնհայտորեն տարբերվող մտայնությունները՝ գիտության մեջ թանձրացող քաղաքականության պայմաններում, երբ լավագույն արժեքների կողքին ծլարձակում էր պատմագիտական հավակնություններով լեցուն պատմահրապարակախոսությունը՝ իր քարոզչական ծայրահեղություններով:

Այս աշխատությունը վերջինն էր լինելու Ն. Սարուխանյանի հետազոտություններում, բայց և ընդամենը սկիզբն այն շարունակության, որ կար իր անսպառ մտորումներում՝ նորագույն ժամանակների հայ պատմագիտության

ընթացքի ու նկարագրի վերաբերյալ: Չհասցրեց դժբախտաբար՝ հակառակ իր կենսասիրության և զարմանք հարուցող աշխատասիրության: Իսկ այն, ինչ հասցրեց անել, արեց միայն ինքը մեր պատմագիտության մեջ, որը նրան արդեն անվիճելիորեն առաջատար տեղ է ապահովել հայ պատմագրական գիտության ասպարեզում:

ԽԱՌԱՏՅԱՆ Ա.Ա.
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» հանդեսի բազմամյա հեղինակ և բարեկամ Ն. Սարուխանյանը ճշմարիտ մտավորական էր և իսկական քաղաքացի: Սկզբունքայնությունը Ն. Սարուխանյանի՝ անհատի և գիտնականի, բարոյականության չափանիշն էր, որին նա չդավաճանեց ողջ կյանքում:

«Լրաբեր հասարակական գիտությունների» հանդես

Հայերեն բաժնի խմբագիրներ՝ **Մելանիա Միքայելյան**
Սեդա Քուփելյան
Ռուսերեն բաժնի խմբագիր՝ **Գայանե Հարությունյան**

Редакторы армянского отдела – **Меланья Микаелян**
Седа Купелян
Редактор русского отдела – **Гаянэ Арутюнян**

Համակարգչային ձևավորումը և էջադրումը՝ **Արմինե Պետրոսյանի**
Компьютерный дизайн и пагинация – **Армине Петросян**

Հրատ. պատվեր N 860
Ստորագրված է տպագրության 20.IV.2018 թ.:
Տպագրական 22.5 մամուլ: Տպաքանակը՝ 180:
ՀՀ ԳԱԱ տպարան, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24:
Խմբագրության հասցեն՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24 գ:
Հեռ.՝ 581902:

Подписано к печати 20.IV.2018 г.
22.5 печатных листа. Тираж – 180. Типография НАН РА,
Ереван, пр. Маршала Баграмяна 24.
Адрес редакции: 0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24г
Тел. 581902

Հանդեսի պաշտոնական կայքէջը՝ http://lraber.sci.am
Հանդեսի էլեկտրոնային հասցեն՝ lraber@sci.am
Официальный сайт журнала: http://lraber.sci.am
Электронная почта журнала: lraber@sci.am